


9(~)
p-58

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

ԴԱՐԱՊԱՏՈՒՄ

Տեառն Հ. Գ ուկասու Ա ղարդասլետի
Դնճիճեան

Դ Միաբանութենէ Կիսիթարեան :



ՈՐ Է

ԱՇ, Խ Ա Ր Հ Ա Մ Ա Ր

Կ Ա Մ

ԸՆԴ Հ ԱՆ ՈՒՐ

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

Քաղաքական, Էկեղեցական, Ուսումնական,
և Արուեստական.


Դարուց Ի Դարս Բաժանեալ :

1296

5365

994

ԴԱՐ ՈՒԹՈՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ
1780—1789




Դ Ա Լ Ն Է Տ Ի Կ

Դ Ա Վ Ա Ն Ս Ս Ի Բ Ո Յ Ն Ղ Ա Զ Ա Ր Ո Ւ

1826

Handwritten scribble



5

1870

W. H. ...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

1870

...



ՊԼԱՒԻՆՈՒՆՅՈՒ

Պատերազմը .

1777 — 1778:

Լեռնային ծեծէն ետև երբոր ամենը կրսպասէին մէկ հաշտութի մը տեսնալու եւրոպայի թագաւորներուն մէջ, ուրիշ մէկ նոր պատերազմ տեսան թէ ո՞վ ըլլայ պալիէնային ժառանգը: Ասան զի 1777 դեկտ. 30 մաքսիմիլիանոս յովսէփ դուքս և կայսրընտիր պալիէնայի 50 տարւան մեռաւ ծաղկի հիւանդութիւն. ասոր կողմէ կիցն էր մարիամ սօֆիա դուքստր ք. օգոստոսի սաքսօնիայի կայսրընտիրն, որ ետքը լեհի թագաւոր եղերէր, ինչպէս որ առաջ ները պատմերենք: Ըս մաքսիմիլիանոսին

մահը մենծ կսկիծ ձգեց ժողովրդեան մէջ,
 մէյմը որ մէկ զաւակ մը չիթողուց, վերջի-
 նը եղավ վիզդէլսպախին ճիւղին, անան-
 կով կուլիէլմեան ցեղը վերջացաւ. մէյմը-
 նալ որ ինքը խիստ աղէկ մարդ էր, քաղց-
 րաբարոյ, բարերար, մարդասէր. և թէ-
 պէտ քիչ մը բունաւորական կառավարու-
 թի ունէր, բայց միշտ բարեխառնեալէր.
 խելքին փչածին կեօրէ չէր բանեցընէր ի-
 րեն իշխանութիւր: Արբոր 1745 թախար
 նստաւ՝ ամմէն պավիէուան ավորված գտաւ
 իր հօրը Կ. կարողոս կայսեր գուռողութեր
 բարձրամտութեր համար. իր առջի հոգը
 եղավ երկիրը խաղաղացընել, երսունվեր-
 կու տարի խոհեմութք կառավարելով ա-
 նանկ ծաղկեցուց որ ոչ երբէք անանկ եղե-
 րէր:

Այց ամմէն մէկ թագաւորաց ցեղին հատ-
 նելուն՝ մէյմէկ մեծ չարիք հետեւերեն, ասոր-
 ալ հիմա անանկ եղավ: Մաքսիմիլիանոս
 մեռածին պէս՝ բալագինս ուէնօին կայսրըն-
 տիրը՝ որ կըսվէր կարողոս թէոդորոս՝ մաք-
 սիմիլիանոսին տեղը նստաւ, գործակից ի-
 րեն ունենալով գյովսէփ. վասն զի յովսէփ
 կայսրը միշտ ուշադիր ըլլալով չըլլայ թէ
 խռովութի մը ելլայ պավիէուային յաջոր-
 դութեր վրայ, առաջուցմէ բաշագինօյին
 կայսրընտրին հետ խօսք դրերէր որ ինքը
 ամմէնէն մօտիկ ժառանգը ըլլալով՝ իրեն
 կիյնար, որովհետեւ պավարեան սուլցպախ
 (կամ վիզդէլսպախ) ցեղէն էր ինջած:
 Աս բանիս վրայ իրեք տարի առաջ գաղ-

տուկ մէջերնին խօսք կապերէին սլայման
 դնելով մէկ քանի թէուլթիներով. հիմա
 ան թէուլթիներուն զօրուլթը վերոյիշեալ
 թէուլթորոս բալադինեան կայսրընտիրը շուտ
 մը մօնաքօ եկավ որ սլաւիերային մայր քա-
 ղաքն է. հոն հանդիսով մտնալով կայսր-
 ընտիրին դարպասը (սերայր՝) որ մեծաշէն
 դարպասներէն մէկն է, տէր եղավ սլաւիե-
 րային՝ ու անոր տակը եղած դաւառնէրուն,
 թէպէտև ամմէն թագաւորներէն աւելի
 ծերն էր : Ըն առեալ 1778 յունւլ . 3 . վեր-
 նայի մէջ մէկ դաշնագրուն մը ստորագրե-
 ցին հինգ զլուխ բաժնուլած, որուն մէջը
 ասանկ էր գրուած : “ Աս բալադինօ սլա-
 ” վարեան կայսրընտիրս օրինաւոր կրճանջ-
 ” նամ աւսդրիական արշիդքսին ցեղին խըն-
 ” դիրքը, ⁽¹⁾ որ կրպահանջէ զօրուլթէ ան
 ” հաւանուէր՝ որով սիդիսմօնտոս կայսրը՝
 ” թ. ալսլերտոսի աւսդրիական դուքսին իր
 ” փեսային տրուլով ամմէն երկիրները ու
 ” գաւառները՝ որ յոհաննէս սլաւիերային
 ” դուքսը ձեռք ձգերէր ⁽²⁾ : Ընոր համար
 ” ես հիմա դէմ չեմ դնէր կայսեր՝ որ վե-
 ” րագրեալ երկիրները իրեն կառնէ . նաև
 ” օրինաւոր կրճանջնամ ան իրաւունքը՝ որ
 ” աւսդրիական տունը կրպահէր մինտէլ-
 ” հէյմ կոմսուլթեր վրայ ⁽³⁾, և ուրիշ կա-

(1) Որ է նոյն իսկ յովսէփ կայսեր ցեղը :

(2) Ասիկայ ձեռք ձգած էր զօրուլթէ ան գաշնա-
 դրուլթեր՝ որով 1353 երկիրներ բաժնեցին :

(3) Աս կոմսուլթեր սըվէվիայի շըջանակին մէջն է :

„ լուածոց վրայ՝ որ պօէմիայի Թագաւորէն
 „ էն կախված „ :

Ըստ դաշնագրութիւն Տաստատվածին պէս՝
 ք. յովսէփ կայսրը խորհուրդին մէջ առաւ
 ջարկեց որ շուտ մը զօրք խրկէ, ան երկիր
 նէրը առնէ. աս բանս կրօնէն որուն իր մայր
 րը մարիամ Թերեզինա կայսրուհին չուզեց
 հաւանութի տալ՝ բռնաւորական սեպելով,
 ուսկից կիմանար որ գէշ հետեւութիւնք պիտոր
 հետեւէին, բայց իր որդին յովսէփ կայսրը՝
 և իր վեզիրը քաջից՝ որոնց խօսքը աւելի
 կըքալէր, շատ պատճառներով համոզեցին
 ընդունել տրվին : Ըստ համար շուտ մը 18
 հազար աւսդրիական կամ նեմցէի զօրք
 գացին լանտշուդ և ըսդրավպինկա՝ որ վարի
 պավիերա կըսվին, շամպ կոմսուքիւր՝ որ
 պօէմիայի և բարձր բալադինսօի մէջն է,
 ըսքարտինկա բերդը՝ որ Վնն ըսված գետին
 վրայ է. ասանկալ 8 հազար զօրք գացին
 առին զանազան կոմսուքիւնք ու կալուածներ՝
 որոնց տիրութեանքը մեռած ըլլալով պարապ
 էին, որոնցմէ մէկնալ լուչէմպկուկին
 լանկուավիան էր, որուն վրայ գերմանիային
 շատ իշխանազուն տունէր կըպնդէին
 Թէ մերն է ժառանգելու իրաւունքը :

Ըստ երկիրները յովսէփ կայսրը առաւ ապահով
 ջրներու համար իբր գլուխ կայսերութե,
 ծանուցանելով ամմէսուն որ՝ աս կալուածները
 իր քովը պիտոր մնան իբր աւանդ մը,
 ինչպէս որ կատարեալ բացորոշ վի
 ժառանգութե իրաւունքը՝ որուն որ կիսայ
 : Բայց աս ստոյգ է որ՝ ասանկ զօրա-

Լոր աւանդ պահօղ արծիւ մը , ամմէն թըռ-
չուննէրը տիրվըտանքը կըվախցընէր բաժին
առնելու :

Պրոշին Ռաֆաւորը Բ. Քեթերիտոս աս ան
հըրհուէ յովէի հայտեր դէժ ելլալու .

1778 :

Քանի հեղ որ նեմցէն ուզէ մէկ յաջողու
թի մը գտնալու , միշտ պրուշը քովը ունի
իրեն արգելիչ . հիմա աս բանս լրածին պէս
Բ. Քեթերիքոս պրուշին ծերացեալ թագա-
ւորը շուտ մը սկսաւ մեծ աղաղակ ու բողոք
փրցընելու պավիէռային ասանկ բաժնըվե-
լուն վրայ , ինչու որ՝ աւսդրիոյ տանը մէկ
պզտիկ մենծնալմընալ ամմէն անգամուն
իրեն մահ կըսեպէր . մէկին ըսածին պէս-
ալ չէր ուզեր տեսնալ որ ուրիշները սե-
ղան նստին ուտեն , առանց ինքը ան սեղա-
նէն վայելելու : Պատճառնէր կըբերէր թէ
կայսրը գերմանական սահմանադրութեան
դէմ բան կըպահանջէ՝ իրեն ձգել ուզելով
իրաւունքը տրամադրելու ան յաջորդու
թինէրը՝ որ պարապ մնացած էին , աս բա-
նիս ծայրը գէշի կերթայ կըսէր , կործանել
կուտայ ամմէն ցեղերուն օրէնքը , դաշնա-
դրութինէրը , պայմանները , ու կայսերու
թէ վճիռնէրը : Մասնկ շտկէշիտակ յայտնի
բողոք վերցընել իրեն չէր իյնար , հապա
ռադիսպօնայի ժողովքին կիյնար , որ իր
լուելովը կերեւար որ իր հաւանութիւր աը

վաճ էր, անոր համար ան հնացեալ ծերը սկսաւ զանիալ գրգռել: Աօհրց կոմսը ⁽¹⁾ մօնաքօ քաղաքը խրկեց, որպէս զի տիւ բօնդին դուքսին հետ ⁽²⁾ խօրաթէ, իր դիւացէն խոստանայ օգնութի ու պաշտպանութի տալու. կօհրց դոցեւ ուզելով բանը՝ որպէս զի չմայրնէ՝ առաջ վէյմար գնաց, հոն անանկ հասկրցուց որ՝ եկերէ իր եղբարը առնելու՝ Ֆուանքօնիա տանելու իրենց տանը բանին համար. աս պատրուակով (մահանայով) գնաց ռադիսպօնա, ժողովին գլխաւորին հետ խօրաթեց, պրուչի թագաւորին միտքը իրեն հասկրցրնելով. ժողովին գլխաւորը ըլլալով վերոյիշեալ թէոդորոսին վէզիրը՝ պատասխանեց: „Ամ
 „տէրս թէոդորոս բալանդինօին կայսրըն
 „տիրը պաշարված ըլլալով կայսերական
 „զօրքով, չիկրնար պրուչին մտքին կեօրէ
 „շարժիլ:“

Աօհրց անցաւ գնաց անկից մօնաքօ քաղաքը տիւ բօնդին դքսին հետ խօրաթելու, աս դուքսը կարողոս օգոստոս քանի մը հեղ խիստ գաղտուկ մէկ տեղ գալով խօրաթելով պրուչին կամքին համաձայնեցաւ, չիմը տաճելով որ ինչ արիւնհեղութի պիտոր հետեւէր. թուղթ գրեց պրուչի թագաւորին աղաչելով որ իրեն օգնութի հասնի: Ալ

(1) Ասիկայ ժբ կարողոսի շվէտի թագաւորին վէզիրին թոռն էր:

(2) Որ բալագինօի կայսրընտարին ժառանգն եմ կը սէր, ու ան օրէքը հոն էր եկած:

որովհետեւ կայսրընտիրը շոշորդ մը տեսնա-
 լով արգելէրէր բօսդանէրը, մէկ Ֆրանչիս-
 քեան կրօնաւորի մը տրվին թուղթը, որ
 առանց մէկ կասկած մը տալու՝ բերաւ պէու-
 լին պրուշի թագաւորին տրվալ (1) . տիւ
 բօնդին դուքսը այնչափ յարերէր պրուշին
 գին՝ որ իր փառաւոր ասպետութե նշանը
 Ղօդօն րօոօ ըսված՝ որ յովսէփ կայսրը ի-
 րեն ընծայ էր խրկէր, ու ոսկի շղթայով
 (զինճիւով) կրկախէր, ետ խրկէց ըսելով,
 մէկ ոչինչ պատուոյ մը համար չեմ ուզէր
 իմ վիզս իրաւ շղթայներով կապել :
 Պրուշին թագաւորը կը ջանար կրփնտուէր
 որ իրաւունք մը գտնայ, ինքնալ պավիէ-
 ուայէն կտոր մը փրցընէ առնէ, անոր հա-
 մար զինքը հրատարակէց Վախանհատր Նա-
 րաֆով կայսերական օրինաց, ան օրինացը՝ որ
 ինքը այնչափ անգամ ոտքի տակ էր առած :
 Վմացաւալ որ՝ կայսեր մէջ ու սաքսօնիայի
 կայսրընտիրն մէջ պաղուծի էր ընկած,
 դադտուկ կայսրընտիրնալ յորդորեց՝ որ ի-
 րեն թուղթ մը դրէ, իրմէն օգնութի ու-
 զէ իրեն իրաւունքը առաջ տանելու համար,
 ըստ որում ինքը սաքսօնիային կայսրընտի-
 րը առջինեկ զաւակն էր անդօնիա մարիա-
 մին, որ քոյր էր մեռնօղ պավիէուայի կայս-
 րընտիրն, ու կնիկ մարդու դիացէն վեր-
 ջինն էր ան ցեղին մէջ : Սաքսօնիայի կայս-

(1) Ոմանք կըսեն որ՝ մէկ պատճառնալ առ եղալ
 որ՝ յովսէփ կայսրը կրօնաւորներուն այնչափ դէմ
 եղալ :

րընտիրը խաբվելով սուտ յուսադրուածք
 չի շնչեց որ՝ քիչ մը առաջ օխտը տարվան
 ծեծին մէջը ինչ քաշեց պրուշի ձեռքէն իր
 ամմէն տունը՝ իր ամմէն ժողովուրդը . այլ
 այն բնական թշնամին իրեն բարեկամ սե-
 պելով՝ սիրով մը կասկեցաւ անոր հետ :
 Ասանկով երկուք ասոնք եղան՝ որ իրաւունք
 ունինք կըսէին պավիէնային ժառանգուէր
 վրայ , ասոնցմէ զատ իրաւունք ունիլ կը-
 պընդէին նաև մէքլէմպուրկ շվէրին դուք-
 սը , լամպէնկին իշխանը , ու պրունգվինքին
 ցեղը . թող տուր որ տիւ բօնդին դուքսին
 հետ միացած էին նաև պավիէնայի իշխան-
 նէրը : Այն հիմա ինչ բլբլկոց ու կռիւ մէկ
 երկրի մը ժառանգութիւն վրայ , որ յաճախ
 կելայ եւրոպացոց մէջ , ինչ ճամփայ օս-
 մանցոց , որոնց մէջ չիլովիր ասանկ կռիւ :
 Աչափ ետեէ իյնօղնէրը տեսնալով ք .
 Ֆետերիքոս պրուշին թագաւորը կուրա-
 խանար իրաւունք գտնալով իր ժողովուր-
 դը խաբելու , մէկմէկու վրայ թուղթեր բո-
 ղոքնէր կըխրկէր ռադիսպօնայի ժողովքին ,
 ու ամմէն թագաւորներուն . սուտ ձայնէր
 հանել կուտար յովսէփ կայսեր մտքին դրա-
 ծին վրայ , կասկածնէր ձգել կուտար ըսե-
 լով , թէ որ առջի բերանը անոր դէմ չի-
 դնենք , ամմէնուն վրայ պիտոր իշխէ անի
 ,, կայ : ,, Արթնցիք , իմացիք կըսէր , յով-
 ,, սէփ կայսեր միտքը պավիէնա առնելու
 ,, աս է որ՝ ճամփայ մը բանայ ալսացիայի
 ,, ու լոռէնայի մօտիկնալու , մուտ գտնայ
 ,, իդալիա մտնալու , առնէ վերի ու վարի

„ նօւլարան , վիճէվանան , դօրդօնան , և
 „ ուրիշ գաւառներ՝ որ միլանի դքսութենէ
 „ բաժնւրված են , :

Ըսանկ խօսքէրու ոմանք կը հաւատային ,
 ոմանք չէին հաւատար . իսկ ռադիսպօնայի
 մէջ փետր . 10 ասանկ վճիւ մը ելաւ կայ-
 սեր յանձնելովը : „ Այսեր միտքը աս է որ՝
 „ որովհետեւ առջի գիծը պավիէռայի ցե-
 „ ղին հատաւ , միւս գիծը պաւարեան բա-
 „ լադինօին ցեղը ունենայ հազարապետու
 „ թէ պաշտօնը՝ ու իշխանութիւ կայսերու
 „ թէ դարպասին (սերային) մէջ , : Ըս-
 վճուով բալադինօ կայսրընտիրը որ ութե-
 րորդ էր կարգին մէջ՝ (վէսդֆալիա եղած
 1648 դաշնագրութեւ կեօրէ) հինգերորդ
 եղաւ կայսրընտրաց մէջ , իսկ աշխարհա-
 կան կայսրընտրաց մէջ եղաւ եկրորդ :

Եւնցէն ու պրուշը ծեծելովէլու կը պարասարվին ,
 Բըլէր կը հանեն ու ադիսպօնա ժողովին .

1778 :

Երկու թագաւորք նեմցէն ու պրուշը
 սկսան ամմէն դիացէն պատրաստուի տես-
 նալ պատերազմի . յովսէփ կայսրը 84 դունդ
 զօրաց ժողովել տրվաւ , 55 դունդ ձիաւոր-
 ներու , թո՛ղ տուր անկանոն զինուորները ,
 հազարէնալ աւելի թօփ , ասոնք ամմէնը ի-
 րեք բանակ պիտոր ըլլային պրուշին զօրա-
 ցը դէմ՝ որոնք չորս դիացէն շէզիային մէ-
 ջը կը ժողվըվէին , հոն եկաւ նաև պրուշին

Թագաւորը ապրիլի 7, իսկ պէնզինն եղած
 զօրքը խրկեց սաքսօնիա, որոնց զօրացը հետ
 մէկտեղելով գնացին սահմանները սպասե-
 լու. իր մարդնալ որ ռադիսպօնա էր, ա-
 սանկ մէկ Թուղթ (արզուհալ) մը հանեց
 պրուչի Թագաւորին դիպչէն ⁽¹⁾ :

„ Կայսեր զօրք խրկելը՝ պավիէռային ու
 „ բալադինօյին մեծ մասը իրեն ձեռք ան-
 „ ցընելը՝ որովհետեւ բոլորովին դէմ է
 „ կայսեր սահմանադրութե՝ ոսկի կոնդա-
 „ կին՝ վէսդֆալիա եղած դաշնադրութե՝
 „ ու պայմաններու՝ որ պավիէռային ու բա-
 „ լադինօին ցեղերուն մէջը եղած են՝ (որ
 „ մէկ արմատէ են ինջած), անոր համար
 „ պրուչին Թագաւորը կաղաչէ իր ամմէն
 „ գերմանիայի իշխանակիցներուն՝ որ իրեն
 „ հետ միաբանին, որպէս զի ամմէնուն պատ-
 „ ճառնէրը լսելով՝ պավիէռային յաջոր-
 „ դութիւր գերմանական օրինացը կեօրէ ը-
 „ նեն : Ալ որովհետեւ տիւ բօնդին դուքս
 „ նալ և սաքսօնիայի կայսրընտրութիւնալ ի-
 „ բաւունք կրպահանջեն պավիէռային յա-
 „ ջորդութիւր վրայ, անոր համար ինչ որ
 „ ըրին ինչպէս հիմա կայսրը ու կայսրութիւն՝
 „ սխալած սեպելու է. իրենքալ պիտոր
 „ հաւնին որ՝ արդարութե՝ քննելի աս բանս
 „ ու իրաւաւորք ըլլելի աս յաջորդութիւր
 „ կայսերական սահմանադրութեւր կեօրէ :

(1) Աս Թղթիս գրողը պարոն հէրցպերկն էր, որ
 անցած պատերազմին Թղթերնալ՝ նաև լեհը բաժնե-
 լու ատենին Թղթերնալ գրեց :

Ըս թուղթիս գէմ կայսրնալ շուտ մը ասանկ
 թուղթ հանեց : ,, Ըսանկ բանին իրաւամբք
 ,, ըլլալու համար պէտք է որ՝ որոնց որ կիւ
 ,, նայ՝ մէջերնին պայմանադրութիւն ըրած
 ,, ըլլան , արդ պալիէուայի կայսրընտիրը
 ,, մեռնելէն առաջ իրաւունքը ցըցուցած
 ,, էր , ու ամէն ընդդիմութիւնէրը տարա-
 ,, կոյսնէրը վերցընելով՝ օրինաւոր պայմա-
 ,, նադրութիւն միաբան հաւանութիւն երկու
 ,, դիացէն հաստատուած էր : Հազիւ թէ
 ,, իմացաւ պրուշին թագաւորը՝ դժվարը ե-
 ,, կալի, ու իր միտքը գոցելու համար՝ անմեղ
 ,, կերպարանքի մը մէջ խօթեց բանը ու իր
 ,, մտքին դրածը , ամէննալ ոտք հանել
 ,, ուզեց . ան որ զարմանալին է՝ աս բանիս
 ,, մէջ կուղէ զինքը դատաւոր ընել աւս-
 ,, դրիոյ ու բալագիւնային դատաստանը տես-
 ,, նալու . իր առարկութիւնէրը՝ տարակոյս
 ,, նէրը՝ կուղէ վճռի տեղ անցընել , ըսելով
 ,, թէ աւսդրիոյ տանը ուզածնէրը ամենեւին
 ,, հիմն չունին , իրաւունք չունին , ոսկի կոն
 ,, դակին՝ վէսդֆալիոյ դաշնադրութեանը
 ,, գէմ են : Բայց հարցընելու է՝ աս պրու-
 ,, շին առաջարկութիւնէրնալ վճիռնէրնալ
 ,, որ բանին վրայ հիմնըված են , գուցէ
 ,, (պէլքիմ) իր պրուշի թագաւորին վրայ ,
 ,, որ կայսերութե մէջ ուրիշ բան մը չէ՝
 ,, բայց եթէ պարզ իշխանակիցներէն մէկն
 ,, է . աս գործս ուրիշ բան չերևար որ՝
 ,, խառնըվիլ անանկ բանի մը մէջ՝ որ իրեն
 ,, չիցնար ամենեւին : Չիկայ մէկ օրէնք մը՝
 ,, որ արգելէ մէկ կայսերական իշխանի մը

„ պայմանն դնել մէկալ իշխանակցի մը հետ․
 „ ո՛վ կրնայ անվաւեր ըսել ան դաշնակցու
 „ թի՛ր՝ որ բնաւ փասս մը չիտար իրաւունքի
 „ մէկ երրորդ իշխանակցի մը, ասանկ է ա
 „ հա աս բանս : Ընոր համար կայսրուհին
 „ ու կայսրը չեն ճանչնար զիրենք պարտա
 „ ւոր պրուշի թագաւորին համար տալու
 „ իրենց դործողութեցը վրայ . մանաւանդ
 „ թէ ուրիշ կայսերական իշխանակիցնէ
 „ բուն կըրյանձնէն քննել, արդեօք պրու
 „ շի թագաւորին աս խօսքէրը ու ասանկ ա
 „ նարգական կերպ բանեցընելը իրաւունք
 „ է, որ փասսօղ են չէ թէ մինակ ամմէն թա
 „ գաւորի պատուոյ, հապա նաև ամմէն
 „ կայսերական իշխաններու՝ որ անդամ են
 „ գերմանական մարմնոյ :

Ըսանկով պրուշին ու նեմցէի դիացէն վիճ
 մունք հակաճառուինէր կըլլային ռադիս
 պօնայի ժողովքին մէջը, մէկալ դիացէնալ
 մեծ պատրաստութի կըտեսնային պատե
 րազմելու : Ընջի գարունքը բացվածին
 պէս՝ Թյուսէփ կայսրը իր եղբօրը հետ որ է
 մաքսիմիլիանոս արշիդուքսը՝ գնաց պօէմիա,
 իր զօրքը որ 200 հազար կըհամներ՝ անանկ
 տեղվանք սիրւեց, ուր տեղվանք որ կար
 գելէր պրուշին դալը լուսացիային ու շէ
 զիային դիացէն . իսկ մծռավիա եղած իր
 զօրքը տարածեց ինչպէն կըլացին կոմսութե
 քովէրը, քիչ մը հեռու ռէյնէրցէն, ուր
 տեղ որ վունսք պրուշին զօրապետը ընտիր
 զօրքով կեցած էր : Պրուշնալ իր զօրքը որ
 լեհաստանը առնելէն ետև մենծնալով 200

հազարէն աւելի շատցուց, աս դիս ան դին
կըպտըտցընէր նեմցէին սահմանին մէջը վա-
զելու համար :

Բայց որովհետեւ կայսրուհին մարիամ Թե-
րեզինան իր ետքի տարիները խիստ կըվախ-
նար չէր ուզէր պատերազմ ու արիւնհե-
ղութի ընելու, յովսէփ կայսրը իր մօրը
սիրտը շինելու համար՝ մէկ պայման մը ա-
ռաջարկեց պրուշի Թագաւորին հաշտըվե-
լու համար չորս Թէութի ասանկ : Պրուշին
Թագաւորը իր հաւանութիւնը տայ, արգելք
մը չիդնէ աւտգրիոյ տանը (նեմցէի) պա-
վիէռան ժառանգելու՝ որ բալադինօին
կայսրընտիրը տըվավ. նեմցէնալ ասոր փո-
խարէն վաւերական սեպէ որ երկու ման-
կուավիագօն (իշխանութիւր) Մսբախ ու
Պայրաթ՝ պրանտէմպուրկին առաջինեկին
ըլլայ, նաև երբոր ուզէ պրուշին Թագա-
ւորը՝ ուրիշ իշխաններու երկիրներուն հետ
փոխէ անոնք, միայն Թէ ան երկիրները
ուղղակի սահմանակից չըլլան աւտգրիոյ տա-
նը երկիրներու հետ :

Ասոր վրայ երկու Թագաւորները յովսէփ
ու Ֆետերիքոս Թղթակցութիւնէր ըրին ի-
րենց մէջը, որ տասնըհինկ օր քչեց, քօ-
պէնցէլ կոմսնալ նեմցէի դիագէն պրուշի
Թագաւորին քովը գնաց՝ ուրիշ կերպ ա-
ռաջարկութիւններալ ըրավ, բայց մէկը չընդու-
նեց Ֆետերիքոս, աս կըպատասխանէր : (Ի՞նչ
որ նեմցէն ամէն պաւիէռան էր չիտայ Բալանդինօի
հայսրընտիրն, ինծեծիւլին, ծեծը իորոչէ էնչ ըե-
լաւ : Սէջէրնին ասանկ կըխօսէր, իսկ դուր-

սը ամմէն տեղ կըզուրցէր : թէ որ ծեծ Բայ-
վէ՛ պատճառու յովե՛ք հայսրը կըլլայ, որ գաղտուկ
Էպուէ հիյնայ ամմէն ասաջարկու-լի՛նէրը պարտապ հա-
նելու՝ որպէս զի զօրաց վրայ ինչը գլուխ ըլլայ, ա-
նանկով էր Տօրը ասկէն Բոլորովին լլայ :

Աս շատգէտ Ֆետերիքոսը մէկ դիպցէն կու-
զէր կրնայէր որ հաշտուէ խօսքէրը ուշա-
ցընէ, որպէս զի ատեն ունենայ իր զօրքը ժող-
վելու, տեղվանքը ամրցընելու, ձիէր ու պա-
շար (զահրէ) պատրաստելու, ինչու որ 15
տարի պատերազմ՝ չընելով՝ ան չուստ շար-
ժիլը՝ ոտքի վրայ ելլալը՝ որ առջի ատեննէ-
րը աշխարհ զարմացուց, կորսըված էր պրու-
շին մէջը : Ար միտքը աս էր որ՝ մօուավիայի
մէջ վազէ, 20 հազար մարդ հոն թողու՝
կլացին կոմսութի՛ր ու լանտչուդին կիրճէ-
րը (պօղազնէրը) պաշտպանելու, հոն պա-
տերազմելով թէ որ յաղթու՛թի յաջողվի՝
դէպ՝ի բրէզպուրկ մենծ գունդ մը զօրաց
խրկէ մօուավ գետին վրայէն, որպէս զի հոն
եղած կամուրջը դունա գետին վրայ՝ իր
ձեռքը ձգէ. անանկով նեմցէի զօրաց կե-
րակուր գալը արգելէ, անկէց թէ որ կըր-
նայ՝ վեննա քաղքին վրայ վազէ, ան ա-
տենը նեմցէն վեննա պաշտպանելու համար
կըհարկադրի իր զօրքը հոն բերելու, պօե-
միայի մէջ եղած իր զօրքը կըքի՛նայ կըտը-
կարանայ, ճամիհայ կըբացվի հենրիքոսի հա-
մարձակ առաջ երթալու, որ Ֆետերիքո-
սին եղբարն էր :

Վեմցէին միտքը խորհուրդը ⁽¹⁾ աս էր, շուտ

(1) Աս խորհուրդս արվերէր մառեշալ լավասըր

մը սաքսօնիա մանալ, որպէս զի ուրիշի երկրին մէջը ըլլայ պատերազմը, անկէց 100 հազար մարդով պէռլինի դին քալել, առնանկով պրուշնէրը ետ դարձնել տալ գէպ 'ի պէռլին: Այսպիսով կուզէր որ՝ առջի ըսկսողը ծեծկըվիլ պրուշը ըլլայ՝ ինքը չըլլայ, թէ իրեն արդարութիւն ցրցընելու համար, և թէ Ֆրանսայէն օգնութիւն առնելու համար վերսալիա եղված դաշնագրութիւն կեօրէ. անոր համար նեմցէին մենծ բանալը մէկ դաշտի մը մէջ ամրցած կեցաւ՝ որ եարօմինցին քոյն էր, քէնիկսկուաց բերդը պաշտպան ունէր, էլպա գետին անցնիլը կըպաշտպանէր, շէղիայի մէջ վազելու դիւրութիւն (խօլայութիւն) ունէր:

Այսով եղավ որ՝ պրուշը ինչ որ միտքը դրած էր պարասլ ելավ, իր զօրաց դիրքը վրոխեց, ինչպէս կըզրէ ինքը Ֆետերիքոսալ իր գրուածոցը մէջ որ իր մեռնելէն ետև տըպ վեցան. մտածեց ան ատենը որ՝ քանի բարձր տեղվանք կան նեմցէին բանակին քովէրը՝ ինքը տիրապետէ, աջ թևը ձախ թևէն երկուք բաժնելով զատէ, որով տկարանայ նեմցէին զօրութիւն, կամ հարկադրի դուրս ելլայ բանակը անանկ զօրաւոր տեղէն:

որուն հաւանքէին կայսրուհինալ քալից վեզիւնալ.

Պրուշն ու նեմցէն իրարոս հետ չըսարնելին ,
 Կայսրոսհին Կուպէ հաշտութի ընել .


1778 :

Պրուշը յուլիսի 8 սկսաւ իր Թշնամու-
 Թիրը ցըրընել , առաջ երթալով պօհմիայի
 վրայ , մէկ յայտարար Թուղթմընալ հանե-
 լով պատճառը հասկըցընելու համար . ու-
 ըուն դէմ նեմցէնալ իսկոյն ուրիշ Թուղթ-
 մը հանեց մէկիկ մէկիկ պատասխանելով
 պրուշին բերած պատճառնէրուն : Պրուշը
 եկավ Էլպա գետը ուզեց անցնելու , որպէս
 զի միանայ իր եղբօրը հետ որ էր հենրիքոս
 իշխանը , շատ հեղ ջանաց անցնելու , որ ան-
 կէց պօհմիա մտնայ , բայց կայսրը անշարժ
 կենալով իր տեղը առանց բաժնրվելու ա-
 մենւին՝ պարսպ հանեց պրուշին հնարք-
 նէրը :

Հենրիքոս իշխանը յաջողութի գտնալով
 աւսդրիական սահմանին մէջ մտաւ . կայ-
 սերական զօրքնալ լուսացիա վազեցին ,
 100 հազար ռիալի առին ցիդդավ տեղէն ,
 22 հազար շինիկ հաճար (եուլաֆ) , մա-
 ճառի ու խրվածի զօրքնալ տուրք առին
 սաքսօնիայէն ու պրուշեան լուսացիայէն :
 Ասոր նման կընէին նաև պրուշին ու սաք-
 սօնիային զօրքէրը՝ որ տրէզտաի քով մէկ
 տեղ միացան . երբեմնալ ինչվան աւսդրիա-
 կան շէղիա ու մօռավիա վազելով կավրէին-
 ասանկով Թաթարի պէս ասպատակութիւն

կրնէին չէ թէ մէկ կանոնաւոր պատերազմ:
 ()ը մը պրուշին զօրքը նեմյէի զօրաց վրայ
 վազելով զարկաւ, որ թօլլէսդէյն անտա-
 ուի մէջ գէշ տեղ մը կեցած էին, քանի մը
 թօփ ու 10 դրօշակ առավ. ան ատենը լաւ
 տօն մառէշալը 60 հաղարով ոտք ելավ, որ
 պրուշին թող չիտայ աւելի առաջ երթալու.
 Խսէր գետին վրայ եկավ բանակը նստե-
 ցուց, զանազան հնարքներ շարժմունքներ
 բանեցրնելով հենրիքոս իշխանին դէմ,
 ինչպէս հենրիքոսալ լավտօնին դէմ, լավ
 տօնը ճամփայ կրբանար, ազատ կը թողուր,
 որպէս զի հենրիքոս թէ որ ուղիւ ըլլայ՝
 բռակա վազէ. և իրաւ որ մօլլէնտօնֆ
 պրուշին զօրապետը խիստ վառվռուն ա-
 ըրինըտաք երիտասարդ ըլլալով խաբվե-
 ցաւ՝ առաջ գնաց որ բռակա վազէ, բայց
 հենրիքոս հինցած վարպետ ըլլալով իմա-
 ցաւ լավտօնին որոգայթը, հրամեց որ շուտ
 մը ետ դառնայ, ինչու որ՝ ուտելիք գալու
 ճամփան շուտ մը կը գոցէր լավտօնը:

Ըս ատենները պրուշի բանակին մէջ եկավ
 պարոն թուկուզը գաղտուկ ծպտեալ
 (թէպտիլ) հագուստով իբրև մէկ մոսկովի
 մարդ մը, անոր համար թուղթ առած ու
 նէր կալլիցին իշխանէն՝ որ վէննա մոսկովի
 դեսպանն էր: Վալուն պատճառը աս էր
 որ՝ մարիամ թերեզինա կայսրուհին ա-
 մենեին ծեծ չուզելով խիստ կը դողդողար
 իր երկու զաւկին վրայ ու փեսին վրայ որ
 ծեծին մէջն էին, թուկուզին ձեռքովը
 թուղթ խրկեց պրուշի թագաւորին հաշ-



տուութի ընելու համար՝ նոր թեութիւններ
առաջարկելով: Արուշին թագաւորը ընդ-
ունեց թուկուղը, մարդիկնէր դրաւ որ
հաշտութե՛ վրայ խօրաթեն, որոնց գլխաւո-
րը հերցպերկ կոմսն էր: Այսորուհոյն ա-
ռաջարկութիւր աս էր. ինքը ինչ դաշնա-
դրութի որ եղերէր բալագինօի կայսրըն-
տրին հետ՝ ոչնչացնէ, առջինին պէս ըլլայ,
քանի տեղ որ առերէր պալիէուայէն՝ ես
դարձնէ, բայց պրուշին ժառանգներնալ
ու յաջորդներնալ հրաժարին, պրանտեմ
պուրկի առջինեկին չիսեփականեն անսբախ-
ու պայրաթ մանկուավիանէրը (իշխանու-
թիւնէրը): Եւ եղավ ահա մեծ արգելք
հաշտութիւր լմնցնելու:

Եւ բանիս վրայ ասանկ կրպատմըլի Ֆե-
տերիքոսին գրուածոցը մէջ: « Այսորուհին
» կրսէ բացարձակ հաշտութի կուղէր, վասն
» զի իր զաւկին յովսէփ կայսեր փառասի-
» ըութիւր կրճանչնար, կրվախնար որ՝ չըլլայ
» թէ յովսէփ երկու մեծ բանակի գլուխ
» ըլլալով, ինքը կայսրուհին իր հեղինա-
» կութիւր կորսնցընէր կամ տկարացընէր:
» Արբորալ յովսէփ իմացաւ թուկուղին
» երթալը՝ խիստ այլայլելով ասանկ գրեց
» իր մօրը կայսրուհոյն: Թէ որ դուն մէկ
» խեղճ հաշտութի մը ընելով ցածընես
» զքեզ ամմէն աշխրհհիս առջին, ես անկէց
» ետքը ոչ երբէք վեննա կրդառնամ, հա-
» պա աւելի կրնտրեմ աքլիսկուանա կամ
» ուրիշ տեղ մը նստելու, քան թէ աւս-
» դրիայի մէջ ոտքս կոխելու, աս ցածուիս

„ հոն տեսնալու , որ ինծի մէկ մեռնիլ
„ մընէ :

Բայց աս խօսքերս մէկ հիմ (թէմէլ) մը
չունենալով՝ անչափ հաւատալու չեն , ու
րովհետեւ յովսէփ կայսեր թղթակցութիւնը
իր մօրը հետ՝ տեսնելու չեն :

Պատերազմի քննարկը , Քրահալը ու հոսիւմը
մէջ ինչո՞ւն հաշտութիւն ընելու .

1778—1779 :

Այս միջոցին մէջ նեմցէին ու պրուշին զօր-
քը իրարու հետ կըզարնրվէին պզտիկ ծեծ-
կըվէնէրով . օգոստոսի մէջ պրուշին եր-
կու զօրապետները զարկին նեմցէին մէկ
զօրապետը որ կըսվէր քնէպէլ , 750 մարդ
գերի ըրին , ըստրկին սնտուկնալ ուրիշ բա-
նէրով առին : Յովսէփ կայսրը միշտ իր կե-
ցած տեղը կըկենար , իր ամմէն ջանքը աս էր
որ թող չիտայ պրուշին երկու եղբարցը Ֆե-
տերիքոսին ու հենրիքոսին մէկ տեղ միանա-
լու իրենց զօրքովը , հօկնէլպ լեռնէրուն
վրայ միշտ զօրք կեցընելով կարգելէր թող
չէր իտար որ թօփ բերեն . անոր համար եր-
կու աղբարալ յուսահատեցան մէկմէկու
մօտիկնալու , ու կայսեր մեծ բանակը զար-
նելու , չէին կրնար էլպա գետը անցնելու ,
անչափ ուժով պաշտպաններէին նեմցէնէրը :
Արկու գիացէնալ ասանկ անօգուտ նստե-
լէն ետեւ ամբուվան իրեք ամիսը՝ պրուշնէ-
րուն ուտելիքը ու ճէպխանէն պակսեցան .

գէշ ուտելիքները փոխադրական հիւանդութի մը ձգեցին սրուշին զօրացը մէջ, անոր համար քաշվիլ սկսան, աշնան սկիզբը ինչ պզտիկ քաղքերներ ու տեղականքներ որ աուերէին՝ Թողուցին, հենրիքոսին զօրքը տեղ տեղ նեղը իյնալով նեմցէին ասպատակ (չարխա) զօրքէն՝ քանի մը ճէպխանէի աուապայնէր Թողուցին: Ա ուումսէր նեմցէին քաջ զօրապետը 240 աւապայ աւալ սրուշէն. 870 ձիաւոր մարդ որը կոտրեց, որը գերի ըրաւ. 500ալ ձի աւալ. ասկէց ետքը լավտօննալ սրուշներուն ետեւէն ընկաւ, որ արտորնօք կուզէին սաքսօնիա երթալ ուսկից որ եկած էին. անանկով ամմէն տեղ մարդ ու անասուն կորսնցուցին. սաքսօնիայի մէջ մտնալուն պէս իր զօրքը՝ ծանր տուրքէր աւին, այնչափ որ սաքսօնիային կայսրընտիրը կուզէր իր խազնայովը փախչիլ, արդէնալ իր պատուական ապրանքը մակտէսուրկ փախուցերէր:

Աս բաներուս վրայ յովսէփ կայսրը հօն եկալ, իր մօրը հրամանքը լավտօնին բերաւ որ կարգէլէր ծեծկըվիլը, անոր համար լավտօննալ ետ կեցաւ ան մեծ յաղթութիւնէրէն որ պիտոր ընէր. վասն զի մայրը կայսրուհին Ֆիօուէնցաէն վեննա բերել տըվալ լեոբուտոս դօսքանային մեծ դուքսը՝ յովսէփ կայսեր եղբարը, որպէս զի երթայ յովսէփ կայսեր իր եղբօրը միտքը փոխել տայ, պատերազմէն պաղեցընէ: Աս խօսքերէս երկու եղբարց մէջ շատ վիճմունք եղան, վերջապէս յովսէփ կայսրը իր մօրը հնազանդե-

լու համար ծեծը դադրեցուց : Ֆետերի-
 քոսնալ անձրևային աշնան մէջ ետ քօշովե-
 ցաւ շաղցլարին դիացէն, հոկտեմբեր ամի-
 սը չիլմնցած ամմէն պրուշին զօրքը պօէմիայ-
 էն դուրս ելան, կայսերական շէզիային մէ-
 ջը ձմերեցին : Վեմցէին զօրապետը պարօն
 ըշդային նոյեմբ. 25 պրուշնէրը փախուց
 վէսքիրքէն գեղէն որ յանկարծ երեւեցաւ :
 Յովսէփ կայսրնալ լասշին ու լավտօնին
 երկու մառէշալնէրուն խորհրդովը ընկե-
 ռու թքը գնաց սահմանագլուխ (հիւտուտ)
 տեղէրը քննելու, շատ զօրքէր դնելով, ան-
 կից վեննա եկավ իր մօրը հասկըցընելու :
 Հետեւեալ տարին 1779 թէպէտ խիստ շատ
 ձիւն եկավ, սաստիկ սառոյց (տօնդ) ե-
 ղավ, բայց ծեծկրվէլէն չիդադրեցան .
 յունվ. 14 վուենսիս պրուշին զօրապետը
 կլաց կոմսուէ ելավ, դէպ 'ի ցուքմանդէլ
 գնաց, որ շէզիային քաղաքն է նեմցէին
 տակը . միտքը ան էր որ՝ յանկարծ կայսեր
 զօրաց վրայ վազէ զարնէ, բայց ինքը զար-
 նրվեցաւ . լավտօննալ ուզելով անոր հա-
 տուցում ընելու վուռմսէր զօրապետը խըր-
 կեց երկու դիացէն կլացին կոմսու թէր վը-
 րայ, որովհետև ան տարի խիստ չոր ցուրտ
 ըրավ, իրենց հեշտ (խօլայ) եղավ երթա-
 լու : Ս ուռմսէր 19 գունդ ոտանաւոր
 (եաեան) զօրքով, 3 գունդ խուվաթի ձիա-
 ւոր զօրքալ հետը ունենալով՝ սկսաւ գնալ
 ինչ կերպով որ իրեն ապսպրերէր լավտօ-
 նը, ամսոյն 20 եկավ սպաննեց պահապան-
 նէրը, որ սաստիկ ցրտութիւն արդէն կի-

սամեռ էին, սանդուխքներ (ներտիվէններ) կռթընցընելով պատին՝ քաղքին մէջը մը տաւ առանց մէկի մը իմանալու, քանի պրուշի զօրք կար հոն՝ ամմէննալ դերի ըրալ իրենց զօրապետով որ կրսվէր իշխան հասսիա Ֆիլինշդատի, դրօշակներ ու ըստըկինն սնտուկը առաւ: Աւրիշ քաղաքմընալ գնաց՝ ուր տեղ որ պրուշի զօրք կային. ասոնք մէկ մարտկոցի (Թապետի) մը ետեւէն շատ դէմ դրին, բայց ետքը անձնատուր եղան 1540 հոգի, 44 ալ հազարապետ, քաղաքնալ Թալէց:

Վանի ծեծ որ՝ ըրին երկու դիացէն աս պատերազմիս մէջ՝ ամմէնէն երևելի ծեծ աս եղաւ, շատ մնաս տրվաւ պրուշներուն, անոր համար Ֆետերիքոս շատ բարկացաւ իր հազարապետայր անհոգուէր վրայ, պատիժ տրվաւ, պրէզլավէն ելաւ վուռմսէրին դէմ գնաց: Ընտեսներ լավտօննալ շուտ մը գնաց վուռմսէրին օգնութի ընելու. Ֆետերիքոս տեսածին պէս լավտօնը չիզարնըվեցաւ. երկու դիացէնալ իրենց տեղէրը անանկ կեցան չիծեծկըվեցան, ինչ վան որ ծեծը լմնցաւ: Ըս կռիւր եղաւ մէկ երկրի մը համար՝ որ միլիոն ու կէս Ֆիռուին տարին եկամուտ կրբերէր, իսկ իրենք երկու Թագաւորք երկու իրեք ամսըվան մէջ շատ աւելի խարճեցին՝ անչափ զօրք ոտքի վրայ պահելու համար: Արկուքնալ իրենց դաշնակից տերութեց վրայ յոյս ունեցան որ օգնութի խրկեն, նեմցէն Փրանսայէն օգնուի գալու կրսպասէր՝ 1756 վէր-

սալիա եղած դաշնագրութիւնը ուժով :

Բայց Ֆրանսական տերութիւնը չէր ուզէր որ նեմցէն մենծնայ, իրենց թագուհիինաւ նկատում ընելով (որ նեմցէի կայսրուհւոյն աղջիկն էր,) նեմցէինաւ դէմ ելլալ չէր ըլլար, անոր համար կատարեալ չէզոքութիւն պահեց : Աւրիշ ծածուկ պատճառներաւ կային՝ որոնց համար չօգնեց նեմցէին. շատ պարտքի տակ ընկած էր. իր վեզիրը մօռեբա ութսուն տարվան արևոր ըլլալով ուրիշ մը կընէր իր ընելիքը. Ֆրանսիացիներնաւ անցած ծեծի մէջ կորսնցուցած ըլլալով իրենց վարկումը՝ չէին ուզէր գերմանիայի մէջ ծեծկրվիլ. թող տուր որ անատենը Ֆրանսիական ուրիշ ծեծ ունէր ինկիլիզի դէմ ամերիկացոց համար : Այ բանէրս պատճառ եղան որ Ֆրանսային թագաւորը ժողովով օգնութիւն ընելուն տեղը նեմցէին՝ հաշտութիւն ընելու միջնորդ ուզեց ըլլալ :

ըլլալ :

Մոսկովի թագուհիինաւ թէպէտ դաշնակից էր պրուշին՝ բայց ինքնաւ տաճկին հետ նորէն ծեծկրվելու շողորդ տեսնալով խորրմին համար՝ օգնուի չիտրկեց պրուշին, ինչպէս որ պրուշնաւ անցած կռիւններուն մէջ օգնուի չէր խրկած մոսկովին՝ թէպէտև շատ խոստում ըրերէր, հապա մոսկովնաւ ուզեց միջնորդ ըլլալ հաշտութիւն ընելու, բայց առաջ ասանկ գրեց վեննա ու ռադիսպօնա : „ Աղաչեմ մէկ կերպով մը շտկեցէք „ պավիէռային ժառանգութեւ վրայ եղած „ կռիւր ու պահանջմունքը, թէ չէ կըհար

„ կադրիմ զօրք խրկելու պրուշին, որպէս
 „ զի գերմանիայի սահմանադրութիւն ան-
 „ խախտ պահէ: „ Ասանկ կըզրէր, բայց
 չէր ուզէր իր զօրքը խրկելու գերմանիայի
 մէջ անբաւ խարճ ընելով, ուր տեղ գի-
 տէր որ մէկ շահ մը չիկար իրեն, ուէքնին
 իշխանը երեսօթիտան ընելով իրեն՝ պրէզլաւ
 խրկեց հաշտութե վրայ խօսելու, մանա-
 ւանդ որ Ֆետերիքոս մոսկովէն ուզէրէր որ՝
 երկու գունդ զօրաց խրկէ կալիցիայի
 վրայէն մաճառի մէջ՝ դմշվարին պաննադին
 մէջ, կամ դրանսիլվանիայի ⁽¹⁾ մէջ, որ-
 պէս զի ապստամբեցրնեն ան յունադաւան
 ները որ միացած չեն, ու շատ կըգտնըվին
 ան երկիրները. եսալ ըսաւ կըխրկեմ քանի
 մը գունդ իմ զօրքէրէս, խօսք տալով որ՝
 ինչ հարստութի որ կրնան թալլել՝ ամմէն
 նալ մոսկովէնէրուն թողուն: Աս առաջար-
 կութիւն մէկէն մերժեց մոսկովը սոսկալով,
 ասանկ պատասխան տալով: „ Մոսկովի պէս
 „ մենծ տերութե մը չիվայլէր ապստամբու-
 „ թի հանել տալ. ան օգնուիւր որ կրնամ
 „ քեզի տալ, 16 հազար զօրք է, ինչպէս որ
 „ դաշնադրըրըրենք մէկ տեղ,“:

Ֆետերիքոս իմացաւ որ՝ մոսկովին ասջափ
 օգնութիւն իրեն շահ ըլլալուն տեղը՝ շատ
 ծանրութի պիտոր տար՝ շատ նեղութի, ա-
 նոնք պահելու համար տարին 2 միլիոն ռիա-
 լին աւելի պիտոր խարճէր, իմացաւալ որ՝
 հիմա չունէր ինքը ան դաշնակիցները՝ ինչ

(1) Հիմա կըսվի Չիեպն պեռկին:

որ օխտը տարւլան ծեծին մէջը ունէր, չու-
նէր ան զօրութիւն՝ որ երկրորդ անգամ դէմ
դնէ նեմցէին՝ Փրանսային՝ ու մոսկովին՝ ու
րոնց իրեքնալ հաշտութի մը ընել տալ կու-
ղէին, ինչպէս որ ինքնալ կըխօստովանի իր
գրուածոցը մէջ, խոնարհեցաւ իր բարձրա-
մտութիւն որ կըցըցընէր, մանաւանդ որ Փրան-
սային թագաւորնալ հաշտութի թէութիւ-
նէրը խրկերէր վեննա եղած իր դեսպանին
որ կըսվէր պրէզդէվիլ. աս մարդս փառա-
սէր ըլլալով՝ զանազան հնարքով շատ ետեւէ
ընկաւ հաշտեցընելու, որպէս զի ետքը մեծ
պաշտօն մը ձեռք ձգէ, հաւնեցուց կայսրու-
հին, ան հաւնած թէութիւնէրը յունվարին
ետքէրը խրկեց ռէքնին իշխանին՝ որ փա-
րէզէ խրկըված էին :

Եւ թէութիւնէրուն դէմ դարձան սաքսո-
նիացիք, վասն զի իրենք փոխարէն կուղէին
40, միլիոն Ֆիօռին և մէկ երկիր մը. կու-
ղէինալ որ կայսրը հրաժարի իր ամմէն ի-
րաւունքներէն՝ որ ըստ որում պօէմիայի
թագաւոր ունէր սաքսոնիայի ու լուսացիայի
կալուածոցը վրայ : Տիւ բօնդին դուքսը
կըպնդէր չէր ուղէր որ պավիէռան բաժնը
վի, այլ մանաւանդ վերին բալադինադօին
մէկ մասը տրվի, որպէս զի պուրկազվէն շըր-
ջանակը պահվի, իսկ սաքսոնիայի կայսրըն-
տրին որ իր ազգականն էր՝ բան մը տալ չէր
ուղէր, և ոչ իսկ կուղէր որ աս բանիս վրայ
խօսվի : Կանք որ կայսրը՝ իրեն մայրը՝ հաս-
տատուն կեցան, որոշեցին չընդունիլ անանկ
մէկ ցած թէութի մը, իրենց պահել գոնէ

պավիէռային ան մասը՝ որ Ղուենային ու
 Լենն և Սալցա դետերուն մէջը կիյնան, ա-
 ուանց մէկ մարդ մը կոտորել տալու իրենց
 զօրացմէ :

Ղեկէն Կաղաթի մէջ եղած հաշտութիւնը .

1779 :

Լս խօսքէրը ըլլալէն ետև մարտի 4 զինա-
 դուլ (միւլթարէքէ) ըրին, գեջէն քաղաքը
 խօսելու տեղ որոշեցին, որ մայր քաղաքն է
 համանուն կոմսուլթէ, մաճառի ու կայսե-
 րական շէղիային մէջ տեղը ⁽¹⁾ . ամմէնուն
 երեսփոխանները հոս ժողովրդեցան նաև
 սաքսօնիային ու տիւ բօնդին դիացէն,
 Ֆրանսային ու մոսկովի դիացէն, որ միջնորդ
 պիտոր ըլլային : Ետ վիճմունք ըլլալէն
 ետև՝ վեց շաբթուան մէջ մայիսի 13 ստո-
 րագրեցին հաստատեցին աս թէուլթիւն-
 ները :

ա . Բսկէց ետքը հաստատուն մշտատև խա-
 դադուլթի ըլլայ նեմցէին ու պրուշին՝ մէջ,
 իրենց ու իրենց յաջորդացը մէջ :

բ . Բս հաշտուներ ձեռք դնելէն ետև՝ տաս-
 նըվեց օրվան մէջ երկուքնալ իրարու տան
 ինչ քաղաքներ ու տեղեր որ մէկմէկէ առին
 իրենց դերիններով, տուրք առնելը վերջա-
 ցրնեն :

(1) Ես քաղաքս տրված էր ալպերտի սաքսօնիայի
 դքսին, որ է որդի Դ . օգոստոսի լէհի թագաւորին,
 երբոր փեսայ ընտրվեցաւ քրիստինայ արշիդքսին :

Գ. Ոչինչ սեպվի ան դաշնագրու թիւնը որ նեմցէի ու բալագինոյի կայսրընտրին մէջ եղված էր 1778 յունվ. 3. հապա նոր դաշնագրու թիւը որ այսօր կը հաստատուի նեմցէի՝ բալագինօի կայսրընտրի՝ և տիւ բօնդին դքսին մէջը՝ իբրև ամբողջ մասն սեպվի աս դաշնագրուէս, որուն պաշտպան են միջնորդ տերութիւնները :

Դ. Մասնկ ալ պաշտպանվին պիտոր ան պայմանները՝ որ եղած են բալագինեան ցեղին ամմէն ճիւղերուն հետ. նաև ան մասնաւոր դաշնագրու թիւը՝ որ այսօր կը հաստատուի սաքսօնիայի ու բալագինօի կայսրընտիրներուն մէջ :

Ե. Այսրը ու կայսրուհին յայտնի խօսք կուտան որ՝ ամենեւին չարգելեն, այլ թողտան որ՝ պրանտէմպուրկին տանը առջինեկին անցնի երկու մառկուավիան (իշխանութիւր) Մսբախ ու Վայրաթ. երբոր հատնի ան ցեղը որ հիմա կը ժառանգէ, խօսք կուտան որ հրաժարին ան ատենը ամմէն իրաւունքէ ոմանց կալուածոց վրայ՝ որ վերոյգրեալ դքսուէց մէջ կը գտնուվին, ու պօէմիայի թագաւորութէն կախում ունին :

Զ. Մս հաշտութե դաշնագրութեը մէջ կիմացվի նաև սաքսօնիայի կայսրընտիրը, կը հաստատուին նաև ամմէն դաշնագրութիւնները որ եղված են նեմցէի ու պրանտէմպուրկին մէջը 1742. 1745. 1763 :

Սոր դաշնագրում լեւանը կայսեր՝ կայսրուհոյն մէջ,
ու Բալարինօի կայսրընտրին մէջ :

1779 :

ա . Բալարինօին կայսրընտիրը ժառանգէ
ամմէն ան դաւառնէրը՝ որ աւսդրիոյ տու-
նը (նեմցէն) դրաւերէ (զափթ ըրերէ),
թէ պավիէուային մէջ՝ և թէ վերին բալա-
դինօին մէջ , հրաժարելով ամմէն պահանջ
մոնսքներէ՝ որ կրնայ ընել ասոնք ձեռք ձը
գելու համար . ազատ ըլլայ ան ամմէն պայ-
մաններէն՝ որ ըրերէ 1778 յունվ . 3 . Ե-
ղած դաշնագրուէր մէջ . ան դաշնագրու-
թինսալ ոչինչ ըլլայ , իբր թէ չէր եղած :
բ . Կայսրը ու կայսրուհին իրենց մասնաւոր
սիրոյն համար որ ունին բալարինօի կայս-
րընտրին վրայ , իրեն՝ ու իրեն ժառանգա-
ցը կուտան Սինտէլքէօյմ՝ որ սվէվիային
մէջն է , և ինչ իրաւունք որ ունի ըստ ո-
րում պօէմիայի թագաւոր Վլավիսա , Վալ-
տէմպուրկ , ու Վիէթէնսթէյմ տեղւլանցը
վրայ , հատուցում ընելու համար սաքսօնի-
այի տանը , 6 միլիոն Ֆիօլին տալով , ամ-
մէն մէկ տարին կէս միլիոն տայ , երկու ան-
գամէն վճարելով վեց ամսէ վեց ամիս ա-
ռանց մէկ շահու մը : Վոյնպէս բալարինօի
կայսրընտրին ու իր ժառանգներուն կու-
տան պօէմիայի թագաւորին կալուածները՝
որ վերի բալարինօին մէջն են , ինչպէս որ
ինչվան հիմա կը ժառանգէր պավիէուային

կայսրընտիրը : Ասանկալ կայսրը ըստ ուրում գլուխ կայսերութեան կրխոստանայ կայսրընտիրն ու իրեն յաջորդներուն տալու կայսերութե կալուածները, որ պավիէուայի ու շեզիայի շրջանակներուն մէջն են :

դ. Աալադինօին կայսրընտիրնալ հատուցում ընելու համար ան սիրոյն՝ որ կայսրը ու կայսրուհին իրեն ցըցուցին, կուտայ իրենց ու իրենց ժառանգացը կատարեալ ու մշտնջենաւոր տէրութի ունենալ՝ ինչպէս որ հիմա ունին աս տեղվանքներուն վրայ, որք են Ա իլտշուդ, Պրաֆնավ իր քաղքով, Սաւրքիրքէն, Ֆրիպուրկ, Սադդինկէն, Սիէտ, Շարտինկա, և ընդհանրապէս պավիէուային՝ ան ամմէն կտորը՝ որ Ղունա, Ինն, ու Սալցա գետերուն մէջ կիյնայ, որ Պրուկավդէն կառավարութեան մեծ մասը կրձեացընեն : Ասոնք թող առնէ կայսրը, վերին աւսդրիայի հետ միացնէ, որոնց տարեկան եկամուտը մէկ միլիոն Ֆիօռինը անցնի :

դ. Ա երոյիշեալ գետերը Ղունա, Ինն, ու Սալցա, հասարակաց ըլլայ երկու տէրութեց, մէկը չիկրնայ արգելել ազատ նաւարկութիւր երկուքին ժողովրդեան, և իրենց ապրանքներուն :

է. Ա երոյիշեալ երկիրը ամմէն իրաւունքով կայսեր ու կայսրուհոյն ըլլայ, և իրենց ժառանգներուն . իրենքալ կըհրաժարին ամմէն պահանջմունքներէն՝ որ կրնան ունենալ պավիէուայի ժառանգուէր վրայ,

չիւրահանջէ աս բանիս վրայ ոչ ռադիսսօ-
նայի ժողովքին մէջ, և ոչ պավիէնուայի շըր-
ջանակին կառավարութեը մէջ, որ բոլորու-
վին կայսրընտրին ձեռքը մնայ. կայսրըն-
տիրնալ իր վրայ ու իր ժառանգներուն վը-
րայ կառնէ հոն եղած ամմէն պարտքը ինչ

որ ըլլայ :

Ճ. Կայսրը կայսրուհին և բալադինօի կայս-
րընտիրը՝ իրարու յանձնեն ամմէն թըղ-
թէրը, հաշուէգիրները (տէֆթէրները՝)
դիւանները (տէֆթէրխանէները՝) որ ի-
րենց տրված երկիրներուն մէջը կը գտնու-
վին : Ըս դաշնագրութիս հաստատվելու
օրէն՝ 16 օր անցնելէն ետև կայսեր զօրքը
ետ տան պավիէնուային ան կտորը՝ որ ետ
դարձըվի պիտոր բալադինօի տանը . և իշ-
խեն ան երկիրներուն վրայ որ իրենց տրվե-
ցան : Վեջէն 1779 մայիսի 13 :

Վեյէէն ու պրոշէն զօրաց դուրս ելլալը, իրենց
խարճէրը .

1779 :

Ս երոգրեալ թէութեց վրայ եվէլցուցին
որ՝ Ֆրանսզը ու մոսկովը պաշտպան կենան
աս թէութեցը, ինչպէս նաև կայսրնալ
պաշտպան ըլլայ ըստ որում գլուխ գերմա-
նական իշխաններու : Շ ուտ մը պրուշին
զօրքը դուրս ելան պօհմիայէն ու սաքսօ-
նիայէն, որոնց բնակիչքը խալըսեցան ան

տուրքերէն՝ որ պատերազմի մէջ կուտային :
 Կայսեր զօրքնալ դուրս ելան ան երկիրնե-
 րէն՝ որ պիտոր ուրիշի տային , մտան ան
 երկիրը՝ որ կայսեր պիտոր մնար որուն տա-
 րեկան եկամուտը կը հասնէր իբր մէկ միլիոն
 ու 300 հազար ֆիօռլին :

Այս երկիրս 60 միլիոն երկան կը տարածվի
 դիւօլօին սահմանէն ինչպիսի բասավիա , որ
 է քաղաք ամմէն դիացէն մէջ տեղը մնա-
 ցած , ասանկ է նաև սալիզպուրկին արքե-
 պիսկոպոսութիւնը , որ հարուստ է ու ընդար-
 ձակ , և իբր թէ կայսեր սահմանին մէջ հագ-
 ցուցած է : Ամբէին շահաւորը ան եղավ՝
 որ աս երկիրը առնելով՝ վերին աւսդրիան
 միացուց դիւօլօին կոմսութե հետ : Այց
 աս ծեծս ընելու համար՝ կայսրը խարձեց
 50 միլիոն ֆիօռլինէն աւելի , ասչափ ըս-
 տակ հերիք կը լար եռապատիկ ասանկ եր-
 կիր ծախու առնելու , մէյմընալ որ ամմէն
 հին պարտքերէն խալըսեցաւ , որովհետև
 պավիէնային մէկալ մնացած երկիրը 37 մի-
 լիոն պարտքի տակ էր ընկած է , կարողոս
 կայսերմէ վեր :

Պրուշին թագաւորը պրէզլավը թողուց ,
 իրեն սովորական տեղը դարձաւ , որ է բօզ-
 տամ . ինքնալ աս ծեծիս մէջը 20 միլիոն
 ռիալի խարձեց , ուրիշ բան չի վաստրկե-
 ցաւ որ՝ մէկ պզտիկ տեղի մը ժառանգուիլը
 ապահովցուց՝ որ իր երկրէն բոլորովին բաժ-
 նը ված է . կառավարուէ ու կարգալ գրե-
 լուն հետ պարապեցաւ . ան յիշատակարա-
 նը որ իր ատենին պատմուին է՝ աս ատեն

լմնցուց, որուն մէջը շատ գիտնալու բանէր
կան :

Սոյն տարւականը մէջ սեպտ. 21 ծնաւ Փե-
տերիքոս կուլիեւմոս իշխանը, որդի Փէրտի
նանտոսի բրուստիայի իշխանին :

Սեկտեմբերայի 24-ի եղած ապստամբութիւնը
հասարակ համար .

1778—1780 :

Երրորդ կուլիեւմոս ինկիլիզի թագաւորին
ատենը խիստ օրէնքներ եղած էին ուղղա-
փառաց դէմ, որ արդարուն ու մարդկու-
թեալ դէմ էին, անվայել ինկիլիզ ազգին,
աս տարի 1778 ինկիլիզին բառւամէնդը
թագաւորին հաւանութիւնը սրբ վերցուց, սրբ
կակրղցուց, անով ուղղափառներնալ քա-
ղաքացիի կարգը անցան, բայց 1780 կօռ-
տրն լուտը աս բանիս վրայ խիստ տաքնա-
լով, լոնտոայի մէջ մէկ մենծ ապստամբու-
թի մը հանեց . յունիսի 2, 60 հազար մարդ
գլուխը ժողոված եկավ բառւամէնդին առ-
ջին, ճամփան ու պատահէր որ իրենց կար-
ծիքէն չէր՝ ամմէննալ կըզարնէին կըմնա-
սէին : Այն ժողովարանին (տիվանխա-
նէին) դուռը վաղեցին, կտորել բանալ
կուղէին, հոն եղած պահապան զօրքը
հետեակ (ետեան) ու ձիաւոր՝ դէմ դրին .
ասոնք ձեռվընին մուրհակ (արզուհալ)
ունենալով 150 հազար մարդու ձեռաց
գրով ստորագրուած զմուրված, կուղէին

որ շուտ մը պատասխանը տան . բառլամէն
 դը որոշեց յունիսին 6 պատասխանը տա-
 լու , ասոնք կըսնդէին կաղաղակէին ան օ-
 րը պատասխանը առնելու : Սկսան ուղղա-
 փառ դեսպաններուն մատուռները թալ-
 լել , ինչպէս էին սառտէնեային ու պավիէ-
 ուային դեսպանները . վաղուան օրնալ ու-
 րիշ իրեք դեսպաններուն ասանկ ըրին ,
 սրբազան անօթնէրը հրապարակներու մէջ
 երեցին , շատ ուղղափառներու տներալ ե-
 րեցին , անոնց հետ նաև ուղղափառ չեղօղ-
 ներունալ : Սաքվիլ ասպետ կար՝ աս էր որ
 1778 բառլամէնդին առաջարկերէր ուղղա-
 փառաց խնդիրքը , ինչու առաջարկեց ըսե-
 լով յունիսի 6 տունը փլուցին , մէջի ապ-
 րանքները երեցին . Սանտվիք անուն կոմս-
 նալ երբոր բառլամէնդը կերթար՝ ան օրը
 վրան վազելով խոցեցին . Սանսֆիէլտ
 կոմսին մեծաշէն պալատնալ (սերայնալ)
 երեցին , հարիւրէն աւելի պալատ է՝ տուն
 է՝ երեցին , շատ աւելի մնասնէր պիտոր
 ընէին՝ թէ որ զօրքը վրայ չիհասնէին : Ս-
 նանկ եղավ որ՝ լօնտուայի փաշայ խափու-
 սին կառավարութիւր դադրեցուց , իր տե-
 զը զօրք մտուց . բազմութի զօրաց վրայ
 հասնելով լուտ կօռտօնը բռնեցին :
 Բառլամէնդը վճռով մը անուղղակի հաս-
 տատեց ինչ որ ըրերէր ուղղափառներուն
 համար 1778 . ետքը յանցաւորները պատ-
 ժեց . շատը՝ ուր որ յանցանք գործեցին ,
 հոն կախեցին . 285 հոգի արդէն սպանված
 էին զինուորներէն . 257 հոգիալ բանտը դը-

րին անոնցմէ 173 հոգի խոցված էին: Այսու
տօնին վրայ քննութիւնը րին՝ որ քշեց ինչպէս
հետեւեալ տարին, ետքը հրատարակվեցաւ
որ անմեղ էր. պատճառը չի գիտցրվեցաւ,
կարելի է որ խենթ կարծեցին, ինչպէս որ
ետքը ժողովուրդը սեպեց. բայց անանկ
խենթերէն եղավ որ՝ ետեւէ ետեւ նոր նոր
խռովուիւնէր ելավ կառավարուէ դէմ, ա-
նոր համար բանտը դրվեցաւ. պինտ ետքը
անանկ ձան հանեցին որ՝ հրէայ եղէր, ու
իր ուղեղը փնասված:

Մասնովին Ռջ եղած դիպուածները. բայնարձք
եղած դաշնադրութե նորէն հաստատվելը.

1777—1779:

Բեդրօպուրկ քաղքին առջին 1777 սեպտ.
21. մէկ մեծ փոթորիկ մը ելավ. սաստիկ
հովը պալգիկ ծովին ջուրը դէպ ՚ի նեվա
գետը հրեց, որ բեդրօպուրկին մէջէն կանց-
նի, քաղքին ճամփայնէրուն (սօխախնէ-
րուն) մէջը չորս ոտնաչափ վեր բարձրը-
ցաւ ջուրը, տունէրը՝ մահսէնները կոխեց,
շատ միլիոն ուուպլիի (պէշլիքի) փնաս տը-
վավ. տեղ տեղ ամբողջ մահսէններ՝ նա-
ւակներ՝ ու նաւեր առավ տարաւ, լեռնէ-
րուն վրայ ձգեց, կամուրջները (քէօփրիւ-
ները) քակեց. հոյնալ տներուն ծածքը ա-
ռավ տարավ, ամբողջ գեղվանքալ ջուրը
կոխեց, մարդ անասուն կորսնցուց. ասանկ
փնասներ եղան նաւ քուծնչգատ ու նաւվա:

Ըսոր նման փոթորիկ մընալ եղավ հոկտ .

28 . բայց քիչ քչեց , փնասը քիչ եղավ :

Ըս տարվանս մէջ դեկտ . 23 . պօղոս դուբս սին զաւակ եղավ աղեքսանդր անուհով , որ հիմակվան մոսկովի թագաւորն է . իսկ 1779 մայիսի 8 երկրորդ զաւակը եղավ կոստանդին անուհով , որ հիմա հրամայօղ է ամմէն զօրաց վրայ կարիճ ու սրտոտ :

Ենչպէս որ վերը գրերենք , խըրըմ ու պըզտիկ թաթարը մէկ զատ տէրութի մը սահմանվերէր տաճկէն անկախ , բայց աս բանիս համար թաթարնէրը անհանդիստ կըլլային տաճկէն , նաև իրենց մէջնալ միշտ անսպակաս էր ճշգոհանքը ասանկ փոխվելուն համար , վասն զի կըտեսնային որ՝ առջինին պէս չէին կրնար յարձըկիլ իրենց դրացիներուն երկիրը մոսկովին ու լէհին վրայ , անոնցմէ մարդ ու անասուն յափշտակել , յափշտակութե ապրիլ : Ըս խռովութիւր աւելի շատցընօղը ան եղավ որ՝ երկու հոգի մէկմէկու ձեռքէ կուզէին խանութիւր յափշտակել . առջի բերանը Տէվլէթ կիրայը խան նստաւ , վաւտեց շահին կիրայը իր հակառակորդը , տաճկի դուռնալ տէվլէթ կիրայը ճանչցաւ օրինաւոր խան . իսկ մոսկովը Շահին կիրային տէր կեցաւ , որ շատ զօրքով՝ դարձաւ խըրըմ եկավ , տէվլէթ կիրայը վաւտեց :

Ըս բանս ահա նորէն թնամութիւն ձգեց տաճկին ու մոսկովին մէջը . նորէն ծեծ բաց վելու վտանգ կերևնար . երկու դիացէն ալ շատ զօրաւոր թղթէր գրեցին իրարու , շատ

վիճմունքներ ըրին, պինտ ետքը 1779 մարտի 21 քայնարձըք եղած գաշնադրու թիւը նորէն հաստատեցին. իբրըմին անկախ ըլլալը նորէն ընդունելով խօսք կասեցին, թէ որ թաթարներուն մէջը մէկ կուիւ մը ծագելու ըլլայ իրենց նոր խանին համար, թողունք որ իրենք իրենց ազատութիւնը մէջերնին խաղաղին, իսկ թէ որ ինքիբերնին չիկրնան խաղաղիլ, ան ատենը մոսկովս ու տաճիկը մէկ տեղ մէջ մտնան խաղաղըընելու :

Յովսէփ կայսեր երրորդ ճամբորդութիւնը դէպ 'ի պօէմիա, իրեն նենյաղօգոտ գործերը .

1780 :

Յովսէփ կայսրը՝ դժարնալով Ֆրանսային վրայ՝ որ իր գաշնադրութիւնը վրայ չիկեցաւ օգնութիւն իրիկելու համար, ուղեց աւելի մօտիկնալ մոսկովին որ մենծնալու հետ էր, անոր համար գաղտուկ հասկըցուց իր միտքը քօպէնցէլ կոմսին որ բեգրօպուրի էր, թէ կուղեր տեսնել թաղուհին թաղուհին հետ. ասանկով 1780 գարնան ատեն ճամբայ ելալ պօէմիա երթալու պրօֆն կոմսին ու զօրապետին հետ՝ որ պրօֆն մառէշալին տղան էր : Արիւ նոր բերդ ուղեց շինել Քլէս ու Սերեզիաչատ, որ լավտօնը առաջարկերէր, որովհետև անանկ տեղւանք էին որ՝ թշնամին յարձակմանը դէմ դնելու պէտք կըլլային : Այն ատենը թրեստ

ալ մէկ մեծ ամբարտակ (խալտրըրմ) մը շինել տրվերէր ծովու մէջ, ու նոր նազարէթ ընդարձակ, շատ արտունու թիւնէր տալով ան վաճառական տնէրուն՝ որ դուրսի երկրէն թրեստ կուգային :

Մնչափ սէր ունէր յովսէփ վաճառականու թիւնը ծաղկեցրնելու, որ 1776 մէկ բաժանորդուի (օւթախուի) մը հնարելով մէկ մենծ նաւ մը խրկերէր շինուած չին լեցուն ապրանքով, վրան նաւապետ դնելով Պուլց սկովտացին. ասիկայ երբոր հասաւ մէկ սղտիկ կղզի մը՝ որ շատ հեռու չէ թրին կիպարէն՝ դաշնագրովաժ ըլլալով տանի մառքային հետ՝ ուղեց մէկ բերդ մը շինել հոն բաւական զինուորներով : Մը նաւս առուտուր ընելով քօռօմանտէլ, շիամ, ու չին, դարձաւ եկաւ ալիկուռնա լեցուն պատուական ապրանքներով, նորէն դարձաւ դնաց ուրիշ երկու նաւալ իր հետը ունենալով, որով նոր առուտուրի ճամփայ բաց վեցաւ շատ շահաւոր թէ օտէնտա և թէ թրեստէ, բայց ֆրանսզին վերջի պատերազմը աս ամմէն բանը ավրեց :

Խուվաթըխին ու շկաւոնիային մէջնալ նոր գեղէր շինվեցան, վասն զի տաճկի երկրին փաշայները տեղ տեղ զրկում ընելով, քրիստոնեայ բնակիչները հոն կրփախ չէին : Մենծ լճէր (կէօլէր) կային վեսբրին ու ըսդուլմէյղէնսպուրկ կոմսութեց մէջը՝ որ օդը կավրէին, ֆիլէմէնկի վարպետներ բերաւ անոնք գոցեց, անոնց տեղը եղաւ պատուական գետին ցորեն ցանելու 200 հա.

զար ածուէն (թառլայէն) աւելի :
 1) Երին մաճառի մէջ թիւնավ ըսված տե-
 ղը համալսարան կար՝ ուր քիչ աշկերտ կեր-
 թար, անկից փոխվեցաւ պուտիմ քաղաքը
 բերվեցաւ, որ մաճառին մայր քաղաքն է .
 թէպէտև աս բանս եղավ մէկ նորոգութի
 մը ան ուսման՝ որ 1465 մադդիա քօռվինօն
 կանգնեցեր, որ երևելի թագաւորներէն
 մէկն էր ԺԵ դարուն մէջ, և որովհետև
 1541 տաճիկը աւերէր ան քաղաքը՝ վար-
 պետներնալ աշկերտներնալ փախեցին ան-
 կից :

Յովսէփ կայսեր շրջորդ ճամբորդութեանը մոյլով,
 Տօսքիա, ու Բէրբօսարի .

1780 :

Յովսէփ կայսրը սէր մեծ ունենալով աշ-
 խարհ քալել, աշխարհ ու մարդ ճանչնալ,
 պօհմիայէն անցաւ եկաւ կալլիցիա, անկէց
 ճերմակ ռուսիա, մոյլովին մէջ որ տնեբէր
 գետին վրայ է՝ տեսնրվեցաւ կատարինէ
 թագուհին հետ՝ որ անալ ճամփայ ելերէր
 լէհէն առած երկիրնէրը տեսնալու համար .
 վեց օր մէկ տեղ տեսնրվեցան երկան խօ-
 սեցան մեծ բարեկամութի կապեցին . եր-
 կու տէրութեց մէջ մէկ մշտնջենաւոր նոր
 գաշնադրութի մը ըրին մարտապահ և մար-
 տավար՝ բայց խիստ գաղտուկ : Ատքը մէկ
 տեղ ելան մոյլովէն ինչլան ըզմօլէնսքօ ե-
 կան, հոն բաժնրվելով յովսէփ գնաց մօսք-

վիա տեսնալու . երբոր տեսաւ ան ջրանցքը՝ որ մեծն պետրոս բանալ էր արվէր, որ մօք-վիակն բէդրօպուրկ կրտանի, երկան 600 մղոն աշխարհագրական, խիստ զարմացաւ մնաց, խոստովանելով որ՝ ինչ մեծագործ շէնքէր որ մնացած կան հռոմայեցոց կայսերաց, ասիկայ անոնցմէ շատ աւելի կրգերազանցէր :

Սօքվիայի տեսնալու բանէրը տեսնալէն ետև՝ բէդրօպուրկ գնաց, ուր կատարինէ թագուհին դարձած ըլլալով իրեն կրսպասէր . քանի մը օր նստաւ ցարսքօլիա ըսված զուարճալի տեղը, թագուհւոյն և իր ընտանեացը հետ տեսնելով, զանազան հանդէսնէր ընելով : Յուլիսի 10 հին տօմարին կեօրէ որովհետև սք պետրոսի տօն էր՝ յովսէփ կայսեր համար աւելի փառաւոր տօնեցին բէդէուհօֆ ըսված տեղը, գիշերը լուսաւորութիւն ըրին 50 հազար պիլլօռէ կանթեղնէրով՝ զանազան գունէրով՝ համեմատութիւն շարված ըլլալով տեսնողնէրը կրգմայլեցնէր . ուրիշ խորհրդաւոր կամարներ շինեցին, խորհրդաւոր գրուածներ, որ մոսկովին բարեկամուիր կրցրցընէր նեմեցին հետ, մոսկովին մենծէրնալ ան հանդէսին (ալային) մէջը ամմէննալ իրենց փառաւոր հագուստնին հադված . 60 հազարէն աւելի ալ ժողովուրդ հոն ժողվըված տեսնալու համար, շատ մեծ ընդունելութիւն ու պատիւ ըրին յովսէփ կայսեր :

Ս աղվան օրը յովսէփ գնաց գիտութիւն ճեմարանը տեսնալու, որ մեծն պետրոս հիմ-

ներէր, ու եղիսաբեթ իր դուստրը մեծցուցէր զարդարերէր, հոն իրեն առջին ելան ամմէն գիտուն վարպետները՝ ու պատուանուն անդամները, որ եւրոպայի մէջէն աւելի գիտուն ու ծաղկած ազգերէն ժողովրդած ընտրւած էին: Արքոր մտաւ բնապատում հանդիսարանը տեսնալու, իրեն ընծայեցին մէկ ոսկի միտալ մը շուտ մը տպւած, երկու թագաւորաց մէկ տեղ դալու յիշատակը պահելու համար: Արքատունը տեսաւ շատ հաւնեցաւ իր մեծաշինութիւնը ու աղէկ կարգաւորութիւնը վրայ, հոն իրեն ընծայեցին մէկ ճանապարհորդարան մը, որ էր հաւաքում զանազան ատենի եղած ճամփորդութիւններու ամմէն ուստիայի երկրին մէջ, ասիկայ խիստ հաճոյ անցալ յովսէփ կայսեր. իրեն ընծայեցին նաև հաւաքում մը գետնէ ելած բերքերու, և ճիշդ աշխարհացոյցներու. նաև մէկ աշխարհացոյց մը յովսէփայ ըրած ճամփորդութիւնը վրայ, վեննայէն մոյլով, մոյլովէն մօսքովիա, մօսքովիայէն բէդրօպուրկ: Բնջվան յուլիսի 20 ասանկ պատուով հոն կենալէն ետև յովսէփ, գիշերանց ճամփայ ելալ, թագուհին ու ամմէն արքունիքը իրեն ընկերանալով:

Բայց աս ճամփորդութիւն ամմէն թագաւորաց մէջ մեծ շփոթութիւն ձգեց, որովհետև յովսէփ որչափ որ բէդրօպուրկ կեցաւ, ամմէն օր երկու թագաւորք երկան առանձնախօսութիւն կընէին, գրիգոր բօղէմքին իշխաննալ մէկ տեղ, ինչ պիտոր ըլլայ ըսե-

լով ամմէն թագաւորնէրուն դեսպաննէրը զանազան կարծիք գացին իրենց գաղտնի խորհուրդին վրայ, կրկասկածէին որ ասոնց խորհուրդը մէկ ճամփայ մը դնել էր զիւրենք մեծցընելու: Անոր համար ուրիշ թագաւորնէրու խիստ անհաճոյ եղավ ասոնց մէկ տեղ տեսնելիլը, չըլլայ որ ասոնց մենծնալովը եւրոպայի ուրիշ թագաւորնէրուն հաւասարակշռութիւն կորսովի. մէջերնին ամմէնէն աւելի պրուշին թագաւորը խիստ կրմտմտար, ետեւէ կիյնար իրենց խորհուրդը իմանալու: Սանաւանդ որ կրտեսնային մոսկովին զօրքը 350 հազար ոտանաւոր ու ձիաւոր պատրաստ ոտքի վրայ կեցած ունենալով ետեւէ ետեւալ միշտ շատցընելու հետ կըլլար, 150 պատերազմական նաւալ ծովի վրայ ունէր. իրեն եկամուտնալ անանկ աղէկ կարգաւորված էր՝ որ ամմէն տարի թագուհին ծածուկ խաղնան 5. 6. միլիոն ռուպլի (պէշլիք) կեվէլնար, ասկէց ամմէն տէրութիւն վախնալ սկսան:

Արդոյտ լուէնեան դուստը կըմեռնի, ճախտիմլեանոս հայտեր եղբարը դեղորնեան կարգին մեծատոր կըլլէ, ու դուստ մերկէնլեյմի.

1780:

Արքոր յովսէփ վեննա հասաւ, իր արքունիքը սուգի մէջ դտաւ կարողոս աղէքսանդր լուէնեան դքսին մահուանը համար, որ էր եղբայր անֆրանչիսկոս մեռած կայսեր, հօր

եղբայր յովսէփ կայսեր : Մսիկայ կառավար էր եղած աւտղրիական ստորին նահանգաց , և մեծ մառէշալ ուղղափառ գերմանական կայսերութե . շատ հեղ զօրագլուխ եղերէր , շատալ յաղթուլերէր , վասն զի թէպէտ քաջասիրտ էր՝ բայց խիստ տաքարիւն էր : Անցաղավարուէ մէջ ըլլալով անուշ , սրտցաւ , չունենալով ամենեւին գոռոզութի , սիրելի էր եղած իր հպատակներուն որ կրսվին Ֆիամինկ ու պուասանդ , ասոնք 36 տարի կառավարեց , որոնց բնութիւնը թէպէտ աստամբօղ բնուի է , բայց մէկ տրտունջ մը չունենալով իր վրայ՝ միշտ հնազանդ եղան իրեն . արդարասէրալ ըլլալով իր օրը միշտ օրէնքը պահպանեցաւ , վաճառականութիւնը շատցաւ : Մտոր յաջորդ ընտրուեցաւ քրիստինա արշիդքսուհին իր երկանը հետ մէկ տեղ , որ էր ալպերտ դուքսն սաքս դէշէնեան . ասիկայ եղավ մէկ գէշ ընտրութի որ շատ վայնասուն բերաւ ինչպէս որ ունինք պատմելու :

Մտատեննէրսալ յովսէփ կայսեր վերջին եղբարը մաքսիմիլիանոս արշիդուքսը եղավ գլխաւոր մեծաւոր Վեդոնեան կարգին ⁽¹⁾,

(1) Վեդոնեան ըսված կարգը՝ մալթայի կարգին հետ մէկ տեղ ըսկսաւ յամին 1100. քիչ մը ետև կոֆֆրէտոս պուլիօնեան երուսաղէմ առնելէն ետև՝ առջին մեծաւորը եղավ Արիկոս վալքոգեան , պարտաւորելով որ նեմյէին ուխտաւորները որ երուսաղէմ կերթային՝ պաշտպանէ ու գարմանէ . իբր 200 տարի անցնելէն ետև երբոր արպընէրը երուսաղէմ առին , աս դեդոնեան ասպետները կամ կրօնաւոր

որուն առաջ օգնականն էր եղած, աս կար-
գին մեծաւոր ըլլալովը՝ կայսերական ժո-
ղովքին հաւանութիւն, եղաւ նաև դուքս մէր-
կէնթէյմ քաղքին՝ որ Ֆուանքօնիայի մէջն
է : Ըսանկով ամմէն կայսեր եղբարնէրը
մէյ մէկ տեղի տէր եղան, մէյ մէկ երկրի
իշխանութիւն ձեռք ձգեցին, մէկը դօսքանայի
դուքս ըլլալով, մէկալը լոմպաւտիայի կա-
ռավար ըլլալով՝ որ ժառանգօղ պիտոր ըլ-
լար էսդէ ցեղին, ու իր երկիրնէրուն մօ-
տէնայի ու ռէճճիօյի . իսկ մաքսիմիլիանոս
մէրկէնթէյմին ինչպէս որ ըսինք :

Ըս բանիս համար ատենին պարագայնէր-
նալ յաջողութիւն տրվին, ինչու որ Ֆրան-
սան՝ ինկիլդէռուան, օլանտան կամ Ֆիլի-
մէնկը սաստիկ կռուի մէջ ըլլալով ատեն
չունէին դէմ դնելու . իսկ մոսկովը օգնա-
կան էր նեմցելին :

նէրը տաք երկիրէն ելան՝ բրուսսիային ցուրտ երկի-
րը եկան, որոնք ք. օնորիոս պապ քարոզիչ ըրաւ
անհաւատնէրը դարձնելու համար, բայց ասոնք ի-
րենց տէրուէ տակը առին, Թոռնին մարիէմպուրկ
գրին, անկէց 1460ին ատեննէրը լեհերէն հալածվե-
լով փախան եկան քէնիկսպերկ, հոնալ քիչ կեցան .
վասն զի արևելեան բրուսսիան գրեթէ բոլորովին
լոթրան ըլլալով, պրանտէմպուրկեան ալպերտը մե-
ծաւորութենէ անցաւ եղաւ ժառանգաւոր իշխան,
ինչպէս որ քէգգէրի ցեղնալ քուռլանտիայի մէջ
ըրաւ, ժառանգութիւննալ իր տանը վրայ անցուց :
Երբոր կորսնցուցին բրուսսիան նաև լիվօնիան՝ շվե-
տի ու մոսկովի ծեծէն ավերշտրկվելով, քաջվեցան
մտան վերոյիշեալ մէրկէնթէյմ քաղաքը դապէր գե-
տին վրայ, ուր տեղ է ինչպէս հիմա իրենց բնակա-
րանը :

Մատթիւիւնոս բօլճնիայի կայսրընտրին օգնականն
 իբլայ, ու եպիսկոպոս Տոննարէրի .

1780 :

Ա երոզրեալ իշխանուէ՛ զատ՝ մտածեցին
 որ նոյն մաքսիմիլիանոսը մէկ յաջորդ մը
 ընտրեն ծեր կայսրընտրին ու արքեպիսկո-
 պոսին Ֆետերիկոսի, որ քօլճնիայի արքե-
 պիսկոպոս էր, և մունսդէրի եպիսկոպոս և
 իշխան, որով իսկոյն տէր կըլլար ան երկիր-
 ներու՝ որ վէսդֆալիայէն ուէնօ գետին ան
 դի դին կըտարածվին . աս բանիս վրայ
 Ֆրանսային հաւանութիւնալ շուտով առին,
 վասն զի արդէն ժո՛ղ լուիզիին ատենը սաս-
 տիկ պատերազմ՝ ըրերէր Ֆրանսան ին . լեռ-
 բուտոս կայսեր հետ, որպէս զի իրեն դին
 մէկ կայսրընտիր մը ունենայ գերմանիայի
 մէջ, հիմա մաքսիմիլիանոս Ֆրանսայի թա-
 գուհիին եղբարը ըլլալով՝ իբր թէ ուզած-
 նին եղած կըլլար : Ասանկով բանը աղէկ մը
 շտկելով՝ մաքսիմիլիանոս արշիդուքսը հրա-
 սլարակաւ հագաւ եկեղեցական հագուստը,
 որպէս զի օգնական ընտրելի վերոյիշեալ
 արքեպիսկոպոսին :

Գերմանիայի ամմէն իշխանները լուռ կե-
 ցան աս բանիս վրայ, միայն թ՛ . Ֆետերիքոս
 պրուշին թագաւորը դժվարը գալով գան-
 կատ գրեց քօլճնիայի կայսրընտրին, թէ ինչ
 պէս եղավ որ՝ ասով երկու կայսրընտրուի
 ընկաւ աւսդրիոյ տանը վրայ (որ է նեմցէն)

և երկու իշխանաւոր եպիսկոպոսութի իրեն
մէկ իշխանի վրայ . ասանկով նեմցէն իր
մեծազօր տէրութի մէկ յաջորդական Ժա-
ռանգութի մը կըթողու իր թողնէրուն ,
ինչպէս որ մաճառի ու պօէմիայի թագա-
ւորնէրը եղան , որ առաջ ընտրութի կըլ-
լըվէր , նեմցէին ձեռքը անցնէէն ետե կա-
մաց կամաց դադրեցաւ ընտրութի ըլլալը :
Ըսանկ թղթեր գրէէն զատ՝ չիկրցաւ ու-
րիշ բան մը ընել Ֆետերիքոս . կերևայ որ
իր ծերութէն ու հիւանդութէն որ միշտ
կըտանջըվէր , չէր համարձակէր ծեծ բանալ
աս բանիս համար :

Վօլօնիային կայսրընտիրը պատասխանեց
Ֆետերիքոսի : „ Ենչ բանէ որ դուք կըվախ-
„ նաք , ան վախը աս բանիս մէջ չիկայ ,
„ վասն զի աս երկու եպիսկոպոսուի կառա-
„ վարօղը (որ է մաքսիմիլիանոս) , պէտք է
„ միշտ հնազանդ ըլլալ՝ ան օրէնքին կեօրէ
„ երթալ , որ հիմնական օրէնք են թէ ան
„ երկու եպիսկոպոսութեանը , և թէ գեր-
„ մանական սահմանադրութեր . ասանկալ
„ ահա ըսաւ պրանտէմպուրկին տունէն ի
„ ըարու ետեէն իրեք իշխաննէր նստան
„ յաջորդութի , առանց մէկ փնաս մը տա-
„ լու կարգադրութի գերմանական իշխա-
„ նուէ (1) “ : Ֆետերիքոս աս դիպցէն յու-

(1) Պրանտէմպուրկ ըսված տունը՝ իրեն Ֆետերի-
քոսին տունն էր , որ և աւագրիոյ տանը պէս միշտ
կուզէր իր սահմանը ընդարձակել՝ գերմանիայէն տեղ-
վանք յափշտակելով :

սահատվելով՝ մոռնըդէրին կանոնիկոսնէ-
րուն թուղթ գրեց գրգուելով որ՝ մաքսի-
միլիանոսը չընտրեն իրենց իշխան ու եպիս-
կոպոս, նորէն զատեն իրենց աթոռը քօլօ-
նիայի աթոռէն՝ ինչպէս որ երբեմն ըրած
էին :

Բայց ինչ որ ըրաւ Փետերիքոս՝ բանը յով-
սէփ կայսեր ու կայսրուհւոյն ուզածին պէս
առաջ գնաց . մաքսիմիլիանոս իր դին ունե-
նալով Ֆրանսզը նաև մոսկովը՝ 1780. օ-
գոստ . 7 . հանդիսապէս օգնական եղավ
քօլօնիայի կայսրընտրին , ան պատճառովը
ընտրովեցաւ եղաւ նաև եպիսկոպոս մոնս-
դէրի , տէր եղավ անանկ երկրի մը՝ որ մէկ
հարուստ բարեբեր երկիրներէն մէկն է ,
չատ երևելի է գերմանիայի տասը շրջանակ-
ներուն մէջ՝ իրեն մարդաշատուէ ընդար-
ձակութի ու գրիցը համար : Ենոր համար
1763ին եղած հաշտուէ ատենէն վեր պրու-
շին թագաւորը Փետերիքոս իժիր կառա-
ջարկէր կայսրուհւոյն մարիամու թերեղի-
նայի՝ որ թոյլ տայ աշխարհական իշխանու-
թի ընելու ան եկեղեցական երկիրը իր շա-
հուն համար , խոստանալով որ՝ ինքը պրու-
շը անոր փոխարէն կլացին կոմսուիը տայ ,
երկու ուրիշ իշխանութիալ որ շէզիային
մէջն է . բայց կայսրուհին մտիկ չիդրաւ ,
գիտէր որչափ շահաւոր պիտոր ըլլար աս
երկիրը միացընել քլէվէսին՝ կէլտրիային՝
վէսէլին՝ ու մինտէնին հետ :

Վօլօնիային եկեղեցականքնալ պրուշին
դին երևեցան , երկու ամիս ուշացուցին ,

Ֆուրսդէմսկերկին պարոննալ կուզէ ըսին
օգնական ունենալով իրեն պրուշը, բայց
ամմէն բան պարաս էլավ:

Սարիաճ Լեւրեղինայի նեմցէի հայսրուհոյն
Տահը, էր Բնու-Լէր .

1780 :

Սեմցէի Թագաւորութե վրայ մեծ փոփու
խութի բերաւ աս կայսրուհոյն մահը, ու
րուն վրայ մէկ արտառոց գիրուհի մը եկած
էր Ետքի ատեններս՝ որ Թող չէր իտար մէկ
շարժում մը ընել, և ոչ հանգիստ նստիլ,
անկէց ջրգողուհի եկավ վրան . կանչեց իր
զաւկընէրը՝ բարի խրատներով կտակ ը-
րավ, որ արդար ու բարերարօղ ըլլան,
ինչ բարիք որ ձեռվըներնէն կուգայ՝ ուրիշ
ներուն ընեն : „ Ինչ որ կըթողում՝ ամմէն
„ նալ իմ յաջորդիս է ըսաւ, (որ էր յով
„ սէփ կայսրը իր տղան), երկու ազատ աղ
„ ջրկս իրեն կըյանձնեմ, և գիտեմ որ եղբար
„ ըլլալէն աւելի՝ իբրև հայր սիրելի պիտոր
„ հոգայ անոնք, : Արբոր առանձին մնաց՝ իր
ձեռագրով գիր մը գրեց մաճառստանի մեծ
գիւանադարին՝ որ կըսվէր Ֆրանչիսքոս Էս-
դէրազի, ըսելով . „ Արմենիմ շնորհակալ
„ ըլլալով մաճառներէն՝ որ իմ ամմէն նե-
„ ղութես մէջ Թև Թիկունք եղան, մանաւ
„ ւանդ 1741ին եղած ծեծին մէջ „ :

Եսանկով 1780 . նոյեմբ . 29 մեռաւ 63
տարվան ու կէս, 40 տարի կառավարելէն

ետեւ, որ ակադրիոյ տանը ետքի մնացած զաւակը եղաւ բուն մանչու դիագէն, որուն առջի նահապետը եղած էր ռօտօլֆոս, որ 1273 թագաւորէրէր: Այս աս ետքի զաւակը եղաւ ամմէնէն առջի պարծանքը իր ակադրիական ցեղին վրայ իր բարեպաշտութիւնը համար, ըլլալով խղճմտանքաւոր, խոհեմ, շատ համբերօղ, առատաձեռն բարերարօղ ամմէնուն, բարի օրինակ թողուց ամմէն թագաւորներուն ան ատենը՝ որ ատեն որ պաղուծիւն էր մտած մեծ մասը եւրոպայի արքունեացը մէջ:

Երբն նոր նստելու ատենը՝ կայսերական թախտը կորսնցրնելու վտանգի մէջ ընկաւ, բայց ինքը անանկ խոհեմութիւն մը կառավարեց, որ ետքը ամմէն թագաւորներ կը ցանկային իրեն ցեղին մօտիկնալ, իրեն հետ ազգականութիւն ունենալ. ասանկով հիմա մեռնելու ատենը իր զակերները մէյ մէկ թախտի մէջ տեղաւորված տեսաւ իր աչքով մանչէրը նաև աղջիկները, յովսէփը իր ակադրիական թախտին վրայ, լեօբօլտոսը դօսքանային վրայ՝ որ մէտիչի ցեղին թախտն էր, Ֆէրտինանտոսը լօմպառտային վրայ որ միլան կրնատէր, մաքսիմիլիանոսը քօլօնիայի կայսրընտրութիւն վրայ՝ որուն օգնական էր եղած, դեդոնեան կարդինալ մեծաւոր, մոնսոգէրի եպիսկոպոսի օգնական: Աղջիկներէն՝ մարիամ ամալիան բառմայի դըբսուհի էր եղած, բառլօդդան կամ բառօլինան՝ նաքօլի թագուհի, անդօնիէդդան՝ ֆրանսայի թագուհի, մարիամ քրիստինան՝

սաքս դէջէնին դքսուհի, որ ստորին նա-

հանդէնէրնալ մէկ տեղ կրկառաւարէր :
 Իր ընկերը ան . Ֆրանչիսկոս մեռնելէն ետե՛
 աս հողեսէր կայսրուհիս իր մահը մտածե-
 լու համար՝ իրեն մարմնոյն սնտուկը կամ
 տապանը շինել տրվաւ, մեռնելու հագուստ-
 նալ ինքիր ձեռքովը գաղտուկ կարեց պա-
 տրաստեց, որով և թաղվեցաւ՝ վրանին
 նայելով միշտ իր մահը կրմտածէր : Ինս-
 բրուք քաղաքը ուր որ մեռաւ Ֆրանչիսքոս,
 ան տունը փառաւոր վանք մը շինեց, մէջը
 տասվերկու կոյս աղջիկ դրաւ կանոնիկո-
 սուհի անունով, ամմէննալ հին աղնուական
 տներէ, որոնց քննութիւնը անանկ կրլար՝
 ինչպէս որ կրլար մալգայի ասպետներու
 վրայ . ասոնց աղէկ եկամուտ կապելով՝
 պարտք դրաւ միշտ աղօթք ընել Ֆրանչիս-
 քոսի իր էրկանը հողիին համար :

Իսկ երբոր ինքը կայսրուհին մեռնելու ե-
 զաւ՛ իրեն ետքի օրերը շատ աւելի բարերա-
 ղուի ընել տրվաւ որբէրու և աղքատնէ-
 ղու . իր մեռնելէն քիչ մը առաջ աս խօսքս
 զուրցեց : „ Թէ որ իմ թագաւորութեւս
 „ ատենը մեղադրելու արժանի բան մը ե-
 „ ղերէ՛ գիտցիք որ իմ չիգիտնալովս եղե-
 „ ղէ, ինչու որ իմ միտքս միշտ աղէկութի
 „ ընել կընայէր „ : Արզարմանային քովի
 եղօղնէրը իր քաջալերուէ ու միտքարուէր
 վրայ, վասն զի խիստ ուրախ կըցըցընէր զին-
 քը մեռնելու վրայ, դարձաւ ան ատենը
 յովսէփ կայսեր իր որդւոյն ըսաւ : „ Ինչ
 „ որ աշխարհ մենծութի ու զօրութիւն կը

„ կոչէ՛ որդեակ , աս ատենս ամմէնը կրկոր
 „ սրվին աներևոյթ կրլան , բայց իս հիմա
 „ հանդիստ և ուրախ կրտեմնաք , ասիկայ
 „ կուգայ խղճմտանքիս մաքրութի . քառ
 „ սուն տարվան ծանր թագաւորութեանս
 „ ատենը՝ միշտ ճշմարտունիը ու արդարու
 „ թիր նայերեմ՝ , կրնայ ըլլալ որ խաբւած
 „ ըլլամ պաշտօնեայ ընտրելուս ատենը , իմ
 „ մտքինս ծուռ հասկըցած ըլլան , ծուռ ը
 „ րած ըլլան , բայց սրտագէտն անձ գիտէ իմ
 „ սրտիս խորունկ շարժմունքը , աս հիմակ
 „ վան հանդստութիր՝ առջի շնորհքն է իր
 „ անհուն ողորմութիւր . ասիկայ ինծի յոյս
 „ կրբերէ որ՝ ետեւէ ուրիշ շնորհքներալ
 „ պիտոր ընէ . ես խուլ չեղայ ողորմելինէ
 „ րուն ձայնին որ ինծմէն բան մը կրխնդրէին ,
 „ գիտեմ որ ինքնալ անլսող չըլլար ինծի
 „ շնորհք ընելու . աս է ահա իմ մէկ հատիկ
 „ մխիթարութիս աս ետքի ատեններս , :

Իրաւ որ շատ զարմանալու բան է , ասանկ
 մենծ թագաւոր մը , ասչափ ընդարձակ կա
 ռավարութի ունեցող , ասչափալ պատե
 րազմէրու մէջ խառնըվող , իր ետքի օրը
 խղճմտանք մը չունենայ արդարութե գէմ
 ըրած բանի մը վրայ : Իր թագաւորելու
 ատենը եւրոպայի մէջ սկսված էր անհա
 լատնէրուն աղանդը՝ որ խափան կրլլային
 իր ամմէն ուղածները առաջ տանելու , թէ
 չէ՛ ուրիշ շատ աղեկութիւններալ ըրած կրլ
 լար . բայց աս ըրավ որ՝ միշտ հաւատքը ողջ
 պահել տրվավ . անառակութիւնները՝ մոլու
 թիւնները՝ զուսպ պահեց , դէշ գրքերը խա

փանեց, անանկ խաղէրը՝ որ ըստըկով խաւ
ղալով տունէր կըկործանէին՝ վերցուց, եր-
դում ընելը սաստիկ արգելեց :

Եր հագուստը՝ ուտելիքը՝ մէկ ճգնաւորի մը
պէս էր. իր կառավարուէ մեծ զբաղմուն-
քը արգելք չէր ըլլար իրեն առանձնանա-
լու ատեն գտնալ, քանի հարկաւոր բան ու-
նենար՝ չէր ձգէր սովորական աղօթքները.
ատեն ունէր որ եկածին պէս՝ կը քաշվէր
առանձին իր աղօթքները՝ մտածականնէ-
րը՝ ջերմեռանդութիւն ամմէն օր կընէր :
Խոստովանահայրը կը ստամբէր՝ թէ աս կայսր
ուհիս մէկ յատուկ շնորհք մը ունեցաւ յայ-
երբոր կառանձնանար՝ աղօթքի հետ կը
լար՝ այնչափ մտադրութեւն ջերմեռանդու-
թեւն բոլորովին զինքը այ կուտար որ՝ գիտես
թէ ամենեւին ուրիշ զբաղմունք մը չունէր
կառավարութեւն, այլ իբր թէ մէկ ճգնաւոր
մընէր եղած, կամ մէկ առանձին մարդ
մը. ինչու որ իր կառավարութիւն ընելու ա-
տեննալ միշտ ան իր աչքին դիմացը ունե-
նալով կընէր. չունէր մէկ բանի մը վրայ
կամ հնահնալով սրգողելով ընել, կամ
խիստ նեղելով տաքնալով ընել, ինչպէս որ
հասարակօրէն կը լլայ շատ զբաղմանց մէջ
եղօղնէրուն :

Այնչափ էր իր ողորմածութիւնը՝ որ պզտի-
կուցմէ իրեն բնական բան մըն էր դարձած.
տասնըչորս տարւան պզտիկ ըլլալով զ.
կարողաւ իր հայրը խորհուրդ կը հարցընէր
իրեն խելացի ըլլալուն համար, ան ատենէն
ալ անդադար իր հօրմէն շնորհք կը խըն-

դրէր խեղճէրուն համար՝ յանցաւորնէրուն
 համար, անչափ որ կայսրը դարձաւ իրեն ը-
 սաւ : Արմանամ որ դուն Ռաֆո-հի պիտոր ըլլաս
 միայն ուրիշի աղէկութի ընելու համար : Անալ
 պատասխան տրվալ, Ռաֆաւորել ըսելնալ՝ ա-
 ղէկութիւն ընել ըսել է . ասանկ բնութի ունե-
 նալով թախար անցնելէն ետև ամմէն օր
 պէտք էր որ մէյ մէկ բարերարութի ընէր,
 կրցաւէր քնոյն վրայ՝ որ քուն ըլլալովը՝ չէր
 կրնար ան ատենը մէկ բարերարութիւն մը
 ընել ժողովուրդեան : ()ը մը իր տանը զի-
 նուորններէն մէկը հիւանդ տեսալ, շուտ մը
 վերցրնել տրվալ՝ հիւանդանոցը խրկեց .
 իրեն հասկրցուցին որ՝ ան զինուորին հիւ-
 ւանդութիւր իր մտմտութէն էր . մէյմը իր
 մօրը կարօտը քաշելուն համար որ մէկ հա-
 տիկն էր, մէյմընալ իր չքաւորութեը հա-
 մար՝ որ չէր կրնար հասնիլ իր մայրը պա-
 հելու : Շուտ մը մարդ խրկեց մօռավիայի
 մէջ Պուին տեղը՝ 140 մղոն հեռու, մայրը
 բերել տրվալ, իրեն յանձնեց տղան . յա-
 տուկ թողակալ կապեց ըսելով, Ասանկ Բա-
 նէրն էն իմիս զԲօսանիս : Ասանկալ ընելով թէ
 ինչչափ իրեն կըքաշէր ժողովուրդին սիր-
 տը, յայտ է աս մօրը պատասխանէն՝ որ
 ան ատենը աղաղակելով զուրցեց : Իմէ-
 պէտ իմ մէկհատիկ զաւակս է, իմ կեան-
 քէս աւելի անիկայ կըսիրեմ, բայց կըքաղ-
 ձայի որ հիմա աչքիս առջին մեռնի, միայն
 թէ քու ծառայուեդ մէջ մեռնի : Ասանկ
 բանէրու համար էր որ՝ ժողովուրդը Այր
 հայրենեաց անուանեցին աս կայսրուհիս : ()ը

մը երբոր իր սլալատը (սէրայը) պիտոր մտնար՝ մէկ կնիկ մը իր երկու տղաքովը ստքը ընկաւ անօթիութե՛ն չիդիմանալով . կայսրուհւոյն սիրտը այնչափ ցաւեցաւ աս բանիս վրայ՝ որ ինչ պատրաստերէին իրեն ուտելու համար՝ բերել տրվաւ, անոնց կերցուց . ինքը միայն արցունք թափելով խըղճալէն բան մը չիկերաւ :

Երբոր մէկը մէկ ինդիրք մը կառաջարկէր, իր վիշտը (տէրտը) կը բանար , ամմէնունաւ մտիկ կը դնէր , բայց ինչ որ պիտոր ընէր՝ անանկալ պատասխան կուտար մենծի պզտիկի, հարուստի աղքատի . չիկար ամենեւին իր քովը մէկ բանը անորոշ թողուլ, կամ վրայէն քերելու համար կերպ կերպ պատասխան բանեցընել, կամ թէ խօսք տալ՝ ետքը չընել, ինչպէս որ շատ իշխանաւորաց սովորութի է , հապա ինչ պիտոր ընէր՝ անանկալ յայտնի կը զուրցէր : Ընանկալ եղանակ մը ունէր խօսելու՝ պարզ, շիտակ, թափանցօղ, որ ամմէն իրեն դիմօղները դոհ կընէր , ստոյտ խօսել ամենեւին չունէր : Շատ մարդ ասոր վարքը ու գովասանքը գրերեն , ամմէննալ իր խօսվածքը կը գովեն ըսելով՝ թէպէտ ճարտասանական խօսվածք չէր՝ ինչպէս որ ումանք կը գտնուվին՝ որ անուշ ճարտասան լեզուով լսօղները կը զմայլեցընեն , բայց աս կայսրուհիս մէկ ուրիշ ոճ մը ունէր իրեն յատուկ՝ որ մէկի մը չէր նմանէր, պարզ անկեղծ սրտէ մը առաջ եկած, կտրուկ՝ անուշ բնական ըլլալով՝ մէկ լոյս մը կուտար որ՝

ինչ կըսէր՝ մէկ վայրկեանի մը մէջ կըհասկը-
ցընէր . ինչ որ կառաջարկէր՝ մարդուն միտ-
քը կըթափանցէր, ասով ամմէննալ իր խօս-
քին բերել կուտար կըհնազանդեցընէր .
ձայննալ զօրաւոր՝ կերպարանքնալ գեղեց-
կութէ գատ մէկ փառաւորութի մը ունե-
նալով՝ դըսէն ⁽¹⁾ յայտնի կըցըցընէր՝ թէ
ստեղծըված էր թագաւորելու համար . իր
բարի վարքնալ կրկին արգենի ընել կու-
տար զինքը :

Մտքին դասուամը՝ աղէկ հասկըցօղ, որո-
շօղ, հաստատուն, սիրտը քաջ աներկիւղ,
ինչպէս իր քաջածնէրը կըցըցընէն, ասան-
կով ամմէննալ միաբան կըսէն որ՝ աս իշ-
խանուհիս եղավ աւելի գերազանցներէն
մէկը՝ որ եւրոպայի մէջ թագաւորեցին . և
մէկին ըսածին պէս՝ մարկոս ավրելիոս ինչ
պէս պէտք է մէկ թագաւորի մը վարվելու՝
խրատներ գրեց, իսկ մարիամ թերեզինան
ինչ խրատ որ գրեց ավրելիոս, ամմէնը
գործքով կատարեց, մանաւանդ թէ աւե-
տարանական խրատներովալ լուսաւորեալ
ըլլալով շատ գերազանց կերպով կատարեց:

(1) Երբոր մօբէռգիւի աստղաբաշխը պրուշի երկրէն
վեննա եկավ, կայսրուհին բանէր հարցընելով իրեն
պրուշի երկրին վրայ, տալ հարցուց: Արձաննան
ըսավ շվեաի թագուհին՝ որ պրուշի թագաւորին
քոյրն է. կըսէն ասոր համար որ՝ աշխրհիս մէջը
ամմէնէն գեղեցիկ իշխանուհին է: Պատասխան տը-
վավ մօբէռգիւին. իրաւ ետալ անանկ կըհաւատայի
ինչվան աս օրս: Ըսել ուզեց որ՝ իրեն գեղեցկու-
թիւր որ ան օրը տեսաւ աւելի էր քան թէ շվեաի
թագուհին:

Սեռնելու ատենը իր թագաւորութիւնը ծաղկեալ թողուց, եկամուտը աղէկ կարգի մէջ դրած. իսկ զօրքը 200 հազարէն աւելի՝ կամ ըստ ոմանց ինչվան 400 հազար ոտքի վրայ կեցած թողուց: Արեն յիշատակներն են համալսարանները՝ դպրատունները՝ որ գիտութիւններ ծաղկեցընելու համար բացաւ, որոնց մէջ անուանի եղավ ան՝ որ իրեն անունով կիշվի. դպրատուններ բացաւ ըհսիմ քաշելու, պատկերհանութի ճարտարպետութի սորվելու. հասարակաց գրքատուններ շինեց բռակա ու ինսքուք. մեծաշէն գիտարաններ կանգնեց վեննա, կուաց, ու դիւնավ աստղաբաշխութե համար, վարպետաշէն գիտակներ (տիւրպիւններ) դնելով մէջերնին. որոնցմով շատ բան գտան երկինքը երևելի աստղաբաշխները հելլ, հալէյ, ու պօսքովիք. վեննայի արուարձաններուն (վարըշներուն) մէջ գործարաններ բացաւ կտաւի՝ չուխայի՝ իփէկի՝ ըսդօֆայի՝ ֆաղֆուրիի:

Արեւորդ յովեփ հայսրը Բացարձակ արեւելաւով հարգաւորութիւններ իննէ չաղաքանն ու
էնէդէյանն.

1781:

Այսրուհին մարիամ թերեզինան մեռնելէն ետեւ ամմէն նեմյէին քաղքընէրը՝ նաւ ամմէն դուրսի տերութիւնէրը իրենց սուգը

ցրցուցին իր մահուանը վրայ հանդէսներ
 ընելով, միայն հռոմ այնչափ սուգ չիցը-
 ցուց կրսեն, որովհետեւ օրինակ մընալ չի-
 կար պատմուէց մէջ՝ որնեմցէ կայսրուհի մը
 ինքիրմէ իր էրկընէն զատ թագաւորէ. աս
 բանս եղալ կրսեն պատճառ՝ որ յովսէփ
 կայսեր սիրտը պաղեցաւ հռոմայի վրայէն,
 վասն զի առաքելական թագուհի պսակված
 ըլլալով՝ իրաւցընէ պէտք էր որ կրսեն հռոմ
 մէկ հանդէս մը ընէր իր մահուանը: Բայց
 ինչ նոր փոփոխութիւնէր որ ըրալ յովսէփ
 կայսրը իր եկեղեցականաց վրայ, աս բա-
 նիս վրէժը առնելու համար չէր, այլ իր
 տէրութիւնը և եկամուտը կարգաւորելու
 համար: Աւրիշ դիպուածմընալ պատա-
 հեցաւ, վեննայի արքեպիսկոպոսը՝ որ կրս-
 վէր քառտինալ միկացցի, ատենօք իրեն
 անձաբան ունէր մէկ ըզվիցէնցի քահանայ
 մը Բլուէր անունով. աս քահանան Առինն
 եղած դպրոցերէցին որ մօռավիայի մէջն
 է՝ վերակացու ընտրեցին. քառտինալը աս
 բանիս հաւանութի չիտրվալ անոր յանսե-
 նեան ըլլալուն համար. քահանան իմանա-
 լով վեննա դիմեց, հոն իրեն պաշտպան
 դտնալով՝ վեննայի դպրոցերէցին (սէմինա-
 ուիօն) վերակացու եղալ: Աս բանով
 քառտինալնալ յովսէփ կայսեր աչքէն ըլ-
 նելով՝ հրաժարիլ խնդրեց իր աթոռէն,
 որուն հաւանութի տրվալ կայսրը. բայց
 ասոր հրաժարվելուն վրայ նեղեցաւ սրբա-
 զան պապը:

Յովսէփ իր մայրը մեռնելէն ետեւ երբոր

մինակ բացարձակ տէր եղալ՝ շուտ մը նեմ
ցէի կառավարութիւնը փոխել սկսաւ . վասն
զի յովսէփ շատ յօժարութի (հավէս) ու
նէր , շատ կարգաւորութիւններ կուղէր ը
նել . կրթադճար ըլլալ չէթէ մինակ պատե
րազմօղ աշխարհակալ թագաւոր , այլ նաև
օրէնսդիր , բարեկարգօղ , ծաղկեցընօղ :
Ըմմէն բանէն առաջ իր դարպասին (սէ
րային) վրայ սկսաւ կարգաւորութի ընել ,
ամմէն խարճը չափաւորել . որովհետև
թախտը նստածին պէս՝ իմացաւ որ նեմ
ցէի տէրութե սլարտքը կըհասնէր իբր 160
միլիոն ֆիօռին , աս պարտքս վճարելու՝
չուզէց որ ժողովրդեան վրայ ծանրութիւն
ձգէ , իր անձին ու դարպասին վրայ սկսաւ
չափ դնել , ախուրին , մուղվախին , սեղա
նին , որս (ավի) երթալու վրայ , աս ամմէն
խարճէրը քիցցուց , որոնց համար առաջ
շատ աւելորդ խարճէր կըլլային . ինչ մարդ
կանց որ թագաւորական եկամուտ կըտրը
վէր՝ ամմէննալ քննեց , միայն արժանաւոր
եղօղներուն եկամուտը թողուց , մէկալնոն
ցը կտրեց , ասով շատ մարդ գանկախիլ սկսաւ :
Իր մայրը մեռնելու ատենը ուզերէր որ՝
մէկ ամսըվան թոշակը (Էօլեֆէն) կրկին
վճարվի ամմէն զօրաց , յովսէփ իր մօրը ը
սածը իսկոյն վճարել ուղելով իր առան
ձին ըստրկէն մէկ միլիոն 200 հազար ֆիօ
ռին հանեց տրվալ , որպէս զի վճարվի ան
չափ զօրաց ու անոնց հազարապետաց :
Ըսկէց ետքը պինտ առաջ եկեղեցականաց
վրայ սկսաւ իր կարգադրութիւնը բանեցը

նել, որ առաջ դօսքանայի մէջ ընել տը վերէր իր եղբօրը լէոբուտոսի իբր փորձ. օրէնքներ հանեց. 1781 յունիսի 10, օրէնք հանեց Թոյլտուութե ամմէն դաւանանքի համար իր երկրին մէջը. լոթրան՝ քալվին՝ հոռոմ՝ ուրիշ ինչ դաւանանք որ կայ խաչապաշտներուն, Թող համարձակ բանեցը նեն իրենց եկեղեցիները՝ կրօնքին բաները, սաստիկ ապսպրելով եպիսկոպոսներուն՝ որ ամենեւին չիդպչին չինեղէն անոնք ⁽¹⁾ :

Սէսդ՝ Փալիա եղած հաշտուէր մէջ սահման վերէր որ՝ գերմանիայի մէջ աչք գոցվի, Թող տրրվի լոթուաններուն՝ քալվիններուն՝ իրենց պաշտամունքը ընելու, հիմա յովսէփ կայսրը ան երկիրներուն մէջնալ Թող տրվավ՝ որ վերոգրեալ հաշտութեը մէջ չիկար, (բաց ՚ի լոմսլառտիայէն ու ստորին նահանգներէն,) ամմէն օտարահաւատնէ

(1) Յովսէփ կըյիշէր 1603ին եղած ապստամբուէր՝ որ մաճառի մէջ եղած օտարահաւատները հանեցին նեմցէին դէմ՝ հաղիւ վերջացաւ 1711. ասոնք Թ. լէոբուտոսին ատենը խիստ կըգանկատէին ճիզվիթներէն ու գոմինիկեան կրօնաւորներէն. իբր Թէ ասոնք կըզըրգուէին նեմցէին տէրութեը, պատճառ կըլլային ան հալածման իրենց դէմ որով սկսաւ մէկ ապստամբութի մը. Իէքէլ ու Ռահօցցի կոմսերը տաճկին հետ խօսք գրին, տաճիկնալ անոնցմէ շարժեալ եկաւ 1683 վեննա պաշարեց: Աս դանկատս ի, կարողոսին ատեննալ եղավ երբեմն շատ՝ երբեմն քիչ, անոր համար մարիամ Թերեզինա կայսրուհին 1740 Թող տրվերէր որ՝ անոնց ժամերը ու դպրատուննէրը բացվին, բայց ատեն անցնելէն ետև՝ ուրիշները խղճմտանքի մէջ ձգելով զինքը, իրեն Թոյլտուութեը կամ արգելեցին, կամ քիչցուցին:

րուն յատուկ թղթով աղատութի տրվալ
ու պաշտպանութի : Ասանկալ շատ արտու-
նութիւնէր տրվալ հրէանէրուն , թոյլ տա-
լով որ ամէն արուեստ կարենան բանեցը-
նել ինչպէս ուրիշ ժողովուրդները :

() րէնք դրաւ ամէն վանքերու վրայ՝ որ
մէջի կրօնաւորները ամենեւին կասկածու-
թի մը չունենան ան մեծաւորներուն հետ՝
որ իր երկրէն դուրս են , այլ իրենց եպիս-
կոպոսներուն տակը ըլլան , ան ժողովքնէ-
րու մէջ որ իր երկրէն դուրս կըլլան՝ չիտըր-
կեն մէկ կրօնաւոր մը . դուրսէն մէկ այցե-
լու մը մէկ կարգադրող մը չընդունին ա-
ռանց յայտնի հրամանի կայսեր : Արօնա-
ւորները իրենց ուսումը վանքերու մէջ չի-
սորվին , հապա երթան համալսարաններու
մէջ սորվին , որպէս զի միակերպ ըլլայ իրենց
ուսումը մանաւանդ նախապէս մէջ . չէ
թէ հաւատքի դիպցեն , որ ամէն ուղղա-
փառաց երկիրները մէկ է , հապա կարծիք-
ներու դիպցեն . արգելեց որ մէկ նոր կրօ-
նաւոր մը չընեն , ինչպէս որ նորէն հրաման
չիտրվի :

Ա՛ ճիւղներ հանեց կարգաւորելու համար
ան խարձերը և տուրքերը՝ որ կըլլելէին
մկրտութե՛ պսակի՛ և թաղման համար , ա-
սոնց տուրքը խիստ քիչցուց , մէկ չափաւոր
որոշեալ յատուկ բան մը կապելով քահա-
նայից : Ա՛րանի որ հռոմայէն թուղթ ու կոն-
դակ կուգար՝ սահմանեց որ առաջ կայսե-
րական հաւանութիւնը առնելի , վրան գրվե-
լով աս բառս . թուղ՛ է Գործ դրէ՛ , ետքը

Տրատարակվի, ինչպէս որ դօսքանա ու նա-
բօլի սահմանեցին աս բանս : Արկու կոն-
դակ կային որ՝ Րնրիտ րն, և Սեաճին կըս-
վէին, որոնք Տրատարակաւ կըկարդացվէին,
անոնց կարդալը խափանեց : Տնօրինում
առնելու հռոմայէն պսակի վրայ՝ արգելեց,
այլ ամմէն տեղ իրենց եպիսկոպոսէն տնօ-
րինում առնել հրամմեց : Քանի եղբայ-
րու թիւներ ժողովքներ որ կային աշխարհա-
կանաց ⁽¹⁾, ամմէննալ վերցուց, անոնք միայն
Թողուց որ աղքատները՝ հիւանդները նայե-
լու հոգ կըտանէին . կամ ինքը ուրիշ նոր
ժողովքներ սահմանեց անուանելով Սեր Ֆր-
չաւորին . որոնց գործքը պիտոր ըլլար որբեր
ու ձգած տղաքներ պահելու, աղքատ հի-
ւանդները հոգալու իրենց տանը մէջ :

Յովսէփ Կայսեր Կինգերորդ Ճամբորդութեանը
պէճիտ, Քիլիզնի, ու Գարեշ .

1781 :

Այլապի հոգը զբաղմունքը զանազան բա-
նելու վրայ՝ արգելք մը չէր ըլլար յովսէփ
կայսեր հեռու տեղվանք ճամբայ ընել իր

(1) Եղբայրու թիւ ըսվածները ԺԹ . դարուն մէջ խա-
չակրաց ատենները սահմանվեցան եւրոպայի մէջ, ուր
տեղ աշխարհական մարդիկ կրօնաւորաց պէս մէկ տեղ
ժողովրդած երեւելի արարողութիւն հանդիսով կընեն
իրենց աղօթքները, ջերմեռանդութիւնները, մէյ մէկ
բարի գործքի մը զիրենք պարտաւորելով : Առջի
եղբայրութիւնը եղավ կրսէն վէքսիլլօ ըսված ր . ուր-
բանոս քահանայապետին ատենը՝ ողորմուէ համար :

սովորութիւնը կեօրէ , այլ յանկարծ վէն-
նայէն ելավ , մակօնցայի ու Ֆռանքֆօռդի
վրայէն դադտուկ դնաց ստորին նահանգնէ-
րը տեսնալու , առաջ լուչէմպուրկ , մայի
սի 5 պրուսսիէ , ուր դտաւ կլօչէսդըր դուք-
սը՝ ինկիլիզի թագաւորին եղբարը , որ թա-
գաւորին դիացէն շատ հրաւիրեց զյովսէփ
ինկիլզէռուա տանելու , բայց յովսէփ յանձ
չառավ : Հոն տեղս հանդիսիւ երդվընցաւ
անխախտ պահելու համար պէլճէն գա-
ւառնէրուն արտունուինէրը , որք են Պրա-
պանդ , Ֆիանտրա , Հաննօնիա , ու Վա-
մուր , ինչ արտունութի որ տըվերէր 1740
փիլիպպոս բարի մականուանեալը՝ իրեն ա-
նուանի թղթին մէջը որ կըսվի Ուրախաւե
Մոսս . ասիկայ ինչվան 1794 եղավ Մեծ
Բողոքը ըսվածը՝ կամ Մասէան (քիւթիւկ)
ան ժողովուրդին արտունութեցը . բայց
ետքը պատմենք ինչպէս կայսրը իր երդու-
մը չիպահօղ սեպելով՝ աս ժողովուրդը ա-
պըստամբեցաւ իրմէ (1) :

Իսկէց ելավ յովսէփ կայսրը գնաց օլանտա
կամ Ֆիլէմէնկ՝ որ քովի դրացին է , աչ
քով տեսաւ ան տեղացի ժողովրդեան ան-
հասնում առուտուրը՝ որ խելքէ մտքէ
դուրս բան էր ան ատենը , տեսաւ իրենց
ճարտարութիւն , երկրագործութիւն , տնտե-

(1) Ինչպէս որ 1489աւ պրուճէսին մէջը Ծ մաքսի
միլիանոս կայսրը բանտը գրին , սկիզբը տըվին ան ա-
րիւնահէղ ապստամբութե որ եղավ 1567 . Բ . փիլիպ-
պոսի սպանիայի թագաւորին դէմ :

տուժի՛ր կամ ջափաւորուժի՛ր . ասանկալ
տեսաւ իրենց գլխաւոր քաղքները , լէյտե-
նին համալսարանը , անոր անդամազննուէ
հանդիսարանը , որ խիստ անուանի է ամ-
մէն եւրոպայի մէջ , ուրիշ գիտութեց ու ա-
զատական արուեստից երևելի բաները . ան-
կէց գնաց Սառտամ գեղը՝ ուր մեծն պետ-
րոս մոսկովի թագաւորը կեցերէր՝ նաւ շի-
նեւու և նաւարկուի սորվելու համար , ան
պզտըտիկ տունը ուր որ պետրոս բնակերէր ,
հոն սիրով ճաշ կերաւ յովսէփ , մեծագործ
թագաւորին յիշատակը՝ պզտիկ տեղը մե-
ծաշէն տեղ ըրաւ յովսէփայ առջին :

Ըյա քաղքէն ելաւ յովսէփ՝ գնաց փա-
րէզ , թագաւորը ու թագուհին տեսնալու
համար՝ որ իր սիրական քոյրն էր , օխտը որ
անոնց հետ շատ առանձնախօսուի ընելէն
ետե դարձաւ յովսէփ , բայց դարձածին
պէս՝ արգելք դրաւ որ՝ դուրսի ապրանք-
ներ ձեռագործներ իր երկիրը չիմանան :
Ըս բանս Քրանսզներուն մեծ խոց եղաւ ,
ոմանք սկսան քօլպերդին ըրածը վար զար-
նել , որ ժդ . լուիզին ատենը՝ Քրանսային
շահապ իշխանը (տէֆթերտար էֆէնտին)
ըլլալով՝ շատ ձեռագործներ հնարել տը-
վաւ Քրանսայի մէջ որպէս զի անով առու-
տուրը ծաղկեցրնէ , բայց անով շատ մարդ-
իրեն երկրագործուի՛ր թողուց , ձեռագործ
բանելու ընկաւ , անանկով Քրանսային շատ
երկիրները պարապ մնացին . հիմաալ իրենց
ձեռագործները չիկրնալով նեմցեստան
խրկել՝ առանց շահու մնացին , աղքատուի

տիրեց վրանին : Ասկ մնացեալ բազմութիւնը
 յովսէփ կայսրը սկսան վար զարնել, ամմէն
 Ֆրանսայալ ատել սկսաւ յովսէփ, անոր
 սրտաճառովը ատելիւ եղավ նաև իրենց թա-
 գուհին՝ որ յովսէփայ քոյրն էր, մանաւանդ
 որ թագուհին թշնամիները տակէն կըզը-
 գուէին ժողովուրդը :

Թագուհին փարէզին ժողովրդեան սիրտը
 քիչ մը շինելու համար՝ սկսաւ խարճէր հը-
 նարել, նոր նոր հագուստներ հանելով հան-
 դէսներ ընելով՝ որպէս զի Ֆրանսային ու-
 ըրիչ մենծերնալ իրմէ օրինակ առնեն, ըս-
 տակ խարճեն որ՝ արուեստաւորները վաս-
 տըկին, գրեթէ ամմէն օր իր զարդերը կը-
 փոխէր, ինչ որ տեսնար՝ նմանը ընել կու-
 տար . անոր նայելով ամմէն Ֆրանսայալ ա-
 նանկ կընէին : Անանկով արուեստաւորնէ-
 ըր սկսան վաստըկիլ . թէ որ աս չըլար՝
 մուրացկան պիտոր ըլլային . բայց աս դեղա-
 ուրիչ դիացէն աւելի մնաս տրվալ Ֆրան-
 սային քան թէ շահ :

Սոսնովին Ռեյի եղածները, պողոս դասին
 ճամբորդութիւնը .

1780—1782 :

Ուրիքոս անտօն անունով իշխանը ու ան-
 նա իշխանուհին իր կիներ քշված էին մօտիկ
 արքանալի տեղին, ասոնք հիմա մեռած
 ըլլալով՝ իրենց զակընէրը որ հեռու տեղ-
 վանքներ տարված էին, 1780 կատարինէ

կայսրուհին ազատեց, Ֆուդլանտիա խրկեց, ազատութի տալով իրենց: Արկու քաղաքալ շինեց աս տարի սև ծովին եզերքը, մէկին անունը Ատարինէսլալ ըսկեցաւ իր անունով, մէկալը Մարիանուպօլիս. Քերսօն քաղաքնալ շինեց խրըմնու մէջ տնեքեր գետին մօտիկ հաննիպալ զօրապետին ձեռքովը, որուն շէնքը ոմանք 1778 կրդնէն. ասիկայ մէկ տարվանը մէջ անանկ շէնցաւ, որ 40 հազարէն աւելի բնակիչ ունեցաւ:

Ատարինէին զաւակը պօղոս դուքսը՝ իր ընկերովը որ կըսվի մեծ դքսուհի՝ 1781 ճամփայ ելալ ժուռ գալու համար, ծրպտեալ (թէպտիլ) կերպարանքով, անոր համար իրենց անունը Հիւսիսային իշխանները սել տրվին. ասոնք առաջ վեննա գացին, ուր յովսէփ կայսրը շատ հանգէսներ ուրախութիւնէր (ալայներ զիննէթներ) ընել տրվալ. իրենց գալէն առաջ մէկ տուն մը շինել տրվերէր նման ամենեւին ան տանը՝ ուր որ պօղոս կըբնակէր բէդրօպուրկին մէջ, նոյն չափով, նոյն խուցերով (օտանէրով), նոյն զարդերով, նոյն դունէրով, ա նանկ որ երբոր պօղոս ներս մտաւ, կարծեց որ բէդրօպուրկ իր տանը մէջ կըմտնար, խիստ զարմացած մնաց, օրմընալ առտըվանց երբոր պօղոս գեռ քուն էր, տեսաւ որ իր խուցը կուգային կըմտնային քաղմութի իր երկրին գեղացիներուն՝ իրենց հաղուստներով նուագարաններով (չալղնէրով), որ խաղալով պար կըբռնէին, ձեռ-

վրնին իրենց ծախելու բաները բռնած՝ իբր
 թէ ծախելու համար եկերէին, մէյմընալ
 տեսաւ որ ան գեղացի կարծածնէրը ամ-
 մէննալ կայսեր մօտիկնէրն էին, մեծ իշխաւ
 նաւորնէր՝ որ իրեն գալուստը շնորհաւորե-
 լու ասանկ խաղ ցըցընելով շնորհաւորե-
 ցին :

Ըսանկ ուրախու թիւ անցընելէն ետև՝ վեն-
 նայէն ելան վենետիկ եկան, վենետիկցիք-
 ալ չորս հինկ օր նոր նոր հանդէսնէր ը-
 րին գիշեր ցօրեկ խիստ փառաւոր, յովսէփ
 կայսերմէ յանձնըված ըլլալով. զարմացաւ
 պօղոս տեսնալով վենետիկի ժողովրդեան
 բարեկարգու թիւ հնազանդու թիւ իրենց
 թագաւորու թէ, որոնք ան հանդէսնէրը
 տեսնալու կը ժողովըվէին խառնիճաղանճ՝
 ամբօխ բազմու թիւ 50, 60 հազարէն աւելի
 պղտիկ նեղ տեղվանք մէկմէկու վրայ կուռ
 լեցուած, բայց մէկ ձան մը մէկ կուռ մը
 չէր ելլար ան հինկ օրվան մէջ, դատաւոր-
 ներէնալ քանի մը հոգի միայն դրված ըլլա-
 լով՝ անոնց վախը միայն հերիք կըլլար ան
 ըզգամնէրը զուսպ պահելու. խոստովանեցաւ
 պօղոս որ՝ իրենց երկիրը ասչափ բազմու թի
 ժողովրդեան զուսպ պահելու համար պէտք
 էր հազարնէրով զինուոր կեցընել ասանկ
 հանդէսնէրու մէջ :

Վենետիկէն ելալ պօղոս իր ընկերովը
 հռոմ անցան . 9 . պիոս քահանայապետին
 հետ տեսնըվելով երկուքնալ շատ ուրա-
 խացան, շատ սէր կապեցին վրան, որուն
 արդէնի կերպարանքը փառաւոր շնորհալի

տեսքիլը՝ ամմէնուն պատկառանք մը բերել
կուտար. երբոր քահանայապետը ճամփայ՝
ելավ վեննա երթալու՝ իրենքալ մէկն էին
ան բազմութե՛ իշխանաւորաց մէջէն՝ որ ըն
կերացան ճամփայ դնելու անիկայ, որուն
մէկ փառաւոր մուշտակ (քիւրք) մը ընծայ
տրվին ճամփան հագնելու համար: Հու
մայէն ելան դացին բիէմօնդ, Ֆրանսա,
ստորին նահանգներ, օլանտա կամ Ֆիլէ-
մէնկ, աս տեղվանքներս պտըտելէն ետե
նորէն դարձան վեննա, լեհին վրայէն 1782
եկան մոսկով իրենց երկիրը, ան տարին կա
տարինէ թագուհինալ նոր կարգ մը սահ
մանեց Սբ վօլօտօմիրոս անունով:

Աս ճամփորդուէ պատճառ ոմանք ուրիշ
բան հուշակեցին. իբր թէ պօղոս ուղերէր
թախտընստիլ թագաւորել, մայրնալ խու
վութի չելլալու համար յովսէփ կայսեր
խորհրդովը հեռացընել ուղելով՝ աս ճամ
փորդութիւր ընել տրվերէ, բայց թնչուց
լըսված խօսք մը սեպվեցաւ ասիկայ:

Յովսէփ կայսեր եկեղեցական կարգա-որո-ւնիները.

1781:

Ա երբ յիշեցինք իրեն ըրած բանի մը կար
գաւորութիւնէրը, բայց ան կարգաւորուէց
մէջը երկու բան մտաւ որ՝ շատ ձան հանել
տրվավ. մէյմը որ՝ շատ բանի վրայ տարա
ծեց ան կարգաւորութիւնէրը, մէյմընալ որ
շատ հեղ փոխփուտեց, հիմա ասանկ կասլըս

սրէր , ամիս մը անցնելէն ետեւ անոր ներ-
 հակը կապտարէր , ամմէն տեղին դատաւոր-
 ները չիտէին որ ինչ ընեն : Այլ որովհետեւ
 եկեղեցական բաներնալ շատ փոխեց , ան-
 կից մեծ աղաղակ ելավ . քանի վանք որ կար
 կրօնաւորաց , քանի աբբայութիւններ կրօ-
 նաւորներու և մարասպետներու՝ ամմէննալ
 վերուց . ան վանքերուն եկամուտներովը
 անտուկ մը սահմանեց աղքատաց համար ,
 որպէս զի աղքատները չիմուբան , ան սըն-
 տուկէն ապրին . վանքերուն տեղը նոր նոր
 ժողովրդապետական եկեղեցիներ շինեց ամ-
 մէն դաւառներու մէջ , որ ժողովուրդին
 հեշտ (խօլայ) ըլլայ իր քահանայէն կառա-
 վարվիլ , որովհետեւ առաջ խիստ քիչ էին .
 քննակով վերի և վարի աւսդրիայի մէջ
 միայն 263 ժողովրդապետութի սահման-
 վեցաւ : Ամմէն թափօրները վերցուց ,
 միայն մարմնոյ և արեան տօնին՝ և իրենց
 խտրելէզին թափօրները թողուց , տօներուն
 շատը վերուց . իր կարգադրութիւնը հասուց
 ինչվան եկեղեցնայ մէջ եղած պէտպէս ա-
 ըրարողութեց վրայ՝ որ հռոմէական մաշտո-
 ցին մէջ ապսպրրված էին :

Ամմէն բանէն աւելի ան եղավ դժարը՝ որ
 խիստ կերպ մը կըբանեցընէին աս կարգա-
 ւորութիւնները դործ դնելու ատենը , մէյմը-
 նալ ան եղավ դժարը՝ որ մուրացկան կրօ-
 նաւորներուն շահը արգելեց , անոր համար
 շատ վանահայր դացին իրեն հասկըցընելու՝
 թէ քանի անկարգութիւններ կըհետեւէին ի-
 րենց վանքերուն մէջ աս նորութիւններէն .

յովսէփ ասոնց գանկատը աղէկ մը մտիկ
 գնելէն ետե ըսաւ. շատ երկիրներ կան որ
 աս իմ ըրած կարգաւորութիւններս չիկան ,
 կրնաք հոն երթալ ապրիլ , որ կրօնաւոր
 որ ուզենայ երթալ , ես իրեն ընդարձակ
 հրաման կուտամ երթալու : Ասանկով ի-
 րեք տարվան մէջ 174 վանք կրօնաւորնե-
 րու և մարապետներու վերցուց իր երկրէն ,
 միայն ան մարապետները թողուց՝ որ աղ-
 ջիկները կրկրթէին կրօնովեցրնէին , ()
 մընալ եպիսկոպոս մը խնդրեց յովսէփ կայ-
 սերմէ՛ որ իրեն աւելի տեղեկութիւն տայ
 ինչ որ իր հրամանագիրներուն մէջը կը
 գրէր , որովհետեւ խղճմտանք կրնէր՝ չըլլայ
 որ իր իշխանութիւն գուրս բան ընէ . յով-
 սէփ պատասխան տրվավ , իմ տեղեկութի
 տալս աս է որ՝ ամմէննալ կուզեմ որ իմ
 ըսածներուս հնազանդին :

Աս բաներս ամմէն եկեղեցականներու գէմ
 էին , բայց ալ աւելի սրբազան հայրապե-
 տի զ. պիոսի , անոր համար վեննա եղած
 իր նուիրակին ձեռքովը որ Արամբի կրու
 վեր՝ իր գանկատը ըրաւ աս նոր բաներուս
 վրայ , մանաւանդ որ առանց հասկըցընե-
 լու՝ առանց իրմէ հաւանութիւն առնելու
 կրնէր : Այստեղ վեզիրը որ քաջիւրց կրովեր ,
 պատասխան տրվավ : « Այստեղ ըրած նո-
 » ըութիւնները շիտակ հաւատքի և հոգևորի
 » դպչելու բաներ չեն՝ հապա եկեղեցական
 » բաներու , և որովհետեւ աս նորութիւնե-
 » ըով անկարգութիւնները պիտոր վերնային ,
 » տեղը բարեկարգութիւններ պիտոր մանային ,

„ անոր համար ինքը թագաւոր ըլլալովը
 „ ունի իրաւունք իր երկրին բարեկարգու-
 „ թիւնները շտկել ինչպէս որ ինքը կը ճանչ
 „ նայ :

Ըս բաներուս վրայ թղթերաւ գրվեցան,
 կոնդակներ, բայց բերնէ բերան խօսքեր
 ալ տարածվելով՝ կերևար որ խաղաղկե-
 լու տեղը՝ հակառակութիւր բլբլկոց մը պի-
 տոր հանէր կայսեր ու հռոմայ մէջ, ասոնք
 մտմտալով սրբազան քահանայապետը պիտո
 չէ. իր ծերութիւր մէկ դի թողլով՝ որոշեց
 վեննա երթալու բերան բերնի խօրաթելու
 յովսէփ կայսեր հետ, որպէս զի վերնար
 գայթակղութիւնալ չար օրինակնալ : Արով
 հետև գօսքանային մեծ դուքսնալ իր եր-
 կրին մէջ օրէօր վանքերուն շատը կրվերցը-
 նէր, ոմանք կը քիչցընէր, ինչվան բառնա
 բեանց կարգնալ քիչցուց՝ որոնք տղաք կը
 սորվեցընէին, քանի եղբայրութիւնէր որ
 կային՝ հոգևոր ժողովքներ, և ընկերուի-
 նէր, անոնցմէալ 2500 վերցուց, իրենց ապ-
 րանքը առալ, մէկ սնտուկ մը սահմանեց
 քահանայից ապրուստ տալու՝ աղջիկներուն
 օժիտ (ճէհէզ), և ուրիշ հոգևոր բաներու
 համար. բայց աս բանիս մէջ ետքէն հաւա-
 տարմութիւն չիմնաց չիքշեց : Արօնաւորաց
 ուխտելու տարին՝ 25 տարվանը կապեց,
 իսկ կուսանաց 22. բայց ինչվան աս տարիքս
 ամմէն մարդ բանի մը վրայ կապված ըլլա-
 լով՝ կրօնաւորութիւր ինքիւրեն կը քիչնար :
 Վերեզմաննոցը քաղքէն դուրս հեռու տեղ
 մը որոշեց, և որովհետև հոն առաջ ժամէ-

բուս մէջ կըթաղէին, աս բանս ամմէն բանէն աւելի ներհակ եղաւ ժողովրդեան: Բիսդոյայի ու բուադօի վրայ մէկ եպիսկոպոս մը դրաւ շիպիոնս ուիչի անունով, որ ետքը շատ վիշտ տրվաւ եկեղեցնայ: Ապիսկոպոսներուն իշխանութիւնաւ իրենք բաշէլ կընայէր:

Ասոր նման նաբօլիի թագաւորնաւ իրենք վեզիրին դրդելովը որ դանուչչի կըսվէր՝ շատոնցմընէ վերցուցեր կտրերէր իր երկրէն՝ որչափ որ հռոմայու խառնըվելու բանէր կային:

Շ. Պիոս Կահանայապետին Ճամփորթութիւնը .

1782:

Երբոր սրբազան պապին ճամփայ ելլալը իմացան, շատ մարդ հռոմայու մէջ շիհաւնեցան, իրեն խորհուրդ տրվին աս ճամփորդութիւն ետ կենալու, զօրաւոր պատճառներ բերելով, բայց անիկայ իր յոյսը բոլորովին այ վրայ դնելով իր պարտքը լմնցընել ուզելով որոշեց ելլալու. աղէկ գիտէր որչափ տարբերութի կայ թղթով խօրաթելուն ու բերնով խօրաթելուն մէջ: Ճամփայ չեւած թուղթ գրեց յովսէփ կայսեր 1781 դեկտ. 16. հասկըցընելով որ իրեն ըրածները իրաւանց կեօրէ չէին, թողութակցութիւն չէր կընար հասկըցվիլ, անոր աղէկը ես կուգամ ըսալ վէննա հետգ բերնով խօրաթելու. յովսէփ կայսրնաւ 1782

յունի. 11 պատասխան գրեց իր իրաւունքը
 հասկըցընելով, բայց իր գալուն վրայալ հա-
 ճուհի ցըցուց : Նորէն թուղթ գրեց սրբա-
 զան հայրապետը փետրվ. 9. թէ իմ գալս-
 պիտոր ըլլայ քիչվորով, իմ նուիրակիս
 բնակարանը նստելով իբր առանձին, բայց
 յովսէփ պատասխան գրեց փետրվ. 26.
 ծանուցանելով թէ իր պալատանը (սէրային)
 մէջ պիտոր նստէր, որ իրեն շատ հաճոյա-
 կան բան պիտոր ըլլար, անձամբ քովը տես-
 նալով եկեղեցնայ գլուխը, որով և մօտիկ
 կըլլար իրեն հետ տեսնըվիլը :

Նսանկով ճամփայ ելլալու պատրաստեց
 զինքը, երբոր վերջին տեսնըվիլը ըրաւ իր
 քառտինալնէրուն ժողովքին մէջը՝ որ կըս-
 վի Վճնչխորօտիոմ . իր երթալուն պատ-
 ճառը չիբացաւ, չիհարցուցալ իրենց կար-
 ծիբը աս երթալուն վրայ, այլ միայն յայտ-
 նեց : Աւ որովհետեւ շատոնցմընէ էր որ
 հռոմայ քահանայապետը հռոմայէն դուրս
 չէր ելաձ, անոր համար իդալիայի մէջ մա-
 նաւանդ թէ ամմէն եւրոպայի մէջ շատ
 շնկոց հանեց ⁽¹⁾. երբոր ճամփայ ելլալու
 եղալ, քառտինալնէրը իրենց պաշտօննէ-
 րու վրայ հաստատեց բալլավիչինի քառտի-

(1) Վասն զի ք. պօղոս Փարնէզեան հայրապետէն
 ետեւ (որ շատ քալեց, շատ աշխատեցաւ հաշտեցը-
 նելու համար Փրանսային ւն . Փրանչիսկոս թագա-
 ւորը, Է. կարոլոս կայսեր հետ,) Ե. կղեմէս ալտօ-
 պրանտեանը եղալ, որ ժիլ գարուն ետքէրը հանդի-
 սով գնաց Փէռուաւա, էսդէ ցեղին իշխանութիւնը
 առնելու համար :

նալին հնազանդուէ տակը դնելով՝ որ դիւ-
 ւանագիրն էր, իր ըրած կտակը յանձնեց
 քօնդի քառտիննալին՝ որ Թղթերուն դիւա-
 նագպիրն էր, ասանկով 1782 փետրվ. 27
 առտրվանց ճամփայ ելալ, բազմուի քառ-
 տիննալնէրու և ազնուականնէրու ընկերա-
 նալով:

Ուր որ կերթար սրբազան քահանայապե-
 տը՝ կրօնաւորնէրուն վանքը կինջնար, ա-
 ւելի դոմինիկեան կրօնաւորնէրուն վանքը •
 չէր ուզէր փառաւորութիւն ճամփայ ընել
 ինչպէս որ ըրին Ժ. Լեոն, և Է. կղեմէս եր-
 բոր պօլօնիա գացին: Հիմա երբոր պիտո
 զ. պօլօնիա հասաւ, ծամպէքքարի կոմսը
 սպանիայի Թագաւորին դիացէն եկալ եր-
 Թաք բարովի, բառմայի դուքսը՝ անձամբ
 եկալ շնորհաւորելու՝ օրհնութիւն առնե-
 լու. ասանկալ ուրիշ մենծէր եկան իդալիա
 եղած զանազան տէրութեց դիացէն, միայն
 դօսքանայի մեծ դուքսին դիացէն մարդ-
 չեկալ, այլ մէջի ժողովուրդը բազմութիւն
 վաղեցին դուրս ելան իրեն օրհնութիւն առ-
 նելու, անկից անցաւ Ֆէռուառա, վէնե-
 տիկ, ուր շատ պատուով ընդունեցան:

Երբոր աւսդրիոյ կամ նեմյէին սահմանը
 հասաւ՝ հոն մաճառ զօրքը որ կայսրը խըր-
 կերէր իր յատուկ պահապան զօրքերէն՝ ամ
 մէննալ ազնուականի տղաքնէր՝ առին մէկ
 տեղ ընկերացան՝ ինչպիսի որ վեննա հասու-
 ցին: Ղամփան երբոր սրբազանը կօւխցիա
 հասաւ՝ անոր արքեպիսկոպոսը իրեն կանչեց
 հետը խօրաթելու համար, բայց եպիսկո-

պոսը հոն չէր , վեհնա կանչոված էր կայսեր
 կարգադրութիւնէրը՝ի գործ չիղնելուն հա-
 մար . գաւառակալ իշխաննալ ձգել տրվե-
 րէր կայսրը աս յանցանքին համար : Առ-
 պիանա հասնելու ատենը՝ կայսեր քոյրը ար-
 շիդքսուհին մառիաննա հոն եկաւ քլակէն-
 Քուրդ տեղէն որ քառինթիային մէջն է ,
 ուր որ կրնատէր սովորաբար , սրբազանին
 հետ երկան խօսեցաւ : Արտի 22 երբոր
 նէվըդատ տեղին հասնելու 6 մղոնի չափ էր
 մնացած՝ յովսէփ կայսրը գէմը ելաւ մաքսի
 միլիանոս եղբօրը հետ մէկ տեղ , տեսածին
 պէս առապայէն վար ինջաւ , բայց սրբա-
 զան հայրապետը իր առապան առաւ անի-
 կայ , իր քովը նստեցուց . ինքնալ երկու տեղ
 յովսէփ կայսեր առապան նստաւ , միշտ
 սրբազանին ձախ գին կրնատէր յովսէփ :
 Արբոր վեհնա հասան՝ ամմէն ճամփան զօրք
 կեցած էր , և անբաւ բազմուի ժողովորդ-
 եան 8 հազար առապանէրու մէջ , թող
 տուր ուրիշ ժողովուրդը՝ իրեն օրհնութիւր
 առնելու համար , թօփերով , զանկակնէ-
 րով , ինջեցուցին թագաւորական սալատին
 մէջը : Արեն նուիրակը՝ կայսեր վէպիրը քաւ-
 նից՝ ուրիշ ամմէն դեսպաններ՝ զօրապետ-
 նէր՝ տեսութի եկան . հոն անանկ կերպով
 պահասպաններով նստեցուցին սրբազան հայ-
 րապետը՝ ինչպէս որ կայսեր կրնէին : Այս-
 րը շատ ընծայներ տրվաւ իրեն ու իր հետ
 եղօղներուն , ինչպէս որ սրբազաննալ իրեն
 տրվաւ , կայսեր տրվածն էր մէկ զարդ մը
 կուրծքը կախելու քարէրով շինված , որ

200 հազար Ֆիօռինի աժեցուցին . սրբազանը ասիկայ իրեն անձին համար չընդունեց , հապա իբրև կայսերական յիշատակ մը իր ամմէն յաջորդներուն համար . մէկ հրովարտակ (պերաթ) մընալ ուզեց կայսրը տալ սրբազանին եղբօրորդիքներուն համար , հռոմէական կայսերուն իշխան գրել տալով անոնք , բայց սրբազանը աս գիրը չուզեց ընդունիլ , որ պատճառ չիտայ լեզուազար մարդիկներու ըսելու՝ թէ իրեն ազգականները մեծցընելու համար ըրաւ աս ճամփորդութիւր :

Մամէն օր կելլար վեննային տեսնալու տեղ վանքը կըքալէր , գրքատունները , հանդիսարանները , շէնքերը , ձեռագործները , զինարանը՝ որ եւրոպային մէջ ամմէնէն երևելի է , ուր տեղ գեղեցիկ կարգով (րէսիմով) շարված կան զէնք (սիլահ) , ու զէնքի վերաբերեալ բաներ 300 հազար մարդու համար նաև աւելի , ուսկից բան մը առածնին պէս տեղը ուրիշ մը կըդնեն :

Օտակին օրը՝ սբ ստեփաննոսի մայր եկեղեցնայ մէջ ձայնաւոր պատարագ ըրալ սրբազան հայրապետը շատ փառաւորութեառաւորնալներով եպիսկոպոսներով , միայն սալիզպուրկին արքեպիսկոպոսը չեկաւ , որ ամմէն գերմանիայի եպիսկոպոսապետ ըլլալով՝ իրեն գալը իր պատիւը պզտիկցընել սեպեց կըսեն :

Մյնչափ շատվոր ժողովուրդ կըթափէին վեննայի մէջ սրբազան հայրապետը տեսնալու՝ որ հարկ կըլլար ամմէն օր չորս հեղ բարձր տեղէն երևնալ , իր

օրհնութիւն տալ, առաջ թօփ նետելով
ծանուցանելով :

Երսուն օր վեննա նստելով սրբազան հայ-
րապետը շատ խօրաթայ ըրավ յովսէփ
կայսեր հետ առանձին ծածուկ, բայց հաս-
կըցվեցաւ որ՝ ինչ ըրերէր կայսրը ու ետեւէ
ետեւ պիտոր ընէր, բան մը չիկրնաց փոխել
տալ, որով քահանայապետական իրաւա-
սութիւնը խափանվեցաւ չէ թէ միայն հեռու
տեղվանք, հապա նաև լամպառտիայի մէջ
որ աւելի մօտիկ է հռոմայու : Բայց միայն
մաճառստանու եպիսկոպոսապետը և ուրիշ
եպիսկոպոս՝ իրենց մէջի իշխանութե ու ի-
րաւասութե վրայ մեծին պզտիկին վրայ խօ-
րաթելով սրբազան հայրապետին հետ կար-
գաւորեցին. հերետիկոսները արձրկելու հա-
մար, ուխտերը և ամուսնութիւնները տնօրի-
նելու համար, և ուրիշ արտունութեց հա-
մար քսան գլուխ բան հաստատեցին :

Վարիլի 22 վեննայէն ճամփայ ելաւ սրբա-
զանը, որուն ընկերացան յովսէփ կայսրը՝
իրեն եղբարը մաքսիմիլիանոս արշիգուքսը
ու սրբազանին նուիրակը կարամբի. պա-
վիէռայի ճամփուն առջի մէնզիլիանէն ի-
րարմէ բաժնըվեցան, ուր տեղ քիչ մը ա-
տենէն ետեւ յիշատակարան մը կանգնեցին,
ինչպէսալ որ երբոր վեննա էր, մէկ միտալ
մը տպեցին զ. պիոսի անունովը. վրան գրած
Պանդոպա առաքելական (1). ուրիշ միտալ մը

(1) Աս խօսքս իրեն վրայ մարդարէութի էր եղած,
հիմա հռոմայէն ինչվան վեննա ճամփորդութի ընէ.

նալ տպեցին նօրիմակերկ քաղաքը : Ամսոյն
24 հասաւ լինց , ուր ընդունելու թի՛ր ըրավ
Ֆիւմիան քառտինալը բասսավիայի եպիս-
կոպոսը , անկից երբոր մօտիկցաւ մօնաքօ
քաղաքը՝ չորս բօստա մնացած եկավ պա-
վարեան բալաղինեան կայսրընտիրը , ա-
սանկալ ճամիու վրայ եկան տեսնելեցան
տիւ բօնդին իշխանը , սալիզպուրկայ իշխան
եպիսկոպոսը . վեց օր հոն շատ ուրախու թք
ընդունելու թի՛ր գտնելէն ետե՛ անցաւ զը-
նաց ավիուսդա քաղաքը , ուր ընդունելու
թի՛ր ըրավ դուէվերին կայսրընտիրը , հոն
տեսնելեցան իր հետը իշխաններ ու իշխա-
նազուն եպիսկոպոսներ , որոնց մէջն էր և
կղեմէս սաքսօնիայի իշխանը , ասանկալ
քաղքին հասարակապետու թե՛ իշխանները ,
որ թէպէտ բւօդէսդանդ էին՝ բայց մեծ
ընդունելու թի՛ր ըրին :

Անկից դիւօլօ անցնելով վեռօնա եկավ ,
որուն անուանի ամֆիթատրոնը լեցուն տե-
սավ անբաւ ժողովրդով որ իրմէ օրհնուի
կրիսնդրէին , ետքը վիչէնցաին բատուային
վրայէն անցնելով վենետիկ եկաւ նորէն ,
հոն կատարելու հողեզալուստը . վենետիկ
ցիք մէկ յատուկ զարդարված նաւակմը
խրկեցին իրեն , որ խուց (օտայ) կլմանի ,

լով պանդխտու թիւն քաշելով իբր թէ ստուգեց իր
վրայ եղած մարգարէութիւր , անոր համար աս խօսքս
տպեցին , բայց ետքը պիտոր տեսնանք ինչպէս ուրիշ
դիպուած մը լման պանդխտու թե՛ , ալ աւելի կատա-
րեալ լմնցուց աս մարգարէութիւր իր վրայ :

անանկ պատուով բազմութիւնս ամէն զան-
կակները զարնելով ցամաքէն առին բերին
վենետիկ քաղաքը՝ որ ծովի մէջ կը դի
(ատա) մընէ : Այնչափ էր բազմութիւն
առջևը ելող ժողովրդեան՝ որ քաղքէն
ինչվան ցամաքը Տ մղոնի չափ ծովը ծայրէ
'ի ծար լեցուած էր հազարաւոր նաւակնէ-
րով . անանկով բերին նստեցուցին առջի
անգամուն պէս դովինիկեան կարգին ան
վանգը՝ որ կըսվի Սք յոհաննէս պողոս ,
որուն ժամը ամէն եկեղեցիէն մեծ ըլլա-
լով հանդիսի օրերը աւելի յարմար կըլ-
լար այնչափ ժողովրդեան բազմութեան ,
թէպէտ անանկովալ չէին սղմէր ոչ ներսը
ոչ դուրսի հրապարակը , սրբազան հայրա-
պետին օրհնութիւնը առնելու համար : Մայի
սի 19 վենետիկէն ելլալով երբոր հասան
հռոմայուն հողը՝ մէկ լան ջուր մը կար
անցնելու , հետի եղող իշխանները հրամ-
ցուցին մէկ ազվոր շինված տուն մը ելլալ
քիչ մը հանդիստ առնելու համար , ինչվան
որ նաւակները պատրաստըվին . աս տունս
շինված էր սալերու վրայ որ չէին երևնար ,
դիմացէնալ չուանով կըքաշէին . հոն սրբա-
զան հայրապետը խօսակցելով հանդիստ
առնելով առանց իմանալու , երբոր կըհար-
ցընէր երբ պիտոր մտնան նաւակներու մէջ
ջուրը անցնելու համար , իրեն հասկըցուցին
որ ճամփան ըրերեն , ջուրին ան դի գին
անցերեն :

Ասանկ պատուով երթալով երբոր չեղէ-
նայէն անցնելու եղալ , որովհետեւ իր ծը-

նաճ քաղաքն էր, չէզէնացիքալ մասնաւոր
 ուրախութի ցըցուցին, ետքը յունիսի 13
 հասաւ հռոմ, որ քաղաքը լուսաւորելով
 մեծ ուրախութի ցըցընելով ներս առին :
 Սրբազան հայրապետը ամսոյն 23 իրեն
 քառտինալնէրուն մէկ խօսակցութիւն մը
 ըրավ, իրեն ճամփորդուիր և ժողովրդեան
 շինութիւր պատմելէն ետև ըսավ : Քանի
 ճը Բանի Վրայ յովսէփ հայսրը հասնեցոցինս, քանի
 ճը Բանի Վրայ ալ յոսանս որ պիտոր հասնեցընէնս :
 Մս յոյսս պարասլ ելավ . բայց ետքը տես
 նանք քիչ մը անցնելէն ետև ինչ ճախորդ
 հետևութիւնէր ելան՝ որ յովսէփ կայսրը
 ստիպեցին սրբազան պապին դիմել օգնու-
 թի խնդրելու համար, որպէս զի միջնորդ
 ըլլայ, ճարը գտնայ շտկելու :

Յովսէփ հայսեր զանազան արէնի ըրած հարգա-
 րո-նի-ննէրը :

Պօէմիայի ու մօռավիայի մէջ գեղացիք
 կամ երկրագործք տէր չէին երկրի, հա-
 սրա ուրիշ տիրվրտանք ունէին . իսկ գեղա-
 ցիք որ երկիրը կը բանեցընէին, քիչ մը շահ
 կամ վարձք կառնէին, որով շատ նեղու-
 թիւն կը բաշէին : Մսանկ է նաև եւրոպային
 շատ տեղվանքները՝ սիջիլիա կղզիէն սիսեալ
 ինչվան հիւսիսային սառնապատ ծովը .
 կերևար որ մէջէրնին մէկ ապստամբութի
 մը պիտոր ելլար, որուն զօրքերը դէմ կը դը-
 նէին, բայց յովսէփ կայսրը կը մտածէր աս
 բանիս արմատը (քէօքը) վերցընել, ա-

նանկով աս գերութի՛ն խալցուց ան տեղա-
ցի գեղացիները . ասանկալ հրամեց ըլլալ
լեհաստանին նոր առած տեղվանքները , ան-
կեց մենծերուն ուժը քիչցաւ ցածցաւ , ա-
տելի եղավ իրենց յովսէփ կայսրը՝ որոնք
ուրիշներուն աշխատանքովը իրենք կը
հարստնային , տերութեալ փնասակար կըլ-
լային : Բայց մաճառստանի մէջ գեղացիք
չուզեցին աս ազատութի՛ր , մտածելով չըլ-
լայ թէ՛ երկիրը քիչ բերած տարին՝ տիր-
վտանքը զիրենք չիսպահեն :

Բո գերութի՛ն զատ ուրիշ մէկ գերութի՛մը
նալ կար լեհի մէջ . մէկ երկրի մը տէր կըր-
նար սպաննել իր գեղացին կամ երկրագոր-
ծը , պատիժ մը չէր քաշեր սպաննելու հա-
մար , միայն մէկ քանի ըստակ մը կըտուժեր
(ճէրիմէ կըքաշէր) , աս անիրաւ սովորու-
թե՛ր վրայ կեցած է լեհի մենծերուն ազա-
տութի՛ր , բայց ո՛ր թագաւոր որ ուզեց աս
բանս վերցընել , ատելի եղավ , վտանգի
մէջ ընկաւ . ասանկ էր մաճառին մէջնալ .
հիմա յովսէփ մտիկ չընելով իր նորութի-
նէրը կընէր , ուրիշներուն ատելութի՛ր բա-
նի տեղ չէր սեպեր :

Յովսէփ իմացած էր նաև խորամանկուի՛
նէրը խարդախութի՛նէրը որ դատաւորնէ-
րը կընէին , քննութի՛ր դատաստան կտրե-
լը կերկընցընէին , ասպարեց որ՝ երբոր մէկ
դատի (տավայի) մը վրայ երկու վճիռ
միակերպ կըլլայ , ան դատը լինցած սեպվի ,
դատաւորնէրնալ վեց ամսէն աւելի չիկըր-
նան երկնցընել դատաստանը , բայց աս օ .

րէնքը չի պահելեցաւ, վասն զի դատաւորնէրը՝ փաստաբաննէրը դտան միջոցնէր պարասպ հանելու: Ասանկալ օրէնքնէր դրաւ հազուատնէրու վրայ, պսակի վրայ, բայց աս օրէնքնէրուս համար շատ նախատինքնէր՝ պարսաւադէտ զբքէր՝ ելան յովսէփին վրայ Ֆրանսայի մէջ, սպանիայի և մանաւանդ իդալիայի մէջ: Հովսէփ կայսրը պատճառ կրսեպէին նաև ան կարգաւորութիւնէրուն որ նաբօլի ու դօսքանա ըրին եկեղեցական բանէրուն վրայօք, մանաւանդ Արբաքնուութե ատեանը վերցընելու վրայօք դօսքանայի ու սիջիլիայի մէջէն 1782 մարտի մէջ, որ սք դովինիկոսի ատենէն դրված էր՝ մանիքեցուց ու ալիկեանց ազանդը խափանելու համար. թէպէտև կրնայ ըլլալ որ յովսէփ մասնակից չէր աս բանիս, հապա առաջ միլան ըրին աս բանս 1775, անկէց կարելի է որ օրինակ առին:

Հովսէփ կայսեր ըրած նորութեց մէջը մէկ նալ բերդէրը քակելն էր, ոմանք իրեն հաւնեցուցերէին՝ թէ բերդէրուն օգուտը քիչ է՝ խարճը շատ, անոնց քակելը ասով օգտակար կըլլայ որ՝ իրենց աւերակները ծախելով՝ կրնանք ան ըստրկով աւելի ամրցընել խիստ զօրաւոր բերդէրը՝ որ առջի կարգի բերդէր էին, ասանկով 1782 շատ բերդէր քակել տրվավ. 11 բերդ մաճառի մէջ քակել տրվավ, 7 բերդ դրանսիլվանիայի մէջ, 9 դիուօլօի մէջ, 2 խրվաթլիսի մէջ, 2 վերին աւսդրիայի մէջ. 1 կալիցիայի մէջ, իսկ ստորին նահանգներուն մէջ ամ

մէն բերդերը քակել տրվաւ, միայն լուք-
սէնսպուրկ, անվէռսան, ու նամուրը թո-
ղուց: Մայց Ֆրանսոզներուն ետքի ծեծին
մէջը հասկըցվեցաւ բերդերուն օգուտը,
ինչու որ Ֆրանսոզներուն բերդերը շատ
դժարութի արգելք տրվին նեմցէններուն
ստորին նահանգներուն ան կտորը մտնալու՝
որ Ֆրանսոզին ձեռքն էր, իսկ նեմցէններուն
ձեռքի եղած ստորին նահանգները բերդ-
չունէնալով՝ Ֆրանսոզները համարձակ մտան
ան կտորը:

Ուղղափառաց աղապուրէի գրնալը զանազան
երկրներու մէջ. հոռոմայոս արքեպիսպոս
Դնէլը Տոսկոլի երկրն մէջ.

1782:

Ես ստոյգ է որ յովսէփ կայսեր ըրած
թոյլտուութիւնը հերետիկոսներուն հա-
մար՝ պատճառ եղաւ որ հերետիկոսներ
նալ թոյլտուութիւն ըրին ուղղափառնե-
րուն. ան. կուսդավոս վաղա, որ 1523 շվէ-
տի թագաւոր էր եղած՝ արգելէրէր ուղ-
ղափառութե յայտնի գործածութիւր. ա-
նոր համար սիկիսմոնտոս շվէտի թագաւո-
րը՝ (որ միանգամայն լեհի թագաւոր էր),
երբոր ազատութի տրվաւ ուղղափառութե,
թախտէն ձգեցին 1604. անանկով ուղղա-
փառները մէկ եկեղեցի մը չունէին, միայն
ուղղափառ տերուէց դեսպաններուն ժամը
կերթային: Հիմա շվէտին թագաւորը լոթ-

րան աղանդին գլուխը ըլլալով՝ կուսդա-
 վոս Դ. 1779 վճռել տրվեբէր իշխաննէ-
 րուն՝ որ շվէտի մէջ թոյլտուութիւն ըլլայ
 ուղղափառ հաւատքի՝ որ 250 տարվոնէ
 վեր արգելւած էր : Ըստ յաջողութիւն լա-
 ծին պէս սրբազան պատր Դ. պիտո՝ հաւա-
 նութի կուսդավոսի առաքելական փոխա-
 նորդ մը խրկեց շվէտ՝ օսգէր անունով քա-
 հանան , հետնալ թուղթ տրվալ կուսդա-
 վոսին տալու . աս փոխանորդը ժողով մը
 ընելով ըստօքօլմ քաղքին մէջ՝ չորս հոգի
 իրեն օգնական առալ , որոնց մէկը եղալ
 թագաւորին եղբարց պաշտօնեայնէրուն
 կառավարը , հրաման ելալ ուղղափառաց
 եկեղեցի շինելու իրենց ուղաճնին պէս ըս-
 տօքօլմ քաղքին պալատան (սերային) մէջ ,
 ազատութի տալով որ հոն ամմէն եկեղե-
 ցական պաշտամունքը կատարեն . շինվելու
 ատենը ուղղափառաց ժողովատեղի տրվե-
 ցաւ հասարակաց պալատան մեծ սրահը .
 աս բաներս կըրցըրնեն որ՝ շվէտնէրը ինչ
 աստիճանի վերուցին իրենցմէ առջի հա-
 կառակութիւր ուղղափառութե գէմ : Այկե-
 ղեցնայ նաւակատիքը 1784 . զատկին օրը
 ըրալ վերոյիշեալ փոխանորդը շատ փառա-
 ւորութիւն , շվէտի թագաւորին եղբարը որ
 սուտէրմանիոյ դուքս կըսվի՝ հոն ներկայ
 գտնըվեցաւ ուրիշ շվէտի մենծէրովը , եր-
 գօղնէրնալ պալատան երգիչնէրը եղան ,
 դանձանակ պտըտցընօղնալ պալատակա-
 նացմէ մէկը եղալ , փոխանորդը իրիկվան
 ժամուն դովասանք մը զուրցեց շվէտնէ-

րուն ըրած բարերարութիւն վրայ, մանա-
 ւանդ Դ. կուսդավոսի թագաւորին վրայ,
 որուն համար կրտէ թէ՛ շվէտի նաև օտար
 ազգաց աղէկութիւն իր վրան ժողովեց կուս
 դավոս. ամմէնուն սիրտը գիտցաւ իրեն
 քաշել, իր ատենի մարդիկներուն, նաև
 ետևի եկողներուն սիրտերնին շահեցաւ :
 Վերմանիայի մէջնալ՝ ան տեղվանքները
 ուր որ միայն բռնողէսդանդները կըմտնայ-
 ին՝ հոն ուղղափառներնալ մտուցին, ա-
 սանկ ըրին նաև սաքսօնիայի վիդդէմայերկ
 ըսդուդկարտ իշխանը, հաստիա քաստելին
 լանտկուավիօն, պրունսվիքին ու մէքլէմ-
 պուրկին դուքսերը : Մամէնէն աւելի մոս-
 կովի թագուհին կատարինէն ազատութի
 տրվավ ուղղափառաց, տեսնալով որ յով-
 սէփ իր դաշնակիցը շատ արտունութի տը-
 վերէր հոռմըներուն որ մաճառի ու դրան
 սիւլանիայի մէջն էին. 1782 յունվ. 17
 վճիռ հանեց որ մոյլովի մէջ մէկ արքեպիս-
 կոսպոսական աթոռ մը սահմանվի ամմէն
 ուղղափառաց վրայ՝ որ մոսկովի տակի ե-
 դած լեհաստանին մէջ կըգտնըվին. ասոր
 արքեպիսկոսպոսը ընտրըվեցաւ ըսդանիսլա-
 վոս սիէսդրէջէնվից ⁽¹⁾ : Մնոր համար բօ-
 լօսքօ պօնիսլավսքին՝ որ ճիզվիթի դպրա-
 տան վերակացուն էր՝ ու մայր եկեղեցնայ
 կանոնիկոսը՝ հռոմ խրկեց որ ուղղափա-
 ւաց բանին համար խօրաթէ, արքեպիսկո

(1) Ոմանք կըգրեն Սիէնցօ դէրվից :

պոսական աթոռ սահմանէ, նոյն կանոնի-
կոսնալ իրեն օգնական եպիսկոպոս ձեռ-

նադրէ մոյլովի մէջ:

Որչափալ ճիգվիթ կային ճերմակ ուս-
սիային մէջ՝ մոսկովը թողուց. ուրիշ տեղէ-
րէն քշվածնէրնալ կանչեց մոյլով նստե-
ցուց, որպէս զի դպրատուն բանան, տղա-
քը կրթեն. ուսման սէր ձգեն իր անկիրթ
երկիրնէրուն մէջ. իրենց ջնջրվելուն կոն-
դակը հրատարակել չիտրվավ մոսկովստա-
նու մէջ: Ինդրեց սրբազան պապէն որ՝
ճիգվիթին կրօնքը մոսկովի երկրին մէջը
չիսափանվի, այլ օտքի վրայ կենայ ետեւ
ետեւ յաջորդութեմ, և հաստատելովը շնոր-
հէ անոնց ան եպիսկոպոսական իշխանութիւն՝
որ սովորութիւն է քարոզչաց շնորհել. սրբա-
զան պապը ցըցուց անոր թէ որչափ դժվա-
րութիւն կրնար հետեւիլ ասկից սպանիային
ու Ֆրանսային դիացէն:

Ըս պատճառով մէկ ընտանեկան թղթակ-
ցութիւն մը բացվեցաւ մոսկովին ու հռո-
մայու մէջ. կատարինէն 1783 յունիսի 4
թուղթ մը դրեց սրբազան պապին ըսելով:
« Ես ճիգվիթնէրը իմ երկրիս մէջը խա-
« ղաղ ու անմեղ կը գտնամ, ամմէնէնալ
« յարմար տղաքը ու կոպիտ մարդիկնէրը
« կրթելու, միշտ կը սորվեցընեն քաղաքա-
« վարութիւն, թագաւորի հնազանդութիւն,
« քրիստոնէութեմ բարի սկզբունք. ես մէ-
« կի մը վրայ ինչվան որ յայտնի չիտես-
« նամ անօրէնութիւն, չեմ պատժէր չեմ
« հալածէր, ինչ յանցանք որ ուրիշ տեղ-

„ վանք կրճսէն ճիղվիթնէրուն վրայ, հոս
 „ չենք տեսնար: Խնդրեմալ որ՝ չորս ճիղ-
 „ վիթի չնորհէք իշխանութի գրոյմ տալու
 „ բէգրօպուրկի ու մօսքվիայի մէջ, ուր
 „ երկու եկեղեցի ուղղափառաց իրենց են
 „ յանձնրված: Աս թուղթը սրբազան սա-
 „ պը ցըցուց սպանիայի ու Ֆրանսայի տէր-
 „ ութէ, անանկով յուլիսի 24 պատասխան
 „ գրեց հրաման տալով. քանի մը ամենալ
 „ ետև վարչով քաղաքը եղած իր նուիրակին
 „ գրեց որ՝ բէգրօպուրկ երթայ անձամբ խօ-
 „ րաթէ կատարինէ թագուհին հետ ինչ որ
 „ պիտվական բան կայ քրիստոնէութի շա-
 „ հու համար: Ասանկով սրբազան պապին
 „ դիացէն ելավ դնաց ան նուիրակը՝ որ կըս-
 „ վէր անդրէաս առքէդդի սրէշիացի. բայց
 „ աս բանիս համար խրղճահարնէրը դայ-
 „ թակղեցան հռոմայուն վրայ, թէ ինչպէս
 „ սրբազան հայրապետը ասանկ հանդիսաւոր
 „ նուիրակ խրկեց մէկ թագաւորի մը որ
 „ յունագաւան էր ⁽¹⁾:

Ատարինէն անանկ պատիւ ցըցուց վերո-
 յիշեալ առքէդդի նուիրակին, ինչպէս որ
 սուրբութի էր ցըցընել ամմէն թագաւո-
 րաց գեսպաններուն. առքէդդինալ սրբա-
 զան պապին դիացէն հանդիսով ընդունեց

(1) Թէպէտ ասիկայ նոր բան մը չէր, որովհետև
 նաև ժ. գրիգոր քահանայապետնալ պօնքօմբայնին
 1575 մօսքվիա խրկեց բօստէվինոս մանդուացի ճիղ-
 վիթը Առաքելական գեսպան անուսով, որպէս զի
 մոսկովին վասիլովիչ թագաւորը միաբանել տայ լէհի
 ու վենետիկի տէրութի հետ պատերազմելու համար:

հայաբնակներն անունը կատարինէին ու իր յաջորդներուն համար . իսկ ուղղափառներուն համար մայրովի արքեպիսկոպոս ձեռնադրեց , որ ըլլայ իբր եպիսկոպոսապետ մոսկով եղած ուղղափառներուն վրայ , որոնց վրայ ուրիշ իրեք եպիսկոպոսալ ձեռնադրեց . ան հանդէսը փառաւորցրնելու համար հոն գտնուվեցաւ կատարինէն իր ամ մէն ընտանեօքը : Այն բեղքօպուրկ քաղքին մէջնալ ուղղափառաց եկեղեցի մը բացաւ , նաւակատիքը ըրավ . հոն գտնուվեցան մեծ դուքսը՝ որ կատարինէին զաւակն էր , նաև իր ընկերը մեծ դքսուհին : Առքեղդին մեծ պարգև առաւ կատարինէն , ու աս ծառայութիւն համար՝ տարիէ մը ետև քառտինալութիւ պատիւ առավ , պօլօնիա խրկրվեցաւ :

ՍԵՆՏԵՆՈՒ ՝ ԿԱՆԱԿՐԻՄ ԵՂԱԾ շԱՐԺԸ .

1782 — 1783 :

Առաջ 1782 շարժ եղավ Ղեռնի ու Վառնի , բայց 1783 սիջիլիա կղզին ու քալապրիայի մէջ անանկ շարժ մը եղավ՝ որ քիչ անգամ անանկ սաստիկ եղած է . աս շարժս կրնայ ըսվիլ որ գետնին երեսը փոխեց , տեղ տեղ չէր ճանչցրվէր , լեռները կրբացվէին կրգոցվէին , խորունկ վիրասնէր անդունդներ կրբացվէին . գետերը չորցան , ցամաքը տեղ տեղ ծով դարձաւ , վասն զի ծովը ուռելով բարձրընալով կուգար կրկո .

խեր . քաղքընէր՝ գեղէր՝ կործանեցան ,
որոնցմէ մէկ քանին պատմենք :

Փետրվ . 5 . 1783 օհարսրկէն երկու ժամ
ետև մէսսինս քաղաքը ⁽¹⁾ խիստ սաստիկ
եղավ շարժը վեր վեր ցնցելով , անկից ամ
մէն շէնք կամ կործանեցան և կամ փնասե-
ցան , եկեղեցիներ՝ զանկակատունէր՝ պա-
լատներ (սերայներ՝) վար ընկան փլան .
բելլոօ ըսված ծովուն ծայրը Ֆէնէու վա-
ռելու բարձր աշտարակ կար նաւերու հա-
մար՝ կէսէն աւելի վար ընկաւ , ծովալ-
անչափ ուռեցաւ որ՝ ներս մտաւ , բանդա-
նօ ըսված լիճ (կէօլ) մը կար , անոր հետ
մէկ տեղ խառնըվեցաւ , ամմէն էգինէրը
կոխեց . հոն խրճիթներ (խօլիվանէր) կայ-
ին շինած , ուր նաւու առաջնորդներ (խլա-
վուզներ) կը բնակէին ⁽²⁾ , ասոնց ամմէնուն
բնակարանը ծովը առավ տարավ իրեն ետ
քաշվելու ատենը , անոնց տեղը նաւակներ
թողուց ցամաքի վրայ , ու տեսակ տեսակ
ձկներ :

Շարժէն ետև սաստիկ փոթորիկ մը ե-
ղավ անձրևով որ հեղեղի (սելի) պէս կու-
գար . քաղքըցիք որ բաց տեղվանք փա-
խեր նստերէին՝ շատ նեղութիւն քաշեցին
անձրևին ու հովին սասակութէն , չիյտէին
ուր փախչին , չունէին ուրիշ հագուստ մը՝

(1) Աս քաղաքս սիլիլիա կղզին մէջ բաւճամօէն ետև՝
երկրորդ քաղաքն է :

(2) Հոն մէկ նեղուց (պողաղ) մը կայ որ խիստ
վտանգաւոր է , ամմէն նաւ որ հոն կուգան , անոնցմէ
մէյ մէկ առաջնորդ կառնեն իրենց :

որ վրայի թըջըված լաթերնին փոխեն, անանկ թըջըված սաստիկ հուլուն մէջը կեցան: Աւ որովհետև իրենց հաց ուտելու ատենը ըլլալով՝ ամմէնուն տունը կրակ վառած կար, ան կրակին վրայ տախտակները շարժեն ըյնալով ամմէն քաղաքը երիւ սկսաւ, ինչ որ շարժեն մնացած կային հագուստներ՝ գրուածներ՝ տէֆթերներ՝ զարդեր և այլն, ամմէննալ իրենց աչքին դիմացը երվեցան մոխիր դարձան: Ասև չիկարծած տեղ բերդին մէջնալ կրակ ընկաւ, որ խիստ մօտիկ ըլլալով պարութխանային՝ զարհուրելի գողալով երկինքը ցաթկեց, աշտարակներ կործանեց, շատ զինուորներ ու հազարապետներ սպաննեց: Վետինը քաղքին մէջ՝ քաղքէն դուրս՝ տեղ տեղ պատուեցաւ, տեղ տեղալ ցած ցաւ. ան օրը իրեք ժամ օհարսը կէն ետև ինչվան կէս գիշերը այնչափ շատ կը ցնցէր, որ 12. 15 վայրկեան չանցած նորէնոր կը կըրկնըվէր բայց միշտ ուժը քիչցընելով. վաղուան օրը աւելի գողուամ մը հանելով անանկ սաստիկ մը ցնցեց որ՝ ինչ մնացած կար՝ վար ձգեց: Հին մայր եկեղեցին՝ իր մեծ զանկակատունը՝ թագաւորական նաև հրապարակական սպլատը (սերայը), հիւանդանոցին մեծ մասը, եսխիսկոպոսարանը, իր դպրոցերէցը, դպրոցը, վանքեր, տներ, և անուանի ծովեզերեայ ամֆիթատրոնը որ բալայցադա կըսվէր ⁽¹⁾, և մէկ մեծ

(1) Աս շինքս ամմէն նաւահանգստին բոլորախբը

զարգ մընէր սիջիլիայի ու ամմէն իդալիայի մէջ, ասոնք ամմէնը փլցուց: Արբոր բաղմունթիւնը ծովեզերքը փախած նստած էին ահով դողով, շարժը նորէն ցնցելով՝ բարձր մենծ լեռան մը գլուխ իր բարձրութենէն ծովը ընկաւ. ծովին մէջը մէկ վիրապ մը բանալով՝ հոն գտնուված երկու նաւը առաւ տարաւ աներևոյթ ըրաւ մէջի մարդիկնէրով. ծովին բռնութիւնալ որ պատուելովը ցամաքին վրայ վազեց, ինչ մարդ որ կար ծովեզերքը՝ ինչ անասուն՝ ամմէն նալ քշեց տարաւ, որը քարերուն զարկաւ, որը ծառերուն, անկէց շատ մարդ կորսուվեցան, որոնք որ ողջ մնալով խալսեցան, անոնքալ ուրիշ նեղութիւնէրու մէջ ընկան, անծածք՝ անկերակուր՝ անօգնական մնացած կըտըքային, չէին կրնար իրարու օգնել: (արժին նեղութիւն ետե՛ սովը (խրթը խր) սկսաւ նեղել, ամենեւին ուտելու բան ինչվան հացալ չէին կրնար գտնալ խեղճ՝ մէսսինացիները. թէպէտ շատ ցորէն կար՝ բայց շարժը հասարակաց համբարները՝ առանձին տներուն մահսէնները՝ ամմէննալ

կըպտըտէր մէկ մղոնի չափ, չորս խաթ. ամմէննալ քառակուսի մերմէաքարէ շինված. 18 դուռ ունէր՝ որ մեծ մեծ ճամփերէրու վրայ կըհանէին. ասանկով մէկհատիկ մեծաշէն թատրոն մըն էր՝ որու նմանը չիկար: Ասիկայ 1622 Ֆիլիպերդոս սալոյայի իշխանը սկսաւ շինել, որ փոխարքայ էր Դ. փիլիպպոսի սպանիայու թագաւորին. մէսսինացոց քովը անչափ հարստութի կար որ՝ ասչափ մենծ շէնքը իրէք տարվան մէջը լմնցուցին:

աւերակի տակ թաղերէր . Չաղացքներնալ
 որը փլած՝ որը աւերակներով լեցուած ըլ-
 լալով, ջուրին ճամփայններնալ գոցված,
 չէին կրնար Չաղացքները բանեցընել, չէին
 կրնար աղբիւրներնալ ջուր դտնալ . անկէց
 փուռերնալ գոցվեցան, հացագործներնալ
 փախան, ամմէն մարդուն տունը ինչ ու-
 տելու կար՝ ամմէննալ թաղված կեցած
 մնաց : Չորս դին վայնասուն, լաց, ողբ,
 աղաղակ, որը հայրը կուլար, որը զաւակը,
 իր եղբարը, կամ մօտիկ բարեկամները .
 ան օրվան մեռնօղնէրուն համբանքը՝ 10
 հազարէն աւելի եղան . թող տուր ետքի
 մեռածները, որը խոցվելէն, որը ուրիշ նե-
 դութիներէն, որոնք ամմէնը մէկ տեղ 70
 հազար մարդ կորան : Աւելի նեղութի պի-
 տոր քաշէին՝ թէ որ մօտիկ քաղաքը քա-
 դանիա ըսվածը կերակուր չիհասցընէր ա-
 սոնց նաւակներով . ասիկայ եղավ իրենց
 առջի օգնութիւնը . ասկէց զատ առանձին
 մարդիկներ իրենց ազգականներուն բարե-
 կամներուն աս դիէն ան դիէն կերակուր
 ու հագուստ հասուցին : Աայց շատ ան-
 դութ անզգամ մարդիկներալ կային՝ որ
 ան խեղճութե ատենը իրենց շահելու ա-
 տեն սեպելով, իրենց քաղքըցոց բաները
 կրգողնային կրթալլէին :

Աս շարժը քալապրիայի մէջալ եղավ ինչ-
 վան յոնիական ծովուն ան դին աբբենի
 նեան տեղը, շատ մարդու մնաս տալով :
 Սիդիծան գաւառին մէջ (քօղօլեդօ գա-
 ւառին հետ մէկ տեղ) շարժէն յանկարծ

երկու լեռ վար ընկան դետը արգելեցին ,
որ բարձրընալով ուռենալով մէկ մենծ
լիճ (կէօլ) մը եղավ . ասանկ եղալ Սի-
նօթօլի ըսված տեղնալ՝ ուր գետ մը ար-
գելվեցալ . քանիալ որ ուրիշ պզտիկ ջու-
րէր որ ասբրօմօնդէ լեռներէն կինջնային՝
բեդուաչի գետը կըխառնըվէին՝ արգելվե-
լով լճէր եղան : Վառիադի իշխանին օբ-
բիտօ երկիրը որ լեռան մը վրայ էր երկու
ձորի (տէրէի) մէջ՝ կէս մը ավըրվեցաւ ,
կէս մընալ դետինը անցաւ . մէկ բերդմը-
նալ փլցուց , 2500 հոգիէն աւելի անօր
տակը մնացին , շատ մարդալ փնասվեցան :
Սէճճիօ որ իր համանուն գաւառին մայր
քաղաքն է , ամմէն իր շէնքերով գետինը
անցաւ , 3 հազար հոգիէնալ աւելի կորսը-
վեցան : Սէմինառա մարդաշատ քաղաքը
գրեթէ ամմէն մէջի բնակիչներով անե-
րևոյթ եղալ , անանկ սաստիկ եղալ հոն
շաժը՝ անանկ մը ցնցեց՝ որ մէկ մեծ գե-
տին մը լեցուն պտղատու ծառերով տե-
ղէն հանեց , երկու մղոնի չափ հեռու տեղ
մը ամբողջ փարաւ ձգեց , ամմէն վրայի
ծառերով , ձիթենիներով , ուրիշ բուսե-
րով , ամենեւին իրենց արմատներուն չի
դըպչելով , որուն առջի ելած տեղը հրաւ
բուղխինիւթերով լեցուն կեցած է ինչվան
հիմա , ուր տեղ խորունկ պատուրված մը
կերունայ քանի մը մղոն երկան : Վսանկալ
պակնառա ու սուրբ եւփիմիա ըսված տե-
ղը շատ փնաս քաչեց , շատ մարդ մեռան
կամ խոցվեցան : Վեռա նօվա ըսված

տեղը բոլորովին կործանեցաւ . 2 հազար մարդէն աւելի կորսրվեցաւ , ասանկալ ամբողջ կործանեցաւ քաղաքնօլօ , ուր մեռաւ անուանի իշխանուհին կռիմալտի ճէրաչեան , 6 հազար հոգիալ իր ժողովուրդին հետ մէկ տեղ : Արկան կըլլայ ամմէն մնասված տեղերը գրել , բայց խիստ խեղճ եղալ ըսչիլլա անուն հին ու մարդաշատ քաղքին դիպուածը . ասոր քովը բերդ մը կար ապառաժ լեռան վրայ՝ ուր որ կընրստէր ան երկրին ծեր իշխանը՝ Փօլքօ անտօն ուուֆֆօ ըսված , որ ահագին շարժէն փախչելով ծովուն քովը եկալ իր մարդիկնէրով , քիչ մը վրաննէրու (չատըրնէրու) տակ , քիչմընալ նաւակնէրու մէջ սղմըվելով . բայց գիշերը ծովը չափէ դուրս ուռե նալով կոխելով՝ քանի մարդ որ ծովեղերքը կեցած էին , ուժով մը քաշեց տարաւ իր անդունդը . 1448 հոգի կորսնցուց իրենց իշխանովը՝ որ շատ բարբարոս ագահ ու մարդասպան ըլլալով , իր պատիժը դտաւ ըսին :

Արբոր աս քաղաքացոց խեղճութիւն լսեց նաբօլի թագաւորը ՚ք . Ֆէրտինանտոս , շուտ մը ուղեց հոն երթալ՝ որ օգնութիւն հասնի խեղճէրուն , բայց աքդօն զօրապետը՝ թագուհին՝ և ուրիշ արքունեաց մէջի եղօղնէրը թող չիտըվին , իր տեղը բինեադէլ լի զօրապետը խրկել տըվին շատ մարդիկնէրով . ասիկայ երբոր հոն հասաւ՝ թագաւորին տըված ըստակը ան խեղճէրուն համար՝ մեծ մասը իրեն քաշեց առաւ . թող

որ ասկէց անկէց աղքատներէն ըստակ կը պահանջէր . ասանկալ իրեն մարդիկնէրը կընէին , անանկ որ ասոնց ըրած փաստը աւելի եղաւ քան շարժին ըրածնէրը : Երաւ է որ թագաւորնէրը պէտք է նային չէ թէ մինակ աղէկութի ընելու , այլ նաև աղէկ մարդ ընտրելու՝ որ իրենց ուղած աղէկութիւնը ընեն :

Ըստ սաստիկ շարժէն ետև մէկ երևոյթ մը նալ հետևեցաւ զարմանալի . ամմէն քաւապրիայի ու սիջիլիայի վրայ մէկ մշուշ (տիւման , փուս) մը սկսաւ երկինքին վրայ երևնալ՝ որ քչեց վեց ամիս . քաւապրիային սիջիլիային վրայ խիստ թանձր , անկից քանի որ հեռընայիր՝ քիչ մը բարակ , բայց ամմէն ճերմակ ծովուն վրայ սպտած էր , սեպտէի պողաղէն ինչպիսի ստանալու պողաղ իչին . ամուվան բաց պարզ օրէրնալ՝ օհարսրկվան ատեննալ միշտ մէկ մշուշ մը կեցած կերևնար երկինքին երեսը : Աւծովէնալ քանի նաւապետնէր որ կուգային , անոնքալ մեզի կը պատմէին որ՝ ամմէն սև ծովին վրայ մշուշ մը կայ պատած , որ առաջ ասանկ չէր , ասանկալ դունա գետին վրայ , Ֆրանսային ու ինկիլդէուային վրայ և այլն : Տեղ տեղալ ինչպէս եղաւ վենետիկ , անանկ նոր նոր ձուկնէր կը տեսնային , որ առաջ ամենեւին չէին տեսած մարդիկ ան տեղվանքնէրը անանկ ձուկ , կերևայ որ սիջիլիայի ու քաւապրիայի ծովէրը շարժէն տակնուվրայ ըլլալով , կամ գէշ ծծմբային հոտէր հանելով՝ անկէց փախած էին աս

ձուկները խաղաղ ծով դանալու համար :
 Ըստ շարժը եւրոպային չորս գինալ ծաւալե-
 ցաւ, նաև ասիա ու ամերիկա թէպէտ թե-
 թեւ, միայն իսլանտա կղզին անանկ սաս-
 տիկ եղաւ որ՝ ծովին մէջէն յանկարծ մէկ
 նոր կղզի մը ելաւ դեանի տակի կրակէն :

Խաբը՝ Խոռոճո՞ւրի էլէլայ, Դուհո՞ւրի Գաստոնէրէն
 Գե՛լէ էլէլայ .

1782--1783 :

Շահին կիրայը որ մոսկովի պաշտպանու-
 թիւնը խրրմի խան էր եղած, շատ խուովու-
 թիւնէրու պատճառ եղաւ իր գործքերով .
 խրրմի մէջ սկսաւ եւրոպացոց սովորու-
 թիւնէրը մտցընել՝ որ խիստ դէմ կուգար
 տեղացոց, ան բանն որ կամաց կամաց պի-
 տոր մտցընէր՝ անմտութեամբ ուղեց մէկէն
 մտցընել : Ըստ նորութիւնը ահա պատճառ
 եղաւ իր կործանմանը . ուրիշներուն սիր-
 արը բարերարութիւն առատաձեւունութեամբ
 ձեռք առնելուն տեղը՝ իրեն քաշել կրնայ-
 էր, ինքը վաստակիլ կուզէր անհնարին ա-
 դահութի, մէկ մեծաշէն պալատ (սերայ)
 մը շինեց մոսկովի շէնքին կեօրէ . ութը
 ձիով առապայ կրնատէր մառեշալի և նը-
 վօլտօմիրեան կարգին հազուստով, որ էր
 ասպետութիւն կարգ բեդրօպուրկէն իրեն
 խրկրված . նեմցէի ու պրուշի կրթութիւն
 (թալիմ) ջանաց խօթել իր զօրացը մէջ,
 Ֆրանսպի կերպ հազուստ խօթեց իր կրնկ

տողը մէջ : Այնորու թիւերուն որ իր վրայ
ըրաւ չի գիմացան երկրըցիք , տրտունջը
օրէօր ելեւըցին . բայց ինքը անչափ չի
մտածօղ եղաւ որ՝ կրբունագատեր որ ու
րիշնէրնաւ ամմէննաւ իրեն նմանցընէ . ա
սանկով խանին երկու աղբարնէրը առիթ
դտան անոր դէմ ատելու թի ու աստամ
բու թի սերմանելու :

Յանկարծ մայիսի մէջ 1782 մէկ ընդհա
նուր խռովու թի մը ելաւ , շահին կիրայը
տեսնալով որ մէկը չունի իրեն բարեկամ ,
մոսկովի քօնսօլին հետ մէկ տեղ կէրչ փա
խաւ . ան ատենը շատ ջարդ եղաւ շատ ա
ւերու թի , անով խրրում ծարէծար ասպա
կանսկեցաւ : Աստամբնէրը պէհար կի
րայը խան ընտրեցին . ուղեցին որ տաճկին
դուռը հաստատէ ու օգնու թի խրկէ . տա
ճիկը քայնարճըք եղած դաշնագրու թէր
վրայ հաստատ կենալով չուղեց խառնրվիլ ,
թէպէտ և ուրիշնէրը կրսէին որ աս ասպրս
տամբու թէր մէջ ծածուկ ձեռք ունէր տա
ճիկը , բայց ստանսօլ լսածնին պէս շատ
շփոթու թէ մէջ ընկան , մէջէրնին միա
բան չէին , ոմանք չէին ուղէր նոր պատե
րաղմ բանալ . ոմանք կրսէին որ պէտք է
խրրում եղած տաճկրնէրը պաշտպանել ,
որոնք մոսկովը կրնեղէր թէպէտև անուղ
ղակի : Ալ որովհետև 1779 եղած դաշնա
դրու թեանը մէջ խօսք կապերէին՝ թէ որ
թաթարնէրը ինքիւրէրնին չի կրնան խա
ղաղկիլ , ան ատենը մոսկովն ու տաճիկը
մէկ տեղ մէջ մտնան խաղաղընելու , ա

նոր համար պուլկաքօֆ մոսկովին դեսպա-
 նը դրան հասկըցուց որ՝ շուտ մը միաբա-
 նին մոսկովին հետ՝ խրրըմին խառովութիւր
 խաղաղցընեն, շահին կիրայը նստեցընեն :
 Ղուռը պատասխան տըվավ որ եղած դաշ-
 նագրութէը կեօրէ ոչ տաճիկը և ոչ մոս-
 կովը պիտոր խառնըվի, հապա իրենց թող-
 լու է մէկ խան մը նստեցընել, մոսկովը
 միայն խանին անկախ ըլլալը պիտոր պաշտ-
 պանէ, մանաւանդ որ աս վէճս անանկ ժո-
 զովրդեան մէջ է, որ երկու դինսալ հաւա-
 տակից են, իրեն չէր իյնար որ խառնըվի :
 Եւ պատասխանը մոսկովին ուղածը եղավ .
 Սամօյլով զօրապետը 20 հազար զօրքով
 շուտ մը խրրմ՝ խրկեց, որ եկավ ապստամբ-
 նէրը հալածեց, ոմանքալ բռնեց կախեց,
 շահին կիրայը նորէն նստեցուց : 1783
 փետրվ. 21. երբոր շատ հակաճառութիւն
 տաճիկն ու մոսկովը մէկ դաշնագրութիւն
 մը ըրին առուտուրի վրայօք, նոյն ամսոյն
 28ին շահին կիրայը տեսնալով որ իր թշնա-
 մինէրը անգաղար կըմտածէին ծածուկ ու-
 թողայթի մը մէջ ձգել զինքը, հանդիսով
 հրաժարեցաւ իր խանութէն և իր երկիր-
 ներէն՝ մոսկովին տալով աս թէութիւն որ՝
 անոր տեղը ինքը երթայ մէկ մոսկովի գա-
 լառ մը նստի. տարին 300 հազար ռուպլի
 (պէշլիք) եկամուտ առնելով. և փոխա-
 ընէ իր երկիրնէրուն՝ հարուստ քարէրով
 շինված զարդ մը : Եւսանկով ահա մարե-
 ցաւ իշխանութիւր աս թաթար խանի ցե-
 ղին՝ որ ճինկիս խանին մէկ սղէն ինջած

ըլլալով՝ 500 տարիի չափ իշխեց խրըմին
մէջ :

Ան ատենը մոսկովի թագուհին 30 հազար
զօրքով բողեմքին իշխանը իր երեսփոխա-
նը խրկեց հօն , որ երթայ տիրապետէ ան
երկիրնէրուն վրայ . ասիկայ առանց մէկ
ընդդիմութիւն մը գտնալու մտաւ պղտիկ
թաթարի մէջ , ամմէն բերդերու նաւա-
հանգիստնէրու մէջ պահապաններ դրաւ .
քուպանին մէջնալ մտաւ տիրապետեց , ա-
սանկալ թամանը մտաւ , որ բալլիքն է ու
շահաստան քաղաք աղի ձկան առուտուրի
համար որ ազախու ծովէն կելլայ : Աւրիշ
զօրքալ խրկեց մոսկովը գարապազար՝ որ
պատրաստ կենան՝ պէտք ըլլալու ատենը
կանչէն . իսկ ազախու ծովը՝ վէռօնիցան՝
ու քէրսօն՝ պատերազմական նաւեր դրին :
Աս գգուշութիւնէրը շուտ մը ընելով մոս-
կովը , իր իրաւունքը ցրցընելու համար՝
1783 ապրիլի 8 ասանկ յայտարար թուղթ
մը հանեց : « Միշտ խռովութիւն ելլալով աս
« թաթարնէրուն մէջ՝ շատ անհանգստութի
« կուտային մեր տերուեր , շատ խարձիալ
« պատճառ կըլլային , որոնք պաշտպանե-
« լու՝ 15 միլիոն ռուպլիէն աւելի խարճե-
« ղալ : Տաճիկը ընդդէմ գաշնագրութե
« հօն տեղ տեղ իր տերութիւր կըբանեցը-
« նէր , մանաւանդ թաման կղզիի մէջ ,
« ուր տեղ մէկ զօրապետ մը խրկեց զօր-
« քով , որ դուք տաճիկի թագաւորին հպա-
« տակն (րայէն) էք ըսելով , շահին կիրայ-
« ին խրկած մարդուն գլուխը կտրեց : Ա-

„ սոր համար մեր իշխանու թէր տակը կառ-
 „ նենք Պղտիկ թաթարը , խրըմու ցամաք
 „ կղզին , թաման կղզին , Լամէն Վու-
 „ պանը “ :

Լսանկով ան թաթարը՝ որ ատենօք ծանր
 հարկաւ (խարաճ) կառնէր մոսկովէն , հի-
 մա ինքը մոսկովին հարկատու եղալ , իր
 միրզանէրը՝ պէյէրը՝ գլխաւոր քաղքընէ-
 ըուն մենծէրը՝ քիչ մը անուշու թէ՛ քիչ մը
 վախով բռնադատվելով , յուլիսի 20 դա-
 ցին՝ բողեմքին իշխանին հաւատարմութե-
 ու հնազանդութե երդում ըրին . որ իր
 աղէկ կառավարութեը համար առանց մէկ
 արիւն մը թափելու ամմէննալ հնազանդե-
 ցուց . ինքնալ եղալ մշտնջենաւոր կառա-
 վար աս ամմէն առած երկիրնէրուն վրայ :
 Սուլարօֆ զօրապետնալ ասանկ ըրալ
 վարի քուպանին մէջ բարբարական ժո-
 ղովորեանը հետ . անոնց մենծէրը՝ ու պա-
 թիր կիրայ սուլդանը՝ իր ժողովրդով որ
 քուպան գետին աս դի գին կրքնակէին ,
 նաև պուճագ թաթարին բարբարական օ-
 պանէրը իր տակը առալ :

Լս տեղականքնէրը երբոր տաճկին տակն
 էին՝ 4 միլիոն զուռուշ տարին եկամուտ
 կրբերէին . մէջի բնակիչնէրը 2 միլիոն ու
 կէսէն աւելի էին , գրեթէ ամմէննալ պա-
 տերազմական մարդիկնէր , որոնցմէ մոսկո-
 վը 60 հազար զօրք հանելով իրեն զօրքը
 շատցուց : Լսանկով մոսկովը աս ժը . դա-
 ըուն ծայրէն սկսեալ օրէօր տեղականք առ-
 նելով շվետէն՝ լեհէն՝ թաթարէն՝ ու տաճ

կէն, իբր թէ աշխրհհիս տասներորդ մասը
իրեն հսկատակ ըրավ:

Տաճկին ու հոսիովի մէջէ եղած հաշտութիւն.

1784:

Թէպէտ 1783 փետրով. 21 տաճկին ու
մոսկովին մէջը դաշնադրութիւն մը եղած էր
վաճառականութե վրայօք, բայց աս խը
ըրմին բանը շատ պաղուծիւն ձգեց, շատ
բարկացաւ տաճիկը, և որովհետև իրեն
զօրք ժողովելը անանկ աղէկ կարգի մը մէջ
դրած է որ՝ շուտ մը ուզածին պէս կրնայ
ոտքի վրայ հանել, օրէօր զօրք խրկեց
դէպ ՚ի դունա, նաւէր շատցուց, ան ատե-
նը խափուտան փաշայ ըլլալով անուանի
ճէզայիրլի հասան փաշայ, որ իրեն քաջու-
թքը անուն էր հանած: Մոսկովնալ կաս-
կած առնելով տաճկին ծեծ բանալուն վը-
րայ, ինքնալ սկսաւ իր ուժը շատցընել ծո-
վու ցամաքի վրայ, նեմցելին հետ դաշնակ-
ցութիւն ըրավ, պղտիկ նաւէր հանել տը-
վավ ճերմակ ծովուն մէջը. մեծ նաւատոր-
միդ (տօնանմա) մը պատրաստեց քաօն-
չդատ՝ բայց դուրս չիհանեց. կերևայ որ
Ֆրանսոյը ու սպանիան թող պիտոր չիտայ-
ին ճիպրալդառին նեղուցէն անցնելու: Ըն-
ատենը Ֆրանսոյը մէջ մտաւ իր դեսպանին
ձեռքովը՝ մոսկովին հետ խօրաթեց բանը
շտկելու, բայց մոսկովը պատասխանեց:
» Խըրըմ ու քուպան ազատ և անկախ ըլ-

„ լալով՝ միջնորդ ըլլալը պարապ էր, թէ
 „ որ տաճիկը ծեծ ըսկըսի ինծի հետ՝ ան
 „ ատենը Ֆրանսոզին միջնորդութիւնը մեզ
 „ հաշտեցընելու համար կընդունիմ“ :

Յովսէփ կայսրնալ Ֆրանսոզի թագաւորին
 պէս զուրցեց . բայց յայտնի եղավ՝ թէ որ
 ծեծ բացվէր, ինքնալ մոսկովին հետ դաշ-
 նակից ըլլալուն համար զօրք պիտոր տար
 մոսկովին, մանաւանդ որ ինքնալ 1783 ան
 ձամբ եկերէր մաճառին ու դրանսիւ վա-
 նիային սահմանները՝ որպէս զի մնացած
 բերդերը նայի, ան տեղվանքը զօրացընէ :
 Արդանկտէր յովսէփ տաճիկին՝ թէ ինչու
 նոր տեղվանք ամրըցուցերէր պելըրատի
 մէջ 1739, և 1747 եղած դաշնագրութեց
 դէմ, այնչափ որ՝ թէ որ տաճիկը մտիկ
 չիդնէր, յովսէփ կըսպառնար ծեծ բանալ :
 Ըս պատճառովս էր որ յովսէփ հրաժա-
 րեցաւ ընդունելու տաճիկին դեսպանը՝ որ
 կարգէ դուրս կուզէր խրկել շնորհաւորե-
 լու համար իր բացարձակ տէր ըլլալուն
 վրայ մօրը մեռնելէն ետեւ, պատասխանե-
 լով տաճիկին՝ բաւական է առջի շնորհաւո-
 րելդ երբոր յաջորդ եղայ կայսեր թախ-
 տին, հիմակվան կրկնելը աւելորդ քաղա-
 քավարութի էր :

Յովսէփ շատ կը ջանար որ՝ խըրըմ մոսկո-
 վին ձեռքը մնայ, ինչու որ խըրըմին նաւա-
 հանդիստները առուտուրի խիստ յարմար
 են իր ժողովուրդին համար, և որովհետեւ
 մոսկովը իրեն սիրական դաշնակիցն էր,
 կիմանար որ իր շահին խափանիչ պիտոր

չըլլար, ինչպէս որ փորձեց լեհաստան բաժ-
 նելուն ատենը, մոսկովը ան ատենը նեմ-
 ցէին դէմ չիկեցաւ ան բաժինը առնելու՝
 որուն մէջը 3 միլիոն աւելի բնակիչ կային
 քան մոսկովին բաժնին մէջը: Ասոր համար
 Ֆրանսայի թագուհին որ իր քոյրն էր՝
 ձեռք առաւ որպէս զի Ֆրանսայի թագա-
 ւորին խօսք հասկըցընէ՝ թող տայ մոսկո-
 վին խրըմը առնելու, մանաւանդ թէ մէջ
 մանայ տաճկին հաւնեցընէ՝ որ աս բանիս
 դէմ չիկենայ. ասկից եղաւ որ ստանալու
 նստող Ֆրանսոզի դեսպանը՝ որ սուրբ բրի-
 Ֆու կոմս կրավէր, սկսաւ աս բանիս վրայ
 դուռը համոզել (խանտրմիշ ընել,) ըսե-
 լով: « Սոսկովը պատրաստ է իր ամէն
 « ուժը բանեցընել՝ երկան պատերազմով
 « ծեծկրվիլ խրըմին մէկ կտորը թող չի
 « տալուն համար. յովսէփ կայսրնալ իրեն
 « օգնական ունենալով երկուքը մէկ տեղ
 « 600 հազար մարդ ոտքի վրայ կըհանեն,
 « ամէն ռուսի մէջ եղած տաճկի սահ
 « մանի վրայ կըվազեն, մէջէրնին կըբաժ-
 « նեն: Ասոնց մէկ դէմ դնող մը կար պրու-
 « շին թագաւորը ք. Ֆետերիքոս, անալ
 « հիմա ծեր ըլլալով ու հիւանդոտ՝ տեղէն
 « չիշարժիր, ասանկով ձեզի մեծ փնաս կըլ-
 « լայ, ուրեմն խելքը աս է որ՝ հիմակվան
 « ատենը դուք ձեզ յարմարցընէք ատենիս
 « պարագայներու, ուրիշ ատենի թողուք
 « վրէժխնդրութի ընելու:

Աս պատճառներս աղէկ մը մտածելով տա-
 ճիկը՝ տեսնալովալ որ բողեմքին անուանի

զօրապետը 100 հազար մոսկովով սլատրաստ
կեցած էր, նաև նեմցէն իր զօրքը սաւա
դետին քովը թափերէր, որ շուտով կըր-
նային աս դի դիս անցնիլ, իր մէջէնաւ չէին
պակսէր ապստամբներ, տաղլը ըսածները
ուումէլի մէջ, անպակաս խուովու թիւններ
շամու փաշայու թէ մէջ, գլուխ քաշել մը
մնրայ ու պաղտատի մէջ, աս բանէրս մտա-
ծելով յանձն առաւ խըրըմը թողուլ, ո-
րուն շատ դէմ կեցաւ վեզիրը: Անանկով
1784 յունւ. 15 կայսրը ու Փրանսդի թա-
գաւորը միջնորդ ըլլալով հաստատվեցաւ
մոսկովին առաջարկած դաշնադրութիւր, ո-
րուն երեսփոխանը պուկաքօֆ էր, իսկ
տաճկին դիագէն՝ ճեզայիրլի գափուտան
հասան փաշայ և ըէիս էֆէնտին. թէուի-
նէրը ասոնք էին:

„ Թ. Հաստատուն մնայ երկուքին մէջը
„ քայնարձըքին դաշնադրութիւր՝ որ եղավ
„ 1774. և անոր բացատրութիւր որ եղավ
„ 1779. առուտուրի պայմանադրութիւնը
„ որ եղավ 1783. միայն երրորդ թէութիւր
„ քայնարձըքի դաշնադրութէ ոչինչ ըլլայ,
„ ոչինչ սեպվի մէջէրնիս ինչ որ գրված է
„ խըրըմին ու պզտիկ թաթարին վրայ „ :
„ Թ. Վզտիկ թաթարը՝ խըրմը՝ քուսպան
„ թագաւորութիւր՝ թաման կղզին՝ իրենց
„ տակի եղածներով, քաղքըներով, բերդե-
„ ըով և այլն, ասկից ետքը մոսկովի թա-
„ գուհիին և իրեն յաջորդներուն իշխա-
„ նութէ տակը ըլլան միշտ. մէկ տէրութիւր
„ մը չիգանկտի աս բանիս վրայ „ :

„ Գ. () զուին բերդը իր գաւառով տաճ-
 „ կին տակը մնայ , մէկ տէրութի մը վրան
 „ չիշխէ „ :

„ Դ. Մոսկովին տէրութիւնը ոչ երբէք բա-
 „ նեցընէ ան իշխանութիւնը՝ որ թաթար
 „ խանէրը ունէին եէնիգալէին ու իր գա-
 „ ւառին վրայ , որ միշտ տաճկին տակը պի-
 „ տոր մնայ „ :

„ Ե. Քուպան գետը ասկէց ետքը սահման
 „ ըլլայ մոսկովին ու տաճկին մէջը . մոսկո-
 „ վը չի կրնայ իշխանութիւն պահանջել ան
 „ թաթարներուն վրայ , որ քուպան գետին
 „ ան դին կրքնակին սև ծովին կողմը : Աս
 „ դաշնագրութիս հանդիսով հաստատուի
 „ չորս ամսը վանը մէջ , կամ աւելի շուտ „ :

Ասոր հաստատութիւնը եղավ 1784 ապրիլի
 11 . մոսկովը տիրածին պէս՝ թուղթ հա-
 նեց , ամմէն քրիստոնէսէրը իր նոր առած
 տեղիւնքը կանչելով , թոյլ տալով ամմէ-
 նուն որ աղատ առուտուր ընեն ծովու ցա-
 մաքի վրայ :

Տաճկին ու սպանիային մէջը եղած հարնջէնաւոր
 խաղաղութիւն .

1782 :

Արբոր ամերիկայի ԺԴ . նահանգները զատ
 տէրութի մը եղան՝ խիստ քիչցաւ ինկիլիզ-
 ներուն առուտուրը՝ որ արևելցոց հետ կը-
 նէին ձերմակ ծովին մէջ . աս բանս հասկը
 նալով սպանիան՝ ինքը ուզեց ձեռք առնել

աս առուտուրը, ամերիկային սպրանքները
 ինքը բերելով տաճկին երկիրը. անոր հա-
 մար 7. կարողոս սպանիային թագաւորը
 մտածեց բարեկամութի կապել տաճկի թա-
 գաւորին հետ: Բայց աս բանս սպանիայի
 տերութեմ գէմ բան էր, ինչու որ քաղա-
 լիայի հին թագաւորներէն սկսեալ սպա-
 նիան միշտ գէմ էր եղած, միշտ ծեծ կը-
 նէր ամմէն տաճիկ իշխաններու հետ. անոր
 համար օրինակ մը չիկար, սպանիայի թա-
 գաւոր մը չէր եղած որ՝ օսմանցիին հետ
 դաշնագրութե կամ խաղաղութե թուղթ
 մը ընէ, հիմա ասանկ բան ընելով դայթակ-
 ղութի կուտար ամմէն սպանիացոց:

Քառտինալ ալպէռօնին երբոր սպանիայի
 վեզիրն էր՝ մէկ ծածուկ բարեկամութի մը
 ունեցաւ ստանպօլ, բայց երբոր իր պաշտօ-
 նը լմնցաւ, ամմէն բանը վերջացաւ, հիմա
 վերոյիշեալ 7. կարողոս թագաւորը ստան-
 պօլ խրկեց յօհաննէս պուլլիցնի վաճառա-
 կանը, որ առատաձեռնութե անուշութե
 ձեռք առաւ ստանպօլին վեզիրը, որպէս
 զի մէկ դաշնագրութի մը ընէ առուտուրի
 վրայ: Ուրիշ եւրոպացի ազգերը՝ որ տաճ-
 կին հետ առուտուր կրնէին, նախանձելով
 շատ ետեւէ ընկան աս բանս խախտելու՝
 բայց պարապ ելաւ, վասն զի 1782 սեպտ.
 14 ստորագրեցին աս դաշնագրութե վե-
 րոյիշեալ պուլլիցնի վաճառականը ու վեզի-
 րը, մէկ քանի ամսէն ետեւ հրապարակաւ
 հաստատեցին:

Մասնկով մէկ մշտնջենաւոր խաղաղութի

ու բարեկամութի մը սահմանեցին սպանիային ու տաճկին մէջը աս թէ ունենէրով :
 Սպանիան թէ ստանալով՝ և թէ ամմէն աւսիայի եւրոպայի ու ամբրիկէի վաճառատեղերը քօնսօնէր կարենայ դնել : Իր նաւերը ամմէն կերպ ապրանքներով կարենայ խրկել տաճկին սահմանը , վաճարելով ինչ որ ուրիշ բարեկամ ազգերը կը վաճարեն :
 Մէկ դեսպան մը ունենայ ստանալով սպտուով նման ուրիշ տէրութիւններու : Սպանիային ուխտաւորները երբոր երուսաղէմ երթալու ըլլան , նեղութի չիքաշեն , այլ մանաւանդ տաճիկը անոնք պաշտպանէ :
 Տաճիկնալ կարենայ իր դրօշակով վաճառականի նաւերը խրկել ամմէն սպանիային նաւահանգիստները , մանաւանդ Վլիքան դը , որոնք ընդունվին ինչ կերպով որ սպանիային նաւերը կընդունվին տաճկին երկիրը :

Ըս բանս աւելի շահաւոր եղաւ սպանիային քան թէ տաճկին , որովհետեւ տաճկին քիչ նաւերն են որ Ֆրէնկիստան կընաւարկեն , անալ միայն չամլուճացիք , սուլուճացիք :
 Իսկ մանսիլիացոց շատ մնասակար եղաւ , որովհետեւ առաջ սպանիային ապրանքը միայն իրենք կըտանէին տաճկին սահմանը . անոր համար Ֆրանսոզները շատ մեղադրեցին ստանալով եղած իրենց դեսպանը՝ որ կըսվէր կոմս Սան բրեկտ , թէ ինչու հոգ չիտարաւ ճամփով մը արդէլէլ սպանիային դաշնադրութիւր :

Ըսոր ետեւէն եղաւ որ՝ հինգ սպանիայի

արքունական նաւեր եկան ստանալօլ երկու
խափախլը , ամիսնէրով կեցան , մէջնալ
բազմուծի , և որովհետև թող կուտային
դուրս ելլալու՝ շատ մարդ անոնցմէ հրէից
մէջ խառնըվեցան , յայտնի ըրին որ ծա-
ծուկ հրէայ էին , ինչպէս որ շատ կը գտնըվի
ստանալօլ :

Սոսիովը նոր երկերնէր հառնէ , վաճառահանու-
նիսնը կը ծաղկեցընէ .

1784 :

Աս տարի մոսկովին նոր նոր երկիրնէր
վաստրկելու տարի եղալ . բաց ՚ի խրըմէն
աս տարվանս մէջ նաև պարսկաստանէն
(աճէմէն) տեղվանք առալ , որովհետև ի-
րենց մէջի խռովուծիը շատցած էր որ վա-
րը պատմենք : Աժտէրխանէն պղտիկ նա-
ւատորմիդ մը խրկեց , որ կասալից ծովուն
(գիլան տէնիզիին) վարի ծայրը դալով
պալն ու ասթարան առին , որ կիրան ու
գիլան գաւառնէրուն մէջն էն . ասթրա-
պատին ու Ֆէհրապատին մէջը խանէր շի-
նեցին , ամմէն պարսկաստանի հետ վաճա-
ռականուծի ընելու համար :

Աիւրճիսթանին էրէյլի խաննալ որ պար-
սից պաշտպանուծէ տակն էր՝ բայց շատ
նեղուծի կը քաշէր զանազան թշնամինե-
րէն , իբր օրինակ առնելով թաթարխա-
նէն , ինքնալ իր երկիրը տըվալ մոսկովին .
ասոր համար 1783 յուլիսի մէջ դաշնա-

դրու թի ըրին մոսկովը ու էրէկլի խանը՝ որ
 հաւատարմութե երդում ըրաւ: Արէկլին
 մոսկովէն օգնութի առնելով՝ դաւիթ իշ-
 խանին երկիրը վազեց՝ որ իմերէթին կամ
 պաշ աչըխին իշխանն էր, որուն տղան սո-
 զոմոն շատ ընդարձակերէր իր երկիրը:

Բայց էրէկլին զարնըվելով փասեցաւ:

Վաւիթ իշխաննալ տեսնալով որ չէր կըր-
 նար երկան ատեն մոսկովին դէմ դնել,
 միշտ վտանգի մէջ էր, հարկ կըլլար կամ
 մոսկովը՝ կամ տաճիկը՝ և կամ պարսիկը
 իրեն օգնութի կանչել, օրինակ առնելով
 էրէկլի խանէն՝ ինքնալ բեդրօպուրկ մար-
 դիկ խրկեց, մոսկովին տէրութե տակը ան-
 ցաւ:

Մսկից ետքը եղավ որ՝ սև ծովին ու կաս-
 պից ծովին մէջի եղած պզտիկ ազգերը՝ որ
 երբեմն պարսից՝ երբեմն տաճիկն կըհնա-
 զանդէին, օրինակ առնելով էրէկլի խանէն
 հանդիսով դեսպաններ խրկեցին, մոսկո-
 վին պաշտպանութե տակը անցան, որպէս
 զի իրենց օգնէ. ասոնք են Չերքէս, Մըն-
 կուէլ, ()ս, Վախէթ. ասանկ ըրին նաև
 ուրիշ պզտրտիկ իշխանները կամ պէյերը:
 Բայց կենցաղակիրթ շատգէտներ կըսեն
 որ ուսմանցովը արդէն 1774 եղած դաշնա-
 դրութեը մէջ աս բանիս համար դնել տը-
 վերէր՝ թէ չերքէսին բերդերը որ մոսկովը
 առերէր, իրենց առջի տիրվածոցը ձեռքը
 դառնան աս թէութե որ՝ տաճիկը մէկ
 տուրք մը չիկրնայ պահանջել ո՛չ տղայ, ո՛չ
 աղջիկ, որպէս զի ասանկով ազատ մնան

ան երկիրները. ետքնալ իրենցմէ մոսկովին
տան ինչպէս որ եղավ հիմա :

Երբորալ խորրմը առավ մոսկովը՝ ան ա-
տենը միտքը դարձուց նոր ճամփայնէրով
իր վաճառականութիւնը ընդարձակելու և
շէնցընելու, պարսիցմէ սկսեալ ինչվան փոր-
թուկալ, ըստ որում ասկից ետև դունային
ու թուռլային վրայէն՝ և ուրիշ մենծ գե-
տերուն վրայէն կրնար հեշտ (խօլայ) ապ-
րանքներ սև ծովը ինջեցընել, որոնք ա-
ռաջ պտոյտ ու դժուարին ճամփայնէրով
կինջեցընէր : Նոր համար նոր նոր ջրանցը-
նէր բանալ տրվավ ջուրէրը իրարու հետ
խառնելով, նոր դաշինքներ դրաւ ամմէն
տէրութեց հետ՝ մանաւանդ նեմցէի հետ
առուտուրի վրայօք. տաճկին հետալ խօսք
կապեց իր նաւէրը ազատաբար անցընելու
չանախ խալէսիէն : Աս միջոցին մէջ յով-
սէփ կայսրնալ իր դաշնակցին ձեռքովը իր
ուզածը ձեռք ձգեց, որ էր ազատ նաւար-
կութի իր դրօշակին իր ժողովրդեան դու-
նա գետին մէջ, սև ծովուն՝ սլօղաղ իչիին՝
և ուրիշ տաճկին ծովերուն մէջ. անոր հա-
մար նոր առնրված տեղվանքը նեմցէի քօն-
սօլնէր դրավ, քէրսօն, սեպասդօբօլի, քէ-
ֆէ ու թաման :

Եւրոսլացիք վաճառականութիւն երկրա-
գործութիւն երկու հիմ (թէմէլ) կրսեպէն
հարստուէ. տաճիկնալ խելքով մտածելով
ամմէնուն թող կուտայ իր երկրէն շահե-
լու, մէյմը որ անով ան տէրութիւնները
կրբունադատէ իրեն բարեկամ մնալ իբր

Թէ իրեն դաշնակից ըլլային, մէյմընալ որ
 մէկ երկրի մը տէր է որ՝ որչափ շահին ու-
 ըրիչ տէրու թիւնէր՝ սն շահը ուրիշ ճամ-
 փով մը ըստ մասին իրեն կը դառնայ, ինչ-
 պէս որ առաջները գրեցինք: Միայն թէ
 աս վաճառականութիւն միտքը մոսկովին ու
 նեմցէին՝ թէ ինչ նախանձ բերաւ մէկ քա-
 նի տէրութիւն մասնաւանդ ինկիլիզին տէրու-
 թիւնէն, ետքը պատմենք:

Պարսից Վրայ.

1760 — 1785:

Պարսից երկրին խռովութիւն չէր դադրած
 ինչպէս հիմա, առանց շահի կամ թագա-
 ւորի մնալով ամէն խան կուղէին թագա-
 ւոր ըլլալ, որոնց մէջը զօրաւոր փրթաւ
 քերիմ խան, բայց իր աղբարը զէքի խան
 դժվարելով քերիմ խանին վրայ եկաւ իս-
 պահան նստաւ ապստամբելու մտքով, ա-
 նոր համար շատ կը թալլէր ժողովուրդը.
 քերիմ խանը ասոր վրայ եկաւ բռնեց իր
 քովը պահեց. անկէց ետքը 1762 շիրազ
 գնաց քերիմ խանը՝ հոն դրաւ իր թախտը,
 ետքը 1776 Սատեղ խանը իր աղբարը խըր-
 կէց պասրայի վրայ՝ որ 13 ամիս պաշարեց.
 մէջինները սովէն (խըթլիսէն) նեղելով
 1777 ապրիլի մէջ իրեն տրվին քաղաքը:
 Քերիմ խանը մեռաւ 1779. վերոյիշեալ
 զէքի խանը՝ քերիմ խանին տղան որ աբու-
 ֆաթ խան կըսվէր՝ իր հօրը տեղը դրաւ,

բայց ինքը կիշխէր ամմէն բանին վրայ. Սատեղ խանը լսածին պէս քէրիմ խանին մեռնիլը՝ պատրա թողուց, շիրազ գնաց որ ինքը թագաւորէ, բայց լսելով որ զէքին տիրերէ՝ ինքը եէզիտի ու քիրմանին գին գնաց: Քէրիմ խանին մենծ տղան որ ալի նազի կրօվէր՝ զէքի խանը մեռուց ինքը թագաւորեց, սատեղ խաննաւ շիրազ կան չեց ու մեծցուց. աս սատեղ խանը 1781 յանկարծ բռնեց ալինազի խանը ու իրեն երկու եղբարնէրը՝ ինքը թագաւոր նըստաւ:

Արբոր լսեց ալիմուրատ խանը՝ որ ալինազի խանէն իշխան էր դրված թէվրիզի վըրայ, ապստամբեցաւ սատեղ խանէն, իր զօրքովը եկաւ իսպահան առաւ. իսքէնտէրնալ որ զէքիին տղան էր՝ անոր զօրապետ եղավ: Ալիմուրատ շիրազ քաղաքը պաշարեց, մէջիննէրը սովէն նեղելով դուրս ելան ծեծկրվելու. իսքէնտէր զօրապետը՝ ով որ դուրս ելավ ջարդեց, անանկով շիրազ մտաւ, սատեղ խանը իր զաւկընէրով սպաննեց, քէրիմ խանին իրեք տղաքնալ բռնեց, աչվընին փորեց: Քանի մը օրէն ետեւ ալիմուրատը շիրազ մտաւ, որոնց վըրայ որ կասկած ունէր՝ սպաննեց. իսքէնտէրին վըրայալ կասկած երթալով չըլլայ թէ օր մը անիկայ տիրէ, որովհետեւ ամմէն նունալ սիրելի էր ու զօրաւոր իբր 23 տարւան կտրիճ, կեղծաւորութիւն իր քովը կան չելով առաջ աչվընէրը փորել տրվավ, ետքը սպաննեց ան զօրապետը՝ որուն քաջու-

ԹՅՐ կրցերէր շիրազ մտնալ . անկից ետքը
ինքը ալիմուրատը սպահան գնաց Թագաւո-
րի պէս նստաւ 1782 :

Բայց 1784 Թէհրան ուզելով երթալ ալի-
մուրատ խանը՝ ճամփու մէջ հիվընտցաւ .
1785 փետրով . 15 մեռաւ , իրեն աղբարը
Ճաֆէր խան որ շուշտարին ու դասպուլին
դին կընըստէր՝ իսպահան եկավ Թագաւո-
րելու , բայց մենծերէն շատը չընդունեցան
մանաւանդ մազանդարանին մահմէտ խանը՝
հասան խանին տղան . Ճաֆէրը ասկէց վախ-
նալով շիրազ փախաւ . մահմէտ խանը սպա-
հան եկավ , ինչ որ գտաւ արքունիքը առավ
մազանդարան խրկեց :

Յովսէփ կայսեր վեցերորդ ճամփորդութիւնը , երաւես
երթալով .

1783 :

Աղըրալին դիացէն դեսպան (Էլ չի) ե-
կերէր վեննա , որ 1783 դաշնագրուի ըրաւ
յովսէփ կայսեր հետ , ետքը նոյն տարվան
մէջ յովսէփ կայսրը ելավ դնաց հռոմ ,
բայց յանկարծ առանց ծանուցանելու ե-
լավ ճամփայ , հասաւ հռոմ , մէկէն մտաւ
սրբազան պապին պալատը (սէրայը) , եր-
կան բարակ խօսակցութիւն ըրաւ իրեն հետ ,
անով խօսք կապվեցաւ որ՝ քանի եկեղե-
ցական արժանապատուութիւնէր կան և ե-
կամուտ ունեցող միլանու և մանդվայի եր-
կիրներու մէջ , անոնց ընտրութիւն հռոմ .

Թող աւսդրիոյ տանը տայ՝ որ տէր է միլա-
նու և մանդվայի . ինչպէս են եպիսկոպո-
սուԹիք , արբայուԹիք , առաջնորդուԹիք ,
կանոնիկոսուԹիք , ժողովրդապետուԹիւնք
և այլն : Արչափ որ ուզեցին հռոմայու մէջ
իրեն դրսի պատիւներ ընել՝ ինքը չուզեց ,
ինչպէս որ չէր ուզած մէկալ անգամուն-
ալ , այլ իբրև հասարակ մարդ մը կը բա-
լէր , բայց հռոմայեցիք չիհաւնելով իր ը-
րած նորուԹիւներուն՝ խոլու աչքով կը-
նայէին իր վրայ :

Նուենդին տօնը հռոմ ընելէն ետև յով-
սէփ՝ տարիին ետքերը նորէն ելաւ գնաց
նաբօլի , իր քոյրը տեսնալու՝ որ նաբօլիի
Թագուհի էր , մանաւանդ որ ան ատենը
մէկալ քոյրնալ հոն էր եկած որ բառ-
մայի դքսուհի էր : Նաբօլիի Թագաւորը
է . Ֆերտինանտոս իրեն հետ համարձակ
ըլլալով՝ օր մը իր ընտանեկան խօսակցու-
Թեցը մէջը ասանկ խրատել սկսաւ յովսէփ
կայսրը իր ըրած նորուԹիւները յանդիմա-
նելով քիչ մը խիստ խօսքերով՝ նաբօլցոց
ոճին կեօրէ : «Սեղքըննալէս կըզուրցեմ ,
» ինչ է աս քաշածներդ . դուն մէկ կեանք
» մը կըվարես որ խիստ դժար է ու անհան-
» դիստ , դժար կըմարսես , դժար կըքնա-
» նաս , կուզես ամմէն բան ընել , քուկին
» պաշտօնեայներդալ անհանդիստ կընես ,
» քուկին տունդալ . դուն մէկ նահաւտակ
» մընես քուկին կոյր մուլուԹեդ նորուԹի
» ընելու համար , որով քեզ ատելի կընես
» քու ժողովրդեանդ , անանկ որ՝ երբոր

,, Ճամփայ կելլաս կըհեռընաս, ամմէնքնալ
 ,, կուրախանան : Ետոր դէմ ես աղէկ կու-
 ,, տեմ, աղէկ կըմարտեմ, հանգիստ կըքնա-
 ,, նամ, կըզբօսնում, և անչափ սիրական եմ
 ,, եղած իմ ժողովուրդիս՝ որ թէ որ ճամ-
 ,, փայ ելլալու ըլլայի՝ պէտք էր գիշերանց
 ,, ելլալ որ՝ իս թող տային հանգիստ ելլա-
 ,, լու : Ես վար չեմ զարնէր քուկին զանա-
 ,, զան կարգաւորութիւնէրդ, հասաւ ար-
 ,, տորնօք ընելդ կըմեղադրեմ :

Բայց յովսէփ կայսրը չէր ուզէր իր կար-
 գադրութեցը դէմ բան լսել, ուզէց նաբօ-
 լիէն ելլալ քալապրիա գաւառը երթալ,
 անկից սիջիլիային մէսսինա քաղաքը, որպէս
 զի աչքովը տեսնայ ինչ փնաս որ ըրերէր
 հոն շարժը, բայց թագուհին շատ վարպե-
 տութի բանեցընելով զանազան խօսքէր ա-
 կանճը լեցընելով խափանել տրվալ, չու-
 զէց որ հոն երթայ, չըլլայ որ իր հետաքըր-
 քիր բնութիւնը հասկընայ ինչ բռնութի ինչ
 անիրաւութի կընէին հոն բինեադէլլի զօ-
 րապետը և իրեն տակի եղօղնէրը խեղճ
 ժողովրդեան վրայ. որովհետև ան ըստակը
 որ թագաւորը խրկերէր ան խեղճէրուն
 օգնութի ընելու համար՝ ասոնք կուտէին
 կողոբուտէին, կրակէն աւելի փնաս կըհաս-
 ցընէին, որոնք աքդոն վեզիրը խրկած ըլ-
 լալով կուզէր որ հարստնան :

Եսանկով յովսէփ չիկընալով հոն երթալ՝
 Կնաց բիզա ու ալիկուռնա, հոն տեղվանքը
 ըրաւ բարկենդանքը, անկէց անցաւ ճէնօ-
 վա, նօվի, բիաչէնցա . ետքը բաւմայի ու

մօտէնայի վրայէն եկաւ միւրան, որպէս զի
ինչ փոփոխուածինէր որ կուզէր լծմպառ-
տայի մէջ ընելու ՚ի գործ դնէ: Արդէն ա-
ռաջուց ամմէն հեղինակուածի վերցուցերէր
կառավարին վրայէն, որ իր եղբարն էր
Ֆէրտինանտոս կարոլոս սնուն, անալ աս
բանիս վրայ նեղելով իր տնով գացերէր նից-
ցա բռօվանս գաւառին մէջը, աս դիս ան դին
ժուռ կուգար իր տրտմուածիւր փարատելու
համար:

Յովսէփ նաբօլիէն դառնալէն ետեւ հռոմ
խօսակցուածի ըրաւ սրբազան պապին հետ
առանձին. երբոր իր երկիրը դարձաւ՝ նո-
րէնոր կարգադրուածիւննէր ըրաւ, որոնց
մէկնալ աս էր որ՝ որչափ պատկերնէրու
վրայ զարդէր կային՝ ամմէննալ ան մնտու-
կին մէջը ժողվել տրվալ, որ կրօնքի սնտուկ
կըսվէր:

Ուրիշս շէփի Ռաֆուհիէն Տահը, Կոստոյաձոս
Ռաֆաաորիէն Ճամէորդոտիը.

1781 — 1784.

Վէտի Թագուհին լուզիա ուլըիբա՝ որ
քոյր էր ք. Ֆետերիքոսի պրուշի Թագաւո-
րին՝ և կին ատօլֆոս Ֆետերիքոսի շվետի
Թագաւորին՝ 1781 մեռաւ 60 տարվան. ա-
սիկայ խելացի ու ճարպիկ գործունեայ ըլ-
լալով իր երկանը ատենը ինքը կրկառա-
վարէր շատ բանը: Աս Թագուհիս շատ ա-
ռաջ տարաւ շվետի մէջ գիտուածիւր ու ա-

րուեստը, բայց երբոր իր տղան Դ. կուս-
դավոս Թագաւորեց՝ չիկրցաւ աս Թագու-
հիս կառավարութե մէջ խառնելիլ, անոր
համար կրնեղէր. տղան իրեն տրվալ միայն
շվետի բօմէւանիային կառավարութիւր:
Աս տարի զաւակ մը եղալ կուսդավոսի
շվետի Թագաւորին՝ որ 1783 մեռաւ, ետ-
քը ինքնալ կուսդավոս ձիէն իյնալով Ֆին-
լանտիայի մէջ՝ Թեւը կոտրեցաւ, որ Թե-
պէտ ըռընտցաւ, բայց կատարեալ չէր ը-
ռընտցած, ատեն ատեն խիստ խոստով
կիմանար, բժիշկները իրեն խորհուրդ տը-
վին բիզային Չերմուկները (իլիճանէրը)
երթալու՝ որ իդալիային մէջն է: Ղամփայ
ելլալէն առաջ պզտիկ նաւատորմիդ (տօ-
նանմա) մը պատրաստեց ճերմակ ծովուն
նաւահանգստներուն համար, մեծ գումար
ըստրկի դրաւ ցքիի (ըռախիի) եկամուտին
վրայ հարկաւոր խարճէրը լեցընելու համար
25000 ռիալի չափալ Թղթէ ըստակ հա-
նեց, որ շատ մնաս կուտար ժողովորդեան,
կառավարութիւր իր աղբօրը կարողոսին յանձ-
նեց:

Ասանկով Ղամփայ ելալ իբրև առանձին
մարդ մը՝ Հակայի հոմս անուն իրեն առնե-
լով. գերմանիայէն անցնելով եկալ իդա-
լիա, Ֆիօուէնցա ազվոր քաղաքը քիչ մը
կեցաւ, բիզային Չերմուկը մտաւ. 1783
հունիս անաբօլի յովսէփ կայսեր հետ տես-
նըվեցաւ, յովսէփ Թէպէտ կուսդավոսին
պէս փառաւորութի ու շատ մարդ չունէր
հետը, բայց յովսէփ իր առատաձեռնութիւր՝

վէհանճնութիւր՝ ու մեծութիւր՝ աւելի պատիւ կառնէր, անչափ որ քասդի անունով մէյմը վէննայի մէջ խաղ մը շինեց թատրոնի, որուն խորագիրն էր (Սէնտրոս Բաբարը վէնէպիէ մէջ. լեցուն ծաղրաբանութիւն. ամմէննալ ըսին որ՝ ասիկայ շվէտի թագաւորին ճամփորդութիւր ծաղր ընելու համար էր: Արբոր սրբազան հայրապետին հետ ունաբօլի թագաւորին հետ տեսնելեցաւ, իր նոր սահմանած հագուստը հագած էր շվէտի ձևով, որ ոմանք կը գովէին, ոմանք վար կը զարնէին, նման է ըսելով ան հագուստին՝ որ կերևնայ սպանիացոց առասպելին (մասալին) մէջը որ կըսվի Վիսչիօթ⁽¹⁾:

Բայս կուսդաւոս ուղղափառութե գէմ չըլլալով՝ հռոմ կեցած ատենը շատ բարեկամութի կասեց զ. պիոս քահանայապետին հետ, և շատ առատաձեռնութի ըրավ անոր պաշտօնեայնէրուն. ամմէնէն աւելի ընծայնէր տրվալ երկու քառտինանէրուն որ էին պէռնիս ու պուաշի. իսկ սրբազան

(1) Աս բանաստեղծական առասպելը գլուխ կըսեպ վի ամմէն ծաղրածու առասպելեաց. անոր համար ամմէն լեզու թարգմանված է, և մէկին ըսածին պէս կրնայ մարդ իր կեանքին մէջ միշտ կարգաւ առանց ձանձրանալու ամենեւին, և անհնարին է կարգաւ առանց ծիծաղելու: Բայց աս աւելի պիտոր իմացվի եւրոպացուց վրայ, որովհետև ասիացոց ճաշակը տարբեր ըլլալով ան ամմէն բանն որ կը ծիծաղընէ եւրոպացիները՝ չի ծիծաղընէր ասիացիները: Ասոր շինողը կըսվի Չերվանգէս սաավէտրաս սպանիացի, որ ծնաւ 1546:

քահանայապետին տրված ընծայներուն մէջ աւելի հաճոյական եղաւ մէկ մեծ ոսկի միտալ մը՝ որուն վրայ խորհրդաւոր դրուագներ կային որ կը ցըցընէին ուղղափառաց շվէտի մէջ նոր եկեղեցի ունենալու նոր ազատութիւն: Ասոր հետ մէկ տեղ տրվաւ կուսդավոս իրեք սնտուկ ոսկի ու արծրթի միտալներ, որ ամմէն շվէտի թագաւորներուն՝ ու շվէտի երեւելի մարդիկներուն սլատկերներն էին:

Յունիսին սկիզբները 1784 Փրանսա եկաւ, ուր մնաց ինչվան յուլիս, շատ մեծ հանդէսներ ըրին փարէզին մէջ կուսդավոսին համար, որովհետեւ հին դաշնակից էր Փրանսոզին, մէկնալ ան եղաւ որ՝ օր մը Փրանսայի թագաւորին աղբարը հրաւիրեց կուսդավոս որսորդութիւն երթալու՝ բայց գիշեր մնլթ ատեն՝ որ ատեն որ չիկընար ըլլել, երբոր տարաւ հասուց զինքը մէկ անտառի մը մէջ, հոն ցորեկվան պէս լոյս տեսաւ, վասն զի ամմէն ծառին վրայ երկերկու մարդ էր հանած՝ ձեռվընին կերոններ բռնած. անանկով աղէկ որսորդութիւլ ըրին, և աղվոր տեսիլքմընալ տեսան, անչափ կանանչները բիւրաւոր կերոններով լուսաւորված տեսնալով, բայց կուսդավոսին խելքը միտքը՝ տեսիլքներ զուարճութիւններ տեսնալու ատեննալ իր շահին համար բան հոգալ էր: Առաջ աս ըրաւ որ՝ 1772 Փրանսոզը խօսք տրված էր ըստակ տալու շվէտին՝ իբր կարգէ դուրս օգնուի, աս օգնութիւր 1779էն վեր կարերէր վեր

ժէն կօմսը չէր իտար ըսելով թէ՛ Փրանսը
 զի թագաւորը ժ՛ղ. լուիզ շատ խարճէրու
 տակ մտած է պատերազմի համար. կուս-
 դավոս անչափ ետեւէ ընկաւ որ՝ ան առնե-
 լիքին մեծ մասը առաւ, որ էր մէկ միլիոն
 ու կէս դուռինեան լիրէ: Արկրորդ՝ հաս-
 տատել տրվաւ ան դաշնադրութիւր որնա-
 ւարկութե համար եղած էր Փրանսային
 հետ 1741. անով Փրանսզը շվէտին տրվաւ
 Սթ բարդուղիմէոս կղզին, որ 800 հոգիի
 չափ բնակիչ ունի, շատ բամբակ կրբերէ,
 բայց մէկ դիրք մը ունի՝ որ արգելված
 ապրանքներով հեշտ (խօլայ) առուտուր
 կրնայ ընել սպանիացոց ամերիկային հետ,
 և ամմէն անդիլլեան կղզիներուն հետ, մօ-
 տիկ ըլլալով կուատալուբային: Շ վէտնալ
 փոխարէն Փրանսղին ազատութի՛ տրվաւ
 որ կօհդէսլորի կամ կօդդէմպուրի նաւա-
 հանդիստը ազատ վաճառատեղի մը ըլլայ
 Փրանսզներուն համար, ուր տեղ ազատա-
 բար կարենան Փրանսզները առուտուր ը-
 նել իրենց ձեռագործներով փոխանակ վիս-
 մարին՝ ուր տեղ ինչպիսի հիմա կրնէին, բայց
 սլայման դնելով որ՝ երբոր շվէտը դադրե-
 ցընէ աս առուտուրը, Փրանսղնալ ետ առ-
 նէ վերոյիշեալ կղզին:

Արբոր կուսդավոս դարձաւ իր թախտը
 ըստօքօլմ, քաղբըցիք իր դառնալուն յի-
 շատակ՝ մէկ քարէ կամուրջ մը շինեցին
 ուիդդէրհօլմ ջուրին վրայ 1784. օգոստ. 3.
 առջի կամուրջին տեղը՝ որ փայտաշէն
 էր. փոխանակ անօգուտ բաներով յիշա-

տակը կեցընելու ինչպէս որ ուրիշ տեղէր
կընեն կամար կամ արձան կանգնելով, ըս-
դօքօլմցիք խելացի փրթելով անանկ բանի
մը վրայ խարձեցին, որ թէ կուսդավոսին
սլատիւ յիշատակի եղավ, և թէ ամմէն
քաղքըցոց օգտակար պէտք ըլլալու բան :
Կուսդավոս իր երկիրը սկսաւ ամրցընել,
իր ծովային ուժը շատցընել. մէկ բաժանոր-
դութի (քօմբանիա) մը սահմանեց Մ. Բե-
ճօքան հինախապանի անունով որ է ամերիկա .
ամմէն շվէտները հրաւիրեց իրեն պէս բա-
ժանորդ (օւթախ) ըլլալու :

Եւ որովհետեւ ազատուի տրվերէր ուղղա-
փառներուն՝ 1784 զատկին օրը ըսդօքօլմի
մէջ հանդիսով ուղղափառաց եկեղեցի
օծել տրվավ :

Տանիմարտայի Լաֆաաորին պղան հառաւարո-
ւնիանը
Ֆեոքը հառնէ, հեքլա լեռը Բոնիէլով շնաս
հոսպայ .

1784 :

Ինչպէս որ վերը պատմերենք 1772 քրիս-
դիանոս տանիմառքային թագաւորը տկա-
րամիտ ըլլալով կառավարութիւր որբեվա-
րի յուլիա մարիամ թագուհին սկսաւ ընել
իրեն ուղած մարդիկներով, աս տարի 1784
ապրիլի 14 տանիմառքայի թագաւորին
տղան որ Ֆետերիքոս կըսվէր՝ մեծնալու
տարիքը հասած ըլլալով՝ ճամփով մը պա-
տրաստութիւն տեսաւ որ իրեն ձեռքը ձգէ

կառավարութիւնը, բայց անանկ գաղտուկ
խելացի ճամփով մը հոգաց, որ դուրսէն
մարդ չմացաւ: Արբոր իշխանները ժող-
վելերէին վերողրեալ օրը՝ յայտնեց որ տա-
րիքս լեցված ըլլալով, թագաւորնալ տկար
ըլլալով, ամմէնէն աւելի ինծի կիյնայ կա-
ռավարուէ մէջ օգնական ըլլալ թագաւո-
րին, անոր համար թուղթ հանեց թագա-
ւորին ստորագրել տրվալ, որ ասկէց ետքը
որչափ թագաւորական հրաման ելլայ՝ Ֆե-
տերիքոսին իր տղին ձեռքովը ստորագրը-
վին:

Թագաւորին խորթ եղբարը՝ որ նոյնպէս
Ֆետերիքոս կրտսեր, շատ ջանաց որ՝ թա-
գաւորը աս թուղթիս չստորագրէ, բայց
ինքնալ՝ իրեն մայրնալ որ էր վերոյիշեալ
թագուհին՝ Ֆրիէտրիքսուս բերդը հեռը-
ցուցին որ հօլդէյնին մէջն է: Թագաւո-
րը թուղթին ստորագրեց, տղան Ֆետերի-
քոս ըսվեցաւ գործակից հօրը կառավարու-
թեւ մէջ. ասանկով թագաւորնալ տղան-
ալ խալըսեցան որբեվարի թագուհին
ենթարկութենէ՝ որ 14 տարի քշեց: Այս
չափ շնորհ ըրին որ՝ վերողրեալ բերդը ամ-
մէն իր երկիրներով վերողրեալ թագու-
հին պարգևեցին, թէ որ ուղէ՝ ծախէ,
թէ որ ուղէ՝ ուրիշին պարգևէ, ասանկալ
իր տղին Ֆետերիքոսինալ ուրիշ մեծ երկիր
տրվին: Ասկից ետքը պէռնաստօրֆ կոմսը
խորհուրդի մէջ մտաւ ու վէղիր եղալ,
ուրիշ պաշտօնատարներնալ փոխեցին, ա-
նոնց մէյ մէկ թոշակ կապեցին: Ասանկով

երբոր Ֆետերիքոս տղան սկսաւ կառավարել, շատ աղէկ կարգաւորուածինէր ըրաւ զօրաց վրայ, ու եկամտից վրայ:

Տանիմառքայի տէրու թէր տակ մէկ կղզի մը կայ հիւսիսային ուկիանոսի մէջ իսլանտա անունով, անոր մէջը մէկ լեռ մը կայ Հէքլա կրտի, որ միշտ կերի կրակ կը հանէ, բայց ատեն ատեն խիստ կը բռնկի, հիմա 1783 եղաւ որ յունիսի մէջ խիստ բռնկեցաւ, անկից շաժ եղաւ, որ ատեն ատեն երեքընեւիւր ընդհան 1784, ապրիլ ամիսը: Ասանկ բռնկած ատենը՝ հող մը կը վազընէ իրմէ կրակ կտրած հալած՝ որ կրակէ ջուր մը կերենայ. շատ օրէր ամիսնէր անցնելէն ետեւ հազիւ կը պաղի. անոր պաղածը քարի պէս կամ զիֆթի պէս կը կարծրենայ, որուն լաճ կըսեն. հիմա աս հէքլա լեռը անչափ շատ լավ վազողց իրմէ, որ գետ մը կերենար, 10 մղոն երկանքը կը քէր, 2 մղոն լանքը. տաք տաք մոխիրնէր երկինքը կը ցածկեցընէր, աս դիսան դին կը ցըցընէր: Աս կղզին մէջը քաղաք չիկայ, 30 գեղ կայ, գրեթէ ամմէն նալ ավրովեցան, ասոր ետեւէն սով (խրթլըխ) եղաւ, բայց Ֆետերիքոս թագաւորին տղան շատ աղէկ հողաց անոնց կարօտուածիւր:

Մեծնիս ու Քիլեմենիսի մէջ որորոջայնուրիանը .

1784 :

Եւ տարաձայնուիլը չի պատմած որ ապրիլի մէջ սկսաւ , աղէկ իմանալու համար հին տեղեկուածիւնները գիտնալու է որ՝ երբոր ստորին նահանգներուն ամմէն ժէ գաւառները մէկ թագաւորի տակ էին , ինչպէս որ եղերէր աղէկ փիլիպպոսէն սկսեալ , որ պուռկոյնաի դուքսն էր , ինչպէս ք. փիլիպպոս՝ որ սպանիայի թագաւորն էր , օլանտան (կամ Ֆիլէմէնկը) Ֆոխիան , կէլտրիան , և ուրիշ գաւառներ՝ մէկ աւազոտ անբեր երկիր մընէր . աշխարհիս մեծագոյն հարստութիւր կը դառնար կուգար Ֆիանտորա ու պրապանդ , ձեռագործնին շատ ըլլալուն համար մանաւանդ բրդէ ձեռագործները : Անվերսա քաղաքը 1430էն ինչպէս 1584 , եղավ եւրոպայի մէջ պինտ երևելի շահաստան քաղաքներէն մէկը . մէջը 300 հազարէն աւելի մարդ կար , մեծ մասը խիստ հարուստ . 2500 նաև աւելի նաւեր կը գտնուէին իր ընդարձակ ու ապահով նաւահանգստին մէջ : Արբոր 1579 միացեալ գաւառները սպանիային տակէն ելան , շէլտային հիւսիսային գետեղերքին տէր եղան , հոն բերդէր շինեցին որ մաքս (կէօմրիւք) առնեն , քիչ քիչ կտրեցին նաւարկութիւր , անվերսային ամմէն վաճառականութիւր գոցեցին՝ որ առջինին շուքը

չիմնաց . ասանկ ընելով սպանիային պաշտօնատիրաց խստութիւննալ վրայ գալով՝ հարիւր տարվան մէջ անվերսան դարձաւ մէկ անապատ մը եղաւ : Արբոր ք . կարողութեան տէր եղաւ, որ նեմցէի կայսր էր և միանգամայն սպանիայի թագաւոր , աս բանս տեսնալով խիստ կըցաւէր, անոր համար խորհրդով անուանի եւզինէոսի սավոյայի իշխանին՝ 1723 մէկ բաժանորդութի (քօմբանիա) մը սահմանեց վաճառականութի ընելու համար ամերիկայի ու հին տիստանի հետ , բայց ինկիլիզ ու Ֆիլիպինկ վաճառականները շատ նախանձեցան աս բանիս վրայ , շատ աղաղակ վերուցին ինկիլիզի ֆրանսզի թագաւորին առջին , անոր համար հարկ եղաւ , տարիէ մը ետեւ կարողութեան վերջացուց ան բաժանորդութի : Ղանք իրենց բերդերուն վրայ , ամէն եւրոպային գաւառներէն աւելի բերդեր ունէին ստորին նահանգներուն գաւառները՝ որ զօրաւոր կերեւնային , բայց փորձը 1740ին եղած պատերազմին մէջ ցըցուց որ՝ ութ օրէն աւելի չիկրցան դէմ դնել : () սդէն տա անուն բերդերնին ժէ դարուն սկիզբը ըսբինօլա զօրապետին ձեռքը ընկաւ երկու տարի պաշարմանէն ետեւ . ասանկալ անվերսա բերդը տասվիրէք ամիս պաշարմանէն ետեւ՝ աղէքսանդր Փարնէզէան զօրապետին ձեռքը ընկաւ :

Արբոր 1713 ուղրէք եղած դաշնադրութեւր կեօրէ հարկ եղաւ Ֆիլիպինկին վերոյիշեալ գաւառները նեմցէին յանձնել ,

ուզէց ամրցընել Ֆրանսզին դէմ, որ 1672
 վերջին նեղուծէ մէջ ձգերէր զինքը, անոր
 համար մէջ տեղի եղած քաղքընէրը ամուր
 բերդէր շինեց, ասոնք են՝ Նամուր, Դուռ-
 նայ, Սէնին, Սօնս, Ֆուռնէս, Սառնէ-
 դօն, Իբրէս, Տէնտերմօնտ, Լ'նվէռսա-
 նեմյէինալ պարտք դրաւ որ երկու միլիոն
 ու կէս դուռինեան լիբէ վճարէ, որպէս զի
 անոնց պահապան զօրքերուն ասլուստ ըւ-
 լայ: Իայց Ֆիլէմէնկները որովհետեւ խիստ
 կծծի են՝ քիչ մը ատենէն ետեւ մոռցան
 աղէկ պահպանութիւն ընելու, թէպէտեւ
 վերոգրեալ դումարը լման կրպահանջէին.
 ասանկ օնզօր մնալով, 1740ին եղած պա-
 տերազմին մէջ՝ Ֆրանսզը (որուն զօրազլու-
 խը սաքսօնիայի մառէշալն էր,) ան ամէն
 բերդէրը առավ, ետքը 1748 աքվիտանա
 եղած հաշտութիւն ետ տրվավ, բայց ամէ-
 նը քակված ավրըշտըկված:

Ըս բաներս չինայելով՝ 1751 ուզէցին Ֆի-
 լէմէնկները՝ որ կայսրուհին մարիամ թե-
 րեզինան հին դաշնագրութիւննին նորոգե-
 ինկիլիղի պաշտպանութիւնը՝ որ՝ երաշխաւոր
 (քէֆիլ) եղավ անոնք նորոգելու հաշտեցը-
 նելու, թէպէտ գործքով ոչ երբէք եղավ:
 Յովսէփ կայսրը տեսնալով որ Ֆիլէմէնկը
 կրպակսի իր բրած դաշնագրութիւն, ինք-
 նալ ուզէց խալըսելու աս ծանրուէ երկու
 միլիոն ու կէս վճարելու. իր միտքը հաս-
 կրցուց Ֆիլէմէնկին ըսելով՝ որ թող ետ
 կանչեն ան բերդերէն իրենց զօրքը. անոնք
 քիչ մը դէմ կենալէն ետեւ հանդարտու-

Թք ետ քաշել տրվին իրենց զօրքը ու Թօ֊
փերը :

Յովսէփ կայսրը անձամբ գնաց տեսաւալ
որ՝ Ֆիւանտրային մէջը լեցուն էին կրօնաւորք,
քահանայք, ու մարապետք, վաճառականութիւր բոլորովին ընկերէր, ուղեց
որ վերոյիշեալ ք. կարողութիւն իր մօրենսա
կան սրապուն մտածածը առաջ տանի՝ շէլտա
գետին նաւարկութիւր բանալով. անոր համար 14 բան պահանջեց : Մէյմը՝ որ իր
նաւէրը ազատ նաւարկեն շէլտա գետին վրայ,
երթան գան անվեռսա, Ֆիլէմէնկնէրը չիկրնան
մէկ տուրք մը ուղել անոնցմէ, չիկրնան նոյնպէս
նեմցէի նաւերու մէջ մտնալ նայիլ քննել
իրենց ապրանքները, Թէ որ ընելու ըլլան՝
մեծ յանցանք մը պիտոր սեպվի կոյսեր
պատուոյն դէմ. հրամեց վերցընելու
ան նաւը՝ որ պահպանուէ համար
դրերէին շէլտա գետին բերանը :
Երկրորդ՝ կրպահանջէր որ սահմանները
որոշվի 1664 դաշնագրութեը կեօրէ,
անով շատ քաղքներ որ Ֆիլէմէնկին
ձեռքն էին, նեմցէին ձեռքը պիտոր
անցնէին, մաւ նաւանդ մասդրիք
քաղաքը ու բերդը՝ որ օլանտային
կամ Ֆիլէմէնկին բալլիքն էր :
Երրորդ՝ նեմցէն շատ տարվընէ
վեր Ֆիլէմէնկներուն համար
ծանր խարճերու տակ մտած
ըլլալով, ան խարճերուն համար
շատ միլիոն ըստակ կրպահանջէր,
Թէ որ աս խարճերս վճարելու
կըլլան, ան ատենը ես ինքիրմէս
կընեմ կրսեր արդարութիւր. ու
րիշ ասոր նման բանէր
կրպահանջէր :

Բ, ս վճարելու ճանը՝ իրենց եկամտին քիչ
 նալը՝ և շէլտա գետին աղատ նաւարկու-
 թիւր՝ որով ամսդրտամին առուտուրը պի-
 տոր խափանվէր՝ անվէրսա պիտոր փո-
 խադրըվէր, աս ամմէն բանը խիստ ծանր
 եկավ Ֆիլէմէնկնէրուն ականճին : Բգա՛հ
 կծծի ըլլալով չուղեցին ըստակ խարճել-
 առաջարկեցին որ՝ աս բանիս վրայ խօ-
 րաթեն, որպէս զի ատեն ունենան ան-
 վերջանալի քննութի մը բանալով յոքնե-
 ցընել կայսրը . շիտածեցին որ յովսէփ
 կայսեր բնութիւր չընդունիր մէկ բանը եր-
 կընցընել, այլ ապսպրածին պէս՝ կուզէր որ
 Կործքով կատարվի : Բնոր համար կայսեր
 զօրքը սկսան բռնութիւն Կործ դնել ինչ որ
 վէսդֆալիա եղած դաշնադրութենէ ետև
 Ֆիլէմէնկին ու սպանիային մէջ մէկ կուռուտ
 ու անստոյգ բան մընէր եղած . գացին ա-
 սոնք լիլլօ բերդը քակեցին . մասդրիք քաղ-
 քին քով շըլթայ (զինճիլ) կապված կար
 ճամփու վրայ մաքս առնելու համար, անի-
 կայ կոտորեցին, կայսեր անունով հրամեցին
 որ՝ մէկ անցվորէ մը մէկ տուրք մը չիպա-
 հանջեն չառնեն, թէ չէ՝ մեծ պատիժ սպառ-
 նացան, գունդ մընալ զօրաց հոն մօտիկ
 կեցուցին :

Ֆիլէմէնկնէրը ետքը պատասխանեցին որ՝
 1664ին եղած դաշնադրութիւր խափանված
 ոչինչ եղած էր ան դաշնադրութենով որ
 պառուիէռա և ուրիշ տեղվանք ետևէ ետև
 եղան . պարտքին տեղը ըսին մանաւանդ
 մենք շատ միլիոններ առնելիք ունինք աւս-

դրիոյ տնէն կամ նեմցէէն . ան պարտքին
մէկ մասը արդէն ընդուներէր իր մայրը
մարիամ թերեզինան :

Վեմցէի նա Քիլէմէնկէն ՌԵԸ ԺԵԺ ԲայլէԼԸ
հարուէԼԸ .

1785 :

Յօլսէփ կայսրը միտքը դրերէր վերջապէս
շէլտա գետին նաւարկութիւնը բանալու , ու
րով մենծ շահ կրլլար առուտուրի իր երկիրը
նէրուն համար՝ որ ստորին նահանգներուն
մէջն էին , անով կրվերջանային ան կուլ-
նէրը՝ որ ք. կարողոս կայսեր ատենը անչափ
նեղութի տրվերէին , անոր համար առա-
ջարկեց Ֆիլէմէնկներուն , որ ամմէն բանէ
կրհրաժարիմ , չեմ պահանջէր , միայն թէ
շէլտա գետին վրայի նաւարկութիւնը ազատ
լլայ , առանց տուրք մը տալու՝ գոնէ նեմ
ցէի ու Ֆիլէմէնկի ժողովուրդին համար :
Վեմցէի գեսպանը շատ աշխատեցաւ ճար
մը գտնալու՝ բայց բան մը չիկրցաւ ընելու ,
քանի գնաց՝ բանը տաքցաւ , մէկ վիճմունք
քը մէկ ուրիշ վիճմունք մը բացաւ , մէկը
չէր ուզէր աս առաջարկութիւնը ընդունիլ ,
մանաւանդ որ չէին պակսէր հակառակու-
թի ցանօղներ : Այլ թէպէտ Փրանսոյը խոր
հուրդ կուտար Ֆիլէմէնկներուն խաղաղութիւն
լմնցընել , բայց Ֆիլէմէնկները մտիկ չիդնե-
լով իրենց մնացած բերդերուն ապսպրեցին ,
ինչ նաւ որ ծովէն մտնայ շէլտա գետէն

վեր ելլայ, առանց վճարելու սովորական
տուրքը, անհաւը թօփով զարնեն: Այսեր
վեզիրնալ քաջնից՝ խորհուրդ կուտար յով-
սէփ կայսեր՝ որ աս բանիս ետեւէն շատ չկ-
նայ, բայց յովսէփ իր մտքինը առաջ տա-
նելու համար՝ հրամեց իր մէկ նաւուն որ
անվերսայէն ծովը անցնի: Ասանկով Ֆիլէ-
մէնկնէրը հոկտ. 8. կրակ ըրին մէկ նեմցէի
մը նաւու վրայ որ անցնիլ ուղեց, բռնեցին
ան հաւը Ֆիլէսսինկ տեղը տարին. ուրիշ
նաւու մընալ ասանկ ըրին՝ որ օծդէնտայէն
անվերսա պիտոր երթար շէլտա գետին
վրայէն:

Աս գիպուածս պատճառ եղավ որ՝ ինչ խօ-
սակցուածի կրնէին պրուստէլ քաղքին մէջը
խաղաղութե համար՝ ոչինչ եղավ կտրուե-
ցաւ, ծեծի պատրաստել տրվավ. շուտ մը
նեմցէն այաէն ետ կանչեց իր գեսպանը
(էլչին), զօրք խրկեց որ վազէն պրասպանդ,
Ֆիանտրա, ու լիմպուրկ. թղթեր տրվալ
ամմէնուն մանաւանդ ինկիլիզնէրուն՝ որ
ծովասպատակութի (խուրսանտուր) ընեն.
Ֆիլէմէնկին վաճառական նաւերը բռնեն,
բայց Ֆիլէմէնկնէրը անչափ յամառեալ
էին՝ որ նոյեմբ. մէջ կասված ջուրերը թու-
ղուցին թէ իրենց երկիրներէն՝ և թէ նեմ-
ցէի տակի եղած երկիրներէն, շատ տեղ
ջուրի տակ կոխել տրվին, իրենց յոյսնալ
Ֆրանսզին վրայ դնելով անոնցմէ օգնութի
խնդրեցին: Այց Ֆրանսայի թագուհին իր
եղբօրը յովսէփ կայսեր տէր կենալով վար-
պետութենով թագաւորին միաքը կըղար-

ձրներ, գաղտուկ խօրաթաներովալ վեր-
 ժէն կոմսին խորհուրդը պարապ հանել կու-
 տար, անոր համար Ֆրանսայի թագաւորը՝
 Ֆիլէմէնկի դեսպանին որ օգնութի կուղէր՝
 պատասխանեց: Աս յեղ կոնէ՛մ կայսեր հե-
 հաշտեցընէ՛լ Բայց դուքալ անանկ Բան Տը առաջար-
 կէիք՝ որ հիմն ըլլայ հաշտեցընելը: :

Աս ատեն Ֆիլէմէնկները դեսպան խրկեցին
 նաև ինկիլիզին ու պրուշին, բայց երկուք-
 նալ պաղ կեցան. ինկիլիզը պաղ կեցաւ՝
 վասն զի կախորժէր Ֆիլէմէնկներուն ա-
 սանկ փաստիլը տեսնալ՝ իր վրէժը առնելու
 համար, որովհետև անցած պատերազմին
 մէջ իր թշնամիներուն հետ մէկ եղաւ Ֆի-
 լէմէնկը: Ասկ պրուշին թագաւորը չէ թէ
 միայն պաղ կեցաւ, այլև շատ յանդիմա-
 նելով պատասխանեց, որովհետև Ֆիլէմէն-
 կին մենծը օրանժեան շքատ հալգէնը
 պրուշին փեսան էր, որուն իշխանութիւնը
 խիստ ցածցուցերէին Ֆիլէմէնկները, մէկ
 ոչինչ մը ըրերէին, թէ որ ծերացած չլլար
 պրուշին թագաւորը, ան ատենը ուրիշ
 ճամփով պիտոր խօսէր անոնց հետը:

Ասանկով աս երկու տերութի յուսահատ
 վելով Ֆիլէմէնկները օգնութի գտնալու
 համար՝ իրենց ըստրկով զօրք բռնել սկսան
 ըզվիցցերիէն ու գերմանիայի պզտիկ իշ-
 խաններէն, բայց ասոնքալ խիստ կամաց
 շարժելուն համար՝ Ֆիլէմէնկին ամմէն
 ժողովուրդը սկսան զինուոր գրվիլ մանա-
 ւանդ գեղացիները, որոնք չէին կրնար
 կայսեր կրթեալ զօրացը դէմ գնել: Ար-

բոր ասանկ մօտիկ էր ծեծ բացվելու մօսա
 ու շէլտա գետին վրայ, Ֆրանսոզին թագա-
 ւորը յորդորեց մոսկովը՝ որ իրեն հետ մէկ
 տեղ միջնորդ ըլլայ հաշտեցընելու. մոսկո-
 վը ընդունեց իր միջնորդ ըլլալը, բայց թէ
 որ չի հաշտուիլին ըսաւ՝ պէտք է որ եսալ
 յովսէփ կայսեր օգնութի տամ իմ դաշնա-
 կիցս ըլլալուն համար. աս ըսելով շուտ մը
 պատրաստել տրվավ 16 նաւ երկու խա-
 փախլը, թող տուր ուրիշ պղտիկ նաւերը,
 մէջնալ լեցուն զօրք ցամաքը հանելու հա-
 մար Ֆիլէմէնկին դէմ: Մասնկ շարժեցաւ
 մոսկովը՝ հագած ըլլալով Ֆիլէմէնկին վը-
 րայ, որ քանի մը տարի առաջ իր խօսքը
 ոտքի տակ էր առեր երբոր ինքը միջնոր-
 դութի ըրավ ինկիլիզին հետ հաշտեցընե-
 լու, անոր համար միշտ յովսէփ կայսեր
 դին կը տաշէր:

Ֆիլէմէնկ ազգնալ անանկ մէկ սահմանա-
 դրութի մը ունի՝ որ պատճառ կըլլայ իրեն
 խորհուրդը իրեն մտածուիլը ուշացընելու,
 ինչու որ շատվոր մէկ տեղ դաշնակից ըլլա-
 լով անանկ կամաց կամաց կը շարժին, որ
 միջնորդ եղօղնէրը կը յոքնեցընեն կը ձանձ-
 րացընեն: Ենչ մեծ բան որ ըլլայ՝ օխտը գա-
 ւառնէրուն որոշմանէ կը կախվի, ասոնցմէ
 մէկ քանին ծովուն դին են, մէկ քանին ցա-
 մաքին դին. երբոր կընստին մէկ տեղ խոր-
 հրդակեցելու՝ չի կրնար ըլլալ որ՝ մէջէրնին
 մէկ տարաձայնութի մը չելլայ, տարբեր ը-
 լալով իրենց շահը՝ իրենց միտքը՝ ծովուն
 գիացինէրը տարբեր շահ ու մտածուի ու-

նին , ցամաքին դիացիները տարբեր . անոր
համար Ֆրանսոզնալ մոսկովնալ ձանձրացեր
էին , կուզէին մէջերնէն ելլալ :

Իսկ յովսէփ կայսրը բարձր ձանձու կրպորն
դէր ըսելով ինչպէս որ Ֆիլէմէնկը երկու
մարդ չիտրկէ ինձի վէննա թողու թի ուզե-
լու համար ինչ որ ըրին իմ նաւերուս շէլ-
տա գետին վրայ՝ բանի մը մտիկ չեմ ընէր .
Թող գան թողու թի ուզեն՝ ետքը իմ բեր-
նէս լսեն ինչ բանով որ կրնան հաշտուիլ :

Աս բանս թէպէտ խիստ ծանր էր Ֆիլէ-
մէնկներուն՝ բայց խոնարհելով յանձն ա-
ռին . յովսէփ կայսրը իր թախտը նստած ,
քովը ամմէն մենծէրը շարված , ամմէն դեւ
պանները հոն կեցած , Ֆիլէմէնկին երկու
մենծէրը եկան թողու թի խնդրեցին կայս-
րէն : Աս լմննալէն ետև երկու բան կար
հարցընելու , մէյմը՝ մասդրիք քաղաքը որ
Ֆիլէմէնկը կուզէր իրեն պահելու՝ տեղը
ինչ պիտոր հատուցանէր . մէյմընալ՝ որ շէլ-
տա գետին վրայ ազատ նաւարկու թի ինչ
վան ուր պիտոր հասնէր նեմցէի ժողովըր-
դեան համար :

Աս բաներուս վրայ շատ հակաճառու թիւն
շատ վիճմունք ըլլալէն ետև՝ մոսկովին ու
Ֆրանսոզին մարդիկները ոտք կոխելով վեր
Ջապէս 1785 նոյեմբ . 8 ֆոնդէնէպլօ քա-
ղաքը կամ ըստ այլոց փարէզին քով վեու-
սայլա պալատին մէջը բարեկամու թի մէկ
դաշնագրու թի մը ստորագրեցին 23 թիու-
թիներու վրայ , անկէց դուրսալ ուրիշ իրեք
բան սահմանեցին : Այնք՝ որ կայսրը տէր

ըլլայ շէլտա դետին վրայ սաֆդինկէնէն
ինչվան անվեռսա . իսկ Ֆիլէմէնկնէրը ան-
վեռսայէն ինչվան ծովը . բայց ուրիշ գրսե-
ցոց ինչպէս առաջ՝ ամենեւին արգելի՛ որ
չիկրնան առուտուր ընել ան դետին վրայ :
Արկրորդ՝ Ֆիլէմէնկնէրը երկու նոր բեր-
դէրը որ շիներէին նոյն դետին վրայ ազատ
նաւարկութիւր արգելելու համար՝ քակեն ,
և երկու ուրիշ պղտիկ բերդէր տան նեմ-
ցէին . նեմցէնալ մասդրիք քաղաքը ուղե-
լէն ետ կենայ : Արրորդ՝ ան վսասնէրը որ
ջուրէրուն կոխելովը եղան՝ և ուրիշ նեմ-
ցէին պահանջմունքներուն հատուցում ընե-
լու համար՝ Ֆիլէմէնկը պարտաւորի տալու
նեմցէին 9 միլիոն ու կէս իրենց Ֆիօռի-
նով : Ասոնցմէ զատ՝ շատ տեղէր՝ իշխանու-
թիւնէր՝ նաև տալհէմ քաղաքը տրվին , մէկ
մէկու հետ փոխեցին :

Ֆիլէմէնկը որ կրսվի նաև Պաղատեան
հասարակապետութի՛ թէպէտ դրսըվանց
խաղաղութիւր ձեռք բերաւ , բայց ներսը-
վանց ան օրէն ետև իր խաղաղութիւր կորսըն-
ցուց , իր կործանման թշուառութե հիմը
(թէմէլը) դրաւ : Իսկ յովսէփ կայսեր հա-
մար կրսեն , թէ որ անիկայ ժո՞ . լուիզիի
Ֆրանսոզի թագաւորին պէս ընէր՝ որ ճէնս-
վային դուքսը վեց երևելի ատենակալնէ-
րով իր ոտքը բերել տրվավ , ան ատենը ա-
ւելի շահաւոր կելլար , իր մտքի դրածին
կրհասնէր : Իայց ան ատեննալ յովսէփ
կայսեր վրայ ուրիշ հոգէր ըլլալով կրնայէր
որ բանը շուտով լմնցընէ . մէյմը որ դռան

սիրվանիայի մէջ մէկ նոր ընդհանուր ապրտամբութի մը ելերէր, ինչու որ՝ յովսէփ կայսրը ան տեղացի գեղացիները առաջ խալսցուցերէր շատ ծանրութենէրէ նեղութենէրէ՝ որ իրենց տիրվրտանքը կրնէին ան գեղացիք աս չափս հերիք չիտեպելով, իրենց պարտաւորութիւր ամենւին չիճանչնալով, միաբանեցան իրենց տիրվրտոցը վերայ վագեցին, սպաննելով թալլելով աւաղակութի սկսան ընել. նեմցէն անոնց վրայ խրկեց Փապրիս մառեշալը շատ զօրքով, որ ջարդելով փախուց ցրուեց անոնք: Այլ մընալ որ՝ տաճիկնալ ան ատենը սահմանները որոշելու համար նոր խօսք բացերէր նեմցէին հետ՝ ինչպէս որ սահմանված էին առջի դաշնագրութիւնէրու մէջ, կրվախցը վէր որ մէկ ծեծ մը բանալու պատճառ չըլլայ: Արրորդ՝ որ պրուշին հետ նոր վեճ եղերէր որ վարը պատմենք:

Եր դաշնագրութիւնը խօսք կապեցին նաև Ֆրանսոզը Ֆիլէմէնկի հետ, իրարու երկիրները պաշտպանելու, ծեծի ատենալ իրարու օգնելու:

Ինչէլեւն ըրածները ինչիւրէոոայի ու հինգիս ասնի մէջ.

1782—1786:

Ամերիկայի կռուին համար լուտ նօութը ինկիլիզի տերութե աչքէն ընկավ. ան ատենը սրտանց հաշտութի ուզելով աղէկ

սեպտեմբերին կառավարութեան պաշտօնները փոխել, բայց հաշտութիւնը ինկիլիզի աչքին խիստ անհաճոյ ըլլալով՝ սկսան նախատել քամահրել պաշտօնատէրները . անոր համար 1782 հարկ եղաւ անոնքալ փոխեցին : Թագաւորը 1783 իր առջի վէզիրը ըրաւ անուանի բիդդը , ասիկայ թէպէտ 26 տարւ վան էր , բայց իրեն քանքարը՝ ազգասիրութիւնը՝ ճարտասանութիւնը՝ շատ վեր կանցնէր քան իրեն հօրը՝ որ չադամի կոմս կըսվէր : Բառլամէնդին վարի մարդիկները՝ որ վարի խուց կամ վարի դաս կըսվի՝ շատ կուհի հանեց ասոր ընտրութիւնը վրայ 1784 . 1785 . ինչպէս սովորական օգնութիւնը կտրեց չիտը վալ , որով մէկ ընդհանուր տրտունջ մը ընկաւ ազգին մէջ , բայց բառլամէնդին վարի խուցը կամ վարի դասը ու ազգը՝ բիդդին ընտրութեան պաշտպան կեցան . Թագաւորնալ 1784 աս վարի դասը փոխեց , նոր բառլամէնդ գրաւ , որ ամմէն բանը կարգաւորեց :

Իռլանտացոց սիրտը վաստրկելու համար 1783 նոր կարգ մը ասպետութեան դրին՝ սըյն Պատրիկիոսի անունով , բայց իռլանտացիք նոր նոր պատրուակով (մահանայով) խռովութիւն կը հանէին , որոնք ամմէնը զսպեցին իմաստուն կառավարութեան : Իսկ 1785 դաշինք դրին տասը թէութիւն , շտիկեցին ինչ որ առուտուրի վրայօք պէտք էր ըլլալու ինկիլդէռուայի՝ սկովտիայի՝ ու իռլանտիայի թագաւորութեան մէջ , տուրքերնալ կանոնաւորելով հաւասարեցուցին :

Հինտիստան մալապարին ծովեզերքը ա-
նուանի Հէյտէր ալի խան կար մայրուրին
Թագաւորը՝ որ իրեն քաջութիւնը խելքովը՝
19 Թագաւորութիւն իր տակը առած էր,
չատալ ծեծկրօնէրէր ինկիլիզին դէմ Ֆրանս-
սըզին հետ մէկ ըլլալով: Ասիկայ 1782 մե-
ռաւ, իր տեղը Վիբուս սահիպը իր տղան
նստաւ 1783. ասալ հօրը պէս սրտոտ էր՝
բայց անոր պէս ոչ խելք ունէր, ոչ զինուո-
րութիւն արուեստ. անոր համար ասոր օրը
ինկիլիզինէրը շուտ մը ձեռք ձգեցին առին,
ինչ որ հօրը ատենը կորսնցուցերէին, մա-
րաթայնէրուն հետալ՝ որ զօրաւոր ու սա-
տերազմասէր ժողովուրդ էն հինտի մէջ,
խաղաղուի ընելով աւելի յաջողուի գտան
հինտիստանի մէջ առաջ երթալու:

Բայց ինկիլիզ ազգին պարտքը վերջի պա-
տերազմէն ետեւ ինչպէս 240 միլիոն կիլնէէ (1)
հասաւ, իսկ ինկիլիզին տարեկան եկամու-
տը 10 միլիոն կիլնէէ կը հասնէր. ամերի-
կայինալ ասանկ ապստամբիլը չէր Թողուր
որ ծովու ցամաքի վրայի զօրքը քիչցընէ,
ըստ որում Ժգ. նահանգներուն ասպտամ-
բիլը կրնար ուրիշներունալ չար օրինակ
տալ, ոտք հանել քանատացիները՝ և ու-
րիշ երկիրները, մանաւանդ որ դրած տուր-

(1) Որ կընէ 480 միլիոն եալտըզ. մէկ եալտըզը 16
զուռուշ գնելով, կընէ 7680 միլիոն զուռուշ. և ոչ
բովհետեւ մէկ միլիոն զուռուշը երկու հազար քէսէ
կընէ, 7680 միլիոն զուռուշը կընէ 15360 անգամ
հազար քէսէ:

քերնին խիստ ծանր էր, որուն համար մեծ բլբլկոց կելլար ժողովուրդին մէջ. բայց բիդդին խելքը անանկ խելք մընէր որ՝ ժողովուրդին խռովութեան զսպեց, պարտքին համարալ ճարը գտաւ, մէկ սնտուկ մընալ սահմանեց ըստակ ժողովելու պահելու համար :

Միայն թէ իռլանտային մէջը չէր պակսէր խռովութիւն . 1786, օքտոբու անունով մէյմը ելալ, իրեն համար կըսէր որ իռլանտայի թագաւորնէրուն ցեղէն եմ ինջած, ասոր ետեւէն շատ մարդ գացին, ամմէն իռլանտան տակնուվրայ ըրին, որոնք հազիւ կըրցան զսպել, օքտոբուր փախչելով խալըսեցաւ : Եսանկ պատժեցին ցրուեցին ուրիշ բազմութիւնալ մէկ տեղ միացած, որոնք թագաւորի պէս սկսերէին հրամմել, թըղթէր հանել : Աւրիշ մէկ դիպուած մընալ եղալ աւելի զարմանալի, պէրպէսի մը աղջիկ Մաուկաուիդա նիքօլսօն անունով խենթեցաւ, աս խենթը միտքը դրաւ որ ինկիլիզի թախտին յատուկ ժառանգը ես եմ, անոր համար սպասեց՝ երբոր թագաւորը առասպայէն վար ինջնալու եղալ, անանկ ցրցուց որ թագաւորին մուրհակ (արզուհալ) ունի տալ, մօտիկցաւ՝ պղտիկ սուր դանակ մը խօթեց, բայց դիպուածը բերաւ որ՝ թագաւորին լաթերը չանցաւ, մարմինը չխտցվեցաւ, ասիկայ խենթի պէս բռնեցին, ու յիմարանոցը (Թիմարխանէն) դրին : Աւրիշ կնիկմընալ ասանկ փորձ ըրած ունէր առաջ, բայց թագաւորը խալըսերէր :

Սպանիային ըրած կարգաւորութեանը՝ աւելի յա-
ջորդութե վրայօք .

1776—1785 :

Երրորդ կարողոս սպանիային թագաւորը
առաջ 1776 մէկ օրէնք մը հանեց ընդար-
ձակ, ուր կարգելէ տղոց կարգը վիլը առանց
հաւանութիւնն իրենց ծնողաց . ծնողքնէրուն-
ալ պատուէր կրղնէ որ առանց պատճա-
ռի չարգելեն իրենց զաւկընէրուն կարգը-
վիլը : Հռոմայէնալ խնդրեց 1777, որ իրեք
նոր եպիսկոպոսական աթոռ սահմանվի ա-
մերիկայի մէջ, շատցած ըլլալով հոն քրիս-
տոնէնէրը :

Ետքը ուզեց կարգաւորել իր թագաւորա-
կան յաջորդութիւնը, որովհետեւ ասդուրիոյ
իշխանը որ անմիջական յաջորդն էր թա-
գաւորին՝ թէպէտ զաւկընէր ունէր ; բայց
անոնցմէ մէկ քանին մատղաշ տարիքին
մէջ մեռած էին . և որպէս զի զաւկի պակ-
սութե համար չըլլայ որ սպանիան կռիւնէ-
րու մէջ իյնայ, ինչպէս որ աս դարուս սկիզ-
բը ընկերէր, մտածեց որ իր երրորդ զաւ-
կը գաբրիէլ անունով կարգէ, որ խելացի
բարեսիրտ իշխան մընէր, կարգացողուիալ
ունենալով Սալուսցիոս հին պատմագիրքը
լատին լեզուէ՝ թարգմաներէր քասդիլեան
կամ սպանիական լեզու, անոր համար մա-
րիաննա վիքուօսիան փօրթուքալի թագա-
ւորին ք . պետրոսին աղջիկը հարս առաւ,

որուն մայրը փորթուկալի թագուհին մօտիկ ազգական էր սպանիայի թագաւորին: Ըստ ատեն փորթուկալի թագաւորին երկրորդ տղանալ յոհաննէս պրականցեան՝ որ պրասիլու իշխանն էր յաջորդ թագաւորութե՛ սպանիայի թագաւորին աղջիկը առաւ քառւօդդա յովակիմա անունով: Ըստ սանկով կրկին և կրկին ազգականութիւն կապվեցան սպանիայի թագաւորին տունը որ պօռպօնեան կրսովի՝ փորթուկալին թագաւորին տանը հետ որ՝ պրականցեան կրսովի, մէջէրնին հաստատեցինալ որ՝ երբոր մէկին ցեղը հատնելու ըլլայ մէկալին զաւակը գայ անոր թախտը նստի:

Ըստ ընելով ի՞. կարողոս սպանիային թագաւորը դուրս հանեց յաջորդութե՛ նաբօլի թագաւորը ի՞. Ֆերտինանտոս, որուն կէինար յաջորդութիւն՝ գաբրելէն մեծ ըլլալով. կարելի ալ է որ աս բանս ըրավ անոր սիրտը կսկծցրնելու համար, վասն զի չէր հնազանդէր: Կարողոս իր հայրը կուզէր որ Ֆերտինանտոս սպանիացոց ճամփով նաբօլին կառավարէ, և ոչ նեմցէի ճամփովը՝ ինչպէս որ կրխրատէր տուն կուտար թագուհին մարիամ քառօլինա, որ յովսէփ կայսեր քոյրն էր. կուզէրալ որ հեռը ցրնէ նաբօլիէն աքդօն զօրապետը՝ որ դանուչ չիին մեռնելէն ետև՝ և սամպուբա մառքէզը ըյնելէն ետև՝ որ վէզիր էին, առ սիկայ մէկ բացարձակ տէր մըն էր եղած ամմէն բանի վրայ, ու լման բռնակալ մը ամմէնուն վրայ: Ընոր համար կարողոս հոն

խրկեց լաս քաղաս ըսած մարդը՝ որ հասկը-
ցընէ Ֆերտինանտոսի իր կամքը, բայց
Ֆերտինանտոս պատասխան տրվավ: Արով-
հետև հիմա պղտիկութիս անցուցի, անկախ
եմ, ինչպէս որ իմ խելքս կրկտրէ՝ անանկ
պէտք է որ կառավարեմ իմ երկիրս:

Ըսանկ կտրուկ պատասխանը մեծ պաղուէի
ձգեց հօրն ու տղին մէջը՝ որ քանի մը տա-
րի քչեց, ինչպէս ունինք պատմելու. աս
բանիս համարալ կըսեն շատ թղթեր գնաց
եկավ նաբօլիի թագուհիին ու ասդուրիայի
իշխանուհիին մէջ, իրարու սիրտ կսկծցը-
նելով:

Ապանիայէն ըրած զանազան բարեկարգութիւնները՝
աւելի վաճառահանութիւն ձրայ:

Արողոս սպանիային թագաւորը վերոյի-
շեալ կարգաւորութիւնը ընելէն զատ՝ զի-
նուորութիւր շատցուց, ծովարուեստը իբր
թէ նոր հիմնեց սպանիայի մէջ, որով իր
թշնամիներուն ահարկու եղավ. ամմէն
նաւահանգիստներուն մէջը սուրհանգակի
(քուռուիէուի) նաւեր սահմանեց. որ որո-
շեալ առեն վերի աշխարհէն վարի աշխարհ
կերթային կուգային. ան ահագին ընդար-
ձակ ծովով բաժնրված աշխարհները մէկ-
մէկու հետ հաղորդակցութիւ կնէին, անով
ամմէն իր գաւառներուն ճամփայ կըբացվէր
հարստնալու: (Ըսող տրվավ՝ ով որ իր ժո-
ղովրդէն ուղէ՝ նաւարկէ, տուրքերը քիչ-
ցուց, որպէս զի առուտուրին շահը իր ժո-

ղովըդեան վրայ դառնայ : Ասանկով ամմէն ամերիկա հին օրէնքները ձեռք ձգելով նորոգվեցաւ շունչ առաւ . իր ներքին վաճառականութիւնը ծաւալեցաւ անոր հետ սպանիային վաճառականութիւննալ ծաղկեցաւ :

Ա կարողութիւն օրը ամերիկայէն անդադար ապրանք ու ըստակ կուգար սպանիա, և որպէս զի ժողովուրդը հասկընայ սիրտ առնէ՝ ամմէն գաւառին մէջ թուղթ հանեց, եկած գացածին հաշիւը (հիսապը) ընելով . գացած ապրանքներուն հաշիւը եղաւ 21 միլիոն , 742 հազար ուիալի բան . եկածին հաշիւը եղաւ 63 միլիոն և իբր 176 հազարի : Ան ատենը վաճառականի բաժանորդութի (օւթախութի) սահմանվեցաւ փիլիսոփեան կղզիներու անունով՝ որուն հետ միացաւ քարաքայի բաժանորդութիւնը . ազգային թանգարաննալ (սպանքա) Ա կարողութի անունով շատ առաջ գնաց, որովհետև մատրիտին արքունիքը շատ աղեկցուց նաւարկութիւն՝ ու ծովային առուտուրը :

Վ աճառականութիւնը աւելի առաջ տանելու շահաւոր ընելու համար սպանիացիք մէկ տեղ մը սահմանեցին՝ Վինիան կղզիին մէջը՝ որ խաղաղական ուկիանութիւն մէջն է . 140 աստիճան հիւսիսային լայնութե տակը , որ մէջ տեղը կիյնայ ասիայի՝ մանելիա կղզիի՝ ու արաբուլքօ կղզիի՝ որ ամերիկա է . աս դինիան կղզիին մէջը բերդ շինեցին , զօրք դրին , մտվընին աս էր որ՝ աս

կից ետքը ճամփորդներէն ով որ ամմէն աշխարհս պտըտելու ըլլար ծովով՝ սպանիացոց ձեռքէն առնէ իր պիտոյքը իր պաշարը (զահրէն) աս դինիան կղզիին մէջը, որ անսօն անուանի ինկիլիզը Արկրաւոր դրախտ կոչերէր : Ասե ամերիկայի ժող. միացեալ նահանգներուն հրաման եղավ որ՝ իրենց դրօշակով (պայրախով) իրենց նաւերը համարձակ խրկեն ամերիկա եղած սպանիայի նաւահանգիստներու մէջ. աս բանս առաջ խիստ արդեւած էին սպանիացիք : Եւ ի. կարողութիւն օրը եղավ որ՝ պրուշին թագաւորը թ. Ֆետերիքոս առաջարկեց մէկ բարեկամական դաշնագրութի մը ընելու սպանիայի հետ, ըստ որում Ֆետերիքոս, աղէկ կըտեսնար որ՝ իր մէջը ու սպանիային մէջը աղէկ առուտուր կրնար ըլլալ. սպանիան կարօտ էր ան ձեռագործներու՝ որ բրուսիայի՝ բօմբեանիայի՝ ու շէշիայի մէջ կըշինվէին. աս երկիրներնալ կարօտ էին սպանիայի բուրդին՝ իփէկին՝ գինիին՝ ու եղին : Եւ աջ Ֆետերիքոս կըդիտէր կընայէր որ՝ սպանիան իբր թէ Ֆրանսոյին պաշտպանութե տակը ըյնալով՝ եւրոպային ընդհանուր բաներու անչափ չէր կրնար խառնըվիլ, բայց 1777 երբոր լսեց որ՝ Ֆլօրիտա պիանքա կամ մոնինոս կոմսը՝ վէզիր էր եղած կռիմալտի դքսին տեղը՝ ան ատենը նօսդից կոմսը իր գիացէն դեսպան խորկեց մատրիտ, որ սպանիային մայր քաղաքն է. հասկըցաւ որ՝ ան վէզիրին կառաւարութիւնը սպանիան նորէն ձեռք ձգէր պի

տոր իր առջի նախագահութիւնը : Ապա-
նիային թագաւորնալ սրուշի դեսպանը
սիրով ընդունեց . ինքնալ պէս լին՝ որ սր-
ուշին մայր քաղաքն է՝ դեսպան խրկեց,
ուր 40 տարիէն աւելի կար՝ որ չէր խրկը-
ված :

Այսնիայի ու Ճէլայիի մէջ եղած հոտ-ուր ու դատ-
րեւը .

1783—1787 .

Այս ատեննէրը Ճէլայիին ու թունուզին
ծովասպատակները (խուրսանտները) շատ
նեղութի կուտային սպանիայի նաւերուն՝
անոր ծովեղերեայ տեղերուն , անդադար
վրանին վազելով կը թալլէին : Այսոր հա-
մար մոնիսոս սպանիայի վեղիրը ուզելով
աս նեղութի խալցընել իր ժողովուրդը՝
հասկըցուց ստանալու տաճկի դրանը , բայց
Ճէլայիիցիք թունուզիք մտիկ չէին դնել ,
50 տարիէն աւելի կար՝ որ առջի հնազան-
դութիւնին վերցուցերէին , հազիւ պղտիկ
պարգև մը կը խրկէին ստանալու :

Հիմակվան եղածէն զատ կը յիշէր սպա-
նիայի թագաւորը 1775ին եղած յաղթը վի-
լը անարգանքը՝ որ Ճէլայիներէն եղավ ի-
րեն , աս անարգանքը նեղութի վերցընելու
համար՝ ուզեց որ ան քաղաքը թօփով կոր-
ծանէ՝ որնոր ապաստան էր եղած ծովասպա-
տակներուն ⁽¹⁾ անոր համար կարողու թա-

(1) Ինչպէս որ ըրերէր ժ. Լուիզը իր նախահաւը .

4 աւորը՝ Ճէզայիրին վրայ խրկեց անտօն
 սլառ չէլլօնը՝ որ ճիսրաւդաւը սլաշարօղ-
 նէր, ասոր նաւատորմիղը (տօնանման) 6
 երկու խափախլը նաւ կար, 3 Ֆուխաթա,
 2 մեծ չէքտիրի, 9 շամպէք, 20 թօփ նե-
 տօղ շալուփա, 20 հավան թօփու նետօղ
 շալուփա, 6 Ֆիլուքա 8, կրակ ձգօղ նաւ,
 6 ալ ուրիշ նաւէր:

Յուլիսի սկիզբը 1783 ելալ աս նաւատոր-
 միղը կարթագինէն՝ ամսուն 29 հասաւ
 Ճէզայիր, օգոստ. առջի օրը սկսաւ ծեծել,
 400 հավան թօփուէն աւելի վրան ձգեց,
 մէջի դրած դնտակները առաջ կրակի մէջ
 տաքցրնելով, բայց քիչ փնաս տրվալ, որով
 հետեւ դուրսէն շաա թօփերով ամբցուցած
 տեղվանք ունէր շինած՝ հազարաւոր քրիս-
 տոնէնէր ու հրէանէր բանեցրնելով: Տեղ
 տեղ քաղքին մէջը իրաւ կրակ ընկաւ.
 3000 տունէն մէկ քանին երվեցան, մէկ քա-
 նին փլան, բայց մէջինները շատվոր ըլլալով
 շուտ մը կըմարէին. ինը օր ասանկ թօփոտե-
 լէն ետեւ՝ տեսաւ սլառ չէլլօն որ հովը փոխ-
 վեցաւ, վտանգաւոր եղանակը վրայ եկալ,
 բան մը չիկրնային պիտոր ընել, նաւերը քա-
 շեց տարաւ սլառ չէլլօնա նաւահանգիստը.
 իրմէ միայն 20 հոգի մեռան, 15 հոգիալ խոց-
 վեցան: Սլաւախացոց ուրախուիը ասոնց ան-

որ հարիւր տարի առաջ 10 հազար հավան թօփու
 ձգերէր Ճէզայիրին քաղքին վրայ, անկից Ճէզայիրին
 տային իրեն մննծէրը լուիղիին ոտքը խրկերէր թո-
 դութի ուղեւու:

մնաս դառնալուն վրայ՝ եվէլցաւ մէկ ուրիշ
ուրախութենով որ եղաւ սեպտ. 5, աս-
դուրիոյ իշխանին երկուորեակ (էքիզ)
մանչ զաւակ ծնանելով:

Հետեւեալ տարին 1784 օգնութիւն առնե-
լով նաև փօրթուկալի ու մալդայի նաւե-
րով շատ թօփ նետեցին բերդին ու մէջի
տնէրուն վրայ, բայց բան մը չիկրցան ընել,
մանաւանդ որ՝ ճէզայիրցիք ծովին երեսը
300 շալուփանէր շարերէին, ասոնք շարու-
նակ կրակ ընելով թող չէին իտար մէկի
մը մօտիկնալ: Արսէին որ ճէզայիրցոց մէ-
ջը շատ հազարապետներ խառնըված կային
բռօվանս գաւառէն Փրանսայի, ու ճէ-
զայիրցոց հագուստը հագած անանկ կրկա-
ռավարէին. իրաւալ է որ՝ ինկիլիզը՝ Փիլէ-
մէնկը՝ շատ պարուծ, թօփ, գնտակ տըվեր-
էին ճէզայիրցոց. թէ որ եւրոպայի տէ-
րութիւնէրը իրարու վրայ չինախանձէին,
քիչ մը շահի համար ցածութի չիբանեցը-
նէին, ծովասպատակներու չօգնէին, եւրո-
պանալ ճերմակ ծովնալ կրխալըսէր ասոնց
ասպատակութի:

Ինչ և իցէ՝ տեսնալով սպանիացիք որ աս
հեղուալ անօգուտ ելան, յուլիսի 17 թո-
ղուցին, դարձան եկան կարթագիսէ, միայն
թէ ճէզայիրցոց մէջը մեծ վախ ընկաւ, շա-
տը կուզէին որ՝ բանի մը պառկեցընելով
հաշտութիւն ընէին, արդէն օամանոցին ու
մաղրըվին թագաւորը ուղերէին միջնորդ
լլալ աս բանիս համար: Յովսէփ մաստա-
րէտ 1785 երրորդ անգամ երևցաւ ճէ-

զայրի առջին՝ սպանիային 7 նաև ով ամմէն
 նալ երկու խափախիլը, շատալ Ֆուխաթա-
 ներով, որոնցմէ մէկը հաշտութիւն խօսե-
 լու դրօշակ էր բացած. անանկով յունիսի
 16. Ֆրանսզի քօնսօլին միջնորդութիւն ստո-
 րագրեցին հաշտութեան առջի բաներուն, բայց
 սպանիայի թագաւորը չուզէր հաստատել,
 վասն զի ճէզայիրին տային մէջը մէկ թէու-
 թինալ ան դրերէր, որ հանգիստ ըլլալու
 համար սպանիան ճէզայիրին վճարէ իբր 2
 միլիոն ուիալի, կէս մը ըստակ, կէսմընալ
 ճէպխանէ, ասիկայ սպանիային համար
 խիստ ցած բան էր ու ամօթ :

Ան ատենը մէջինները ջանացին որ՝ գոնէ
 զինագուլ (միւթարէքէ) մը ընեն . աս բա-
 նիս վրայ շատ վիճմունք ընելէն ետև՝ 1786
 յունիսի 14 ընդունեցան, բայց ասոնց ըն-
 դունիլը չընդունիլը մէկ է, հաւատարմութի
 չիկրնար ըլլովիլ. ճէզայիրին տային երբոր
 ըրած պարգևները տեսալ չիհաւնեցաւ,
 իբր թէ իր ուզածին պէս չէր : Ճէզայիրը
 մաղրըպին հետ մէկ տեղ նորէն վազեցին
 սպանիային ու փօրթուկալին տեղերուն վը-
 րայ՝ որ ափրիկէին ծովեղերքը կը գտնուին,
 բայց նորէն վաւերութեան : Արբոր 1787
 օուան քաղքին վրայ վազեցին, ճէզայիրին
 տային մէկ տղան սպանվեցաւ, անկէց ա-
 ւելի տաքնալով աւելի սկսաւ յարձրկիլ,
 բայց աւելիալ կոտորտը վեցաւ : Սպանիային
 թագաւորը կուզէր որ՝ նաքօլի թագաւո-
 րին համարալ մէկ տեղ հաշտութիւն ըլլովի՝
 որ իր զաւակն էր, անոր համար երկնցու-

ցին խօսքէրը՝ բայց չխաջողվեցաւ . աս բանիս համար յոհաննէս Թումանյալ նաբօլիէն գնաց ասիրիկէ , անալ բան մը չիկրցաւ ընել :

Գարապուտը որ ճեղայիրին պէս ուժով չէ , քիչ բանով կրկշտանայ , սպանիային հետ հաշտութիւն ըրավ , որ 1784 սեպտ . 10 հաստատվեցաւ 39 թէութիւն : Բայց Թունուզին տային հաշտութիւն չընդունեց , մեծ պարգևներ մանաւանդ թէ հարկ (խարաճ) կրպահանջէր , աս պարպարընէրը անատենները անանկ յանդգներէին՝ որ տաճկին դրանալ մտիկ չէին ընէր : Վնջվան անգամ մը ճեղայիրի տային զուրցեց տաճկի դեսպանին , սովորական խարճը չեմ իտար , չեմ վախնար ոչ Թաղաւորին տէրութէն , և ոչ իր բարկանալէն :

Հոռմայէն նոր-իրակ խրկըվելուն համար պաժիէնոս , մեծ հակառակութիւն կէլայ գերմանիայի մէջ .

1784—1787 :

Երբոր 1783 կարողոս Թէոդորոս պավիէւուային բաւադինօ կայսրընտիրը հռոմ եկավ , սրբազան քահանայապետին հետը խօսք կապեց՝ որ նուիրակ խրկըվի մօնաքօ պավիէւուային մեծ քաղաքը՝ ինչպէս որ քօլօնիանալ ունէր : Բսիկայ Թէպէտ պղտիկ բան մընէր , բայց որչափ իշխանաւոր եպիսկոպոսներ կային՝ որ հոգևոր իրաւասութիւն ունէին պավիէւուային մէջը , աս բանիս դէմ

եւան, ռադիսպոնայի ժողովքին գանկատ վերուցին, վախնալով որ՝ մէկ ուրիշ նուիրակութիւմընալ սահմանելով (որ առաջ չիկար), չըլլայ որ իրենց եկեղեցական հեղինակութիւր պզտիկնար: Այնչափ մենծցաւ աս բանս որ յովսէփ կայսրը 1784 հօկտ. 12 հարկադրեցաւ մէկ թուղթ մը գրելու եկեղեցական կայսրընտիրներուն՝ մանաւանդ իր եղբօրը մաքսիմիլիանոսի՝ որ քօլօնիայի կայսրընտիրն էր՝ ըսելով: «Որովհետեւ ինծի գանկատ գրեցին եպիսկոպոսնէրը աս բանիս համար, և եսալ պարտական եմ պաշտպան կենալու գերմանիայի ամմէն եկեղեցական իշխանութեց, չեմ ընդունիր նուիրակը՝ եթէ ոչ իբրև սոսկ պաշտօնեայ մը հռոմայու արքունեացը՝ որուն կիյնայ հոգալ քաղաքական գործքէրը, կամ ան գործքէրը՝ որ անմիջապէս կը վերաբերին սրբազան պապին՝ իբրև գլուխ ընդհանուր եկեղեցւոյ, բայց թող չեմ իտար որ՝ մէկ իրաւասութիւն մը բանեցընէ եկեղեցական գործքէրու մէջ:

Ասանկով՝ Օսլիո անուն եպիսկոպոսը եկավ մօնաքօ քաղաքը նուիրակ նստալ, բայց ատեան չիկրցաւ բանալ, որպէս զի ուրիշ եպիսկոպոսնէրուն իշխանութեցը մէկ պակասութիւ մը չըլլայ, որովհետեւ աս բանիս շատ դէմ կեցան եկեղեցական կայսրընտիրները՝ մակօնցային՝ դուէվերիին՝ ու քօլօնիային՝ նաև սալիզպուրկայ արքեպիսկոպոսը՝ (որ գերմանիայի եպիսկոպոսաց գլուխն է,)

վիսպուրկին՝ Ֆուէյսինկային՝ ռադիզպո-
նային՝ ու բասսավիային եպիսկոպոսները ։
Ըստ բանովս հերիք չըլլալով չորս վերոյի-
շեալ գլխաւոր եկեղեցական իշխանները ,
Լւմս ըսված տեղը՝ որ քօլօնիայի կայսրըն-
տրութէ մէջը մէկ պզտիկ տեղմընէ՝ 9 . 10
մղոն հեռու քօլօնիայէն , մէջինները լու-
թուան , հոն իրենց մարդիկը խրկելով 1786
մէկ ժողով մը ըրին միաբան ըլլալու հա-
մար , թէ ասկէց ետքը ինչպէս աւելի հաս-
տատութիւ կարենան միաբան դէմ դնել
աս բանիս , թող չիտան որ գերմանիայի
մէջ ասկէց ետքը տեղ մը նուիրակ դրվի ,
կոպարաւորել ուզելով սրբազան պապին
հեղինակուիլ որ ունէր գերմանիայի եպիս-
կոպոսներուն վրայ ընդդէմ տրիտենդեան
ժողովքին , գերմանիայի դաշնագրուէ , ու
հին սովորութեց . սրբազան պապը մէկ հա-
սարակ եպիսկոպոսի մը տեղ դնել էր ասի-
կայ , իսկ զիրենք իբր գլուխ ։

Երբոր հռոմ լսեցին աս ժողովս՝ շատ նե-
ղեցան , վասն զի աս մեծ արքեպիսկոպոսնե-
րուն միտքը ան էր որ՝ հռոմայուն և իրենց
տակի եղած եպիսկոպոսներուն իշխանուիլը
պզտիկցընեն , որպէս զի իրենց իշխանուիլը
մենծնայ . ինչ կանոններ որ հրատարակե-
ցին՝ ամմէննալ առնելոված են Ֆէպրոնիոսի
դատապարտեալ գրքէն . բայց ասոնք ուրի-
շին հոգևոր իշխանութիւր իրենց քաշել ու-
զելով , քիչ մը ատենէն ետև իրենց ժամա-
նակաւոր իշխանութիւննալ կորսնցուցին ։
Սրբազան պապը մէկ զօրաւոր պատասխան

մը տրվալ աս չորս արքեպիսկոպոսնէրուն . պատմութիւններէն ցրցընելով թէ ինչ իրաւունք ունի հռոմայ աթոռը նուիրակութեց վրայ : Արուշի թագաւորնալ թէպէտ ուղղափառ չէր՝ բայց 1787 մայիսի 14 ասոնց կարծիքին դէմ վճիռ հանեց, որ իր երկրին մէջի եղած ուղղափառնէրը՝ եկեղեցական բանէրու համար թող հռոմ դիմեն և հռոմայու նուիրակնէրուն : Ասոնց ուրիշ դէմ գրողնէրալ եղան հռոմայու դիացէն՝ որոնցմէ մէկը եղալ ռովարէլա եպիսկոպոսը, որ երկան գրեց քահանայապետին ընդհանուր իշխանուիր ցրցընելու համար . իսկ Սօլտագի անունով դոմինիկեան կրօնաւորը խիստ տաքցած գրելով չափը անցուց, շատ պարսաւական խօսքէր զուրցեց ան ժողովքին եպիսկոպոսնէրուն դէմ, անոր համար գերմանացիքալ մէկ սաստիկ պատասխան մը գրեցին իրեն, վկայութիւն կանչելով փարէզ եղած սօւպօն անծաբաննէրուն շատ գործքէրը :

Ուրիշ եկեղեցական կարգաւորութիւնէրալ եղան գերմանիայի զանազան շրջանակնէրու մէջ, ինչպէս որ վերը գրեցինք . կայսերական ժողովքով թոյլտուութիւն եղաւ երկու բւօղէսդանդ աղանդնէրու լուծէութի ու կալվինի . սովորութիւնալ եղալ որ եկեղեցական ասպրանքնէրը եկամտաւ կապեցին ան թագաւորական ցեղին տղոցը՝ որ եկամտաւ մը չունին . չափաւորութիւն դրին ան բանէրուն՝ որ իրենց աւելորդութիւն երեւցաւ : Ասանկով մակօնցային կայսրընտիրը

գաղտուկ հաւանութիւն կայսեր վճռեց որ՝
 ժողովներուն սահմանացը կեօրէ անխաւ
 ու ապօրինաւոր սեպվի շատ տեղին եկա
 մուտը կապել մէկ տեղի մը՝ մէկ մարդու
 մը, բայց եթէ ան անձը խիստ երեւելի մարդ
 ըլլայ, կամ մենձ արդիւնք մը ունեցած ըլ
 լայ. և ան տնօրինմունքը որ ճամբով
 մը հռոմայէն առերեւն աս բանիս համար՝
 ոչինչ սեպվին, ինչպէս որ չիքննրվին եպիս
 կոպոսական ու աշխարհական դատաստան
 ներէն, որովհետեւ շատ հեղ սուտ պատ
 ճառներով անարժանները իրենց կըքա
 շեն ան եկամուտը բաշխողին մտքին
 դէմ:

Միջն կայսրընտիրը աշխարհական կղերիկու
 սաց համարալ թուղթ մը հանեց ըսելով:
 „ Ետ առենէն վեր է՝ գերմանիայի մէջ
 „ եկեղեցականներ կըգտնրվին, որ թէպէտ
 „ հազիւ կարդիւնաւորին մինակ մէկ տեղին
 „ թոշակը (էօլեֆէն, կելիրը) առնելու՝
 „ բայց երկու իրեք տեղին թոշակը իրենք
 „ կառնեն, իրենք կըքաշեն, հռոմայէն հեշտ
 „ (խօլայ) ներում առնելով աս բանիս հա
 „ մար, անանկով շատ մարդիկ զրկեալ կը
 „ մնան ապրուստէն՝ որոնք աւելի արժանի
 „ են քան մէկաւնոնք“ : Աս բանիս համար
 քառտինալ միկացցին որ վեննայի արքե
 պիսկոպոս էր, և միանգամայն մականուն
 ունէր վաքչիայի եպիսկոպոսութիւն, յովսէփ
 կայսրը հրաժարել տրվալ ասկէց, որ հա
 բուստ եպիսկոպոսութիւն մընէր մաճառի
 մէջ, հրամայելով որ հերիք ըլլայ իրեն

վեննային եպիսկոպոսու թէ եկամուտը՝ թէ

պէտ անչափ հարուստ չէր :

Պապիէռայի մէջ 1786 հոկտեմ. 11. նոր
աղանդաւորաց տեղ մը կոխեցին, որ կըս
վէր] ուստի իրենց մատեանները (քիւ
թիւկները) ձեռք ձգեցին, ինչ որ մուար
վարդապետութի կըզբէին կըսորվեցընէին
մէջը՝ անոնք ամմէնը դուրս հանեց պապիէ
ռային արքունիքը, երկու հատոր գիրք
նեմցէի լեզուով տպեց, ամմէն եւրոպայի
տէրութեց խրկեց : Ըս աղանդս հանօղը
եղավ վայսհաւք մէյմը որ ինկօլշգատ քա
ղաքը օրէնք դաս կուտար . 28 տարվան
երիտասարդ, ամմէն չարուէ մէջ ընկղմած,
բայց սաստիկ կեղծաւոր, տակէն խաղցօղ,
բարակ նենդագործ, շրջահայեաց և միան
գամայն յանդուգն, ամմէն չարագործուէ
վաղօղ . իր աղանդը եղավ մէկ ընկերութի
մը խիստ գաղտուկ . մտնօղը աստիճան աս
տիճան վեր կըհանէին, ամմէն մէկ աստի
ճանի մէջ անած անտէր ըլլալ կըսորվեցը
նէին, թէ որ մէկը խղճմտանք ընէր, ալ
առաջ չէին տանէր : Սորվեցուցածնին սոս
կում կըբերէ լոողին, ջնջօղ է ամմէն կարգ՝
կանոն՝ օրէնք՝ կառավարուի, վարքը՝ հա
ւատքը ավրօղ, մարդը լման անասնոյ պէս
ընօղ . ուրիշը զրկելը՝ յափշտակելը օրինա
ւոր կըսեպէ . գաղտուկ պահելը ասոնց հի
մը (թէմէլը) ըլլալով կըյորդորէ ինքի
ղինքը սպաննել ծածուկը դուրս չիհանելու
համար : Ըսոնց ծածուկը դուրս չէր ելլար,
բայց տէրութե հրամանովը իրենց բարեա

դիրնէրը ընտանիքս հասկըցան, ետքը ալ աղէկ հասկըցան իրենց մատենանէրը կարգալով. իմացան որ շատ տարածվերէր սլավիէուայի մէջ, ու շատ երևելի անձինք մէջն էին մտած, որոնց գլխաւորներէն որը փախան, որը քշվեցան, որնալ պատժըվեցան սլավիէուայի մէջ: Բայց փախչողները ուրիշ տեղվանք պաշտպաններ գտնալով անտեղվանքները սկսան սերմանել իրենց աւնօրէնութիւր:

Պրոշի Լաֆաորին խնդիրը հոռմայէն:

Եւ տեսնէրս պրոշին թագաւորը ք. Ֆետերիքոս խնդրեց սրբազան սլավէն՝ որ նոր եպիսկոպոս մը դնէ մինտէն քաղքին մէջը, որպէս զի ան գաւառները որ վէսդֆալիայի մէջ ունէր՝ ամմէն կերպով բաժնէ քօլօնիայի կայսրընտրին հոգեւոր իրաւասութիւ, վասն զի խիտ դէմ էր իրեն տեսնալ որ՝ մէկ աւտդրիոյ տան իշխան մը իր ժողովուրդին վրայ իշխէ: Բայց հռոմ չիկատարեց պրոշի թագաւորին խնդիրքը իրեք պատճառի համար, մէյմը՝ որ մէկ թեմ մը կտրել պզտիկընել առանց իր եպիսկոպոսին հաւանութեանը՝ դէմ էր կանոնական օրինաց ընդհանրապէս նայելով, դէմ էր նաև նեմցէի եկեղեցնայ արտունութեանց. երկրորդ՝ կրմտածէր որ՝ աս ընելով չլլայ թէ սրդողընէ քօլօնիային կայսրընտիրը, կայսրը, ու դօսքանային մեծ դուքսը, որոնք

իրեքնալ եղբար էին, իբրև աւտդրիոյ տա-
նը վրէժխնդրութի մը ըրած սեպել տա-
լով. երրորդ իմացաւալ որ՝ պրուշի թագա-
ւորին ընտրոված եպիսկոպոսը պիտոր ըլ-
լար տուվալ բիրավ անուն քահանան, որ
շատոնցմընէ բօցտամ կըքնակէր. ասիկայ
թէպէտ գիտուն մարդ էր՝ բայց հռոմայի
կարծիքներուն դէմ էր :

Ըս պատճառներս լսելով պրուշին թագա-
ւորը՝ ինքնալ լուռ կեցաւ, բայց ուղղա-
փառներուն համարձակ աղատութիւն կու-
տար, անանկ որ պրանտէմպուրկ գաւա-
ռին մէջ՝ բօմէռանիայի մէջ՝ մակտէպուրկ,
ալպէրշգատ, և արևելեան բրուսսիայի մէջ՝
ուղղափառներուն աւագերէցնէրը կըհո-
գան ուղղափառ զինուորները. ասոնք իրենց
իշխանութիւր կառնեն հիւտէսհէյմին իշխա-
նաւոր եպիսկոպոսէն՝ որ կըսվի հիւսիսային
եպիսկոպոս, ըստ որում իրեն իրաւասու-
թիւր կըտարածվի ամէն ուղղափառներուն
վրայ՝ որ բռօդէսդանդ իշխանաց երկիրնէ-
րուն մէջն են, եւրոպային հիւսիսային դին,
միայն թէ շվետին ու մոսկովին երկիրը չի-
խառնըվիր :

Վանի տեղ որ առավ պրուշին թագաւո-
րը ք. Ֆետերիքոս պատերազմելով և կամ
դաշնագրութի ընելով, ուղղափառներէն
չորս մեծ թեմ իր իշխանութե տակը ան-
ցան, պրէզլաւին թեմը՝ որուն տակն են
չէզիային ամմէն ուրիշ եկեղեցիները,
քուլմին, վառմիային, ու քույավիային
թեմէրը : Պրէզլաւին եպիսկոպոսը շաֆկօց

կոմսը՝ որովհետև 25 տարւոյնէ վեր քշված էր, քորեպիսկոպոսնէրէն մէկը անոր տեղը կը հոգար :

Եհաստանը բաժնւրվելէն ետև՝ վառմիայի եպիսկոպոսը պէռլին դնաց՝ որ պրուշի թագաւորին հետ տեսնուի, հոն աղաչեցին իրեն որ՝ օժէ ուղղափառներուն երկրորդ եկեղեցին. օժման հանդէսը ըլլալու ատենը՝ պրուշի թագաւորին ամմէն ընտանիքը հոն ներկայ գտնուեցան : Ըս եկեղեցնայ քովսալ 1782 մէկ դպրատուն մը շինվեցավ, վերակացու թի մէկ Ֆամինկացի խաթունի մը հարսքամբ ըսված տունէն. աս խաթունս ընկեր էր ու կենակից ան իշխանուհւոյն՝ որ կին էր հենրիքոսի՝ պրուշի թագաւորին եղբօրը :

Ըս ամմէն բանը աղէկ կը ցըցընեն՝ որչափ ազատութի համար ձակուի արված էր ուղղափառաց պրուշի երկիրներուն մէջ :

Պավիէոան գոխել ուղեւուն համար սպորին նա հանգնէրուն հետ՝ նոր հակառակութիւն կէլայ գերմանիայի մէջ.

1785 :

Ինչպէս որ վերը պատմեցինք, թէպէտ 1783ին սկիզբները վէռսալիա՝ որ փարէզին քովս է՝ հաշտութի եղավ նեմցէին ու Ֆիլէմէնկին մէջ, բայց 1785 յովսէփ կայսրը բան մը առաջարկել սկսաւ, որ շատ կռիւներու պատճառ պիտոր ըլլար : Ար-

տեսնար յովսէփ որ Ստորին նահանգները՝ որոնք նաև Պէլճիա կրավին՝ շատ հեռու էին իր երկիրներէն ու բաժնւած, շատ խարճի տակ զինքը կրճգէին, պէտք էր իրեն մէկ արքունիք մը պահել պրոուստել քաղքին մէջը. որովհետև զանազան նահանգ զանազան օրէնք ու արտունուծիներ ունէին՝ ամմէն մէկ դիպուածի մէջ նորուծի կրպահանջէին. աս թող տուր՝ մէկ երկիր մընալ էր՝ երբոր Ֆրանսոզներուն հետ նեմցէն ավրվելու ըլլար՝ շուտ մը կրնային Ֆրանսոզները ներս վազել առնել՝ ըլլալով մէկ բաց երկիր մը : Եւ ամմէն բանը մտածելով յովսէփ կայսրը՝ ուզեց որ ձգէ աս երկիրը, անոր տեղը պավիէռան առնէ, որով ամմէն դունա գետին վրայ կիշէր, իր ամմէն սահմանները մէկ տեղ կրկայցնէր, միաստանի մէկ երկիր մը կրլար. իր իշխանութիւնալ կրտարածէր ամմէն հարաւային գերմանիայի վրայ մէկ ծարէն մէկալ ծարը, բաց ՚ի բանի մը ազատ քաղքներէն ու պղտրտիկ իշխանութիւններէն. իր թևը կրտարածէր ունս գետին վրայ՝ սև ծովին՝ ադրիական ու միջերկրական ծովին վրայ, թրեստէ ու դօսքանան ունէնալով, սահմանակից ըլլալով Ֆրանսայի՝ Լէհի՝ ու մոսկովին հետ :

Եւոր համար ուզեց պավիէռային դքսութիւնը՝ որուն մեծ մասը մարիամ թերեզինա կայսրուհին տրվերէր բալագինու կայսրընտրին, ամմէնը ինքը առնէ, անոր տեղը կայսրընտրին տայ ստորին նահանգները :

Ըստ փոփոխութիւնը լէհրպատի կոմսին ձեռ-
 քովը առաջարկեց ծերունի կայսրընտրին՝
 որ կրօվէր կարողոս թէոգորոս, և տէր էր
 պավիէնայու և բալադինու, հասկըցընե-
 լով ինչչափ կրմեծնար իր ցեղը պավիէնան
 փոխելով ստորին նահանգներուն հետ, կըր-
 նարալ թագաւորի անուն ունենալ թէ որ
 ուզենար: Ստորին նահանգները պավիէ-
 նայէն աւելի հարուստ էին ու բարեբեր,
 մէջինները աշխատասէր: Պավիէնային
 պինտ աղէկ քաղքըները մօնաքօ, տօնա-
 վէնդ, ինկօլըդատ, վար են ստորին նահան-
 գաց քաղքըներուն քովը որ կրօվին պրու-
 սելլ, կանտ, լովանիօ, անվէնսա, պուու-
 ճէս, օսդէնտա: Ստորին նահանգներուն
 ժողովուրդը շատ էր, 2 միլիոն ու կէս մարդ-
 կար մէջը, իսկ պավիէնային ժողովուրդը
 էր անցներ քան 1 միլիոն ու 800 հազար:
 Ստորին նահանգներուն եկամուտը առանց
 խարձի 10 միլիոն Ֆիօռին կրբերէր տա-
 րին, պավիէնայինը՝ հազիւ 8 միլիոն, որով
 հետև 1776 աղէկ մէկ կտորը կայսրընտրին
 ձեռքէն դուրս ելավ: Ստորին նահանգնե-
 րը ունին աղէկ նաւահանգիստներ ովկիա-
 նոս ծովուն վրայ և մանիքա նեղուցին վը-
 րայ, որոնցմէ Ֆիանտուան ունի նաւահան-
 գիստներ ինկիլդէնային դիմացը, որով
 օր մը կրնար ծովեզերեայ տէրութեց հետ
 մէկ արգենի թագաւոր մը ըլլալու:
 Ըստ բաներս լսելով թէոգորոս 1785 յունվ-
 15, միտքը դարձաւ, ուզեց պավիէնան
 ստորին նահանգներուն տեղը փոխել. ճար-

տասանութի մը զօրաւոր պատճառնէրով
 դուրցըված շատ բան փոխել կուտայ: Քայց
 աս դաշնագրութիւնս աղէկ հաստատելու
 համար՝ պէտք էր որ նաև տիւ բօնդին
 դքսին հետ որ էր ք. կարոլոս, և մաքսիմի
 լիանոսին հետ՝ որ իր եղբարն էր, խօսք կա
 պէն, հաւանութի առնեն, ինչու որ կարո
 լոս թէոգորոս կայսրընտիրը զաւակ չունե
 նալով՝ ասոնք պիտոր ըլլային իրեն ժառան
 դը: Ալ որովհետև յովսէփ կայսրը դես
 պան (էլչի) մը չունէր տիւ բօնդին դուք
 սին քով, ռօմանցօֆին մոսկով կոմսին
 յանձնըվեցաւ որ խօսի դուքսին հետ ու
 հաւնեցընէ, վասն զի աս ռօմանցօֆը մոս
 կովի դիացէն դեսպան էր խրկըված երկու
 շրջանակնէրուն մէջը՝ որ էին վերի ու վա
 րի ռէնօ. մոսկովնալ խիստ կապւած ըլլա
 լով յովսէփ կայսեր հետ՝ անոր ուզածը
 խիստ սիրով կընէր: Ռօմանցօֆը գնաց
 դուքսին հետ խօրաթեց ցըցընելով՝ որչափ
 աղէկ բան պիտոր ըլլար՝ թէ որ բալադի
 նու ցեղը բարեկամաբար ինքիր կամքովը
 աւսդրիոյ տանը կամ նեմյէին տայ վերի
 ու վարի պավիէռան, վերի բալադինան,
 լուչէմպէրկին լանկաւիութիւր կամ իշխա
 նութիւր, նէօպուրկին ու սուլցպախին դըք
 սութիւնը: Ասոնց տեղը իրեն առնէ ամմէն
 աւսդրիական ստորին նահանգնէրը, անոր
 հետ մէկ տեղ 10 միլիոն ֆիօռինը, որ օլան
 տայէն առնելիք կայ առնելու. ասկէց զատ
 կայսրընտիրն 3 միլիոնալ տրվի տեղը փո
 խելուն համար. աս ամմէն երկիրնէրնալ

սյուռեկօյնայի թագաւորութիւնն անուանել
լով՝ կայսրընտիրը անկէյ ետքը թագաւոր
ըսվի :

Ըս խօսքէրս խիստ անուշ եկաւ դուքսին՝
մանաւանդ թագաւորական անունը , բայց
ինչ որ կընէր՝ մէկ կօմս մը ունէր իրեն խոր
հրրդական հօֆֆէնֆէլտ անուն , առանց
անոր հարցընելու բան մը չէր ընէր , առաջ
անոր հարցուց : Ըս կօմսը՝ կամ որ իրեն
աղէկ չէրեցաւ աս փոխփրօտելը , կամ որ՝
ոմանց ըսածին պէս պրուչի թագաւորին
լրտեսն (չաշուտն) էր , իրմէ եկամուտ կա
պած ունենալով , շուտ մը մարդ խրկեց
պէռլին , պրուչի թագաւորին հասկըցուց :
Ըս լսածին պէս պրուչին թագաւորը ք .
ֆետերիքոս՝ խիստ դժարցաւ , տեսաւ որ իր
վերջի ըրած պատերազմին օգուտը պարապ
պիտոր երթար , որուն համար անչափ յոք
նէրէր , անչափալ խարճ ըրերէր , իմացաւ
ալ որ՝ անօգուտ պիտոր ըլլար նաև ան
աշխատանքը՝ որ քիչ մը առաջ քաշերէր
բալագինեան ցեղին ձեռքը մնալու համար
պավիհուան . հասկըցաւալ որ՝ աս բանս
չատ շահաւոր պիտոր ըլլար նեմցէին՝ որուն
ամմէն մէկ շահիլը մենծնալը՝ իրեն մէյ մէկ
խօց կըլլար , մէյ մէկ մենծ փասս կըսեպէր :
Ըսոնք մտածելով մէկ շրջաբերական թուղթ
մը հանեց դերմանիայի մէջ , գրգռելով
դերմանիային մեծ իշխանները որ աս բանիս
դէմ ըլլան , ցըցընելով քանի փաստակար
բան պիտոր ըլլար ասիկայ :

) (Ի)վթին մէջը առաջ կըպատմէ . ինչպէս

,, պավիէռային կայսրընտիրը մեռնելէն
 ,, ետե որ կրսովէր յովսէփ մաքսիմիլիանոս՝
 ,, նեմցէն ուզէց վարի պավիէռան իրեն
 ,, առնել ան դաշնագրութիւն՝ որ 1778 յունվ.
 ,, 3 ըրերէր բալադինօի կայսրընտիրին հետ,
 ,, որ էր յաջորդ մեռնող կայսրընտիրին,
 ,, բայց տիւ բօնդին դուքսը ու ինքը պրու-
 ,, շին թագաւորը աս բանիս դէմ կեցեր-
 ,, էին : Շատ վիճմունքէն ետե՝ 1779
 ,, մայիսի 13՝ եղած դաշնագրութիւն որ դէջէն
 ,, քաղաքը եղալ, նեմցէն հրաժարեցաւ իր
 ,, ամմէն ժառանգութիւն պավիէռային վրայ .
 ,, անոր տեղը պավիէռային չորս գաւառը
 ,, առաւ, որ 1 միլիոն ու կէս Ֆիօսին եկա-
 ,, մուտ կրբերէն տարին . անոր ութերորդ
 ,, թէութիւնը մէջ պարտաւորեց զինքը նեմ-
 ,, ցէն՝ որ պաշտպան կենայ պավարեան բա-
 ,, լադինայի ցեղին, որուն յայտնի ապրս-
 ,, պրոված է որ իր երկիրը ուրիշ չիտայ :
 ,, Հիմա նեմցէն նորանց կուզէ փոխել աս
 ,, երկիրս՝ Քրանսան ու մոսկովը մէջ խառ-
 ,, նելով, առանց մէկ խօսքի մը մէջ խառ-
 ,, նելու պրուշը ու գերմանական ժողովը,
 ,, որոնք մասնակից ու պաշտպան ըլլալով
 ,, դէջէն եղած դաշնագրութիւնը, իրաւունք
 ,, ունին խառնըվելու . տիւ բօնդին դուքսն
 ,, ալ նորէն աս բանիս դէմ կրկենայ, իս
 ,, պրուշի թագաւորսալ կը յորդորէ որ դէմ
 ,, կենամ : Արսեն որ 1714 պատենին մէջ
 ,, եղած դաշնագրութիւն՝ պավարեան բա-
 ,, լադինեան տունը ունի իշխանութիւն ժը
 ,, թէութիւնը կեօրէ ուզածին պէս փոխել

„ իր երկիրը • բայց հին դաշնագրուինէրը
 „ կըցըցընեն որ՝ աս փոխելը կիմացվի մէկ
 „ պզտիկ երկրի մը վրայ, մէկ քանի գաւա-
 „ ուի մը վրայ, չէթէ մէկ մենծ կայսրըն-
 „ տրութէ երկրի վրայ, որ ոսկի կոնդակին
 „ կարգադրութէր կէօրէ՛ և վէտֆալիա
 „ եղած հաշտութէր կէօրէ՛ չըլլայ պիտոր
 „ ասանկ փոփոխութի, որովհետև ասիկայ
 „ ամմէն կայսրընտրաց սահմանադրութիը՝
 „ և կայսերութէ դաշնակցեալ դրութիւնը
 „ կրնայ ավրել: (Ի) Է և ընդունինք որ պա-
 „ տէն եղած դաշնագրութիը թոյլ կուտայ
 „ պավիէռայի տանը մէկ կտոր մը երկիր
 „ փոխելու՝ բայց դէջէնին մէջի դրված ու-
 „ թերորդ թէութիը վերցուց աս թոյլտու-
 „ ութիը, ասանկալ ան պայմանադրութիը՝
 „ որ իրենց մէջը ըրին բալագինեան կայսր-
 „ ընտիրը ու տիւ բօնդին դուքսը՝ վերցուց
 „ ան թոյլտուութիը, ըստ որում անոր մէ-
 „ ջը նորոգեցին բալագինեան տանը պայ-
 „ մաննէրը՝ որ եղած էին 1766, 1771, և
 „ 1774 • իսկ ան պայմաննէրը՝ անայլայլակ
 „ (մշտութէ) ըրին իրեն ամմէն երկիրնէ-
 „ ըր մշտնջենաւորապէս հաստատեցին ան
 „ ցեղին հին պայմանադրութիը՝ որ եղած
 „ էր 1329 բավիայի մէջ, որով կըպարտա-
 „ւորին ան ցեղին ամմէն մէկ մարդը չօտա-
 „ թացընել իրենց երկիրը :
 „ Հիմա որովհետև դէջէն եղած դաշնա-
 „ դրութէր պաշտպան են պրուշին թագա-
 „ւորը ու սաքսօնիային կայսրընտիրը՝ Ֆր-
 „ ըանսային ու մոսկովին միջնորդ ըլլալովը,

„ կըհետեւի որ՝ մէկ փոփոխութի մը չիկըր-
 „ նար ըլլալ առանց ասոնց՝ առանց գեր-
 „ մանական իշխաններուն հաւանութեը,
 „ մանաւանդ որ՝ պավիէնային ընդարձակ
 „ ու բարեբեր երկիրը աւսդրիոյ տանը վրայ
 „ անցնելով, աւսդրիական տունը կըլլայ
 „ մէկ միապետութի մը քառակուսի խիստ
 „ մեծ, որով գերմանիային հաւասարակըչ-
 „ ուունը կըկորսըվի, կայսերական իշխաննէ-
 „ ըու ազատութիւր ու ապահովութիւր կը
 „ վերցըվի: Աւսդրիոյ տունը թող յիշէ որ՝
 „ ինքը ծովեզերեայ տերութեց խօսք տը
 „ վավ պավիէնա եղած դաշնադրութեը
 „ մէջ 1715 և 1751, ստորին նահանգնէ-
 „ ըուն մէկ կտորը չիտալ անանկնէրուն՝ որ
 „ իր ցեղէն դուրս են:

„ Հիմա ես պրուշի թագաւորս որովհետեւ
 „ առաջ պատերազմեցայ փոփոխութի մը
 „ չըլլալու համար, աս բանսալ դէջէն ե-
 „ ղած հաշտութիւնը հաստատեց, աս պա-
 „ տերազմելովս իրաւունք մը վաստըկեցայ
 „ դէմ դնելու ամմէն պավիէնային փոփո-
 „ խութեցը որ կրնայ ըլլըվիլ: Ասանկով
 „ հիմա կառաջարկեմ, թող ինծի հետ մէկ
 „ ըլլան գերմանիայու ամմէն իշխանները
 „ մէկ տեղ մէկ դաշնադրութիւն մը ընեն
 „ հետեւելով վէսդֆալիա եղած դաշնա-
 „ դրութեը, որպէս զի պաշտպանեն կայսե-
 „ ըութե սահմանադրութիւնը. ամմէն մէկ
 „ իշխաննալ ապահով մնան իրենց երկրին
 „ վրայ մէկ փոփոխութի մը չընելու: Աս
 „ դաշնադրութիւր մէկիմը վսասելու համար

» ջըլլար, այլ գերմանիայի սահմանադրու-
 » թիր աւելի հաստատելու համար :

Պրո-շը Էրտրտե Կոր Բաբանու-Լիան յը ընել
 Կալու գերմանիայի մէջ .

1785 :

Լս միջոցիս մէջ ք. Ֆետերիքոս պրուչին
 Թագաւորը կընայէր մէկ հրամայողական
 մենծու-թիւն մը ձեռք ձգել գերմանիայու
 կայսերուէ իշխանացը մէջ, աւելի գրգռե-
 լու համար անոնք կըսէր, ինչ կարծէք՝ յով
 սեփ կայսրը մէկ բնական ներհակու-թի մը
 ունենալով ամմէն եկեղեցականաց գէմ՝
 միտքը ան է որ՝ գերմանիայի մէջ որչափ
 եկեղեցական իշխանու-թիւնէր՝ եպիսկոպո-
 սու-թիւնէր՝ աբբայու-թիւնէր կան՝ ամմէնալ
 պիտոր աշխարհական ընել տայ, անով գեր-
 մանական հին սահմանադրու-թի բոլորովին
 տակնու վրայ ընէ : Ալ որովհետեւ աչքով
 նինալ կըտեսնային որ յովսեփ կայսրը իր
 երկրին մէջը շատ ասանկ փոխփրուտենէր
 կընէր, անկէց իրաւ իրենց վրայալ վախ
 կուգար. բայց Ֆետերիքոս որչափ որ խօս-
 քով ամմէնը կըգրգռէր, այնչափալ կիմա-
 նար որ՝ չունէր ան ուժը իր ուղածը առաջ
 տանելու համար, որովհետեւ չունէր մէկ
 զօրաւոր դաշնակից մը :

Ըն ատենը իր վեզիրին տեղն էր պարոն
 հերցսկերկը, ասիկայ կատարեալ տեղեակ
 ըլլալով ամմէն գերմանական իշխաններու

պատմութեցր՝ տեսնալովալ իր թագաւորին տրտմութիւր մտմտութիւր, մէկ խօսակցութե մը մէջ պատմեց իրեն ըսմալ քալտաւ եղած անուանի դաշնակցութիւր, որ 1530 բռնօգէսդանդ իշխանները ըրին, և 1537 նորոգեցին և. կարողոս կայսեր դէմ, որ ամեն եւրոպա դողացուց. աս պատմելով կըյորդորէր որ հիմաալ ինքը անանկ ընել տայ, Ֆետերիքոս առջի բերանը անչափ չի հաւնեցաւ, բայց ետքը մտածելով հաւնեցաւ: Ասոր գրգռելովը գերմանիայի կայսերութե իշխանները յիշեցին ուրիշ դաշնակցութիւնները՝ որ իրենց առջինները աւտեն ատեն ըրերէին մէջէնին՝ կայսեր ահաւոր իշխանութիւր չափաւորելու համար, ասոնք յիշելով իրենքալ օրինակ աւին ընելու:

Աս բանիս մէջ պրուշի թագաւորին հետ միաբանեցան պրունսվիքին դուքսը, սաքսոնիային ու հանսովերին կայսրընտիրները, մակոնցային կայսրընտիրը՝ որ էր արքեպիսկոպոս, վէյմար սաքսոնիային դուքսը. ետքնալ պղտիկ իշխանները եկեղեցական ու աշխարհական. ասանկալ հաստիա քասսելին լանտկաւիլիօյի (իշխանին) յաջորդնալ մէկ եղաւ մեռնօղ հօրը հետեւելով: Աս գերմանական միաբանութիւր վճռովեցաւ պէռլին յուլիսի 23: Արուշին թագաւորը բանը ուժովընելու համար՝ սեպտ. մէջ 80 հազար զօրք ոտքի վրայ հանեց շվէյտնիցի ու պրուքի մէջ. ինքնալ անձամբ հոն գնաց մենծ զօրապետներով, ուր շատ

երևելի անձինքներ ու հազարապետներ ժող-
վրվեցան Ֆրանսոզ, մոսկով, ինկիլիզ, և սաք-
սոնացիներ : Բայց քօլօնիան՝ դուէվերին՝
մէքլէմպուրկ՝ վիդդէմպերկ՝ սալիզպուրկ՝
սաքսոնիա կօդան, վիսպուր Ֆրէյսինկան՝
և ուրիշ իշխաններ՝ յայտնապէս չուզեցին
միաբանիլ ան դաշնակցութիւր, ցըցընելով
ինչպէս ան բանը՝ որ աղէկ է և ընելու է
ատեն մը, աղէկ չըլլար ուրիշ ատեն մը .
գիտէինալ որ՝ պրուշին ըսածը մինակ իր
շահը նայելէն առաջ կուգար, հասարակի
բարին իրեն պատրուակ (մահանայ) կը-
ներ : Ասանկով աս միաբանութիւր պարապ
ելավ, ամմէն իշխան ետ կեցան, օտարին
կովին մէջը չուզեցին մանալու (1) :

Ասիկայ յովսէփ կայսեր եղավ մէկ նոր սըր-

(1) Ասիկայ առջի անգամը չէ՝ որ կըխօսվի պավիէ-
ռային ցեղին վրայ անցընել աւսդրիական ստորին
նահանգները . 1703 Ֆրանսոյին թագաւորը ժ. Գ.
լուիզ ուզեց Ե. փիլիպպոսէն սպանիայի թագաւո-
րէն, որ ստորին նահանգները կամ պէլճիան արվի-
ք, մաքսիմիանոսի կայսրընտրին, որ Խ. լէոբուտոս
կայսեր փեսան էր, ետքը մեծ զօրագլուխ եղավ
Ֆրանսոզներու, (ան ատենը ստորին նահանգները
սպանիային տակն էին) : Աս բանս 'ի գործ գրին,
տէր ընելով կայսրընտիրը մեծ մասին վերոյիշեալ
երկիրներուն . Ֆրանսոզնալ ան երկիրներէն իրեն
առավ լուչէմպուրկը, շաւլըռուա, նամուր : Աս
բանս ըրին իբր վարձահատոյց ըլլալու համար ան
երկան ծառայութեցը՝ որ պավիէռային կայսրընտի-
րը ըրավ Ֆրանսոյի ու սպանիայի համար՝ նեմցէին
դէմ . բայց աշխըբիս դիպուածը ըրավ որ նոյն ստո-
րին նահանգները ամբողջ անցան Դ. կարոլոս նեմցէ
կայսեր ձեռքը, ան կերպով ինչ կերպով որ 200 տա-
րիէն աւելի մնացերէր սպանիային ձեռքը :

տադող մը, խիստ բարկացաւ աս նոր դաշ-
 նակցութե խօսքին վրայ՝ որ պրուշի թա-
 գաւորը կառաջարկէր նեմցէի իշխաննե-
 րու, իբրև մէկ ուրիշ կայսր մը. մոսկովի
 թագուհինալ թ. կատարինէն դժարցավ
 ան կծու խօսքերու վրայ որ պրուշին հա-
 նաժ թղթին մէջը կային. ան խօսքերը
 կերևար որ իրեն դէմ գրված էին, անոր
 համար ինքնալ ամմէն իր դեսպաններուն
 (որ գերմանիայի զանազան իշխաններու
 քովը կային), մէկ թուղթ մը դրեց օտէր-
 ման կոմսին ձեռքովը՝ որ փոխանորդն էր
 գիւանագրին. ցրցընելով մէջը իր դժարի-
 լը ան սուտ ձայնին վրայ՝ որ իր դաշնակցին
 յովսէփ կայսեր վրայ կրճանձընէին, թէ
 գերմանիայի սահմանագրութիւնը չուզէր պա-
 հել, գերմանական իշխաններուն ազատու-
 թիւնը կրջանայ վնասել: „Մս ձանէրս որ
 „ պրուշէն կելլայ կըտարածվի, ուրիշ բան
 „ չէ կըսէր՝ որ մեր երկուքիս նեմցէին ու
 „ մոսկովին դաշնագրութիւնը իրեն խիստ
 „ դէմ գալով կուզէ ամմէնալ թշնամի
 „ հանել, որ աս կապս քակէ ավրէ մէկ
 „ վախճանի մը համար՝ որ հիմա կըլուեմ,
 „ ետքը երբոր ատենը գայ՝ պիտոր հռչա-
 „ կեմ ամմէնուն: Հիմա ամմէն իշխան ա-
 „ պահով մնան՝ որ ես ոչ երբէք պիտոր
 „ խառնըվիմ, կամ ձեռք՝ օգնութի տամ
 „ անանկ բաներու՝ որ հիմակվան գերմա-
 „ նիայի վիճակը ավրօղ ըլլան „:

Մսանկ թուղթ մընալ քաջսից իշխանը՝ որ
 յովսէփ կայսեր վէզերն էր՝ խրկեց իր դես

պաննէրուն 1785 յունիսի 23. դանկտելով
ան խօսքէրուն վրայ՝ որ սրուչին թագա-
ւորը գրերէր իր հանած թղթին մէջը, ցը-
ցընելով ինչպէս ամմէննալ զրպարտութի
էին, սուտ խօսքէր էին. ետքը կառաջարկէ
որ՝ գերմանական սահմանադրութիւնը պաշտ-
պանելու համար՝ ամմէն գերմանիոյ իշխան-
ները թող մէկ ըլլան նոր կապով մը կապ-
վին կայսեր հետ. աս բանիս համար գեր-
մանիայու իշխաններէն հաւանութի առէք,
թող իրենց կարծիքը յայտնի զուրցեն,
արդեօք իրենց գլխուն հետ կրմիանան կը-
կապվին՝ որ է կայսրը, թէ սրուչին առա-
ջարկած դաշնակցութիւնը կրնեն :

Կայսերական իշխաններէն աւելի պավիէ-
ռայի ժողովուրդը շփոթեցաւ, երբոր լսե-
ցին թէ կայսրընտիրը մօնաքօ քաղաքը
ուր որ կրնաստէր՝ պիտոր ձգէր՝ մանհէյմ
քաղաքը պիտոր ելլար երթար, տակնուվը-
րայ եղան, աս բանիս համար աղերսագիր
(արգուհալ) մը տրվին, անալ պատասխա-
նեց : « Իրաւ է, առաջարկեցաւ ինծի պա-
» վիէռան փոխելու ստորին նահանգներու
» հետ, բայց մէկ հիմնական (թէմէլլի)
» բան մը վճռուված չէ՝ թէ որ ըլլալուալ
» ըլլայ, պավիէռայի ժողովրդեան փաստա-
» կար բան մը պիտոր չըլլայ :

Յովսէփ կայսրնալ տեսնալով որ ասչայի
շփոթութի հակառակութիւն ելալ, իր մտքի
զրածէն ետ կեցաւ, անանկով պատերազ-
մելուն տեղը թղթով լմնցուցին բանը :

Տանձառ Կաղնի Վրայ .

1784—1785 :

Պրուշի թագաւորին միտքը ասչափ դէմ կենալուն՝ աս էր որ, չէր ուզէր ամենեւին աւսդրիոյ տանը մենծնալը, թէ որ մենծնալուալ ըլլայ՝ կրնայէր որ ան ատենը ինքնալ մէկ բան մը փրցընէ, ինքնալ մենծնայ: Իր ասքը խիստ բացած էր տանձքա քաղքին վրայ, որ ինքիրեն մէկ հասարակապետութի մընէ Հանսէարդիա ըսլած, շահաստան քաղաք մը ուր շատ առուտուր կըլլայ, լէհին պաշտպանութէր տակ, վիսդօլա գետին բերանը պալդիկ ծովին վրայ, ուր կըլլայ քէհրիպարին առուտուրը, լէհին բաժանումը չեղած 1772էն առաջ խիստ ծաղկած քաղաք էր, ցորեն, տախտակ, մշղըհ մոմ ամմէն տեղ կըխրկէր, բայց իրէք տար վընէ վեր իր առուտուրը խիստ քիչցերէր: Իս քաղաքս պրուշը կուզէր իր տակը առնել, բայց զիտէր որ առանց կայսեր հաւանութէ չէր կրնար ըլլալ, մանաւանդ առանց մոսկովին հաւանութէր, որ ամմէն հիւսիսային բանէրուն մէջը կըխառնըվէր, անոր ձեռքովը կըդառնային. թէ որ աս երկուքը տանձքա առնելու հաւանութիւր տային, պրուշնալ ասք կըգոցէր պավիէռային փոխ վելուն վրայ, հոգը չէր ըլլար ամենեւին գերմանիային հաւասարակշուութիւր կորսը վելուն վրայ. բայց մոսկովին խիստ դէմ էր որ՝ մէկը տանձքայի վրայ խառնըվի, Ֆիլ

Լէմէնկնալ տանխմառքանալ աս բանիս
դէմ կըլլային :

Երբոր պրուշը տէր եղալ բօմէռէլիային ,
վառմիա , քուլմ շրջանակներուն , մաքսա-
տուն (կէօմրիւք) մը դրաւ վիսդօլա գե-
տին վրայ ծանր տուրք կապելով ամմէն
նաւակներուն վրայ՝ որ ան գետով ապրանք
կրտանէին տանձքա քաղաքը . ինքը պրու-
շը ասանկ ծանր տուրք կառնէր ԼէՏի ա
պրանքէն , իսկ ինքը տանձքացոցմէ կըպա-
հանջէր՝ որ իր ամմէն ապրանքները ազատ
անցնին . աս էր սլատճառը ան դանկատնէ-
րուն՝ որ տանձքացիք ամմէն եւրոպայի առ-
ջին կըգանկտէին :

ԵՏին պաշտպանութիւր միշտ տկար ըլլա-
լով ու իրենց մէջը անմիաբան , չէր կրնար
բան մը ընել պրուշին դէմ . 1784 բանը
հոն հասաւ որ՝ պրուշը զօրք խրկեց ինչպէս
տանձքային դուռը , քաղաքը պաշարեց ,
տանձքացիք ճար չունենալով՝ ան քիչ զօրքը
որ ունէին՝ վտանգաւոր տեղվանքը դրին ,
նեմցէին ու մոսկովին մարդ խրկեցին օգ-
նութի ուղելով : Նեմցէն իր հաւանութիւր
ծածուկ ձեռքի տակէն խրկեց մոսկովին .
մոսկովնալ իր միջնորդութիւր մէջ ձգելով
70 հազար զօրք խրկեց քուռլանտիայի դին ,
24ալ նաւ , 8 Ֆուխաթա , որ բրուսիային
ծովեզերքին վախ ձգէ . ասոնցմէ քանի մը
նաւ 1785 յունիսի մէջ քուօնշգատէն ելան
քօբբէնհայկ գացին , իբր թէ միանան տա-
նիմառքայի նաւերու հետ՝ որ իրեն դաշ-
նադրութեւր կեօրէ մոսկովին պիտոր տար :

Բայց զօրու թիւ ցրցընելէն ետև հրատարակեց որ՝ ինչ որ պիտոր առաջարկեմ հաշտութեամբ համար ուշացուցածին պէս պրուշը՝ թշնամուի պիտոր սեպեմ, պատերազմ պիտոր սկսիմ:

Բայնկ ուժը ասանկ կտրուկ խօսիլը տեսածին պէս պրուշին թագաւորը՝ որոշեց հաշտութիւն ընդունիլ մոսկովին պաշտպան կէնալովը, ինչու որ իր ոտքին ցաւը անընդունակ կընէր զինքը պատերազմելու. իսկ իր եղբօրը հենրիքոս իշխանին յանձնել զօրքը՝ չէր համարձակէր, զիտերալ որ ինքիրմէ չունէր ուժ մոսկովին ու նեմիէին դէմ դնելու: Բայնք մէկալ տէրու թեց, Փրանսան ցրցուց որ՝ ոչ պրուշին առնելը կուզէր և ոչ մոսկովին, քանի մը նաւ պատրաստեց պալդիկ ծովը խրկելու. Ֆիլէմէնկնալ սրտանց մտերիմ դաշնակից ըլլալով Փրանսային հետ՝ յայտնի հրատարակեց որ իմ նաւերս Փրանսային նաւերուն հետ մէկ տեղ կըխրկեմ տանձքային սահմանադրութիւն՝ կացութիւն՝ անփոփոխ պահելու համար, որովհետև Ֆիլէմէնկը իր ապրուստին մէկ մենծ մասը տանձքային նաւահան գատէն կըհանէր:

Բայ բաներս տեսնալով պրուշին թագաւորը Ֆետերիքոս՝ գրեց շվեաի որբեվարի թագուհիին որ իր քոյրն էր՝ աս յիշելու խօսքս: Ո՛վ Բաղդ (1), դուն հալիս երբէք կընայիս մեզի

(1) Բաղդ բառը Փուէնկի լեզուի մէջ իգական սեռի ըլլալով, ան լեզուի կըյարմարցընէ իր բանը:

պէս ծերերուն վրայ, անոր համար պէտք է մեղի որ
էր չաշխիւն, հարիճներուն (կենճերուն) արեղ
սանի, լող սանի որ մեր արեղը անոնի առաջ էր-
նան : Ըսանկով հաշտութիւն աս թէութե
վրայ կապվեցաւ, որ տանձքացիք վիսդօլա
դետին վրայէն ազատաբար անցնին մտնան
սրուշին հողը, սրուշնալ անոնց պէս
մտնայ տանձքային երկիրը ու նաւահան
դիտը :

Ուրիշ մէկ առուաւորի դաշնագրութի մը
նալ եղավ 1785. սեպտեմ. 10. հայա քաղ
քին մէջ, սրուշին ու ամերիկացոց նոր տե-
րութեը հետ 27 թէութիւնէրու վրայ, որ
շատ շահաւոր եղավ երկու դիացի վաճա-
ւականներու :

Յովսէփ հայսեր եօններորդ Ճամբորդուիւր, երէն ու-
ճոսիւնի ըրած հարգաւորութիւր .

1785 :

Ըստ տեւնէրս դ. Ֆերտինանտոս նաբօ-
լին թագաւորը՝ իր թագուհին հետ որ
կրսվէր մարիամ քաւօլինա աւսդրիական,
շատ նաւերով ելան ալիկուռնա դացին, ի-
դալիան ազվոր տեղվանքը տեսնալու հա-
մար, անկից բիզա դացին, հոն դետին վրայ
որ առնօ կրսվի՝ մէկ անուանի կամուրջ
(քէօփրիւ) մը կայ շինված, որ կամուրջի
լսաղ կրսվի. սպակերմընէ հին ալֆեան

ու ոլիմպեան խաղերուն՝ որ յունաստան
կրլլելէր . զանկակատուն մը կայ՝ որուն
ճարտարապետը իր վարպետութիւնը ցըցը-
նելու համար՝ յատուկ կամքովը ծուռ շի-
շիներէ, 18 ոտնաչափ իր գլուխը ծռած
ըլլալով իր հիմանը (թէմէլին) նայելով
անանկ ծուռ կեցած է ան բարձրը աշտա-
րակը բազմութիւն քարէ սիւներու (տիրէկ-
ներու) զարդարված՝ չիփլչիւր : Ասոնք
և ասոր նման զարմանալի բաները տես-
նալով գացին Ֆիուէնցա գեղեցիկ քաղա-
քը, որուն գեղեցկութեանը վրայ զարմա-
նալով ատենօք շվէտի թագաւոր մը՝ ըսաւ .
աս քաղաքը լուր օրերը գոցելու է, միայն
տօն օրերը բանալու է : Աացին բաւմա,
դուռին, ու միլան . ամմէն տեղ իրենց հա-
մար շատ հանդէսներ ուրախութիւններ կը-
նէին . որովհետեւ ան ատեննալ իդալիան
շատոնցվընէ, ծեծ տեսած չըլլալով, մէկ
դրախտ մը կըլմանէր, խիստ առատութե՛
հանգստութե՛ մէջ էր :

Յովսէփ կայսրը լսելով ասոնց ճամփորդու-
թիւնը, ինքնալ նորէն ճամփայ ելալ լոմ-
պարտիա երթալու՝ որ միլանին գաւառն է .
թէպէտ շատ զբաղմունք ունէր՝ բայց չէր
յոքնէր աշխատանքէ, ամմէն բանին կուղէր
խելք հասցընելու : Ա երոյիշեալ նաբօլին
թագաւորը ու թագուհին մայիսի մէջ ման-
գուա հասան, Վէ ըսված տեղը տեսան,
որ ատենօք Աոնծակա ըսված ցեղին զուար-
ճութե տեղն էր, մէջը զարմանալի քաշված
ներով զարդարված, որուն քաշօղը յուլիոս

հռոմայեցի կրօմէր, աս տեղին քաղաքը ⁽¹⁾ հինկ թագաւոր մէկէն տեսաւ ժողովրդած իր մէջը, որովհետեւ նաև լէոբուտոս դօսքանային մեծ դուքսնալ (որ յովսէփ կայսեր եղբարն էր), հոն եկած էր շատ թագաւորազուն մարդիկնէրով:

Երբոր նաբօլին թագաւորը ճէնօվն գնաց՝ յովսէփ ու լէոբուտոս շատ երկան բարակ խօսակցուածի ըրին մէջէրնին, ետքը երկուքնալ ելան միւլան դացին, կառավարուածիը քննեցին, ժողովրդեան աղերսագիրնէրը (արզուհալնէրը) առին: Աս խօսակցուածէս մէջ երկու եղբար հաստատեցին իրենց մէջի եղած դաշնագրուածիը՝ որ յունվ. 31. ըրերէին, թէ աւսդրիական լոմպարտիայի մէջ եղած ժողովուրդը՝ դօսքանայի մէջ օտարական չիտեպվին, վայելեն ան ամմէն իրաւունքը ապրանքի ու երկրի վրայ՝ ինչ որ կրվայլեն բուն դօսքանցիքը. ասանկալ դօսքանցիք լոմպարտիայի մէջ օտարական չիտեպվին, նոյն իրաւունքնէրը ունենան: Աս բանիս դէմ ինչ օրէնքնէր եղած են առաջ՝ ամմէննալ խափօնվին, ինչպէս նաև ան օրէնքն ալ խափօնվի, որ կապսպրրէ ժառանգողին տեղը կամ բնակարանը փոխել, երբոր իրեն ընկած ժառանգուածիը օտար տեղ է:

Շին սովորուածին մը կար՝ ով որ կայսեր

(1) Աս տեղս ան ատենը խիստ շէն էր, հիմա Ֆրանսային խռովուածէ ետև շատ խեղճ է:

առջին ելլար՝ պէտք էր ծունկ չոքիլ ⁽¹⁾,
 յովսէփ կայսրը քննելով աս սովորութեան
 սկիզբը՝ թուղթ հրաման հանեց, որ ասկէց
 ետքը մէկը ծունկ չիչոքի կայսեր առջին,
 ծունկ չիչոքօղնալ յանցաւոր չիսեսլի,
 պատճառ բերելով որ՝ չիվայլէր մարդուն
 տալ ան երկրպագութիւր՝ որ միայն այ կը-
 վայլէ: Ասանկ մարդավարութե վրայ՝ յով-
 սէփէն առաջ ք. կատարինէն մոսկովի թա-
 գուհին աղէկ օրինակ էր արված, որ 1785
 յուլիսի 14 թուղթ հանելով հրամանեց ամ
 մէն մոսկովի մէջ ու պղտիկ թաթարի մէջ
 եղօղնէրուն՝ թէ ասկից ետքը երբոր խօ-
 սին՝ կամ թուղթ գրեն թագաւորին, զի-
 րենք Վերի չիկանչեն, հապա հպարտի (բայէ)
 կանչեն:

Կատարինէին սէրը ժողովրդեան վրայ աւե-
 լի կերեւնար յատուկ հոգ տանելովը անոնց

(1) Կըսեն որ դիտողեախանոս կայսրը ասիացոց մէն
 ծուծիւր սովորութիւր ուղեւով մտցընել, առջինը ե-
 ղավ աս կերպ երկրպագութիւր խօթեց. իրեն յա-
 ջորդնէրը աւելի շացուցին, մանաւանդ ստանալ-
 լու կայսերնէրը, որոնց ուժը քանի որ կըտկարա-
 նար, անչափալ աւելի մեծարանք աւելի խոնարհու-
 թի կըպահանջէին իրենց ժողովրդէն: Աս սովորու-
 թիւնը կայսերնէրէն անցաւ թագաւորնէրուն մէջ,
 նաև զանազան իշխաննէրու մէջ՝ որ մաղրըպնէրուն
 ատենը կիշխէին սպանիա եղած մէյ մէկ թագաւո-
 րութե վրայ, սպանիայէն մտաւ գերմանիայի մէջ
 երկու եղբարնէրուն ձեռքովը որ կայսր եղան, և
 կըսվէին Ե. կարոլոս, ու Կ. Ֆերդինանտոս. անանկ
 որ վեննայի մէջ ուտելինին՝ հագվինին՝ ամմէն բա-
 նէրնին ըսպանիացոց պէս եղավ, թէպէտ և նեմցէ-
 նէրը սպանիացոցմէ բան մը չունէին:

պղտիկ տղոցը ու աղջիկներուն վրայ . ա-
սոնցմէ շատ տղաք իր դարպասը (սերայը)
կառնէր, ինչ ազատութիւն որ կրպահէին
իշխանազուն իր թոռները, անոնքալ ա-
նանկ կրպահէր, թէ մտ կանչել կուտար
զինքը, անոնց տղայական խաղերովը կը
բաղէր կըխանդաղատէր սէր գութ ցըցը-
նելով :

Պրոշի Լաֆաորի Բ . Քետերիքոսի մահը , իրեն
Բնութիւն .

1786 :

Եւ թագաւորներուն բրածը լսելով պրու-
շին թագաւորը Բ . Քետերիքոս ինքնալ ա-
սոնց հետեւեցաւ . որովհետեւ չէր ուզէր որ
աս երկու դաշնակցեալ կայսերք նեմցէն ու
մոսկովը մենծութի մը գովասանք մը ունե-
նան , ինքնալ արդեւեց ամմէն դրսի նշան-
ները երկրպագութե , ասանկ գրելով իրեն
կօկրց զօրասպետին : „ Ետոնցմէ կու-
„ զէի վերցընել , նկատում (սայղը) կընէի
„ որ՝ ուրիշ թագաւորներուն պատճառ չի
„ տամ գանկտելու . առջինը ըլլալով վեր-
„ ցընել մէկ սովորութի մը՝ որ ընդհանրա-
„ պէս արմատացերէ „ : Եայց ուրիշ գիա-
ցէնալ անանկ խիստ հպատակութիւն են
թարկուի կրպահանջէր իր ժողովրդէն , որ
երբոր մէկ լութաւն քարոզիչ մը մովսէս
մարգարէին խօսքովը ուզեց անիկայ խրա-
տել աս բանիս վրայօք , Քետերիքոս ա-

սանկ պատասխան տրվավ : „ Մովսէս իրեն
 ,, իտրայելացիները կըկառավարէր, ինչպէս
 ,, որ իրեն աղէկ կերևնար. ետալ իմ պրուշ
 ,, ներս կուզեմ կառավարել ինչպէս որ ին
 ,, ծի աղէկ կերևնայ :

Ըստ անուանի Թաղաւորս Ֆետերիքոս Թէ-
 պէտ ոտնացաւէն խիստ կընեղէր, բայց իր
 տկարութիւնը չինայելով՝ ձիու վրայ շատ
 կընստէր զօրաց հրամանելու համար. ասանկ
 հրամանելով կարգաւորելով պէսլին՝ մակտէ
 պուրկ՝ և շէղիա եղած զօրքին վրայ՝ բաց
 տեղը կենալով օդը (հավան) իր ծերուէրը
 փնաս տրվավ. երբոր բօցտամ դարձաւ՝
 մէկ չոր հազ մը առավ զինքը 1785. ա-
 նանկ որ ան ձմեռը չիկրցաւ ընտանեաց
 քովը երթալ՝ բարկենդանքը հոն ընել՝ ինչ
 պէս որ սովոր էր : Արբոր իր բժիշկը Սէլ-
 լէ անունով յայտնի ըսաւ իրեն՝ Թէ աս
 տկարութիւնը կընայ փոխվիլ՝ կուրծքի ջրգո-
 ղութի (սրսխայուի) դառնալ, իրեն խիստ
 դէմ եկավ. զիմմերման անուանի բժիշկը
 իրեն քով կանչեց հաննօվէրէն, ան կացու-
 Թիւր հասաւ՝ որ 1786 մարտի մէջ յուսա-
 հատեցաւ իր կեանքէն. պրուեսովիքի որբե-
 վարի դքսուհին Թուղթ խրկելով՝ մէջը աս
 բանս գրեց : „ Ահաւ ատեն, պէտք է որ
 ,, ծերէրը տեղ տան երիտասարդներուն՝
 ,, որպէս զի ամմէն ծնունդ աշխարհ մտնան,
 աշխրհիս խաղը իրենքալ խաղան :

Բայց ասանկալ ըլլալով՝ կառավարու-
 Թեան բաննալ չէր ձգէր կըհոգար՝ ինչպէս
 Թէ ողջ ըլլար. իրեն հինկ մարդ ունէր

խիստ սիրական՝ շվերին կոմսը որ մեծ ա-
խոռապետ (պիւլիւք միրահօռ) էր, հերց-
պերկ վեզիրը, կօկրց զօրագլուխը, բինդօ
կոմսը, և լուքքէզինի մառքէզը, երբոր
բան չէր ունենար՝ ասոնց հետ կըխօրա-
թէր: Արբոր իր ջրգողութիւն խիստ երևան
ելավ, իրեն եկեղեցականներէն մէկը չէր
համարձակէր քովը երթալու, գիտնալով
որ չէր ուզէր. աս բանս իրեն ժողովուրդին
մեծ գայթակղութի տրվավ. միայն կրսէն
որ՝ մօրավեան եղբարք կամ Աւստիդ ըս-
վածնէրը՝ համարձակեցան իրեն թուղթ մը
խրկեցին, որուն մէջը կըյորդորէին յաւի-
տենահան կեանքին հաւատալ. ասոնց պա-
տասխան՝ Ֆետերիքոս իր դիւանադպրին
ապսպրեց որ՝ քաղաքավարութի գրէ ան
բարի մարդիկներուն, որովհետև գէշ չէր
իրենց միտքը:

Ըն աստիճան հասաւ իր ջրգողութիւնը՝ որ
ուռած ըլլալով չէր կրնար մահճի (տէօ-
շէկի) մէջ պառկիլ, աթոռի վրայ կրնատէր,
հոնալ ինքիրմէ չէր կրնար շարժիլ, թէպէտ
խիստ սաստիկ ցաւ ունէր՝ բայց ամենեւին
մէկ նշան մը ցաւի չէր ցրցընէր, հանդարտ
երես ցրցընելով քովիններուն հետ ուրիշ
բաներու վրայ խօսակցութիւն կրնէր, խե-
լացի խօսքերով թղթէր գրել կուտար:
Իր կեանքին մէջը ոչ երբէք այնչափ յօ-
ժարակամ ու հեզահօգի եղած էր, այն-
չափալ խելքը վրան, որչափ որ եղավ
իր ետքի օրերը. օգոստոսի 14 հաց ուտե-
լէն ետև՝ իրեք ժամէն աւելի խօսեցաւ

շվետի Թագաւորին քաջութեցը վրայ, որ կրսվէր կուսդավոս ատօլֆոս, ասանկալ աս դարուս երևելի զօրապետներուն ըրածին վրայ, որ կրսվին վալլէնսդէյն, Թիլլի, եւզինէոս իշխան, լավտօն, սօլթիքօֆ, սու վարօֆ: Ասօղները կարծեցին որ դէպ 'ի ողջութի կերթայ ասչափ երկան խօսօղը, բայց քիչ մը անցնելէն ետև՝ լեզունալ զգայարանքներնալ բոլորովին կապվեցան, նոյն տարին 1786 օգոստ. 17 մեռաւ, 74 տարվան ու կէս, 46 տարի Թագաւորելէն ետև. մեռնելէն ետքը տասը օր անցաւ բօցտաւին եկեղեցնայ մէջ Թաղվեցաւ, ուր որ կրնստէր սովորաբար:

Բայց իր յիշատակը ամենեւին չի Թաղվեցաւ, այլ աս դարուս սլատմութեը մէջ մէկ զարմանալի յիշատակ մը Թողուց իր ըրածներով: Աս անուանի մարդս չափահասակ էր, զօրեղ՝ աւելի իր չարքաշութեը կրպահէր իրեն ուժը, աղէկ կուտէր՝ բայց օրը մէկ ժուժ մը միայն՝ մաճառի ու դօսքանայի գինի խմելով խիստ չափաւոր, իր սեղանին ամմէն խարճը իբրև 24 հազար Ֆիօռինի կը հասնէր տարին. իր հագուստը՝ մահիճը (տէօշէկը՝) ամենեւին պարզ, միայն սպանիայի քթախոտը շատ կը խմէր, յանկարծակի կաթուածէ պահօղ սեպելով:

Աս Ֆետերիքոս շատ գործողութեց մէջ աշխրհիս աղէկ օրինակ տրվալ բարոյականութե, իրեն օրինակին Թագաւորներ ունեցաւ աչկերտ, որոց մէջը մէկնալ թ. յովսէփ կայսրը էր: Աղաւ աշխարհաշէն,

իմաստուն կենցաղակիրթ, վարպետ սլա-
 տերազմօղ, փիլիսոփայ, օրէնսդիր, սլա-
 մագիր, նաև բանաստեղծ. իր բարեգոր-
 ծութեց մէջը կրփայլէ ազգասիրուի, բա-
 րեկարգութի, բաջադործութի, ուսումնա-
 սիրութիւն. իր անձին վրայ կրփայլէ կանո-
 նաւոր վարմունք, զգաստութիւն, կենցա-
 ղակրթութի, գործունէութի՝ որ ամենեւին
 սլարասլ կենալ չիյտէր, ճարպիկուի, արիու-
 թի, չարքաւորուի, ժուժկալուի, ձախորդու-
 թեց մէջնալ անշփոթ երկայնամտուի, անոր
 համար Սէծ Քեթեբէթու ըսվեցաւ: Այնչափ
 էր իր ազգասիրութիւն՝ աշխարհաշինուի՝
 որ սլատերազմներէն հանգիստ մնացած ա-
 տենը 1745էն ինչվան 1756, բոլորովին զբա-
 ղեալ էր իր երկիրը շենցընելու, արուեստ-
 ները՝ գործարանները ծաղկեցընելու. ան
 երկիրներուն մէջ՝ որ անապատի սլես էին՝
 600 գեղի չափ նոր շինեց, չոր անբեր տեղ-
 վանքը՝ կամ լճային ճախին (ճիմ ճիմէ)
 երկիրները՝ բարեբեր երկիր ընել տրվալ:
 Արբոր նորէն դադրեցաւ եօթնամեան սլա-
 տերազմէն 1763էն ինչվան 1768, նորէն
 հոգ տարաւ իր ավրըշտրկած գաւառները
 շտկելու, եկամուտը զօրքը ոտք հանելու,
 անատենը ալ աւելի աղէկ շտկեց իր ամմէն
 բանը՝ քան ինչ որ էր եօթնամեայ սլատե-
 րազմէն առաջ, սրուշին թագաւորութիւնը
 իբր թէ նոր ոտք հանեց, եւրոպային զօրա-
 ւոր թագաւորութեց կարգը անցուց. անոնց
 հետ հաւասարցընելով ան իշխանութիւն՝ որ
 քիչ մը առաջ թագաւորութե անունալ

չունէր. եւրոպային ամսին մեծ գործողութեց որ թագաւորութեց մէջը կրլային, ինքնալ պէտք էր որ խառնուիւն. նոր գեղը րանք շինեց, նոր ժողովուրդներ բերել տրվաւ իր երկիրը, նոր գործարաններ (քերխանայներ) բացաւ, նաւարկութիւնը հեշտ ընելու համար ջրէ ճամփայներ բանալ տրվաւ, որոնց գլխաւորը եղաւ պաօմ պերկին ջրանցքը՝ որ վիսդօլա գետը կրկրպցընէ օտէր գետին հետ. 412 նոր մաքսատուններ (կէօմրիւք) սահմանեց իր ամսին երկրին մէջ. շատ ըստակ տրվաւ իրեն ազնուականներուն՝ որ երեսէ ձգած երկիրները բանեցընել տան. ամսին տարի գրեթէ 3 միլիոն ֆիօռին կրխարձէր իր երկիրները՝ քաղքընէրը՝ շենցընելու, ինչ որ պէտք է՝ հնարելու: Արբոր լեհին կտորը առաւ ան կտորը Արեմտեան պրուշ կոչեց, իսկ իրեն առջի պրուշին երկիրը Արեւելեան պրուշ կոչեց. լեհին կտորովը բացաւ մէկ նոր վաճառականութի մը պալգիկ ծովուն վրայ:

Արբոր իր հայրը մեռաւ, աղէկ կանոնաւորած թողուց իր երկիրը, ու 70 հազար զօրք, բայց աս ֆետերիքոսը ետեէ ետե շատցընելով հասուց 160 հազար հոգի. զինուորներունալ մէկ նոր կրթութիւն մը հնարեց՝ որ մէկ թագաւոր մը չունէր, անանկ կրթութի հետալ մէկ կուրակերպ հնազանդուի մը խօթեց զինուորացը մէջ. ֆետերիքոս ըլլալով անուանի եւգինէոս զօրագլխին աշկերտը, ամսին զինարուեստ

տը ան կատարելութե ծարը հասուց որ՝
անկից օրինակ առին ամին եւրոպայի
Թագաւորները: Ինքնալ ան եօթնամեայ
պատերազմին մէջ գործադրութի օրինակ
ցըցուց թէ ինչպէս պէտք է զինարուեստը
բանեցընել, որոնք առաջները կարգացիր,
ուր մինակ ինքը Ֆետերիքոս նեմցէին ամ-
մէն զօրացը դէմ՝ Ֆրանսզին՝ մոսկովին՝ շը-
վէտին՝ սաքսօնիային՝ ու գերմանիայի կայ-
սերութեանը դէմ դրավ անանկ վարպետ
կարգաւորութի՝ խոհեմուք՝ մեծահոգիութի՝
անանկ գաղտնի զօրութի մը, որ ետեւի եկող
ներուն կարելի է որ անհաւատալի երե-
նայ:

Ըս Ֆետերիքոսէն եղավ դրութի՝ որ եւրո-
պայի մէջէն փափկասիրութիը վերցըվեցաւ
ընդհանրապէս, մէկ չարքաշուի մը մտաւ.
տեսնալով ասանկ Թագաւորին չարքաշու-
թիը ու քաջագործութի սէրը՝ սկսան իրենց
Թուլամորթութիւնը ձգել, կտորձութիւն
ձեռք առնել, մենծէր իշխաններ իրենց
զաւկըները ինչպէս որ մարդու կըվայլէ՝
անանկ կրթել սկսան, խեղեպցած շփացած
մեծցընելը վերուցին, որ է մէկ ընդհանուր
պակսութիւն մը մեր ազգին մէջը հնցած.
քիչ մը հարստութիւն ունեցողները տղաք-
նին անանկ խեղեպցած կրմեծցընեն որ չի-
վայլէր մարդու, շատ փորձանք կրբերէ ի-
րենցալ՝ ծնողացնալ. հիմա անանկ շփացած
մեծցընելը մէկ իշխանազուն եւրոպայիի
քով չես տեսնար: Սէկ զարմանալի խոհե-
մութիւն մընալ ունէր իր քաջագործութեց

մէջը՝ որ ինքնահաւան յանձնապատան չէր
 ըլլար, ինչպէս որ շատ քաջագործներու
 վրայ կը տեսնուի. աս դարուս սկիզբը տե-
 սանք շվետին քաջագործ ժբ, կարուս թա-
 դաւորը յանձնապատան ըլլալով՝ անանկ
 փորձանքներու մէջ ձգեց զինքը՝ որ ամէն
 զօրքը կոտրած, ինքնալ տաճկին քով փա-
 խած, հազիւ ողջ մնաց. դարուս ետքը տե-
 սանք պօնափառ գէն իրեն յաջողուէր վրայ
 յանձնապատան ըլլալով բերելով խորհր-
 դականներու մտիկ չիղներով գրեթէ 300
 հազար իրեն ընտիր զօրքը մոսկովին սառուց-
 ներուն (պուզերուն) մէջը ձգելով, իբր թէ
 իրեն ձեռքովը սպաննել տրվաւ. զինքնալ
 խորունկ ովկիանոսի մէկ կղզի մը մէջ
 քշել տրվաւ. բայց աս Ֆետերիքոս դարուս
 մէջ տեղերը այնչափ քաջագործութեանց
 մէջը՝ մանաւանդ եօթնամեայ պատերազ-
 մին ատենը՝ ասով խելացի փրթաւ որ՝ թէ-
 պէտ բաղդաւոր եղաւ չորս դիացէն յաջո-
 ղութիւն գտնալով, բայց ամենեւին իր բաղ-
 դին չասպաւինեցաւ, ծեծ բացվելուն առջի-
 օրը ինչ վախ ինչ կասկած որ ունէր թըշ-
 նամիներէն, ինչպէս ետքի օրը աչքին առ-
 ջին ունենալով կը գգուշանար, շրջահայեաց
 կը ըլլար, ամօթալ չէր սեպէր իր պակսու-
 թիւնը երևան հանել ինչպէս որ առաջնե-
 ըր պատմեցինք, խոստովանելով թէ եօթ-
 նամեան պատերազմին մէջ եսալ ամէնք-
 սալ զինարուեստին մէջը սխալեցանք, միայն
 հենրիքոս իմ եղբարս և լավտօնը չխսալե-
 ցան, անանկով եղաւ որ՝ ասանկ պատե-

րազմական մարդը՝ իր թագաւորական մահ ճին մէջը մեռաւ, և ոչ ուրիշներուն պէս փորձանքներու մէջ: Այլքոր իր զօրքը քաւ ցընելու ըլլար՝ խիստ կարտորար, շուս մը մէկ տեղէ մէկալ տեղ կը տանէր, բայց բան մը ընելու ըլլար՝ չէր արտորար. առաջ աղէկ մը կը մտմտար՝ ետքը կընէր, ընելու ատեննալ չէր շփոթէր, որչափ ձախորդ երթար՝ սիրտը չէր կոտրէր, երկայնմտութեամբ առաջ տանիլը կընայէր:

Ինչ ըսեմ, թագաւորելու կառավարելու խելքը՝ զօրագլխի վարպետութիւնը՝ փիլիսոփայի վարմունքը՝ աս մարդս միացուց իր վրայ. իրաւ է որ՝ հռոմայեցոց պատմութիւնը շատ կարգալով բարի օրինակ առնելու համար՝ անոնց պատմած երեւելի մարդիկներուն աղէկութիւնը իր վրայ ժողովեց, շիպիոնին իմաստութիւնը՝ Փապիոսին խոհեմութիւնը՝ հաննիպալին ճարպիկութիւնը: Իսկ ուրիշներ կը կարգաս, մէկ դի կը ձգես ըսելով, բիբլիոս սանկ է եղէր, դարբվիսիոս նանկ է եղէր, ինծի ինչ որ կարգամ, վաստակ մը չիբերէր. բայց գիտցիր որ՝ Փետերիքոս անանկ գրքէրը կարգալով, ըստակ վաստակելու ճամփանալ շտկեց, եկամուտներնալ շատցուց: Իմմէն եւրոպացիքալ որ՝ ատեն մը աղքատ էին, հիմա հին ախտանին հարստութիւնը եւրոպիա բերին, ըստրկով լեցվեցան, պատճառը աս է որ՝ առաջ պատմութիւններ կարգալով խելք սորվելու ետեւ ընկան, որովհետեւ խելքն է որ ըստակ կը բերէ, չէթէ ըստա-

կը՝ խեղճ . մանաւանդ հռոմայեցոց պատմութիւնը անանկ խեղճ կըսորվեցընէ որ՝ տղակուցմէ ինչպէս ծերութիւն եւրոպացոց ձեռքն է : Բստակ վաստրկելու ճամփուն առջի բանն է՝ աղգասիրութիւն , եղբայրսիրութիւն՝ մէկմէկու հասնիլ՝ մէկ մէկու օգնել , բարեկարգութիւն , չափաւորութիւն , ճշդութիւն որ փարթամութիւնը (սալթա նաթը) ձգել կուտայ , արիութիւն՝ գործունէութիւն՝ որ ամենեւին պարապ կենալ թող չիտար , թէ որ վաստրկի մը ճամփայ գոցվի , ուրիշ ճամփու մը ձեռք կըզարնէ և այլն . ահա հռոմայեցոց պատմութիւնն ալ լման ասոնք կըսորվեցընէ օրինակներ տալով գործքով չէթէ խօսքով , որոնք ուլ լէնին մէջը գրված են : Բսոնց հետեւելով եւրոպացիք հարստցան , ասոնց հետեւելով նաև Ֆետերիքոս՝ վերի զուրցած կատարելութիւնները վաստրկեցաւ . իր աղգը՝ իր երկիրը շէնցուց պայծառացուց չէթէ մի նակ դուրսէն շտկելով , այլ նաև գրով :

()ըր՝ հինկ ժամ միայն կըքնանար Ֆետերիքոս , մնացած իր ատենը ամմէնը կարգաւորած բաժնրված էր կառավարելու , մուրհակներ (արզուհալներ) կարգալու , անոնց դատաստանը կտրելու , զօրաց զօրապետաց կըթուի (թալիմ) տալու , թագաւորներու և իր իշխաններու թուղթ գրելու , թուղթ առնելու , ատենալ ունէր որոշած կարգալու հետ ըլլալու , երաժշտութիւն բանեցընելու , բարեկամաց հետ տեսնրվելու : Իրեն օրինակ առնելով թուղթիտիտէս ու բօլի-

պիոս հին պատմագիրնէրը, ամենէն աւելի յուլիոս կեսար հռոմայեցին՝ (որ զօրապետ ու կեսար էր, բայց միանդամայն իր յիշատակարանը վարպետ կերպով դրած ունէր,) Ֆետերիքոս շատ կարգալով՝ ինքնաւ անկից օրինակ առավ իր գործքերուն պատմութիւնը գրելու, նաև իր ցեղին (սոյին) պատմութիւնը շինելու. որովհետև առաջ միայն քանի մը անպիտան ժամանակագրութիւննէր կային նեմցէրէն ու լատիներէն, որոնցմով գրիգոր Վեդի ըսվածը՝ պատմութի մը շինելէր սուտը ճշմարտին հետ խառնելով. աս տեսնալով քովի եղած կարգացօղ մարդիկը՝ տեսնալով և Ֆետերիքոսին ըրածնէրը՝ որոնցմով պրանտէմպուրկեան ցեղին անունը անանկ պայծառանալ սկսաւ՝ որ ոչ երբէք անանկ անուն էր հանած, շատ յորդորեցին զինքը աս ցեղին պատմութիւնը շինելու որ չէր ծանօթ. Ֆետերիքոսաւ պարոն հէրցակերկին յանձնեց յարմար նիւթերը ժողովելու. անոնցմով ետևէ ետև պատմութի մը շինեց Ֆրանսզերէն իր առջիննէրուն վրայ. որուն խորագիրն է, (3) իշապակարան պրանտէմպուրկեան ցեղին պատմութիւն : () րէնքի գիրքմընալ հանեց, որով կռուարար մարդիկնէրուն սանձ մը դրավ. դատէրը (տավանէրը) երկնցընելը դադրեցուց. աս օրէնքի մատեանը (քիւթիւկը) 1747ին շտկել ընդարձակել տրվավ անուանի օրինագիտին քօքչէյոս սամուէլի, որ իրեն մեծ դիւանագպիր էր ընել տրված : Սաքքեավէլլի անունով

օրինադիր մը կայ իդալացի որ խիստ օրէնք-
ներ կը սորվեցընէ, անոր գրքին դէմնալ շի-
նեց Ֆետերիքոս 1740ին : Առաւելալ ունի
շինած նաև բանաստեղծուի, որոնցմէ մէկ
բանաստեղծուինալ է պատերազմի արուես-
տին վրայ :

Ասանկ պատերազմական մարդը կը գտնար
ատեն ասչափ գրքեր հանելու, ինչու որ՝
Ֆետերիքոսին սէրը կարդացողութի վրայ
այնչափ էր որ՝ ծանր գործքեր աշխատալի
զբաղմունքներ իրեն արգելք չէին ըլլար
բանասիրական գործքերու հետ ըլլալ, բա-
նաստեղծութեան պարապիլ Ֆրանսոզի լե-
զուով . ինչ բանի վրայ ըլլար՝ կրնար մէկէն
ան խնդրին վրայ խօսիլ պատրաստութիւն
չիտեսած, ինչ պատմութի՝ ինչ առակներ
որ կարդացերէր, աղէկ միտքը պահած ու-
ներ, տեղին կեօրէ կրբերէր կըյարմարցը-
ներ, այնչափ անուն էր հանած՝ որ՝ շքե-
սային սողմն ըսվեցաւ, թէ որ թագաւորա-
կան զբաղմունք չունենար, կերևար որ երե-
ւելի մատենագիր պիտոր ըլլար՝ աղէկալ
բանաստեղծ : Ասոր օրինակը կարդալով
մէկ առանձին չարսըցի մարդ մը, չըսէ որ՝
ատեն չունիմ ետևէ իյնալ գրաբառ լե-
զուն հասկընալու, որուն հերիք է երկու
իրեք տարի . չըսէ որ՝ գիրք կարդալու ու-
սումը՝ ըստակ չիբերէր, ինչ ետևէ իյնամ .
Ֆետերիքոս ըստըկի համար չէ՝ հասպա ինքը
մարդ ըլլայ, ինքը զմայլի, անոր համար ա-
տեն կը գըտնար կարդալու հետ կըլլար :
Արոյիշեալ գործքերէն զատ՝ մեռնելէն

Ետև Ֆետերիքոսին զանազան գրուածնէրը դուրս հանեցին 1788 պէռլին, 10 հատոր. որոնց մէջը իր թշնամիները խիստ կը կոտորէ վար կըզարնէ, իսկ զինքը խիստ կը գովէ. ասիկայ միշտ Ֆրանսոզի լեզուով կը գրէր կըխօսէր, իր նեմցէի լեզուն չէր սիրէր չէր բանեցընէր որ՝ միայն զինուորնէրու խօրաթելու ատեն:

Բայց ասանկ մարդը ասչափ աղէկութիւն ունեցող, ուրիշ դիպքներէնալ շատ պակասութի ունեցաւ. բնութք դժգոհող (թիթիզ) ըլլալով՝ հօրը հետալ՝ իր կնկանը հետալ խաղաղ չիկեցաւ. չէր ուզէր որ մէկը իր հրամանին դէմ զուրցէ, մէկ դժվարութի մը հանէ, փառասէր էր, մտմտալով որ եւրոպայի մենծ բանէրու խառնրվելու համար՝ պէտք էր շատ զօրք ունենալ, շատ ըստակ, անոր համար իր ամմէն բաղձանքը աս երկու բանիս վրայ ձգեց. շատ խորագէտ էր ու հետաքրքիր ուրիշ տէրութեց բանէրը խորհուրդները իմանալու. շատ հեղ մեծ սէր մեծ պատիւ կըցրցընէր դեսպաններուն՝ միայն բերըններէն բան մը առնելու համար: (Դ) Կազաւորները ծաղը կընէր կծու խօսքերով նաև գրուածներով, մանաւանդ եղիսաբէթը մոսկովի թագուհին:

Ըմմէն հաւաքքի թոյլտուութի կուտար իր երկրին մէջը նաև ուղղափառներուն, կըսէր Ֆետերիքոս որ քալիինները ան կըպաշտեն իբր իրենցմէ վար բան մը, լոթուանները՝ իբր իրենց հաւասար մը, միայն ուղղա-

փառնէրն էն՝ որ Խճ իբրև իրենցմէ զերա-
 դոյն կըպաշտեն. անոր համար ուղղափառ-
 ները իրեն աւելի հաւատարիմ ժողովուրդ
 կըսեպէր. եկեղեցականաց ապրանքին չի-
 դպաւ, միայն շէջիայի՝ ու իր տակի եղած
 լեհաստանին՝ մեծ եկեղեցականաց եկա-
 մուանէրը առավ ըսելով՝ Թէ խիստ հա-
 րուստ էին: Հրէաներունալ խիստ երես
 տրվալ, ինչպէս որ ամսդըրտամ ու ալի-
 կուռնա ազատուի ունին՝ անանկալ պրու-
 շին երկրին մէջ շատ համարձակութի ու-
 նեցան. Թագաւորական զարպխանէի՝ եկա-
 մուտի՝ Թիւթիւնի կամ պուռնոթիի գոր-
 ծարաններու վրայ հրէաներէն դրաւ. մէկ
 անուանի հրէայ մը կար եփրեմ անունով
 ուզեց ազնուականի երկիր մը առնելու՝
 Թող չիտրվալ, բայց Թող տրվալ անորալ
 ամմէն հրէաներունալ ուրիշ կալուածներ
 կամ տունէր առնելու. մէնտէլսօն անու-
 նով հրէայ մը կար՝ որ նեմցէի մէջ խիստ
 երևելի կարդացօղներէն մէկը կըսեպվէր,
 Թող տրվալ պրուշի քաղքըցի դրվելու:
 Միայն Փռամազօններուն համարձակուի
 չիտրվալ, իրենց խորհուրդը գաղտուկ պա-
 հելը՝ Փետերիքոսին մեծ կասկած կուտար,
 որուն հետևեցաւ նաև ի. յովսէփ կայս-
 րը: Մտեղագիտութե գուշակութեցալ
 կըհաւատար Փետերիքոս, Թէպէտ դուր-
 սէն վար կըզարնէր. խիստ հետաքրքրուի
 ըրալ տեսնալու մէկ գուշակութե գիրք մը՝
 որ պահված է կըսէին՝ Եհնին հին վանքի
 մէջ, նման գուշակութե յովակիմ արբային,

կամ ան գուշակութի որ կրսվի Նօստուա-
տամուս :

Բայց իր մեծ պակսութիւնը ան եղավ
որ ամենեւին ջնջահաւատ մէյմընէր . իրեն
պէս անհաւատներուալ երես կուտար, հե-
տէրնին կըթղթակցէր, ինչպէս են ալան-
պեռ, էլվէզիոս, վօլգէռ, որ կըխրատէր
կրսէն զինքը ամմէն հաւատքի քահանայնէ-
րը ջնջելու, բայց Ֆետերիքոս մտիկ չի
դրաւ . միայն թէ Ֆրանսայի անհաւատնէ-
րուն երես տալով շատ պատճառ եղավ
անոնց յառաջանալուն . կերևայ որ՝ չիյտէր
իրենց ամմէն միտքը, որոնք կըջանային չե-
թէ մինակ ան չընդունելու, այլ նաև ոչ-
ինչ թագաւոր ընդունելու : Ալ որովհետև
հաւատք չունեցողը խղճմտանքալ չունե-
նար, խղճմտանք չունեցողնալ իրեն ներ-
հական գործքէր կրնէ, բարոյական գործ-
քէրու մէջ հակասականներ կըխառնէ,
Ֆետերիքոսալ ասանկ ըլլալով մէկ գիէն
գութ կըցրցընէր ժողովրդեան վրայ, մէ-
կալ գիացէն անգութի պէս կըվարվէր,
ինչ որ խօսք կուտար՝ չէր պահէր, իր դաշ-
նագրութիւնէրնալ որ չէզոք տէրութեանց
հետ ըրերէր՝ չէր բռնէր, ան սկզբան վրայ
երթալով որ կրսվի Այճէ պէօյէ օլտ : Ինքը
մաքքիավէլլիին խստութեւր դէմ գրեց,
ինքը նոյն խստութիւնէրը բանեցուց զանա-
զան տեղ նաև գերմանիայի ու սաքսոնիայի
մէջ, որ անապատ դարձուց . սուտ ըստակ
բաժնեց ժողովրդեան . վերջապէս ինքը
խղճմտանք չունէր, բայց կուզէր որ՝ ամմէն

իր ժողովուրդը հստատակները (րայէնէրը) խղճմտանք ունենան, իրեն խիստ հնազանդ մնան. բանսարկուծիւր առանց խղճմտանքի իբր գործիք մը կը բանեցընէր իրեն բանին առաջ երթալու համար :

Վեցէի մէջ ճանապարհորդին նահանգներուն մէջ եղած խռովութիւնը յովեի կայսեր հետ .

1786 :

Յովսէփ կայսրը ինչ կարգադրութիւն որ կընէր քաղաքական և եկեղեցական՝ միտքը աս էր որ՝ ժողովրդեան աղէկուի ըլլայ, բայց ժողովրդեան մէջ օրէօր ճշգոհանքը կը շատնար, պաղուծի կ'լինար. իրեն մտածածները մենծ մենծ բանէր էին, ազվոր կերեւնային, բայց ան մենծ բանէրն էին՝ որ վտանգաւոր կը ըլլային, ու գործ դնելը դժվարին. իր իշխանութիւնը մէջ շատ տարբեր ժողովուրդներ ունէր, որ տարբեր կառավարութիւն կերթային, իր բաղձանքը աս էր որ՝ տարբեր կերպէրը վերցընէ, ամմէնալ մէկ կառավարութե մէկ վարմունքի տակ խօթէ, իր ամմէն երկիրը միակերպ մէկ կանոնաւորում մը ունենայ : Ար է ազվոր մտածմունք՝ ու կառավարութիւնը հեշտ ընօղ (խօլայցընօղ) . բայց պատմութիւնը կը սորվեցընէ որ՝ ասանկ ուզողներ շատ եկերեն աշխրհիս վրայ, որոնք որ ասանկ բանի ձեռք զարկերեն՝ շատ խռովութիւններու մէջ ընկերեն, ետքը դեղ աս գտերեն՝

որ խաղաղութիւն պահելու համար (որ ամ
մէն բանէն վեր է), ամմէն ազգ՝ ամմէն
ժողովուրդ՝ իրենց սովորութիւն մէջ թու
ղուն. ինչու որ՝ աս նորութիւն ներհակ կու
գայ տարբեր ոգիներու, տարբեր սովորու
թիւններու և ունակութիւններու, որ այնչափ
տարբեր ժողովուրդ իրարու դէմ ունին.
աղէկը ան է՝ որ ամմէննալ թողվին իրենց
սորվածին մէջ, չփոխվին իրենց արտու
նութիւնները՝ իրենց սահմանադրութիւն
ները՝ որ իրենց առջինները, իրենց դաշ
նադրութիւնները, և ատենը ընել տը
վերեն :

Յովսէփ կայսրը եկեղեցական բաներու
մէջ աւելի կուզէր խառնըվիլ շտկել, բայց
ասիկայ էր նիւթ մը աւելի վտանգաւոր,
կրնար չափը անցնիլ ու խղճմտանքի դպչիւ
իր վեզիրը քաջից իշխանը որ երևելի էր
փիլիսոփայութե ու կենցաղակրթութեան
մէջ՝ շատ բանի կը յորդորէր յովսէփ կայսրը
ընելու, բայց միանգամայն իր առջին կողմ
ներ վտանգները՝ որ կրնային հետևիլ. յով
սէփ միշտ աղէկութիւն մտածելով որ կըր
նային առաջ գալ՝ և ոչ երբէք ձախորդու
թիւնը, միանգամայն իր ուժին ապաւինե
լով՝ որ ան ատենը 300 հազար զօրք ոտքի
վրայ պատրաստած ունէր, կուզէր որ իր
ըսածը առաջ երթայ. ամմէն ընդդիմու
թիւնները միտքը դրերէր ոտքի տակ առ
նել :

Իր մէկ ժողովուրդը որ խիստ կը տարբերէր
ուրիշներուն կառավարութիւններէն՝ էր ստու

րին նահանգներուն ան կտորը՝ որ իր տակն էր, կըսվէր նաև Ալէլիա, ըստ մեզ Ղեզզիա. ասոնք ինչպէս որ իրենց արտունու թիւներով նեմցէին տակը անցան, ասանկալ խիստ վրէժխնդիր էին որ պահվին ան բաները: Արբոր գատվեցան Փիլէմէնկներէն հերետիկոսութի մէջ ընկնելուն պատճառով՝ աս ստորին նահանգները կամ պէլճիները խիստ յարեալ մնացին ուղղափառ հռոմէական եկեղեցւոյն՝ գրեթէ ամ մէն ժողովուրդէն աւելի. կայսեր ըրած նոր կանոնաւորութիւնը խիստ դէմ եկավ պէլճիներուն կամ բեղգացոց, որոնց սիրտը արդէն ավրոված էր կայսեր ըրածին վրայ, որ իրենց երկիրը կուզէր պավիէ-
ուային հետ փոխել:

Նոր ըրած կարգաւորութիւնները ասոնք են, ստորին նահանգները ինը շրջանակ կամ նոր դաւառ բաժնել, նոր օրէնք ու նոր ոճ կամ կերպ բռնել քրէական ու քաղաքական յանցանքներու համար, տուրքերու վրայալ նոր կանոն դրաւ, որոնց վրայ ինչ վան ան ատեն իրենց դատաւորները կը խառնըվէին. եկեղեցական բաներու վրայ երկու տարին հեղ մը թեմական ժողով սահմանեց, ան ժողովին մէջը ժողովրդապետ քահանայները վիճակ ձգելով որոշեն ինչ որ պէտք է որոշելու. ամմէն եղբայրութիւնէր՝ հարուստ արբայութիւններ ու վանքեր վերցուց, թափօրները՝ ուխտագնացութիւնները արգելեց, միայն մարմնոյ և արեան տօնին թափօրը թողուց, մէկ թա

փօրի մընալ հրաման տրվալ երբոր որ ե-
 պիսկոպոսը ուղէ թափօր ելլալու հարկաւո-
 բութէ մը համար՝ ինչպէս ըսեմ անձրևի
 համար . թափօրնէրուն մէջ քնար զարնել
 (չալղը չալել) , պատկեր խաչվառ տանիլ ,
 արուեստաւորաց (էսնաֆնէրուն) նշաննէ-
 ըը տանիլ (ինչպէս որ կընէին ,) ասոնք ամ-
 մէնը արգելեց , եղբայրութիւնէրը վերցուց :
 Քայց ամմէն բանէն աւելի իրենց դէմ ան-
 եղաւ որ լովանիոյ համալսարանին մէջ՝
 (որ խիստ երևելիներէն մէկն է անձաբա-
 նութեան դիպէն) , ամմէն վարպետնէրը՝
 վերակացունէրը՝ ու վարդապետութիւնէրը
 փոխեց , նոր վարպետնէր դրաւ , որոնց
 վարդապետութիւնը հեռու ըլլալով իրենց
 առջիններէն՝ ամենեւին հաճոյ չեղան , քա-
 նի եպիսկոպոսական դպրոցերէց կային հոն՝
 գոցեց , ամմէնը ժողվելով մէկհատիկ դպրո-
 ցերէց ըրաւ ընդհանուր . մէջի աշկերտնէ-
 ըր չիհաւնելով իրենց նոր վարպետնէրուն
 վարդապետութիւնը՝ որ շիտակ ուղղափա-
 ռական չէին , գանկատ վերուցին իրենց
 մեծաւորնէրուն ու եպիսկոպոսնէրուն , եր-
 բոր մտիկ չըրին՝ սկսան բռնութիւն ընել , մէ-
 ջի բանէրը սլատուհաններէն վար նետել :
 «Պրուսսէլ քաղքէն զօրք եկան վրանին՝ հա-
 զիւ ասոնք զսպեցին , աշկերտներէն երսուն
 հոգի բանտը դրին . շատ եպիսկոպոսնէր՝
 կամ այլ ուրիշ եկեղեցականնէր որք քշե-
 ցին , որք բանտը դրին , որպէս զի վախցը-
 նէն նոր կարգադրութիւնէրը բռնել տան ,
 բայց անով աւելի կատղեցաւ ժողովուրդը :

Աւրիշ մէկ դիտուածմընալ եղաւ սրբա-
 զան պապին վեննա դալէն քիչ մը առաջ .
 էյպէլ անունով մէյմը մէկ պարտաւագիրք
 մը հաներէր սրբազան պապին դէմ, որուն
 վրայ սրբազանը գանկտելով թ. յովսէփ
 կայսեր՝ կայսրնալ արգելէրէր ան գիրքը .
 հռոմալ դատասարտելով իր վճռին քանի
 մը օրինակները 1786 խրկեց պրուսսէը
 նստօղ իր նուիրակին, որ պէլճիային մէկ
 քաղաքն է, որպէս զի ան օրինակները
 խրկէ Ֆիլէմէնկ ու ինկիլգէառա, որոնց
 վրայալ աս նուիրակը կըխառնրվէր. քանի
 մը օրինակալ մալինէսի արքեպիսկոպոսին
 ձեռքը անցան : Աս պղտիկ բանը խիստ
 դէմ եկաւ յովսէփ կայսեր նոր կարգա-
 դրուածէր, որ հրամայերէր թէ՛ դուրսէն
 եկած թուղթ մը չիհրատարակվի, ինչվան
 որ աշխարհական կառաւարէն հրաման չէլ-
 լայ, նուիրակը զինքը արգարացուց, բայց
 իրեն հրաման եկաւ ու թն օրվան մէջ սլը-
 րուսսէլ քաղքէն դուրս ելլալ, իսկ տասնը
 չորս օրվան մէջ ամմէն աւսդրիոյ ստորին
 նահանգներէն՝ կամ որ նոյն է պէլճիայէն .
 մալինէսին արքեպիսկոպոսին յանդիմանու-
 թի տրվին, նամուրին եպիսկոպոսին եկա-
 մուտը առին, վանքի մը մէջ քշեցին :

Ստորին նահանգներուն հառաւարութիւն փոխելուն
համար խառնութիւն կէ՛վէնայ .

1787 — 1788 :

Յունվ. 1. 1787 յովսէփ կայսրը ստորին նահանգներուն մէջ նոր խորհուրդ սահմանեց ընդհանուր կառավարութե, նոր կարգ դատաստաններու, ինչպէս որ էին ուրիշ աւսդրիական կամ նեմցէի երկիրներու մէջ, ասկէց աւելի եղավ ընդհանուր խռովութիւն, որովհետեւ ասով բոլորովին կրփոխէր ան գաւառներուն կառավարութե կարգը, և նոր բաժանմունք կրճգէր գաւառներուն մէջ : Պապանդին իշխանները ապրիլի 17 մէկ եղան բողոք վերուցին թագաւորական կառավարներուն՝ որ աւսդրիական կամ նեմցէի ստորին նահանգները կրկառավարէին, թէ աս հրամանս կրջնջէ մեր արտունութիւնները, ոտքի տակ կառնէ ան երդումը՝ Սրախաւի հոսքս վաճ՝ որ կայսրը կրնէ երբոր ազգը դուքս կրգնէ զինքը պապանդին վրայ : Ինչ կառավարները՝ որ էին արշիդքսուհի քրիստինան յովսէփ կայսեր քոյրը, և իր ընկերը ալպերդոս սաքսոնեան դէջէն՝ ասանկ պատասխան տալով խաղաղցուցին իշխանները, մենք կախ կըթողունք, ՚ի գործ չենք դնէր ինչլան դրենք կայսեր, նայինք ինչ պատասխան կուգայ . բայց ժողովուրդը տեսնալով ան վերակացունները (որ աս փո

փոխու թիւ պիտոր ընէին), վանքի մը մէջ
 ժողով կրնէին, գնաց վրայ հասաւ, թղթեր
 նին նայելով իմացաւ որ աս կախ թողու
 նէրը ամմէնը դրսը վանց էին, կարծելով
 որ զիրենք խաբելու համար կրնեն՝ խիստ
 կատղեցան, հարկ եղավ որ առէմպերկ
 դուքսը երևնայ ամմէն եկեղեցականներով,
 բայց իրենք չիտաղաղկեցան, զէնք առնե-
 լու պատրաստը վեցան:

Յովսէփ կայսրը ան ատենը խրրըմին քեր-
 սօն քաղաքը ըլլալով՝ քաջից իր վեղիրը
 (որ արդէն միշտ խրատ կուտար յովսէփ
 կայսեր նորու թիւ չընել ստորին նահանգնէ
 ըրու մէջ,) հաստատեց կառավարներուն
 ըրածը, որ էր կախ թողու բաները՝ ինչ
 վան որ կայսրը իմանայ՝ նոր հրաման մը
 հանէ. երբոր յովսէփ իմացաւ, քերսօնէն
 արտորնօք ճամփայ ելավ ետ դառնալու,
 լէմպէռկ որ կրսվի նաև իլվով հասածին
 պէս, մերժեց ոչնչացուց իր վեղիրին կախ
 թող տալը, հրամայեց որ վեննա գան թա-
 դաւորական կառավարները, որ էին ար-
 շիդքսուհի քրիստիանան իր քոյրը, և պէլ-
 ճիօյօզօ կոմսը, որ ան գաւառներուն կա-
 ռավարութիւնը երեսփոխան էր, նաև իշ-
 խաններուն ու գաւառներուն նուիրակնէ-
 ըրուն հրամեց գալու՝ որպէս զի խորհուրդ
 ընեն, աղէկ եղանակ մը գտնան գործ դնել
 տալու: Եւ բանիս վրայ շատ զարմացան
 պէլճիային իշխանները, կտրուկ խօսքերով
 հասկըցուցին թագաւորական կառավար-
 ներուն որ ինչ չարիք կրնան հետևել, բայց

երբոր նորէն զօրաւոր թուղթ եկավ կայսերմէն՝ որ զիրենք վեննա կրկանէր, շուտ մը ճամփայ ելան վերոյիշեալ արշիղքսուհին ու երեսփոխանը, վաթսունալ նուիրակ. իշխանները ապսպրեցին աս նուիրակներուն առաջ իրենց հնազանդուիլը ցըցընել յովսէփ կայսեր, ետքնալ հասկըցընել որ՝ ամմէնքսալ ետ չենք կենար մեր արտունու թինները պաշտպանելու :

Արբոր պէլճիային 60 (ըստ ոմանց 66) նուիրակները ճամփայ ելան վեննա երթալու՝ յովսէփ կայսրնալ իր նուիրակները պէլճիա կրխրկէր, որ էին 60 հազար զինուոր. աս զինուորները լուքսէմպուրկէն՝ Ֆրիպուրկէն՝ և ուրիշ տեղերէն դալով պաշարեցին սրուսսէլ քաղաքը : Իշխանները զօրաւոր թուղթ տրվին կայսեր աղաչանքի, որ աս նորութիւններս չընէ, կայսրը միշտ հաստատուն կեցաւ իր մտքին վրայ, միայն թէ պէլճեան նահանգներուն արտունու թինները հաստատելու խօսք տրվալ թէ որ իշխաններնալ քանի բան կայ որ կառավարութի կարգադրութի ներհակ է, սն բաները վերցընեն. իշխանները շուտով ետ դառնալով սկսան գործ դնելու, բայց լուանիոյ համալսարանին փոփոխուելը վրայ՝ ու ընդհանուր մէկ հատիկ դպրոցերէց ընելուն վրայ՝ շատ դէմ կեցան. ամմէն բանէն աւելի իրենց արտունութիւր դէմ աս բանս կըսեպէին : Այստեղ զիացէն կըբռնադատէին որ հնազանդին. մէկ անգամմընալ 1788 յայտնի հրամաւելով բացին դպրոցերէ-

ցը, բայց աշկերտներէն մէկնալ չի գնաց. թօփէր տարին լովանիա, պռապանդին խորհուրդը կամ ատեանը մէկ տեղ մը ժողվեցին, զինուորներով պաշարեցին ըսելով, ասկից չէք կրնար ելլալ, ինչպէս որ չի հնազանդիք նոր կարգադրութե կայսեր, բայց բազմութիւն ժողովրդեան մէկ եղան մենծ հրապարակին մէջը՝ սկսան զինուորները քարկոծել, զինուորներնալ ժողովուրդէն զարկին սպաննեցին: Աշխանները հաւանութի տրվին կայսեր հրամանը կատարելու, համալսարանին վերակացուն ու վարպետներէն շատը քշեցին, որոնք ետքը թէպէտ կանչեցին բայց չեկան. անանկով ան ծաղկեալ համալսարանը ու դպրոցերէցը անապատ մնաց. ան ատենվան խաղաղինալ սուտ եղավ, վրէժխնդրութե կրակը սրտերնին մէջը կրվառէր:

Ատքը օր եղավ որ՝ յովսէփ կայսրը զղջաց իր ըրած նորութիւններուն վրայ, ինչպէս որ պիտոր պատմենք, սրբազան պապը միջնորդ բռնեց որ՝ պէլճացոց սիրտը ինջեցընէ. բայց շատ ուշ իմացաւ թէ աղէկ է եղեր ծերերուն խրատը մտիկ դնել, քան թէ իր մտքի դրածին հետևիլ:

Սպանիայի Ռաֆաաորին ըրած շինութիւնները ,
 Կարֆաաորութիւնները , Կենցաղօգոսոս
 Գործքերը :

Ընտանն որ՝ նեմցէի մէջ յովսէփ կայսրը
 նոր նոր կարգաւորութիւններ , սպանիայի
 մէջնալ երրորդ կարողութեալ թագաւորը կը-
 նէր , բայց աս տարբերութիւնս ունէին որ՝
 յովսէփ կայսեր ըրածներուն շատը խռո-
 վութիւն կը հանէին , իսկ կարողութիւն ըրածնէ-
 րը ուրախութիւն կը բերէին : Ըստ մեծագործ
 թագաւորս միշտ բաղձալով որ իր հայրե-
 նիքը ու թագաւորութիւնը շէնցընէ փառա-
 ւորցընէ , իր գանձը բացաւ , շինութիւններ
 ընելու՝ ուսումներ ծաղկեցընելու խարճեց ,
 որոնցմէ մէկ քանին վերը պատմեցինք , մէկ
 քանինալ հոս պատմենք :

Տեսնալով կարողութեալ որ հին պատերազմերը՝
 թշնամիներուն մանաւանդ մուղրի արալը-
 ներուն յարձակմունքը՝ շատ ավրըշտը կեր-
 էին քակերէին հասարակաց ճամփայնէ-
 րը , հին հռոմայեցոց մեծագործութիւնը ձեռք
 առնելով՝ ամմէն գաւառներու մէջ շինել
 շտկել սկսաւ , լեռները վար առնել տը-
 վալ , դաշտերը ձորերը (օվաները տէրէ-
 ները) բարձրցընել տըվալ , հեղեղատնէ-
 րը (տէրէին ջուրերը) ճամփայնները չափը-
 լու համար՝ անոնց ուրիշ ճամփայններ բա-
 ցաւ . գետերուն թուամբ շինեց եզերքնին
 (քէնարնին) բարձրցընելով , վրանին կա-
 մուրջնէր (քէօփրիւնէր) շինել տըվալ ան-

ցուգարձի . ջրանցքներ բանալ տրվավ մէկ ջուրը մէկալ ջուրին հետ խառնելով, որ նաւերը ջուրին վրայէն բերելով բեռները՝ առուտուրը հեշտ (խօլայ) ըլլայ . որոնց մէջ ամմէնէն երեւելի եղավ արակօնային ջրանցքը՝ որ սառակօցցաի մօտիկ է, աս ջրանցքը որուն վրայ հազարաւոր մարդիկ բանեցան՝ անբաւ ըստակ խարճելով բանալ տրվավ . կինջնայ ասիկայ ան ճամփին՝ որ մատրիտէն միլլէֆլօռէս նաւահանգիստը կրտանի դօռնէո լեռան տակէն . անանկով սպանիային մէջ տեղէն անցնելով՝ ճերմակ ծովը ովկիանոսին հետ կրկպցընէ, խիստ դիւրութի կուտայ վաճառականնէրուն ամմէն կերպ ծանր բեռ ինջեցընելու : Վաւահանգիստները նորոգել տրվավ . թէր սանէնէրը ճէպխանէով ու ամմէն կերպ ղէնքէրով լեցուց :

Սիէռա մօռէնա ըսված անաստաներ կային՝ ուսկից ճամփորդները կրսոսկային անցնելու՝ բնակարան աւազակներու ըլլալուն համար, աս աշխարհաշէնը կարողոս հոն տեղվանքը նոր նոր գաղթականներ ժողովուրդներ բնակեցուց շէնցուց : Սատրիտ սպանիային թագաւորանիստ քաղաքը առաջ մէկ խառնափնդոր խեղճ քաղաք մընէր, կարողոս նոր շէնքեր շինել տալով վարպետաբան ճարտարպետութե կանոնին կեօրէ, եւրոպային աղվոր քաղաքներէն մէկը ըրավ : Սոր նոր հասարակաց դպրատուններ, ճեմարաններ, համալսարաններ, մատրիտի մէջ և ամմէն իր

Երկրին մէջ՝ որը նորոգեց, որը նոր հիմնեց,
ինչ որ տգիտուէ մտած կար՝ շտկեց: Տպա-
գրութե հարկաւոր արուեստը որ սպանիա
իր կոսպտութեը մէջ անհող թողուցած էր՝
աղվորցուց:

Ուսումը և ուսումնականքը խիստ կրմեծա-
րէր, առատածեռնութիւն կրթարերարէր. տըն
կաբանութիւն և բնալուծութիւն (քիմիակա-
նութիւն) շատ ծաղկեցուց, թէպէտ երա-
ժըշտութե ու ներդաշնակութե դէմ չէր
ինչպէս որ կրճանձընէին, բայց ուղեց սանձ
մը դնել իր արքունեացը մէջ՝ որ ան դիւ
ծայրը անցնելով կըսիրէին երաժշտական
երգերով խաղէր խաղալ կամ քօմէտիա,
օրինակ կրթերէր իր մեռած եղբօրը Պ.
Ֆերտինանտոսի սաստիկ մոլեալ կիրքը՝ որ
ասանկ տեսարաններու ունէր: Վամէն վար-
պետներ որ սպանիա կերթային լեզուներ
սորվեցընելու՝ դալեան, Ֆրանսոզ, ինկիլիզ,
նեմցէ ու մաճառի լեզուներ, ամմէննալ ա-
ղէկ ապրուստ կըդանային կարողութիւն օրը:
Վեղեցիկ ըսված արուեստներնալ ծաղկե-
ցուց, իսկ ինքը անանկ աղէկ ճանցցօղ
էր արուեստներուն ձեռագործները՝ որ
իր ամմէն երկրին մէջը չիկար անոր պէս
աղէկ հասկըցօղ. ինքնալ սղնծի վրայ սըր-
բազան պատկերներ կըփորէր: խիստ կը-
պատուէր պատկերհանութեան արհեստը,
սիրտ կուտար, վարձ կուտար. ասկէց ե-
ղավ որ ռափայէլ մէնկս պատկերհանին
յարգը (խըյմէթը) աղէկ ճանցցաւ, ո-
րուն քաշվածները երբոր նաբօլի էր՝ տես-

նալով իր առջի սլատկերհանը ըրավ, շատ պարզեանէր տրվավ իր կենդանու թէ ատենը, և թէպէտ մէնկանալ շատ հալածում քաշեց՝ ինչպէս որ հասարակօրէն կըստատահի վարպետ մարդիկնէրուն, բայց կարողոս անոր մեռնելէն ետեալ շատ բարեբարուն ըրավ իրեն տանը, որուն քաշված սլատկերնէրը անուանի են. ասանկալ քառմօնա անունով վարպետ փորողին շատ բարերարութի ըրավ կարողոս:

Ս երջապէս սպանիայի մէջ ինչ գիտութի կամ գեղեցիկ արուեստներ սորվելու բանէր կան, ինչ ձեռագործներու գործարաններ (քերխանանէր), ամմէնալ աս դ. կարողոսին արդիւնքն են: Սնչ ալ գեղեցիկ բան կըլլայ աշխրհիս վրայ՝ երբոր հարստութե հետ կըմիանայ մեծագործուէ և բարերարութե առաքինութիւր:

Ֆիլէմէնիէն ու պրուշին մէջ եղած պարա-
հայնութիւր.

1783 — 1786:

Ս էկ նոր գիտութի (խրրիսը) մը սկսաւ աս տարվանս մէջ 1783 Ֆիլէմէնկին ու պրուշին մէջը երկու բանի համար. մէյմը որ Ֆիլէմէնկը նոր տուրք եվելցուց ամմէն նաւերուն վրայ, ինչ նաւ որ իրեն նաւահանգիստները կըմընային, որպէս զի ըստակ ժողովէ, իր պարտքը վճարէ որ վերոյիշեալ սլատերազմին սլատձառովը ը-

րավ, խաղաղութե՛տ տեսննալ շատկեկ զօրք
 ոտքի վրայ սլահէ, հիմա սրուշը չէր ուզէր
 որ՝ աս էվէլի տուրքը իրեն նաւերը վճա-
 րեն : Փորձը սորվեցուց Ֆիլէմէնկին՝ որ ի-
 րեն հարստութիւնը առանց ուժի բանի մը
 չէր իգար, երբօր քովը իրմէ ուժով զօրա-
 ւոր տէրութիւնէր ունի՝ որոնց մէկը զինքը
 մէկ դի կըքաշէ, մէկալը՝ մէկալ դի :

Երկրորդը աս էր որ՝ Ֆիլէմէնկը շղատ
 հալդէռին՝ այսինքն իր գլխաւորին իշխա-
 նութիւն քիչցուցերէր, պատերազմի համար
 խորհուրդ կամ՝ ատեան մը կար՝ անիկայալ
 վերցուցերէր, հոն եղած օռնութեան տան
 նշաններնալ՝ զէնքերնալ՝ հաներէր : Եւ
 տարաձայնութիւնը շղատ հալդէռին վրայ
 շատ հնուցմէ սկսված պատճառներ ունէր,
 բայց նոր պատճառները ասոնք են . առջի
 պատճառը գանկտելու Ֆիլէմէնկի իշխան
 ներուճն աս էր որ՝ շղատ հալդէռը ցամա-
 քին զօրքը գէշ կրկառավարէր . 1784էն
 սկսեալ ինչ վճարք որ տրվին կրսէին զօ-
 րայ համար՝ մէջէրնին մէկ աղէկ զօրք մը
 չիգտանք պատերազմելու համար . խիստ
 շատ հաղարապետներու (ուՖՖիցիալնէ-
 րու) համար վճարք կառնէր մէնէ, ետքը
 իմացանք որ կրսէին այնչափ հաղարապետ
 չիկայ եղէր, եղածներնալ դրեթէ ամմէն-
 նալ դրսեցի . ասկէց զատ զինուորական
 պաշտօններնալ կըծախէր, ով որ շատ կըվը-
 ճարէր՝ անոր կուտար . իսկ իր շղատ հալ-
 դէռեան ցեղին մարդիկներուն՝ ձրի (պա-
 տէհավայ) կուտար իբրև արդիւնաւոր մար-

դիկներու, Ֆիլէմէնկի հասարակապետութեան մարդիկներու չէր խտար :

Ըստ յանցանքները ու ալ ավելի կը ձգէին վճարներու գումարը իշխանին վրայ, որ կըսէր լուիզ եռնէսդօ դուքս պրունզվիքի, շղատ հալաբուին և ինկիլիզի Թագաւորին քեռին էր, Ֆիլէմէնկինալ Ֆելտ մաւուէշալն էր : Ըստ բաներուս համար իշխանները ուղեցին որ շղատ հալաբուին հրաժարի իր իշխանութիւնէն, խոստանալով որ իրենք առջինին պէս իր եկամուտը (կէլիբը) վճարեն իրեն : Ըստ յանցանքսալ կը ձգէին ասոր վրան որ որովհետեւ միանգամայն կառավար էր պօսիզ դուքսին՝ երբոր Ըստ քաղաքը նստօղ իշխանները մէկ սուրհանդակ (Թաթար) մը խրկեցին սահմանագլուխ բերդերը զօրաց համար՝ ասիկայ ինքիրմէ բռնեց արգելեց ան սուրհանդակը : Բայց աս բաներս պահանջօղ՝ միայն երկու գաւառներն էին, այսինքն՝ օլանտան ու Ֆրիզիան :

Ըստնց մտիկ չի դնելով օրանժեան շղատ հալաբուին՝ իրեն արդիւնքները կուզէր յիշեցնել տալ՝ որ քառսուն տարվան մէջը ըրերէր Ֆիլէմէնկ ազգին վրայ . մէջերնին շատ մտնօղներ եղան որ շտկեն, մանաւանդ մեռնօղ պրունզին Թագաւորը ք. Ֆետերիքոս՝ շատ հեղ մէջ մտաւ յիշեցնելով իշխաններուն որչափ շահաւոր կըլլար պաշտպանելը օրանժեան տունը իր մտիկ ազգականը, ասանկալ վերջոյ իշխալ լուիզ իշխանը որ իր կնիկանը Թագուհիին եղբարն էր,

կըյորդորէր նոյն պրուշին թագաւորը՝ որ շղատ հալդէօը առաջուցմէ ինչ իշխանու թի ու արտունու թի ունէր՝ անոնք ամմէնը իրեն դարձնէ Ֆիլէմէնկը : Ասոր վրայ առաջ մէկ թուղթ մը խրկեց ընդհանուր իշխաններուն աղէկ բարեկամական խօսքերով, բայց չորս ամիս համբերելէն ետե՛ տեսնալով որ պատասխան մը չիտրվին, կըրկին դրեց սպառնալով. որուն մէկ գոռող կերպով մը պատասխանեցին՝ թէ դրսի տէրու թի մը չունի իրաւունք մեր սահմանադրութե՛ր խառնըվիլ, իսկ սարսաւադէտ դրբերուն համար՝ որոնց վրայ պրուշը կըգանկտէր՝ ըսին որ՝ որովհետեւ մեր հասարակապետութե՛ր մէջ ազատութի տրված է տպագրութե՛, անկէց դուրս բան չիկայ եղած, բայց թէ որ չափէ դուրս բան մը ըլլայ, ան ատենը կընայինք որ զսպենք : Անը ասանկ իյնալով շահ մը չեղավ. շղատ հալդէօին դէմ եղողները աւելի կատղեցան, թէպէտ և իշխանները անչափ դէմ չէին :

Այլ հասարակապետութե՛ մը մէջ՝ որ ազատութիը իրեն հիմն (թէմէլ) դրերէ, հարկաւորսպէս ան ազատութիը (որ է քէֆինէ շարժիլը՝) մէջէնին ասանկ տարածայնութի ու գոտութի (խըրխըր) կըբերէ, ամմէն խոհեմութիը կըհեռըցնէ : Ան աստիճանը հասաւ Ֆիլէմէնկին երկպառակութիը (Ֆըրխան), որ մայիսի 29 Ֆիլէմէնկին քաղքընէրուն մէջը երկու դի բաժնըվերէին. մէկ դի եղողները կըսվին

Ճիշդ Հասարակապետական կամ Հայրենասէր, մէկալ դիւ եղօղնէրը՝ Շրատ հալդէուեան. ասոնք իրենց վրան նշան մը (քօքքառտա) դրին թուռունձի գունով, որ ծովային զինուորնէրը ու հազարապետնէրը կրկրէին վրանին՝ երբոր շրատ հալդէուը ծովու վրայ մենծ զօրագլուխ եղած ճամփայ կելլար: Կնկից իրարու մէջ կու ելլով, արիւն եղավ, երբեմն մէկ քաղաքը՝ երբեմն մէկալ քաղաքը զօրք կրկրկէին որ զսպեն, ան զօրքերնալ իրար կըջարդէին. մէկը մէկ դին՝ մէկալը մէկալ դին պաշտ պանելով, ինչլան իրեք դի բաժնը վեցալ Ֆիլէմէնկը, մէկը՝ շրատ հալդէուեան, մէկալը՝ աղնուապետական, երբորդը՝ ռամկապետական:

Եսով խիստ գէշ կացութե մէջ ընկալ Ֆիլէմէնկին հասարակապետութիւնը, պրուն զվիբին դուքսը մառեշալը անչափ աչքէ ընկերէր՝ որ ժողովուրդը խաղաղկելու համար ինքիրմէ ետ կեցալ հրաժարեցալ իր պաշտօնէն, Ֆիլէմէնկի երկրէն դուրս ելլով, պրունզվիբին երկիրը գնաց, անկից արվիսիւանա: Շրատ հալդէուը 1785 մէկ շրջաբերական թուղթ մը հանեց, գրելով ընդհանուր իշխաններուն՝ որ տարաձայնուիր և ըստրկին պակսուիր պատճառեղան ամմէն չարեաց ու ճախորդութեանց՝ որ անցած պատերազմի մէջ եղան. կըյորգորէր ժողովուրդը՝ որ իրենց մէջի տարաձայնութիր վերջացընեն, հասարակապետութիր ծաղկեցընեն. բայց որովհետև աս

գրքովս խիստ յայտնի երևան կելլար ոմանց պակսուհիք, թող չիտրվին որ յայտնի հրատարակվի իբրև ասպտամբական գիրք սեպելով, հասա իբրև առանձին գիրք մը՝ թող տրվին որ տպվի, և ան կերպով հրատարակեցին: Այլ իրաւ որ աս գրքէն ետև աւելի կատղեցան շղատ հալդէւին դէմ ըսելով որ՝ ասանկ ընելով բացարձակ տէրուհի կուգէ իրեն քաշել. խիստ դէմ եղողները՝ Ֆիլէմէնիին ծովեզերեայ նահանգները էին, իսկ ցամաքի դին եղած նահանգները՝ իր դին էին. անանկ եղավ որ՝ շղատ հալդէւը վերջապէս չիդիմանալով այս քաղքէն դուրս ելավ, Ֆրիզիա ետքը կվէտրիա գնաց, հոն լօօ ըսված իր ամբողջան զուարճալի տունը նստաւ. անկից օգնութի խնդրեց մեռնող պրուշի թագաւորէն որ իր քեռին էր. անիկայալ երկու գիր գրեց, մէկը օլանտայի ու վէսֆուիզիայ իշխաններուն, մէկալը ընդհանուր իշխաններուն, քաղաքավարական բայց զօրաւոր խօսքերով յորդորելով որ շղատ հալդէւին իշխանութիւնը չիդպչին, որ իր ծնօղքէն ժառանգած ունէր, ինչպէս էր առաջ՝ անանկ պահէն: Բայց Ֆրիզիայի ու օլանտայի գլխաւորները ասոր ներհակը ընելով՝ 1786 վերուցին շղատ հալդէւին վրայէն ան իշխանութիւնը՝ որ այսի մէջի եղած պահասան զօրաց վրայ ունէր՝ թէպէտ դժուարութիւն, ըստ որում 19 հօգիէն՝ ինը հօգի շղատ հալդէւին դին էին, տասը հօգի սիայն դէմ. որով աս վճիւրը

ուչ էր ընդհանուր ամմէն գաւառներու վճիռ :

Արուշը ինկիլիզը տեսնալով որ Ֆիլէմէն կը ամմէն իշխանութի կուզէ զրկել շղատ հալդէուը՝ միայն անունը թողուլ, յայտնի հասկըցուցին ընդհանուր իշխաններուն՝ թէ իրենք պաշտպան պիտոր կենան իրենց ըրած ամմէն անիրաւութեցը դէմ : Բայց Ֆիլէմէն կը վերժէն կոմսին ապաւինելով որ Փրբանսայի վէզիրն էր՝ ամմէն սպառնալիք քամահրէց, ուզէց որ շղատ հալդէուութի ջնջէ, ինչպէս որ Փրբանսզնալ կուզէր՝ իմացընելով Ֆիլէմէնկներուն, թէ ձեր ներսի բաներուն ոչ ես կըխառնըվիմ, և ոչ ալ կըթողում որ՝ ուրիշ տերութիներալ խառնըվին : Ֆիլէմէն կը իր յոյսը ասով կըզօրացընէր որ՝ ինչպէս քիչ մը առաջ Փրբանսան կռնակ կեցաւ հիւսիսային ամերիկայի ապստամբներուն՝ անանկալ իրենց կռնակ կըկենայ, որով իրենքալ կրնան դէմ կենալ վերոյիշեալ տերութեց պրուշին ու ինկիլիզին, մանաւանդ որ՝ 1785 նոյեմբ. 8 Ֆիլէմէնկն ու Փրբանսզը մէկ տեղ դաշնագրութի ըրած ունէին մարտավար ու մարտապահ : Աիվիդ ըսված տեղնալ Փրբանսըզի զօրքէր կային՝ որ Ֆիլէմէնկի հայրենասէրներուն միշտ սիրտ կուտային մտվընին դրածնին առաջ տանելու յաղթելու : Բայց ամերիկայի ապստամբները ամմէննալ մէկ սերտ մէկ հոգի ըլլալով Փրբանսզին օգնութիը շահ ըրավ իրենց, իսկ Ֆիլէմէն կը չէր մտածէր որ՝ իրեն ներսի դին փըթ-

Թած էր, քանի որ երթար՝ նորէնոր թըշ-
 նամու թի կելլար մէջերնին, Ֆրանսզին օգ-
 նու թիւնը ինչ կրնար ընել իրենց. առաջ
 ինչպէս որ ազնուապետութիւն ուղղոյնէրը
 շղատ հալդէնին դէմ էին, հիմաւլ ուամ
 կապետութիւն ուղղոյնէրը ազնուապե-
 տուէ դէմ եղան: Ասկէց նոր ժողովուրդ
 ելան Ազատ ըսվօյնէր, զէնք առին, առջն
 քաղաքը որ ասանկ աստամբու թէ դրօ
 շակ (սոյրախ) բացաւ՝ ուղրէք քաղաքը
 եղաւ՝ որ աթու էր յանսէնեանց, անոր
 հետեւեցաւ սլտիկ քաղաքը Ա իհ. ասոնց
 պաշտպան կեցան մօտիկ եղած քաղքընէ-
 րը՝ որ իրենց դատաւորնէրը վար ձգեցին,
 նորէն դատաւորնէր դրին իրենց ուղածին
 պէս, քիչ մը ատենի մէջ 50 հազար զօրք
 հանեցին օլանտայի մէջ. մէկալ նահանգ-
 նէրը որ անկար էին ժողովուրդը զսպելու՝
 լուռ եղան: Աօդդըրտամ, ուղրէք, ան-
 հէյմ, լէյտէն, և ուրիշ քաղքընէրուն
 մէջը շատ վրդովմունքնէր (արպէտէ) ելան
 ժողովուրդին ու զինուորնէրուն մէջ, որոնք
 չիկրցան զսպելու. և գիտես թէ ասոնք ե-
 ղան մէկ գէշ օրինակ մը՝ որոնց քիչ մը ա-
 տենէն ետեւ հետեւելով իրենց դրացի եղօղ
 Ֆրանսզ ազգը, իրենց մէջնալ ասանկ ը-
 նել սկսան, մէկ քաղաք մէկալ քաղքին
 հետ կըհակաճառէր իմին իրաւունքս աւելի
 մենծ է ըսելով, և մէկ դատաւոր մէկալը
 դատաւորին դէմ բան կըհրամմէր:

Այն մենծ վէճմընալ օխտը նահանգնէրու
 մէջ ան էր որ՝ չէին ուղէր իրենց ընկած

խարձը նաւերուն համար վճարելու՝ որ 33
 նաւ էին, ըսելով անոր վճարքը աղէկ հա-
 մեմատու թիւ չափով չէին ձգած գաւառնէ-
 րուն կեօրէ, ասկից շատ խռովուի ձգեցին,
 ապստամբու թիւ յորդորեցին, նաև տաքցը-
 նօղ գրգռիչ գրքեր դուրս հանեցին: Աս
 անկարգուէց ճար ընելու համար՝ օգոստոսի
 մէջ Ֆիլէմէնկին ծօ քաղքընէրէն ծօ մարդ-
 ժողովւեցան ամսդրտամի մէջ, խօսք դրին
 որ՝ ամմէնքնալ մէկ կարծիք ընեն, սահմա-
 նադրու թիւր ամբողջ պահել տան. իրենց
 խօսք դրածը գրի վրայ անցուցին, Ֆիլէ-
 մէնկին ամմէն նահանգներուն մէջը պրտըտ-
 ցուցին՝ որ ճշմարիտ հայրենասէր եղօղնէ-
 րը անոր ստորագրեն:

Ուղրէքին ու օլանտային մէջի եղած Ազատ
 ըւփօղնէրը աս բանիս ստորագրեցին, պինտ
 ետքը միայած ազատ եղօղնէրուն նուիրակ-
 նէրը լէյտէն քաղքին մէջը ժողովեցան,
 հոն որոշեցին որ՝ իրենցմէ ինը մարդով
 մէկ ժողով մը սահմանեն վերտէն քաղքին
 մէջը՝ որ օլանտայի և ուղրէքի սահմանա-
 կից է. մէկ աղերսագիր մընալ տրվին օլան-
 տայի ու վէսֆրիզիայի իշխաններուն, շատ
 վար զարնելով շղատ հալդէուր, թշնամի
 հայրենեաց կանչելով, մէկ օձ մընէ ըսելով
 որ մեր ներսի դին կըմենծնայ, կամ մէկ
 նոր Ալպա դուքս մը լիւ. խօսք դրին ալ որ՝
 զէնք առնեն դէմ դնեն ամմէնուն՝ որ թըշ-
 նամի են քաղքըցինէրուն:

Ասանկով ճար ընելուն տեղը՝ քաղաքական
 պատերազմ բացվեցաւ, կվէլտրիա նահան

գին երկու սղտիկ քաղքընէրը էլսուրկու
 ու հադդէմ ըսված՝ որ ռամկապետական
 էին, իրենց նահանգին ուրիշ քաղքընէ-
 րուն գէմ ելան: Ավէլտրիային իշխաննէ-
 րը շղատ հալդէուին վրայ վազեցին ապրս-
 պրելով որ զօրքով զսպէ անոնք, որովհետեւ
 ինքն էր ընդհանուր հրամանատար. իսկ
 ան երկու քաղաքը օվէուխսէլին մօտիկ
 քաղքընէրէն՝ և ուրիշ ազատ ըսվողնէրէն՝
 օդնուծի կանչեցին: Այց տեսնալով որ
 իրենց օդնուծի չիգար, հապա անոր ներ-
 հակ զօրք կուգար զիրենք զսպելու՝ էլսուու-
 կին մէջի եղօղնէրը ամբողջ քաղաքը մէջի
 բանէրով թողուցին, քամբէլ քաղաքը փա-
 խան, որ օվէուխսէլին ամուր քաղաքն է,
 իսկ հադդէմ քաղքին մէջի եղօղնէրը գէմ
 կեցան, երկու դիացէնալ շատ մարդ ջար-
 դրվելով՝ ասոնքալ թողուցին քաղաքը փա-
 խան, որ մտնօղնէրը թալլեցին:

Այ բանիս վրայ տաքնալով օլանտային իշ-
 խաննէրը՝ գրեցին կվէլտրիայի իշխաննէ-
 րուն՝ քամահրելով իրենց ըրածը, շղատ
 հալդէուինալ գրեցին սպառնալով, իբր հա-
 մար ուզելով իրմէ. զօրքին հրամեցին որ՝
 պատրաստ կենան, ուր որ խրկեն՝ հոն եր-
 թան. բայց ան զօրքը իժիր կրկանչին՝
 Աեցցէ օրանժեան տունը, որ էր շղատ
 հալդէուին տունը:

Նոր Բաժանոր կենսաբէ պրոպէն Վրայ.

1786:

Պրուշին Թախտը նստող եղալ Ֆետերի-
քոս կուլիեւմոս ք. եղբօրորդի ք. Ֆետե-
րիքոսին, երբոր անիկայ 1786 մեռաւ՝ ա-
սիկայ նստաւ իբրև իր ժառանգը, մեռնող
Թագաւորը Ֆետերիքոս ասիկայ չէր սիրէր,
մանաւանդ խստութիւն կրվարէր իր հետը,
բայց անոր խստութիւնը պատճառ եղալ որ
կուլիեւմոս աղէկ չարքաշուի սորվեցաւ, ա-
ղէկ ուսում, ու զինուորական գիտութիւն
երևելի վարպետներու տակ:

Մսիկայ առաջները ուզեց Ֆետերիքոսին
կերպը պահել. զօրապետները ու նախ
արարները (ուիճալները) կանչեց ուր տեղ
որ ք. Ֆետերիքոսին մեռելը գրած էր, ը-
սալ իրենց: „Մժ իս գրալ կառավարել
„աս միապետութիւն, և Թէպէտ էս չեմ
„կրնար իմ նախորդիս պէս անուանի ըլ-
„լալ, բայց միշտ հասարակաց հանդստու-
„թիւնը պիտոր նայիմ, բարեկարգուի ընե-
„լու հոգ տանիմ նաև պղտիկ բաներու
„մէջ, և քաղաքական հաւասարակշռու-
„թիւնը ջանամ պահելու՝ որ ամեն տերուի
„կուզեն“:

Մեռնող Թագաւորին երկան ու աշխա-
տալի ծեծերը՝ խարճը ու ծանր տուրքերը՝
ձանձրացուցերէին պրուշին ժողովուրդը,
հիմա կը յուսային որ աս նոր Թագաւորին

օրը աւելի հանգիստ արդար կառավարուի մը վայելեն որովհետև ասանկ կըխոստա նար, իր խոստմունքին վրայալ կեցող մարդ էր, գիտէր որ՝ խոստանալը ու չիպահելը աւելի անվայել բան մընէր թագաւորի՝ քան թէ մասնաւոր առանձին մարդու մը։

Նրեն առջի արդարութիւնը աս եղավ որ՝ մէքլէնպուրկի դուքսին դարձուց իրեն ապրանքները, որ իրմէ առջի թագաւորը վերցուցերէր փոխ առնելով. մատրապաղներէն շատը վերուց, զինուորներուն խստութիւնը թէթւեցուց, անկար զինուորներունալ հոգ տարավ, գեղացիներուն տուները զինուորներ նստեցընելը արգելեց, հազարապետներուն անկարգութիւնը որ պարտք կրնէին իրենց անառակուէր համար՝ զսպեց, նեմցէներէն խօսիլը նորէն մտուց թէ իր արքունեացը մէջ՝ և թէ ճեմարաններու մէջ, որովհետև իր նախորդին ատենը Քրանսը զերէն խօսիլը մտերէր. հաւատքի ազատութիւն հաստատեց, քօլօնիա նստող նուիրակին ապսպրեց որ՝ իրաւասութիւնը դործածէ իր երկրին մէջ եղող ուղղափառներուն վրայ։ Նր նախորդին կտակը կատարեց որ շատ բան թողուցերէր իր ազգականներուն ու բարեկամներուն, մեծ հանգիստով (ալայով) անոր թաղումը ընելէն ետև՝ քէնիկսպերկ գնաց, հոն թագաւոր պսակվեցաւ։

Պրոշին Ռաֆայելը զորս ներսէն Քելեկնէ, շրապ
հաւրեալ էր սեղը ներսէն .

1787 .

Մարդս ինքիր խելքովը շատ բան կրմտա-
ծէ, կրսկրսի կերպ կերպ բաներու ձեռք
զարնել, մանաւանդ հին բաները փոխելու,
նոր բաներ մտցընելու որ ամմէնէն վտան-
գաւոր է, բայց աշխրբիս դիպուածն է որ
ամմէնուն վրայ կիշխէ, ամմէն բանը կը փո-
խէ . ք . Ֆետերիքոսին պրուշի թագաւո-
րին մահը՝ վերժէնին Փրանսայի վեզիրին
մահը՝ Փրանսայի եկամուտին փնասը՝ ասոնք
ամմէնը մէկ տեղ գալով Ֆիլէմէնկին մտա-
ծածը բոլորովին փոխեցին : Արեք տերու-
թի պրուշը ինկիլիզը Փրանսան իրենց մէյ-
մէկ կերպ շահ ունէին Ֆիլէմէնկին բանին
խառնըվելու, իրեքնալ մէկ եղան շրատ
հալգէւը տեղը դրին, որովհետև նոր պրու-
շին թագաւորին քոյրը շրատ հալգէւին
կնիկն էր՝ մեռնող թագաւորէն աւելի աս
բանիս ետևէ ընկաւ . յատուկ դեսպան մը
խրկեց հայա քաղաքը սպառնալով թէ որ
իմ կնիշտէս նորէն իր հայրենական իշխա-
նութեը վրայ չի հանէք, զորքս կը խրկեմ,
ապստամբնէրը կը պատժեմ, ես կը դնեմ
անիկայ իր իշխանութեը մէջ : Այս ըսելով
ինկիլիզին հետ միացաւ, որ անալ խիստ
կուզէր աս բանս, որպէս զի Ֆիլէմէնկին
կապը որ ունէր Փրանսոզին հետ քակէ, իր

Տեառ կապէ զՖիլէմէնկը ինչպէս էր առաջ
100, 150 տարվընէ վեր :

() լանտային իշխանները կամապաշտութի
ըրին չիհնազանդեցան, իսկ ընդհանուր իշ-
խանները կը յորդորէին մտիկ դնելու .
վէօֆրիզիա նահանգնալ որ առաջ մէկ էր
օլանտա նահանգին հետ՝ անալ դարձաւ
օլանտայէն բաժնրվեցաւ : Բայց երբոր գո-
ռոզութիր մարդուն սրտին վրայ կը տիրէ՝
անխելք խօսքէր զուրցընել կուտայ . օլան-
տացիք Ֆրանսզին յուսալով՝ գոռոզութմը
պատասխան տրվին : „ (Ս) է որ մէկ դիացէն
„ պրուշին զօրքը օլանտա մտնայ՝ մէկալ
„ դիացէնալ Ֆրանսզին զօրքը կը մտնայ . և
„ ան ատենը մենք շդատ հալդէուը ապրս-
„ տամը ու Ֆիլէմէնկի թշնամի կը հրատա-
„ րակենք ըսին „ : Ըսանկով քաղաքական
պատերազմը մէջերնին աւելի ծաւալեցաւ .
մեծ մասը նահանգներուն և գրեթէ ամմէն
ժողովուրդը կը թըրված զօրքով շդատ հալ-
դէուին դին եղան , շատ զօրք կը ձգէին կը-
փախէին օլանտայէն . նաև ամբողջ գունդ-
իրենց թօփերով սնտուկներով շդատ հալ-
դէուին դին անցան ըսելով . „ Սենք եր-
„ դումնիս միայն օլանտա նահանգին իշ-
„ խաններուն չըրինք , հասլա ամմէն Ֆիլէ-
„ մէնկի նահանգներուն մէկ տեղ , ու շդատ
„ հալդէուին , որովհետև անիկայ էր ընդ-
„ հանուր զօրագլուխ „ : Ֆրանսզնալ մէկ
դեսպան մը խրկեց որ օլանտային ու շդատ
հալդէուին մէջի տարաձայնութիը շտկէ ,
բայց 1787 փետրվ . մէջ աս երկու դես-

պաննէրնալ ծանուցին որ՝ ամմէն խօսք պարապ է, միայն զօրքով կրլայ ասոնք խոնարհեցընել:

Ան ատենը պրուշին թագաւորը իր դեսպանը ետ կանչեց, և իր քրոջը որ շքատ հալդէօին կնիկն էր՝ ապսպրեց որ ելլայիր հանդիստ կեցած տեղէն՝ մէկ պատրուակով (մահանայով) մը հայա քաղաքը երթայ ուսկից ելած էր, որպէս զի իրեն գիտեղօշնէրը սիրտ առնեն: (Դատ հալդէօին կիննալ իր եղբօրը հնազանդելով ծպտեալ (թէպտիլ) կերպով մը նիմէկայէն ճամփայ ելավ հայա երթալու, բայց խռովութեան ատեն ըլլալով դատաւորնէրը պահասաննէր գրերէին սահմանագլուխ տեղվանքը. յունիսին 28. ճամփան օլանտա նահանգին զօրքը արգելեցին աս իշխանուհիս. ինչ որ ըսավ թող չիտրվին առաջ երթալու. մէկ չորապա՛ի մը որ տասնապետ էր եղած շատ քամահրանքի խօսքերալ զուրցեց: Իշխանուհինալ նիմէկա դարձաւ, անկէց իր ձեռագրով թուղթ գրեց ամմէն նահանգնէրուն պահանջելով պատժելու ան հազարապետնէրը՝ որ զինքը ասանկ կերպով արգելելով ետ դարձուցին, ասանկալ թուղթ գրեց հասկըցուց ինկիլիզի ու պրուշի թագաւորին:

Քանի մը օրէն ետև պրուշի թագաւորին երեսփոխանը եկավ պահանջելով ընդհանուր իշխաններէն որ պատժըվին ով որ խօսքով ու գործքով անիրաւուի ըրավ պրուշի թագաւորին քրոջը. ընդհանուր իշխանները ա-

սոր պատասխան տրվին : „ Սենք հասարակ
 „ կապետութե սահմանադրութեը կեօրէ
 „ չենք կրնար մասնաւոր նահանգներուն
 „ բանին մէջը խառնելիլ . աս բանս միայն
 „ օլանտայի նահանգին իշխաններու կիյնայ
 „ ընել „ : Իսկ օլանտայի նահանգին իշխան-
 ները պատասխանեցին : „ Սենք հրամար-
 „ եինք՝ ո՛վ որ գայ նիմէկայէն՝ կամ կէլ
 „ տրիայի ուրիշ տեղերէն՝ թող չիտան ,
 „ ներս չիմտցընեն . հիմա ան հազարպետ-
 „ ները որ մեր հրամանը ճիշդ պահեցին՝
 „ վարձատրելու արժանի են՝ չէ թէ պատ-
 „ ժելու . մանաւանդ վախ կար որ՝ իշխա-
 „ նուհին հայաին մէջ երևցածին պէս՝ մէկ
 „ նշան մը ապստամբութե չըլլար , որ շղատ
 „ հալդէնին գին եղօղները կրմտածէին
 „ հանելու , անոր համար չիտենք ըսին
 „ ինչ բանով ինչ կերպով հատուցում
 „ ընենք աս բանիս մէջ պրուչի թագաւո-
 „ ըին “ :

Եսանկ համարձակ պատասխանելը աղէկ
 բայց անոր է որ՝ ինքը ուժ զօրութի ունե-
 նայ , և իր մէջնալ միաբանութիւն ըլլայ ,
 բայց Ֆիլէմէնկը երկու բաննալ չունենա-
 լով՝ պրուչին թագաւորին փնտռած առի-
 թը աս խօսքերս եղան . լսածին պէս շուտ
 մը հրամեց կարողութի պրունգվիբի դուքսին
 որ իր մենծ զօրագլուխն էր , որպէս զի 60
 հազար զօրքով երթայ , օլանտայի նահան-
 գը իր տակը առնէ , և ուրիշ նահանգներ-
 նալ շղատ հալդէնին հնազանդեցընէ . ի-
 րենցալ մէկ թուղթ մը խրկեց 12 թէուլթի

առաջարկելով, թէ շղատ հալդէուն իրաւ
 շունքը իրեն դարձրնեն մանաւանդ ընդ-
 հանուր զօրագլխուիւր, նոր դատաւորնէք
 դնեն որ տարաձայնութիւնը կուիւր քննեն
 կտրեն, թող տան որ թագաւորնէրը մէջ
 մտնան շտկեն. իշխանուհինալ հրաւիրեն
 որ դայ իրենց նահանգը: Աս թղթիս վրայ
 օլանտային իշխաննէրը ասչափ միայն որո-
 շեցին որ՝ երկու մարդ խրկեն պէուին, որ
 պէս զի զիրենք արդարացրնեն ինչ որ ըրին
 իշխանուհին. ան ատենը սեպտ. մէջ պրու-
 շին միայն 20 հազար ընտրուած զօրքը ա-
 ռանց մէկ հարցընելու մը մտան կվէտրիա,
 հոն բարեկամի պէս զասոնք ընդունեցին,
 ինչ որ պէտք էր իրենց տրվին. ետքը օլան-
 տային վրայ սկսան յարձրկիլ, ան տեղա-
 ցինէրը խիստ քիչ կրցան ասոնց դէմ դնել,
 որովհետեւ օլանտային զօրքը յարձրկելու
 յարմար են քան թէ դէմ դնելու: Յոյսեր-
 նին Ֆրանսային օգնութեւր վրայ դնելով
 անհոգ կեցերէին զիրենք զօրացընելու,
 չէին յիշեր որ՝ մարդս ինքիր զինքը պիտոր
 նայի, ինքիր աշխատանացը վրայ յոյսը պի-
 տոր դնէ, չէ թէ ուրիշին խոստմունքնէ-
 րուն վրայ. թող որ օլանտացիք իրենց մէ-
 ջը միշտ զանազան կարծիքնէրով բաժնը
 ված ըլլալով մէկ որոշ բան մը չէին կրնար
 վճռել, ամմէն կարծիքնին մէյ մէկ արգելք
 կրգանար: Մարդ խրկեցին զանազան տե-
 ղէր որ ծովուն ջուրը թող տան, ինչպէս
 որ ըրերէին ժգ. լուիզին Ֆրանսային թա-
 գաւորին ատենը՝ բայց չեղավ, կամ որ չու-

զէցին իրենց արտէրը ջուրի տակ կօխել տալ, կամ որ չիկրոյան ան տեղվանքը ջուրը թողուլ, գետերուն ջուրը պակասած ըլլալով՝ ծովուն ջուրնալ ցածցած, բայց թէ որ կարենային ընել՝ թշնամին չէր կրնար ամենևին առաջ դալ:

Ֆրանսզը նեղիւ ցրցուց պրուշին զօրաց մտնալուն վրայ օլանտայի մէջ, բայց պրուշին թագաւորը իր քրոջը հատուցում ընելու իրաւունքը կրպահանջէր. ուր որ իր զօրքը կրմտնար՝ ուրիշ բան չէին ըսէր՝ բայց եթէ առջի կարգը կուզէնք որ հաստատվի, և որոնք որ իրենց դէմ չէին կենար, մէկ ֆրաս մը չէինիտար. իսկ օլանտային զօրքը պրուշին զօրաց մօտիկնալը լսածնին պէս՝ կրփախչէին. ուղերէք և ուրիշ քաղքընէր իրենց դռնէրը բացին, հայա քաղքին մէջը միայն ան նուիրակնէրը մնացին՝ որ շղատ հալդէուին դին էին, որոնք մէկ նուիրակ մը խրկեցին՝ շղատ հալդէուը ու իշխանուհին հրաւիրեցին նորէն հօն իրենց տեղը գալու: Ընանկով շղատ հակդուը պրուշին խրկած զօրքովը զօրացաւ, յաղթանակելով դարձաւ եկաւ հայա, իրեն հետ մէկ տեղ հարուստ քաղքըցինէրը ու վաճառականնէրը մէկ եղանառաջի մտածածնին ամմէննալ պարապ ելալ, առջի պատիւը ու իշխանութիւնը որ կուզէին վերցընել՝ նորէն ձեռք ձգեց. նոր իշխաննէր ընտրեց իրեն, և թէ որ սրտոտ մէյմը ըլլար՝ ան ատենը բացարձակ թագաւոր կըլլար Ֆիլէմէնկին վրայ, բայց աշ-

խըրքիս դիպուածը ետքի ատեններս ընել
տրվավ:

Միայն ամսդրտամ քաղաքը՝ ուր որ 300
հազար հողի կային ան ատենը՝ պինտ կե-
ցաւ իր մտքին վրայ, ուզեցալ դէմ դնել,
բայց պրուշները ամմէն քովի եղած քաղ-
քները ու գեղերը առին՝ ծանր տուրքի
տակ ձգելով, անանկով ամսդրտամ մնաց
պաշարված, պրուշի բանակին (օւտուին)
նուիրակներ խրկեց հաշտութի խորաթե-
լու, բայց իրենց ըրածը իշխանուհիին դէմ
միշտ կը ջատագովէին: Արուհւզվիքին դուք-
սը հրամեց անոնց որ՝ քաղաքը տան, իշխա-
նուհիին դէմ կեցողները պատժելին, ու
ընք որ ամմէն անկարգութեց պատճառ-
էին եղեր՝ պաշտօնէ վար ձգեն, երբոր
ամսդրտամցիք չուզեցին կատարելու, սկը-
սաւ քաղաքը սաստիկ թօփոտել, կրակէն
ու սովէն (խըթլըխէն) նեղելով, ան ա-
տեննալ յամառեալ կեցերէին, բայց եր-
բոր պրուշին զօրքը մօտիկ էին յարձըկե-
լով ներս մտնալու՝ ան ատենը ամսդրտամը
տրվին. թէ որ յարձակմամբ առնէին՝ քա-
ղաքը պիտոր թալլէին, որուն մէջը անթիւ
համբարներ (մահակներ) կային, մէջեր-
նին անբաւ գանձ աշխրհիս չորս դիպէն
ժողվւրված: Ըն խենթ սրտոտները որ ու-
զեցին դէմ դնել, առջինը եղան փախել-
լու, որովհետեւ միայն վաճառականութի
ու շահասիրութիւն գիտէին՝ չէ թէ պատե-
րագովի: Հայրենասէր ըսվողները ու շղատ
հալդէուն խիստ դէմ եղողները ամմէնը

փախան կէս մը նեմցէի տակի եղած ստորին նահանգներուն մէջ, կէսմընալ Ֆրանսա, ուր աղէկ ընդունելութի գտան :

Պրուշները ամսդրտամ մտածնին պէս՝ շատ միլիոն ֆիօռին առին ծեծին խարճին համար, քաղքըցոց ղէնքը առին, ամմէն պաշտօնակալները դատաւորները իրենց պաշտօններէն ձգեցին. ամմէն տեղ շղատ հաւ դէռին՝ նշանները դրին, և որոնք որ իշխանուհիին ճամփան արդելեցին, ապսպրեցին որ երթան խոնարհութիւթ ծունկ չոքելով իրմէ թողութի առնեն, իրենց ըրած սխալը խոստովանելով. վճռեցին նեմցէի զօրք պահել ըստրկով խաղաղութիւն պահելու համար, և ան ատենը 3 հազար պրուշի զօրք թողուցին : Ինչ դաշնադրութիւն որ ըրերէին Ֆրանսոյի թագաւորին հետ ավրել տրվին, առաջարկեցին ընդհանուր իշխաններուն որ պրուշին և ինկիլիզին հետ մարտապահ դաշնադրութի մը ընեն, ինկիլիզնալ խօսք տրվալ որ՝ ֆիլէմէնկին ըրած սխալը կրներեմ. սխալը աս էր որ՝ ասչափ երկան ատեն բարեկամութի կապլած ըլլալով, առանց մէկ պատճառի մը իրեն թշնամի եղալ, աս դաշնադրութիւն 1788 հաստատվեցաւ :

Ըսանկով պրուշը իր իշխանութիւթ տարածեց օխտը միացեալ նահանգներու վրայ՝ որ է ֆիլէմէնկը, թէպէտ և խիստ քիչ աւտեն քչեց այսինքն՝ օխտը տարի : Ուր որ շատովոր կ'իշխեն, և մէջերնին միաբան չեն, ետքերնին ասանկ կ'ըլլայ : Իայց որչափ

ուղղափառ որ կային Ֆիլէմէնկին երկիրը՝
ամենեւին աս կռիւիս մէջը չիխառնըվեցան,
ապստամբներուն հետ չիմիաբանեցան, ա-
նոր համար ասկէց ետքը ընդհանուր իշ-
խանները շատ ծանր տուրքերէ ազատեցին
ուղղափառները, ժամ մը չունէին՝ հրաման
տրվին որ ժամէր շինեն իրենց ։

Յովսէփ կայսեր կարգաորութիւնը սուրբի
օրէնքի վրայ ։

1786 ։

Յովսէփ կայսրը կերպ կերպ բաներ կրմտա-
ծէր տուրք ժողվելու վրայ, շատ մարդ շատ
կերպէր ճամբայներ կըսորվեցընէին իրեն,
մէջէնին ան կերպը հաճոյ եղավ իրեն որ՝
իր աւսդրիական երկրին մէջ ինչ կերպ
գետին կըգըտնըվի՝ ամմէննալ համրանքի
տակ առնէ, ամմէնքնալ չափէ, անոնց ամ
մենուն համեմատ տուրք մը ձգէ մշտնջե-
նաւոր ։ Ասանկով հազարաւոր մարդիկ
համրել սկսան քանի անտառ կամ վարու-
ցան եղած գետիններ կան, քանի արտ
(թառլա) պարտէզ, դաշտ, լեռ, լիճ
(կէօլ) ։ շատ խարճ ընելէն ետե աս չափե-
լուն համար, շատ ամիսներ անցնելէն ետե՝
իմացաւ յովսէփ կայսրը որ իր մտածածը
պարապ էր, դրած մարդիկներնալ չէին
կրնար չափել, որովհետե ուրիշներուն միջ-
նորդու թինկրով անանկ մարդիկներ խրկե-
ցին չափելու՝ որ անփորձ մարդիկներ էին ։

Տաղիւ 18 տարվան տղաքներ, երկրաչափութիւնը քանի մը ամիս միայն սորված ըլլալով:

Ան ատենը յովսէփ աս կերպը թողուց, ուրիշ կերպով մը չափը առնել հրամայեց, բայց աւսդրիացիք ու մաճառները շատ գանկտեցան թէ առջի չափելուն և թէ աս երկրորդ չափելուն ատենը, ասոնց կամքը կատարելու համար վերջացրնել տրվալ չափելը: Յովսէփ կայսեր բնութիւնը աս էր որ՝ մէկ բան մը ըսկըսելու ըլլար՝ կրնայեր շուտ մը լմընցընելալ, որպէս զի ուրիշ բան մը ըսկսէր:

Կաւ օրէնքի վրայ ուղեց որ՝ ամմէն իր ըրած օրէնքները մատեան մը գիրք մը շինէ, ինչպէս որ մեռնօղ պրուշին թագաւորը իր պղտիկութե ատենը ըրերէր. շատ գանկատ լսած ունէր յովսէփ դատաւորներուն վրայ, որ խիստ կուշացընեն դատը (տավան) կտրելու, շատ խարճ կառնեն. վեննայի մէջ անանկ դատէր (տավանէր) կային որ՝ քառսուն տարվընէ վեր չէին կարը ված. բացարձակ տէր եղածին պէս յովսէփ՝ ան օրէն կը ջանար աս բանիս ճար ընել, անանկալ կարգաւորել ուղեց որ՝ քանի դժարին դատ ըլլայ՝ գոնէ տարին չանցնի: Աս օրէնքին մատեանը շինելու ժողովելու համար՝ յանձնեց Սէէս անուն խորհրդակահանին, որ խիստ կարգացօղ ու խելացի մարդ էր, անալ վեց ամիս չիքչեց որ լմնցուց, բայց տեղ տեղ տարակուսական ու մութ բանէր ըլլալով՝ բացատրութիւն

ուզէց ժողովուրդը. կայսրնալ բացատրու-
 թիւ տրվալ՝ փոխելու յօժարուն ցրցուց,
 որովհետև իր միտքը աս էր որ՝ ամմէն բան
 շիտակ ըլլայ, ժողովրդեան աղէկութիւն ը-
 լայ :

Կնանկով պրուշի թագաւորէն աւելի ա-
 ղէկ օրէնքնէր հանեց, որ շատ բանի մէջ
 շատ մարդ կը գովէր, ինչպէս մէկնալ ան
 էր որ՝ գեղէրը կամ ան տեղվանքը ուր որ
 ժողովրդապետական եկեղեցիներ շատցուց,
 նոր հիւանդանոցներ շինեց, ողորմութեան
 սնտուկներուն աւելի եկամուտ կապեց,
 մաշտոցը նեմցէի լեզու թարգմանել տը-
 վալ, որպէս զի մկրտութիւն՝ պսակը՝ վեր-
 ջին օծումը՝ նեմցէի լեզուով ընելով՝ ժողո-
 վուրդը հասկընայ, առաջ լատին լեզուով
 կը լար : Ի ստակներու վրայալ կարգաւո-
 րուն ըրալ, որչափ մաշված ըստակ կային՝
 հալեց նորէն թափեց, ոսկի ըստակներուն
 աժողէքը վեր վերցուց, որովհետև սպա-
 նիանալ՝ Ֆրանսանալ՝ սալոյանալ՝ ճինիվիզ
 նալ՝ հռոմալ՝ աժողէքնին բարձրըցուցեր-
 էին, հասկըցաւ որ ամմէն աւսդրիական
 երկրին մէջ քալած ոսկիէ ըստակը 66 մի-
 լիոն Ֆիօուինի կը հասնէր, քալած արծըթէ
 ու պղնձէ ըստակը 140 միլիոն Ֆիօուինի
 կը հասնէր, թղթէ ըստակները 20 միլիոնի,
 ասանկով կայսեր ժողովրդեան մէջ ամմէն
 քալած ըստակը 226 միլիոն Ֆիօուին էր :
 Յովսէփ կայսեր մէկ կարգաւորութիւնալ
 եղալ զանազան ժողովքներուն վրայ, որ
 աշխարհականները իրենց մէջը հնարերէին,

կըսվէին լիպէռի մուռադօռի, որ ըսել է Ղլատ սլատ հիւսօղներ. կամ Ֆուանք մէջօն, ուսկից ելած է Ֆուամազօն անունը, ըսել է Ղլատ տունէր: Ասոնց ժողովքնէրուն վրայ աչք գոցված էր, միայն ան ժողովքնէրը արգելված էին՝ որոնց բանը չէր հասկըցվէր, հիմա իմանալով որ՝ վերոյիշեալ ժողովներնալ մէջէնին կերպ կերպ կը բաժնըվէին, որոնք խռովութի հանեցին շէղիա, պավիէռա, ու սլրանտէմսլուրկ գաւառին մէջ Ղուսաւորեալ կոչելով զիրենք, ասոնց կապ մը դրաւ յովսէփ, որպէս զի հասարակաց հանգստութիը չավրեն: Ասոր համար 1786 յուլիսի 11. ապսպրեց որ՝ ուրիշ տեղ ամենեւին մէկ ժողով մը չըլլայ, բայց եթէ մայր քաղքընէրը՝ կամ երեւելի քաղքընէրը, որովհետեւ առաջ ինչվան գեղէրուն մէջնալ կըլլային: Ամէն գլուխ ըսաւ ան ժողովներուն՝ զուրյեն ան տեղացի եղած դատաւորներուն ինչ օր՝ ինչ ատեն որ կը ժողովըվին, գիշեր ատեն ժողովըվիլը ամենեւին արգելեց, ամէն մէջի եղօղներուն անունները գրել տալ ապսպրեց, նաև անոնց որ կը մեռնին կամ ժողովքէն կելան: Աս կանոնները դէմ ըլլալով Ֆուամազօններուն՝ որ իրենց բանը առաջուցմէ վեր ծածուկ ըլլալ և գիշերը ժողովըվիլ կուզէին, կամաց կամաց քիչցան:

Վարէղին մէջ խոռովութեանը հերթանւելի մը
համար .

1785 .

Աս գլուխը չըսկըսած կարգա մէյմը ինչ
որ յառաջաբանութեան մէջ ըսերէնք թէ
ինչպէս մարդուս բարոյական կիրքերն են՝
որ զանազան գործողութիւններ չիկար-
ծած դիպուածներ հանել կուտան աշխր-
քիս մէջ՝ մանաւանդ կնկան ձեռքով, որով
հետեւ հոս ունիս տեսնալու զարմանալու
մէկ առանձին մարդու փարթամութե ա-
դահութեան կիրք մը միայն ինչպէս չիկար-
ծած նորէնոր գործողութիւններ հանել տը-
վալ, ամբողջ թագաւորութի մը տակնու
վրայ ըրալ :

Վարէղի մէջ մէկ խաթուն մը կար Ալա
լուա անունով, ասիկայ մէկ աննշան մար-
դու մը զաւակ էր . երբոր ութը տարվան
էր՝ դերձակի (թէրղիի) մը կին ողորմու-
թե համար իր քովը առաւ, ասոր Ալալուա՝
մականունը պատճառ եղաւ որ մէկ հա-
րուստ խաթուն մը իր պաշտպանութե տակ
առաւ, վասն զի անանկ կըհաւանակէին որ
հին վալուա թագաւորական ցեղէն է ին-
ջած, ք. հենրիքոսի տնէն, աս պատճառով
արքունիքէնալ (սէրայէն) քանի մը հազար
լիրէ տարին եկամուտ կապեցին, ետքնալ
էվէլցուցին, խղճալով մեղքըննալով վրան՝
թէ թագաւորական ցեղէ ինջած աղքատ

մընէ, ինքնալ մէկ անուշ վարմունքով մը՝
խորամանկ կերպով մը՝ աղէկ գիտէր թա-
գաւորին ընտանեաց աչքը մտնալ, մանաւ-
ւանդ թագուհին. ասիկայ ետքը մօդդ-
ըսված ազնուականի մը հետ կարգը վեւով
անկէց Մօդդ շաւա ըսվեցաւ :

Ըստ տենը փարէզին մէջը քառտինալ մը
կար ու հան անունով՝ որ թագաւորական
ողորմութիւն բաժնօղ էր, ասիկայ անչափ
հաճոյ չէր թագաւորին ու թագաւորազուն
իշխաններուն իր տկար կառավարութիւն
համար, անոր համար շատ կըստըտէր մէկ
ճար մը գտնալու անոնց աչքը մտնալու :
Սէրոյի իշեալ մօդդ վալուան որովհետեւ
քառտինալին հետ աղէկ կըտեսնըվէր, և
ուրիշ մեծամեծներուն խօսքը անցուկ կը-
ցըցընէր զինքը, քառտինալին յոյս կու-
տար որ զինքը պիտոր աչք խօթէ հաճոյա-
ցընէ, թագաւորական արքունիքէն սուտ
մուտ խօսքէր (խապարնէր) կըբերէր իրեն
համար աղէկ, որպէս զի քառտինալէն
պարգևնէր առնէ :

Ըստ միջոցիս մէջ երկու ճէվահիրճի պօհմէր
ու պասանժ անունով մէկ տեղ բաժանորդ
(օւթախ) եղած փարէզին մէջ՝ մէկ կէր-
տանլըխ մը ձեռք ձգերէին պուլլանդի քա-
րէրով շինված շատ սուղ բան, ասիկայ
չկիրնալով ծախել ոչ ինկիլդէուուա, ոչ օ-
ւանտա, ուղեցին Փրանսայի թագուհին
ծախել մէկ միլիոն ու 600 հազար ֆրանս-
քի, բայց թագաւորը չուղեց առնել, ո-
րովհետեւ խազնան խիստ նեղութեան մէջն

էր : Ընթանս լսելով վերոյիշեալ մօդդ վա-
լուա խաթունը՝ ուզեց մէկ վարպետութիւն
մը իրեն ճանկը անցնել ան քարէրը, ին-
չու որ թէպէտ հերիք եկամուտ ունէր
ինչպէս որ ըսինք, բայց էրիկ կնիկ կուզէին
զիրենք մեծ հարուստ երեցընել, փար-
թամութէ կըցըցընէին՝ որուն ըստակ չօգ-
տէր, միշտ կարօտութիւն ու պարտքի մէջ
կըթապլտորկէին :

Ընտեսնը մէկ անուանի մուրեցուցիչ մը
եւաճէր քալիօսդուօ անունով, որ իրեն ճա-
ռատօղ (լաֆազան) լեզուովը եւրոպային
շատ երևելի մարդիկները խաբէրէր, որուն
վրայ քառտինալնալ վարկում (իխթի-
պար) առերէր, ասիկայ սորվեցուցած էր
մօդդ վալուաին մարդ խաբել : () ր մը
զնաց աս մօդդ վալուա խաթունը ճէվա-
հիրձինէրուն ըսաւ որ՝ Լաֆուհին կուղէ կէր-
դանլըր առնել, Բայց Գաղարու կուղէ որդէս զի
Լաֆուարը չիմանայ . անոնք աս խօսքին հաւա-
տացին՝ գիտնալով որ թագուհին հետ կը-
տեսնըվէր, բայց կէրտանլըր ձեռքը տա-
լու չիհաւատացին : Ընտեսնը մօդդ վա-
լուան մտածեց քառտինալը ձեռք առնել-
լու, զնաց խորամանկութիւն անոր ըսով որ՝
Լաֆուհին խիստ կըբաղձայ ան կէրդանլըր առնել-
լու, Բայց Լաֆուարէն Գաղարու ըլլալու համար՝
ցանկեց որ դուն մէջը ճիւղաս, աս Բանս լիցընէս,
ասուլալ Լաֆուհին աչքը կըճիւղաս : Սխամիտ
քառտինալը սիրով յանձն առնելու եղավ
աս գործքս որպէս զի թագուհին հաճոյա-
նայ, բայց հաւատարմութե համար մէկ ձե-

ուագիր մը ուղեց ունենալու Թագուհիէն .
 ասորալ ճարը գտաւ աս խաբէբայ կնիկը ,
 գնաց մէկ սուտ Թէմէսիկ մը գրել տրվալ
 Թագուհիին անունովը ասանկ ստորագրը-
 ված , Սարեամ Լիւրճնիէրբա . որուն գիրնալ
 կըմանէր Թագուհիին գրին . մէջը կէր-
 տանլըխին գինը դնելով՝ զինքը կըսարտա-
 ւորէր որ չորս անգամէն վճարէ գինը :
 Քառտինալին միտքը որ միայն Թագաւո-
 րին ու Թագուհիին կըջանար հաճոյանա-
 լու , առանց քննելու կնկան ձեռքով բան
 տեսաւ , որոգայթի մէջ ընկաւ . գնաց ճէ-
 վահիրձինէրուն ստուգեց որ՝ իրաւ Թա-
 գուհիին է կէրտանլըխը ուզողը , անոնքալ
 քառտինալին հաւատալով անոր յանձնե-
 ցին , քառտինալնալ տրվալ մօզդ վա-
 լուային , ապսպրելով որ Թագուհիին ձեռ-
 քը տայ :

Երբոր աս հնարագործ կնիկը բաղձանքին
 հասաւ , ասանկ մեծ ելուզակուծիր (տօ-
 լանտըրձիուծիր) գլուխ տարաւ , իր էր-
 կանը հետ մէկ տեղ կտոր կտոր քակեց
 կէրտանլըխը , քիչ մը Փրանսա՝ քիչմընալ
 Ֆիլէմէնկ ծախել տրվալ . իր էրիկնալ
 լօնտուա խրկեց , որպէս զի մէկ կտորնալ
 հոն ինկիլդէուուա ծախէ : Երբոր հասաւ
 առջի անգամուն վճարքին ատենը՝ ճէվա-
 հիրձին կուղէր քառտինալէն 400 հազար
 լիրէ , ինչպէս որ խօսք գրէրէին ամէն ան-
 գամուն ասչափ վճարելու . քառտինալնալ
 կըսպասէր որ Թագուհիին խրկէ իրեն ասչափ
 ըստակ , բայց մէկ ձան ձուն մը չէր ելար

Թագուհիէն : Անկան խորամանկութիւնը չի
լըմնար, մօդդ վալուան քարտինալին առա-
ջարկեց որ աս անգամուն ինքը վճարէ,
բայց որովհետեւ չունէր այնչափ վճարելու՝
նորէն եկավ Թագուհիին դիացէն ըսաւ որ՝
հիմա չեմ կրնար վճարել . 30 հազար լիրէ
միայն կուտամ որ՝ ան ըտարկին շահը տաս
ճէվահիրճինէրուն, ըսես անոնց որ քիչ մը
ատեն սպասեն :

Այն ատենը քառտինալը շփոթութե մէջ
ընկաւ, կասկած դնաց իր խաբէութե վը-
րայ, մօդդ վալուան ուրիշ ոլորակ մը բա-
նեցընելով՝ ապահովցուց քառտինալը ըսե-
լով որ՝ Լաֆո-հիին հետ քեզ պեսընեմ, եր Բեր-
նովը քեզի պիտոր զորոցե աս խօսքերս, Բայց որպէս
զի Լաֆա-որէն գաղտուկ մնայ Բանը՝ գիշեր արեւ
սերային դուխանն ըսված անպատանէրուն մէջը պի-
տոր պեսնըլի : Այն նենգագործ շատգէտ կնի-
կը դնաց մէկ ուրիշ խաթուն մը գտաւ օլը
վա անունով, որ դէմքովը հասակովը քիչ
մը կլմանէր Թագուհիին, առանց հասկըցը
նելու իրեն թէ Թագուհի պիտոր ձեւանաս,
իրեն ասչափ ապսպրեց քառտինալին ըսելու
թէ ինչ որ քեզի զորոցերէ մօդդ վալուան ան Բանին
համար՝ ամենունալ հա-ապա, ըրէ, երաւ են : () լը
վա խաթունը որ բանին ամենեւին տեղեակ
չէր թէ ինքը հոն Թագուհի կրձեւանայ
քառտինալին աչքին՝ երբոր խօսք գրված
գիշերը ասչափ բանը զուրցեց քառտինա-
լին՝ հնարագէտ վալուան չըլայ թէ քառ-
տինալին հետ խօսքը երկնցընելով մազը
ծակվի, մէկէն կանչեց Լաֆա-որաւի ան հոն

Լուրուս , աս ըսելով իր առջին գնալ ձեա
ցուց բարեւելու , առդուա կոմսը Թադաւո
րին եղբարն էր , անանկ ցըցուց որ իբր Թէ
ան ատենը հոն իրեն կուգար , սուտմըտենէ
բարեւել ձեացուց որպէս զի օլիվան վախ
նայ հեռընայ քառտինալին հետ երկան չի
խօրաթէ , ինչպէս որ իրաւ օլիվա խաթուն
նալ ինքիրմէ շուտ մը հեռընալով քաջվե
ցաւ գնաց , կարծելով որ Թադաւորին աղ
բարը առդուան հոն կուգայ :

Հիմա սուտ Թադուհիին ասչափ խօսքովը
միամիտ քառտինալին սիրտը հանգչեցաւ ,
ջանաց ճէվահիրճինէրուն սիրտնալ հանգ
չեցընել , բայց անոնք իրենց ըստակը
միայն պահանջել գիտէին : Տեսնալով որ
չըլար՝ քառտինալը իրենց խորհուրդ տը
վալ որ՝ ինքիրէրնին երթան գաղտուկ Թա
դուհիին զուրցեն , կամ ըստ ոմանց իրենք
գացին վէզիրին գանկտեցան , որ էր պարոն
պրէգէվիլը՝ անալ գնաց Թադուհիին զուր
ցեց , հասկըցընելով ինչչափ անարգանք կը
բերէր աս բանս իր անուանը : (Ս)ադուհին
առջի բերանը չիկըցաւ հաւատալ ասանկ
խարդախութե ասանկ լըբուէր վրայ , ետքը
ծածուկ քննելով իմանալով բանը հասկը
ցուց Թադաւորին : (Ս)ադաւորը օգոստ .
15 . իրեն ու Թադուհիին առջին կանչեց
ուօհան քառտինալը , հարցուց՝ պօհմէր ճէ
վահիրճիէն իբրբանլըն ճը առիբ , է՞նչ ըրիբ , ո՞վ
չեղի յանհնեց առնելու . ուօհան պատասխան
տրվալ , առի , կարծեմալ որ Ռաֆուհիին յետքը
անցաւ ան իբրբանլըն , մէկ երեւելի խախուան ճը

որ էր ալի Տօրդ Վալուա կոմսուհի՝ Ինժե ցըցոաց լա-
 գուհիին լուաղլը աս բանին համար, էսալ էրեն մէկ
 հաճոյահան ծառայումի մը ընելու համար՝ ծախոս
 առի: Ըն ատենը թագուհին խօսեցաւ ըսաւ,
 Ենչպէս հասարայիր որ էս չեղ անանի բանի մը մը
 խօսեմ, որ ամենեւին չեղի չի վերաբերիր, որովհետեւ
 անչափ ապեն է որ չեղի հետ չեմ խօրալած. Ենչ
 պէսալ չըլլայ որ էս մըլ արեղը անանի մէկ կնիէ մը
 խօսեմ, որ իմն մէկ ծառայումի մը մըլ չէ: Այլ-
 ճանչնամ ըսալ ուսան որ խաբվեցայ, հրամա-
 նոյնիդ մէկ աղէկ ծառայումի մը ընելու համար մը-
 ջը մայ, անոր խարդախումիանը չի մայ, սխա-
 լեցայ:

(Ը) Վագաւորը իր գրած թուղթը ցըցուց, ա-
 նուշու թի խօսիլ սկսաւ որ ամմէն բանը
 զուրցէ, և որպէս զի աւելի համարձակու-
 թիւն ունենայ ուրիշ խօսց մը խօթեց, հոն
 թղթի վրայ գրելով հասկըցուր ինժի ըսաւ
 ամմէն բան. ուսան կէս ժամ մը հոն կե-
 նալով իր գրածը ցըցուց, որ մութ խօսքեր
 էին անհասկընալի: Ըն ատենը թագաւորը
 հրամայ որ իր աւջակէն երթայ, իր պահա-
 սաննէրուն մենծը որ կրսվեր վիլլուա
 դուքս իրեն կանչեց, ան ատենը ուսան
 հասկընալով որ զինքը բանտը պիտոր դնել
 տայ, թագաւորին ոտքը ընկաւ աղաչեց որ՝
 քիչ մը ատեն տայ իրեն ան օրվան շնորհ-
 քին համար՝ որ էր վերափոխման տօնը,
 Փրանսային համար օր ուրախութե, որով
 հետեւ աս տօնս է պաշտպան Փրանսային:
 (Ը) Վագաւորը պատասխան չի տալով դար-
 ձաւ գնաց, պարոն պրէդիվիլը իր տեղը

տարաւ, հոն իր ամմէն թուղթերը կնքեց .
 ետքը սահապաններուն մենծը իր դարսա-
 սը (սէրայը) տարաւ՝ անկից պասթիլիա
 բերդը ⁽¹⁾. Թագաւորը կարգէ դուրս բառ-
 լամէնդին յանձնեց որ աս կերտանլըխին
 բանը քննէ, դատաստանը կտրէ, իրեն ցը-
 ցընէ: Այոց հռոմ ասանկ բանտը դնելուն
 համար քառտինալը՝ շատ գանկատ գրեց
 Ֆրանսայի թագաւորին:

Պարպատներէրուն չենուներ, պատիժը, օուլանս
 դուրսին շարուներ .

1786 :

Քննութիւն երկան քշելով ինչպէս հետ-
 ևեալ տարին 1786 մայիսի 31 լմնցաւ, ան
 օրը իր վճիռը ելաւ ամմէն բան յայտնի
 ըլլալով. օլիվա խաթունը իր բերնովը խոս-
 տովանեցաւ որ՝ մօդդ վալուա խաթունին
 խօսքովը վեռսալիայի պարտիղին մէջ քառ-
 տինալին զուրցեց ան խօսքերը թագուհի
 ձեանալով որ ինքը չկտէր, վիլլէդ մէյմը
 խոստովանեցաւ որ՝ վալուաին զուրցելովը
 մէկ թէմէսիկ մը գրեց գիրը նմանցընելով:
 Ասով յայտնի եղավ որ մօդդ վալուան էր
 առջի պատճառը աս ամմէն անօրէնութե՛,
 միաբան ըլլալով ան վերոյիշեալ անօրէն

(1) Աս բերդս ժող. լուիդիին ատենը շինվեցաւ,
 իրէք հարիւր տարվան մէջ եղավ բանտ անոնց որ
 թագաւորութե՛ գէմ յանցանք (սուչ) կընէին:

մարդուն հետ՝ որ կրավէր քալիօսդ. ուս կոմս ,
 խաբեբայ՝ զրախօս՝ (լաֆազան) մէյմը ,
 որ քիչմը բնալուծութե՛ (քիմիաճիութե՛)
 արհեստը գիտէր , զանազան լեզու կրխօ-
 րաթէր , ամմէն բանէն աւելի խիստ վար-
 պետ էր անփորձ մարդիկնէրը խաբելու , ու
 բուն վրայ ետքը երկան ունինք խօսելու :
 Փորձըված բան է որ՝ մենծէրը քովէնին
 զրախօս զարմացուցիչ մարդիկ կուսենան՝
 որով կրխաբովին : Մտինալ որ՝ աս քալիօս
 դ. ուս մօդդ վալուաին հետ մէկ տեղ խօսք
 դրերէին քառտինալ ուսանը մեռցընելու՝
 որպէս գի իրենց չարութիւր երեւան չելայ :
 Արկու ինկիլիզ վաճառականներնալ վը-
 կայութի տըվին օր մօդդ վալուաին էրիկը
 իրենց ծախեց կերտանլըխի քարէրուն մէկ
 կտորը :

Ան ատենը փարէզ ժողվըված էին Ֆրան-
 սային երեւելի եկեղեցականքը՝ մէկ կամա-
 ւոր տուրք մը տալու համար . աս եպիսկո-
 պոսները հասկընալով ուսան քառտինալին
 բանը՝ ուզեցին որ իրենք կտրեն անոր դա-
 տաստանը , Ֆրանսային եկեղեցնայ արտու-
 նութիւր կեօրէ՛ որ աշխարհական դատաւո-
 ըի թող չիտար եկեղեցականի մը դատաւ-
 տան կտրելու . քանի մը եպիսկոպոս ամմէ-
 նուն դիացէն գացին թագաւորին հասկը-
 ցընելու . թագաւորը մտիկ դրաւ լսեց՝ բայց
 պատասխան մը չիտըվավ : Ապիսկոպոսները
 հռոմայ քահանայապետինալ հասկըցուցին
 աս բանս՝ սուրհանդակ (թաթար) խրկե-
 լով հռոմալ իրենց պէս զուրցեց , ինչ պա-

տիւ ինչ արտունու թիւնէր ունէր քառտի-
նալը՝ ամմէննալ կախ թողուց, ինչվան որ
զինքը արդարացրնէ ան աշխարհականաց
ատեանը որ ինքը ընտրերէր: Քառտինա-
լը պատասխան դրեց հում՝ որ ես առաջ
եկեղեցական ատեան ուզեցի՝ չեղավ, ետքը
աշխարհական ատեանի տակ ընկայ. անան-
կով ներուժն առավ սրբազան պապէն:

Երբոր քննութիւն լմնցաւ՝ ուօհան քառտի-
նալին ազգականները որ շատվոր էին ու
զօրաւոր, շատ ջատագովել սկսան անիկայ,
քառլամէնդը վճռեց քառտինալին անմեղ-
ըլլալը ու ազատ ամմէն յանցանքէն, միայն
պարտաւորեց կերտանլըխին գինը ու շահը
վճարելու. մօդդ վալուա բանսարկուն դա-
տապարտեց որ տաքցուցած երկըթով նշան
դրվի վրան հրապարակաւ, ու դահճի ձեռ-
քով ձեծվի. իսկ վիլէդը մշտնջենասպէս
արքունիքէն դուրս քշվի. մնաց օլիվան ու
քալիօսդուօն՝ անոնքալ բանտէն հանեց:

Թէ որ միայն կերտանլըխին գողութիւնը ը-
լար աս բանիս մէջ՝ ասչափ պատիժը հերիք
կրսեպիւէր, բայց որովհետեւ աս պատճա-
ռով թագուհիին անունը շատ քաշկրու-
տըվեցաւ, շատ արատներ (լէքէնէր) վրան
ձգելով վատահամբաւեցաւ, անոր համար
արքունիքը՝ բառլամէնդին ասչափ տըված
պատիժին դո՛հ չըլլալով՝ նորէն պատժեց ա-
նոնք. ուօհան քառտինալը պասդիլիայէն
դուրս հանելէն ետեւ թագաւորը՝ իր պաշ-
տօնէն զրկեց, որ էր ողորմութի բաժնօղ.
հոգւոյն՝ սբյ կարգը ունէր (որ պատիւ մը-

նէ), անալ վրայէն առաւ, նաև իր ամմէն իշխանութէն մերկիկ թողուց, իր արքայու թեան տեղը քշեց, որ կըսվէր Շէզ տեօ, շատ հեռու փարեզէն. վիլլէզը և օլիվան նորէն բանտը դրին, քալիօսդոօն քշեցին ապսպրելով որ՝ իրեք օրէն փարեզէն դուրս ելլայ, իսկ երեք ամսէն՝ ամբողջ Ֆրանսայէն: Ատքը քննել սկսան վալուա կնկան ցեղը՝ մէկ նշան մը չի գտան թագաւորական ցեղէն ըլլալու, անոր համար յունիսի 11 ՚ի գործ դնել տրվին վերոգրեալ պատիժնէ ըր, թէպէտ և ինքը կատաղաբար ազաղակ կը վերցընէր, կը բողոքէր, կը գանկտէր թէ անարգանք կուտան իր թագաւորական ցեղին. վերոգրեալ պատիժնէրը տալէն ետև դատապարտեցինալ որ ինչվան մեռնի երթայ՝ Սալբէդուիէ ըսված բանտը կենայ, ուր որ անզգամ (եարամազ) կնիկնէրը կը դնէին:

Ըս դատաստանս երբոր լսեց յովսէփ կայօ ըր՝ որովհետև ինքը շատ խելացի էր ասանկ դատաստաններու մէջ՝ կըսէն որ չի հաւնեցաւ, ըսելով՝ պէտքը չէր երևան հանել ան բանը՝ որ պէտք է լուութե տակ պահել, գոցել, ետքը մէկ ուրիշ պատրուակով (մահահանայով) մը վար ինջեցընել ու հեռացընել ու հանը առանց յայտնի ընելու ամենին պատճառը. ան ատենը աշխարհառիթ չէր ունենար այնչափ խենթութենթ խօսքեր զուրցելու, նախատելու, և ոչ կազէթա շինօղնէրը անչափ պատմելու՝ փնտռելու՝ չարաչար վատահամբաւելով մանաւանդ թագուհին:

Բայց օւրէանսին դուքսը ու իրեն հետեւող
ները ըստակ տալով մօզդ վալուան բան-
տէն փախուցին, մէկ անուանարկ դրօղիմը-
նալ ըստակ տալով գէշ դայթակղական
գրուած մը հանել տրվին, որուն խորագիրն
էր Յիշատակարան ջատագովութե մօզդ
վալուա կոմսուհոյն, աս գրքին մէջը երևե-
լի մարդիկնէրու անունը խիտ կրկտարէր,
չարաչար վար զարնելով մեծ դայթակղու-
թի ձգելով ժողովուրդին մէջ: Ասկէց զատ
անքուռ օւրէանսին դուքսը անդադար
կրպրտըտէր որ՝ Ֆրանսային մենծէրուն մէ-
ջը ատելութի ձգէ թագաւորին դէմ, մեղա-
դրելով որ ինչու քառտինալ ու հանը բան-
տը դնել տրվալ, շատալ աշխատեցաւ որ
բաւլամէնդը անիկայ բանտէն ազատէ:
Այլ գիացէն ասանկ կընէր, մէկալ դիա-
ցէնալ ասոր դէմ ամմէնուն կըսէր, ինչ ա-
մօթ բան է՝ Ֆրանսային գլխաւոր ատեանը
բաւլամէնդը՝ որ թագաւորը ջատագովե-
լու համար դրված է, յանդգնեցաւ յայտ-
նի արձրկել ան քառտինալը՝ որ թագաւո-
րը անչափ բարկացուց, աս ըսելով տակէն
շատ կըխաղար որ քառտինալը քշվի, բաւ-
լամէնդը անարգըվի, իր վճիւրը ոչնչացը-
նելով:

Աս բանէրուս մէջ ամմէն իր միտքը դիտա-
ւորութիւր ան էր որ՝ հակառակութի ցանկ
Ֆրանսայի մէջ, թագաւորին ու թագու-
հին դէմ դրգուել տայ. աղէկ կըսէ Ղիւ-
թաննէր նեմցէ մատենագիր մը: «Փարիզ
» ցոց առջի նշանն է դիւրահաւատութիւր,

,, Թէպէտ փարէզցիք կըսարծին որ ար-
 ,, Թուն ու զգաստ ենք, բայց ինչ ամէնզը-
 ,, փեղ խօսքէր կըզուրցըվին կըսատմը-
 ,, վին, չեն տարակուսիր վրան կըհաւատան :
 ,, Սուտը ճշմարտի տեղ անցընելու փարիզ-
 ,, ցոց առջին՝ հոս կըկայանայ որ՝ համար-
 ,, ձակուլթը ըսես ան սուտը ,, : Ալ իրաւ որ
 աս մէկ կէրտանլըխի մը տօլանտըրձիուիը
 սուտէրով անչափ մեծցաւ Ֆրանսոզներուն
 մէջ՝ որ մէկ մեծ Թուական մը եղաւ Ֆրանս
 սայի պատմութիւն մէջ. ետքի ատեններ
 սալ Ֆրանսային ազգային ժողովը ազէկ
 ճանչնալով ազգին դիւրահաւատ բնութիւնը՝
 ասանկ սուտէրով իրեն վաստրկեցաւ ամ-
 մէն Ֆրանսային ժողովուրդը . ինչ որ ու-
 ղեց՝ սուտէրով հաւտացուց իրենց :

Թագաւորը աս տարի ամմէն եկեղեցական-
 քէն որ ժողովուրէրէին մէկ երդում մը ու-
 ղեց, տուրքէրնալ ուղեց եվէլցընէլ, բայց
 Ֆրանսայի եկեղեցականք 1755էն սկսեալ
 կամաւոր տուրք տալու համար 154 միլիոն
 լիրէ պարտքի տակ ընկած էին, տարին
 հարիւրին հինգ շահ վճարելով, երդումը
 կախ Թողուցին ինչվան որ տասվերկու հո-
 գի բաւլամէնդին մէջէն իրենց կարծիքը
 տան աս բանիս վրայ, իսկ տուրքը եվէլ-
 ցուցին :

Սոյն տարվանս մէջ 1786. օգոստ. Ֆրանսոզը
 ու ինկիլիզը մէկ տեղ դաշնագրութի ըրին
 առուտուրի վրայօք . Ֆրանսոզը ինկիլիզէն-
 ուա տանի իր գինին, ցքին, (ըռախի), ու
 ձեռագործներ. ինկիլիզնալ Ֆրանսա բերէ

իր ձեռագործները՝ զէնքերը՝ պիռուան՝ որ
է գարեջուրը : Այս բանս ըրին երկուքնալ
իրենց շահին համար, բայց Փրանսային հա-
մար փաստակար եղավ :

Փրանսային ուրիշ անկարգութիւնները .

1787 :

Այս ատեններս Փրանսա մէկ թմրութե մը
մէջ էր ընկած, ինչպէս որ կըլլայ ամմէ-
նուն որ անկարգութեանց մէջ կըթապլտը-
կին, չէն իմանար իրենց կործանումը՝ որ
իրենք իրենց ձեռքովը կընեն, ասանկ Փր-
րանսային ընդհանուր թմրութէն՝ չարա-
գործները օրէօր կըշատնային իր մէջը, ո-
րոնք յայտնի թագաւորութե դէմ հաւատ-
քի դէմ կըքարոզէին ու կընէին : Այնպէ-
ցականք աս բանիս վրայ կըծանուցանէին
թագաւորին, նաև խելացի մատենագիր-
ներալ կըզրէին կըզգուշացընէին, բայց
թագաւորը գիտես թէ մէկ կուրուէ մը մէջ
ընկած ըլլալով լուռ կեցած էր, թոյլ կու-
տար ամմէնուն : Շիզվիթներնալ վերնալէն
ետև՝ իրենց տղաքնին աղէկ կըթօղնէր սրը-
տանց նայօղնէր չունեցան, այլ վարստտե-
րէն որը իրենց վարձքը առնել կընայէին,
որնալ չարագործ նոր աղանդներուն մտքո-
վը էին, ասանկով ամմէն տղաք ավրելով
կըմենծնային :

Այս ատեններս սլավիկայէն քշված լուսա-
ւորելոց աղանդաւորներնալ (որոնց վրայ

վերը պատմեցինք), Ֆրանսա Թափեցան,
 իրենց աղէկ պաշտպաններ ունենալով հոն՝
 յարմար տեղ դտան, սերմունք ձգեցին,
 ուսկից ծնան ժաքօպէնները՝ որ Ֆրանսա
 տակնու վրայ ըրին։ Աոյնպէս շատ յաճա-
 խերէին Ֆրանսայի մէջ Մեղծն կամ Մաս-
 սոնէան, ըսված ժողովքներ, որ իբր թէ
 մէկ ճիւղմբնէին Միլեոտի կամ Միլապ Տոստա-
 դոսներուն հետ՝ որ վերը յիշեցինք. աս չա-
 րաժողովները ազվօր մը ցրցրնելու համար
 Ագիպտան օտէէ կրսէին, իբր նման ըլլա-
 լով իսիս կուռքին ժողովներուն, որ հին
 ատենը կըլլար եգիպտոս, կամ նման հին
 աթինա եղած էլէվսեան կուռքին, բայց ի-
 րօք ավելի նմանութի մընէր պաքքանալի
 ըսվածներուն՝ որ կուռքապաշտից ատենը հռոմ
 կըլլար, ետքը բօսդումիոսի բղեշխութեան
 ատենը վերցրվեցաւ։ Աս ժողովները վե-
 րոյիշեալ քալիօսդուս կոմսը Միլգօդաս ըս-
 ված սիջլիւիացիի մը հետ մէկ տեղ եգիպ-
 տոսէն (մսրէն) փարէղ բերին ինչպէս որ
 կրսէին, որոնք ամմէն մոլութի անառակու-
 թիւն կընդունէին, տարբեր էին ան ժո-
 ղովքներէն՝ որ ինքիրէնին անմեղ էին,
 տեղ տեղ աչք գոցելով թող տըվերէին։
 Այց աս փարիղին չար ժողովքներուն մէջ
 սուտ կտակներ կըլինէին, սուտ թէմէսիկ-
 նէր, թիւն (զէհիւ) կըլինէին հարուստ
 մարդիկները գեղելու մեռցրնելու համար,
 որպէս զի իրենց սուտ կամ իրաւ ժառանգ-
 ները ժառանգեն, ինչպէս որ կըլլար պուին
 վելլիէ մառքէզային ատենը ժի. լուկի

Թագաւորին օրը. աս ամմէն բանը ծածուկ
կրնէին, ու օւլէանսին դուքսին պաշտպա-
նու թէր տակ կրնէին, որ գլուխ՝ վարպետ՝
և կառավարող կրլար քանի կերպ ժողով
որ կրգտնրվէր Ֆրանսայի մէջ:

Բարեկարգութեան վրայ եղող դատաւորնէ-
րը շատ հեղ պատմեցին տեղեկութի տրվին
Թագաւորին՝ որ օւլէանսին դուքսը ինչպէս
էր կնիկը դքսուհին ան ժողովքին մէջը խօ-
թեց, բայց դքսուհին ինչպէս նաև ուրիշ
իշխանուհիք մէկ անգամ մը տեսնալով ա-
նոնց անօրէնութիւնը՝ սոսկալով զարհուրե-
լով ետ կեցան: Միւսապօ ըսված անուա-
նի մարդնալ գրուած մը ունի, մէջը երկան
կրխօսի աս ժողովքնէրուն վրայ, որ կրսվին
Լ, Գիւպիէան Կոնստ, Լ ուսաստրեալ, կամ Մաս-
դիէնէան. ասոնք դուրսէն կրցըցընեն կրսէ
որ մտվընին եղբայրսիրութիւն ընել է, ու
բարձր ուսմունքնէր սորվիլ, բայց անհաւա-
տութի կրսորվեցընեն, հստատակութիւն կր-
վերցընեն, ամմէն տէրութիւն ջնջել կու-
զեն, ամմէն կառավարութիւնը իրենց ու-
զածնին կէօրէ կրջանան կարգաւորել: Բ-
սանկ կրգրէ միւսապօն՝ որ տարիէ մը ետև
ինքնալ անոնց ճամփան գնաց. բայց աս
ժողովքնէրը իրենց ամմէն անօրէնութեան
խորհուրդնէրը ամմէն մարդու՝ ամմէն ժո-
ղովքնէրու՝ չէին յայտնէր. մէջի եղողնէրը
առաջ կրքննէին՝ ետքը իրենց հետ միաբա-
նել կուտային, խոստանալով իրեն անանկ
բան ընելու՝ որ կարօտութի չքաւորութի
չէքաշէ, որ է առջի նշանը սատանայական

ժողով ըլլալու. անիկայ սկզբանէ վեր մենծ-
նալ ինչվան անձանալ խոստանալովը խա-
բեց աղամ, ետքնալ նոյնպէս մենծութիւն
հարստութի խոստանալովը խաբել ուզեց
տէրն մեր :

Ի այց ինչ ներհական գործքեր՝ որ մար-
դուս աւելի խելացի ըսվածնալ աշխարհիս
մէջ կրնէ, կըսխալի, կուրութե մէջը կիյ-
նայ. քիչ մը առաջ տեսանք որ՝ վերուցին
հոգևոր եղբայրութիւնէրը՝ ընկերութիւնէրը՝
վանական միաբանութիւնէրը՝ աւելորդ սե-
պելով ասոնք, որ խափանիչ էին չար միա-
բանութիւնէր հանելու, հիմա անիրաւ մար-
դիկնէրը համարձակութիւն գտան, անոնց
տեղը իրենց չար միաբանութիւնէրը տնկե-
ցին, որ չէթէ միայն այ դէմ՝ հասպա նաւ
թագաւորնէրու դէմ սկսան քարոզել, բայց
կըլուեն : Արիզիթնէրուն ժողովը վերու-
ցին զրպարտելով՝ իբր թէ անոնք թագա-
ւորնէրը սպաննել կըսորվեցընէին, հիմա
աչք կըդոցեն երես կուտան անանկ չար ժո-
ղովնէրու՝ որոնց միտքը իրաւցընէ թագա-
ւորնէրը սպաննել էր : Իս ամմէն բանը
ընդհանրապէս ծանօթ էր արքունեացը .
թագաւորը լուիզ ժո. կերևար որ կուզէր
արդելել աս ժողովնէրը, բայց կառավարքը
մանաւանդ նէքէրը դէմ կըդնէր ըսելով
թագաւորին : „ () ուլէանսին դուքսը որով
„ հետև խռովարար մէյմընէ, աղէկ է որ՝
„ ասանկ խենթ ու մենթ պարապ բանէ-
„ բու զբաղի, իր անուննալ պատիւնալ
„ ժողովուրդին առջին ավրովի „ : (Թագաւ

ւորը դիւրահաւան մէյմը ըլլալով լռեց,
չէր իմանար որ ան պարապ ըսված բանն
էր որ՝ քիչ մը ետեւ իր գլուխը պիտոր ու
տէր :

()ըմը օւղէանսին դուքսը յանկարծ խել
քը փչելով թագաւորին եկավ հրաման
խնդրելու որ ճամփայ ելլայ, մըսըր երթայ,
անկից շամ, հալէպ, իզմիր, ստանպօլ, կա
րելի է զինքը ճանչցընելու համար հոն ե
ղած իրեն չարաժողով եղբարնէրուն, որ
կըսվէին Միտիան եղբարնէր, կամ ՍԷ յովա
նէի ապեհնէր : ()ագաւորը լուիզ ժիւ. պա
տասխան տրվավ : ,, Քուկին մոլուծինէրդ
,, (խույէրդ) գիտցըված են դրեթէ ամ
,, մէն եւրոպայի առջին, հիմա կուզես որ
,, ամմէն աշխարհ, ամմէն ազգի մէջ քու
,, անունդ ավրես վատահամբաւես, քե
,, ղիալ ամօթ, ամմէն Ֆրանսզ ազգինալ
,, ամօթ ,, : Մը ըսելով թագաւորը կուսա
կը դարձուց : ()ուղէանսին դուքսը որ չա
րագործութե մէջ թաթխըված մարդ էր
դժոխային կատաղութի լեցուած, աս խօս
քիս վրայ աւելի կատղեցաւ, ան օրը երդ
վընցաւ իր վրէժը առնելու թագաւորէն :

Ֆրանսային խառնային Բայ ԵԼԼԵԸ, Խոռվոնի .

1787 :

Մը ատեններս Ֆրանսային եկամուտին
անկարգուիը օրէօր կըշատնար, չէր ճանչ
ցըվէր ոչ եկածը ոչ դացածը, ամմէն մարդ

կրնայէր որ ինքը շահի թէև հասարակու-
 թիւր վնասով, արքունիքէնալ շատ ըստակ
 ասոր անոր կուտային տարին, և որովհետև
 շատ մարդալ կար՝ որ կուղէին կառավա-
 րուիւր փլցընել, ասոնք տակէն կրբանէին
 որ աւելի գէշի տանին բանը: Ակամուտի
 վրայ շահապ իշխան (տէֆթէրտար էֆէն-
 տի) դրված էր 1776 նէքէր ճինէվուացին,
 որ մեծ համարում ունեցաւ աւելի ան հա-
 շուէգրովը (տէֆթէրովը) որ 1781 յունվ-
 մէջ հանեց, ուր կըցըցընէր թէ ֆրան-
 սային տարեկան եկամուտը կըհասնէր 500
 միլիոն, իսկ խարճը կըհասնէր 450 միլիոն.
 անանկալ ցըցուց որ ֆրանսան շուտ մը
 կրնայ փոխ ըստակ առնել պատերազմին
 համար՝ որ ան ատենը կըլլար ամերիկայի
 ապստամբներու պատճառովը: Այց կամ
 նէքէրին հաշիւը (հիսապը) մեծապէս սխա-
 լերէր, կամ որ քանի մը տարիէն ետև ֆը-
 րանսային եկամուտին ակ ճար չէր ըլլար.
 ասկից նէքէրը անանկ ալեկոծուէ մը մէջ
 ընկաւ՝ որ չիյտէր ինչ ճար ընէ. մէկ քանի
 դեղ մը ցըցուց որով քիչ մը ճար կրնար
 ըլլալ, մէյմը՝ քիչցընել թոշակը եկամու-
 տը՝ որ աս ու ան կառնէին, մէյմընալ չա-
 փաւորել անհատնում խարճը՝ որ կըլլար
 թագաւորական տունը պահելու համար,
 բայց աս բանով որովհետև շատ մարդու
 սիրտ կըխոցովէր, խիստ շատ թշնամի ելան
 նէքէրին դէմ, անանկ որ՝ օւլէանսին դուքս
 նալ չիկըցաւ պաշտպանել, հարկ եղաւ
 նէքէրին պաշտօնէն ելլալու. ասիկայ է.

ղավ առջի անգամ իր պաշտօնէն ելա-
լու :

Նէքէրին տեղը եկամտից վրայ շահապ իշխան եղավ յօլի Ֆլիւռեան , ասիկայ ուղելով որ խազնան ըստակ մտնայ՝ որովհետեւ բոլորովին չորցերէր , նորէն ոտք հանեց քառսունըութը ընդհանուր հարկապահանջները (տուրք ուզողները) որոնք իր նախորդը վերցուցերէր , վասն զի ասոնք ժօլին 30 միլիոն վճարեցին նորանց՝ զիւրենք տեղէրնին կեցընելու համար , ասանկով ժօլին նորէն սկսաւ ժողովուրդէն փոխ ըստակ առնել : Ասոր համար ժողովուրդեան գանկատը օրէօր շատցաւ ժօլին նաև սառդէնին դէմ , որ պատերազմի դիւանագիր ըլլալով՝ բանակին ու նաւատորմին (օւտուին ու տօնանմային) աղէկ եկամուտը ինքը կերերէր կրսէին : Ան ատենը թագաւորը եկամուտի վրայ շահապ իշխան դրավ () ռմէսսօնը՝ որ խիստ արդար մարդ էր ու խելացի , բայց տարին չիլինյաժ՝ տեսնալով ասիկայ որ շտկըվելու բան չէ՝ հրաժարեցաւ իր պաշտօնէն , ասոր տեղը քալօնը դրին , բարակ մտքով մէյմը՝ բայց աս մարդս պատճառ եղավ կրսէն՝ որ Ֆրանսային կործանումը շուտով եղավ :

Անչ որ դէնէնք՝ իրաւ է որ՝ եկամուտին անկարգութիւր ասոր օրը խիստ շատցաւ , թու շակները՝ որ ասոր անոր կըտրվէին թագաւորէն՝ գրեթէ 100 միլիոն հասան տարին . թող որ՝ թոշակ առնողներուն շատը՝ որ պէս զի մշտնջենաւոր ընեն՝ քալօնին հետ

խօսքը մէկ ընելով՝ անանկ կրճեացուցանէին՝ իբր թէ թագաւորական խաղնային մէկ կալուած մը կամ ըստրկի գլուխ (սերմայէ) մը փոխ տրվերէն, որուն շահը կը հաւասարէր անչափին՝ որչափ որ իրենք թողակ կառնէին տարին. աս կերպ բանեցրնելովն իրենք մէկ առնելիք մը ունեցած կըլլային թագաւորուն վրայ որ կրկնապատիկ եռապատիկ շատնալով կանցնէր իրենց ետեւի եկօղնէրուն ձեռքը: Այլ ինչ յափշտակութի, ինչ ներքին կործանումներբոր մէկ տէրութե պաշտօնատէրերը ուտող կըլլան, և թագաւորը թմրած մնացած կըլլայ:

Ըստ ատեններս էր որ թագաւորը ժողովուրդին հանգստութեը նայելով ինչ որ տանջանք կուտային թագաւորական յանցանքները քննելու ատենը՝ վերցուց. հրամանաց որ բանտերը աւելի աւուղջ տեղ դնեն՝ աւելի հանգիստ. իր տանը խարճը ինչ որ օրը կըլլար՝ շատ քիչցուց. ինչ մենծութի փարթամութի կըլլար՝ կտրեց, անոր համար 400 հոգի իր ծառայութեն դուրս հանեց: Ալ յունվ. 11. մոսկովի հետ դաշնադրութի մը ըրավ առուտուրի վրայօք:

Ֆրանսային խաղնային պահտու-նիւն լէյընէլու համար
ժողովէր հըլլըվէ :

1787 :

Ամերիկային պատերազմը որ վերը պատ-
մեցինք՝ անանկ սոսկալի խարճի մէջ ձգե-
րէր Ֆրանսան՝ որ ինչ դեղ կընէին, ինչ
որ կը ժողվէին, ամմէննալ կը հատցընէր կը-
չորցընէր, որովհետեւ հազար միլիոնէն ա-
ւելի խարճ ընել տրվավ, ազգին քով կա-
րողութի չէր մնացած նորէն տուրք տալու :
Տուրք ժողվէնինալ աղէկ կարգ չունէր .
եկեղեցականները տուրք չէին իտար ազատ
ըլլալով, բայց համար ընծայի անունով այն-
չափ տուրք տրվերէին եկեղեցականք՝ որ
պարտքի մէջ խղղըվերէին, ազնուական-
ներնալ ազատ էին տուրքերէն, իրենց գե-
տինները կալուածները դուրս հանած էին .
ամմէն ծանրութիւնը հասարակ ժողովրդեան
վրայ ընկած էր :

Ալ որովհետեւ հարկ էր բան մը ժողվել՝
մտածեցին որ՝ քսանին տեղը ինչպէս որ սու-
վորութի էր ան ատենը Ֆրանսա՝ ամմէն
դաս մարդու առանց զատելու՝ իրենց գե-
տիններու վրայ ընդհանուր տուրք մը ձգեն,
աս բանիս համարալ ժողովներ սահմանեն,
որոնց մէջը գտնըվին եկեղեցականք, ազ-
նուականք, քաղքըցիք, ու ռամիկ ժողու-
վուրդ : (Ը) Ե որ Ֆրանսազներուն մէջ խու-
վարարներ չըլլային՝ որ եկամուտին հատ-

նիւր կրօնսուէին պատճառ բռնելու խռովութի հանելու համար՝ կարելի է որ ասով ճար մը ըլլար, բայց աս բանս իրենց եղավ առջի դուռը խռովութի ասպտամբութի հանելու : Քալօնը 1787ին սկիզբնէրը ցըցուց հաշիւը (հիսապը) որ 93 միլիոն լիրէ պահսերէր, և որպէս զի իր անունը ավրել չիտայ՝ երևան հանեց ետքը ինչ որ խոհեմութիւր կըրցըրնէր գոցելու, ըսելով թէ պահսածը 93 միլիոն չէր, հապա 110, կամ ըստ ոմանց 140 միլիոն լիրէ, անոր համար նէքէրին ըրած հաշիւը սխալերէր կըսէր. իսկ նէքէրը ամմէնուն առջին կըզուրցէր որ՝ թէ որ քալօնին ըրած հաշիւը իբրև ճիշդ ընդունվի, պէտք էր քալօնը պատժել, որուն համար ամմէննալ կըսէին որ կերօղ է. փոխ ըստակ առնել չէր ըլլար՝ որովհետև ամմէնը իմացերէին խազնային խեղճութիւր, մէկը չէր ուզէր փոխ ըստակ տալ, թող տուր որ բառլամէնդնէրնալ չէին ուզէր փոխ ըստակ առնել, հարկ էր տուրք ձգել, տուրքով ժողվել :

Անոր համար որոշեցին մեծ ժողով ընել. որ իրենց լեզուով կըսեն՝ Սօրապնէրը ժողվէն այսինքն նշանաւորները, ասոնք են թագաւորազունք, կալուած ունեցօղնէր, բառլամէնդնէրուն գործակալնէրը, եկեղեցաւ կաննէրուն և մենծ քաղքընէրուն ու իրակնէրը, դուքսէրը, բառի ըսված իշխաննէր, խորհրդականնէր ևն : Ասանկ ժողով ուրիշ անգամներալ եղած են, 1558, 1596, 1617, 1626, բայց միշտ անպտուղ են եղած, ինչ

պէս որ աս անդամունալ ոչ միայն անսպտուղ
 եղաւ, այլ նաև առջի հիմ (Թէմէլ) ձգե-
 լը եղաւ Ֆրանսային ու եւրոպային կոր-
 ծանմանը: Ասոդապլնէրուն կամ նշանա-
 ւորնէրուն ժողովը 1787 փետրով. 22 ժող-
 վըվեցաւ. քալօննը առաջարկեց ժողովքին
 իր կարծիքը, համոզելով որ աս ճամփով
 ամմէն բան կըշտկըվի, բայց որովհետև քա-
 լօննին դէմ Թշնամինէր կային՝ ինչու ինքը
 եղաւ պատճառ նէքէրը վար ձգելու՝ ասոր
 համար իր ըրած հաշուին վրայ վէճ՝ հանե-
 ցին, իրեն ըրած առաջարկութիւնէրը մեր-
 ժեցին, ասկէց Թագաւորին հարկ եղաւ
 հանել անիկայ իր պաշտօնէն, քալօննալ
 տեսնալով որ՝ ամմէննալ զինքը կատեն կա-
 նիծեն, ասլրիլի 20 ձգեց փախաւ ինկիլ-
 դէռուա, իրեն հետ տանելով իբր 2 միլիոն
 լիբէ, որ Թագաւորական սնտուկին մէջը
 կար: Ար տեղը նստաւ լօմէնի սլուխան դօ-
 լօսսային արքեպիսկոպոսը՝ որ ամմէնէն ա-
 ւելի հակառակեցաւ քալօննին առաջար-
 կութեցը, ջանաց անի վար ձգել՝ ինքը ա-
 նոր տեղը անցնիլ, պարծելով Թէ ինքը
 յարմարութի ունի, բայց իր խելքը շատ
 վար էր անկէց:

Ասանկով խազնային բաց ելլալը յայտնի
 ըլլալով՝ տրտունջը Ֆրանսայի մէջ շատ
 ցաւ, գրգռօղնէրը չիդադրեցան, ինչվան
 մենծ խռովութե կրակը բռնկեցաւ որ վա-
 ըր պատմենք: Աշանաւորնէրուն ժողովը
 չուղեց տուրք ձգել տալ կալուածոց վրայ,
 ուրիշ տուրք առաջարկեց որ արբունիքին

հաճոյ չեղավ, անոր համար շատ հակաճա-
ռութի, ամբաստանութի, քննութի ընե-
լէն ետև՝ մայիսի 25 քակվեցաւ ժողովը
անպտուղ, ան 140 միլիոնին պակսութիւր
մնաց անանկ:

Եւ տարի յունիսի 19. ժՊ. լուիզիի Թա-
գաւորին երկրորդ զաւակը մեռաւ:

Սաբօլէի վէճը ասորավէհեհեհեհեհ հեա, երա-
ւայի մէջ եղած շարժերը:

1784--1789:

Սովորութի էր որ՝ նաբօլին մէկ զինուո-
րական կառավար մը կըխրկէր տօպրավե-
նետիկ կամ որ նոյն է՝ Սակուզա, բայց
1784 չընդունեց աս կառավարս, նաբօլի-
նալ տաքնալով աս բանիս վրայ՝ ամմէն ա-
ռուտուրը տօպրավենետիկցոյ հետ կտրեց,
անոնց ասրանքնալ որ՝ նաբօլիի նաւերուն
մէջն էին՝ ամմէննալ առավ. ասոնց մէջ
մտան ըսպանիայի Թագաւորը ու կայսրը՝
ընդունել տրվին տօպրավենետիկցոյ ան
կառավարը:

Սերը պատմեցինք 1783ին եղած շարժը
սիջիլիայի ու քալապրիայի մէջ, բայց ան
շարժը ատեն ատեն եղավ նաև 1784 և
1786, որ ծաւալեցաւ նաև կուպպիօ, դէն-
նի, նաունի, ըսբօլէդօ, ու ռիմինի, ուր
խիստ սաստիկ եղավ 1786, դեկտ. 25.
շատ տներ՝ ժամէր՝ ուրիշ շէնքէր փլուց,
տասվերկու հոգիալ սպաննեց, քշեց աս

շարժը ինչպէս 1787 մարտ ամիս՝ Վարօլիի
 Թագաւորը ըստակէն զատ արուեստաւոր-
 ներ խրկեց քալապրիա, որ փլփլկած տե-
 ղէրը շինեն, բայց ասոնց շինածները նորէ-
 նոր շարժէր վրայ գալով կըփլցընէին. 1784
 նոյն Թագաւորը խնդրեց սրբազան պա-
 պէն՝ որ ավրըված վանքերուն ապրանքը՝
 աս խեղճերուն օգնելու համար բանեցընէ,
 որուն հրաման տրվավ սրբազան պապը,
 բայց պաշտօնատէրէրը ասկէց համարձա-
 կուծի առնելով շատ նեղուծի տրվին նաև
 չավրըված վանքերու, անանկ որ կրօնաւոր-
 ները առանց ապրուստի մնացին. և որով-
 հետև ասոնք միշտ եկեղեցնայ իրաւասու-
 Թէց կըդպէին, շատ գանկատ կըգրէր սրբ-
 բազան պապը Թագաւորին, բայց ճար չէր
 ըլլար, ինչպէս որ նաբօլիի Թագաւորը
 հռոմ գալով 1785, սրբազան պապին հետ
 խօրաթելով, քիչ մը կախ մնացին բանէ-
 րը: Բայց շարժը 1789 փետրվ. 5. նորէն
 սկսաւ քալապրիայի մէջ, որ ինչպէս մարտ՝
 ատեն ատեն կըցնցէր կերերցընէր, քանի
 նոր շէնքէր որ կային ռէճճիօ ու մօնդէ
 լէօնէ՝ որ է առիւծ լեռ, ամմէնը փլցուց,
 քասդէլը քաղաքնալ մեծ մասը փլաւ նոյն
 տարվանը մէջ, հարիւր մարդ կորսրվեցան,
 Թող տուր խօսվածները, նոյպէս եղավ Սթ
 գերեզման (իտ''. Սան սէբօլքոօ) ըսված
 գեղը:

Շարժին հարուածէն զատ՝ տեղ տեղ ի-
 գալիայի մէջ ջուրէնալ շատ փորձանք քա-
 շէցին. դէվերէ կամ տիբերիս գետը, ա-

տիճէ ու պուէնդա գետերը դուրս պօռթ-
 քալով շատ տեղվանք կոխեցին, մեծ փնաս
 տրվին: Ուրիշ զարհուրելի դիպուածներ
 ալ պատահեցան 1780 անքօնա ու քօռ-
 Ֆու, աղէկ հոգ չիտանելով պահապաննին՝
 անքօնային սարուծխանան բռնկեցաւ. իսկ
 քօռֆուի մէջ սարուծի վրայ աշխատող-
 ները՝ թօփերը լեցընօղները՝ փայտէ չէ-
 քիճներ բանեցընելուն տեղը՝ երկրծէ չէ-
 քիճներ բանեցուցին, անկէց բռնկեցաւ,
 աս տեղվանքը բռնկելով՝ երկինքը ելլալով՝
 մօտիկ եղօղ տնէրուն պատերնալ փլան,
 ճամէրնալ կոտորտեցան, հարիւր մարդու
 չափալ մեռան:

Ղօստանային մէջի խոռովութիւն եկեղեցական կարգա-
 տորութեց կամայ:

1786—1787:

Ուիչ չի շիպիոն եպիսկոպոսը մէկ թեմա-
 կան ժողով մը ըրաւ 1786, մէջը անանկ
 անճաբաններ ժողվեց՝ որ քիչ ուղղափառու-
 թի ունէին, աս ժողովը նոր վճիռներ ը-
 րաւ՝ որ լօթուանի ու քալվինի բաներ էին,
 պատկերները ու շատ մասունքները եկե-
 ղեցնայ մէջէն դուրս հանել, երևելի ա-
 ղօթքները փոխփուտել, ևն: Աս եպիսկո-
 պոսը քիչ մարդ ունէր իր դին բայց տէ-
 րութիւն պաշտպան էր, իսկ մէկալ ժողովա-
 կանաց՝ բռնութիւն ու սպառնալեօք ընել
 տրվին, ո՛վ որ դէմ կրկենար՝ շատ մեծ

վախի մէջ կիյնար . Ժողովը լմննալէն ետև
 Ժողովականք իրենց ընդդիմութիւնը ցրցու-
 ցին , անոր համար որը քշլեցաւ , որը բան-
 տը դրվեցաւ :

Իսկ 1787 դօսքանային մեծ դուքսը ազ-
 դային ժողով ընել տրվավ , որուն մէջը
 գտնւրվեցան իրեք արքեպիսկոպոս , տաս-
 նըջորս եպիսկոպոս . բիսդօյայի եպիսկո-
 պոսի դին եղօղնէրը յանսենեանք ըլլա-
 լով ծածուկ ուրակնէր կրբանեցընէին՝
 որ ուղղափառաց դէմ բանէր սահմանել
 տան , բայց երկու եպիսկոպոսներէն զատ
 որ իրեն դին էին , մնացածները ամմէնը
 ուղղափառութեան վրայ կեցան , անանկ
 մէկ բան մը չըրին՝ որ հաւատքի ու եկե-
 ղեցնայ կանոններու դէմ ըլլայ , միայն քա-
 նի մը նոր կարգադրութիւն ըրին օրինա-
 դրութե վրայօք , անալ դօսքանային դուք-
 սը շատ չիդժարցընելու համար : Բայց ժո-
 ղովքէն ետև տէրութիւնը ինքիրմէ շատ նոր
 կարգաւորութիւնէր ըրավ , ինչպէս կերև-
 նայ ուիչ չի եպիսկոպոսին դրդելովը՝ խոր-
 հրդովը . զոր օրինակ՝ մէկը կրօնաւոր չըլ-
 լայ , քահանայ չիձեռնադրըվի առանց տե-
 րութեան հրամանի . ո՛վ որ իր սահմանէն
 դուրս ուզենայ երթալ , ուրիշ տեղ կրօ-
 նաւոր ըլլալ , անիկայ ծանր տուրք տայ .
 ո՛վ որ եկեղեցական եկամուտ ունի , ան
 տեղէն դուրս չիկրնայ ելլալ . աս բանե-
 րէս զատ՝ հռոմայու նուիրակին ատեանը
 վերցուց Փիօռէնցայի մէջէն , ասանկալ
 պատկերներու վրայ՝ Թափօռնէրու վրայ՝

տօնէրու վրայ՝ նոր նոր կարգաւորութիւնէր
ըրաւ :

()ը մը երբոր բռադօ քաղքին ժամերուն
դռնէրուն վրայէն կը վերցընէին ան քարէ-
րը՝ որոնց վրայ գրած կար Սերող-Թի Լեւիա-
որ, ժողովուրդը վախնալով չըլլայ թէ
ուիչի եպիսկոպոսը Սէ Ղինդօլային մա-
սունքնալ վերցընէ, ինչպէս ուրիշ շատէր
վերցուցէրէր, վազեցին սեպտ. 26. զան
կակնէրը զարկին որ մարդ ժողվրվի. գե-
ղացիներուն բազմութիւլ եկան եպիսկո-
պոսարանը մտան, որչափ բան որ ունէր ե-
պիսկոպոսը տանը մէջ՝ իր գրուածներնալ
իր պատկերնալ հրապարակին մէջը ձգեցին
երեցին, կանոնիկոսներնալ բռնադատեցին
որ սբ Ղինդօլային մասունքը դուրս հանեն,
Թափօր ելան :

Վօսքանային մեծ դուքսը աս բանէրս լե-
լով խիստ նեղեցաւ, իրեն բարեկամ խե-
լացի ատենակալ մը ունէր յանդիմանեց՝
ինչու որ խորհուրդ տըվերէր իրեն զինուոր
ներուն մեծ մասին ճամփայ տալու. իսկ ան
ատենակալը աղէկ պատասխան տըվալ ի-
րեն ըսելով : « Տէր իմ, գիտնալով դօսքա-
» նայի ժողովրդեան հնազանդ բնութիւնը՝
» խորհուրդ տըվի զինուորներուն ճամփայ
» տալու համար, և իրաւունք ունէի տա-
» լու, բայց ձեր տէրուիլ ան ատենը խօսք
» մը չիբացաւ չըսաւ՝ որ պատկերներու
» խաչելութիւնէրու հետ կուիւ պիտոր բա-
» նաք, որ եսալ գիտնալով ուրիշ խոր-
» հուրդ մը տայի : Այլ որ ինծի մնար՝ եր-

„ բոր պատկերներ՝ խաչելու թիւններ՝ հան-
 „ գիստ խաղաղ կը պահեն մէկ ժողովուրդ
 „ մը, ան ատենը իրենցը չօգտելու ըլլայ,
 „ խազնային մէջնալ որչափ կաննէ, կը հա-
 „ նեմ իրենց կուտամ:

Ըս բանէս ետքը ուրիշ եպիսկոպոսը վախ-
 նալով՝ ապահով չի սեպելով չէր նստեր ոչ
 բռադօ, ոչ բիսդօյա, և ոչ Ֆիօռէնցա,
 այլ ձմեռը բիզա կը նստեր, ամառնալ մէկ
 գեղ մը:

Տաճիկն ու հոգիովին մէջի Ռշնահոտիը հարդագերիէ
 պարսառով, շէյի հանսոտիին նոր աղանդը:

1785:

Ա ծովէն սկսեալ ինչվան կասպից ծովը՝
 կովկասու լեռներուն և իր շրջակայ սահ-
 մաններուն մէջը կը բնակին զանազան ազ-
 գեր, որ կը սովին Մնկուէլ, Չերքէս, ()ս,
 Խմերէթ կամ Բըրխապաշ, Ախսէթ, Աիւր-
 ձի, Վարթլ. ասոնք ամմէննալ հնուցմէ
 վեր սովորութիւն ունէին մարդ ծախելու,
 հայրը իր տղան ու աղջիկը կը ծախեր, եղ-
 բայր իր եղբարը. անով մեծ առուտուր կը
 նէին. իրենց մեծ վաստակնին աս տղաքնին
 մանաւանդ աղջիկնին ծախելն էր, առաջ
 պարսից կը ծախէին, ետքը տաճիկն:

Երբոր աս երկիրներուն վրայ մոսկովը խառ-
 նըվիլ սկսաւ ուղղակի կամ անուղղակի՝
 մէջինները յորդորելով արգելեց մարդ ծա-
 խելը. տաճիկ վաճառականները որ շատ

վաստակ ունէին աս առուտուրէն՝ դանկատ
 վերուցին ստանալով դուռը : Վառնալ աս
 տարիին ետքէրը ախլցխայի փաշային ապա
 պըրեց որ՝ Լեզկիներուն հրաման խրկէ՝ որ-
 պէս զի աս երկիրները վազեն, ու տղաք
 աղջիկ քաշեն առնեն իրենց ծախելու հա-
 մար, ասկից եղավ որ Լեզկիները բնառ-
 րութք սորված յափշտակելու թալլելու,
 զանազան ատեն աս ազգերուն վրայ վազե-
 լով շատ գերի յափշտակեցին բերին : Եզ-
 կիներուն յափշտակութիւն մինակ կիւրճիս
 թան ու իր քովի երկիրները չիկեցաւ, հա-
 պա նաև վերի ու վարի չէրքէսնալ վազե-
 ցին, որոնց գլխաւորները յիսուն տարիէն
 վեր իրենց կամքովը մոսկովին տակը ձգե-
 րէին զիրենք, հաւատարիմ մնալու համար
 երգումըրերէին . իրենց երևելի ցեղերէն
 ալ պատանդ տրված ունէին Վըզկար
 բերդին մէջը, որոնք ամէն տարի կրփո-
 խէին ⁽¹⁾ : Բսանկ տերուի ունենալով մոս-
 կովը չէրքէսին վրայ՝ իրեն Վօքելի անուն
 զօրապետը շատ զօրքով հոն խրկեց, որ-
 պէս զի թող չիտայ Լեզկիներուն վազել ոչ
 չէրքէս, և ոչ ուրիշ վերոյիշեալ երկիր-
 ները :

Բս բանիս վրայ զանազան փաշայներէն գան

(1) Յոհաննէս վասիլովիցը երբոր աժտերիսան առավ,
 չէրքէսնալ առավ, մոսկովի գաւանանքը հոն խօ-
 թեց, թէմրուք ըսված իշխանին տղան ու աղջիկը
 ընդունեցան, քոյրը որ քրօզնա կըսվէր՝ ցարին հետ
 կարգըվեցաւ, անով Չէրքէսի իշխանալըսվեցաւ :

կատ եկալ ստանալօլ դուռը, որովհետեւ մարդագերիին մեծ առուտուրը կտրըվեցաւ. դուռը հրաման խրկեց ախլցխայի փաշային՝ որ օգնութի ընէ լեզկի թաթար ներուն, ուրիշ թաթարներնալ գրգռելով՝ մէկ տեղ երթայ զարնէ մոսկովին նոր եկած զօրքը: Ասոնց յարձակումը աւելի գրգռեց սիրտ տըվալ մէկ նոր աղանդապետ մը՝ որ ան դիէրը նոր էր ելած Շէյխ մանսուր ա նունով. ասոր համար ոմանք կրսեն որ հին տիստանի պրամին (կամ քուրմ) մընէր, ուրիշները կրսեն որ լամաին⁽¹⁾ քուրմերէն էր, իսկ ոմանք թէ ասիկայ մէկ խումպարաճի մընէր բիէմօնդէցի, ետքը ճեզայիր գնաց հաւատքը ուրանալով տաճկըցաւ: Անչ և իցէ՝ աս մարդս մարդարէի անուն ունենալով թաթարներու մէջ շատ ընդունելութի գտաւ, երևելի եղալ. ամմէննալ կրտորդորէր մոսկովին վրայ վազելու, կերպ կերպ յուռութուլունքներ (համայիլներ, նուսխանէր, թըլըսըմներ) կըլինէր, կըբաժնէր, ըսելով ասոնք գաղտուկ զօրուի մը ունին, ո՛վ որ վրան տանի՝ ծեծի մէջ զէնքը սուրը թուրը չիկրնար խոցել: Այն չափ տարածվեցաւ իր անունը մանաւանդ ան երկիրները՝ ուր քուսպան և թէրէք գետէրը կանցնին, ինչվան ծունկ չոքելով ասիկայ կրպատուէին հոն տեղս եղօղները. իրեն խօսք տըվին՝ ուր որ ինքը երթալու

(1) Լամա կըսվի Դիպէդ աշխարհին մենծը՝ որ հնաստանին գրացի տէրութիմընէ:

ըլլայ՝ իրենքալ ետևէ գան . ասանկով քիջ մը ատենի մէջ 40 հազար մարդ ժողովեց գլուխը , մոսկովներուն վրայ գնաց :

Մոսկովը հոն ունէր 20 գունդ . ոտանաւոր զօրք , 10 գունդ ձիաւոր զօրք . ասչափ զօրքնալ ցրուերէր պահպանելու համար՝ սև ծովէն ինչվան կասպից ծովը (գիլան տէնիզի) , որոնք քիչ քիչ աս դիս ան դին զարնըվելով տկարացերէին , անանկ որ շատ գունդ զօրաց մէջը՝ հազիւ մնացերէին 500 հոգի , անոր համար Վօքէլի զօրապետը ետ քաշել տրվավ զօրքը քրզկար բերդին տակը , որոնց վրայ թաթարները կատաղութի յարձրկելով՝ 800 հոգիի չափ մոսկովներէն կտորեցին : Մս միջոցին մէջ մէկ յայտարար թուղթ մը երևան ելավ բեդրօսպուրկին մէջ տաճկէն գրված , որ լեզկիներուն ըրած թշնամուհիը կիւրճիւններուն և քովի եղած ազգերուն դէմ՝ վար կըզարնէր ըսելով :
 ,, Մն ամմէն թաթարները անկախի պէս
 ,, էին տաճկէն , անոր համար պարապ էր
 ,, թէ որ մոսկովը աս բանիս վրայ տրտըն
 ,, ջար , աւելի հեշտ էր մոսկովին անոնք
 ,, զսպել քան թէ տաճկին . աս բաներուս
 ,, էր , որովհետև ինքը պատճառ եղավ
 ,, որ բռնութեամբ անկախ ընել տրվավ
 ,, ան թաթարները ,, : Մս խօսքերս շատ հեղ ըավերէր գուռը՝ ըհիս էֆէնտին մոսկովի դեսպանին հետ խօրաթելու ատենը :

Մս ատեններս հրաման եկավ բեդրօսպուր

կէն Մբրաքսին մոսկով զօրապետին, որ իր ամմէն զօրքը առնէ, կիւրճիսթանի իշխանին քիչվոր զօրացը հետ խառնելով՝ թաթարնէ ըուն ետեւէն վազէ, ինչ մարդ ինչ անասուն որ յափշտակէր տարէրէին՝ խալսցընէ . ա սոնց օգնուածին խրկըվեցաւ նաև ձիաւոր զօրք, և 10 գունդ (բուլք) խաղախնէրու, աս զօրքը թաթարնէրուն վրայ վազելով՝ երկու հազարէն աւելի գերի ըրին, սրոնք մոսկով ու կիւրճի գերինէրուն հետ փոխեցին : Աճալէ գնդապետնալ 7 հազար զօրքով վերոյիշեալ մանսուրին վրայ վազեց գետի մը քով, շատ զօրք կոտորեց հոն :

Սոսկովին ուղած խնդիրնէրը րաճկէն, րաճկէնալ պարասխանը .

1786 :

Ըս տարի օգոստ. 10. ստանալօլ եղած մոսկովին դեսպանը Պուլկաքօֆ՝ աս թուղթս ցրցուց վեզիրին, որուն մէջը ասանկ էր գրըված : « Շատ հեղ մոսկովը ուզեց որ տա՝
 ,, ճիկը զսպէ լեզկինէրուն ըրած ասպատա-
 ,, կուծիր (չարխայուծիր) ու յափշտա-
 ,, կուծիր . տեսնալով որ շատ կուշանայ՝ ու-
 ,, զեց որ ախլցխայի փաշան որ խորաման-
 ,, կուծեամբ ձեռք տրվալ օգնեց լեզկինէ-
 ,, ըուն, դուռը պատժէ, թէ որ պատժե-
 ,, լու չըլլայ՝ ան ատենը մոսկովը իրաւունք
 ,, կունենայ պատժելու, որ պատճառ կըլ-

,, լայ երկու տէրու թէյս մէջ՝ մոսկովին ու
 ,, տաճկին մէջ թշնամու թի ձգելու ,, :
 Քանի մը օրէն ետև դուռնալ ասանկ պաւ
 տասխան տըվալ : ,, Արուհետև տաճկին
 ,, ու մոսկովին մէջ որչափ դաշնագրու թի
 ,, որ եղած են , մէկ խօսք մը եղած չիկայ
 ,, կիւրճիս թանի խանին կամ իշխանին վը-
 ,, ըայ , ինչպէս կրնայ գանկտիլ մոսկովը թէ
 ,, ինչու համար ախլցխային փաշան օգնուի
 ,, տըվալ լեզկինէրուն վազելու սասպատա-
 ,, կելու վերոյիշեալ իշխանին երկիրը , ինչ-
 ,, պէս մեզ կըսեպէ պատճառ բարեկամու-
 ,, թինիս կոտրելու : Աս բանիս վըայ ամե-
 ,, նևին մէկէրնիս չենք կրնար գանկտիլ թէ
 ,, որ գանկտելու պատճառ մընալ ըլլայ՝ ա-
 ,, լելի տաճկին դուռը իրաւունք ունի
 ,, գանկտելու մոսկովին խաբեբայու թեանը
 ,, վըայ , որ մեզի հպատակ եղած կիւրճիին
 ,, իշխանը՝ մենէ գլուխ քաշել տըվալ ասըս
 ,, տամբեցուց , որպէս զի անով իրեն դին
 ,, քաշէ տաղիս թանը ու ատըրպէյճանը ,
 ,, չիսլահեց քայնարձըքի դաշնագրու թեան
 ,, առջի թէու թիը 1774 եղած , ուր տեղ
 ,, խօսք դըվեցաւ թէ մէկ անիրաւուէ կամ
 ,, թշնամուէ գործք մը չիցըցընենք : Ատոր
 ,, համար ախլցխային փաշան պատժելը չըլ-
 ,, լար՝ ինչվան որ անոր յանցանքը յայտնի
 ,, չիցըցվի , բայց թէ որ մոսկովը արդարու-
 ,, թիը մէկ դի ձգէ , տաճկին սահմանները
 ,, թշնամու թի կօխէ , տաճիկնալ կըհար-
 ,, կաւորի բունու թի դէմ բունու թիւն ցը-
 ,, ցընել :

Ըստ խօսքիս վրայ քանի մը շաբաթ անցավ,
 պուլկաքօֆ աս թէուծինէրս առաջարկեց
 դրան ընդունելու, որպէս զի ամէն թշնա-
 մուծէ առիթնէրը վերնայ: Ինչ. Տաճկին
 դուռը միայն մոսկովին վերաբերեալ ճանչ-
 նայ կիւրճիսթանը ու քովի երկիրնէրը:
 Թ. Շուտով դադրեցրնէ լեզկինէրուննաւ
 ապազանէրուն յափշտակուծիը թշնամու-
 թիւնը՝ որ կիւրճինէրուն գէմ կընեն:
 Դ. Ինչ հակառակուի որ կըլլովի դըլպու-
 բուն եղած աղիհանքի (թուզլայի) համար՝
 բարեկամաբար թող շտկէ: Դ. Սառնայի
 մէջ մոսկով քօնսօլ մը նստի, ինչպէս որ
 շատ հեղ խնդրերէ մոսկովը: Ե. Սեծ պատ-
 րաստուծի պատերազմի որ տաճիկը կընէ
 ցամաքի ու ծովի վրայ, ինչ պատճառով
 կընէ՝ թող զուրցէ: Դ. Ուլահ պուղտան-
 ցոց չարչարանքը դադրեցրնէ՝ որ կըլլայ
 իրենց պէյերուն պատճառով:

Ըստնց ամէնուն մէկիկ մէկիկ ասանկ պա-
 տասխան տըվավ դուռը: Ինչ. Կիւրճինէրը
 միշտ տաճիկի տէրուծէ տակը մնացած են,
 և ոչ երբէք մոսկովին: Թ. Լեզկինէրը ան-
 կախ են, դուռը իրաւունք չունի անոնց
 զէնքերնին վար ձգել տալ: Դ. Բղէհանքին
 բանը կընայ բարեկամաբար շտկըվիլ, հե-
 րիք է որ մէկ մոսկով թարգման մը դըվի,
 և մէկ պաշտօնակալ մը տաճիկի դրան դիա-
 ցէն: Դ. Գուռը կընար թողուլ մոսկով
 քօնսօլ մը նստելու վառնայի մէջ, թէ որ
 երկըրցիք գէմ չիդնէին, և որովհետեւ վառ-
 նա մէկ վաճառականուծէ մը տեղ չէ, ու

րիշ քաղաք մը կըրցըցընէ տաճիկը նստելու՝ որ աւելի շահաւոր կըլլայ: Ե. Տաճկին դուռը զինքը կըզինէ իր պաշտպանութիւնը համար, ինչպէս որ սովորութիւն է ամմէն եւրոպայի տէրութիւնցը, առանց մէկ թշնամութե նշան մը տալու: Դ. Ուլահ պուղտանի պէյերուն հանգստութիւն աւելի տաճկի շահին կընայի քան թէ մոսկովին. անոր համար տաճիկը հոգ կըտանի աս բանիս վրայ:

Մոսկովին միտքը վաճառականութե վրայ, եւ ինչիւնէն ընտանաւոր:

Տաճկին պատերազմը չիպատմած՝ անոր պատճառները հասկըցընելու է, ինչու որ տաճիկը մինակ ինքիրմէ չեղավ որ աս պատերազմը բացաւ, հապա մեծ գրգռիչ ունեցաւ իրեն ինկիլիզը. ինկիլիզինալ գրգռելը մոսկովին գէմասոր համար եղավ որ՝ մէյմը՝ մոսկովը ինկիլիզին հետ առուտուրը կտրեց, Ֆրանսզին հետ բացաւ. մէյմընալ ինկիլիզը վախցաւ որ՝ մոսկովը խըրըմը՝ կիւրճի ազգերը՝ թաթարները առնելով՝ միտքը աս էր որ հինտիստան երթալու նոր ճամփայ մը բանայ ցամաքի մէջէն. հինտին ապրանքները ան ճամփով ինքը բերէ եւրոպա, ան ատենը խիստ մեծ փնաս կըլլար ինկիլիզին:

Հիմա առջի բանէն սկսելով պատմել, գիտնալու է որ՝ ինկիլիզը առաջ խիստ բարե-

կամ էր մոսկովին, ինչու որ մինակ ինքը առուտուր ընելով մոսկովին հետ՝ իրմէ մեծ շահ ունէր, աս բանիս մէջ միշտ մնալու համար՝ մոսկովին օգնութիւն ըրաւ ան ձեռին մէջ՝ որ եղաւ 7. սուլդան մուսղաֆային հետ, իսկ երբոր 1780 ինկիլիզին հետ կրուիւ կընէին Ֆրանսզը, սպանիան, ու Ֆիլէմէնկը՝ ամերիկացոց համար, (որ վերը երկան պատմերենք,) մոսկովը տեսնալով որ աս տերութիւնէրը իր չէզոք ըլլալը չնայելով իրեն նաւերնալ կրբունէին կառնէին մանաւանդ ինկիլիզը: Ասոր համար զինեալ չէզոք մնալու համար ընդհանուր դաշնադրութիւն մը ըրաւ, (որ նոյնպէս վերը պատմած ենք), ան դաշնադրուէ հետ միացան փորթուկալը, սպանիան, Ֆրանսրը, նաբօլին, Ֆիլէմէնկը, պրուչն ու նեմցէն, շվէտնալ տանիմառքանալ նաւեր պատրաստեցին, որ պէտք եղած ատենը մոսկովին հետ միանան:

Աս դաշնադրութիւնը խիստ անհաճոյ եղաւ ինկիլիզին, որովհետեւ 200 տարվընէ վեր զինքը մենծ ծովու վրայ թագաւոր կրսեպէր, աս մենծութիւն ետ չիկեցաւ և ոչ ժողովիցին ատենը՝ որ Ֆրանսային զօրաւոր թագաւորը եղաւ. հիմա մոսկովին ստանկ մենծնալ մը՝ ծովու վրայ միաբանիլ մը՝ իրեն պզտիկնալ կրսեպէր, շատ խոցվելով աս բանիս համար՝ ասպերախտ կրկուէր ըզմոսկովը. և թէպէտ ան ատենը աչք գոցելը աղէկ սեպեց, բայց ամմէնը կրսէին որ՝ ինկիլիզը մէկ մեծ վրէժխնդրութիւն մը պիւ

տոր ընէ ասոր վրայ : Աւ իրաւ զուրցած
նին պէս թէպէտ բարեկամացան մէկ տեղ՝
բայց հիմա պատմենք պատճառները՝ որ աս
երկու տէրու թէց մէջ տարածայնուի տհա-

ճու թի ձգել տրվին :

Ատեւէ ետե գործքերալ հանդիպեցան՝ որ
աւելի պաղեցուցին մէկը մէկ . մէկը ան
էր որ՝ իրենց մէջի եղած հին դաշնագրու
թիւր առուտուրի վրայօք լինցաւ 1785 . նու
րէն սկսան խօսիլ մէջերնին նորոգելու հա-
մար . կուզէին թէու թինէրը աւելի լաւ
ճամփու մը բերել, բայց ասոր վրայ շատ
դէմ արգելքներ կը գտնային : Անչու որ
ինկիլիզին բաւլամէնդը հաշիւ (հիսապ)
ընելով կը գտնար որ աս առուտուրէն մոս-
կովին մեծ շահ կը լար, ինկիլիզին մնաս .
մէկ միլիոն կինէէ ինքը կը կորսնցընէր, ըստ
որում մոսկովէն խիստ շատ ապրանք կեր-
թար ինկիլիզէ առա, քան ինչ ապրանք ու
ձեռագործ որ ինկիլիզէ առայէն կուգար
մոսկովստան . իսկ աս մնասը քանի երթար՝
շատնար պիտոր կըսէին զանազան պատ-
ճառներու համար . մէյմը վերոյիշեալ չէ-
զորու թէ համար, մէյմընալ նոր կարգաւո-
րու թէց համար՝ որ մոսկովը ետեէ ետե
ըրալ եկամուտներու վրայ . և երրորդ՝ ան
օրէնքին համար՝ որով մոսկովը արգելեց
որ՝ իր երկրէն ելած ապրանքները ուրիշ
տէրու թէ նաւերը չիտանին, միայն մոսկովի
նաւերը դուրս տանին : Այն որ նայելու ըլ-
լանք, աս կարգաւորու թինէրուն օրինակը
առաջ ինկիլիզը տրվալ իրեն անուանի

հրովարտակովը նաւարկուէ վրայ, որ շատ հեղ նորոգվեցաւ ու հաստատվեցաւ. հիմա մոսկովնալ ինկիլիզին տրված օրինակին հետեւեցաւ: Նայց աս մոսկովին արդեւքը՝ և յովսէփ կայսեր արդեւքը՝ որ աս ատեն ներս ինքնալ արդեւքը՝ որ դուրսի ձեռագործները իր երկիրը չիմտնան, ամմէն առուտուր ընօղ տէրութիւնէր աւելի փասս սեպեցին իրենց, քան թէ առջի պատերազմէրուն կորուստը, անոր համար շատ գանկատ ըրին թէ մոսկովին՝ և թէ նեմցէին, մանաւանդ ինկիլիզը՝ բայց անօգուտ, վասն զի իրենց ժողովուրդին և իրենց խազնային օգուտը կըմտածէին, չէ թէ օտար տէրութեց օգուտը:

Մսկէց զատ՝ բեդրօպուրկ նստող Ֆրանսըզին դեսպանը որ կըսվէր Սէկուր կոմս, բօդէմքին իշխանին սիրտը բոլորովին իրեն էր քաշէր, բօդէմքինին ձեռքովը հաւնեցուց կատարինէ թագուհւոյն՝ որ 1784ին ետքէրը Ֆրանսայի հետ առուտուրի դաշնագրութի մը ըրավ⁽¹⁾, (թէպէտ ետքը Ֆրանսայի խռովութիւր պարապ հանել տրվավ): Մս գաշնագրութե միայն ձայնը ետքի աստիճանի կատողեցուց՝ ինկիլիզները, որոնք որոշեցին բացարձակ վրէժ առնելու մոսկովէն, ինչվան երեսը տալ սկիտան կատարինէին իրենց երեսփոխանին ձեռքովը՝

(1) Ոմանք կըսիչեն 1787. յունվ. 11 եղած գաշնագրութի ֆրանսզի ու մոսկովի մէջ առուտուրի վրայօք:

որ բեղբոսպուրկ էր, բայց կատարինէն առանց սրդողելու մը ասանկ պատասխան տրվավ: „Արբաղձամ բարեկամ ըլլալ ինչ
 „ կիլիզի՛ բայց ոչ գերի ըլլալ, միշտ պատ
 „ ըստ եմ նորոգելու հին առուտուրի կա
 „ պը, ան խօսքերով ինչ որ առաջ եղած
 „ էր „: Բայց ինկիլիզները կողզէին ան
 դաշնադրութիւնը փոխելու, աւելի արտու
 նուութիւնէր առնելով իրենց համար, որոնց
 մոսկովը հաւանութիւն չէր իտար:

Ինկիլիզներուն առջի վրէժ առնելնին եղավ
 Ֆիլէմէնկին մէջը խռովութիւն հանել. անով
 զատեցին Ֆիլէմէնկը Ֆրանսոզին դաշնա
 դրութե կապէն՝ ինչպէս որ վերը պատմե
 ցինք, և եռապատիկ կապեցին պրուշի նոր
 թագաւորին հետ: Ամէն բանէն աւելի՛
 ինկիլիզներուն վաճառականները խիստ
 վախ ունէին որ՝ մոսկովը ազատուիւն ձեռք
 ձգելէն ետև իր նաւերը համարձակ անցը
 նելու ստանալօլի ու չանախ խալէսիի պօ
 ղազէն, և խրրըմին ու դամանին վրայ տէր
 ըլլալէն ետև, հինտիստանի առուտուր մը
 կրբանայ ցամաքի ճամփով՝ որ աւելի կարճ
 կըլլայ և աւելի անվտանգ՝ քան թէ իրենց
 ըրած ոլկիանոսի ճամփան. ան ատենը ի
 ըենցը կըգոցվէր՝ ինչպէս որ վէնետիկցոց
 ճամփան գոցվեցաւ երբոր փօրթուկալցիք
 նոր ճամփայ գտան: Մոսկովին միտքը ա
 սանկ ըլլալու նշաններնալ կըտեսնային որ՝
 կատարինէին հրամանովը նոր նոր ջրէ ճամ
 փայնէր կբացվէին սև ծովուն ու կասպից
 ծովուն մէջ եղած ցամաքին վրայ, ինչ գե

տէր, ինչ լճէր (կէօլէր) որ կային հոն
տեղւանքը՝ մէկ մէկու կրկայցնէին, որպէս
զի երկու մեծ ծովը իրարու խառնէն, սև
ծովէն ինչպիսի կասպից ծովը նաւեր գան
երթան :

Տես հիմա ինչ բաղձանք, ինչ ցանկութի
վաճառականութի վրայ. աս գլուխը կար-
դալով կիմանաս ուժը ան խօսքերուն՝ որ
գրեցինք ներածութի մէջ, թէ ինչէր կրնէ
շահասիրութի ու վաճառականութի ոգին
աս ժր, դարուն մէջ. որոնք աղէկ կըլլայ
թէ որ հիմա նորէն դառնաս, աչքէ անցը-
նես կարդաս :

Հինտիստանի ճամբոս- վրայ :

Սոսկովին միտքը հինտիստանի նոր ճամ-
փայ մը բանալուն վրայ աղէկ հասկընալու
համար՝ պէտք է հին տեղեկութիւնները գիտ-
նալ : Առաջ հինտիստանին սպրանքը եր-
կու ճամփով կուգար աս տեղւանքս . մէյ-
մը՝ ծովու ճամփով ասանկ . առպի նաւերը
հինտին սպրանքները մանաւանդ պահար
ները կառնէին պապիւլմանտէլ նեղուցէն
կըմանային Սուէյիշ տէնիզը, (որուն հի-
ները Վարմիր ծով կըսեն), կրբերէին
սուէյիշ քաղաքը, անկէց ցամաքով կրբե-
րէին խփէնտէրիէ, որ իրեք օրվան ճամ-
փայ է . անկից վէնետիկի նաւերը կրբե-
րէին եւրոպային բամբէն տեղը կրբաժնէին :
Մէկ ճամփայմընալ կար ցամաքի՝ որ հին-

տի երկիրներէն կուգար ինչլան կասպից
ծովը (տճ. Վիլան տէնիզի), անկէց տօ-
նաւիս կամ թէն գետը, անկէց սև ծով,
սև ծովէն ստանալօլին սօղազը ևն :

Երբոր 1501 փօրթուկալցի անուանի նա-
ւապետը՝ որ կըսվէր վասքօ կամա, ափրի-
կէին պինտ հարաւային քիթը անցաւ, որ
կըսվի չրուանդան բարեյուսոյ, նոր ճամ-
փայ մը ցրցուց, անկից ետքը ուկրիանոսէն
բերել սկսան հինտին ապրանքը, թէպէտ
աս ճամփան երկան ու վտանգաւոր է. 2/4
հազար միլի չափ ընել պէտքը կըլլայ եր-
թալ գալու համար. բայց փօրթուկալցիք
աս ճամփով շատ վտանգներ քաշելով տէր
եղան հինտին ան ծովեզերքին՝ որ կըսվին
քօռօմանտէլ ու մալապար, և ան կղզինէ-
րուն՝ որ հինտ ու դանդէս ըսված գետերուն
անդի գին կիյնան, առաջնորդութի մեր
հայնաւապետներուն (խափուտաններուն),
որ ան ատենները շատ յաճախերէին հին-
տին ծովուն մէջը :

Հարիւր տարի անցնելէն ետև Ֆիլէմէնկը
եկավ դուրս հանեց վունտեց փօրթուկալ-
ները, հինտին սրահարները ինքը բերել
սկսաւ, ետքը Ֆրանսոզնալ տեղվանք առաւ
հինտիտան, որուն անուանի տեղը եղավ
բունդիչէրի քաղաքը, թէպէտ չիհասաւ ան
մենծութիւր՝ որ վերոյիշեալ երկու տերու-
թիւնները ունէին :

Մնկիլիզնալ կամաց կամաց առաջ դնաց
հինտիտան. 1764 իր ձեռքին տակը ունէր
մատրաս քաղաքը՝ քանիմընալ պղտիկ տեղ

վանք. ան ատենները լուստ քլիվ իր զօր-
քով մտաւ պէնկալա դաւառը հայերուն
ձեռքովը, որ մողոլի տէրութի գաւառնէ-
րուն մէջ պինտ հարուստն է, օրէօր աւելի
տեղվանք առնելով ինկիլիզի բաժանորդու-
թիւր (քօմբանիան) ամմէն քօռօմանտէլ
ըսված ծովեզերքին տէր եղավ. գանդէս
գետին ետքի ճիւղէն սկսեալ ինչվան մա-
տուր ու դանձեաւոր՝ սէյլան կղզիին դիմա-
ցը. մէջը 20 միլիոնի չափ մարդ լեցուն.
ան տեղերուն ասորանքները ու ձեռագործ-
ները ինչ գնով որ ինկիլիզը կուզէ՝ ան գը-
նով կառնէ, եւրոպա բերելով՝ ինչ գնով
որ կուզէ՝ կրծախէ, մեծ խազնա կրվաստը
կի. անով կրնայ ծեծերուն համար անչափ
խարճ ընել, նաև ուրիշ տէրութից փոխ
ըստակ տալ, անանկ մեծ նաւատորմիդ (տօ-
նանմա) մընալ ծովու վրայ սլահէլ 800
նաւով և աւելի ⁽¹⁾: Մասնկալ Ֆիլէմէնկ-
ները 1704 տարիէն առաջ շատ կըշահէին
հինախտանէն, երբոր իրենց ձեռքն էր բա-
րէյուսոյ հրուանդանը, պագավիան, սէյլա-
նին տեղվանքը, ամպօին ևն:

Մհա աս մենծ շահն է սլատճառը՝ որուն
համար ինկիլիզները կըվախնային կորսնցը-
նելու թէ որ մոսկովը նոր ճամփայ մը բա-
նալու ըլլար, մանաւանդ կըյիշէին որ՝ հին
ատենը աս գոցված ճամփան կըբանեցը-

(1) Աս բանիս վրայ աղէկ տեղեկութի կրնաս գըտ-
նալ 1816 տարվան Եղանակին մէջը Թղթ. 208.

նէին հռոմայեցիները հայ վաճառականնէ-
 րուն ձեռքովը, կրբանեցընէին նաև ան ժո-
 ղովուրդները՝ որոնք հիմա մոսկովի տակն
 են: Աւ իրաւի որ 300 տարի առաջ մոսկո-
 վին ցարէրը ուղեցին նորէն ասոր փորձը ը-
 նել. առջինն որ՝ աս բանս առաջարկեց ի-
 ըենց՝ կրսեն որ ճինիվիզ մըն էր պօղոս չէն
 դուրիօնի անունով, որ հռոմայէն դեսպան
 էր գացած մօսքովիս. ասիկայ առաջարկեց
 յոհաննէս վասիլովիչ ցարին նորէն բանա-
 լու ցամաքի ճամփան հինտիստանէն եւրո-
 պա, բայց որովհետև պէտք էր քովի թա-
 թարնէրուն մէջէն անցնիլ, անկարելի է-
 ղավ ան թաթարնէրուն հետ մէկ դաշնա-
 դրութի մը ընել առուտուրի վրայօք, ո-
 րովհետև հետէրնին մէկ թշնամութիւն մը
 ունէին: Այժմ պետրոս խիստ կրբաղձար
 աս բանիս վրայ, բայց շվէտի պատերազմին
 մէջ ըլլալով, և բրութ եղված դաշնադրու-
 թէր կէօրէ չիկրնալով սև ծովուն վրայ նա-
 ւարկել, իր յաջորդներուն թողուց, ինքը
 միայն կասպից ծովուն եզերքը աղէկ բերդ
 մը ու իջևան (խան) մը թողուց. բայց ան-
 նա իվանօֆնա իր թողը աս ճամփուն վրայ
 անհող ըլլալով՝ կամ ուրիշներէն խաբվե-
 լով՝ պարսից ձեռքը թողուց աս տեղվանքս,
 ըստ որում շատ խարճ կըլլըվէր ան տեղէ-
 րուն համար:

Հիմա կատարինէին ձեռքը անցնելով պրզ-
 տիկ թաթարը՝ խըրըմ՝ քուպան՝ որ կա-
 պահօլցընէ տօնաւիս կամ թէն գետին նա-
 ւարկութիւր, կիմանար որ կրնար աս ճամ-

փան բանալու, որովհետև Մսղրապատ որ
կասպից ծովին վերջին ծայրն է, խիստ յար-
մար է ժողովատեղ ըլլալու մոսկովէն ու
հնտէն եկած ապրանքներու, նաև նաւե-
րուն՝ որ կուգան տօնավիս ու էթիլ կամ
վօլկա գետերէն՝ ջրանցքներով միացած ըլ-
լալով ⁽¹⁾։ մօտ եղած Պալխ քաղաքէնալ
մէկ լան ու հեշտ ճամբով մը հինտին եր-
կիրը կանցնին, ինչպէս են լահու ու սեր-
քերտ, ուր կը ժողվըվին ան երկիրներուն
ամէն ապրանքը՝ որ հինտ գետին քովը
կիյնան. աս գետս ովկիանոս ծովը կինջնայ
գուճրադ ցամաք կղզիին արեւմուտքէն ան-
ցնելով, և ցամաքին ներսերը կը քալէ. գե-
տին ճիւղերը ինչլան քիչմիրէն կինջնան՝
որ պուխարայի ու պարսից մէջն է, խիստ
անուանի է իր ձեռագործներուն համար.
հիմա երբոր ասղրապատ վաճառատեղի
ըլլայ՝ աս տեղերուս առուտուրը աւելի
կը շատնայ:

Մասնկ եղածին պէս շատ վնաս կըլլար եւ-
րոսայի վաճառական ազգերուն, միայն
գերմանիային կամ նեմցէին համար խիստ
շահաւոր կըլլար, անոր համար յովսէփ
կայտըրը խիստ կը յորդորէր մոսկովը իր գաշ-
նակիցը աս ճամբան բանալու համար, և

(1) Աս նաւահանգիստս 500 մղոնի չափ հեռու է
պալխ քաղաքէն պուխարայի՝ որ կը մօտիկնայ հինտի
երկրին. հոն ամէն տարի շատ կուգան կերթան
հինտ ու հոյ վաճառականներ, ան երկիրներէն ճամ-
փայ ընելով որ մոսկովին ու պարսից մէջը կիյնան:

ասոր համար բեղբոսպուրկ գնաց, ետեւէ
 ետեւալ դաշնադրուի ըրալ մոսկովին հետ :
 Մ.ս բանիս մէջ մոսկովինալ աղէկ էր նեմ-
 ցէն դաշնակից ունենալ, վասն զի մոսկովին
 մեծ ասորանքը ըլլալով քիւրք, խավեար,
 տախտակ, կաշի, չունի անանկ ասորանք մը՝
 որ հինտին երկիրը անցնի փոխելու համար .
 սիպիւրին մէջը ոսկիի արծըթի հանք ունի՝
 բայց մոսկովին ըստակ տպելուն չօգտէր .
 իսկ նեմցէն կերպ կերպ ասորանք ունի՝ որ
 հինտ կանցնի : Մ.ս մտքով յովսէփ կայսրը
 1785 ապրիլի 26 դաշնադրութիւն ըրերէր
 տաճկին հետ՝ որ ազատ նաւարկութի ու-
 նենայ տաճկին ծովէրուն վրայ, սարսափը
 շիխուրսանտներէն անվտանգ ըլլալով, նաև
 դունա գետին վրայ՝ որ սվէվիայէն կանցնի
 սրավիէռա, աւսդրիա, մաճառստան, և
 հինկ բերնով սև ծովը կըթափի, ասով
 ամմէն մոսկովին երկիրը կրնան մենծ նա-
 ւեր նաւարկել, նաև խրըրմին նաւահան-
 գիսանէրը երթալ . ուր թէ որ հինտին ճամ-
 փան բացվելու ըլլայ, նորէն կըդառնայ
 առջի վաճառականութիւնը՝ ինչպէս որ
 կըլար վենետիկցոց ու ճինիլիզներուն ա-
 տենը :

Հիմա աս միտքերս ավրելու համար՝ մոսկո-
 վին թշնամինէրը ինկիլիզը նաև սրուշը
 կուզէին որ խրըրմ մոսկովին ձեռքէն առ-
 նըլի, անոր համար տաճիկը կըզրգուէին
 ձայն հանելով որ՝ իրեք տարվան մէջը խը-
 ըրմցիք խիստ կըճշգոհային մոսկովին ձեռ-
 քէն, անոր համար մոսկովը դեռ չէր կըր-

նար իրեն տէրուիլը հոն հաստատել: Այլի՛
 ինչ նախանձ, ան նախանձէնալ ինչ կոտո-
 րած, ինչ արիւնհեղուծի, կարգա՛ ինչ որ
 գրեցինք ներածուէ մէջ կրից վրայ:

Բ. Աստարինէ Ռաֆուհիին Ճաճորդութեանը դէպ
 'ի եւրոճ.

1787:

Սոսկովին թշնամիները՝ խըրըմի մէջ չի
 կըրնար մոսկովի տէրուծիը հաստատուիլ
 կըհռչակէին, իսկ մոսկովիները իրենց թա-
 փաւորը ան ատենը խըրըմ՝ բերել կուտային.
 բողէմքին իշխանը որ կառավար էր եղած
 խըրըմին ու պղտիկ թաթարին վրայ, յոր-
 դորեց կատարինէ թագուհին՝ որ իր ամէն
 փարթամութիւնը անձամբ երևնայ ան տե-
 ղացի ժողովրդեան մէջ, որուն պատճառը
 զանազան ազգ զանազան բան սեպեցին.
 մանաւանդ կարծեցին որ հոն կերթայ հան-
 դիսիւ թագուհի պսակվելու համար պղտիկ
 թաթարի վրայ: Թագուհին շատ մեծա-
 մեծներով բեգրօպուրկէն ճամփայ ելավ
 1787 յունվ. 18. գիշեր ցորեկ ճամփայ կը-
 ներ միշտ, չէր կենար որ միայն որոշեալ
 տեղվանքը ինջնալու համար. ճամփուն եր-
 կու դիացէն 30 գրկաչափ (խուլաճ) մէկ-
 մէկէ հեռու միշտ կրակ կըվառէր. բազ-
 մուի մարդոց երկու դիացէն կըժողվըվէին
 տեսնալու համար:

Ա. Եր օրվան մէջը ըզմօլէնսքօ հասաւ տաս-

նը հինկ օրէն ետև մտաւ քիովիս՝ որ խիստ
 զարդարված էր, հոն էին ժողովրդած լէհին
 մեծ իշխանները՝ որոնք որ մոսկովին տակն
 էին, որպէս զի իրենց պատիւը տան, որոնց
 գլխաւորն էր Սաբեղայ իշխանը՝ որ հայու
 ազգէն եկած իշխանութի մընէ լէհի մէջ,
 հոն էր նաև բողեմքին իշխանը՝ նասսօ սիէթ
 իշխանին հետ մէկ տեղ ⁽¹⁾: Հոն տնեբէր
 կամ պօրիսթէնէս գետին վրայ նաւատոր-
 միդ (տօնանմա) մը պատրաստրված կար
 122 նաւերով որ քերսօն պիտոր տանէր.
 ասոնցմէ 40 նաւը թագաւորական մարդիկ
 ներուն համար էին, մնացածը ուրիշ մէն-
 ծերուն համար՝ որ եկերէին իրենց կամքո-
 վը ընկերութի ընելու համար: Մայիսի 6.
 մտաւ թագուհին մէկ նաւ մը՝ որ մեծ չէք-
 տիրի կլմանէր, մէջը սրահներ՝ խուցեր՝
 խիստ մեծաչէն զարդարված ան երիտա-
 սարդ վարպետներուն ձեռքով՝ որ թագա-
 ւորական խարձով հռոմ խրկրված էին
 արհեստ սորվելու համար. ասոնք իրենց նոր
 վարպետութիը ցրցընելու համար մէկմէկէ
 գերազանց աշխատեցան, մէկալ չէքտիրի-
 ներնալ մեծագործ կերպով զարդարեցին,
 որոնց խարճը երկու միլիոն ռուպլիէն (պէշ-
 լիքէն) աւելի եղավ:

Այրբոր Վանիէֆ ըսված տեղը հասան եր
 կաթ ձգեցին՝ օգոստոս լէհին թագաւորը

(1) Ասիկայ քիչ մը ետև մոսկովին ու ռօմանցօֆ
 մառէշալին ծառայութիը մէջ մտաւ, որ ձիաւոր
 զօրաց վրայ մեծ զօրագլուխ էր:

Տպատեալ (Թէպտիլ) կերպով իր առջի ա-
 նունը բօնիադօւլսքի կոմս վրան առնելով
 հոն եկավ կատարինէին տեսութի՛ որ զին-
 քը ան Թախտը հաներէր, և ան ատենը ին-
 քը կըպահէր. ասիկայ լեհի օրէնքին կեօրէ
 չէր կրնար լեհաստանէն դուրս ելլալ, անոր
 համար կատարինէն երկու ոսկեզօծ նաւակ-
 նէր խրկեց լեհին գետեզերքը, որ առին իր
 չէքտիրին բերին. 1764 տարվընէ վեր որ
 ռիկայի մէջ տեսնուած էին, անկից ետե
 23 տարի անցած էր որ՝ մէկ մէկու հետ
 չէին տեսնուած: Սէկ ժամու չափ ծածուկ
 խօրաթայ ընելէն ետե իրարու հետ՝ ուրիշ
 չէքտիրի գացին հաց ուտելու համար. հոն
 հացին վրայ կատարինէն լեհի Թագաւորին
 տրվալ սք անդրէասի կարգին նշանը պուլ-
 լանդի քարերով զարդարված. բողէմքին
 իշխանը որ դեռ չէր տեսած լեհին Թագա-
 ւորը, զարմացաւ մնաց աս Թագաւորին
 գեղեցիկ անձնաւորութիւր վրայ՝ իր գեղեց-
 կախօսութիւր ու քաղաքավարութիւր վրայ.
 հետը խիստ սիրով կապվեցաւ, մէկ տեղ
 ընկերացաւ ինչվան իր առասպան հեծցուց.
 Արբոր լեհին Թագաւորը վարչով կըդառ-
 նար, ճամիան յովսէփ կայսրը պատահե-
 ցաւ, որ վեննայէն կուգար խըրըմ երթա-
 լու, երկու Թագաւոր մէկ տեղ երկան բա-
 րակ խօսակցուի ընելէն ետե իրարմէ բաժ-
 նըվեցան:

Կատարինէն հասաւ քուէմէնսքուք, ուր ի-
 րեն համար յատուկ բնակարան մը շինե-
 ՚րին խիստ գեղեցիկ. աս բնակարանին առ-

ջին 12 հազար զինուոր նստած կային ամ-
մէննալ նոր հագուստով. հոն սուվարով զօ-
րապետին կարգաւորելովը չորս բաժնովե-
լով՝ մէկ պատերազմ ձեացուցին զազախնէ-
րու գնդի մը հետ՝ որ քառակուսի կեցած էր,
կատարինէն ասոնց ամմէնունալ առատաւ
ձեռնութք շատ պարզենէր բաժնեց : Ըս-
ջուրի վրայի ճամփորդութիւն տնեբեր գե-
տին մէջէն շատ ախորժեւի եղավ, երկու
գետեզերքը լեցուն հովիւնէր նորակերպ
հագուստներով՝ խումբ խումբ ոչխարներով
երբոր կերենային աս դիս ան դին մայիսի
մէջ զուարճալի դաշտերուն վրայ, ճամ-
փորդներուն տեսութիւն խիստ կը զուարճա-
ցընէին : Յովսէփ կայսրը առաջուցմէ հա-
սած էր քերսօն, երբոր լսեց կատարինէին
գալը՝ որ ջուրի ճամփան լմննալէն ետե-
ցամաքով գալ սկսաւ, անոր առջին գնաց,
քայթաք տեղէն 15 մղոն հեռու իրեն հա-
սաւ, մէկ տեղ անոր առապան նստաւ, ուր
որ էին նաև բողէմքին իշխանը ու քօպէն-

ցէլ կոմսը որ նեմյէին դեսպանն էր :

Իրեք օրալ ճամփայ ընելէն ետե հասան
քերսօն, ուր 60 հազար հոգիէն աւելի բնա-
կիչ կային, թող տուր անբաւ բազմութի
օտարականներու՝ ամմէն կերպ մարդիկնէ-
րու՝ ամմէն ազգերու՝ թաթար, հայ, հո-
ւում, լէհ, ֆրանսզ, սպանիացի, որ ամմէնք-
նալ եկերէին կատարինէին գալստեան հան-
դէսը տեսնալու համար ⁽¹⁾. 40 հազար ու-

(1) Ասոնց մէջն էր ամերիկացի զօրապետնալ միւսան.

տանաւոր ու ձիաւոր ընտրուած զօրք
 դրան առջին կեցած էին, ուսկից որ պի-
 տոր մտնային [Թագաւորնէրը . դրանք առ-
 ջին շինուած էր յաղթական կամար սեփդի-
 միոս սևերոս հին հռոմայեցոց կայսեր կա-
 մարին պէս՝ որ հռոմայու մէջն է . ասիկայ
 ցրցընել մընէր՝ որ արհեստնէրը մոսկովի
 մէջալ սկսերէին ծաղկիլ, կատարինէին ը-
 րած խարճնալ պարապ չէր գացած ⁽¹⁾ :
 Այլ եց օր նստան [Թագաւորնէրը աս նորա-
 շէն քաղաքը աղվոր պալատան (սէրայի)
 մէջ, առջևը պարտեզ ունենալով, ուր չի-
 գտնուած բոյսեր ծառէր ծաղկընէր բերել
 տրվերէին աս դիէն ան դիէն ⁽²⁾ . վեց օրալ
 զանազան հանդէսնէր տեսիլքնէր ըրին
 առջևնին, մանաւանդ հին վարպետնէրը
 պատերազմի խաղէր ըրին իրենց վարպե-
 տութիւր ցրցընելու համար . իրեք մեծ նաւ
 երկու խափախը [Թագաւորնէրուն առջին

տա, որ հավանա քաղքէն փախչելով նոր եօրք ու
 քանատա եկերէր, անկէց անչափ ծով կտրելով հոս
 էր եկած, որպէս զի մէկ հաց մը գտնայ մոսկովի
 քով :

(1) Որովհետև կատարինէն իր խարճով բիզայի մէջ
 մէկ դպրատուն մը կը պահէր մոսկով տղոցը սորվե-
 ցընելու համար, ուրիշ տղաքներալ խրկած ունէր
 վենետիկ, ֆիօռէնցա, որ հոն եղած երևելի վարպեա-
 ներէն սորվին :

(2) Երբոր մենք 1786 իզմիր էինք, ամմէն շրջակայ
 եղած երկիրներէն շատ բոյսեր՝ զանազան ծառէր
 Ժողվելով խըրըմ խրկեցին նաւերով չինկիուառա
 յոյն վաճառականի ձեռքով աս հանդէսին համար :

Յուրր ձգեցին տեսնալու համար, որ խիստ հաճոյ եղաւ իրենց, մէկ նաւուն անունը երկրորդ յովսէփ անուանելով: Շատ տէրութէ դեսպաններ (էլջինէր) եկան հոն շնորհաւորելու, տաճկի դրաննալ իմաց տը վերէին աս կատարինէին ճամփորդութիւր վրայ, որպէս զի ինքնալ իր դեսպանը արտաքոյ կարգի խրկէ շնորհաւորելու, բայց դուռը չխրկեց. միայն ուրիշ երկու հոգի խրկեց ծածուկ կերպով իմանալու համար ինչ պատճառով հոն կը ժողվըվին իրեն երկու դրացի թագաւորները, և անչափ գաղտունկ խորաթելուն միտքը վախճանը, որ իրաւ ուրիշ տէրութեանց դեսպաններնալ կը զարմացնէր, փնտըւտուքի մէջ ձգել կուտար: Արոնց ժողվըվելուն վրայ շատ չի հաւնելով դուռը՝ հիմակու հիմա 4 նաւ խրկեց երկու խափախը, և 6 Ֆռիաթա, որոնք եկան պորիսթէնէս գետին բերանը երկաթ ձգեցին:

Արբոր մայիս ամիսը լմնցաւ՝ թագաւորները քերսոնէն ճամփայ ելան՝ պզտիկ թաթարը գացին քալելու համար. քամէմոսդըսված պզտիկ գեղին քով մէկ քաղաք մը տեսան վրաններով (չատըրներով) շինված, ինչպէս որ երկըրցիք սովոր են շինելու, որ թագաւորներուն նոր բան մը երեցալ. հոն բազմութի թաթարներու մենծերուն եկան իրենց պատիւը ցըցընելու: Վօդէմքին իշխաննալ խազախ թաթարներու մէկ ծեծկըվիլ մը ձեացընել տըվալ իրենց հիւնէրուն ըրածնին կեօրէ՝ որ սարմատացիք

կըսվէին ⁽¹⁾ : Հետեւեալ օրը հասան օռ-
խափուին կամ բռէքօբին պատուարները
(պէնտէրը) տեսնալու ⁽²⁾, որուն պէս մե-
ծաշէն ու շահաւոր գործ չիկայ կըսէն բու-
լոր աշխրըհիս մէջ, որովհետեւ տեղ մը չի-
կայ՝ որ բնական դիրքը ասչափ աղէկ օգնէ
արուեստին : Ըն պարանոցը կամ ցամաքը՝
որ խըրըմու կղզին կըկայցընէ ցամաքին հետ՝
մէկ գիէն մէկալ գին կտրըված է իբր եր-
կու մղոնի չափ, որուն ծարէրը երկու ծու-
վին մէջն են . ժուռ եկող թագաւորները
պինտ վերի ծայրը ելան, որ 40 ոտնաչափ
բարձր է, ամմէն երկիրներուն վրայ կընայի .
մէկ օրէն ետեւ հասան ան բարձր լեռնե-
րուն վրայ՝ որ խըրըմը կըկտրէ, երկու կը-
բաժնէ . ասկից ան գին ինչվան ծովը երկի-
րը կըփոխվի . ցամաք անբեր անապատներ
չիկան, այլ զուարճալի հովիտներ, վա-
րուցան եղած դետիններ զանազան գե-
ղերով :

(1) Աս կերպ ծեծկըվելը տեսնըված չըլլալով իրենց
շատ հաճոյ եղաւ, որ էր կերպ հին ատենի պար-
թեւներուն ծեծկըվելը, պարթեւները աս կերպ ծեծ-
կըվելով եղաւ որ հռոմայեցոց տակը չիմտան, այլ
մանաւանդ անոնց հաւասար ըլլալով շատ Զարդ
որվին :

(2) Աս պատուարները խըրըմ եղած հին թաթար-
ները շինած էին ասիայի սկիւթացիներու դէմ դնե-
լու համար, բայց միհրդատ պոնտոսի թագաւորը
երբոր թիօփանտ անուն իր զօրապետին ձեռքովը
յաղթեց պղտիկ բռնաւորներուն, որ կիմէրեան
պոսփորոսին մէջն էին՝ և փաս ըսված աղգերուն,
ան ատենը խիստ ամըրցուց, անառիկ բան մը ըրաւ :

Երբորդ օրը հասան պաղէսերայ , ուր
կընստէին խրըրմին թաթար խանէրը , ամ
մէննալ լուսավորված ինչվան քովի լեռը՝
որ կրակի մը պէս կըվառէր , հոն եղած
կոպտաշէն դարսասին (սերային) մէջը ին
ջան՝ ուր որ հին խանէրը կըբնակէին , ա
ռաջ աս քաղաքս շատ մարդ կար , բայց
մոսկովը առնելէն ետե խիստ քիչցան մէ
ջինները : Հոն թաթարին մենծէրը որ միւր
զայ կըսվին՝ եկան շնորհաւորելու . կատա
րինէնալ սիրտերնին շահելու համար ծանր
պարգենէր տրվալ , ըստակալ տրվալ եր
կու ճամի շինելու համար . առաջ երկու
տարին անգամ մը միրզանէրուն մէջը ա
րիւնահեղ խռովութի կելլար , բայց աս ա
տեն դադրած էին : (Դազաւորները ետքը
եկան սեբաստուպօլիս՝ որ պալըքլավային
քովն է աքեառ տեղը , հին քերսոնին աւե
րակներով շինված , միլեսացոց ժողովրդով
բնակված , ուր որ հին ատենը սբ մարդինոս
քահանայապետը քչվեցաւ , ասոր ծովուն
եզերքը ծնաւ երկու խափախը , 10 Ֆըռ
խաթա , 12ալ ուրիշ պղտիկ նաւեր կրա
կով մէկ պատերազմ ձևացուցին 4 ժամու
մէջ : Հոս ժուռ եկան անուանի քարայրէ
րը (մաղարանէրը) Ենքէմար անուն ապա
ռաժ քարին մէջը փորված , որուն գլուխը
հին բերդի մը աւերակ կերեայ . ճինիվիդ
ները իրենց տերութե ատենը անոր մէջը
բանտը դրին ատտիղաս բռնաւորին մնացած
սերունդը (սոյը) , որ թաթարներէն առաջ
հոն կիշխէին :

Ատրը եկան քեֆէ, որ ճինիվիզները շինած էին հին թէոդոսիա քաղքին աւերակներով, իրենց վաճառատեղի ըրած էին, ինչպան որ Ֆաթիհ ք, սուլդան մէհէմէտէն քչվեցան. ասոր ծովեզերքին խիստ հաւնեցան, որ պարտեզներով տներով զարդարված էր ճինիվիզներուն շէնքին օրինակովը, որոշեցին որ նաւատորմըին (տօնանմային) մէկ մասը հոն կենայ: Ատտիր պաղի ըսլած լեռը ոսկիի հանք կար, անոր փորձը ըրին որ ճինիվիզներուն ատենի եղած շահը իրենքալ ընեն. որոշեցին որ հոն կանչել տան ան հոռմի տները՝ որ քիւրտիս թան ու մընկուէլին մէջը կըպըտըտէին՝ բարերարութի խոստանալով իրենց: Հոն եղած ձիերուն համրանքը առին, իմացան որ խըրըմու կղզին ամմէն տարի 60 հազար ձի կընար տալ զօրացը համար. ամմէն տեղ ձմերոց (խըշա) ապսպրեցին շինելու, ինչու որ խըրըմու գետինը թէ և քիչ վարուցան ըլլայ, բաւական պաշար կուտայ, քիչ խարճով կընայ հոն զօրքը պահվելու:

Ատտարինէն յովսէփ կայսեր հետ դարձաւ եկաւ տներեր գետը բուլդավային ճամփան բռնելով, հոն իրարմէ բաժնըվելով յովսէփ դարձաւ վեննա, ուսկից որ արտորնօք կանչըվեցաւ Ֆիլէմէնի կամ ստորին նահանգներուն մէջ խռովութի ելլալուն համար. կատարինէնալ մօսքըվիայի վրայէն բեղըօպուրկ գնաց:

Երկու թագաւորնէրուն մէկ տեղ ա-
սանկ տեսնելիլը՝ ամմէն տէրու թի կըզու-
շակէին որ՝ մինակ հետաքրքրու թէ տեղէր
տեսնալու համար չէր, հապա մէջէննին մէկ
բան մը կեփէին, մանաւանդ որ իրենց խօ-
սակցու թէր մէջ մարդ ներս չէին առնէր՝
որ միայն բողեմքին իշխանը՝ անալ երբեմն.
ամմէն տէրու թէց գեսպաննէրը ետեւէ ըն-
կան իրենց գիւանադալիրնէրուն (սըռքեա
թիսնէրուն) ձեռքովը իմանալու, ասչափ
իմացան կամ գուշակելով կամ ստոյգ, թէ
առջի դաշնադրու թիւնը որ եղած էր ան.
պետրոսին ատենէն՝ ետքը ընդարձակելով
հաստատուերէր ի. կարողոս կայսեր ու ան.
կատարինէին ատենը, հիմա ք. յովսէփ
կայսրը ու ք. կատարինէն նորէն իրենց մէ-
ջի կապը նորոգերէին, աւելի կապելով
խիստ գաղտուկ դաշնադրու թի մը ըրերէին
մարտապահ ու մարտավար, խօսք դնելով
որ ինչ երկիրնէր առնեն՝ մէջէննին բարե-
կամաբար բաժնեն :

Թէ իրաւ ըլլայ աս կապս և թէ սուտ, ին-
կիլիզը՝ անոր հետ պրուշնալ մէկ տեղ՝ ար-
ժան սեպեցին որ ոտք ելլան, ասոնց մտովը
նին դրածը ընել թող չիտան, որպէս զի
եւրոպայի տէրու թէց հաւասարակշռուիլը

ինչպէս որ իրենք կըսէին՝ չավորվի . կամ
 յայտնի ըսելով իրենց շահուն մէկ վնաս
 մը չիհետեւի : Ըն ատենվան ստանալօլ ե-
 ղած ինկիլիզին դեսպանը՝ որ կըսվէր ⁽¹⁾
 Մ. յնգլէ ասպետ՝ շատ աս դիս ան դին ին-
 կաւ տաճկին դուռը ոտք հանելու համար ,
 շատ ոսկի բաժնելով՝ քիչ մը ըստրկով քիչ
 մը յորդորելով կըսէր որ՝ մոսկովին միտքը
 տաճկի տէրուիը կորսնցընել է , աս վտան-
 գէս խալըսելու ճարը աս է որ՝ մոսկովը
 դեռ պատրաստութիւն չիտեսած՝ տաճիկը
 իրեն վրայ ելլայ , խըրըմին մէջը զարնէ՝ ան
 ատենը որ մոսկովին զօրքը աս դիս ան դին
 ցրուած ըլլալով՝ չիկրնար շուտ մը ժողվել
 այնչափ ընդարձակ սահմաններէն . իր խազ-
 նանալ պարպրված է այնչափ խարճէրու
 համար՝ որ կատարինէն ըրավ ասոր անոր
 պարգև տալով . իրեն ժողովուրդնալ ճշգոհ
 են իր վրայ՝ չեն ուզէր ծեծկըվիլ . ասանկ
 ըսելով կըյորդորէր տաճիկը՝ որ արտորայ
 ծեծ բանայ մոսկովին վրայ :

Տաճիկը ան ատենը դեսպան մը չունենա-
 ւով ուրիշ տէրութեց քովը՝ որոնք շիտակ

(1) Ասիկայ մէկ զօրաւոր խօսքով դեսպան մընէր
 սաանալօլի մէջ , ասովալ երևելի եղավ որ՝ իր գե-
 սպանութե ատենը ամմէն օսմանեան սահմանէն ժող-
 վեց հին ըստահներ , հին քարէ փորվածներ , որոնք
 ինչվան ան ատեն շատ ժողվըված չըլլալով ան տեղ-
 վանքներէն ասիկայ կըցաւ մէկ հարուստ ժողով մը
 ընէլ 100 հազարի չափ հին դրամներ զանազան տէ-
 րութեց , որոնց մէջն է նաև օսմանեան թագաւորա-
 ջը իրենց կարգով որչափ որ կըցաւ գտնալ :

տեղեկութի տային անոնց զօրացը վրայ՝
 Տարստութե ու առուտուրի վրայ՝ իրենց
 մէջի խառնակուէց վրայ, միայն օտար տե-
 րութեց դեսպաններէն տեղեկութի կառ-
 ներ, որոնք ուզածնին պէս ծուռ մոռ տե-
 ղեկութի կուտային իրեն. ինչպէս որ վե-
 րոյիշեալ այնգլէին տրված տեղեկութինէր-
 նալ ծուռ էին, ինչու որ աղէկ բարեկար-
 գութինէր ընելէն ետև՝ մոսկովին խաղնան
 պարապ չէր՝ ինչպէս որ վարը ունինք պատ-
 մելու :

Տաճկէն մէջի եղած զանապան ապստամբու-
 թիւնէր .

1785 — 1787 :

Վիւրճինէրը մոսկովին տակը անցնելէն
 ետև, գիտես թէ օրինակ մը եղավ, ուրիշ
 տեղվանքալ ասանկ ուղեցին ընել. ինչպէս
 եղան խարատաղցիք, որ կուզէին մոսկովին
 տակը անցնիլ, բայց 1785 իւսքիւտարի կամ
 ըսքօդարի փաշան՝ որ մօտիկ է, զսպեց ա-
 նոնք : Պարսից սահմանակցութե տեղէր-
 նալ աւելի խուովութի հանած էր արապ
 շէյխ մը Վրինէյ անուն, որ պասրան ա-
 ռավ 1785, հոն գտնըված տաճկին նաւե-
 րը թալլեց : Նոյն տարվան մէջ ստանսուլ
 ուղեցին կարգ դնել, ան եէնիչէրինէրուն
 որ՝ ծառայութի չէին ընէր, իրենց թոշակը
 (էսամէն) կտրել, բայց աս ընելով որով
 Տետև խուովութի պիտոր ելլար՝ չըրին, և

ամմէն պաշտօնատէրէրը փոխեցին: Պար-
պարըշները իրենց տուրքը չէին իտար, չէին
հնազանդէր դրանը հրամանին:

Առնավուտուլուխի գինալ իւսքիւտարի կամ
ըսքօդարի անուանի մահմուտ փաշան՝ աս
ատենները ապստամբութիւն հանելով չէր
հնազանդէր թագաւորին, բացարձակ տէր
էր եղած, անոր համար սուլդան համիտը
էյնէպախթի փաշան անոր վրայ խրկեց, որ
1786 օգոստ. 6 անոր վրայ գնաց տուրացցօ
կամ տիրաճ', 6 նաւով. հոն էր մահմուտ
փաշային մէկ ազգականը՝ որ չունելով զօ-
րուի չէր կրնար դէմ գնել. անանկով ծո-
վէն ցամաքէն պաշարվեցաւ մահմուտ փա-
շան, բայց ան ատենը նաւերը կանչովեցան
չանախ խալէսին դառնալու՝ որ անկէց սև
ծով երթան: Արբոր ասոնք գացին՝ փաշան
իր ամմէն ընտանեօքը՝ հարստութիւն ու բա-
րեկամներովը՝ որ քիչ մնացերէին, փախաւ
մտաւ իւսքիւտարին բերդը՝ որ սուր ասլա
ուսթ քարի վրայ շինած բերդ մընէ, առնե-
լը խիստ դժար. տաճիկը ասիկայ պաշա-
րեց, բայց չիկրնալով խումպարայով ծե-
ծել՝ կրպատրաստըվէր երթալու. ամսոյն
20ին խիստ անձրևը իրեն միջոց գտնալով
գիշերանց դուրս ելալ վրանին վազեց:
Ասկից ետքը առնավուտուլուխի մէջ ալ աւե-
լի ընդարձակեց իշխանութիւնը ըստակալ կու-
խեց, մեծ անուն մը հանեց ինչպէս Փրէն-
կիստան:

Մտրայ 24 սէյերնալ բացարձակ իշխել
սկսերէին. հոն եղած փաշան չէին ուզէր

Ճանչնալ, տաճկին հնազանդութի բոլորովին դուրս ելլալ կընայէին, իրենց տուրքը որչափ որ կուզէին՝ անչափ կուտային տաճկին. անուանի այլի պէյը մեռնէլէն ետև 1773ին խուովութիը տիրերէր մտայ մէջը. 1786 յուլիսի մէջ ճեզայիրլի գափուդան հասան փաշան իր ամմէն նաւերով մըսըրը գացած ըլլալով՝ պէյերը հալածեց, մանաւանդ երկու զօրաւոր պէյերը իպրահիմ ու մուրատ պէյը. շատ տուրք ժողվեց մտրէն՝ իսքէնտերիէն՝ ըէշիտէն՝ ու տիմեադէն. միտքը ան էր որ՝ մէմէլուքնէրուն կամ քէօլէմէնէրուն տերուիը անկէց վերջացընէ, որ շատոնցմընէ մըսըրը կիշիսէին, միշտ ապստամբութի անհանգիստ կընէին. աս քէօլէնէրէն երկու հազարի չափ խըպըրս խրկեց, ու ատանային և իչէլէին ծովեղերքը. կերևար որ ասոնք բոլորովին պիտոր վերջացընէր, որովհետև կիւրճիսթան, չէրքէս ու փնկուէլ մոսկովին իշխանութի տակը անցնելով, չէին կընար դերի առնել մըսըրը խրկել: 80 հազար քէսէի չափ ստանալով բերաւ, անանկալ կարգի մէջ դրաւ որ մըսըրըցիք տարվէ տարի իրենց տուրքը կուտային:

Արբոր ինկիլիպը կերպ կերպ խօսքերով կուզէր տաճիկը մոսկովին վրայ վերցընել՝ դուռը իր մէջի եղած աս ամմէն ապստամբները ձգեց ինկիլիպին դրդելովը՝ իր միտքը դարձուց մոսկովին վրայ. և թէպէտ սուլդան համիտը չէր ուզէր ամենևին, բայց քանի մը մենծէր յորդորելով միտքը դար

ճուշին ծեծ բանալու, անոր համար մըսը-
 րէն ետ կանչեց ճէղայիրլի դափուտան հա-
 սան փաշան: Ասիկայ շատ անուանի մարդ-
 եղավ մէյմը իր կտորը ճուլթէ և ուժին հա-
 մար, որ կերպարանքովալ սրտովալ առիւ-
 ծանման ըլլալով իր քովը առիւծ մը կը
 պահէր ընտանեցուցած, ինչպէս հետը իր
 նաւակը կառնէր մէկ տեղ կը քաջընէր,
 թէպէտ և օրմընալ իր հետը սիրով գզվե-
 լով անանկ ճանկուտեց իր երեսը, որ անոր
 վրայ իր քովէն հեռըցուց: Արևելի եղավ
 մէյմընալ իրեն շինուլթէ ու բարեկարգու-
 թէ համար. ասոր օրը թէրսանէն շատ կար-
 դի դրվեցաւ. ձմերոց (խըշա) շինեց խա-
 լեօն ճինէրուն համար, ծովու քով աղբիւր
 նէր շինեց թէրսանէն ու խապա թաշ նա-
 ւէրուն դիւրուլթէ (խօլայուլթէ) համար.
 Թէրսանէի տիւան խանան ու փաշային
 տունը նորէն գեղեցիկ շինեց շատ մեծցուց,
 նոր նաւէր շինել տրվավ առջիննէրուն վը-
 րայ աւելի վարպետաշէն, նաւէրը զինելու
 պատրաստելու համար տեղէր համբարներ
 շինեց քարաշէն, ուր պիտոյքը պատրաս-
 տած կը պահվին. թո՛ղ տուր թէրսանէն
 դուրս ըրած շինուլթինէրը՝ որոնցմէ մէկ-
 նալ է լէվէնտ չիֆտլիին, ուր սուլդան
 համիտնալ պինիշ ըրավ, ուրիշ մեծ չիֆտ-
 լիկմընալ չանախ խալէսին նաղարապուռ-
 նին քով. իսկ ճերմակ ծովին մէջ շատ
 տեղ շէնքէր ունի. միայն միտիլլի քաղքին
 մէջ 18 աղբիւր, քաղքէն դուրսալ մենծ
 քէօշքէր իրեն նստելու համար:

ԳՈՒՈՐ աս խափուտան հասան փաշան ստանալու կանչելով սե ծով խրկեց մոսկո վին վրայ . իր հեանալ 16 նաւ երկու խաւ փախլը , 5 Ֆոխաթա , ուրիշալ պղտիկ նաւ էր , սինապ ուրիշ զանազան տեղերալ 26 նաւ շինել կուտար . բերդերնալ ամրցուց զօրացուցնոր զօրք խրկելով սրոնք որ մոսկովին սահմանակից էին դունային ու թուուլային դին եղած բերդերը , մանաւանդ հօթուն որ քօչին կրսվի , պէնտէր , նոր քիլի , իւմայիլ , ամմէնէն աւելի հոգ տարաւ որ օգուկամ օքղաքով ամրցընէ , անառիկ բերդ մը ընէ . հոն ըլլայ իր զօրութե կեդրոնը սիրտը , աս տեղվանքս ամրցընօղը եղավ Րուան քուլան ասպետը Ֆրանսզ վարպետը : Այլ բոր ինկիլիզը ասանկ ոտք հանեց տաճիկը՝ ստանալու եղող Ֆրանսզին դեսպանը շատ կըյորդորէր տաճիկին դուուր որ չիխաբվի ինկիլիզին խօսքերէն , ծեծ չիբանայ մոսկովին դէմ . աս դեսպանս կրսվէր կոմս շուազէօլ կուֆֆիէ , որովհետե շատ երեւելի մարդ էր , փարէզի բանասիրական ճեմարանէն մէյմը ըլլալով , խիստ ճարտասանական զուրցըված մը ունէր , իր ամմէն ճուռումաբանութիւր թափելով ջանաց որ խափանել տայ , բայց ինկիլիզը անանկ ծածուկ ճամփայնէր ոլորակնէր կըբանեցընէր , անչափ ըստակ կըբալցընէր մենծերուն , որ Ֆրանսզին խօսքը պարապ հանել կուտար , և որպէս զի բոլորովին վարկուամը ավրել տայ անոր վրայ տաճիկին առջին՝ աս մատնութիսալ ըրալ :

Ա երոյիշեալ շուազէօլ կուՖֆիէն՝ դես-
 պան ըլլալէն առաջ՝ հին բաներու զմայլօղ
 ըլլալով՝ ճամփայ ըրալ դէպ ՚ի յունաս-
 տան . հին յունաց մնացած բաները տե-
 սաւ , ինչ որ ցամաքը ու կղզիներուն մէջը
 կրգտնելէին . իր ճամփորդութեանը վրայ
 մէկ մենծ գիրք մը շինեց կոխեց Ֆրանսոզե-
 ըէն , որուն մէջը քալած տեղերուն վրայ
 կրգրէ , ու շատ տեղերուն աղվոր փորված
 պատկերներնալ կրգնէ , որոնց օրինակը
 (ըհսիմը) ինքիր ձեռքովը հաներէր , բայց ան
 ատենը ինքը մանուկ երիտասարդ ըլլալով
 որոնց քովը կրպակսի խոհեմութի , յառա-
 ջաբանութե մէջը չափէ դուրս մայլելով մը
 հին յունաց քաջութեցը վրայ՝ կրգրէ կը-
 յորդորէ հիմակվաններնալ որ՝ տաճկի տե-
 րութեան տակէն ելլան : Աս խօսքերս ին-
 կիլիզը տաճկերէն թարգմանեց , գրքին հետ
 մէկ տեղ դրաւ դուռը խրկեց ըսելով , տե-
 սէք ձեզի հաւատարիմ բարեկամ սեպվօղ
 Ֆրանսոզը , նայեցէք ինչ երկու երեսանց
 մարդ է , բերնով ինչ կրխօսի , գրչով ինչ
 կրգրէ ձեզի դէմ . և թէպէտ ասկից ետքը
 Ֆրանսոզ դեսպանը իր գրքին օրինակները
 ժողվել սկսաւ ծանր գին վճարելով՝ բայց
 պարապ , որովհետեւ ան ատեննալ տաճկին
 դուռը իր վարկումը կորսնցուցերէր Ֆը-
 ըանսզի տերութեը վրայ , որ ատեն որ նէ-
 քերը մէկ հաշիւ (հիսապ) մը հանելով ամ
 մէն աշխրհի իմացուցերէր Ֆրանսային
 խազնային պակսութիւր , իրեն բաց ելլա-
 լուն մօտիկնալը :

Լսանկով ինկիլիզին հետ պրուչնալ մէկ
եղած անդադար կրփչէին, տաճիկը կը-
զըրգուէին պատերազմ բանալու մոսկովին
վրայ :

Տաճիկն ծեծ բռնաւը հոսիւմէն վրայ .

1787 :

Երկու եւրոպացոց թագաւորաց վախը
կասկածը իրենց շահին մէկ փնաս մը չլլա-
լու համար՝ տաճիկը անհանգիստ ըրաւ,
պարապ տեղը ոտք հանեց, ան խաղաղա-
սէր թագաւորը սուլդան համիտը ակամոյ
ծեծ ընել ստիպեց, որուն բնութիւր խաղա-
ղասէր էր, խիստ հեզ, ամմէնուն բարերա-
րօղ, ամմէնուն վաստըկընօղ, ինքը զքօ-
սասէր ըլլալով՝ կուգէր որ ժողովուրդնալ
զքօսնու, միշտ վայելէ, շահ ընէ, հանգիստ
նստի . իրեն սէրը (հավէսը) ըրաւ որ՝ իր
օրը ստանալօլին մէջ արհեստները խիստ
ծաղկեցան, մանաւանդ խույումաճիուլթեան
ձեւահարճիուլթեան արուեստը մեր ճարտարա-
գործ հայու աղբէն եղօղ վարպետներուն
ձեռքովը ան աստիճանը բարկըցաւ, որ հա-
ւասարեցաւ ինկիլիզի ու Ֆրանսոզի վար-
պետներուն ձեռագործներուն : Այն որ աս
պատերազմը չիբացվէր՝ շատ աղէկ օրեր
պիտոր տեսնար ժողովուրդը ասոր թագա-
ւորուլթեան, ինչպէս որ իրեն թագա-
ւորուլթեան առջի տարիները տեսեր էր . բայց
եւրոպացոց անհանգարտուլթիւնը՝ պատե-

րազմասէր ըլլալը՝ իրենց շահին ու մենծնալուն չափէն աւելի ցանկութիւնը՝ մեղք որ ասանկ խաղաղասէր թագաւորը ակամայ պատերազմի մէջ ձգել տրվավ: Արդիւ ինչ որ գրերէնք ներածութե մէջ և ինչ որ գրերէնք 1815 և 1816 Աղանակներուն մէջ, որոնք դիտնալը խիստ հարկաւոր են աս պատմութիւններուն ծուծը հասկընալու համար:

() դոստ. 12 շատ երկան տիվան ընելէն ետև՝ տաճիկը ծեծ հրատարակեց մոսկովին դէմ՝ դռնէն հրաման գնաց պուլկաքօֆին մոսկովի դեսպանին՝ որ իրեք օրվան մէջը հանդիսով (ալայով) թող դուռը գայասանկ յանկարծ կանչովէն պուլկաքօֆ կուահեց, նեմյէի դեսպանին իմացուց՝ որ կրավէր պարոն հերպերդ, անալ շուտ մը իր թարգմանը (թերձիմանը) դուռը խրկեց հարցընելու համար ասանկ յանկարծ կանչովէլուն պատճառը. դուռը պատասխան տրվավ որ՝ տաճիկ տերութիւնը ըլլալով անկախ տերութի մը մոսկովին պէս՝ ինչպէս որ ուզէ՝ անանկ կրկառավարէ իր բաները, մէկին չի պարտաւորիր պատճառները հասկըցընելու, անոր համար չէր վայլէր դեսպանին աս հարցումը:

Այսչափ խօսքը հասկըցուց իրեն միտքը. ան գիշերը նեմյէին դեսպանը նորէն երկու իրեն դիւանագպիրները (սրուքեաթիպնէրը) երկու ուրիշ թարգմաններով դուռը վեզիրին խրկեց ըսելով: » (Ը) որ դուռը կրմտածէ ծեծ բանալ մոսկովին դէմ՝

„ պէտք է իմանալ՝ որ իր թագաւորնալ
 „ յովսէփ կայսրը մոսկովին հետ դաշնակից
 „ ըլլալով՝ չիկրնար անտարբեր կենալ խա
 „ ծեծին մէջ“ : Սէղիւրը որ էր կիւրճի եու
 „ սուֆ փաշան՝ գիշերը քունէն ելլալով
 „ դժվարելով մը պատասխան տրվաւ :
 „ Չեմ հասկընար, ինչ իրաւամբք կայսրը
 „ պիտոր խառնելի մէկ ծեծի մը մէջ՝ որ ի
 „ ըեն չիյնար ամենեւին“ : Վեսպանին մար
 „ գիկը ըսին : Վայսրը կրնայ իր միջնորդուի
 „ ընել աս ծեծը խափանելու համար : Սէ
 „ ղիւրը պատասխան տրվաւ : Վեմցէին միջ
 „ նորդուի ընդունելի չէ . ինչու որ յայտ
 „ նի կերևնայ թէ նեմցէն մոսկովին դին
 „ կըտաշէ . գիտենք որ խօսք տրված ունի
 „ դաշնագրու թէ՛ երբոր մոսկովը տաճկին
 „ հետ ծեծկրվի, նեմցէն 30 հազար զօրք
 „ օգնու թի տայ մոսկովին, ասանկ ըլլալով
 „ ակ աւելի աղէկ է որ յայտնի թշնամի ըլ
 „ լայ նեմցէն՝ քան թէ սուտ մուտ բարե
 „ կամ ձևանայ . միայն աս չիյտենք որ՝ ար
 „ դեօք մինակ օգնու թի տալ պիտոր ըլլայ
 „ նեմցէին միտքը՝ թէ ինքնալ ծեծ պիտոր
 „ բանայ, ինչպէս կըրցըրնեն անչափ բաղ
 „ մու թի զօրաց որ ժողվել տրված է մա
 „ ճառի մէջ“ :

Վուլկաքով հասկընալով որ դրան միտքը
 ծեծ բանալ է՝ իր հարկաւոր թղթերը ա
 պահով տեղ պահելով՝ պայման դրած օրը
 հանդիսով (ալայով) գնաց դուռը : Իրեն
 հարցուցին որ՝ արդեօք ինքը ունէր իշխա
 նու թի ստորագրելու մէկ դաշնագրուէ մը՝

որ բաները սն կացութիւնը հասնի՝ ինչ կացութեան որ մէջն էր քայնարձրք եղած հաշտութեան ատենը՝ խըրըմ՝ ետ դարձնելով։ Պուկաքով ըսելով որ՝ չունիմ իշխանութիւն, ոտք ելաւ երթալու, բայց երբոր դուրս ելաւ՝ բռնեցին, սովորութեւն կեօրէ եկտի խուլէն տարին օգոստ. 18 ըստ ոմանց. միայն հրաման տրվին իրեն՝ ինչ որ պէտք էր իր հանգստութիւնը հոգալու, ամ մէն բանը թող հոգայ՝ իր հետը առնէ, իբր թէ իր պալատը (սերայը) նստած ըլլար. անալ իրեն հետը առաւ դիւանաւ գպիրը, երկու թարգմանը (թերձիմանը), երկու հոգիալ իր ընտանիքներէն, մնացած իր մարդիկը հանդիսով տարին մոսկովին սերայը. քանիալ մոսկովի նաւէր կային՝ ամմէննալ բռնեցին թերսանէն տարին, մէջի եղած մոսկովի նաւավարները երկաթը զարկին։ Ըս բանիս վրայ ուրիշ դեռ պաննէրը գանկտեցան, որոնց ըէիս էֆէնտին պատասխան տրվաւ. հին սովորութի է դեսպանը եկտի խուլէն վերցրնելու՝ չէ թէ մէկ փնասմը հասցրնելու համար՝ հապա ժողովուրդին կատաղութէն խալայրնելու համար, թէ որ թող տանք ծեծի մէջ եղող տերուէ դեսպանը ազատ իր տեղը երթայ, վտանգի մէջ կրնայ իյնալ։

() օգոստ. 24, տաճիկը յայտարար թուղթ հանեց, որուն մէջը ասանկ կը յիշէ ծեծին պատճառը։ «Մենք 1774 քայնարձրք խա «դաղուի ըրինք մէջէրնիս՝ որ ժողովուրդ «նիս հանգիստ ըլլայ, բայց մոսկովը միշտ

,, դէմ դնայ , յանկարծ խրրըմը իր տակը
 ,, առավ , որ վերոյիշեալ դաշնադրութիւնը
 ,, կեօրէ անկախ պիտոր մնար , և թէպէտ
 ,, հոն գրով սահմանված էր որ՝ թշնամու-
 ,, թիք բան մը չընենք ոչ յայտնի և ոչ ծա-
 ,, ծուկ , բայց մոսկովը խորամանկութիւն մը
 ,, թիֆլիսին խանը տաճկին հպատակութիւն
 ,, հանկեց , որ անյիշատակելի ժամանակէն
 ,, ետև տաճկի ֆէրման առած ունէր դրու-
 ,, նէն , տաճկին հպատակն էր , իր զօրքէր-
 ,, նալ ամմէն կիւրճիսթան ու իրեն մաս-
 ,, նակցօղ երկիրնէրը խրկեց : Ասօք դրինք
 ,, որ դըլպուռուն եղած աղեհանքը օգուին
 ,, ժողովուրդը հանէ՝ որոնց շատոնցմընէ
 ,, յանձնըված էր , բայց մոսկովը թող չի-
 ,, տըվալ որ հանէն տանին՝ ծանր տուրքէ-
 ,, ըով : Ասկովը իր քօնսօլին ձեռքովը որ
 ,, պուղտան էր՝ խաբէց մամուրօքուտադ ա-
 ,, ղէքսանդր պէյը , յանկարծ խաբելով մը
 ,, փախցընէլ տըվալ , երբոր ուղեցինք չի-
 ,, տըվալ : Ասանկով դաշնադրութիւն խօս-
 ,, քէրը կոտորեց , անօգուտ ըրալ , ուղածին
 ,, պէս քաշկուտելով խօսքէրը ամենևին
 ,, մտիկ չընէլով : Վանի տեղվանք որ մոս-
 ,, կով քօնսօլնէր դրալ , ուլահպուղտանու
 ,, մէջ՝ կղզինէրու մէջ՝ ուրիշ տեղվանքալ
 ,, (ուր որ հարկ մը չիկար դնէլու) , մոսկու-
 ,, վին միտքը ուրիշ բան չէր որ՝ տաճկը
 ,, ներուն մնաս հասցընէ , տաճկի հըպա-
 ,, տակնէրը (ըայէնէրը) խաբէ որչափ որ
 ,, կընայ , իր երկիրը տանելով , նաւավար
 ,, ընէլով , կամ ուրիշ բանի բանեցընէլով

„ մեզի գէմ : Ասոնք հերիք չեն, սկսաւ մեր
 „ ներքին կառավարութեալ խառնըվիլ,
 „ իրր թէ մոսկովէն կախեալ ըլլայինք,
 „ պահանջելով որ՝ մարտաստեաները (կէօմ
 „ ըիւքձիւնէրը) պատժենք, նոյնպէսալ
 „ ախլըցիխայի ու չըլտրրի փաշայները՝ ուլահ
 „ պուղտանի պէյերը պատժենք : Ա՛ենք
 „ մոսկովի վաճառականներու ազատութի
 „ ասպահովութի տրված էինք՝ ամմէն տաճ-
 „ կին երկիրները տանելու իրենց ապրան-
 „ քը, տաճկին վաճառականներնալ ասանկ
 „ ազատ պիտոր ըլլային մոսկովին երկրին
 „ մէջը, բայց մոսկովը աւելի տուրք կառնէ
 „ տաճկրներէն քան ուրիշ տէրութեց վա-
 „ ճառականներէն . երբօրալ տաճկի վա-
 „ ճառականները իրենց առնելիքը կըսա-
 „ հանջեն մոսկովին քաղքըներուն մէջը,
 „ չեն թողուր որ անցնին երթան . աս ըսել
 „ է որ առնելիքնին չառնեն . ասոնցմէ շա-
 „ տը չէ թէ միայն պարապ, այլ մանաւանդ
 „ թէ փնաս քաշելով կըդառնային, ոմանք-
 „ ալ լսածնիս կեօրէ սիպիր քշիւցան,
 „ կամ սպաննըվեցան թալլելու համար :
 „ Արբոր տաճկի դրօշակով նաւերը կու-
 „ ղէին մոսկովին նաւահանգիստները մըտ-
 „ նալու կամ ալեկոծութե համար՝ կամ
 „ ջուր առնելու համար, թօփ նետելով
 „ կըհեռըցընէին : Աինտ ետքը մոսկովին
 „ դեսպանը պատճառ եղալ աս ծեծս բա-
 „ նալու . ուղելով որ դուռը գիր տայ հրա-
 „ ժարի իր տէրութէ՝ որ ունի կիւրձիի ու
 „ քարթի վրայ, թէ չէ ըսաւ բօղէմքին

„ զօրասլետը հրաման ունի մոսկովի տէրու
 „ թէ 100 հազարով տաճկին սահմանները
 „ կոխել, բռնութիւն առնել աս գիրս „: Այլ
 որովհետեւ առջի պատճառն է խաբէութիւն
 խրրըմ առնելը, անոր համար դուռը ու
 զէց որ՝ մէկ նոր դաշնագրութիւն մը նորէն
 խրրըմ ըլլայ ինչպէս որ էր 1783. բայց մոտ
 կովին դեսպանը չըլլար ըսելովը՝ հարկ ե-
 ղավ մեզի ծեծ բանալ:

Սոսկովին յայտարար Ռուսիա ծեծի համար .

1787 :

Տաճկին յայտարար թուղթը դուրս ելա-
 ծին պէս, մոսկովիսալ սեպտ. 18 իր յայտա-
 րարութիւն հանեց ասանկ : „ Տաճիկը թէ-
 „ պէտ մշտնջենաւոր խաղաղութիւն ըրավ
 „ մոսկովին հետ, բայց հիմա երկրորդ ան-
 „ գամ կոտրեց, մեր երեսփոխանը դեսպա-
 „ նը ու խորհրդականը պուլկաքով եկտի
 „ խուլէին բերդը դրաւ . նեմցէին ու Փը-
 „ րանսզին դեսպանները պարապ տեղը աչ-
 „ խատեցան ետ կեցընելու, որուն դատաս-
 „ տանը կտրելու համար կրծանուցանենք
 „ ամմէնուն՝ որ 1768 ինքը տաճիկը ծեծ
 „ բացաւ . ետքը երբոր 1774 հաշտութիւն
 „ եղավ . քանի տեղ որ առերէինք՝ մեծ
 „ մասը ետ դարձուցինք խիստ քիչ տեղ
 „ մեզի պահեցինք, աւելի ուղելով հաշտը-
 „ վիլը՝ քան թէ տեղվանք առնելը . 1783
 „ կիւրճիին ու քարթլին խանը ամմէն իրեն

„ ներով իր կամքովը մեր տէրուէ՛ ու պաշտ-
 „ պանութե՛ տակը անցաւ , դաշնադրութի՛
 „ ըրավ : Աս բանիս մեր հաւանութի՛ տալը
 „ ամենեւին դէմ՝ չէր ան պարտաւորութեցը
 „ որ դրանը հետ ըրերէինք , որովհետեւ ա-
 „ նիկայ ամենեւին չէր կախովէր տաճկի տե-
 „ րուէ՛ , բայց դուռը ախլցխայի փաշային
 „ ձեռքովը տակէն գրգռեց լեզկինէրը , ա-
 „ նոնց ձեռքով գերինէր բռնել տրվավ ան
 „ երկիրնեբէն , գրգռեց խանը որ մեզի հետ
 „ ըրած կապը քակէ , իրեն տակը անցնի :
 „ Սեր քօնսօնէրը ու վաճառականնէրը
 „ շատ կըչարչրվէին տաճկի պաշտօնատէր-
 „ ներէն՝ տուրք պահանջելով պարապ հա-
 „ նելով մեր մէջի եղած դաշնադրութի՛րը •
 „ ասոնք անանկ բանէր էին որ կուր բա-
 „ նալ կըգրգռէին , բայց մենք խաղաղուէ՛
 „ սիրօղ ըլլալով՝ երբոր իրրբմ՝ եկանք ,
 „ պուլկաքօֆը հոն կանչեցինք որ աս բա-
 „ նէրս խաղաղութե՛ շտկելու համար խօրա-
 „ թէ , ինչպէս նաև նեմցէին ու ֆրանսղին
 „ հասկըցուցինք , որոնքալ հաւնեցան մեր
 „ խաղաղութի՛ ուղելը քան թէ սլատերազ-
 „ մը : Արբոր պուլկաքօֆ ստանալօլ դար-
 „ ձաւ՝ խաղաղութե՛ նշան մը չիդտնալով՝
 „ օգոստ . 15 դռնէն կանչըվեցաւ , որուն
 „ առջին ըէիս էֆէնտին աս թէութի՛նէրը
 „ դրաւ : Խ . Սոսկովը թող հրաժարի ամ-
 „ մէն դաշնադրութենէ որ կիւրճի խանին
 „ հետ եղերէ , ամենեւին չիտառնըվի անոր
 „ բանին և ուրիշ ասիայի երկիրնէրուն :
 „ Թ . Սավրօքօուտադը որ է պուղտանին

,, պէյը շուտ մը տաճկին ձեռքը թող
 ,, յանձնէ : Դ. Նաչ նստող մոսկովի քօն-
 ,, սօլին փոխանորդը ետ կանչովի , զրպար-
 ,, տելով որ ասիկայ մոսկով փախուց պէյը
 ,, և ուրիշ տաճկին հպատակները : Դ. Վրէ-
 ,, պուռուհին պղտիկ դաւառին մէջի եղած
 ,, Յց աղէհանքը տաճկին դարձրովի , որ դաշ-
 ,, նադրու թէր կեօրէ իրենց ամմէն երկիր-
 ,, ներովը մեզի կըվերաբերին : Է. Մոսկո-
 ,, վը իր ամմէն նաւահանգիստներուն մէջ
 ,, տաճիկ քօնսօլներ դնէ , և անոնք որ խը-
 ,, ըրմ կրնստէին՝ շուտ մը տեղէրնին դար-
 ,, ձնէ : Դ. Վանի մոսկովի նաւ որ ստան-
 ,, պօլի պողաղէն անցնելու ըլլան , խստութե-
 ,, նայվին ասկից ետքը փնտուվին՝ որ մէջը
 ,, տաճիկ նաւավար չունենան , խահվէ՛ զէյ-
 ,, թին եաղի՛ բրինձ գուրս չիտանին , թէ-
 ,, պէտ և աս բաներս գուրս տանելու հա-
 ,, մար ազատութի ունէինք նոր ըրած դաշ-
 ,, նադրութե՛ր : Է. Տաճիկ վաճառականնէ-
 ,, ըը՝ հարիւրին իրեք միայն մաքս (կէօմ-
 ,, բիւք) վճարեն :

,, Աս բաներուս պատասխանը բէիս էֆէն-
 ,, տին սպառնալով օգոստ . 17 ուղեց , որ
 ,, ետքը ինչլան 20 երկրնցաւ . թէպէտ աս
 ,, չափ օրվան միջոց ամենեւին համեմատու-
 ,, թիւն չունի ստանպօլու և բէդրօպուրկի
 ,, հեռաւորութեանը նայելով . ըսաւալ որ՝
 ,, տաճիկը ամենեւին իբրև ոչինչ կըսեպէ
 ,, ինչ դաշնադրութիւնէր որ եղած են դայ-
 ,, նարձրքին դաշնադրութիւն ետև ,, :
 ,, Նեմցիին ու ֆրանսղին դեսպանները

„ պարտապ տեղը աշխատեցան խաղաղցընե-
 „ լու , մանաւանդ թէ դուռը նորէն իրեն
 „ կանչելով պուլկաքովը՝ առաջարկեց որ՝
 „ մոսկովը տաճկին տայ ետ դարձընէ խը
 „ ըրմը . ամմէն դաշնադրութի՛նալ ոչինչ
 „ սեպվին , որոնց գիտնալով որ պուլկաքով
 „ չէր կրնար հաւանութի տալ , եէտի խու-
 „ լէն վերցուց ” :

„ Ասոր համար մենքալ հրամայեցինք մեր
 „ զօրագլխընէրուն տավրիկեան բօդէմքին
 „ իշխանին , և Ֆէլտ մառեշալ ռօմանցօֆ
 „ կոմսին յայնկոյս դանուբեան , որ իրենց
 „ զօրքերով ծեծկըվին :

Տաճկին պատրաստութիւն .

1787—1788 :

Տաճկին պատրաստութի տեսնալ պատե-
 րազմի՝ զօրք ժողովելու դիացէն այնչափ
 հեշտ (խօլայ) է , այնչափ աղէկ կարգի մէջ
 դրած է հնուցմէ՝ որ եւրոպացիք չունին ան
 կարգը . եւրոպայի թագաւորնէրը հաշտու-
 թեան ատեննալ թոշակաւոր (էօլէֆէլի)
 զօրք կըպահէն ոտքի վրայ , որպէս զի սա-
 տերազմի ատեն պատրաստ ունենան , ա-
 նով շատ խարճի տակ կըմտնան , ժողովուր-
 դէն շատ տուրք կըպահանջեն : Տաճիկը
 միշտ թոշակ տալու զօրք քիչ ունի , բայց
 ամմէն իր սահմանին մէջ՝ ամմէն փաշայու-
 թէ մէջ՝ պատրաստ զօրք ունի միշտ ոտա-
 նաւոր , նոյնպէս ձիաւոր զօրք՝ որոնք մէկ

հրամանով մը շուտ մը ոտքի վրայ կելլան.
 Իրենց թողակը իրենց երկրին գեղերէն է ⁽¹⁾.
 ասանկ ըլլալով հիմաւ մէկ հրամանով մը
 շուտ մը ամմէն փաշայութի զօրք ժողովեց ,
 500 հազար հոգի ոտքի վրայ հանեց :

Սովու վրայնաւ շինելնաւ տաճկին հեշտ է
 ու խարճը քիչ . եւրոպային տէրութիւնէրը
 ոմանք իրենց երկրին մէջը քերէստէ չու-
 նին , օտար տէրութի ծանր գնով ծախու-
 կառնեն , ոմանք քիչ անտառ ունին , մէկ
 ծառ մը կտրելու ըլլան՝ իսկոյն ուրիշ մը
 կրտնկեն դողդըղալով չըլլայ թէ հատնի ,
 ինչպէս որ ատենմընաւ վենետիկի տէրու-
 թիւ կը հոգար կը դողդըղար իր անտառնէ-
 ղուն վրայ , տաճկին տէրութիւ մօտիկ տեղ
 անատօլուն մէկ անհատնում անտառ մը
 ունի , որ սապանճա կէօլիւէն սկսեալ կեր-
 թայ կը հատնի ինչվան ճանիկ , անանկ մեծ
 որ Մմղաճ տէնիզի կըսվի . սև ծովին քո-
 վերնաւ շատ անտառնէր ունի , ուսկից ան-
 հատնում կայմէր (տիրէկնէր) կուգան ամ
 մէն տարի թէրսանէն խիստ երկաննէրէն
 անչափ շատ՝ որ իրենց շատութե համար
 կը կտրրտեն՝ վառելու կը բանեցընեն . ա-
 տնք կտրել՝ ջրով խրկել ինչվան թէրսա-
 նէն՝ երկըրցոց պարտքն է , տէրութիւ մէկ
 խարճ մը չընէր սև ծովէն ստանալու բերե-
 լու համար ան խոշոր տիրէկնէրը . ասանկ .

(1) Աս երկիրները ձիաւոր զօրաց կըսվին Չիամէթ
 թիմար . տես ինչ որ գրերէնք տաճկին զինուորու-
 թե վրայ աշխարհագրութե հատոր Ե . թղթ . 80 :

ալ պատրաստ ունի ուրիշ ամմէն քան՝ ինչ որ պէտքը կրլլան նաւերու : Ըս պատճառով հիմա իսկոյն մէկ նաւատորմիղ (տօնանմա) մը հանեց տաճիկը սև ծովին մէջ, որ աս դարերուս ատենները սև ծովին մէջը չէր տեսնուած անանկ. ճէզայիրնալ ուրիշ մէկ նաւատորմիղ մը հանեց ճերմակ ծովին մէջը պզտիկ նաւերու, որպէս զի զսպէ մոսկովին ծովասպատակները (խուրսանտները), որ ելէր կրպտրտէին արշիբեւլակեան (ատաներուն) ծովը. մաղըըսը ըստրկով օգնուած ըրաւ տաճիկին. իսկ թուսուսին օճախը չիկրցաւ մէկ օգնուած մը ընել տաճիկին, որովհետև վենետիկին տէրուածիւնը 30 նաւով մը իրեն վըայ էր ելած :

Սապահ կիրայ կար՝ որ 1767 թաթար խանի էր եղած, տաճիկը ասիկայ նորէն խան դրաւ, քիւրք հագուց, ամմէն թաթարներուն վըայ որ տաճիկի տակ էին՝ սերասքեր կեցուց. մէկ քանի ցեղմընալ թաթարներէն սկսերէին մոսկովի ու լեհին երկիրները վաղել, ասպատակուի (չարխա) ընել : Իսկ շահին կիրայը՝ որ տարիմընէր քանի որ ռօտոս քշված կընստէր ⁽¹⁾, հիմա երբոր

(1) Ասիկայ ինչպէս որ առաջները պատմերէնք, մոսկովի գիացէն խրըմու վըայ խան գրված ըլլալով մոսկովին յանձներէր իր խանուածիը, բայց ետքը զըջալով աս բանիս համար, չուզելով մոսկովիներուն մէջը մնալու, որ մը՝ յանկարծ մոսկովի երկրէն ելալ, տաճիկին երկիրը պէնտէր եկալ. ան տեղացի

Ճեճ բացվեցաւ՝ ուօտոսին տաճկընէրը կատ-
ղած վրան վազեցին, անալ Ֆրանսզին քօն
սօլին պալատը (սերայը) փախչելով, տաճ-
կընէրը բռնու[թք քօնսօլին պալատը մտան
դուրս հանեցին սպաննեցին, իր մեռելը
ճամիայնէրը քաշկուտելով գլուխը ստան-
պօլ խրկեցին: Ա կզիրը կիւրճի եուսուֆ
փաշան պուճախ թաթարնէրու և օզուի
թաթարնէրու ապսպրեց որ՝ մէկէն գըլ
պուռուռն բերդին վրայ վազեն, ասիկայ մէկ
ցամաքի սարին կամ ծայրին վրայ է, պէ-
րէզէն կղզին դիմացը կիշնայ, 1774 մոս-
կովին տակը անցերէր, անկէց ետքը քանի
ապրանք որ կուգար ազախ կամ ծապագ
ծովէն, կուզէր մոսկովը որ հոն ժողվըվին
պահվըվին, անով ասլահուլցընէ նաւարկու-
թիը դէպի ազախու ծովը, որուն պօղա-
զը ուրիշ իրեք բերդալ ունէր, որոնք են
կէրշ, եէնի դալէ, թաման. ասլահուլցընէ
միանգամայն նաւ անեբէր գետը՝ որ 800
մղոնի չափ կըվազէ, ուր շատ ասպատակու-
թիւն կընէին ծաբարովեան ղազախնէրը՝
թող չէին իտար հանգիստ նաւարկելու ան
գետին մէջը:

Ըս միջոցին մէջ ուրիշ դիպուածմընալ է-
ղալ տաճկընէրուն յաջող. մոսկովի նա-
ւատորմըն մէկ քանի նաւը սև ծովը կըպը-
տըտէին աշնանային ատեն որ վտանգաւոր

փաշան պատուով ընդունելով պուքրէշ խրկեց, ան-
կից եաշ, բայց ետքը դռնէն բռնըվելով ուօտոս
կղզին քշվեցաւ:

ժողովորդիկ ըլլալու ատեն է սև ծովին մէջ,
 ասոնցմէ քանի մը նաւ անատօլուի դին
 քշվեցան, մէկ Ֆուխաթայմընալ 42 թօ-
 փօլ՝ ստանալովն պօղազը քշվեցաւ. մէջի
 նաւապետը որ ինկիլիզ էր՝ ուղեց ճէպխա-
 նէն բռնկեցնել ձեռք չիյնալ, բայց մէ-
 ջիննէրը թող չիօրովին. անանկով 1787
 սեպտ. 15 պօղազէն ներս մտաւ ինքիրեն՝
 տաճկին ձեռքը ընկաւ շատ փնասված ալե-
 կոծուծէ, ասիկայ մեծ յաջողութի սեպե-
 լով՝ բաղմուծի մէջը մտնալով հանդիսով
 տեսանք որ վերէն բերին, սերային առջե-
 ւէն անցրնելով թէրսանէն տարին, կոտը-
 տրված տեղէրը շուտ մը նորոգելով, անու-
 նը յարմարութե մը խիւտավերտի դրին,
 որովհետեւ ան տրվալ տաճկին ձեռքը, ա-
 նանկով նաւատորմդին մէջ խառնելով մոս-
 կովի դէմ խրկեցին :

Յունի. 29. 1788 փաշայ խափուսին դու-
 դէրը տնկրվեցան. մարտի 6, օռտու ալա-
 յիով սանճախը ելալ, բայց էսնաֆ ալայի
 չըրին աս անգամուն. ամմէն մալիքեանէի
 տիրվրտոնցմէ ճէպիլինէրը ժողվեցին (1) :

(1) Տաճկին մէջ ով որ մալիքեանէ կամ կալուած
 մը ունի, քանի որ կաթէ ան մալիքեանէն՝ ծեծի ա-
 տեն հարիւրին տասը պարտկան է տէրութեան
 տալու :

Սոսիոլին էհամար , զօրքը , պաճկին վաղէլը հոս
հոլին վրայ , լեհին վասնգասոր հայրութիւն .

1787 :

Սոսիոլին տարեկան եկամուտը 1786 տա
րիին ետքէրը կըհասնէր 32 միլիոն ռուպլի
(պէշլիք) . իրեն դուրս խրկած ապրանքը ծռ
վով տարին կըհասնէր 20 միլիոնի ապրանք ,
իսկ դրսէն ներս եկած ապրանքը՝ կըհասնէր
14 միլիոնի : Աիկա նաւահանգիստը տարին
700 նաւ կուգային լեցուն կերպ կերպ ապ
րանքներով . 800 նաւալ բէդրօպուրկ կու
գային : Նովու վրայ ունէր 17 խիստ մենծ
նաւ , 50 միջակ մեծ նաւ , 40 Ֆուխաթա ,
100 չէքտիրի , և ուրիշ պզտիկ նաւեր , ա
սոնք պալդիկ ծովու վրայ էին , իսկ սև ծռ
վուն մէջ ունէր 30 նաւ : Յամաքի վրայ ու
նէր 250 հաղար կրթըված զօրք , ու գրե
թէ անչափ մընալ ուրիշ զօրքէր , խաղախ
խալմուխ , ու սլաշիր . խըրըմու թաթար
նէրը ասոնց մէջը չէին , ըստ որում դաշնակ
ցութէր կեօրէ ազատ էին տաճկին դէմ
ծեծկրվելու :

Մչափ զօրք ծովու ցամաքի վրայ պահելու
համար՝ տարին 26 միլիոն ռուպլի կուզէր ,
աս բանիս համար՝ քայնարճըք եղած դաշ
նադրուէ ետև (որ 1774 . եղավ) ազգային
Սանգարան (պանքա) սահմանեցին , որ
պէս զի երբօր պղնծէ ըստակը շուտով չէր
կրնար կոխվեր , որչափ որ պէտք ըլլար՝ ա

սիկայ ծառայէր : Այս թանգարանին դուրս տրված թղթերը՝ 1780 տարին 40 միլիոնի հասաւ. ան տարին ամմէն ըստրկին թղթէրը երեցին, անոնց տեղը նոր թղթէր հանեցին 33 միլիոն ռուպլի . 22 միլիոնիալ ըստակ կար հոն հարուստներու մենծերու փոխ տալու համար . 11 միլիոնալ կար քաղքըցոց շահով տալու համար՝ հարիւրին հինկ առնելով : Հիմաալ մոսկովին եկեղեցականքը 8 միլիոն ռուպլի կամաւոր տուրք տրվին թագաւորութե . այնչափալ տրվին ազնուականները :

Պանք որ մէկալ դիացէնալ ինչ գործարաններ որ կային փարթամութե ու հանգըստութե բանէր բանօղ՝ ամմէնուն խարճը կախ թողուց մոսկովը . ան ծովու ճամփորդները՝ որ մենծ խարճէրով խրկրված էին նոր տեղվանք գտնալու եւրոպային ու ամերիկային մէջը ճեափօնէն վեր՝ ամմէննալ դադրեցուց : Ար զօրքը ցրուած ըլլալով աս դիս ան դին՝ քուսպանին մէջը 50 հազար մարդ ունէր, հիմա 100 հազար նոր զօրք ժողվել հրամեց իր ամմէն երկրէն, հարիւր մարդէն մէկ մարդ մը առնելով, շատ դժարութե քան ինչ որ տաճիկը կը ժողվէ հեշտ կերպով . իրեք գունդ կամ բանակ բաժնեց, մէկը բօդէմքին իշխանին տակը՝ որ ամմէնուն զօրագլուխ էր, մէկալը ռօմանցօֆ կոմսին տակը, երրորդը՝ միւս բօդէմքին իշխանին տակը :

Ասանկով սկսան երկու դիացէն իրարու զարնըվիլ, շէյխ մանսուրը որ 10 . 12 հա-

զար զօրք ունէր իր տակը, մոսկոյնէրուն
 հետ զարնըվելով ետ փախաւ, կովկասու
 լեռնէրուն մէջը սլահվեցաւ, որ կըսվին
 եալպուզ սար, թաթարինէրնալ միանալով
 օղուէն եկած եէնիչէրնէրուն հետ որ տաճ
 կին նաւէրը աս դիս անցուցին՝ իրէք ան
 դամ վազեցին գըլպուռունին վրայ, նա
 ւէրնալ ցամաքին մօտիկ չիկրնալով կենալ,
 չիկրցան մոսկոյնէրուն վրայ թօփ նետել,
 փախչօղ տաճկրնէրը ներս առնել, որոնք
 որ ջուրը ձգեցին զիրենք լողալով նաւէրը
 հասնելու համար: Սերասքէր փաշան 10
 հազար նոր զօրք առնելով իրեն՝ 1787
 հոկտ. 11 նորէն գըլպուռունին վրայ վա
 ղեց, բայց ան ատենը գունդ մը խումպա
 րաճինէրու օգնութի հասած ըլլալով մոս
 կովին՝ իր զօրքը ջարդըվեցաւ, տաճկին
 կտրիճ զօրքնալ երկու տեղէն չարաչար
 վիրաւորեցին մոսկովին զօրապետը որ սու
 վարօֆ կըսվէր:

[Ս]էպէտ ձմուվան սաստկութիւր շատ եղամ
 բայց մոսկովին զօրքը ճամփայ ելամ, իրեն
 առաջապահ զօրքը լեհին սահմանը հասամ.
 տաճիկը գիտնալով որ՝ լեհին մէջը շատ
 մարդ ունի իր դին՝ ասանկ իմացուց լեհին
 հառարակապետութեր: „] սածիս պէս որ
 „ լեհը թողուցերէ մոսկովին զօրքը լեհաս
 „ տանին մէջ մտնալու՝ ինչ պայմաննէր որ
 „ հին ատենէն վեր լեհին հետ ունիմ, ամ
 „ մէննալ կըձգեմ. աւելի կըթնամանամ
 „ լեհոց հետ՝ թէ որ մոսկովին ապրուստ
 „ ուտելիք տան „: Մը բանիս վրայ լեհի

մենծերէն մէկ քանին՝ շատ բալադիններ կամ իշխաններ տաճկին բարեկամութիւն պահելու համար՝ ուղեցին դէմ դնել, մոսկովը չիմացընել, բայց չիկրցան . մոսկովին էլմբդ զօրապետը և կալլիցին իշխանը 30 հազար մարդով մտան լեհին երկիրը պրաքլալիա ըսված բալադինոյի մէջ՝ ու բօաօլիա գաւառին մէջ, երկրըցիք բռնադատվեցան ահամայ ապրուստալ տըվին մոսկովներուն, թէպէտ մոսկովի դէմ եղող լեհերը կազաղակէին ասոնց դէմ կըսպառնային որ՝ վարչովի մէջ եղած խորհրդանոցէն կըվերցընենք վճռելու ազատութիւն : Աւղեցին լեհերը արտաքոյ կարգի ժողով մը ժողվել, թէպէտ և չէին կրնար, որովհետև բաց ՚ի վտանգաւոր ժամանակէն նաև ձայն մը ելած էր որ ան 1775 հաստատված կառավարութե կերպը պիտոր փոխվեր, թագաւորը յաջորդութե պիտոր ըլլար, ինչպէս որ վարը ունինք պատմելու . ուղեցինալ ուքուանիայի մէջ եղած զօրքը շատցընելու որ սահմանները պահեն, բայց ամիկն բանը կամաց կամաց կընէին իրենց դանդաղ կառավարութեը կեօրէ :

Այկալ դիացէնալ մոսկովները 5, հազար քասպարտիայի զօրքով՝ իրենց գնդապետ միսդօֆը ունենալով՝ դեկտ . վերջերը լը դալով քուպան դետը անցան, 2 հազար տնվոր ան տեղացի բարբարական թաթարներէն զարկին, իրենց տակը առին, շատ պատանդ (ըւէհին) իրենց հետերնին տարին . անկէց առաջ դացին լերուք դետին

դին պաշիր ըսված Թաթարնէրուն վրայ
յարձրկեցան, որ կիւրճիսթան վազողնէ-
րէն էին, ու պատճառ դրանը հետ ավրը
վելու. ասոնցմէալ պատանդ ու տուրք ա-
ռին: Ասոնց պէս ըրին նաև նօղայի Թա-
թարնէրը. ան տեղվանքը գտան մէկ մեծ
խումբ մը Թիւրք զօրաց, կովկասցիները
իրենց գլուխ ունենալով, որոնց վրայ քօ-
ւիդէշ զօրապետը 2 հազար մարդով վա-
զելով զարկաւ:

(3) Վսէֆ կըջանայ հաշտեցնել, երէն պարբաստո-
ւելը, վարձուհիք:

1787:

Աս ատեններս յովսէփ կայսրը կրկին սուր
հանգակ (Թաթար) խրկելով, աս խօսքս
զուրցեց դրանը: «Աս մոսկովին հետ մըշ-
» տընջենաւոր դաշնադրութի ունենալով
» իմին պապերուս պէս՝ պէտքը կըլլայ որ
» եսալ մոսկովին հետ մէկ տեղ ծեծկըվիմ,
» որովհետև դուն եղար առաջ անոր վրայ
» ելլող, իսկ Թէ որ մոսկովը ըլլար առջինը
» ծեծ բացող, ան ատենը ես իմ դիացէս
» կատարեալ չէղոքութի պահած կըլլայի.
» ասանկալ ըլլալով միջնորդ կըլլամ հաշ-
» տութի ընելու, միայն Թէ դուն Թնամու-
» Թիդ վար ձգես, զինադուլ (միւթարէ-
» քէ) մը ընես, որ մէջը գտնանք, որով
» հետև դեռ ատեն կայ»: Աայց դուռը

յայտնի ասանկ պատասխան տրվալ :
 « Ո՛վ որ հաշտեցընելու վրայ խօսք բանայ ,
 « յանցաւոր կըսեպեմ » : Ատքնալ նեմցէի
 դեսպանին ականճը ասչափ ձգել տրվալ :
 « Թէ որ յովսէփ կայսրը չէզոք կենալու
 « ըլլայ , ան պզտիկ երկիրնէրը , որոնք շատ
 « հեղ ուզերէր ուլահին ու խրվաթլըխին
 « դիացէն , իրեն կուտանք » :

Բայց յովսէփ կայսրը աս խօսքերս ոչինչ
 սեպելով՝ աշնան ատեն հինկ խուճք զօրաց
 ժողվեց մաճառին մէջ զանազան տեղ . մէկ
 խուճքը 73 հազար զէմլինին քով , որոնց 20
 հազար ձիաւոր էր . երկրորդ խուճքը 17
 հազար ոտանաւոր՝ 9 հազար ձիաւոր պու-
 քովինային մէջ՝ որ 1775 տաճիկը տրվերէր
 նեմցէին հօթունին մօտիկ . երրորդ խուճք-
 նալ ասչափ զօրքով կըսպասէր դուանսիւ-
 վանիայի մէջ՝ որուն նեմցէնէրը զիեպէն
 պիրկն կըսեն . չորրորդ խուճքը 22 հազա-
 րով դմրշվարին պաննադը կեցած էր . հինգ-
 երրորդը խրվաթլըխին մէջն էր 40 հազա-
 րէն աւելի : Ասոնք ամմէնը մէկ տեղ 132
 հազար ոտանաւոր զօրք կըլլային ու 44 հա-
 զար ձիաւոր . թող տուր կամաւոր զօրքը
 որ 20 հազարի կըհասնէին , 10 հազարի
 չափալ թօփճի , լաղըմճի , ու վարպետ-
 ներ : Աչափ զօրք պահելու համար 80 մի-
 լիոն ֆիօռին կերթար տարին . իսկ նեմցէին
 եկամուտը ան ատենը 100 միլիոն ֆիօռինը
 կանցնէր տարին , որովհետեւ թագաւորա-
 կան պարտքը որ առջի ծեծէրը ընել տրվեր-
 էին , շատ քիչցուցերէր յովսէփ կայսրը

իրենն խեղացի տնտեսութիւն ու չափաւորու-

թիւն :

Տաճիկը առջի բերանը նեմցէին դեսպանը պարոն հերպերդը ուղեց եկտի խուլէն վերցընել, բայց ետքը չիվերցուց, հասա () ու թա դրաւ իր սէրայը՝ որ ժողովուրդը մնաս մը չիհասցընէ, ինչվան որ հերպերդը Ֆրանսոզի նաւ մը հեծնալով ելավ գնաց ալի կուռնա, իր դրոշակին (պայրախին) տակի եղօղնէրը յանձնելով Ֆրանսոզի դեսպանին : Վետրվ. վերջէրը յովսէփ կայսրը վէննայէն ելավ եկավ թրեստ, ելլալու ա տենը իր կտակը չորս կնքով զմռւված՝ յանձնեց քաջից իշխանին՝ որ իր վէզիրն էր, թրեստին ծովեզերքը ամբողջուց մարտ կոցնէր (թապեանէր) շինել տալով ամ մէն տեղ. ասանկալ ըրավ Ֆիուսի ու սէյնա ըսված տեղվանքը, զօրքալ շատցուց, ան կէց եկավ մաճառ՝ զէմլին եղած զօրքը տեսաւ որ պելիդրատ բերդին դիմացը կիլնայ, մէկ քթի մը վրայ շինված որ երկու գետը կը շինեն դունան ու սավան մէկմէկու խառնըվելով, ասիկայ 1739էն ետեւ ամբողջուց նեմցէն՝ որ պելիդրատի զօրքերուն դէմ դնէ : Արքոր բեդէու վարատին եկավ յովսէփ՝ զօրաց պաշարը (զահրէն) կարգի դնել տրվալ, հիւանդանոցները աւելի կարգաւորեց, որովհետեւ վարի մաճառին օդը գէշ կըլլայ գետերուն շատութիւնը համար, որոնք ձիւնները հալելու ատենը գետինը կոխելով ծաւալելով գէշ գոլոշաիք կը հանեն խիտ մնասակար դրսեցոց, աւելի

նեմցէնէրուն (1). Տիմակվան ծեծին մէջ
աս պատճառով՝ ու դարունքը սաստիկ ան-
ձրեային երթալուն պատճառովը՝ ինչվան
Տօ հազար նեմցէի զինուոր հիվընացան,
շատնալ մեռան. նոյն իսկ յովսէփ կայսրըն-
ալ ողջութեւ տկար ըլլալով՝ ամսէ մը ետե-
տենդ (սրթմայ) բունեց, բայց միշտ քա-
ջութի պահել ուզելով՝ ամմէնունալ օրի-
նակ կուտար համբերելու, օդին խստուիր
բանի տեղ չիսեպելու:

Յովսէփ ամմէնուն մէջ առջինն էր որ
քունէն կելլար արշալուսէն առաջ ձի կը-
հեծնար կերթար զօրքերը քննելու, ձէ-
նէաւնէրը ու մենծ ուֆֆիցիալները իր
սեղանը կառնէր, բայց իր հաց ուտելը ի-
րեք քառորդէն (չէյրէքէն) աւելի չէր
քշէր, ըլլալով չափաւոր զինուորի մը պէս
առանց մէկ փարթամութի մը ցրցընելու.
իր քունը 4. 5 ժամը չէր անցնէր, անալ
ասպարոված էր որ երբոր մէկ սուրհանդակ
մը դալու ըլլայ հարկաւոր՝ իրեն իմաց
տան: Ետ բանի մէջ կըջանար որ՝ ք.
Ֆետերիքոսի պրուշի թագաւորին հետեւի,
թէպէտ շատ տարբեր է մէկ չոր ու ա-
ռօղջ տեղ մը ծեծկրվիլ ինչպէս է դեր-

(1) Ասանկ լուէնայի դուքսը կարողոս երբոր առջի
անգամուն պուտիմ պաշարեց, ու եւդինէոս իշխա-
նը երբոր պէլիզրատ պաշարեց, շատ զօրք կորսնցու-
ցին հիւանդութիով. 1737 տենդը (սթման) դար-
ձաւ փոխադրական (պուլաշըիս) հիւանդութիւն մը
եղավ. զօրքին կէսէն աւելին անկէց մեռան:

մանխան՝ քան թէ թաց ու հստած տեղ մը
ինչպէս է դունային քովերը՝ ուր տեղվանք
որ գեատերը իրենց բերնին կրմօտիկնան ծո-
վը թափելու, ուր տեղ նաև տրայանոս
կայսրը տաչի ըսված ազգին հետ ութը տա-
րի ծեծկըվելով աշխատելով ինքնալ քաշեց
ան գէշ հիւանդուիը :

Վեհեկէն ծեծ Բահաւը Կաճէն Վրայ .

1788 :

Փետրվ . 9 յովսէփ կայսրը իր յայտարա-
րութէ թուղթը հանեց , ասանկ գանկտե-
լով մէջը : « Արբոր մոսկովին դեսպանը ու-
» ղեց որ տաճիկը սպասէ ինչվան սուրհան-
» դակ (թաթար) խրկէ բէգրօպուրկ և
» ինչվան որ դառնայ , տաճիկը ատեն չի-
» տրվալ , մանաւանդ թէ պնդեց ըսելով
» որ մոսկովին դեսպանը ստորագրէ մէկ
» թուղթի մը՝ որով կոչնչացընէ առուտու-
» ըի դաշնագրութիը մոսկովին հետ մէջեր
» նիս ըրած քանի մը ամիս առաջ . կոչնչա-
» ցընէ նաև ան պայմանագրուիը՝ որ 1784
» ըրերէինք խրըրմին համար : Արբոր մոս-
» կովին դեսպանը աս բանս մերժեց ուրա-
» նալով՝ տաճիկը եէտի խուլէին բերդը
» վերցուց անիկայ , հանդիսով պատերազմ
» հրատարակեց մոսկովին վրայ : Աս ու-
» ֆրանսան միջնորդ ըլլալ ուղեցինք հաշ-
» տուի գտնալու մէջերնին՝ տաճիկը մտիկ
» չըրաւ : Հիմա էս դաշնագրութի ունե-

„ նալուլ մոսկովին հետ՝ հարկ եղալ մոս-
 „ կովին հետ միանալ՝ տաճկին հետ բարե-
 „ կամուլթինիս ավրել, որ դրեթէ 50 տար-
 „ վընէ վեր ունէինք . աս դաշնադրուլթիք
 „ իս կրստիպէ մոսկովին դիացէն տաճկին
 „ դէմ պատերազմիլ . ասիկայ հարիւր տար-
 „ վընէ վեր եղած մէկ դաշնադրուլթիմընէ
 „ մէջերնիս , շատ հեղալ նորոգվերէ , մէկի
 „ մը մնաս տալու համար չէ , հասպա իրար
 „ պաշտպանելու » : Աս յայտարարուլիս հա-
 „ նելով կայսրը՝ իրեն սահմանի մէջի եղած
 „ ամմէն տաճկընէրուն ու իրենց վաճառա-
 „ կան նաւէրուն ազատուլիւն տրվալ ուր
 „ որ ուզեն՝ երթան :

Տաճիկնալ նեմցէին դրածին դէմ ինքնալ
 յայտարարուլի հաննց մարտի 13 , ուր ա-
 „ ռաջ կրգանկտի մոսկովին ըրածնէրուն վը-
 „ րայ , որ իրեն դէմ դրած յայտարարուէր
 „ մէջ կրպատմըվին , տէս վերը . մանաւանդ
 „ յանկարծ խրըրմ առնելու վրայ : « Ուր
 „ զօրք խրկելով շահին կիրայը (որուն ա-
 „ ռաջ պաշտպան էր) , վար ձգեց , վեր-
 „ ցուց տէրուիլ մէկ ցեղէ մը՝ որ 300 տար-
 „ վընէ վեր կրժառանդէր . տաճկին վաճա-
 „ ռականները որ պղտիկ թաթարը կամ
 „ մոսկովստան կերթային՝ թօփի մը կրկա-
 „ պէր՝ անանկ չարչրկելով կրմեռցընէր .
 „ անանկ ծանր մաքս (կէօմըիւք) կառնէր՝
 „ որ ասրանքին աժողէքէն աւելի կրնէր .
 „ տաճկին նաւերը թօփոտելով թող չէր
 „ իտար ցամաքը ելլալու » : Ատքը նեմցէին
 „ ըրածնէրուն վրայ ասանկ կրգանկտի երած

սրտով, որոնք իրաւ լսելու խօսքէր են :
 ,, Ըմմէն տէրու թի գիտէ որ մեր տաճկին
 ,, տէրու իր մէկ առիթ մը չէ տրվէր նեմ -
 ,, ցէի տէրու թէ փնասելու կամ նեղելու ,
 ,, որ իր դրացին է ու բարեկամ 50 տար -
 ,, վընէ վեր , թէպէտ և գիտէր որ խիստ
 ,, ներքին մտերիմ կապով կապված է մոռ
 ,, կովին հետ , ասոր փորձը աս է որ՝ ամմէն
 ,, հեղուն ինչ որ ուզերէ նեմցէն՝ ըրերենք
 ,, զիջանելով , թէպէտ և ան բաները բոլո -
 ,, բովին դէմ էին դաշնագրու թէց որ մեր
 ,, մէջը ունէինք : Ըռաջ նեմցէն մէկ երևե -
 ,, լի կտոր մը պուղտանու երկրէն իրեն ու -
 ,, զէց առնել , երկիրը ինքը չափեց , սահ -
 ,, մաննէրու նշան դրավ . ետքը շատ զօրք
 ,, խրկեց հոն սպառնալով մեծ ծեծ բանա -
 ,, լու՝ թէ որ դուռը շուտ մը իրեն չիյան -
 ,, ձնէ ան երկիրը . աս բանիս ինջանք , մարդ
 ,, խրկեցինք հոն որ մեր տալը հաստատեն
 ,, օրինաւոր դրէրով : Արկրորդ՝ պարպա -
 ,, ըրչին տայինէրը թէպէտ անկախ են՝ մեր
 ,, յորդորելովը պատուել սկսան նեմցէին
 ,, վաճառական նաւերը , ծովու վրայ չի -
 ,, դալէլով անոնց , թէպէտ մէկ դաշնագրու
 ,, թէ մը մէջ չիլիւր որ՝ իրենց ծովասպա -
 ,, տակներուն (խուրսանանէրուն) տրված
 ,, փնասը տաճիկը վճարէ , բայց ասալ վճա -
 ,, ըել յանձն առինք , որպէս զի նեմցէն իր
 ,, բարեկամութիւնը պահէ , յուսալով որ ե -
 ,, ՚, բախտադէտ կըլլայ : Արրորդ՝ նեմցէն
 ,, ուզէց որ սև ծովին մէջը ազատութի ու -
 ,, նենայ առուտուրի ու նաւարկուէ վրայօք

,, ամմէն արտունու թք, որ տաճկի տէրու
 ,, թէ շատ փնասակար բան էր. մեր առջի
 ,, ըրած դաշնադրութեց մէջը՝ մասնաւո
 ,, ըապէս բասարովից ու պէլիղրատի մէջ
 ,, ըրած դաշնադրութեց մէջը ամենեւին չէր
 ,, յիշվեր, մանաւանդ թէ ամենեւին մոռ
 ,, ցրված բան էր, որովհետև նեմցէն չու
 ,, նէր բնաւ մէկ իրաւունք մը աս բանս պա
 ,, հանջելու, բայց բարեկամաբար ասալ
 ,, ընդունելով ազատ անցուդարձ ու նա
 ,, լարիութի շնորհեցինք նեմցէի ու դօս
 ,, քանայի դրօշակով նաւերուն ամմէն ծո
 ,, վերու գետերու մէջ որ մեր սահմանին
 ,, մէջն են, մէկ տեղ մը չիբացառոցելով,
 ,, մէկ կապ մը չիդնելով ու քննութի մը
 ,, չընելով: Չորրորդ՝ անցած ատենները
 ,, ոչ երբէք եղերէ որ՝ նեմցէի քօնսօլ նստի
 ,, ուլահ պուղտանի մէջ, մէկ խօսքմընաւ
 ,, չիկայ եղած առջի դաշնադրութեց մէջը՝
 ,, բայց նեմցէն պահանջեց որ՝ իր մէկ գոր
 ,, ծակալը նստի ան պէյութիներու մէջը.
 ,, մենքալ բանի տեղ չիսեպելով ան փնաս
 ,, նէրը՝ որ անկէց առաջ կուգային, ասոր
 ,, ալ ինջանք թող տրվինք, ամմէն աս ու
 ,, զած բաներուն համար վաւերական գի
 ,, ըէր ըրինք: Աւ թէպէտ նեմցէն բայ
 ,, նարձքք եղած դաշնադրութեցն ետև միշտ
 ,, օգնօղ եղավ մոսկովին թնամութեանը,
 ,, բայց մենք ասոր վրայ ամենեւին մէկ տհա
 ,, ճութի մը կամ գանկատ մը չիբրցուցինք.
 ,, ասանկով յայտնի է ամմէնուն՝ որ մենք
 ,, միշտ հաւատարիմ մնացերենք մեր բարե

„ կամուժէր մէջ, նաև ան ատեններնալ
 „ որ նեմցէն շատ ձախորդութիւն քաշեց,
 „ ինչպէս որ վկայեց նաև պարոն հերպեր-
 „ դը իր դեսպանը: (Ը) Ի որ մենք նեմցէին
 „ թշնամիներուն մտիկ դրած ըլլայինք ան
 „ ձախորդ ատենները, և իրենց տըվածսին
 „ առած ըլլայինք, շատ գէշ պիտոր ըլլար
 „ նեմցէին կացութիւր, բայց ոչ երբէք հե-
 „ ւըցանք մեր շիտակ ձամիէն, մեծասրը-
 „ տութիւն, ու առատաձեռնութիւն, չուզե-
 „ ցինք որ մեր դրացիին տկարանալովը ձա-
 „ խորդութիւր մենք զօրանանք: (Վ) Երեկինք
 „ մտվընիս որ՝ նեմցէնալ ասոր կեօրէ ա-
 „ ղէկուի կընէ, ինչպէսալ որ իրաւը զուր-
 „ ցելով զանազան ատեն ըրերէր, բայց հի-
 „ մա նեմցէն սաստիկ բաղձանք ունենալով
 „ մենծնալու, իր ընդարձակ սահմանը աւե-
 „ լի ընդարձակելու ուրիշները փնասելով
 „ յարմար առիթ մը գտաւ իրեն՝ մեր ավրը-
 „ վիլը մոսկովին հետ, անիրաւուք մը մեզ
 „ ավրօղ սեպեց աս բարեկամութիւր, զնաց
 „ մոսկովին հետ միացաւ, առանց պատճա-
 „ ռի մը կտարելով իր կապը, ետ կանչելով
 „ իր դեսպանը: (Ս) Ենք ասորալ ինչնալով
 „ թողուցինք իր դեսպանին որ երթայ,
 „ Ֆերմանալ տալով որ ողջ առողջ հասնի
 „ դօսքանա, անկից իր արքունիքը. յանձն
 „ առինք որ իր տնեցիները Ֆրանսոյի դես-
 „ պանին յանձնէ “ :

Ըսոր նման բերնովալ շատ բան զուրցեցին
 նեմցէին դեսպանին, մէկիկ մէկիկ յիշեցը-
 նելով թէ ինչպէս մարիամ թերեզինային

ճախորդ օրերը ուրիշ տերութիւններ շատ
 դրդուեցին տաճիկը որ նեմեցին վրայ ել-
 լայ, որով ինչպէս վէննա կրնար երթալ
 տաճիկը. բայց մենք աս բանս անիրաւուի
 սեպելով ետ կեցանք, չուզեցինք անոր ճա-
 խորդ օրերուն մէջ իր փնասովելովը մենք ա-
 ուաջ երթալ, երկիրնիս ընդարձակել: Մա-
 ղիամ թերեզինան ըսին աս մեր ըրած ա-
 ղէկու թիր ճանչնալով՝ կտակ էր ըրած յով
 սէփ կայսեր իր որդւոյն՝ որ տաճիկն վրայ
 ծեծ չիբանայ, որովհետև տաճիկը իր նեղ
 օրերը ծեծ չիբացաւ իրեն դէմ, մարդկու-
 թիր կրպահանջեր չիմոռնալ անոնց ըրած
 երախտիքը. թող յիշէ ըսին յովսէփ իր
 մօրը կտակը, հիմա որ ինքը չիբուներ իր
 մօրը կտակը, մենքալ այ կը թողունք, աս
 բանիս դատաստանը թող անտեսնայ:
 Տեսնանք հիմա աս երկուքին ծեծկրվելուն
 դիպուածը կատարածը՝ թէ ինչ դին կտրը-
 վեցաւ:

Նեմեցին ու տաճիկն ծեծելու և պո-
 նային մէջ.

1788 :

Նեմեցին շատոնցմընէ աչք ունէր պօսնային
 վրայ, ըլլալով մէկ երկիր մը իրեն կիս,
 մէջինները բարձրահասակ ու ժով մարդիկ,
 բնութիւնքաջ կտրիճ, յարմար պատերազ-
 մելու. ասանկ ըլլալով իր ուժը անոր վրայ
 թափեց, ամմէնէն առաջ պօսնային ու

տաճկի խրվաթլըխին վրայ վազեց, որուն շատ կտրըճութք գէմ գրին պօսնացիք. ապրիլի 7 զէմլինի վրայ վազեց: Նեմյէին զօրապետը միգրօվիսքի պօհմիացի՝ որ անցած ծեծէրուն մէջ պրուշի գէմ երևելի էր եղած՝ ուղեց Սապաշ բերդը պաշարել, աս բերդս ք. սուլդան սիւլէյման առերէր, երբոր պէլիզրատու վրայ գնաց, ուսկից 21 մղոնի չափ հեռու է տումաչա ջուրին քով, անոր համար առաջ շուք գեղը առաւ որ մօտիկ է. յովսէփ կայսրնալ անձամբ հոն եկավ, իր ձմերոցը հոն շինել տրվավ. ձիաւոր զօրքը ու թօփէրը նաւակնէրով տումաչա գետը անցան: Տաճկընէրը նեմյէին մօտիկնալը տեսածնին պէս, ինչ տուն որ կար բերդէն ինչվան ջուրը՝ ամմէննալ երեցին որ թշնամին տեղ չիգտնայ նստելու. նեմյէն մէկ կամուրջ մը շինեց սավա գետին վրայ 600 ոտնաչափ՝ անանկով թօփուտել սկսաւ, մէջի պահապան զօրքը փախան բարձր անմատոյց ապառաժին վրայ որ բերդին մէջն էր, յովսէփ կայսրը յորդորեց անձնատուր ըլլալու, անանկով առանց ջարդըվելու 1860 զինուոր՝ հոն եղած եէնիչէր աղասին 32 մենծէրով գերի ընկան, մէջի բնակիչներնալ 2 հազար հոգիի չափ սուրնիչ խրկեցին. բայց նեմյէինալ շատ հազարապետները (ուֆֆիցիալները) կտտրբտրվեցան խոցվեցան, ինչպէս նաև բօնիագօվսքի իշխանը խոցվեցաւ, որ կայսեր թիկնապահն (սիլէհտարն) էր, և եղբօրորդի լէհի թագաւորին:

Վասնք որ մէկալ դիւացէնս պէլիղրատին դիւ
մացի եղած տաճկընէրը՝ և պէլիղրատին
զօրքը յունիսի ու յուլիսի մէջ իժիր նեմ-
ցէնէրուն վրայ կրվազէին թէ հոս եղածնէ-
րուն և թէ պէսքանիա եղածնէրուն ու
շատ կըջարդէին, ինչու որ՝ աս կողմս շատ
բերդէր չըլլալով՝ նեմցէն հոն զօրաւոր բա-
նակ մը չէր դրած, այլ մէկ գիծ մը զօրաց
կարգաւ կեցուցած ըլլալով՝ միտքը դրերէր
որ ան չափը կօգտէ տաճկին դէմ դնելու .
երկան կըլլայ պատմել ինչ որ ակնատես-
ներէն լսեցինք թէ ինչպէս տաճկընէրը
խուճք խուճք անդ մը 300, տեղ մը 500
հողի մէկ եղած կրվազէին նեմցէին քիչվոր
զօրացը վրայ, որը կըջարդէին, որը գերի
կըբերէին ստանալով : Յունիսի 24 տաճկը-
նէրը չարաչար յարձըկեցան հոն եղած նեմ-
ցէին զօրքին վրայ, այնչափ կոտորեցին նեմ-
ցէին զօրքէն՝ որ յովսէփ կայսրը լսածին
պէս՝ շատ զօրքով երևելի զօրապետներով
անձամբ հոն հասաւ, հազիւ փախուց տաճ-
կընէրը, բայց նեմցէնէրէնսալ շատ ջարդը-
վեցան . ասկից ետքը նեմցէնէրը հասկընա-
լով որ՝ անանկ հեշտ չէ տաճկին դէմ
դնելը ինչպէս որ կրկարծէին, անոր համար
քանի նեմցէի զօրք կար որ՝ սավա գետին
ան դի գին անցերէին՝ ամմէննալ ժողվե-
ցին մէկ դունդ եղան :

Ըստ ատեններս պօսնային մէջնալ խիստ
սաստիկ ծեծ կըլլար, մէջինները ըլլալով
քաջասիրտ սրատերազմական մարդիկներ և
խիստ հաւատարիմ տաճկին, շատ նեղուի

կուտային նեմցէի զօրաց, մանաւանդ որ պօսնային երկիրը դժուարին ըլլալով ինչ վան որ նեմցէնէրը հօն մտան, շատ յոբնեցան, կամաց կամաց կրցան մէջը ոտք կոխել, անալ չիկրցան տեղ մը նստիլ: Ա լեզէնսդէին իշխանը որ խիստ բարեկամ էր յովսէփ կայսեր՝ առաջ տուպիցա բերդին վրայ վազեց՝ որ անկից ճամփայ բացվի պաշտալուքա երթալու պօսնային գլխաւոր քաղաքը. աս տուպիցա բերդը թէպէտ պզտիկ է, բայց տեղը խիստ դժուարին, գետին մէկ դին տաճկին բերդն է, մէկալ դին նոյն անուշուով նեմցէին բերդը, իրարու թօփ կրնան հասցընել: ()ը մը՝ ինչ տուն որ նստերէր յովսէփ կայսրը հօն մէկ թօփ մը նետեց տաճիկը իբր 8 օխայ ծանրութիւն, իրեք մարդ մեռուց որ ան տանը մէջ կեցած էին, մօտիկ ան խուցին ուր որ կեցած էր յովսէփ կայսրը. իր գիւնադիւրը որ հօն կըզրէր՝ սաստիկ շփոթեցաւ, բայց յովսէփ անշփոթ մնալով իրեն կըզուրցէր ինչ որ պիտոր գրէր, նման ան գիպուածին որ պատահեցաւ շվէտի թագաւորին ժք. կարողութի:

Ըստ ատեն Ահարնիք գնդապետը՝ որ ()կուլին ըսված կարիճ զօրաց վրայ էր, տրէզնիք բերդը զարկաւ, որ պզտիկ էր բայց հարկաւոր քօվանա գետին ան դին. ասկից սիրտ առնելով կարողոս լեզէնսդէյն իշխանը՝ ապրիլի 19 մէկ խումբ մը զօրաց անցուց գետին ան դի դին. ասոնք չեռուլիա ըսված տեղը նստան, երկու օրէն ետե տու-

պիցա բերդին քովը եկան . ամսուն 25 սան-
դուխք (ներտիվան) դնելով իրեք անգամ
վեր ելլալ ուզեցին , բայց մէջի գտնելաճ
կտրիճ պօսնացինէրը անանկ պաշտպանե-
ցին՝ որ նեմցէնէրուն ամմէն աշխատանքը
պարապ հանել տրվին , մանաւանդ որ ան
ատենը յանկարծ տաճիկ զօրք հասան բեր-
դին օգնուի . բերդին մէջի զօրքնալ դուրս
ելլալով անանկ ջարդ մը տրվին , որ նեմցէ-
նէրէն 3 հազար մարդու չափ կորսրվեցան ,
որը մեռած , որը խոցված , երկու զօրա-
պետալ մեռան , մնացածը փախան , որոնց
ետեէն հալածեցին պօսնացիք ինչվան նեմ-
ցէին սահմանը : Պատճառ ասանկ ըլլալուն
ան եղավ որ՝ նեմցէնէրը քովի եղած լճին
(կէօլին) վրայ չունէին ամենեին մէկ մարտ-
կոց (Թապեա) մը Թօփերու , մտվընին
դնելով որ՝ տաճկընէրը չեն կրնար ան լճէն
անցնիլ . իսկ աներկիւղ քաջ պօսնացիք ի-
րենց ձիերուն պօչէն բռնելով անանկ լողա-
լով անցան ան լճէն :

Հոսալ տեսնալով նեմցէնէրը որ հեշտ (խօ-
լայ) չէ տաճկին դէմ դնել , աս դիպուա-
ծէս ետե աղէկ ամրցուցին զիրենք , պօսնա-
ցոց վրայ վազելը Թողուցին , զիրենք պաշտ-
պանելը նայեցան , որ Թող չիտան պօսնա-
ցոց ուննա գետը անցնելու : Յովսէփ կայս-
րը Թէպէտ խիստ առնրվեցաւ սրտէն՝ բայց
իր բարկութիւն չիցըցընելով աս դիպուա-
ծիս վրայ՝ միտի Թարական Թուղթ գրեց լի-
չէնսդէյն իշխանին , դժբաղդութե տալով
և ոչ իր պակսութե . ցըցընելով որ՝ իրեն

առջիննէրուն պէս չիպատժէ պիտոր ան
 զօրապետները՝ որ ձախորդութեան պատ-
 ճառով չեն կրնար յաղթուի ընել, չէ թէ
 իրենց անհոգութիւնք. բայց լիչենսդէյն լսե-
 լով որ վեննայի մէջ շատ ծաղը կրնէին
 կանարգէին զինքը՝ թէ ինչպէս ծեծին առ-
 ջի բերանը նեմցէին անունը կոտորեց, տրտ-
 մուէն հիվընացաւ, վեննա տանիլ տրվավ
 զինքը, ուր քանի մը շաբթէն ետև մե-
 ռաւ, մէկ սիրտ կոտորել մը ձգեց ամմէնուն
 վրայ :

Ուրի պոռոտանին Ռէ ծեծելվէնին .

1788 :

Մէլի բաղգաւոր գտավ յովսիա իշխա-
 նը Սաքս Բօպուրկեան պուղտանին կող-
 մէրը ուր տաճկընէրը թաթարնէրը նեղ
 կիրճէրու (պողազնէրու) մէջ կեցած ըլլա-
 լով թող չէին իտար թշնամիին պուղտա-
 նին հողը մտնալու . տասվերկու անգամէն
 աւելի գէմ կեցան ծեծկրվելով, բայց ա-
 նիկայ իր զօրքով մտնալով եկաւ միացաւ
 10 հազար մոսկով զօրացը հետ որ տնես-
 թէր կամ թուռլա գետը անցերէին, որոնց
 զօրապետը Սօլդիքօֆ կրավէր : Մտնք եր-
 կու տէրութե զօրքը մէկ տեղ հօթունին
 գացին մօտիկցան որ բալլիքն է ան ամմէն
 երկրին՝ ինչ երկիր որ կայ թուռլա գե-
 տէն ինչվան դունա . բերդէն դուրս քանի
 շէնք որ կային՝ ամսրվան մը մէջ թօփոտե-

լով փլցուցին բերդնալ փնասեցին . մէջը
երկու փաշայ կար՝ տեսնալով որ իրենց մէկ
օգնուածի մը չէր իգար , պատրաստըվե-
րին անձնատուր ըլլալու , բայց 15 օրվան
մէջ նոր օգնուի գալով իրենց , նորէն քա-

ջուածք սկսան դէմ դնել :

Վեմցէն ու մոսկովը հասկընալով որ՝ լե-
հերը օգնուածի կըբերեն հօթունցոց , շաս
հեղ ապսպրեցին որ ետ կենան . տեսնալով
որ մտիկ չէն ընէր , քանի ջաղացք որ ունէին
լեհերը՝ երեցին , որովհետեւ ալիւրը հօթուն-
ցոց կըծախէին . հոն բնակօղնէրը դէմ
դնելով ծեծի մը պէս եղաւ , պրաքլաւ
պեղը որ լեհին բօտօլիա գաւառին մէջն է՝
երվեցաւ . աս բանս առիթ առնելով լեհին
հասարակապետուծիը բալադիննէրը ու
մենծէրը՝ գրգռվեցան նեմցէին ու մոսկո-
վին դէմ :

Ըստ ատենս ուրիշ նեմցէի զօրապետմընալ
Փապրիս օտէրցեան , եկաւ բօղիչան պուղ-
տանին քաղաքը , ասոր դէմ իամայիլ նըս-
տօղ սէրասքէրը՝ խրկեց իսրահիմ նազըրը
30 հազարով որ դուրս հանէ անկէց . Փապ-
րիսին օգնուածի եկաւ մէկ դունդ մը զօ-
րաց ու 500 առնալուտ , ասոնցմով ելաւ
Փապրիս եկօղնէրուն դէմը դնաց օռէսդ
տեղը , ուսկից տաճկընէրը փախան լար-
ճիք տեղը եկան , անկիցալ փախան իրենց
բանէրը թողլով : Ընտատենը Փապրիս եա-
շին վրայ բալեց ապրիլի 20 հոն նստաւ . ի
պրահիմ նազըրը իր մնացած զօրքովը քաղ-
քին ձախ դին նստերէր բարձր բլրի (թէ-

փէի) մը վրայ, որ մէկ ձորով (տէրէով) մը կը բաժնուի նեմցէին կեցած տեղէն, ան ատենը եաշ նստող իփսիլանդի պէյը փախչելով 500 տաճիկ զօրքով դուրս ելավ, քալասին դին գնաց սաքլին գետին վրայէն. բայց նեմցէին զօրապետը հասկընալով, կամ ինչպէս որ ոմանք կըսեն՝ առաջուցմէ գալտուկ խօսք դրած ըլլալով, ձիաւոր զօրք ետեւէն հասցուց որ՝ դէմ կեցող պահապանները սպաննելով՝ մնացածը պէյին հետ մէկ տեղ գերի բռնեցին, նեմցէին բանակը բերին իր ամմէն ծառայներովը՝ ամմէն դանձովը 40 ջորիէն աւելի բեռնաւորած: Ըն ատենը տաճիկը ամբողջ պուղտանը թողուց, դունային դին գնաց. նեմցէն ու մոսկովը եաշին մէջը մըտան, որովհետեւ բերդ մը չունի, դունէն արգելած ըլլալով ուլահ պուղտանին մէջ բերդ շինելու. մտնալէն ետեւ տուրք առին ըստակ և ուրիշ բան, կով, ոչխար, ձի, հոկտեմ. 2, հօթունը առին¹. աս բերդը առնելով պուղտանին առնուիլը ապահովեցին, ետեւին բերդ մը չունենալով ուսկից որ վախնային. 12 հազար նեմցէի զօրք որ սաշարելու համար կեցերէին՝ արձրկվեցան. հօթունը իր բարեբեր գաւառովը՝ 260 գեղէրովը՝ նեմցէն իրեն առաւ պահեց, իսկ մնացած պուղտանը բարեկամաբար մոսկովին տրվավ, խօսք դնելով որ

1 Ոմանք կը զնեն 26 օգոստոսի: Ոմանք ալ սեպտեմբերի մէջ:

ձմեռը նեմցէնէրնալ պուղտանի մէջ մոսկո
վին հետ մէկ տեղ ձմերեն :

Տաճիկը մէկ ուրիշ մը պուղտանու պէյ
դրավ, վերոյիշեալ խարահիմը թաթարխա
նին տղին հետ մէկ տեղ խրկեց որ թշնա
մինէրը պուղտանէն գուրս հանեն. բայց
ուսմանցօք մառեշալը իմանալով երկու
գունդ զօրաց խրկեց իր բանակէն, որոնց
զօրապետ դրավ կլմբդ ու քամինսքօյ, որ
տաճիկը հոն չեկած ֆասարխսին հետ միա
նան, տաճիկընէրը եկան ինչվան բրութ ու
սէրէթ, հոն գեղէրը սփռւլեցան :

Ուլահին դին նեմցէն մարտին առջի օրէ
րը տեղվանք ամբըցուցերէր ալութ գետին
գլուխը, որ 1718 բասարօվից եղած հաշ
տութէր մէջ տաճիկին ու նեմցէին սահմա
նը բաժնօղ եղավ. հիմա ան ջուրը սա
ռած ըլլալով նեմցէնէրը գետին վրայէն
անցան եկան ուղէրքուն երթալու ճամ
փան, հոն քէրվան մը առին տարին՝ որ
չատ ապրանքով ստանալու կերթար : Ան
ատենվան ուլահ պէյին էր մալուօ եանին,
որ ուրիշներուն պէս տիվան թէրճիմա
նիութէ պէյ չէր եղած, այլ հասարակ
մարդ մը ըլլալով պախալ արհեստով բայց
սիրելի դափուդան հասան փաշային՝ անոր
ձեռքով պէյութէ էր հասած. ասիկայ
տաճիկին աւելի հաճոյանալու համար ա
նանկ արաաւոց բանէր կրնէր որ՝ իր ազ
դին խիստ ատելի մարդ մընէր եղած, ինչ
վան պուրուշին մէկ քանի ժամը ճամի ը
նել տրվալ, մանաւանդ երբոր լսեց որ

նեմցէն պրինն ըսված մօռավիային բերդը
 դրերէր փախած իփսիլանդի պէյը՝ իրեն
 մարդիկներով, աւելի տաճկի դին կրբըռ-
 նէր զինքը, զամէննալ կըյորդորէր որ
 գէնք առնեն թշնամիին դէմ երթան :
 Քայց ասանկ բանէր ընելով տաճկինալ
 հաճոյ չեղալ, մէկ ճարմընալ չիկրցաւ ը-
 նել . նեմցէն օրէօր առաջ գալով ինչվան
 օբդաք հասալ, որ 10 ժամ հեռու է պուք-
 ուէշէն . Ֆապրիսը եկալ սինայի հա-
 ռուստ վանքը առաւ բերդանման՝ ուր տեղ
 շատ մարդ իրենց ապրանքը պահերէին .
 թէրցալուրկ տեղը ուսկից որ տաճկընէրը
 պիտոր անցնէին՝ անանկ պահեց որ անկա-
 թելի եղալ անոնց անցնելու : Հօբվարթ
 զնդապետնալ աս ատեններս Փօքշան մտաւ
 կոտրելով դերի ընելով :

Ընդհանրապէս, զի նորէն ապստամբելու պարտապարտ-
 լիանը, մոսկովին հետ ծեծ բանաւը :

1786—1788 :

Երբոր մէկ կարծիք մը մէկ մոլուածի մը
 խիստ հնցած կըլլայ մանաւանդ մենծէ-
 րուն մէջը՝ ան կարծիքը խիստ դժար կըլ-
 լայ վերցընելը . ասանկ եղալ շվէտին մէջի
 եղած տարաձայնութիւր բռնաւորութիւր,
 որ թէպէտ ք . կուսդավոս վերցուց, բայց
 չէին դադրէր դադտուկ աշխատիլ որպէս
 զի կուսդավոսին նոր կառավարութիւնը
 փոխեն, առջի իրենց բռնաւորութիւր ձեռք

ձգեն իրենց շահուն ու փառասիրութեւր
 համար թէև շվետի ազդին շատ փնաս ըւ-
 լար : Արբոր 1786 մեծ ժողով եղաւ աս
 բանս աւելի երևան ելավ, յայտնի եղավ
 որ խօսք դրած էին՝ ինչ որ թագաւորը ա-
 ռաջարկէ՝ իրենք դէմը զուրցեն, աւելի
 ազնուականները անանկ բանսարկու թինէր
 ըրին՝ որ մարդ չէր հաւատար թէ որ ետևի
 եղածները չստուգէին :

Մոսկովին հետ դադտուկ խօսք դրին թէ
 որ իրենց կունակ կենայ նոր կառավարու-
 թիւր փոխելու, կուսդավոսին ըրած սահ-
 մանադրութիւր ջնջելու, իրենց հին անտէր
 ինքնագլխութիւր ձեռք ձգելու, իրենքալ-
 ան ատենը Ֆինլանտիա դաւաւը մոսկովի
 տան, որ մոսկովին խիտ բաղձալի բան էր,
 իրենց խիտ փնասակար : Ինչ խեղճ, ինչ
 վտանգաւոր կըլլայ ան կառավարութիւր,
 ուր որ կառավարը իր պաշտօնեայնէրուն
 դէմ կըլլայ, պաշտօնեայնէրը կառավար-
 չին դէմ : Պարոն ըսբրէնկբօրդէնը մէկը
 եղավ ասոնցմէ, որ թէպէտ երդվընցած
 էր նոր սահմանադրութիւր պահելու, բայց
 հիմա անոր դէմ ելլալով սուտ ձան հա-
 նեց որ Ֆիլէմէնկ պիտոր երթայ անոր ծա-
 ռայութեւր մէջ մտնալու համար, անան-
 կով ելավ բէդուօպուրկ դնայ մոսկովին
 հետ խօրաթելու, անկէց Ֆինլանտիա ան-
 ցաւ դնայ որ ոտք հանէ. շվետին կառա-
 վարները իմացան ուղեցին բունել, անկէց
 նորէն փախաւ մոսկովստան, թչնամինէ-
 րուն հետ մէկ եղավ :

Կուսդավոս շատ վախի մէջ ընկաւ, տեսնալով որ դուրսէն ասանկ մոսկովի պէս մենծ տէրութի մը՝ ներսէն հակառակօղնէրու ժողով մը՝ իր աշխատանքը պիտոր ոչնչացրնէին. բայց արի մարդը ձախորդութե առննալ չիշփոթիր, կըջանայ հընարք գտնալու. կուսդավոս տեսաւ որ մոսկովը տաճկին հետ ծեծի մէջ է, իրեն դաշնակից տէրութիւնէրուն հետ խօրաթեց, որ էր ինկիլիզը ու պրուշը. ասոնքալ ան ատենը թշնամի ըլլալով մոսկովին՝ զինքը յորդորեցին մոսկովին վրայ ելլալու, խոստացան իրեն օգնելու: Աս թշնամանալը շվէտին որ ունեցաւ մոսկովին դէմ՝ տաճկին խիտ հաճոյական բան եղաւ, անոր համար ըստրկով օգնեց շվէտին, շվէտը քառլքոօնայի մէջ և ուրիշ նաւահանգիստներու մէջ նաւէր հանեց. ցամաքի վրայալ 50 հազարի չափ զօրք էվէլցուց իրէք ամսըվան մէջ, պաշարներ (զահրէներ) պատրաստեց անանկ արտորնօք որ չէր կարծրվէր:

Ոմանք անանկ կըպատմեն որ առաջ մոսկովը ծեծի պատրաստութի տեսաւ շվէտին սահմանակից տեղէրը, իսկ ոմանք թէ առաջ շվէտը ասանկ ծեծի պատրաստութի տեսաւ. մոսկովնալ տեսնալով կասկած առաւ որ շվէտը կամ տանիմառքային վրայ պիտոր վազէ իրեն մտերիմ դաշնակցին, և կամ մոսկովին վրայ ֆրանստիային դիացէն, ըստ որում ան դիէն միայն կրնար զարնել մոսկովը. (թէպէտ

մէկալ գիացէնալ չէր հաւատար որ՝ շվէտին ժողովուրդը ասանկ փնասակար բանիս հաւանու թի տայ) : Աս շվէտին պատրաստու թիը տեսնալով կրսէն մոսկովնալ ծեծ կրվէլու պատրաստուի տեսաւ շվէտի դէմ, ինկրիան քառէլիան ամըրցուց . ըսդօրօլմ նստած իր երեսփոխան դեսպանին՝ (որ կըսվէր անդրէաս ոօսօմօվսքի կոմս) ապրս պրեց շիտակ պատասխան պահանջել շվէտի թագաւորէն , ինչ պատճառով ասանկ արտառոց պատրաստու թի մը կըտեսնար ծեծի համար : Շվէտին թագաւորը քիչ մը լուռ կենալէն ետե պատասխանեց : « Աս « մէկ թագաւորի մը պարտրկան չեմ իմ « բանէրս հասկըցընելու , իսկ թէ որ ծեծ « ծի պատրաստու թի տեսնալու համար կը « հարցընէք , ես ան բանը կընեմ , ինչ որ « կըտեսնամ որ մոսկովը Ֆինլանտիայ սահ « մանակից տեղը կընէ » :

Աս խօսքով հասկըցաւ մոսկովը որ իրեն թշնամի եղօղ տէրու թիներէն ինկիլիզէն ու պրուչէն օգնուի դտնալով շվէտը՝ տաճ կին օգնելու համար ծեծ պիտոր բանար իրեն դէմ , անոր համար աւելի ամըցընել արտորցաւ քառէլիան ու Ֆինլանտիան , որովհետե ասոնք ամուր տեղ մը չունէին բայց միայն նիսլօթը՝ որ դիրքով աւելի զօրաւոր էր քան թէ շէնքով , ելլալով մէկ ապառաժ քար մը մէկ կղզիի մը վրայ լճի մէջ . ամուր տեղերէն կրսեպվէիննաւ Ֆոլտէրիսքամը , վիլմանշգրատը , ու վիպուրկը , բայց ասոնքալ կարօտ էին ամըցընե-

լու : Մոսկովը բանը ուշացրնէլու համար
 աստպրեց ուսումովսքի իր դեսպանին՝ ջա-
 նայ խափանել տալու որ շվէտի իշխանները
 աս բանիս մէջ չիմիաբանին իրենց թագա-
 ւորին հետ . ան դեսպանին գրգռելովը շատ
 մարդ որ արդէն մոսկովի դին էին՝ զատվե-
 ցան շվէտի թագաւորին կարծիքէն . աս բա-
 նիս համար աւելի արտորաց կուսդավոս
 շվէտին թագաւորը ծեծը բանալ՝ քանի որ
 յովսէփ կայսրը չէր բացած տաճկին
 դէմ :

Ըն ատենը ուսումովսքին մէկ թուղթ մը
 ներկայացուց շվէտի դիւանին ասանկ գը-
 րելով : „ Մոսկովի թագուհին 26 տարւ-
 „ վան մէջ յայտնի նշաններ ցրցուց շվէ-
 „ տի թագաւորին ու ժողովուրդին՝ սէր բա-
 „ րեկամոնթի պահելու համար երկու տէ-
 „ ըութեանց մէջ Միգ եղած հաշտութիւն
 „ ետե , մասնաւորապէս ան ատեննալ՝ որ
 „ հարկադրեալ էր մէկ նաւատորմիդ (տօ-
 „ նանմա) մը խրկելու արշիբեյլակեան ծո-
 „ վը . ուսկից յայտնի կերեւար որ՝ մոսկո-
 „ վին ամմէն պատրաստուիր մինակ ան ծե-
 „ ծին համար էր որ տաճիկը բացաւ , ա-
 „ նոր համար իր դրացիները չէին կրնար
 „ իրենց վրայ կասկած մը առնել , թէ որ
 „ իրենց սրտին մէջը չունենային մէկ ծա-
 „ ծուկ կամք մը , իբր թէ մոսկովին զբաղ-
 „ ման ատենը իրենք շվէտներնալ բան մը
 „ շահին : Հիմա թէ որ մոսկովի թագու-
 „ հին կասկած մը առնէ շվէտի թագաւո-
 „ րին վրայ , որ մէկ դի ձգելով եղած դաշ-

„ նադրու թիւնէրը ազգականուիր՝ հաւա-
 „ տարմու թիւր՝ թշնամու թիւ ընել կրպատ-
 „ րաստը վի, հարկ կըլլայ թագուհիինալ
 „ կանխել արտորալ խափանելու, չէ թէ
 „ գրգռելու. անոր համար ամմէն դիւ-
 „ ցէն իրեն իմաց գալով որ շիտի զօրք
 „ կուգան, առիթնէր կուտան ծեծկը վե-
 „ լու, թագուհինալ ինչ որ խոհեմու թիւր
 „ կըցըցընէ քիչ մը ամըրցուց սահմանա-
 „ գլուխ տեղ վանքը, բայց նաւէրը որ ճեր-
 „ մակ ծովը պիտոր երթային՝ և ոչ մէկ
 „ հատ մը է վելցուց : Ալ որովհետև մոս-
 „ կովի թագուհին ստոյգ լսեց որ () քսէն-
 „ դիէրն կոմար նեմցէի վեզիրին ըսերէր
 „ թէ աս շիտին սպտորաստու թիւր մոսկո-
 „ վին գէմ էր, անանկ միտքը դնելով որ՝
 „ մոսկովը շիտին վրայ պիտոր վազէ. ա-
 „ սանկ ձայնէրը սուտ ըլլալուն համար
 „ յայտնի կը ծանուցանէ շիտի թագաւորին
 „ և ամմէնուն որոնք որ շիտի կառավարու-
 „ թէ մէջը կը խառնը վին՝ թէ չի հաւատան
 „ ամենւին, կը խոստանայ որ անայլայլե-
 „ լի պիտոր պահէ իր բարեկամու թիւր դաշ-
 „ նադրու թեցը կէօրէ : Ասանկ յայտնի
 „ խօսք տալէն ետև՝ թէ որ շիտին թա-
 „ գաւորը առջինը ըլլայ աս բարեկամու-
 „ թիւր ավրելու, ան ատենը թագուհին գի-
 „ տէ ինչ ճամփայ պիտոր բռնէ չէ թէ իր
 „ դրացինէրը խռովելու համար, հապա ի-
 „ ընէ ժողովուրդը պաշտպանելու հա-
 մար :

Ասիկայ անանկ խօսք վաճք մընէր որ՝ իբր

Թէ հին կառավարութիւնը դեռ ոտքի վրայ
կեցած ըլլար, ինչպէս որ շվետին ապրս-
տամբնէրը կուզէին, որովհետեւ աս դեռ
սկսած զինքը յայտնի ապստամբնէրուն դին
կըցըցընէր, զանոնք կըդրդէր: Առաջափոս
հասկընալով աս կծու խօսքէրուն վախճա-
նը՝ որ կընայէին զինքը ցըցընել իբր անի-
րաւուի ընօղ ժողովուրդին առջին, խիստ
խոցվեցաւ սիրտը, յայտնի հրատարակեց
Թէ ռօսօմօվսքին խռովիչ է ժողովրդեան,
հրամանեց որ ծովով ճամփայ ելլայ իր տեղը
երթայ:

Շվետին ինչպէս հիմա պատրաստած մեծ
նաւատորմիդը (տօնանման) 20 նաւի չափ
եղան երկու խափախլը, պղտիկ նաւատոր-
միդը 30 չէքտիրիէն աւելի եղան, Թոյ տուր
ուրիշ շատ տափակ նաւէր ծանծաղ (սրղ)
տեղէրուն համար, ցամաքի Թոշակաւոր
(էօլէֆէլի) զօրքը 45 հազարը կանցնէր,
Թոյ տուր գեղացիները՝ որ տղակուց սոր-
ված են զինուորութե արուեստը: Արաւ է
որ շվետին մէջ օրվան խարճը ուրիշ տեղե-
րէն քիչ ըլլալով՝ զինուորները քիչ խարճով
կըպահուին հոն քան Թէ ուրիշ տեղվանք,
որովհետեւ ձիաւոր զօրքը ազնուականները
կըպահեն, իսկ ոտանաւոր (եաեան) զօրքը
ամմէն մէկ գաւառներուն քաղքընէրը կը-
պահեն, տէրուիը միայն հագուստը Թուրն
ու Թիւֆէնկը կուտայ: Ծովային զինուո-
րութիւնը ամմէնալ տէրուիը կըհոգայ, բայց
նաւէրուն տախտակը (քէրէստէն) որ աօ-
ֆրին լեռներուն վրայէն կըկտրեն՝ խարճ

մը չունի բայց միայն ջրով բերել . ասկից է որ շվէտին տէրու թիւը շատ ծեծէր ըրած է առանց մէկէ մը օգնութի առնելու : Աս նաւատորմդին մէկ մասը քառւորսունայէն ելած , աս առնէնէրս պալդիկ ծովին մէջը կըստըտէր , որուն իրեք մոսկովի նաւ պատահեցան , որ քունշդատէն քօբէնհայկ կերթային տակօ կղզիին դիմացնէրը . երկու նաւ հարիւրական թօփով , մէկ նաւը 66 թօփով : Սուտէրմանիայի դուքսը որ կուսդավոսին առջի եղբայրն էր՝ ու շվէտի նաւերուն հրամմօղ՝ կարգով կեցընելով իր նաւերը՝ որ 17 մեծ նաւ էին , վեցալ Ֆրանխաթա , սանտալը խրկեց մոսկովի նաւերուն պահանջելով որ բարւէ : Ասիկայ նոր բան մը երեցավ , ինչու որ դաշնագրութի ըրած ունէին , երբոր երկու տէրութի նաւերը իրարու պատահին՝ առանց բարւէլուանցնին երթան . մոսկովի նաւերուն բազունան տէստէն անուն՝ չուղելով հակառակութեան առիթ մը տալ , աս նաւերուն մէջը իմ թագուհիս իշխանաւոր ազգակիցը գտնըվելուն համար միայն կըբարւէմըսելով , 13 թօփով բարւէց , շվէտը 8 թօփ միայն նետելով բարւը առավ , ըսելով՝ կընդունիմ աս բարւս չէ թէ իմ անձինս համար , այլ շվէտի դրօշակին (պայրախին) համար : Ասանկ պղտիկ բանէր որ առանձին մարդու մը ծիծաղական բան կերեւան , թէ ինչ մեծ կըսեպվին թագաւորական գործողութեանց մէջ՝ յայտնի է կարգացօղնէրուն : Ասոնք թէ որ խորունկ ծովուն մէջը

իրարու հանդիպած ըլլային, պատերազմով
 պիտոր լիննար բանը, մոսկովին քիչօր նա
 ւէրնալ գերի ընկած պիտոր ըլլային շվե-
 տին, ինչու որ անանկ ապսպրած էր կուս-
 դավոս թագաւորը իր եղբօրը՝ մէկ թղթի
 մը մէջ որ կնքըված էր. հրամայելով իրեն
 որ՝ երբոր խորունկ ծովը ելլայ՝ ան ատենը
 միայն բանայ, մէջի գրածը ընէ :

Եսոնց մէջը յայտնի թնամուծիւր չըսկը-
 սած՝ կուսդավոս ըսդօքօլմէն ելավ իրեն
 հետ առնելով օսդուօկօցիայի գուքսը՝ որ
 իր մէկալ եղբարն էր, և ամմէն իր զօրքը՝
 որ մոսկովի Ֆինլանտիան պիտոր ելլային .
 1788 յունիսի 28, նաւերով եկավ ըսվէա
 պօրկ, իրեք առաջարկուծի ըրավ մոսկո-
 վին՝ որ վարը իրեն յայտարար թուղթին
 մէջը կրգտնաս. Ֆինլանտիայի մէջ կարգա-
 ւորել սկսաւ իր ցամաքի և ծովու զօրքը՝
 մէկէն մոսկովները կօխելու համար . քանի
 որ մոսկովները բաւական զօրք չունէին հոն
 պաշտպանելու համար . քիչ մը զօրք ու-
 նէին՝ անոնքալ ցրուած էին, քիմէնէ գե-
 տին՝ սավօլաքսիա լճին քովընտիքը շար-
 ված : Արբոր հոն եղած շվետին զօրքը ի-
 րենց թագաւորը քովէրնին տեսան, շատ
 սիրտ առնելով՝ շուտ մը գացին նիժլօթ
 բերդը պաշարեցին, որ մոսկովին մեծ դուք-
 օրը ⁽¹⁾ անոր օգնուծի չիհասած առնեն . ա-
 սանկով գեղը առին՝ բայց կարելի չեղավ

(1) Ասիկայ է Պօղոս Բ. կատարինէին առջի զաւա-
 կը, որ ետքը մոսկովի թագաւոր նստաւ :

պատնէշը (մէթէրիզը) ճղքէլ, ու կանոնով զարնէլ բերդը, այլ միայն պաշարէլ. մէջի եղած մոսկով կառավարը սպառնալով որ կամ շուտ մը քաշվին երթան, կամ թէ չէ՝ շատ ջարդ պիտոր տար անոնց, անոր վրայ քաշվեցան Ֆուտերիքսհամ գացին, որ մէկ նաւահանգիստ մընէր յարմար ճէպխանէ ու պաշար (զահրէ) ժողվելու. իրեն արուարձանին (վարըշին) մէջ լեցուն էին համբարնէրը, վարպետութիւն մը ասոր վրայ վազեցին, բայց հոն էր վերոյիշեալ մեծ դուքսը պողոս՝ վարպետ զօրապետով մը՝ որ կոտորելով ետ դարձուց անոնք, 40 հազար զօրքով ետեւէն հալածելով. անոր համար շվէտնէրը իրենց երկիրը քաշվեցան: Միայն թէ բէգրօսուրկին մէջ անանկ վախ մը մտաւ շվէտնէն՝ որ ցարսքօզէլ տեղը 160 ձի պատրաստեցին կատարինէ թագուհին մօքրվիա փախցընելու իր գանձովը:

Շվէտին ու հոսէովէն յայտարար Ռուդէերը:

1788:

Եւրոպացիք կը զարմանային ինչպէս կը լայ որ շվէտին թագաւորութիւնը 3 միլիոն մարդ ունենալով, 3 կամ 4 միլիոն ռիալի եկամուտ ունենալով, ասանկ կը համարձակի ծովով ցամաքով զօրաւոր թշնամիի մը դէմ ելլալու. այսչափ անձոռնի խարճը յայտնի կը ցըցընէին որ՝ դրսէն ուրիշ տէր

ութիւն մը ասոր գանձ (խաղնա) կուտար, ինչպէս որ իրաւ եղաւ տաճկին տէրութիւնը . որ 1787 նոյեմբ. 4, առջի դաշնագրութիւնին շվէտին հետ նորոգեց, աս բանս ետքը 1788 գեկտ . երեւան ելաւ . 8 հազար քէսէ ան ատենը տրվաւ շվէտին, 4 հազար քէսէալ խօսք տրվաւ տարվէտարի վճարելու իրեն : Աս խօսակցութիւնէրս և ըստակ վճարելը եղաւ մեր հայու ազգէն պարօնի մը ձեռքով շվէտին երկիրը անցընելով ամադրտա մի ու համալուրկի վրայէն . շվէտնալ խօսք տրվաւ տաճկին որ մոսկովին նաւերուն թող չիտայ սլաղիկ ծովէն դուրս ելլալու ձերմակ ծովը դալու :

Աս ատեններս եւրոպայի մէջ կը պտըտէր շվէտին հանած յայտարար թուղթը՝ զինքը արդարացընելու համար, իր վրայէն քերելով ծեծկըվելու պատճառը, մոսկովին վրայ ձգելով : « Շվէտին թագաւորը » իր 17 տարվան թագաւորութե ատենը « ամմէն կերպով հոգ ցըցուց խաղաղութի » պահելու համար իր դրացիներուն հետ « ասանկալ մոսկովին հետ, ինչպէս որ սա » հերէր իր հայրը . և թէպէտ մոսկովը ձեռքի տակէն միշտ սրդողցընելու բանէր կընէր առջի ատեններուն պէս՝ բայց շվէտին թագաւորը ամմէն ընդդիմութիւնը մէկ դի ձգեց հասարակաց խաղաղութիւնը պահելու համար, միտքը դնելով որ՝ մոսկովին թագուհին սուտ խօսքերուն չիհաւատալով օր մը դադրէր հակառակութի » ցանելէն միաբանեալ ազգի մը մէջ՝ որ

„ միացան իրենց Թագաւորին քաջասրտու-
 „ Թէր : Ան առեւնը երբոր մոսկովը պատե-
 „ ըազմէն յոքնած ըլլալով՝ սոյնալ (խըթ-
 „ ըխնալ) Ժանտախտնալ՝ մէկ մեծ ապըս-
 „ տամբուԹիւն մընալ անհնարին նեղելով
 „ զինքը , (որովհետեւ ինչպիսի մօքովիային
 „ մօտիկցած էր բուկայջէֆ ապստամբը ,)
 „ սահմանակից տեղերէն ժողովել կընայէր
 „ իր ամմէն զօրքը ան ապստամբին դէմ՝
 „ խրկելու համար , Թէ որ ան առեւնը շվէ-
 „ տը ուզէր նեղը ձգել , մոսկովին վիզը կու-
 „ խել , շատ չարիք կընար հասցընել ինչպիսի
 „ Թագուհիին անձին , բայց շվէտին Թա-
 „ գաւորը ոչ երբէք մոռնալով իր մեծասրը-
 „ տուԹիր բան մը չըրալ , ջանաց վերցը-
 „ նել ամմէն աղգային առելուԹէ սերմոնը
 „ քը , յուսալով որ մոսկովի Թագուհինալ
 „ ասանկ ընէ : Այց ասոր դէմ ըսգօքօլմ՝
 „ նստած մոսկովին դեսպանը՝ ոսօմօվսքի
 „ անունով՝ կերպ կերպ ծածուկ ոլորակնէր
 „ բանեցընելով՝ կըջանար մարած տարա-
 „ ձայնուԹիր նորէն բուրնկցընել . դեսպա-
 „ նուԹե՛ պաշտօն ընելուն տեղը՝ կընայէր
 „ որ ուրիշնէրուն հանգստուԹիր տակնու-
 „ վըայ ընէ : Անք չէնք ուզէր եւրոպային
 „ առջին հանել մոսկովին ամմէն ըրած նեն-
 „ գագործուԹինէրը՝ որ ըրալ շվէտի Ժո-
 „ ղովրդեան մէկ մասին , բայց ան ճշմար-
 „ տուԹիր դուրս հանենք , ան որոգայԹնէ-
 „ ըր չար միաբանուԹինէրը պատմենք , որ
 „ մոսկովին տերուԹիր իբր խորին խաղա-
 „ ղուԹիւն ցըցընելով կըբանեցընէ շվէտի

,, Թագաւորին դէմ հանելու . ասով օգուտ
 ,, կրլայ շվէտի ազգին , կարդարանայ մեր
 ,, գանկատը . ասով ամէննալ իմանան փա-
 ,, ռասիրուիը ու անհնարին մենծնալու ծա-
 ,, րաւը՝ որ միշտ ունի մոսկովը , հասկընան
 ,, անոր նենգագործութիւնէրը՝ որ 16 տարի
 ,, առաջ աս կերպով խեղճ լեհաստանը
 ,, բաժնել տրվաւ , իւրրում գերի ընել տը-
 ,, վաւ , հիմաալ ան բանը կըսպառնայ քուռ-
 ,, լանտիայի վրայ ընելու :

,, Շատ մարդու յայտնի է որ Ղաօ եղած
 ,, հաշտութիւն ետև՝ մոսկովը միտքը դրերէր
 ,, Ֆինլանտիան շվէտէն բաժնելու , պատ-
 ,, ըուակ (մահանայ) բերելով թէ անկախ
 ,, ընէ ան դաւառը , բայց իրօք կուզէր յա-
 ,, լելուած մը ընել իր երկրին , ինչպէս որ
 ,, ըրաւ կրնանք ըսել լեհը ու քուռլան-
 ,, տիան . մոսկովին աս մտածմունքը իս-
 ,, փանվեցաւ ան ատենը աւելի Ֆինլանտա
 ,, ցոց սիրոյն պատճառաւ որ շվէտին վրայ
 ,, ունէին , որոնք կըյիշէին մոսկովին ըրած
 ,, քանդմունքները ավրեւնէրը՝ որ ըրերէր
 ,, ժ՞ք . կարողութիւն ծեծին ատենը , և 1741ին .
 ,, բայց դիւաւոր հազարապետներէն մէկը
 ,, որ շատ տարի Ֆինլանտիայի կառավա-
 ,, ըութե մէջ եղերէր , առանց պատճառի
 ,, մը ձգելով իր հայրենիքը՝ անցաւ օտար
 ,, տէրութե մէջ : Ղս բանս մոսկովին յար-
 ,, մար ատեն մը եղաւ ասպտամբութե որո
 ,, մը ցաննելու . 1786 տարիին վերջէրը մէկ
 ,, մոսկով հազարապետ մը ելաւ , ճամփոր-
 ,, դութե անունով քալեց ամէն Ֆինլան-

,, տիան, որուն միտքը դիտել հասկընալ էր
 ,, սէր տեղը ամուր էր, սէր տեղը տկար,
 ,, վազելու զարնելու համար. աս բաներս
 ,, երկրըցոց հարցընելով մէկիկ մէկիկ հաս
 ,, կըցաւ, անով երեւան հանել տրվալ մոս
 ,, կովին տերութի միտքը. թէ որ քիչ մը
 ,, ատեն դադրեցաւ թագուհին խըրըմ
 ,, երթալու պատճառովը, խըրըմէն դար
 ,, ձածին պէս՝ ալ աւելի ետեւէ ընկալ մոս
 ,, կովին տերութիը իր դեսպանին ձեռք
 ,, վը անդադար խուովութի հանել ըսդ
 ,, քօլմին մէջ : Տաճկին պատերազմնալ որ
 ,, բացվեցաւ՝ աւելի առիթ մը տրվալ տա
 ,, ըաճայնութի սերմանելու. մենք տաճկին
 ,, հետ խիստ սիրով կապված ըլլալով 1739էն
 ,, վեր, աս երկու տերութեց հին դաշնագ
 ,, ըութիը կապը կասկած ձգել տրվալ մոս
 ,, կովին սիրտը, աս իրեն կասկածը փարա
 ,, տելու համար իրեք անգամ առաջարկե
 ,, ցինք մէջէրնին մտնալ տաճկին ու մոսկո
 ,, վին բանը շտկելու համար. ամմէն տե
 ,, ըութի կըճանչնայ թէ ինչպէս զօրաւոր է
 ,, շվետին միջնորդութիը ան ընտանութեը
 ,, համար՝ որ տաճկին հետ ունի ժք. կարո
 ,, լոս թագաւորին ատենէն ետեւ. բայց մեր
 ,, միջնորդութի ուղեւու ատենը՝ ռօսօմօվսքի
 ,, մոսկովի դեսպանը մէկ թուղթ մը ներ
 ,, կայացուց մեր շվետի տերութեը իբր բա
 ,, ըեկամական, բայց լեցուն փաստակար խօս
 ,, քերով թագաւորը ժողովուրդէն զատե
 ,, լու մտքով, որով մոսկովին ծածուկ միտ
 ,, քը երեւան հանեց : Մս բանս հասկըցու

,, ցինք մեր դաշնակցեալ Թագաւորաց , ան
 ,, դեսպաննալ հեռըցուցինք , զօրքով Ֆին-
 ,, լանտիա գացինք , յուսալով որ մոսկովը
 ,, պատժէ ան չարեացապարտ դեսպանը ,
 ,, Թագուհինալ ընդունի մեր միջնորդ ըլլա-
 ,, լը ծեծը չըսկըսած , հատուցում ընէ ան
 ,, խարճին տեղը որ հարկ եղալ ընել զօրք
 ,, պահելու համար . բայց խաղաղութիւնը
 ,, նայելու տեղը՝ մոսկովին ասպատակ (չար-
 ,, խա) զօրքը զարկին մեր շվէտին զօրքը՝ որ
 ,, առաջ գացերէին սալօլաղիա : Տեսնա-
 ,, լով մեր զօրաց հրամանատարը անանկ հե-
 ,, ուռ տեղ՝ որ Թնամուծիւր սկսաւ , կար-
 ,, ծելով Թէ պատերազմը բացվերէ , գացեր
 ,, նիսլօթ բերդը պաշարերէ ինչպէս որ ի-
 ,, ըն պատուիրերէինք անանկ ընելու՝ եր-
 ,, բոր գործքով տեսնայ մոսկովին Թնամու-
 ,, Թիւն ցըցընելը . որովհետև մոսկովի Ֆին-
 ,, լանտիայէն տեղ չառնըված՝ չիպահիր
 ,, հոն եղած մեր երկիրնէրը մոսկովին բար-
 ,, բարոսնէրուն ձեռքէն : Աս դիպուածս
 ,, մեր նաւերը լսելով արտորցան , քիչ մը
 ,, ետքը սուտերմանիային դուքսը մէկ պա-
 ,, տերազմը վաստրկելով Թնամուոյն դէմ,
 ,, որուն զօրութիւր իրենմէ վեր էր՝ անյիշա-
 ,, չար ըլլալով՝ օխտը մոսկովին նաւերը որ
 ,, մեր շվէտի նաւերուն մէջ պաշարված
 ,, մնացերէին՝ Թողուց չառաւ : Հիմա աս-
 ,, չափ անհաճոյ բանէր ըլլալով՝ չիզիտնա-
 ,, լովալ որ ինչ եղալ բէգրօպուրկ նոտած
 ,, մեր դեսպանին վրայ , ու երկու հաղարաւ
 ,, պետնէրուն վրայ որ հոն խրկերէինք ,

„ միշտ ան մտքին վրայ ենք որ խաղաղու-
 „ թիւն ընենք թէ որ մոսկովի թագուհին
 „ մեզ ապահովցրնէ, որպէս զի տաճկին հա-
 „ մարալ հոգանք. հերիք է որ հետևեալ
 „ արդար թէու թինէրը պահէ, որոնք թէ
 „ որ չիւմնցրնէ՝ ծեծը պիտոր չիդադրի :

„ Սէյմը որ՝ մոսկովին երեսփոխան դես-
 „ պանը ռօսօմօվսքի կոմսը յայտնի պատ-
 „ ժրվի, որ իրեն դեսպանու թէ ատենը շատ
 „ նենգութիւնէր բանեցուց զատելու համար
 „ շվէտին ազգը իր թագաւորէն :

„ Արկրորդ՝ մոսկովի թագուհին խարձը
 „ վճարելու համար՝ թող շվէտին տայ իր
 „ Ֆինլանտիային ամբողջ կտորը, ամբողջ
 „ քառելիան ու քէսքօլմը, անանկ ինչպէս
 „ որ մոսկովին տրվեցան զօրութիւնս իւր
 „ ու ապօ եղած դաշնադրութեւ. սուսթէր-
 „ պէք գետը սահման ըլլայ ասկից ետքը եր-
 „ կու տերութեց մէջ :

„ Արրորդ՝ մոսկովի թագուհին թող ընդ-
 „ ունի շվէտի թագաւորին միջնորդ ըլլալը
 „ տաճկին հետ խաղաղութիւն ընելու համար,
 „ կատարեալ իշխանութի տայ անոր՝ իւրը-
 „ մը տաճկին դարձրնելու, սահմանները
 „ կանոնաւորելու 1774ին եղած դաշնագ-
 „ րութեւ կեօրէ. թէ որ տաճկին դուռը
 „ ասջափսալ հերիք չիսեպէ, շվէտին թա-
 „ գաւորը իշխանութի ունենայ ան կացութիւ
 „ բերելու բանէրը՝ ինչպէս որ էին 1768 :
 „ Նորրորդ՝ ապահովութե համար մոսկովի
 „ թագուհին իր ամմէն նաւերէն զէնքը
 „ ճէպխանէն սարսպէ, պալդիկ ծովին մէ-

„ Ջի եղած ամմէն նաւէրը ներս քաշէ, Ֆին-
 „ լանտիա ու տաճկին դէմ խրկրված զօր-
 „ քերը ետ կանչէ . ասոր դէմ շվէտը ա-
 „ պահովութէ համար իր ցամաքի զօրքը
 „ նաւ նաւէրը ոտքի վրայ պահէ : Վրվէ-
 „ ցաւ 1788 . յուլիսի 25 :

Ըստ էտէն մոսկովնալ իր յայտարար թուղ-
 թը հաներէր աս խօսքերու վրայօք :

„ Նիւշդատ ու ապօ եղած դաշնագրու թի-
 „ ները ոչ երբէք մենէ կոտորված են , այլ
 „ զօրու թիւ ապօ եղած դաշնագրու թեր մեր
 „ քեռին ատօլֆոս Ֆետերիքոս հօլսդէյն
 „ էվգին դուքսը նստաւ շվէտին թախտը ,
 „ անով եղավ որ իր որդին ու մեր քեռոր-
 „ դին Դ . կուսդավոս հիմակվան շվէտին
 „ թագաւորնալ յաջորդ եղավ զօրու թիւ
 „ մեր մոսկովին զօրացը . աս արենակցուէ
 „ կապը ու երախտագիտու թիւ միշտ շատ-
 „ ցուցին շվէտին բարեկամու թիւ դէպ 'ի
 „ մեզ . հիմա ասանկ բարեկամու թիւ մէջ ու
 „ չիզարմանայ տեսնալով որ շվէտին թագա-
 „ ւորը դաւաճանու թիւ բռնակալու թիւ կը-
 „ կոտրէ իր հաւատարմու թիւնը , ու մեզի
 „ դէմ կելլայ նենդու թիւ : Արբոր աս թա-
 „ գաւորս բռնաւորու թիւ մը փոխեց ան տե-
 „ սակ կառավարու թիւ՝ որուն համար ինք-
 „ նալ իր ծնօղքնալ երդվընցած էր պահե-
 „ լու , մենք դէմ չիզրինք ասոր փառասի-
 „ րու թիւը , ինչպէս որ իրաւունք ունէինք
 „ դէմ ըլլալով նիւշդատ եղած դաշնագ-
 „ րու թիւը՝ որ 1743 ապօ հաստատվեցաւ .
 „ կարծեցինք որ աս փոփոխու թիւս փնաս մը

„ չիտայ պիտոր ո՛չ շվէտին և ո՛չ դրացինէ-
 „ րուն հանգստութե՛ր : Վիչ մը ետև տե-
 „ սանք որ աս թագաւորս երբեմն մեզի հետ՝
 „ երբեմն տանիմառքային հետ՝ երբեմն սլը-
 „ րուշին հետ գաղտուկ դաշնագրութի ը-
 „ նելու կըպտըտէր աս մտքով որ՝ իրենց
 „ մէջի եղած կապը քակէ . մենք պատաս-
 „ խան կուտայինք որ՝ պատրաստ ենք ա-
 „ նանկ դաշնագրութի ընել՝ որ հիւսիսային
 „ տէրութեց մէկ փնաս մը չիբերէ : Ես բա-
 „ նըս հերիք չիսեպելով իրեն՝ տաճկին հետ
 „ բացված պատերազմը իրեն առիթ ա-
 „ ռավ չար միտքը առաջ տանելու . երբոր
 „ մենք նաւէր սլատրաստեցինք ճերմակ ծռ-
 „ վը խըրկելու տաճկին դէմ, հասկըցու-
 „ ցինք մեր միտքը շվէտին և ուրիշ ամմէն
 „ եւրոպայի տէրութեանցը, բայց շվէտին
 „ թագաւորը մէկ պատրուակ (մահանայ)
 „ մը գանալուն համար մեզի դէմ ելլալ
 „ մտածելով, գաղտուկ ձանկը հանել տը-
 „ վավ առաջ դուրսի երկիրնէրը՝ ետքը իր
 „ երկրին մէջը՝ թէ մոսկովը շվէտին վրայ
 „ պիտոր վազէ . ինչպէս կրնար ըլլալ աս
 „ բանս որ՝ մենք միշտ շվէտին օգներենք սո-
 „ վի (խըթլըխի) ատեն պաշար խրկելով
 „ իրեն սահմանակից տեղվանքը . իրեն ա-
 „ ռուտուրի շահը նայելով, տուրքէրը վեր-
 „ ցընելով . թնամութե կասկած մը չունե-
 „ նալուն հերիք նշան աս պիտոր ըլլար որ՝
 „ շվէտին դին եղած մեր սահմանակից տեղ-
 „ վանքը ամենևին չէինք ամըրցուցած ինչ-
 „ պէս որ կըլլայ ծեծի ատեն . ինքը շվէտը

,, եղաւ որ Թնամուծիւն ցըցուց պաղգիկ
 ,, ծովը խրկելով իր նաւատորմիդը՝ տաճկին
 ,, տէր կենալով : Արբոր յունիսին առջի օ-
 ,, բէրը մեր իրեք նաւը ճերմակ ծովը եր-
 ,, թալու համար ճամփայ ելլալով տակօ
 ,, կղզիին մօտիկցան , մէկ շվէտի Ֆուխաթա
 ,, մը մեր տէսսէն անուն բաղաօնայէն պա-
 ,, հանջեց որ բարևէ Թագաւորին եղբարը
 ,, հօն գանըվելուն համար . մեր բաղաօնան
 ,, յիշեցընելով ժէ . Թէուծիւն ապօ եղած
 ,, դաշնագրուծէր մէջ՝ որ զանց ընել կա-
 ,, պրսպրէ բարևելը , աս պատիւը շվէտի
 ,, դրօշակին չեմ իտար ըսելով՝ հապա Թա-
 ,, գաւորին եղբօրը որ մեր Թագուհին աղ-
 ,, գականն է , յՅ Թօփով բարևերէ , հազա-
 ,, րապետ մը իրեն խրկելով որ միտքը հաս-
 ,, կըցընէ . Թագաւորին աղբարը պատաս-
 ,, խան տըվերէ , էս աղէկ գիտեմ մոտկովին
 ,, ու շվէտին մէջի եղած դաշնագրուծիւն ,
 ,, բայց ասիկայ հիմա մէկ զօրուծի մը չու-
 ,, նի . էս ասպարված եմ աղբօրմէս ամմէն
 ,, հեղուն աս պատիւս պահանջել շվէտի
 ,, դրօշակին համար : Մենք մէկ գանկատ
 ,, մը չըրինք դաշնագրուծիւնները ասանկ
 ,, յայտնի կոտարելուն վրայ՝ երբոր հրամեց
 ,, մեր ոսոսմովսը ի գեսպանին շուտմը դուրս
 ,, ելլալ շվէտի երկրէն , ինչու որ մեր բա-
 ,, րեկամուծիւն պահելու կամքը զօրաւոր
 ,, խօսքերով յայտնեց շվէտի Թագաւորին ,
 ,, սեպելով որ՝ անոր խօսքերը կընային Թա-
 ,, գաւորը ժողովուրդէն զատելու . Թէպէտ
 ,, մէկ Թագաւոր մը չիկրնար իրեն մնաս

,, սեպել երբոր իրենալ իր հպատակնէրունս
 ,, ալ միակերպ բարեկամութի կըրցըրնենս,
 ,, Արբոր մենք կսպասէինք որ շվէտին թա-
 ,, գաւորը իր կարծիքը շտկէ, լսենք որ շը-
 ,, վէտնէրը յանկարծ վազերեն մեր Ֆին-
 ,, լանտիային հողը, մաքսատունը (կէօմրիւ-
 ,, քը) առերեն, երկու զինուոր մէկ հազա-
 ,, րապետ սպաննելով, որոնք կասկած մը
 ,, չունենալով՝ նաւակով ճամփայ կընէին.
 ,, նիսլօթ գեղը մտերեն, իրեն բերդը զար-
 ,, նել սկսերեն : Ասանկով պատերազմին
 ,, պատճառը չիհասկըցած՝ պատերազմին
 ,, գործքը տեսանք չիլաված կերպով մը որ
 ,, յատուկ է բարբարոս ազգի՝ և ոչ քաղա-
 ,, քավար եւրոպայի ազգի՝ որ զէնք չեն
 ,, առնէր առանց պատճառը հասկըրցնել-
 ,, լու. անոր համար հրամեցինք մեր զօրա-
 ,, ցը՝ որոնց զլուխն է մուսսին բուջին կոմ-
 ,, սը՝ շվէտին դէմ ելլալ, հրամեցինք մերնա-
 ,, լատորմըինալ՝ որուն խափուտանա պէյը
 ,, Առէյկն է, շվէտին դէմ ծեծկըվիլ. աս
 ,, հրամանս կըհանենք չուզելով, ամմէն տէ-
 ,, րութեց պատճառը հասկըրցընելով, երկ-
 ,, նի և երկրի առջին վկայելով՝ որ շվէտի
 ,, թագաւորը միայն պատասխան ունի տալ
 ,, ամմէն չարեաց, որուն ճամփայ բացաւ
 ,, իրեն անհնարին ամբարհաւաճութիւնը:
 ,, Վո՛ւք իմ ամմէն ժողովուրդս՝ մեր աղօ-
 ,, թից հետ ձերնալ միացուցէք, որ անձ ի-
 ,, րեն օրհնութիւնը պաշտպանէ մեր զէնքը
 ,, աս նոր անիրաւ թշնամւոյն դէմ. և ձեր
 ,, քաջութիւր հաւասարըրնէ ձեր նախնեաց

„ քաջութիւնը որ յազմանակեցին շվետին
 „ դէմ : Վրովեցաւ Յարսքօզէլ 1788 . յու-
 „ վիսի 22 . և մեր թագաւորութիւնը՝ 26 :

Շվետի դէմ արաջայնութիւն, ծեծելէնը :

1788 :

Թեպէտ շվետ ազգը շատ աղէկ պատե-
 ռազմօղ է թէ իրեն կտրըճութիւնը համար՝
 և թէ պատերազմի արուեստը աղէկ գիտ-
 նալուն համար, բայց իրեն մէջի եղած տա-
 ռաճայնութիւնը ամմէն բանը կապրէ : Շվե-
 տին օրէնքը ասանկ էր որ՝ թագաւորը ին-
 քիրովէ չէր կրնար ծեծ բանալ մէկ դրացիի
 տէրութե մը դէմ առանց միաբան հաւա-
 նութե չորս կարգ իշխաններու՝ որոնք երդ-
 վընցած էին անխախտ պահել իրենց սահ-
 մանադրութիւնը՝ որ ինքը կուսդավոս թա-
 գաւորը շինէր առաջարկերէր 1772 . և ո-
 բովճետե հազարապետներէն շատը ան իշ-
 խաններուն մէջէն էին, մէկ տեղ առանձին
 կըժողվէին խորհուրդ կրնէին որ թագաւո-
 րին մտքին չիճետեին, որովճետե շվետին
 գլխաւոր օրինացը դէմ բան էր իր ըրածը .
 երբոր շվետին թագաւորը տաքցած էր ամ-
 մէն ուժովը մոսկովին վրայ վազել, ասոնք
 մէկ միաբանութի մը ըրին մէջերնին :

Բնանկով մոսկովը բուն շվետին մէջը աւե-
 լի աղէկ զօրք ունէր քան թէ իրենին մէջը .
 վասն զի աս հազարապետները մոսկովին ճետ
 խօսքերնին մէկ էին ըրած, չէին ուզէր թա-

գաւորին հնազանդիլ, և ոչ սահմանադրու-
թիւր սլահել, իրենց միտքը գոցելու համար
սահմանադրութիւնը սլաշտպանել կըցըցը-
նէին . սլինտ ետքը յայտնի բացին իրենց
անհնազանդութիւր . արգելեցին նաւերուն
թօփ և ուրիշ սլետք ըլլալու բաներ տանիլ
Ֆուխտերիքսհամը սլաշարելու համար , աս
գլխաւորնէրը միաբանելով՝ ուրիշնէրալ ի-
րենց գին քաշեցին : Աուսդավուս ան հազա-
րապետնէրուն գունդը ժողվեց , անոնց աւ-
ջին իրենք սլաշտօնէ ձգեց , բանակէն դուրս
վունտեց . ասոնք ըսդօքօլմ երթալով ուղե-
ցին հոն ապստամբութի հանել , բայց ընդ-
ունելի չեղան . բանակին մէջը այնչափ բը-
ռնկեցաւ ապստամբութիւր , այնչափ հա-
կաճաւութի եղավ մէջերնին՝ որ կուսդա-
վուսին հարկ եղավ բանակը թուլուլ , ըսդօ-
քօլմ երթալ արտորնօք ճար մը ընելու՝ ինչ
որ կըցըցընէր իրեն խելքը ու անշփօթ քա-
ջասրտութիւնը :

Արբոր կուսդավուս հեռըցաւ բանակէն՝ չա-
րամիտ հազարապետնէրը մէկ տեղ ժողվը-
վելով՝ իբր թէ իրենք եղած ըլլային թագա-
ւորութե կանոն տրվօղ՝ հաչակեցին աւաջ
թէ ինչլան չիժողվըվին չիմիանան տերու-
թե իշխաննէրը, մենք չենք պատերազմիր որ՝
բայց միայն սլաշտպանելու համար , չենք ու-
ղէր ծեծկըվիլ դրացի տերութե դէմ որուն
դէմ ելլալը անիրաւութի է , կուղենք խա-
ղաղութի , մեր կեանքը ապրանքը մինակ
մեր հայրենեացը շահուն համար կըդնենք :
Ասոնք ետքը բեդրօպուրկ մարդ խրկեցին

գթու թի խնդրելու թագուհին , իբր թէ
 ան բանակը որ բէդրօպուրկ դող հաներէր ,
 ինքը վախի վտանգի մէջ ընկած ըլլար , ա-
 սանկ ըսելով մոսկովի թագուհին : „ Արու-
 „ հետե ազգային ժողովոյն հաւանութիւն չէր
 „ եղած , անոր համար մենք թշնամութիւն
 „ պիտոր չընենք մոսկովին դէմ , ասկից կը-
 „ յուսանք որ մոսկովիսը պահելով իր բա-
 „ ըեկամութիւն մեր շվետի ազգին վրայ՝ թող
 „ չիտայ իր զօրայր՝ շվետին երկիրը ավրը-
 „ տրկելու „ : Ատքը իրենց խելքովը զինա-
 դուր (միւթարէքէ) ըրին , անանկով մոս-
 կովին Ֆինլանտիան ձգեցին , շվետին երկի-
 րը քաշվեցան . և որովհետեւ անիրաւ մար-
 դոց բնական է իրենց անիրաւութիւնը իրա-
 ւունքի բերել , պատճառներով հաստատել ,
 ասոնքալ աշխրհհօս բերանը դոյելու հա-
 մար աս պատճառներս բերին , թէ կուսգա-
 վոսին աս պատերազմ բանալը սահմանադ-
 րութիւն դէմ էր՝ վասն զի սահմանադրութիւն
 հրաման չիտար թագաւորին պատերազմ
 բանալ առանց յայտնի հրամանի իշխանաց ,
 բայց եթէ միայն մարտապահ պատերազմ
 որ է պաշտպանելու համար . իսկ աս պատե-
 րազմը մարտավար էր՝ ուրիշին փաստաւոր
 համար էր . հիմա մենք ըլլալով ազատ քա-
 ղաքացիք չենք կրնար գործակից ըլլալ մեր
 հայրենեացը կործանման՝ որ իյնալու վրայ
 է : Աս խօսքիս վրայալ խիստ շատ գրուած
 նէր դուրս հանեցին շվետին մէջ պարսաւա-
 դէտ ու անվայել գրքեր , լեցուն ապստամ-
 բեցուցիչ խօսքերով ու զրպարտութիւն , շվե-

տէն դուրսալ ինչպէս իդալիա ցրուեցին :
 Ասոնց ըրածնէրը խիստ կը գովէին շվէտին
 մէջի ապստամբնէրը որ օրէ օր կը շատնային ,
 քայց շվէտին ազգը ասոնք կը քամահրէր ու
 պատասխան կուտար : « Վատերազմ քա-
 ,, նալ ան տէրութե գէմ որ անկարգութի
 ,, ու ներքին ապստամբութի կը սերմանէ ,
 ,, տէր կը կենայ ան մարդոց որ բռնաւոր ըլ-
 ,, լալ կուզեն հայրենեացը վրայ , ջնջել
 ,, կրնայի ան սահմանադրութիւր՝ որ ամբողջ
 ,, շվէտին ազգը երդմամբ ընդուներէ , և
 ,, իրեն վարձք կուզէ մեծ գաւառներէն մէ-
 ,, կը , ասանկին վրայ ծեծ բանալը միթէ
 ,, սլաշտպանել է , թէ փաստել . դուք ինչ-
 ,, պէս կրնաք պահանջել թէ թագաւորը
 ,, թող բռնէ իր երգումը որ ըրավ սահմա-
 ,, նադրութեը վրայ . ո՛վ դրաւ ձեզ քննօղ
 ,, և դատաւոր ձեր թագաւորին վրայ , որ
 ,, միայն տէրութե իշխաններուն և ազգին
 ,, պարտրկան է համար տալ , ձեզի միայն
 ,, կիյնայ հնազանդիլ , ձեր զինուորական
 ,, գործքը ընել , » : Ասանկով ազգը ասոնց ը-
 ըրածը քամահրէց , ետքը իշխաններնալ քըն-
 նութե ու պատժոյ տակ ձգել տրվին անոնք .
 երբոր ասոնք դատապարտրվեցան , հազա-
 րապետներ գտնրվեցան՝ որ մոսկովի դին
 անցան , շվէտին իրենց ազգին դէմ սուր քա-
 շեցին . թէպէտ մէկ քանին ասանկ ըրին՝
 քայց ուրիշ հազարապետները ընդհանրա-
 պէս հաւատարմութե ու քաջասրտութե
 ծառայեցին իրենց թագաւորին : Վուսդա-
 վոս ըսդօքօլմ եկածին պէս ատեանը ժող-

վեց, իրենց վճիռը առավ աս ծեծիս վրայօք՝
որ երկու ամիս առաջ բանի տեղ չէր սե-
պեր, և թէպէտ վճիռ մը ունեցաւ որ իր
ըրածին իրաւունք կուտար, բայց հասկը-
ցաւ որ ատենակալաց մէջը շատ ընդդիմու-
թի կար, որոնք աս պատերազմը խիստ փա-
սակար կըսեպէին ժողովրդեան: Մասնկ
տարածայնու թի՞ զբաղիլը շվէտներուն՝ ա-
տեն տրվավ մոսկովին իր զօրութիւն Ֆին-
լանտիային մէջը ժողվելու:

Նովու դիացէն շվէտը պալլիկ ծովին մէ-
ջը կօքլանտին ջուրերը երկու մոսկովի
Ֆուխաթա առավ մէջինները դերելով. մոս-
կովին նաւերը աս լսածնին պէս կատղելով
նաւահանգիստներէն դուրս ելան, որ էին
17 երկու խափախլը նաւ, 7 նաւալ պղտիկ,
շվէտին նաւերն էին 16 երկու խափախլը,
5 հատալ Ֆուխաթա: Նուլիսին 17, մոսկո-
վի խափուտանան կուէյկ առջինը եղավ զար-
նելու՝ միտքը դնելով կամ յաղթել կամ
մեռնիլ. շվէտի խափուտանան որ թագա-
ւորին եղբարն էր՝ դիմադէմ ասոր հետ
ծեծկըվեցաւ, վտանգի մէջ ընկաւ գերի
ըյնելու մոսկովի խափուտանային ձեռքը՝
որուն երկու ուրիշ նաւերալ կօզնէին. բայց
ան ատենը ուրիշ իրեք նաւ օգնութի հաս-
նելով իրեն, խալըսեցաւ մոսկովի ձեռքէն,
ծեծը եղավ ընդհանուր, ամմէն նաւ սկսան
զարնըլիլ. երկու դիացէնալ շատ մարդ որը
սպանվեցաւ, որը խղզըվեցաւ. շվէտը մոս-
կովի նաւ մը առավ 74 թօփով մէկ նաւ մը
նալ ջարդ ու բուրդ ըրավ, բայց իր նաւէ-

րը շատ կոտորտոված ըլլալով՝ առջինը ե-
 ղավ քաշվիլ Սվէապուրկ նաւահանգիս-
 տը ⁽¹⁾ մանալ նորոգելու համար. մոսկովնալ
 շվէտինաւ մը առավ 80 թօփով, քաօնչգատ
 քաշվեցաւ իր նաւէրը նորոգելու որ քիչ
 փնասոված էին, ետքը գնաց պաշարեց ան
 նաւահանգիստը՝ ուր ժողովրոված էին շվէ-
 տին նաւէրը, որոնցմէ մէկ նաւ մը 64 թօ-
 փով դուրս ելլալ ուզելով քանի մը պզտիկ
 նաւէրով՝ ցամաքը նստաւ, որուն մէջի գլտ-
 նը ված մարդիկը գերի ընելով մոսկովը՝ ե-
 րեց նաւը: Ասանկ ըրաւ մոսկովը ուրիշ եր-
 կու շվէտինաւէրուն, որոնց մէջը 560 մարդ-
 կային, թէպէտ կուսդավոս շվէտին թագա-
 ւորը ուրախու թի ընել տրվալ ըսգօքօլի
 մէջ իբր թէ իրենց եղալ յաղթութիւր.
 քաղդալ ունեցաւ որ իր եղբարը դեկտեմ-
 բերի մէջ կրցաւ քառլսքաօնա բերել նա-
 ւատորմիդը սառոյցներուն ու թանձր մշուշ-
 ներուն (սուղերուն ու փուսերուն) մէջէն,
 որոնց ապրուստը հոգալ դուրսը՝ անհնա-
 ըին էր:

(1) Ասիկայ անառիկ է իր դրիցը և ամուր շէնքե-
 րուն համար՝ որ շինեց էհոէնսովերա ֆելտ մառէշա-
 լը, որնոր ասենիս մէջ մեծ վարպետներէն մէկը ե-
 ղալ զինուորական ճարտարպետութե մէջ. ուր է
 և իր գերեզմանը:

Շ Վէտը տանիմառփային դէճ էլւլայ :

1788 :

Երրորդ վալտէմառ տանիմառփայի Թա
գաւորին դուստրը մարգարիտա անունով,
1359 կարգը վէլով ագովին նօրվէճիայի Թա
գաւորին հետ՝ նօրվէճիայի Թագաւորուիը
միացաւ տանիմառփայի Թագաւորու Թեանը
հետ . 1397 ինալ շվէտին Թագաւորու Թիը
միացաւ աս երկուքին հետ մէկ դաշնադրու
Թք մը՝ որ եղաւ քալմար տեղը , անոր հա
մար ըսվէցաւ քալմարի միաբանու Թի . որոնց
մէկ Թագաւոր մը կիշխէր ինչվան 1523 ,
բայց ան ատենը կուսդալոս վազա շվէտի
վրայ Թագաւոր նստելով՝ տանիմառփային
ղատվէցաւ , մէջերնին կուիւր անսպակաս ե
ղաւ , ան ատենէն՝ մանաւանդ ետքը մեծին
պետրոսի ատենէն տանիմառփայիք իրենց
պաշտպանու Թե համար աղէկ սեպեցին մոս
կովը իրենց օգնական ունենալ : Հիմա աս
շվէտի Թագաւորին ատենը լսելով տանի
մառփայի տերու Թիը որ Թագաւորական իշ
խանու Թիը շվէտի Թագաւորին ձեռքը ան
ցաւ առջինին պէս՝ վախնալէն նոր դաշնադ
րու Թինէր ըրաւ մոսկովին հետ , որպէս զի
երբոր Թշնամի մը վրանին ելլայ՝ իրարու
օգնեն զինուոր ու նաւ տալով . հիմա շվէ
տը մոսկովի վրայ ելած ըլլալով՝ տանի
մառփան առաջարկեց շվէտին միջնորդ ըլ
լալ մոսկովին հետ բանը շտկելու համար :
Շ Վէտը անիկայ մերժելով՝ հարկ եղաւ

տանխմառքային որ մոսկովին օգնութիւն խրկէ, ուսկից՝ ինչպէս նաև նեմցէէն իժիր մարդ կուգար յորդորելով որ տանխմառքան շվէտին դէմ ելլայ, որ թէպէտ իրեն ազգականն էր՝ բայց բնական թշնամի էր իրեն. ինչպէս որ շվէտին թագաւորնալ ինչ կիլիզին պրուշին կամքը կատարելով տաճկին կօգնէր :

Տանխմառքայի վրայ թագաւոր էր աս աւտեն է. քրիստիանոս, որ 1772էն տկար ըլլալով՝ ամմէն կառավարութիւն ընօրը Ֆետերիքոս իր մեծ տղան՝ ու իրեն խելացի վէզիրն էր պէրնսդօռֆ կոմսը. ասիկայ մտածելով որ աղէկ ճամփայ հիւսիսային տէրութիւնէրը խաղաղցընելու՝ ծեծկըվին է, շուտ մը մոսկովին օգնութիւն խրկեց 6 նաւ երկու խափախը, 6ալ Ֆռխաթա. 12 հազարալ ցամաքի վրայ զօրք, որոնց զըլուխ եղաւ հասսիա քասսէլին իշխանը. Ֆետերիքոս մենծ տղան զօրք խրկեց նօրվէ՛ ճիա անձամբ հոն երթալով. ասոնք ընէլէն ետև՝ տանխմառքան յայտնի երևան հանեց իր մոսկովի դին ըլլալը :

Աս լսելով շվէտին թագաւորը իր դեսպանին ձեռքովը ասանկ զուրցեց : „ Արյու „ սամ որ տանխմառքային զօրքը որ մոսկու „ վին օգնութի կերթան՝ թշնամութի մը „ չիբանեցընեն շվէտին երկրին մէջը . շատ „ դժար բան է մեր ազգականը մեզի թշնա „ մի տենալ, անչափ հոգ ցըցընելով պաշտ „ պան կենալ մէկ տէրութե մը՝ որ ուրիշ „ բան չիմտածէր բայց եթէ ամմէն եւրո „

„ պա ու ասիա իր ձեռքը առնել. իսկ եթէ
 „ թշնամաբար մտնան շվէտի հողին մէջ,
 „ ան ատենը շվէտի թագաւորը թշնամիի
 „ տեղ պիտոր սեպէ տանիմառքացինէրը,
 „ ազգականութիւնը բանի տեղ պիտոր չիսե-
 „ պէ „ : Տանիմառքան ասոր պատասխան
 տրվավ : „ Աււերն ու զօրքը որ պատրաստ
 „ էին՝ դաշնադրութեցը կեօրէ խրկեցինք
 „ մոսկովին իր կարգաւորութեը տակ, որ
 „ կրնայ բանեցընել ինչ երկրի մէջ որ ու-
 „ ղենայ „ : Սեպտ. ամսոյն մէջ հաստիա
 քասսէլ իշխանը 10 հազար մարդով վա-
 զեց պահուելիմ շվէտին գաւառը. ուրիշ 6
 հազար տանիմառքացիքալ վառմիա մտան,
 պահուել տեղը առին իր ամէն համբարնէ-
 րով որ լեցուն էին պաշարով (զահրէով),
 բայց ամէննալ վճարելով : Աօդգէմպուրկ
 կօցիային գլխաւոր քաղաքը պաշարելու
 գացին, որ շվէտի երկրին երկրորդ քաղաքն
 է պիտվական իրեն աղէկ նաւահանգստին
 համար գերմանիայու ովկիանոսին վրայ .
 շվէտը ասոնք արգելելու համար քվիսդրում
 կամուրջը (քէօփրիւն) քակեց շատ ջար-
 դրվելով. բայց տանիմառքացիք անանկով-
 ալ ջուրը անցան, չիսեպելով թօփերը՝ որ
 շվէտը դիմացէն կըպարպէր :

Ասիկայ լսածին պէս կուսդավոս շվէտին
 թագաւորը՝ թողուց մոսկովին Ֆինլան-
 տիան, շվէտին մէկալ ծայրը վազեց կօդ-
 գէմպուրկ ազատելու համար . իրեն զօրքը
 քիչ ըլլալուն համար (հին կուսդավոս վա-
 զայէն օրինակ առնելով), գնաց տալէ-

քառւիա և անոր քովի երկիրնէրը , ան
 հաստ կոսիտ բնակիչքը արթնցընելու հա-
 մար , որ պաշտօնանելու ելլան իրենց եր-
 կիրնէրը . որոնք շուտ մը 3 հազար մարդ
 հանեցին , անչափմընալ քովիննէրը հանե-
 ցին , ամսէննալ յարմար թշնամիի դէմ
 դնելու : Շ վէտին թագաւորը ուրախա-
 ցաւ , բայց չըլլայ որ աս զօրքը հոն չիհա-
 սած կօդդէմպուրկը անձնատուր ըլլայ ,
 չուստ վազելով հոն հասաւ ծպտեալ
 (թէպտիլ) հագուստով որ չիճանչցրվի ,
 մէկ թիկնապահով (սէլիհտարով) ու մէկ
 ծառայով . մէջիննէրը չիհաւատալով որ
 թագաւորն է՝ ներս չաւին , շատ յոքնե-
 ցաւ ինչվան որ քաղքին դուռը բանալ տը-
 վալ : Մասնկ արտառոց դիպուածնէր խիստ
 հաճոյ էր աս թագաւորիս . բնութք յան-
 դուզն ըլլալով իր կամքովը վտանգնէրու
 մէջ կրճդէր զինքը բաղդին ապաւինելով ,
 և իշաւ որ չէ թէ իրեն հոն գալովը՝ հապա
 բաղդով մը խալըսեցաւ կօդդէմպուրկ ար-
 տառոց ցուրտ մը տիրելուն համար 1788ին
 ետքէրը և 1789ին սկիզբնէրը , որով ան-
 հնարին ըլլալով ծեծկըվելու՝ երկու դիա-
 ցէնալ զինագուլ (միւթարէքէ) ըրին ա-
 ռաջ երկու ամսըվան՝ ետքը վեց ամսըվան
 համար : Նեծին ուշանալովնալ ինկիլիզը
 ու սրուշը մտածեցին որ իրենց ոտք հա-
 նած շվէտը երկու թշնամիի դէմ չիկրնայ
 պիտոր դնել , բունագատեցին տանիմառ-
 քան որ չէղոք մնայ , շվէտին դէմ չիծեծ-
 կըվի , սպաւնալով ծովէն ինկիլիզի նաւէ-

րով Թօփոտելու քօբբէնհայի իր արքայա-
 նիստ քաղաքը, ցամաքէնալ պրուչին զօր-
 քովը հօլսդէյնին երկիրը զրաւելու. աս
 խօսքէրս պէրնսդօռֆ տանիմառքային վէ-
 զիրը հասկըցուց մոսկովին, մոսկովնալ ա-
 զատուծի տրվալ տանիմառքային, որնոր
 իրեն աւելի յարմար էնէ, անանկ ընէ:
 Ըն ատենը տանիմառքան յայտնի չէզոքու-
 թի յանձն առալ ան թէուծք որ՝ ինկի-
 լիզնալ պրուչնալ չէզոք մնան, թող տան
 տանիմառքային որ ծովու վրայ նաւատոր-
 միդ (տօնանմա) օւնենայ. ցամաքի վրայալ
 25 հազար մարդ պահէ գերմանիայի սահ-
 մանակցուծէ մէջ զինքը պաշտպանելու:
 Եւ որովհետեւ մոսկովի տերուծեան քանի
 մը նաւեր քօբբէնհայիին նաւահանգստիւն
 մէջ կեցած էին, պիտոր քօծնչդատ մոս-
 կովին երկիրը երթային, չըլլայ որ ճամ-
 փան շվէտին նաւերը զարնեն, տանիմառ-
 քային նաւերը մէկ տեղ ընկերացան անոնք
 տանելու ինչվան Ֆինլանտիային ծոցը:
 Եւայց կուսդավոս շվէտին թագաւորը իրեն
 դին մարդիկ ունէր տանիմառքային մէջ,
 ասոնցմէ մէկն էր պէզէնսթիէոն գնդա-
 պետ, որ ուրիշ շվէտի մը հետ միաբանե-
 լով մտածեցին գաղտուկ կրակ ձգել տա-
 նիմառքայի ու մոսկովի նաւերուն մէջ որ
 քօբբէնհայիին մէջն էին: ()պառիէն ըսված
 իռլանտացի նաւապետէ մը նաւ մը ծա-
 խու առին, 50 հազար դուռինի լիրէ ա-
 ռաջ վճարելով, այնչափմընալ գրով խոս-
 տացան տալու՝ թէ որ բաներնին յաջող

երթայ, ան նաւուն մէջ լեցընել սկսան
 վառիչներով ըռախի, խաթրամ, ուրիշ
 երեւու բաներ. ապսպրելով իրեն հիւսի-
 սային հով փչածին պէս՝ նաւահանգիստէն
 դուրս ելլայ, դուրս ելածին պէս կրակ տայ
 նաւուն, որ հովը նաւահանգստին մէջ
 քշելով երէ հոն եղած ամմէն նաւերը :
 Քայց կրսեն որ աս նաւապետը անանկ բան
 խօսերէր լոստառիային տիրոջը ուր որ
 կրնատէր, որ կռահելով դացէր մատներէր
 դատաւորներուն, որոնք մարդ իրկելով
 յայտնի տեսան նաւին մէջի պատրաստու-
 թիւր, անոր համար նաւապետնալ նաւավար-
 ներնալ բռնեցին . միայն պեղէնսթիէնն
 ատեն ունեցաւ ինկիլիզի դեսպանին քով
 փախչիլ, անկէց սուրհանգակի (թաթարի)
 հազուստով ինկիլդէռուա : Այլիկ նաւե-
 թուն նաւավարները լսածնին պէս լեցվե-
 ցան շվէտի դեսպանին տանը առջին, աղա-
 դակ վերցընելով կուզէին որ իրենց ձեռքը
 տան աս չարիք մտածողները, թէ չէ՝ կե-
 րենք կրկանչէին, բայց անոնք ըսքանիայի
 մէկալ դին անցէր դացերէին, ասոնց մէջ
 շատ մարդ մտնալով ըստակ վճարելով հա-
 զիւ կրցան տեղերնին իրկել. դատաւորնե-
 ըր շատ մարդ բռնեցին քննելու համար՝
 բայց խիստ լռուի պահելով բան մը դուրս
 չիհանեցին, ուրիշ թագաւորները չիգրգուե-
 լու համար :

ԼԵՆԻՆ ԿԻՆ ԷԼԼԱԼԸ .

1788—1789 :

Երբոր տաճկին ու մոսկովին մէջը ծեծ բացվեցաւ, երկուքնալ կրքոնադատէին լեհը որ իրենց դին քաշէն . մոսկովը իր սու վորութէը կեօրէ առանց ծանուցանելու իր զօրքը լեհի մէջ խօթեց, 1788 հոն ձմեռեց, պահանջելով որ՝ լեհը տայ անոնց ապրուստը . ան տարինալ ջուրէրը կոխած ըլլալով ցորենը ուրիշ բերքէրը խիստ քիչ ըլլալով՝ ծանր եղավ աս բանս, լեհին մեն ծէրը չուզեցին պաշար տալ մոսկովին զօրացը, մոսկովին զօրապետները կրսպառնային բռնութե առնելու : Աեմցէնալ որ տաճկին վրայ ծեծ ունէր, անալ ուզեց որ զօրքը լեհէն անցընէ, լեհը տայ անոնց ապրուստը : Տաճիկը կրսպառնար՝ թէ որ թշնամեաց զօրքը թող տայ լեհը իր երկրէն անցընելու, ինքնալ 60 հազար զօրք լեհին մէջը պիտոր խրկէր :

Պրուշնալ աս ատեն նորէն ետեէ կիյնար որ տանձքան ձեռք ձգէ : Լեհին մէջի եղած տարաձայնութիւր օրէօր կըշատնար, մէկ դին կըսվէր (Վազաւորալ կան, մէկալ դին կըսվէր Հայրենասէր . ան աստիճանը հասաւ որ լաթէրուն վրայ նշան դրին զանազանելու համար . առջինները կանանչ ⁽¹⁾ նշան դրին, իսկ երկրորդը՝

(1) Ոմանք կըսեն՝ որ ասոնք ճերմակ նշան դրին :

կարմիր . ասոնք զօրաւոր ըլլալով վճռեցին որ թագաւորը ու մնայուն խորհուրդը ամ մէն իշխանութի զրկեն , ասոնց տեղը մէկ զինուորական դատաստան մը սահմանեն , որ ամմէն բանը կանոնի տակ պահէ , մա . նաւանդ թագաւորը զսպէ , իբր թէ անիւ կայ եղավ ամմէն չարեաց պատճառը :

Ինկիլիզն ու պրուշը մէկ տեղ կապված ըլլալով (դաշնագրութի որ ըրին 1768 հոկտեմբ . 13 , որպէս զի թող չիտան մոսկովին ու նեմցէին մենծնալու տաճկէն երկիրներ առնելով) , տանիմաւքային թշնամութիը խափանելէն ետեւ՝ ջանացին լեհը ոտք հանելու մոսկովին դէմ թէպէտ չէզոք էր հրատարակված : Պրուշը իրեն հետ կապեց լեհը խօսք դնելով որ՝ ամենեւին չընդունին ան դաշնագրութիւնը՝ որ մոսկովը առաւ ջարկերէր լեհի ատեանին . իր դիացէն խոստանալով թէ որ տաճկին ասպատակ (չարխա) զօրքը լեհին հողը վազէ , ինքը պաշտպան կենայ թող չիտայ . թէպէտ տաճկին սահմանէն ինչվան պրուշին սահմանը խիստ շատ էր հեռաւորութիը , ինչպէս պիտոր պաշտպան կենար :

Հիմա լեհերը կռնակ ունենալով իրենց պրուշը՝ աղէկ ատեն սեպեցին մոսկովին բռնութենէ խալըսելու , երբոր 1789 ընդհանուր ժողով ըրին , կարծես թէ լեհերը փոխված էին , մէջիններուն շատը տաճկի դին էին , յիշելով մոսկովին ըրածը՝ որ իրենց երկիրը բաժնեց , ու միշտ իր տակը կուղէր պահել լեհը , որոշեցին որ 1775ին

սահմանված կառավարութիւն կերպը խա-
 փանեն, ինչպէս որ քիչ մը ետքը ըրին •
 Սնայուն ըսված խորհուրդը վերուցին որ
 մոսկովն էր դրրէր, անոր տեղը իրեք խոր-
 հուրդ կամ պաշտօն սահմանեցին, մէյմը
 դուրսի բաներու վրայ, մէկալը եկամուտի
 վրայ, երրորդը պատերազմի վրայ, առաջար-
 կեցին դաշնադրուի ընելու պրուշին՝ ինկիլի-
 զին՝ շվէտին՝ Ֆիլեմէնկին՝ ու տաճկին հետ,
 ամէն մէկուն զատ զատ դեսպան խրկելով,
 անանկով կրսեպէին մոսկովի տակէն բոլ-
 րովին ելլալու: Ս ճուեցին 100 հազար զօրք
 ոտքի վրայ պահելու, 40 հազարալ ձիաւոր
 զօրք. ասչափ զօրք պահելու՝ 48 միլիոն լեհի
 Ֆիօռին պէտք էր տարին, իսկ իրենց եկա-
 մուտը 8 միլիոնէն քիչ մը աւելի էր, անոր
 համար տուրքերը շատցուցին, նոր մաքս
 (կէօմրիւք) դրին • հրէաներունալ որ մէկ
 կերպով մը զանազան արտունուինէր ձեռք
 ձգերէին, 1776 ետ աւերէին, իսկ աս տա-
 րի տուրքերնին եվելցուցին • եկեղեցական-
 քը պարտաւորեցին կամաւոր ընծայ տալու
 հարիւրին քսան • շատ արբայութեց եկա-
 մուտը իրենց առին • եպիսկոպոսներուն ե-
 կամուտներուն հինգերորդ մասը տասա-
 նորդ տալու կապեցին: Արբոր սրբազան
 քահանայապետը գանկատ ըրավ սս բա-
 նիս վրայ, լեհաստանին կարօտուիը պատ-
 ճառ բռնեցին, օրինակ բերելով ուրիշ
 թագաւորներուն ըրածները • առաջարկե-
 ցին մալթացոց հարուստ կալուածները ծա-
 խու հանել • ըստաբօսդի իշխանութիւնէրը

վճուեցին որ ժառանգութիւն ըլլայ. հաշուելով (հիտապ ընելով) որ ասանկով 200 միլիոն ֆիօռին պիտոր վաստրկէին. ամմէն կալուածներուն վրայալ՝ հարիւրին 15 տուրք ձգեցին, նաև թաղաւորին կալուածներուն վրայ, բայց չիմտածեցին որ, ու որ եկեղեցականաց ապրանքին դպաւ, ան տէրութիւն բան մը չիվաստրկեցաւ, այլ մանաւանդ ծանր փաստ քաջեց, փորձըվածալ է որ հասարակապետութեց մէջ տնտեսութիւն ըսելը ոչինչ է, որչափ բան ժողովրդի՝ աս ան առանձին իշխանները կուտեն, հասարակի խիտ քիչ բան կրմայ. ասանկ եղավ լեհերուն: Փոխ ըստակ ուղեցին առնելու պէտքնէն, համարկէն, ճինիվիզէն, ֆիլէմէնկէն, բայց լեհերը անանկ անուն չունէին որ իրենց փոխ ըստակ տալ հաւատային:

Րօնինսքի իշխանին ըրածներուն վրայ քննութիւն ընել սկսան՝ որ մառէշալն էր 1773 եղած ժողովին, ուր տեղ հաստատվեցաւ լեհաստանին բաժնրվիլը. ասիկայ իր տանը մէջ բանտը դրված էր՝ բայց անկից փախչելնինի նորէն բռնեցին պահեցին: Ասոր վրայ աս յանցանքը կը դնէին, որ ան ժողովքին մէջը ամենեւին կանոնները չիպահեց, ըստակ առավ, իր հայրենեաց երկիրը, սահմանադրութիւնը, ազատութիւնը օտար տերութիւնէրու ծախեց, թող տուր ուրիշ ըրած չարութիւնները: Րօնինսքին կաղաղակէր որ՝ աս բաներս մինակ ես չըրի, հապա այնչափ եպիսկոպոսներ իշխան.

նէր մէկ տեղ վճռելով ըրին, բայց պատասխան տրվին որ՝ ուրիշները քեզի համախոհ ունենալով դուն չես արդարանար :

Վեհին եկամուտը ու զօրքը օրէօր շատնալով իր դրացի տէրութեց վախնալու եղավ. 1789ին սկիզբը համարձակ հրամեց մոսկովին իր զօրքը ետ քաշելու, մոսկովնալ չիկրցաւ անոր խօսքը քամահրել ինչպէս առաջ, միայն թէ պատճառներ բերել կուզէր՝ որ ամէն զօրքնալ չիքաշէ : Պրուշը մէկ բանակ (օւտու) մը հանեց լեհերը պաշտպանելու համար, մոսկովը շատ չափաւորեց զինքը, զօրք անցընելը քիչցուց, վարկուժ սկսաւ ձգել լեհաստան, նեմցէն ու տաճիկը ուզեցին լեհին հետ դաշնադրութիւնել. լեհին ժողովքը մնայուն ըրին, վճռեցին որ չարձրկեն ինչպէս լմնցընեն լեհաստանին նորոգութիւր :

Վեհի ուքուանիայի մէջ եղած ժողովուրդը՝ որ գրեթէ ամէննալ յունադաւան են՝ յայտնի մոսկովի դին կեցան. անոր համար լեհերը հաւատարմութե երդում ուզեցին անոնցմէ, պատիժ սպառնալով իրենց, բայց քիչ մարդ հնազանդեցան, մէկալնոնք կաղաղակէին որ չենք կրնար աս երդումը ընել առանց հաւանութե մոսկովի դեսպանին, ձիաւոր զօրք խրկեցին վրանին, անոնցմով վօլհիայի իշխանը լուպօմիրսքի անուն շատ մարդ պատժեց, շատ եկեղեցականներ բռնեց, որոնց մէջն էր բրէզլավի յոյն եպիսկոպոսը որ ըսվէք կրնստէր

լիթուանիայի մէջ. ուբուանցիք յուսահատելով սուր առին ծեծկրովիլ սկսան զիրենք պաշտպանելու համար:

Քուռլանտիանալ մոսկովին տակէն հանեցին, անոր դուքսին (որ էր պետրոս պիրենեան) հրամեցին՝ որ իր զօրքը լեհին բանակը (օւտուն) խրկէ. ութը օրվան մէջ վերցընէ ան խոստմունքը՝ որ մոսկովին ըրերէր՝ թէ իրենք մոսկովները մինակ կարենան քուռլանտիային ցորենը ծախու առնել, որպէս զի իրենք լեհերը առնեն ան ցորենը շվետին խրկեն. շվետինալ դեսպան խրկեցին յորդորելով որ իրենց հետ միանայ մոսկովին դէմ, բայց աս բանս գործ չիդրաւ ան ատեանը՝ որ դուքսի բաներու վրայ դրերէին: Աորէն ապսպրեցին մոսկովի զօրացը ետ քաշվիլ հեռնալ լեհին սահմանակից տեղերէն, բայց ռօմանցօֆ ասանկ պատասխան տրվալ բօդօցքի կոմսին՝ որ աս բանիս վրայօք իրեն թուղթ էր գրած:

„ Իմ թագաւորիս շահին դէմ, և մոսկովի
 „ պատուոյն դէմ՝ չեմ կրնար ես իս ցած
 „ ցընել լեհէն դուքս ելլալով, դուք ինչ
 „ բռնութի կուզէք ընել՝ ես պատրաստ կե
 „ ցերեմ դէմ դնելու:

Իրաւիայի տէրութիւնները պարպարընէրոսն Դէճ
էւլան, նաբօլին հոռմայու հետ վէճ հոսնէնայ.

1786—1788.

Եւ ատեններս պարպարընէրոսն ծովաս-
պատակները (խուրսանտները) ամմէնը
մէկ եղած կը վխտային ճերմակ ծովին մէ-
ջը. ամենեւին մէկ տէրութիւն մընալ վախ
չունէին. իրաւիա եղող տէրութիւնները չի-
դիմանալով ասոնց ձեռքէն՝ ճինիվիզը իրեն
չէքտիրինները դուրս հանեց ասոնց ետեւն,
ասանկալ մալթացիք, իսկ նաբօլին նորանց
երկու խափախը նաւեր ու Ֆախաթաներ
չինել տըվալ:

Նաբօլիի մէջ դանուչ չի վէզիրնալ փոխ-
վելէն ետեւ եկեղեցական բաներու վրայի
վէճը չի դադրեցաւ. դանուչ չիին տեղը քա-
ռաչ չիօլօն վէզիր եղալ, ասիկայ գիտես
թէ հոռմայու հետ աւելի հակառակութի
ունեցաւ: 1787 նորէն վէճ՝ բացվեցաւ հոռ-
մայու հետ Վինէա տուրքին վրայօք. որ
նաբօլիի տէրութիւնը չէր ուզէր հանդէս ը-
նելով տալ ինչպէս որ սովորութիւն էր իբր
հարկատու (խարաճկիւզար) ազգերու
պէս, հապա առանձին կերպով մը 7 հա-
զար ոսկի տուքադ տայ իբր մէկ ընծայ մը
ջերմեռանդութե համար: Իսկ սրբազան
քահանայապետը կուզէր որ հանդիսով
տըվի, որով առաքելական աթոռոյն իրա-
ւունքը գետինը չիյնայ, որ հարիւրաւոր

տարինէրով առաջ սահմանված էր, հիմակվան նաբօլիի Թագաւորնալ ճանչցէր ընդունէրէր աս ընծան տալով ժգ. կղեմէս հայրապետին, նաև երգվնալով իր գործակալին ձեռքովը՝ որ էր քառտինալ օռսինի՝ Թէ պահեմ ան ԹէուԹիւննէրը որ կրգտնըվին ք. յուլիոս, Ժ. լւոն, ու ժք, կղեմէս քահանայապետնէրուն Թղթէրուն մէջը: Աս նորուԹէս վրայ սրբազան քահանայապետը վաղիքանու եկեղեցնայ մէջ հրապարակաւ բողոքում ըրավ, անանկ որ ամմէն հռոմ ոտք ելավ, տրտունջնէր շատցան, պօրձիա եպիսկոպոսը՝ (որ դիւանադպիր էր ու նախագահ ժողովոյն ծաւալման հաւատոյ) գիրք հանեց, ցրցընելով որ Վինէան պէտք է ըլլըվիլ, իսկ նաբօլիի փաստաբաննէրը կրպնդէին Թէ որովհետև Թագաւորը յատուկ տուրքը կուտար, կերպը փոխելու տէր է, կրնար փոխել:

Անչ և իցէ ասկէց ետքը 1788, քինէան վերջացաւ, Թէպէտ և ուԹն անգամ ետևէ ետև բողոքում եղավ. քառտինալ պօնքօմբայնին որ հռոմայու դիւանադպիրն էր՝ նաբօլի գացած էր մէկ կերպով մը բանէրը շտկելու, բայց նաբօլիի տէրուԹիւնը 1788 զրկեց անիկայ մէկ հարուստ աբբայուԹէ եկամուտէ՝ որ Թագաւորին հաւանուԹքը կրբաշէր ան եկամուտը. աս անհաճոյ բանը տեսնալով քառտինալը՝ ուրիշ բանի վրայ խօրաԹայ չիբացաւ՝ ետ քաշվեցաւ: Վիչ մը ետքը քալէբբի եպիսկոպոսը ան-

Հաճոյ բանէր տեսնալով թէ իր անձին դէմ
 և թէ հռոմայու դէմ, անալ դարձաւ
 հռոմ եկաւ :

Ուրիշ դիպուածմընալ եղաւ, նաբօլիի
 արքեպիսկոպոսին ատեանին մէջ ամուսնու
 թեան մը վրայ դատաստան եղաւ, անանկ
 կտրըվեցաւ որ քակվի ան ամուսնութիւր,
 բայց աս բանիս վրայ էրիկը բողոքում ընե-
 լով ուրիշ եպիսկոպոսի մը յանձնեցին ան
 դատը (տավան) տեսնալու՝ և ոչ հռոմ
 ինչպէս որ պէտք էր : Ըս բանս շատ հակա
 ռակու թիւնէր բերաւ, սրբազան պապը եր,
 կու թուղթ խրկեց սօբռանցի քահանային՝
 որ իբր իրեն պղտիկ նուիրակ մը նստերէր
 նաբօլի, մէկ թուղթը բողոքում ընօղին
 կնկանը տալու, մէկալը մօդուլա եպիսկո-
 պոսին՝ որ դատաւոր էր եղէր բողոքողին .
 կնիկը չուղեց ան թուղթը առնել, նոյն
 պէս եպիսկոպոսը՝ որ մանաւանդ թղթա
 բերին դէմ խօսեցաւ : Ըսոր վրայ նաբօլիի
 տէրութիւր վերոյիշեալ սօբռանցիին հրա-
 ման խրկեց 24 ժամու մէջ դուրս ելլալ նա-
 բօլիի քաղքէն, ետքնալ 24 ժամու մէջ
 ամմէն նաբօլիի հողէն : Ուրիշ մէկ դատ-
 մընալ տեսնըվեցաւ նաբօլի երկու մալթա
 ցի ասպեանէրու մէջ, որոնք որովհետե
 հռոմ բողոքում ըրին՝ անկից նոր տարա-
 ձայնութի ծագեցաւ նաբօլիի ու հռոմայու
 մէջ :

Ըս ատենիս հռոմայու միսիթարութիւր ան
 եղաւ որ՝ չինուամպին անչափ շատցան քրիս-
 տոնեայնէրը՝ որ 1788 հարկ եղաւ փռօ-

փականտայի ժողովքի տպարանին մէջը չինու լեզուով մաշտոյ տպել, պատարագաւ մատոյց ու ժամագիրք տպել :

Վ ԷՆԵՊԻՆ ԼԵՍՅ ԷՂԱԾ ԴԵՊՈՒՄԻՆԵՐԸ .

1762 — 1792 :

Լօւկտանօ Ֆռանչէսքօ դքսէն (տօժէն) ետեւ վենետիկի դուքս եղավ 1762 մարկոս Փօսթաուինի, որ շատ երևելի մարդ էր կենցաղակիրթ (բօլիդիքօ), շատ գործքի մէջ մտած ելած եփուն, արդարադատ, խոհեմ, խելացի, բարեպաշտ, սիրանալ շէտակ, սրամիտալ ըլլալով շատ կարգացօղ մարդ եղավ, լեզուովալ խիստ ճարտասան, ուր որ դեսպան գնաց՝ մեծ անուն էր հանած . եւրոպայի երևելի ճեմարաններուն մէջալ գրված էր . քանի որ ողջ էր աս ազնուական մարդը՝ վենետիկ խիստ հանգստուէ մէջ մնաց իր խորհրդովը : Իր գրուածոց մէջը երևելի եղավ ան գիրքը՝ ուր կըխօսի վենետիկի դպրութեց վրայ, որ մահը վրայ հասնելով չիկրցաւ լմնցընել, ուրիշ օգտակար բաներալ պիտոր ընէր, բայց տասը ամէն ետեւ 1763 մարտի 31 մեռնելով չիկրցաւ ուրիշ բան ընել՝ բայց եթէ չորս աշխարհացոյցները նորագել, որոնք թագաւորական դարպասին (սերային) մէջը հնուցմէ մնացած բան ըլլալով հարկինք ունէին :

Ին տարին 1763 ապրիլի 19 դուքս եղավ

ալվիզէ մօջէնիկօ, ասոր երրորդ տարին
 վենետիկի ատեանը մէկ նաւատորմիդ (սօ-
 նանմա) մը խրկեց դարասլուսին վրայ,
 որովհետև անոր ծովասպատակները քանի
 մը վենետիկի նաւեր առերէին. երբոր յա-
 կոբ նանի վենետիկին խափուտանա պէյը
 նաւերով դարասլուսին գիմացը հասաւ՝
 տային ասոր նաւը եկավ, ամմէն բան յանձն
 առավ, վենետիկէն առնըված նաւերը ետ
 տըվավ, ան նաւապետներնալ որ աս նա-
 ւերս առերէին պատժեց, երկուքնալ սահ-
 մաններու վրայ որոշեցին՝ սը մարթա ըսված
 քթէն ինչվան իմաստութի ըսված կղզինէ-
 ըը՝ որ մօռայի առջին են: Նայց ասոնք
 խօսքի վրայ երկան չիկենալով՝ վենետիկի
 տերութիւնը նորէն նաւատորմիդ խրկեց,
 անձէլօ էմօն խափուտանա պէյ ըլլալով,
 երբոր ասիկայ դարասլուսին առջին եկավ
 սսլառնացաւ քաղաքը կործանելու, ինչ որ
 պահանջեց՝ դարասլուսի տային յանձն ա-
 ռավ գիր տալով: Նս դուքսին օրը մէկ մեծ
 բարեկարգութի մը աս եղավ որ՝ վենետիկ
 քաղքին մէջ թուղթ խաղալու տեղ մը
 կար՝ ամմէն կերպով զարդարված պալատ
 (սէրայ) մը որ Սէտութօ կըսվէր, բար-
 կենաթի ատեն կըբացվէր. հոն բազդի վրայ
 ինչ թուղթի խաղ կայ կըխաղային, անոր
 համար շատ դրսեցիներ կըժողվէին՝ ինչվան
 լեհէն մոսկովէն աս խաղերս խաղալու հա-
 մար, վենետիկ քաղաքը կըշէննար առու-
 տուրով, բայց շատ մարդ կըմվելով մէկ գի-
 շերվան մը մէջ մօիւիր կըլլար, մենծութի

կաղքըտնար, տունէր կալըրլէին: Աս ան կարգու թէ դեղ ըլլալու համար՝ 1774 մեծ ժողովներ ըրին վենետիկ, շատ հեղ խօսելով երկու դիացէն՝ որովհետև աս բանիս շատ մուկալներ կային, վերջապէս սաստիկ հրամանաւ արգելեցին բաղդի վրայ խաղէր, կամ շատ ըստակով խաղէր չիտաղալ, ան տեղնալ գոյեցին, ով որ մտիկ չըրաւ խիստ պատժով պատժեցին:

Մօլէնիկո դուքսը 1778 դեկտ. 31 մեռնելով պօղոս ռէնեկոն 1779 դուքս նստաւ, շատոնցմընէ պատերազմ չըլլալով հանգըստութիւն անանկ տիրած էր որ չիյտէին վենետիկցիք ինչ ըսել է արիւն, ինչ ըսել է նեղութիւն, բայց մարդս սաստիկ հանգստութեանը թէ որ դուրսէն չըլլայ՝ ինքիրմէ մէկ նեղութիւն մը կը հանէ իրեն, ասանկալ վենետիկի աղքատ սեպուհները ռիճալները կը ճըշգոհային իրենց աղքատ ապրելնուն վըրայ, կը ցանկային մէկալ սեպուհներուն հարստութիւնը վրայ, տրանջալով որ ամմէն բանը անոնք իրենց են առէր, կը մտածէին գաղտուկ նոր կարգաւորութիւն մը ընել, որոնց գլուխ եղավ բիզանիին մէկ ցեղէն աղքատ սեպուհ մը՝ բայց ճարպիկ ու խելացի մարդ: Ասիկայ գլուխ կենալով իրենց նոր նոր կարգաւորութիւնէր ցըցուց աղէկ սլաշտօնները իրենց ձեռքը ձգելու՝ բանէրը աժնցընելու, ամմէննալ աղքատութիւն խալցընելու. ինչպէս որ ամմէն ապստամբներու սովորութիւն է սլաշտպան ցըցընել զիրենք աղքատներու՝ աժնութիւն խօս-

տանալու, անոր համար ան աղքատ սե-
պուհներնալ ասիկայ շուտ մը կարգէ դուրս
գործակալ (բուօքուռադօռ) ըրին, որ ի-
րենց մէջ մեծ պաշտօն էր: Շատ հոգի ա-
սոր հետ միաբանված խօսք դրերէին որ՝
մենծ սեպուհներէն շատը ջարդէն քշեն,
կառավարութիւնը փոխեն, բայց ունեւեռի
դուքսը իմանալով, շուտ մը ուրիշ վերի
մենծերուն հետ խորհուրդ ընելով՝ մէկէն
քշեցին բիզանին, և ուրիշ գլխաւորները,
անանկով խափանեցին իրենց ըրած խոր-
հուրդը:

Ըս ունեւեռի դուքսին օրը մէկ մեծ վէճ՝
մընալ ելավ վենետիկին ու Ֆիլէմէնկին
մէջ մէկ սղտիկ բանի մը համար. ալպա-
նիայի կամ առնավուտ խաբեբայ մէյմը
որ իրեն անուն էր դրէր Նանօլիք կոմս՝
աղէկ յանձնարարական գիր ունենալով
լիօն քաղքին երկու վաճառականներէն,
շատ ըստակ փոխ առավ Ֆիլէմէնկի երկու
վաճառականներէ, ուրիշ հեղմընալ նաբօ-
լի նստօղ վենետիկի դեսպանէն յանձնա-
րարական գիր առավ նոյն վերոյիշեալ եր-
կու վաճառականներուն վրայ, ան գիրով
նորէն ըստակ առավ ան վաճառականնե-
րէն, անանկով 33 հազար Փիօռինէն սկսե-
լով ինչվան 300 հազար Փիօռինը հասաւ:
Ըսոնք ետքը իմանալով որ խաբեբայ ելու-
զակ (տօլանտրըճը) մարդ է եղէր, վենե-
տիկի դեսպանէն կրպահանջէին ըստակը,
դեսպանը ըսելով թէ իմ թուղթիս մէջը
չէի գրած որ իրեն ըստակ տան, հապտ ի

րեն պէտք եղած ծառայութիւնը ընեն . աս
ըսելով չէր ուզէր վճարել : Այն ատենը ա-
սոնք վենետիկի տէրութիւն սկսան սաՀման-
ջել , տէրութիւնը ատեան մը սահմանեց որ
քննեն , ատեանը քննելէն ետև վճուեց որ
դեսպանը պարտք մը չունի վճարելու : Այս
բանիս վրայ Ֆիլէմէնկի վաճառականները
վենետիկի ատեանին դէմ սկսան բողոք
վերցընել . վենետիկի տէրութիւնը առաջար-
կեց որ գլխաւոր տէրութիւնները մէկ ատեան
մը սահմանեն եւրոպայի վաճառականնե-
րով , անոնք ինչ որ կտրեն՝ երկու դիացէն-
ալ ընդունինք :

Ասոր վրայ Ֆիլէմէնկները առաջ հաւա-
նութիւն տրվին՝ ետքը մերժեցին , ամուր կե-
ցան իրենց մտքին վրայ . կայսրը մէջ մը ա-
նալ ուզեց՝ Ֆիլէմէնկները անալ մերժե-
ցին , կերևար որ ծեծ պիտոր բացվէր աս
պղտիկ բանի վրայ , վենետիկը սկսաւ իր
նաւերը ուժովցընել , հրաման խրկեց իր
նաւատորմըին որ մեծ ծովուն մէջն էր ար-
ժուն կենալու թէ որ բան մը փրկէր Ֆի-
լէմէնկի դիացէն . բայց անոնք ան ատենը
աւելի ծանր բանի մէջ զբաղեալ ըլլալով
լուութիւն եղավ աս բանիս վրայ : Ատքը վե-
նետիկը գովասանք լսեց ուրիշ տէրութիւնե-
րէն իր ամուր կենալուն վրայ , որովհետև
թէ որ վճարելու ըլլար՝ մէկ դէշ օրինակ
մը պիտոր ըլլար նաև ուրիշ տէրութեց , ի-
րենց հրպատակին կամ ժողովրդեան պարտ-
քը վճարելու համար :

Այս ամէն դիպուածներէն աւելի մենծ բան

եղավ վենետիկի տէրութիւնը իրեն ծեծ բա-
 նալը թուճուղի օճախին վրայ, որ 1781էն
 սկսաւ ոչինչ դիպուածով մը. ան տարին
 քանի մը թուճուղի վաճառականներ վե-
 նետիկի նաւ մը ըստրկով բռնելով իսթէն-
 տերիէն դուրս ելան թէպէտ և նաւապե-
 տը հիւանդ էր, անոր տղան հասկընալով
 որ ժանտախտի ցաւ էր մտած նաւուն մէջ՝
 ուղեց Ֆինէ ըսված կղզին ելլալ, բայց եր-
 կրրցիք թող չիտրվին դուրս ելլալու, մալ
 թա ուղեց մտնալու՝ հոնալ ներս չառին, և
 ոչ նաւավարներ խրկեցին որոնց կարօտ էր,
 այլ իրեն աչքին առջին նաւը բռնկցու-
 ցին մէջի բաներով երեցին: Աս եղած փնա-
 սը՝ և ուրիշ ասոր նման բաներ պատճառ
 բռնելով՝ թուճուղի ծովասպատակները
 (խուրսանտները) շատ նեղութի կուտային
 վենետիկի նաւերուն. երբոր ասոնք բողոք
 կրվերցընէին՝ թուճուղիք ըսպառնալով
 մեծ գումար ըստակ կըպահանջէին տարին.
 մէջերնին գտնալու խօրաթեցին՝ ընծայ
 խրկեցին վենետիկի դիագէն, թուճուղիք
 ընծայները չընդունեցան, այլ աւելի յան-
 դգնելով վենետիկի քօնսօլին դարպասը վա-
 զելով, վենետիկի տէրութե նշանները վար
 ձգեցին:

Ասոր վրայ հարկ եղավ վենետիկի տէրու-
 թիւր թուճուղին վրայ խրկեց կարիճ աս-
 պետը անձէլօ էմօն կարգէ դուրս Վափի-
 դան անուանելով, որ 1784, նաւերով
 դնաց կօլէթթա թուճուղին քաղաքը պա-
 շարեց. շուշա քաղաքնալ հավան թօփինէ:

րով ծեծել սկսաւ, շատ մնաս տրվաւ: Աս
 էմօն շատ քաջ մարդ պատերազմասէր ու
 վարպետ զօրագլուխ ըլլալով՝ կրցաւ մօ
 տիկնաւ ինչպան թուսուզ քաղքին ծովե
 գերքը, ուր տեղ ծանծաղ (սըղ) ըլլալով
 ինչպան հիմա մէկը չէր կրցած նաւերով
 մօտիկնաւ. ասիկայ սալեր շինել տրվաւ
 Ֆչինէրու վրայ որ վեր կրբռնէին, ան սա
 լերուն վրայ մեծ թօփեր դնել տրվաւ, ա
 սանկով համարձակ կրմօտիկնային քաղա
 քը կրզարնէին. թօփը պարպածին պէս
 հեռուն ձգած երկաթ ունէին, պօճուրղա
 տով քաշելով երկրթի դին կրհեռնային,
 թօփ նետօղնէրուն առջինաւ չուալնէրով
 աւազ դրած ըլլալով, քանի թօփ որ նե
 տէին քաղքէն՝ դնտակնէրը ան աւազին
 կրզարնէին, նետօղնէրուն մնաս մը չէին
 կրնար տալ. հեռնալու ատենը թօփէրը
 նորէն կրլեցընէին, ուրիշ երկաթմընաւ
 քաղքին մօտիկ ձգած ունէին՝ անիկայ պօ
 ճուրղատով քաշելով նորէն քաղքին կրմօ
 տիկնային կրպարպէին: Ասանկ վարպետու
 թէնսով հնարքներով մօտիկնալով հեռնա
 լով շատ մնաս տրվաւ քաղքին՝ որ առջին
 ներէն մէկը չէր մտածած չէր ըրած, անան
 կով մեծ անուն հանեց էմօն ինչպան ին
 կիլիզնէրու մէջ. նոր հավան թօփուաւ թա
 փել տրվերէր խիստ մեծ՝ որ շատ հեռու
 կրնետէր, շուշա քաղաքը անանկ ավրեց
 որ՝ ցամաքը զօրք հանելով մէջը պիտոր
 մտնար, բայց ան ատենը սաստիկ ժանտախտ
 մէջը ընկած ըլլալով ետ կեցաւ:

Էմօն 1785 կօլէթթային առջին ըլլալով
 թուղթ գրեց պէյին յորդորելով որ՝ պա-
 րապ տեղը չիտանջըլին խաղաղուի ընեն ,
 պէյը հաւնեցաւ խաղաղուի ընելու միայն
 իրեն հետ , բայց էմօն հասկըցուց որ՝ խա-
 ղաղութէ թէու թինէրը ընդունելու՝ պէտք
 էր որ վենետիկի ատեանը որոշէ , անոր հա-
 մար զինագուլ (միւթարէքէ) ըրին 40 .
 օրվան : Սէնետիկի ատեանը աս թէու թիրը
 դրավ որ՝ թունուզը աս պատերազմին ամ-
 մէն խարճը վճարէ , վենետիկնալ ասկէց
 ետքը տարեկան տուրքը թունուզին չիվը-
 ճարէ . թունուզը աս թէու թինէրս յանձ
 չառնելով ծեծը չիդագրեցաւ , էմօն 1786
 ըսֆաքս ու պիղէրթա քաղքընէրը կործա-
 նեց : 1789 ուէնեէուի գուքսը մեռաւ , անոր
 տեղը մարտի 9 նստաւ լուտովիքոս մանին
 բարեպաշտ մարդ , որ եղավ վերջի գուքսը
 ինչպէս որ ետքը ունինք պատմելու , բայց
 թունուզին ծեծը միշտ կըքշէր , միայն ա-
 տեն ատեն զինագուլ ընելով կըդագրէր ,
 երբոր 1790 մենք զանթա գացինք , հոն
 գտանք էմօն 6 մեծ նաւերով կեցած , մնա-
 ցածնէրը մալթա կըսպասէին , որոնք ամ-

մէնը մէկ տեղ 30 նաւու չափ կային :

Իդալիայի տերութիւնէրը 1791 հասկընա-
 լով ֆրանսոզին պատերազմը՝ մէկ կաս մը
 ուզեցին մէջէրնին ընելու . վենետիկը աս
 աւաջարկութիւն չընդունեց , միայն իր նա-
 ւէրը ճերմակ ծովին մէջը պահեց աւելի իր
 չէզոքութիւնը պահել տալու վախընելու
 համար , չըլլայ որ մոսկովի ու տաճկի մէջ

Տե՛ծ ըլլալով՝ իր երկիրնէրուն վրայ յար-
 ձրկին , անոր համար լսելով որ մոսկովի
 նաւէր պիտոր Գան ճերմակ ծովը՝ վենետի-
 կը շատցուց իր նաւէրը : Աս բանս ուրիշ ամ-
 մէն տէրուէցալ օգտակար եղավ , որ պար-
 պարընէրուն ծովասպատակնէրը էմօին
 նաւերէն վախնալով դուրս չէին կրնար ել-
 լալ , վաճառականի նաւէրը համարձակ կը
 պըտըտէին :

Բայց էմօն 1792 մեռաւ մալթայի մէջ ,
 մալթացիք իրենց մեծ համարումն որ ու-
 նէին աս քաջունակ զօրագլխին վրայ ցը-
 ցուցին իրեն թաղման ատենը . ցամաքէն
 ինչվան նաւը սալէրու վրայ ծովի մէջ
 ճամփայ շինեցին , իր մարմինը նաւէն առին
 ամմէն զինուորնէրով հազարապետնէրով
 մենծէրով , ամմէն քահանայնէրով թափօր
 ելլալով եկեղեցին բերին , տօնի պէս քաղ-
 քին խանութնէրնալ գոցել տըվին , ամ-
 մէն աղքատաց ողորմուի բաժնեցին : Ա ե-
 նետիկի տէրութինալ հրաման գրեց սիր-
 տը միայն մալթա թաղելով մարմինը զմուել
 վենետիկ բերել տըվալ պէյլիկ նաւով մը
 որ բոլորովին սև էր դունաւորած , վենե-
 տիկ քաղքին մէջնալ անանկ մեծ հանդի-
 սով ամմէն զինուորական կարգով ծովու
 ցամաքի՝ վենետիկցիի ու խրվաթի զինուո-
 րաց բազմութիւն , եղբայրութեց ու քահա-
 նայից ընկերութիւն , նք մարկոսի եղբայրու-
 թէ տեղէն մարմինը առին ուր զարդար-
 ված դըրվածէր , բերին իրեն հօրենական
 գերեզմանին մէջ թաղեցին , որ անձամբնայ

Ճառայից եկեղեցին է : Շատ տերուհներ մանաւանդ ինկիլիզը ասոր վրայ գովասանք տրվին իր քաջուէր ու խելքին համար ծովային պատերազմի մէջ . վէնետիկի տերու . թինալ իր արձանը մէրմէռէ շինել տալով անուանի քանօվա վարպետին թերսանէն դրավ , անանկ վարպետաբան՝ որ գիտես թէ կենդանի է :

Քօնտուլմէռ ասպետը էմօին տեղը զօրա գլուխ եղավ , նոյն տարին հաշտութիւն ըրավ թունուզի օճախին հետ , կրսէն որ աւելի էմօին յորդորելովն էր որ վէնետիկի տերուհը թունուզի դէմ ծեծ բացաւ , ասչափ տարի նաւատորմիղ (տօնանմա) ոտքի վրայ պահեց , որուն համար թէպէտ էմօն ամմէն տարի կըխարճէր ինչ որ իրեն տարեկան եկամուտ ունէր , բայց ասանկալ ըլլալով տերութէ շատ փաստ տրվավ , անոր համար հիմա ծանր խարճէրով հաշտութիւննելով գոցեց : Տերութիւն խազնան անանկ պարպրված էր որ՝ բան մը չունէր երբոր աւելի հարկաւոր բանէր ելան Քըրանսզի դիացէն : Արկու փորձանքալ պատահեցաւ աս ծեծին ատենը բուն վէնետիկ քաղքին մէջը , որ շատ փաստ տրվավ խարճէրու , ոմանքալ թշնամիներէն եղած կարծեցին . մէկը աս եղավ որ՝ ծեծին առջի տարիները երկու նոր մեծ Ֆուխաթա շինած թերսանէն դուրս հանեցին , մէկ Ֆուխաթան յանկարծ գիշերվան մէջ բըռնկեցաւ , իր ամմէն բանովը ամբողջ երեցաւ , ուրիշ վաճառականի նաւ մընալ

բուրնկցուց, մէկալ փորձանքը ծեծին ետ-
քի տարինէրը եղավ. նք նիկողոս ըսված
բերդը քեավկիր տան մը մէջ Ֆիշէնկնէք
շինված պատրաստըված կային խուճպարա-
նէրու համար՝ նաւ բուրնկցընելու համար
զանազան վարպետաբան հնարքներ, ամ-
մէննալ պարուձով շատ խարճով շինված,
աս տունս օր մը յանկարծ բուսկեցաւ, մեր
աչքին առջին տեսանք ան տանը տանիքը
որ փայտաշէն էր, մէկ թեթեւ շափղայի մը
պէս ամբողջ երկինքը հանեց պարուձը
սոսկալի գոռալով, կանանչ ու ճերմակ
զարհուրելի մուխով, շատ հեռու տեղ ծո-
վին մէջը ձգեց, քաղքին մէջի եղած տու-
նէրուն ճամէրնալ շատը վար առաւ թըն-
տալէն. ան տուննալ երիւ սկսաւ՝ որուն
վարի խաթը վառ-իլնէրով պարուձ պահ-
ված ըլլալով՝ ամմէն քաղաքը վախի մէջ
ձգեց. դատաւորնէրը ճար չի գտնալով՝ քա-
նի պատժաւորնէր որ կային չէքտիրին դըր-
ված, ամմէնունալ աղատուձի խոստացան՝
թէ որ ան մահսէնը պարպեն պարուձնէրը
խալըսցընեն, ասոնք յուսահատված մար-
դիկ ըլլալով թէպէտ վերի խաթը կերէր,
իրենք համարձակեցան մտան վարի խաթը,
վառ-իլնէրը դլտորելով մէկմէկու տալով
ամմէննալ դուրս հանեցին, քաղաքը մեծ
փորձանքէ խալըսցուցին :

1787ին եղավ որ վէնետիկին տերուիը տօ-
նէրուն շատը վերցուց, համրանքնին քիչ-
ցուց :

Սպանիային հարգաւորութիւնները, 7. հարուստի
հազը .

1787—1788 :

Ինկ տարի մը կար՝ որ սաստիկ պատե-
րազմունքը դադրած ըլլալով խաղաղութի
կը վայելէին եւրոպացիք՝ ամենէն աւելի
սպանիան, որ 7. կարողութիւն կառավարու-
թիւր ան բարիքը կը վայելէր՝ ինչ որ խա-
ղաղութիւր ու վաճառականութիւր կը բերէ,
բայց որովհետեւ սպանիայի ազգը ընդ հան-
րապէս չունին ճարտարութիւն, չեն մտմտար
աշխատելու որ ապրին, անկից շատ մու-
րացկան աղքատներ կը գտնուէին՝ որ աս
դիս ան դին կը պտըտէին մուրալու աս-
րուստ գտնալու ուրիշներուն վրայ ծան-
րընալով. ասով կը զրկէին ողորմութիւն ան
մարդիկը՝ որ իրաւ աղքատ էին : Ըս բա-
նիս վրայ շատ ցաւելով 7. կարողութիւն
գաւորը մտածեց. ամեն սպանիայի երկրի
մէջ քանի եպիսկոպոսական թեմ կան՝ մէյ
մէկ կամ աւելի հոգետուններ շինել տը-
վալ, Ողորմութիւն տուններ անուանելով,
որպէս զի աղքատները հոն կերակրուին,
հոն գտնան հոգևոր և մարմնաւոր պիտոյ-
քը. աս հոգետուններուն համար եկամուտ
կապեց թագաւորական խազնայէն, բայց
որովհետեւ չէր օգտէր՝ ուզեց որ եկեղեցա-
կանքալ իրենց եկամուտներէն կտոր մը
օգնութիւն տան : Ըս բանիս համար գրեց

սրբազան սլապին որ էր զ. պիոս, անկէց
 հրաման բերել տրվավ. ետքը իր հրամայա-
 կան թուղթնալ հանեց ամմէն եպիսկոպոս-
 ներուն 1787 դեկտ. 8. թէ ամմէն եկեղե-
 ցականք որ տարեկան եկամուտ մը կը քա-
 շեն, ան եկամուտէն տուրք տան վերոյի-
 շեալ հոգետուններուն :

Արդուս աս բաներս կարգաւորելու ատե-
 նը հասկըցաւ որ՝ իր տղան որ էր նաբօլիի
 թագաւորը զ. Ֆերտինանտոս, հակաճա-
 ուռի ունէր հռոմայու հետ Վինէա տուր-
 քին վրայօք, ինչպէս որ ինքնալ ատենօք
 երկու անգամ 1739, 1753 (կամ 1754)
 կախ թողուցերէր ան տուրքը, հիմա ջա-
 նաց աս վիճմունքին մէջը գտնալ, բայց ա-
 տեն չունեցաւ ձախորդ դիպուածներու
 համար, վասն զի ծաղկի հիւանդութիւն որ
 շատ մարդ տարերէ պօրպօնեան տունէն՝
 (որ Ֆրանսայի ու սպանիայի թագաւորին
 տունն է), հիմալ հոկտեմ. մէջ թա-
 գաւորին տղին գարրիէլին կնիկը՝ որ կըս-
 վէր մարիանա վիքոօուիա պրականցեան,
 տղաբերքէն ետեւ ծաղկէն բռնըվեցաւ մե-
 ուաւ 20 տարվան 1788 նոյեմբ. 1. նոր
 ծնած տղանալ անոր ետեւէն մեուաւ. իսկ
 նոյեմբ. 23 գարրիէլ իր էրիկնալ մե-
 ուաւ : Այլափ կսկիծ մէկ ամսըվան մը մէջ
 իրարու ետեւ քաշելով կարողոս զ. չիդի-
 մացաւ ինքնալ ան տարվանը մէջ 1788
 դեկտ. 14 մեուաւ 73 տարվան, բարի օրի-
 նակ թողլով քրիստոնէութե :
 Աեռնելէն առաջ իրեննէրուն մանաւանդ

իր յաջորդին ապսպրելով՝ կտակի պէս թու
ղուց որ կրօնասէր ըլլան իրենց առջիննէ-
րուն պէս, միաբան ըլլան եղբարնէրը մէկ
մէկու հետ, և ժողովրդեան վրայ սէր ու-
նենան: Արքունեաց մէջի եղողնէրուն կտա-
կով բան թողուց, իր յաջորդին յանձնեց
որպէս զի հոգ տանի պզտիկ տղին պե-
տրոսի՝ որ մեռնող գաբրիէլին զաւակն
էր, ապսպրեց որ ճիշդ պահեն դաշնա-
գրութեան թէութիւննէրը որ փօրթու-
կալին հետ ըրերէին, երբոր անոր դուստ-
րը վերոյիշեալ մարիամ վիքոսիա ըս-
վածը գաբրիէլին հետ պսակվելով խնամի
եղան:

ԱՐՐՐՐԻ ՀԱՐՈՂԱԿԻ ԲՆՈՒԹԷՐ, ՆՐՐՐՐԻ ՀԱՐՈՂԱԿԻ
յԱՋՐԴԵԼԸ:

1789:

Արոլոս Դ. կերևար մէկ ահաբեղի դաժան
մարդ մը սպանիայի ազգին կրթուէր կեօ-
րէ, բայց ինքը մէկ ողորմած սիրտ մը ու-
նէր ազնուագութ որ միշտ պատրաստ էր
էր առատաձեռնութիւնէն՝ ուր որ արդա-
րուէ դէմ փնաս մը չէր բերէր, որով շատ
սիրելի էր եղած ժողովրդեան. խելացի
ըլլալով սորված էր լատին՝ դալեան՝ ու
ֆրանսոցի լեզուն, թէպէտ իր խօրածան
շատը քասթիլեան լեզուով կրնէր: Ահա-
նձն ըլլալով բոլոր իր թագաւորութե-
ատենը յաջողութե ու ձախորդութե մէջ

միշտ անշփոթ միակերպ մնաց մանաւանդ պատերազմի ձախորդութեց մէջը, որոնք կը հասկընար որ իր պաշտօնատէրէրուն անհաւատարմութիւնը ու պակասութիւնը կը լլային : Թէպէտ քաջասիրտ էր երկու անգամ ինքը անձամբ պատերազմ մտաւ վտանգի մէջ դնելով զինքը, բայց պատերազմի դէմ էր, սրտցաւ ըլլալով կրօնէքընար ուրիշնէրուն արիւնը թափել, արդարուն դէմ բան չընելու համար խղճմտանք կընէր : Աղէկ կը մտմտար որ՝ իր ժողովրդեան հանդրստութիւնը չըլլար պատերազմելով, իրեն նման մարդէրը ջարդելով, հապա կը լլայ արդար դատաստան տեսնալով, գետինը բանեցընելով աղէկ վարուցան ընելով, ժողովուրդը դատարկ չի պահելով, քանքարաւորնէրուն արուեստաւորնէրուն սիրտ տալով, հնարագէտնէրը (մարիֆէթլի նէրը) առաջ բերելով, բարի վարք ունեցող մարդիկը պատուելով : Ար խօսքին վրայ կեցող ըլլալով՝ միշտ հաստատուն պահեց իր խօսք տրվածը մանաւանդ Ֆրանսային հետ՝ թէև իր շահուն վրաս ըլլար :

Արուց դիացէն բարի օրինակ մընէր ժողովրդեան, խղճմտանքաւոր, ժուժկալ, կանոնաւորեալ, մէկ մոլուժի մը՝ անկարգ բան մը չէր երեւնար վրան՝ բայց եթէ սատիկ սէրը որսորդութե (ալի) վրայ, աս բանս թէպէտ խիստ յաճախ կընէր, բայց վրաս մը չէր իտար իր կառավարութիւնը ինչու որ՝ ոչ երբէք կը պակսէր խորհուրդի

մէջ գտնելիլ իր երկան թագաւորութե
 ատենը՝ որ 24 տարի նաբօլիի վրայ թագա
 ւորեց, 29 տարի սպանիայի վրայ: Հա
 ւաաքի բաներուն ջատագով եղավ, հռո
 մայ քահանայապետը պատուօղ, թէպէտ
 և երբեմն հռոմայու հետ վիճմունք ունե
 ցաւ իր թագաւորութե իրաւունքը պաշտ
 պանելու համար ինչպէս որ կրկարծէր,
 հռոմայու աթոռնալ միշտ իբրև յարգելի
 որդի ունեցաւ զինքը: Այրբոր մէկ պաշ
 տօնատէր մը կրնտրէր կրդներ՝ անիկայ
 փոխելու կրդժուարէր, վախնալով որ՝ ա
 ւելի գէշի մը չիհանգիպի, ընտանի ու ներ
 քին բարեկամութի ունեցաւ միշտ լօսսա
 տայի դքսին հետ, անոր ձեռքովը իժիր
 կրթղթակցէր դանուչ չի մառքէզին հետ՝
 որ նաբօլիի վէզիր էր թողուցէր: Ախտ
 կրսիրէր նաբօլի քաղաքը՝ որուն մէջը ան
 ցուց իր առջի երիտասարդութե օրէրը, և
 որուն վրայ միշտ խօսք կրբանար, գիտնա
 լով որ ամմէն քաղքըցիքալ զինքը կրյի
 շէին, որովհետև ատեն մը երեսէ ձգած
 քաղաք ըլլալով՝ իր ատենը դարձաւ մէկ
 նոր տեղ մը եղավ նաբօլի՝ ինչպէս որ ա
 ռաջները պատմած ենք: Ա երջապէս մէկ
 թագաւոր մը եղավ որուն ատենը սպա
 նիան մեծցաւ կարողութի, հարստութի,
 ու վաճառականութի, օտար ազգաց առ
 ջինալ համարում ունեցաւ:

Ասոր մեռնելէն ետև ի. կարոլոս իր տղան
 նստաւ սովորական հանգիսով, բայց առանց
 թագադրութե. որովհետև սպանիա սովը

ըուլթի չիկայ Թագաւորին Թագ դնելու .
 ասիկայ նաբօլի էր ծնած 1748 նոյեմ . 12 .
 ինչ որ իր հայրը կարգաւորած էր՝ ամմէն
 բանը իր հօրը ըրածին պէս Թողուց , միայն
 Թէ մէկ քանի նաւ մը խրկեց որ՝ նաբօլիի
 Թագաւորին յանձնեն ամմէն պատկերնէ-
 ըր՝ զարդէրը՝ ու պատուական բանէրը , ու
 ըոնցմով մեռնող Թագաւորը որոշերէր քա-
 ղէրդա մեծաշէն բերդը զարդարելու : Այս
 կից շուտ մը ձան ելավ հռոմայու մէջ Թէ՛
 ան մտքով ասոնք հոն խրկեց որ՝ իր եղբայ-
 րը բռնադատվի ան երկիրնէրը տալու , ու
 ըովհետեւ ինքը Թախտը նստաւ խօսք տա-
 լով հռոմայու՝ Թէ նորէն սահմանէ Վի-
 նէա ըսված ընծային հանդէսը՝ որ խափան
 ված էր ինչպէս որ վերը յիշեցինք . իրաւ
 է որ քանի մը բանի համար քիչ մը պա-
 ղուծիւն ընկած էր նաբօլիի ու սպանիայի
 մէջ՝ ան պաղուիր առիթ տրվավ աս խօս-
 քէրս ձանձրնելու՝ բայց սուտ են : Աոր
 Թագաւորը ՚ք . կարողոս ամմէն բանը իր
 հօրը ուղածին կեօրէ կարգաւորելով ջա-
 նաց որ՝ ծեծին կրակնալ մարել տայ , ու
 զէց միջնորդ ըլլալ իրեք տերուծեց մէջ որ
 հաշտեցրնէ :

Ինկիլիզին Վրայի Եղածները .

1788 :

Վերիկայի պատերազմին ատենը ինկիլիզին վաճառականութիւր շատ նեղուի քաշեց , որովհետև Ֆրանսոզները առերէին ափրիկէին ան քիթը՝ որ կըսվի Հրուանդան բարեյուսոյ , անոր համար ինկիլիզին նաւերը որ հինտիստան կերթային՝ չէին կրնար ան երկան ճանապարհորդուէր մէջ հոն հանդիպիլ՝ հանդիստ առնել՝ իրենց պէտքի բաները առնել , ինչպէս որ առաջ կրնէին թէ իրենք՝ և թէ ուրիշ ամմէն եւրոպացոց նաւերը : Եւսոր ճարը գտնաւու համար 1788 ինկիլիզները մտածեցին՝ ան դիէրը մէկ նոր տեղ մը սահմանեցին՝ նոր ժողովուրդ բերելով , որ ըսվեցաւ Պօգանի պայ , աս տեղը շուտ մը սկսաւ շիննալ ծաղկիլ բազմանալ , միայն թէ մէջինները ամմէննալ յանցաւոր մարդերէն էին , որոնք հոն խրկեցին գետինը բանեցընելու : Եւ տարի քննուի ընել սկսան ինկիլդէուռա Հասդինկ անուն պէնկալայի կառավարին վրայ՝ որուն համար ամմէննալ ծանր ամբաստանութի կրնէին՝ թէ հինտիստան եղած իտեղձ՝ ժողովրդեան վրայ շատ անիրաւութի կրբանեցընէր , անոնց ուճայնէրուն կամ իշխաններուն վրայ շատ բարբարոսութի կրնէր : Եւսոր քննուիը քրէական յանցանքի վրայօք շատ տարի քշեց ,

բայց բան մը չեղավ. մեծ յանցաւորները
մեծաւ պաշտպան կունենան իրենց :

Մնկիլիզին թագաւորը Դ. գէորգ՝ առաջ
մէկ խորունկ մաղձոտութե մը մէջ էր ըն-
կած, կամաց կամաց անանկ եկավ որ՝ աս
տարի խելքին փնաս եկավ, փախուց, տա-
քութիւնաւ վրայէն չէր պակսէր. հարկ ե-
ղավ տեղը կառավար մը դնել, բայց ասոր
վրայ շատ վիճմունք եղավ, որովհետե օ-
րէնք էր որ առանց թագաւորին հաւանու-
թեքը չլլլովի : Մնուանի բիզդը իր խոհեմ
կենցաղակրթութիւնը ուզեց բանը երկնցընել,
բայց բժիշկները յուսահատեցնելով շատ
վիճմունքէն ետե՝ կալէսի իշխանը որ թա-
գաւորին տղան էր, կառավար դրին իշխա-
նութիւնը չափաւորելով. զարմանքը աս ե-
ղավ որ՝ վճիւրը եղածին պէս թագաւոր-
նաւ կատարեալ ընդնացաւ ճարպիկ բժրջ-
կին ձեռքովը որ կրսովէր Ս իլլիս, ասանկ
բանի մէջ խիստ վարպետ :

Մտարի յունվ. 31 կարօլոս եգուարդ
ըսովարդեան մեռաւ 67 տարւան հռոմայու
մէջ, ուր շատոնցվընէ փախած տրտմութե
ու մաղձոտութե կրնստէր, հետեւեալ տա-
րինաւ 1789 իր դուստրը քառլօդդա ալ-
պանիոյ դքսուհին մեռաւ 37 տարւան պօ-
լօնիա քաղաքը երկան հիւանդութի քա-
շելով :

Տեղ րեղ կրահ կըլլայ , րաճիկը Ռադիային պողաղը
Տրինալով առաջ կերնայ .

1788 :

Աս ատեններս նեմցիի զօրաց մէջը ամմէն
օր հաղարներով մեռնիլ կըհանդիպէր տեն
դէն ու տիրացաւէն , այսինքն սըթմայէն ու
հիւմմայէն . առդիս անդինալ իրեք պատե
րազմօղ տերութեց մէջ կրակներ հանդի
պեցան , երբոր զէմլին էր յովսեփ կայսրը
հոն բանակը եկավ եղբօրորդին Փրանչիս
քոս ⁽¹⁾ , իր հարսնիքէն քանի մը օր ետե , ի
րենց զէմլին եղած ատեննին կրակ եղավ շատ
տուն երվեցավ , ասանկալ վերին մաճառ
քին մէջ էբերիէս սեղը կրակ եղավ . մոս
կովի մէջալ նօվօկօռօտ քաղաքը մեծ մասը
երվեցավ . պօսնային սերայ ըսված քաղաք
նալ մեծ կրակ ըլլալով 10 հաղար տուն ու
խանութ երվեցան :

Յովսեփ կայսրը իրեք ամսի չափ զէմլինին
մէջ փնալէն ետե դադրեցուց պատերազմի
լը , փոխել մտածելով իրենց ծեծկրվելու
կերպը . առաջ նեմցիի զօրապետները կար
ծեցին որ քիչ զօրքով կըլլայ տաճկին դէմ
դնել , հերիք է ըսին սահմանակից տեղերը

(1) Աս Փրանչիքոս հիմակվան կայսրն է , ան ատե
նը հարսնիք ընելով մոսկովի թագուհիին ք . կատա
րինէին պզտիկ քոյրը առած էր , որ կըսվէր եղիսա
բեթ վիդգէմպերկ ըսգուդկարտեան :

կարգաւ զինուոր կեցընել՝ որ Թշնամին ուս-
կից որ գար՝ հոն շուտ մը ժողովուրդով հա-
լածեն, Թող չիտան, բայց աս դիրքս կենա-
լով զէմլինին դիէրը՝ առջի բերանը նեմ-
ցէնէրէն շատ մարդ կոտորեցին տաճկընէ-
րը, ետքը սկսան խուճը խուճը կենալ նեմ-
ցէին զօրքը, բայց շատ տեղալ անհոգ եղան
զօրք դնելու ամբըցնելու՝ տկար սեպելով
տաճիկը, հիմա յովսէփ կայսրը տաճկին ու-
ժը աղէկ մը հասկընալով ծեծը դադրեցուց,
նոր զօրք հրամեց բերելու աւսդրիայէն ու
պօէմիայէն, որպէս զի ատեն ունենայ ան
զօրքերով մէկ նոր կերպ մը կարգաւորելու։
Եւ Թէպէտ իրեն խրատ տրվին որ՝ մէկ հա-
տիկ միջոց յաղթելու ան էր որ՝ մէկէն շատ
զօրքով ինքը Թշնամիի վրայ վազէ, բայց
կրսեն որ յովսէփ կայսրը վախցաւ իր զօր-
քը վտանգի մէջ դնել ան ատենը՝ որ շվէտը
մոսկովին դէմ էր էլած։

Ես պատճառովալ եղաւ որ նեմցէնէրը մոս-
կովին բանակին հետ չիկրցան միանալ, ինչ
պէս որ կրբաղձային, ինչու որ մոսկովի բա-
նակին շատ զօրքը բեդրօպուրկէն կանչե-
ցին որ՝ Ֆինլանտիային սահմանները պաշտ
պանեն շվէտին դէմ։ Իսկ տաճկին բանա-
կը սրբֆին ամմէն երկիրը անցնելով իր ա-
ռաջապահ զօրքը խրկեց ինչվան մօտիկ
պէլիդրատի, պէլիդրատին մէջի զօրքնալ
շատցուց, բայց բանակին մէջնալ շատ ժան-
տախտ ընկաւ, որ մէկ դիացէն տաճկին ա-
ղէկ եղաւ, ինչու որ Թշնամիները կրվախ-
նային ծեծ ընելու, չըլլայ որ իրենքալ պըշ-

տըկվին : Ա կզիրը շատ զօրքով դմրշվարին վրայ խրկեց վէտինի փաշան , ասոնք դունան անյնելով նոր օրշովայէն անցան մտան դմրշվարին պաննադը , որ մաճառին ետքի դաւառն է արևելեան դին ⁽¹⁾ , տաճկնէրուն կտրիճ զօրքը հին օրշովա կամ խրշովա ըսված բերդը առին , անկից դացին ըսդուբ բանէք և ուրիշ տեղվանք առին : Այտիային կիրճը (պօղազը) անցնելու պզտիկ բերդ մը կար որ թող չէր իտար , փաշան շատ ոսկի ետևէ ետև ցանելով գետինը ա նանկ լեռան գլուխը ելավ , իր ետևէնալ կըյորդորէրամմէնալ թօփմը վեր քաշելու , իրեն յորդորնէրը՝ ըստըկին սէրը՝ մէկ տեղ ժողվել տրվավ անչափ բազմու թիւն զօրաց որ՝ ամմէնը մէկ սիրտ եղած ամմէն ուժով թօփը քաշեցին , անանկ վեր անելանելի տեղ հանեցին , ուր որ ամենևին ճամփայ չիկար , և ուր որ նեմցէնէրը չէին կարծէր ամմէնևին թէ հոն թօփ կարենան հանել : Այ թօփս վեր հանելէն ետև տաճկնէրը՝ սկսան ան պզտիկ բերդը թօփոտել՝ որ շուտ մը անձնատուր եղավ , որովհետև շատ վարը շինված ըլլալով չէր կրնար ամենևին դէմ դնել : Տաճկին զօրացը մէջ շատ արի կտրիճնէր կան՝ որոնք թէ որ գլուխ եղօղը գիտնայ աղէկ կառավարել , իրենքալ աղէկ հնազանդութիւն ունենան , չիկարծած

(1) զ. Կարողոս կայսրը պզտիկ ուլահը Ի. սուլդան մէհէմմէտին տալէն ետև՝ ամմէն աս գաւառը բաց թողուցած էր :

քաջագործութիւնէր կրնեն : Պատերազմին մէջ Եղօղնէրը մեզի կը պատմէին որ՝ աս բերդս առնելէն ետեւ՝ մէատիային պօղազը իրենց առջին բացվեցաւ , ամմէն տաճկին գօրքը ներս գիմեցին , 18 գեղվանք որ ան դաշտին մէջը կային՝ ամմէննալ մէջի բնակիչներով առին :

Տաճիկը Դոհային գետեկերէջ իշխարի , նեմյէնէրէն շար Ֆարդ իշխարէ :

1788 :

Երբոր յովսեփ կայսրը լսեց որ՝ տաճիկը նեմյէին երկիրը մտերէ՝ շուտ մը իր ընտիր գօրքը առնելով՝ ու լասշի մառեշալը՝ վազեց հոն եկավ , կէմմինկէն գօրասպետը 25 հազարով զէմլինի մէջ թողուց , տեսնալով որ՝ տաճիկը միատիա առերէր , գարանշէպէշ եղած գօրքը ետ քաշեց , 60 հազար գօրքով լուղուշը կամ լուկօսը կեցաւ , որ տաճկին չիթողու դըմըշվարը պաշարելու , և զիէպն պիրկն կամ դրանսիլվանսիային մէջը վազելու , ինչպէս որ միտք ունէին տաճկրնէրը , բայց շատ ցաւեցաւ երբոր լսեց որ բաբիւլ լա նեմյէ գօրասպետը նեղը իյնալով թողուց լասսամառ տեղը , ան ատենը տաճկրնէրը բազմութ ցրուեցան դունային գետեզերքը կերակուր գտնալու համար : Վէզիրնալ բանակը (օւտուն) գետին քովը բերաւ , 26 հազար հոգի հին օրշօվային տակը թողուց , 10 հազար սևեռին աշտարակին

մօտիկ . 30 հազարալ քռայովին դին թէրց-
պուռկ կիրճին (պողաղին) մօտիկ : Մեպտ-
սկիզբը տաճիկը ջանաց վանդէուսէպէն զօ-
րապետին կռնակը անցնիլ , բայց ասիկայ
ամմէն տեղ իր դէմը բերաւ թող չիտըվալ ,
տաճիկը ջանացալ որ՝ կայսեր բանակին հետ
հաղորդակցութիւր կտրէ՝ անալ չիյաջողե-
ցաւ , բայց տաճիկը շատ զօրք ջարդեց նեմ-
ցենէրէն , շատ բան առաւ , 20ալ թօփ , ա-
նոր համար լիպիէն զօրապետը շատ նեմցէի
գեղ ձեռքովը երեց , որ տաճիկը հոն չիկըր-
նայ կենալ :

Մեպտեմ . 21 . շատ յաջողութի եղաւ տաճ-
կին , շատ վտանգաւոր գիշեր եղաւ նեմցէ-
նէրուն համար , լուղուշին քովէրը հազար
առապայի չափ պաշար (զահրէ) կերթար
նեմցէին , ասոնք տաճկին ձեռքը ձգելու
համար՝ ուլահցի զօրքը որ նեմցէի հետ էին՝
դաւաճանութի ընելով գիշերանց աղաղակ
վերուցին որ տաճկընէրը կուգան զենքեր-
նիդ առէք , աս ձայնս ամմէնալ վախցուց
չփոթութէ մէջ ձգեց , արտորալէն ձիերը
առապաներէն քակեցին արձըկեցին , անան-
կով փախչիլ սկսան , ամմէն բան տաճկին
ձեռքը թողլով : Բսինալ որ՝ աս փախչօղ-
նէրը նեմցէի բանակի մէջնալ շփոթութիւն
բերելով գիշերանց՝ անոնքալ սկսան փախ-
չիլ , մութ ըլլալով անանկ կարծեցին որ
ետեի եկօղնէրը տաճկընէրն են՝ մէկզմէկ
թշնամի սեպելով իրար զիրար կըզարնէին
չփոթելէն . ասոնց մէջն էր նաև յով-
սեփ կայսրը՝ որ արտորնօք փախչելով 5 ժա-

մու չափ ձիկն վար ընկաւ , կուրծքը քարին
զարկաւ , ուրիշ ձիու մը վրայ հեծնելով հա-
զիւ փախաւ , աս գիշերվան դիպուածը ի-
րեն ողջութեան շատ փնաս տալով սկսաւ
արիւն թքնել , իր մահը արտորցուց :

Վիշ մը ետքը երբոր նեմցէնէրը թէմէշ
գետը կանցնէին՝ որոնց առաջնորդ նոյն
սէս ուլահցիներ էին , տաճկընէրը ծուռ
(սառփ) ճամփով մը երկրագործ նեմցէ-
նէրուն վրայ հասան , խեղճէրը ջարդեցին ,
նաև հուսսառ զօրքերէն շատը՝ որ ան գա-
ւառնէրը պահելու համար կեցերէին : Մ-
սանկ ջարդ ըրաւ տաճիկը քէռնիա , բան-
ջօվա , վիբալանքա , և ուրիշ տեղվանք՝ որ
վարի պաննադի մէջն էին , առանց բաւա-
կան զօրքի թողուցերէին , հոն գտնված հիւ-
ւանդանոցները՝ մահասէնները՝ հիւանդ ու
անզէն զօրքերը կոտորեցին , միայն թէ ինչ
վան թէմէշ ու մարօշ գետը կրցան վա-
զել , նեմցէն զինքը ապահովցուց իր զօրքը
ժողվելով գարանշէպէշին ու դմըշվարին
մէջ տեղը նստեցընելով :

Տաճիկն ջանքը դրանսիւլանիա հոնաւա , բանաէնե-
րուն քաշվելը .

1788 :

Յովսէփ կայսրը երկրորդ անգամ սաստիկ
տենդ (սթմա) ունեցաւ , հազով արիւն
թքնելով , բայց նորէն զինքը զօրացուց ,
տաճկընէրը շէին դադրէր մէկ քանի նեղ

կիրճերէն (սօղազներէն) կըջանային դրան սիւլվանիա կամ զիէպն պիրկն անցնիլ, հոն եղած մաճառ զօրքէրը կոտորտելով, որոնց մէջն էր նաև թուռաթթի քաջ գնդապետը, բայց մառէշալ Փապրիս կոմսը որ ի դալացի էր ազգով՝ թող չիտրվավ առաջ խաղալ, ասանկալ տաճկընէրը ռօքուռ տեղը վրայ վազելով նեմցէնէրէն որը կոտորտեցին, որը փախուցին, ինչպէս որ մուլլէնս հովտին (տէրէին) մէջը մէկ քանի բարձր տեղէր առին, պապա տաղիէն մերիսքօնի դին եկան : Բայց ուրիշ տեղերէն հալածվեցան, մանաւանդ տէմիր խափուն ու հարդէյէկ հովտին մէջը՝ ուր տեղ որ երկու Փապրիս զօրապետները դէմ կըդնէին, իսկ երբոր ըսբլէնի նեմցէ զօրապետը ճամփայ բացաւ միացուց իր բանակը էլմբդ մօսկով զօրապետին բանակին հետ՝ որ ինչվան օքանին մօտիկ եկերէր, ան ատենը դրանս սիւլվանիա վազելու ճամփան գոյվեցաւ տաճկին առջին . քօպուռկ իշխաննալ զօրացուց վանդէրսլէպէնը :

Հոկտեմ. 5. քրմբըլունկէն ուզեցին տաճկընէրը վազել, բայց երբոր անալ չիյաջուցեցաւ՝ աս ամսուս մէջը բոլորովին դադրեցան դրանսիւլվանիա վազելէն, որ հարիւր տարվընէ վեր չէր տեսած ասանկ զօրաւոր թշնամի : Տաճիկը թէպէտ նեմցէին շատ տեղվանքներուն վնաս տրվերէր, բայց մէկ քաղաք մը կամ բերդ մը չէր ունեցած իր ձեռքը՝ որ հոն ձմերէ, իր բանակը ինչվան սեպտ . ետքը մէատիային հովիտը կեցերէր,

երբոր լեռները ձիւն սկսաւ գալ, դաշտա-
վայր տեղվանքը անձրև, ան պղտոր ջուրէ-
րը գէշ օդը աւելի շատցուցին ժանտախտը
բանակին մէջ, և որովհետև անատօլցիք
չեն կրնար չիտորված բաներնին քաշել, շա-
տը կրճգէին կրփախչէին: Այ տեսնալով
վէզիրը բանակը անկէց վերցուց պելիզրատ
տանելու համար, հոն թողլով սերապէր
փաշան. երբոր կայսրը իմացաւ տաճկին
բանակին ետ դառնալը, անալիը բանակը
վերցուց ետևնուն գնաց. վախնալով չըլլայ
որ զէմլինին վրայ երթան, կամ կէմմինկէն
զօրապետին վրայ վազեն, որ միայն 20 հա-
զար զօրքով ան տեղվանքն էր. իրեք օրվան
մէջ եկավ առջի տեղը բանակեցաւ:

Այ տեսնները նեմցէի զօրքը աղէկ կարգի
մէջ մտան, իրենց պաշարը (զահրէն) գրտ-
նալով, մանաւանդ երբոր քուաք զօրապե-
տը հոկտ. 24 վիբալանքան առավ, վան-
դերսլէպէն զօրապետնալ դուրս հանեց
տաճկրները մէատիայէն, քօռնիայէն, ու
հին օրշօվայէն, անանկ որ նոյեմբ, մէջ տա-
ճիկ չիմնաց պաննադը, որը ուլահ փախաւ,
որը սըռֆ: Այսմանցօք մառէշալնալ մոս-
կովին զօրքը առավ եաշ տարաւ:

Պօսնայի Դժէ Ծէծը վէշէն .

1788 :

Յուսեփ կայսրը խրվաթը ինի ու պօսնայի վրայ զօրագլուխ խրկեց պարոն գեդէօն լավտօնը շատ պատուով, հրամայելով որ իրեն կայսերական ձիերէն 20 ձի տան, և իրեն ամմէն գանձը բանան՝ որչափ որ ուզէ՝ առնէ . ասիկայ թէպէտ ամմէնէն վարպետ զօրապետ էր, բայց վեննայ թողուցած էր, իրեն նախանձօղները շատ ըլլալով՝ իր տը ված խորհուրդը մերժել տրվերէին յովսեփ կայսեր առջին : Ան ատենը լավտօն թէպէտ 73 տարվան ծեր էր՝ բայց սիրով հնազանդելով գնաց հոն, երբոր օգոստ . 16 բանակը հասաւ՝ ամմէն զօրք բարձր ձանով սկսան ուրախութիւնն ցրցընել, մտվընին գնելով որ՝ լավտօնին տակը իբր թէ պիտոր չի մեռնէին, ինչու որ՝ վարպետ ըլլալէն զատ, հօր պէս զօրքը կընայէր, սրբաւցաւ ու հոգացօղ ըլլալով :

() ր մը ետև իսկոյն իրեն արիութիւնը ձեռք առնելով ան ծերը՝ հրամայ տուպիցայի վրայ քալել, պօշնախները յարձըկեցան իրեն շինած պատնէշին (մէթերիզին) վրայ, բայց չիկրցան, լիճէն (կեօլէն) ուզեցին անցնիլ ինչպէս առաջ՝ բայց լավտօնը ութը թօփ դրած էր մէկ յարմար տեղ մը, անով անցնօղները ծեծել սկսաւ . ետևնինալ զօրք խրկեց՝ որով մեծ մասը կոտորտը վէ-

ցան իսկ բերդը չորս օր թօփոտելով ,
անձնատուր եղավ . տասն օրվան մէջ ամ-
մէն բան փոխվեցաւ , յայտնի եղավ որ ամ-
մէն գործքին աղէկու թիր կրկախվի գլխա-
ւորին աղէկ ըլլալէն : Վալտօնը ետքը նօ-
վի բերդը պաշարել տրվավ որ ուննա գե-
տին վրայ է , բայց մէջի պօշնախնէրը ա-
նանկ կտրիճ քաջ էին որ ինչ որ լավտօնը
ցորեկը կըքակէր , անոնք գիշերը կըչինէին .
ասոնց ծ հազար մարդ օգնու թի եկավ դը-
ռափնիքէն , անոնցմով ամսոյն 21 վրայ յար-
ձրկեցան իրեք անգամ , բայց ետ փախան ,
վասն զի լավտօն անանկ տեղվանք երկու
մարտկոցնէր (թապեանէր) շինել տրվերէր

պզտիկ թօփերով որ թող չէր իտար :

Հօկտեմ . 3 . նեմցէնէրը եկրորդ անգամ
փորձելով վրան ելլալով աշտարակ մը ա-
ռին անկից ետքը քաղաքը առին , ամմէն մէ-
ջի եղօղնէրը անփնաս պահելով ազատու թի
տրվավ լավտօնը , ձի առապայ տրվավ սուէ-
տօր խրկեց , որուն վրայ բնակիչքը շատ
չնորհակալ եղան իրեն : Ատքը կռատիշ-
քայի վրայ գնաց , բայց 1789 ձմեռը սաս-
տիկ ըլլալով լավտօն դադրեցաւ ծեծկը-
վելէն , իր զօրքը հոն թողուց ինքը գէմլին
գնաց որ կայսրը վեննա չիգացած հետը խօ-
րաթէ , մէկ նոր կարգի մը փոխէ պատե-
րազմին կերպը , որովհետեւ իրմէ առջիննէ-
րուն դրած կերպը չէր յարմարէր ամէնեւին
իրեն վարպետութեանը :

Սև ծովին դէմ ծեծելու, օդին առնելու.

1788 :

Տաճկին բանակին մէջը հիւլընտուլթիւնը շատնալով 30 հազարի չափ հիւանդ կային, ծովու վրայի նաւատորմիղը (տօնանման) դեռ պիւլիւքտէրէ կեցած ըլլալով մայիսի մէջ երկու մոսկովինաւ սեպաստուպօլսէն ⁽¹⁾ դուրս ելան եկան ինչվան դունային բերաւ նը, հոն և ուրիշ տեղ մը երկու նաւ թօփօտելով ընկղմեցին, ան ատենը անուանի ճէղայիրլի հասան խափուտան փաշան նաւատորմիղը պիւլիւք տէրէէն հանեց՝ սև ծովը տարաւ, որ 16 երկու խափախը նաւ էին, այնչափմընալ Ֆուխաթա, 7 քօուլէթ, 13 հավան թօփու նետօղ, ամմէն պղտիկնէրով 80 նաւու չափ կային, օզուին քուլ նալ տնեբեր գետին բերանը ուրիշ պղտիկ նաւատորմիղմընալ ունէր տաճիկը, ուր տեղ որ մոսկովնալ ունէր պղտիկ նաւատորմիղ մը պահպանուէ համար քէրսոնէն ինչ վան գըլպուռուէն : Ասոնք շատ հեղ իրարու հետ կըծեծկվէին, անգամ մը 12 տաճիկ պղտիկ նաւէր մէկ մոսկովլի պղտիկ նաւ մը

(1) Աս սեպաստուպօլիսը խըրըմ՝ մոսկովին թէրսանէն է համա լիմանին մէջը՝ որ մեծ ծոցի մը մէջ է, որուն դուրսի քիթը կըսվէ Ֆէլէնկ պուռնի, 24 մղոն պալքըլային արևմտեան դին, թէրսանէին քուլքաղաք կայ սքեար անուն լեւնէրուն ճերմը կուլթէր համար :

գտան թօփ նետօղ որ կլապաք կերթար , մոսկովին նաւապետը տեսնալով որ չիկրնար գէմ գնել՝ ցամաքին մտիկցաւ , երբոր մէջիննէրը ամմէնը ցամաքը ելան խալըսեցան , ինքը նաւուն մէջը մտաւ , ճէպխանէն բըռնկցընելով ինքնալ մէկ տեղ երկինքը ելալ , որուն ընտանեացը շատ բան կապեց մոսկովը ասանկ քաջութիւն ընելուն համար :

Արբոր խափուտան փաշան սև ծովը ելալ , երկու պղտիկ մոսկովի պատերազմական նաւ բռնեց , ստանալ խրկեց , յունիսի 17 նաւատորմիղը՝ օզու գնաց՝ թօփ նետելու չափ հեռու կեցաւ , մոսկովի պղտիկ նաւատորմիղին գլուխը էր պօղոս յոնէս , որ ամերիկացի ծովասպատակ (խուրսանտ) մընէր , ու ամերիկայի ծեծին մէջը շատ անուանի էր եղած , իսկ ամմէն մոսկովի նաւերուն զօրագլուխ էր նասսօ սիէկէն իշխանը՝ որ նոյնպէս ամերիկայի պատերազմին մէջ սպա նիային ծառայած էր , անկից մոսկովի ծառայու թեանը մէջ մտած : Հիմա ասոնք եկան՝ տաճկին նաւէր 2 մղոնի չափ հեռուն կեցան , սկսան կռուիլ . հասան փաշան իր խրըլանդըճը մտած՝ անանկ քաջութեամբ ասդիս անդին կըպտըտ էր , սիրտ կուտար ամմէնուն , որով մոսկովի նաւերուն շատ մնաս տըլալ , բռնադատեց սեպաստուպօլիս փախչիլ , որով հետև ան ատենը մոսկովին նաւատորմիղը (տօնանման) սև ծովին մէջ շատ տկար էր քան զտաճկին . բայց իր նաւերէնալ իրեք հատ կորսըվելով բաց

ի մանրերէն , փացած նաւերը առաւ օ-
զուին բերդին տակը բերաւ :

Աս օզուին բերդը թէպէտ զօրաւոր էր ,
բայց 1777 ու 1784 տաճկին հրամանաւ ա-
ւելի ամբըցուցներսէն դրսէն ան Փրանսըզ
վարպետը որ կրսվէր բուան գուլան .⁽¹⁾ գրի-
գոր բօղէմքին իշխանը շատ բաղձալով աս
բերդս առնելու 70 հազար հողիով սկսաւ
վրան գալ , շատ կռուելով ցամաքի վրայ
տաճկին զօրացը հետ հազիւ կրցաւ օզուին
տակը գալ , շատ հեղ վրան վազեց , բայց
ամմէն հեղուն տաճկէն կոտորտը վեցաւ , շատ
մարդ կորանցուց իր զօրքէն , անկից ետքը
չի համարձակելով օզուին վրայ յարձրկիլ
հեռւմանց պաշարված պահեց . տեսնալով
որ տաճկին նաւերը հոն ըլլալով , չէր կր-
նար ծովուն դիացէնալ ծեծել . բաղաբը ,
անոր համար հրամեց նասսօ իշխանին՝ որ
նորէն ծեծկրվի տաճկին նաւերուն հետ :
Նաւերուն կռիւը սկսաւ յուլիսի 1 գիշե-
րը , որ 8 ժամ քչեց , օզուին բերդէն թէ-
պէտ շատ կրակ ըրին մոսկովի նաւերուն
վրայ , բայց տաճկին նաւերը փնասվեցան .
ան միջոցին մէջ ցամաքէնալ սկսան մոսկով
ները յարձրկիլ օզուին վրայ . առաջ դուր-
սի եղած մարտկոցները պատնէշները (թա-
պեաները , մէթերիզները) առնել , ծովէ-
նալ մոսկովին պատիկ նաւերը լիմանին դիա-

(1) Աս ան վարպետն է՝ որ նոյնպէս թագաւորին
հրամանաւ ամբըցուցերէր պէնտեր , խամայիլ , հօ
թուն , նովի , ու պէլիզրատ :

ցէն մօտիկնալով խումպարա ձգել քաղքին վրայ, որով շատ տնէր փլան :

Հասան խափուտան փաշան չուզէց երրորդ անգամ մոսկովին հետ կռուիլ, առավ նաւէրը մեծ ծովը ելալ, ամմէննալ վառնատարաւ, բայց վերոյիշեալ յանդուգն յունէս ետեւէն դալով նաւէրով ինչվան վառնային լիմանին մէջը մտաւ, իրեք նաւ փասեց, մնացածը խափուտան փաշան առատարաւ ստանալով : Ասասօ իշխաննալ ծովը արձակ դանալով՝ նոյեմբ, մէջ մոսկովի նաւէրով եկալ պէրէզէն կղզին առալ, որ օղուի լիմանին դիմացն է, ու իբր անոր նախապարիսպը, ան ատենը օղուն ծովէն ցամաքէն պաշարված մնաց : Արբոր ձմեռը վրայ եկալ ան տարի խիստ սաստիկ ցուրտ ըրալ, անանկ որ սև ծովը մէկ սառուցի (պուզի) ծով մը կերևնար ⁽¹⁾ մոսկովիէրը որ սորված ըլլալով պաղուն կը դիմանան, կուզէին ասանկ սաստիկ պաղ ըլլալը, որ պէս զի իրենց զօրաց աւելի հեշտ (խօլայ) ըլլայ ծեծկըվիլը, բայց գետնի տակ խորունկ փոսէր փորելով կը ցան նստիլ, որոնք

(1) Աս տարւոյս ետքերը և հետեւեալ տարւոյն առաջները ամմէն եւրոպա սաստիկ եղալ ձմեռ. առնօ և դէվէրի գետերը սառեցան, վենետիկի ծովը ցամաքի գին անանկ սառեցաւ, որ ցամաքէն ինչվան վենետիկ քաղաքը ամմէն բեռ մարդիկ ծովու վրայ քալելով կը տանէին կը բերէին, սովէն (խըթըլխէն) վախնալով մաքսը (կէօմբիւքը) վերուցին, ով որ ինչ ուզէր ուտելու բան կը բերէր առանց մէկ տուրք մը տալու, անանկով մեծ առուտուր բացվեցաւ ժողովրդեան :

օգուլին տակի եղօղները 14 հազար էին .
 իսկ օգուցիք 25 հազար հողի մը կելլային
 զանազան դաւանանքով, 20 հազարաւ տա-
 ճիկ զօրք կային, ասոնք չէին կարծէր որ
 մոսկովը անանկ անտանելի կծու ցուրտին
 և անանկ թանձր ձիւնին օրէրը յարձրկի :
 Ղօդէմքինը խիստ նեղութեան մէջ ընկաւ
 տեսնալով որ իր զօրաց ապրուստը կըսպակ-
 սէր, ցուրտնալ անհնարին կընեղէր, միտ-
 քը դրավ խալըսելու համար մէկէն վրայ
 յարձրկիլ, բայց տեսնալով օգուլին ամբու-
 թիը՝ մէջի զօրաց ահեղ պատրաստութիը՝
 չէր իշխէր, ուրիշ վարպետութի մը բանե-
 ցուց՝ ինչպէս որ պատերազմին մէջէն եկող
 նէրը մեզի՝ պատմեցին, մարդ խրկեց ըսե-
 լով որ՝ ձիւնը ասանկ շատնալով ես հիմա
 չեմ ծեծկըվիր, կելլամ կերթամ, բայց
 պատրաստ կեցիք, գարնան ատենը ամմէն
 ուժովս պիտոր դամ, հարկաւորապէս աս
 քաղաքս պիտոր առնեմ . աս ըսելով՝ թը-
 ուամբէթանէրը զարնելով ամմէն իր զօրքը
 ժողվեց ելավ գնաց : () օգուցիք իրենց աչ-
 քովը տեսնալով մոսկովին ասանկ հեռընա-
 լը, սաստիկ ցուրտէնալ նեղած ըլլալով,
 ամենեւին անհող մնացին թմրեցան :

Ղհա աս անհող կենալնին ու վարպետ թօփ-
 ճի չունենալնին ան ատենը՝ օգուլն կորսնցը-
 նել տըվալ, ինչու որ բօդէմքինը խորաման-
 կութի բանեցընելով, գիշերանց իր զօրքը
 ուրիշ ճամփով մը պտըտցընելով, նորանց
 դարձաւ եկաւ օգուլին քովը : Ղեկտ . 17
 որ մոսկովնէրուն սբ նիկողոսի տօն, է և ի


րենց տէրու թէ պաշտպան , եղաւ մէկ յիշատակելու օր մը , ան օրը քահանանին քարոզ տրւաւ ու որ աս օրս թագաւորին համար մեռնի՝ սք նիկողոս պատրաստ կեցած է երկինքը , մէկէն ձեզ կառնէ արքայու թի կրտանի , աս քարոզնալ լսելով մոսկովին զօրքը՝ կրկին և կրկին զօրանալով՝ ելան իրենց կեցած տեղերէն , որ խորունկ փորված փոսերուն մէջ կեցած էին , վեց թև բաժնւրվեցան , բալէմ զօրապետը յանկարծ յարձրկեցաւ լեռան վրայ պատնէշներուն վրայ . բալմէմսրախ գնդապետը բերդին դռները կոտրելու վաղեց , բլագօվ գնդապետը ապառաժ քարին վրայ վաղեց , ուր 500 առնավուտ զօրք կեցած էին պաշտպանելու , ամմէննալ կտրիճ՝ վարպետ թիւֆէնկ նետօղ ըլլալով , ասոնք շատ կռուեցան , շատ մարդ ջարդեցին մոսկովէն . ան հալդ պէռնպուռկ իշխանը քաղքին վրայ յարձկեցաւ , կրակներու թուրերու մէջէն անցնելով դրան մէկը առաւ . հոն օգուցիք երկու լաղում բուրնկուցին , որ շատ մարդ սպաննեց մոսկովի զօրքէն , բայց անանկալ մտիկ չիգնելով մոսկովը՝ հասավ եկաւ ան աշտարակը՝ ուր որ հասերէր նաև տօլկորուքի իշխանը :

Տաճկները սիրտ ընելով դուրս յարձրկեցան ան սպաննէշներէն որ լեռան վրայ շինված էին , բայց մոսկովի ձիաւոր զօրքին ձեռքը ընկան , որոնց վրայ չէին կարծէր որ այնչափ բարձր տեղ կարենան ելլալ . ան օրը անանկ թանձր ձիւն կուգար , անանկ

կծու հով մը կրփչէր ձիւնով՝ որ մարդուն շունչը կրխողէր, ձիւնը աչվընէրուն մէջը կրխօթէր, ձեռվընին չէր բռնէր զէնքը, մէկ պարուծի մահսէնմընալ բռնկելով շատ մարդ կոտրեց փնասեց. ծովուն դիացէն նաւերը անդադար խումպարա ձգելով ցամաքի դին կրփախցընէր մէջինները, բայց հոնալ փախչելու տեղ չիգտնալով չիցտէին որ ուր երթան: Այ միջոցիս մէջ հասան փաշայ խալէօինալ որուն վրայ տաճկընէրը մեծ յոյս ունէին՝ մոսկովներէն առնըվեցաւ, վերջապէս օզուին դռնէրնալ առին ներս մտան. ան ատենը օզուցիք կտրըւ ճուծք տնէրուն մէջը ելած թիւֆէնկ կրպարպէին մոսկովներուն վրայ, անանկով մոսկովներէն շատ զօրք կոտրտեցին, իրենքալ կռուելով տնէրուն փլածին տակը մնացին՝ որ խումպարանէրը կրփլցընէին: Բաօդէմքին ժամացոյցը ձեռքը բռնած կռուին քշելը կընայէր, հինկ քառորդ անցաւ քաղաքը առնըվեցաւ, մտնալէն ետեւ աչվընին դարձած թուր՝ի վեր թուր՝ի վարընելով մէջի պահապան զօրքէրը ջարդեցին. և որովհետեւ թալլել հրաման տրված էր, շատ գանձ ու հարստութի թալլեցին խազախները, այնչափ ցածցաւ մաճառ ու վէնետիկ ոսկիին գինը՝ որ 2 ռուպլիով մէկ եալազ ոսկի կրփոխէին: Մոսկովներէնալ շատ մարդ ջարդըվեցան, 2 զօրապետ մեռան, 3 մենծ հազարապետ, 56 պզտիկներէն. 6 հազար հոգիի չափ զինուորներն որը մեռած որը խոցված. ուրիշները ամմէն մե-

ուած հազարապետները 540 հոգի կրղնեն.
 մէկ քաջ անուանի տաճիկ կնկան մը հա-
 մար պատմեցին որ՝ ան խռովութե ատենը՝
 վերէն գազտուկ տեղէն թիւֆէնկ պարպե-
 լով ետևէ ետև 18 հոգի սպաննեց մոսկով-
 ներէն՝ որ իր տանը առջևէն կանցնէին:

Ան օրը մէկ գունդ մը խազախներու պէն-
 տերի դին գացին, երբոր տնեսթէր կամ
 թուռլա դետը անցան, մէկ գունդ մը տաճ-
 կի զօրքի դըպան, հոն ծեծկըվեցան զար-
 կին:



ՅՈՒՅԵԿ ԳՎԼԵՈՅ

Հ Ա Տ Ո Ր Ո Յ Ս .

Էրե՞ս .

- Պ**ա՛վէեռայե պարտեալսն . 1
- Պ**րոշին Ռաֆայելի . Քեպերիտոս աս ան
հեղեղե յովէի հայսեր դե՛մ ելլալու . 5
- Մ**ե՛ջէն ու պրոշը ծեծելովէլու՝ իրապարաս
պը՛ւին , Ռշիւեր ինչո՛ւնէն ուարիտպօնս ծռ
ղովին . 9
- Պ**րոշն ու նե՛ջէն իրարու հեպ իրպարնը՛ւին ,
հայսրոհին հոպէ հաշարուի՛ն ընել . 16
- Պ**արտեալսին շնաները , Քրանսպը ու Տոս
հովը մէջ ինչնան հաշարուի՛ն ընելու . 19
- Ղ**ե՛ջէն քաղսին մէջ եղած հաշարուի՛նը . 26
- Մ**ր դաշնարբուի՛նը հայսեր՝ հայսրոհոյն
մէջ , ու Բալարիսի հայսրընարին մէջ : 28
- Մ**ե՛ջէին ու պրոշին զօրաց դորս ելլալը ,
իրենց խարճերը . 30
- Ի**նչիւրեռոնայե մէջ եղած ապարամբուի՛նը
հասարի համար . 32
- Ս**ոսկովին մէջ եղած դիպոսածները . քայնար
ճըք եղած դաշնարբուի՛ն նորէն հասարա
վելը . 34
- Յ**ովէի հայսեր երբորդ ճամբորդուի՛նը
դեպ 'ի պօեմիս , իրեն կենցաղօգոոս գործ
քերը . 36
- Յ**ովէի հայսեր շրբորդ ճամբորդուի՛նը մոյ
լով , Տօսովիս , ու Բեդրօպոսի . 38

- Արարու լռեանէս արուսը կը յետնի, Տախտ-
Ռէտանոս կայսեր եղբարը դեպրանէան կար-
գին Տեծաւոր կը լըլը լի, ու արուս Տերկէն-
Լեյօի . 41
- ՍախտՌէտանոս յօլօնիայի կայսրընարին օգնա-
կան կը լըլայ, ու Եպիսկոպոս Տոնսպերի . 44
- Սարիաճ Լերեչիայի նեճէի կայսրուհւոյն
Տահը, եր Բնո-Լիը . 47
- Երկրորդ յովետի կայսրը Բայարձակ արեւ ըլլա-
լով կարգաւորութիւններ կընէ խաղախահան
ու Եկեղեցահան . 55
- Յովետի կայսեր հինգերորդ ճաճորդութիւնը
պէլճիա, Քիլիկիոյ, ու Ժարեչ . 60
- Սոսնովին Տըլի եղածները, պօղոս արքային ճաճ
Բորդութիւնը . 63
- Յովետի կայսեր Եկեղեցահան կարգաւորու-
թիւները . 66
- Շ. Պիոս խահանայապետին ճաճորդութիւնը . 70
- Յովետի կայսեր զանազան արեւի ըրած կար-
գաւորութիւնները . 78
- Ողլաթառայ ալապութի Գոնալը զանազան
Երկրներու Տըլ. հոռոմայոս արքեպիսկոպոս
դնէլը Տոսնովի Երկրին Տըլ . 81
- Սիլիկիա ու խալապրիա եղած շարժը . 86
- Խըրըճ Խոռովութի կը լըլայ, Տոսնովին Գաւառ-
ներէն Տէկը կը լըլայ . 94
- Տաճկին ու Տոսնովի Տըլի եղած հաղորդութիւն . 99
- Տաճկին ու սպանիային Տըլը եղած Տըլի Տըլի
որ Խաղաղութիւն . 103
- Սոսնովը նոր Երկրներ կառնէ, Վաճառախա-
նութիւնը կը ծաղկեցընէ . 106
- Պարսից Վրայ . 109

- Պրոռ-շի Ռաֆայէլի Բ. Քեփերիտոսին Տահլը ,
 Իրէն Բնո-Ռէրը . 174
- Սեփէի ՏէՂ Տանտանիդ ապորին նահանգնէրուն
 ՏէՂի Եղած Խոռովո-Ռէրը յովսէփ հայսեր հեթ . 189
- Սարին նահանգնէրուն հառաւարո-Ռէրը փո-
 խելուն հասար Խոռովո-Ռէրը հե՛վէնայ . 194
- Սպանիայի Ռաֆայէլի ըրած շինո-Ռի-նիէ-
 բը , հարգաւորո-Ռի-նիէբը , հենցաղօփոս
 Գործերը . 198
- Ֆիլիպինն ու պրոռ-շին ՏէՂի Եղած ասրա-
 չայնո-Ռէրը . 201
- Նոր Ռաֆայէլի հընարի պրոռ-շին Վրայ . 211
- Պրոռ-շին Ռաֆայէլի զօրք իրերիէ Քիլիփինի ,
 շրաս հալրէրը Եր Կեղը իրերիէ . 213
- Յովսէփ հայսեր հարգաւորո-Ռի-նիէբը արարի
 Խ օրէնքի Վրայ . 221
- Փարեզին ՏէՂի Խոռովո-Ռի-նիէբը հերասնւընի Տը
 հասար . 225
- Պարասարնէրուն Գնո-Ռէրը , պարիժը , օո-
 լէանս Դոսին շարո-Ռէրը . 232
- Ֆրանսային ուրիշ անհարգո-Ռի-նիէբը . 238
- Ֆրանսային Խաչնային Բայ ԵԼԼԱԼԸ , Խոռովո-
 Ռի-նիէբը . 242
- Ֆրանսային Խաչնային պահո-Ռէրը լեցընելո-
 հասար ժողովէր իրԼԼԸՎԷ . 246
- Նաբօլիին Վէճը ասրավէնէրիցին հեթ , Ե-
 րա լեայի ՏէՂ Եղած շարժերը . 249
- Ղօսքանային ՏէՂի Խոռովո-Ռէրը Եհեղեցան
 հարգաւորո-Ռի-նիէբը հասար . 251
- Տաճիկն ու Տահովին ՏէՂի Ռի-նիէբը Տար-
 րափերի պարաւոռով , շէյն Տանտո-Ռի-նիէբը նոր
 աղանդը . 254

- ✓ Սոսնո՛վին ուղած խնորհրնէրը ասճիէն, աս-
ճիէնալ պասասխանը . 258
- Սոսնո՛վին Ռոքը Վաճառահանո-լէ Վրայ ,
և Ինիլէիլին Լինամանալը : 261
- Հինարեսանի ճամբո- Վրայ : 266
- Բ . Սասարինէ Լագո-հիին ճամբորդո-լի-անը
դէպ 'ի Խըրըճ . 272
- Ինիլէիլը կը գրգռէ ասճիէը Տոսնո՛վին Վրայ
էլլալ . 281
- ✓ Տաճիին Ռջի էղած զանազան ասպասճո-
լիինէրը . 283
- ✓ Տաճիին ծեծ Բանալը Տոսնո՛վին Վրայ . 289
- Սոսնո՛վին յայտարար Լո-ղլը ծեծի համար . 295
- ✓ Տաճիին պարասարո-լիէր . 298
- ✓ Սոսնո՛վին Էհամո-պը, զօրքը, ասճիին Վալէլը
Տոսնո՛վին Վրայ, լէհին Վրանգա-որ հացո-լի . 303
- Յովսէփ կը ջանայ հաղթեցնել, Էրեն պարաս-
արո-լիէր , Վարճո-նիք . 307
- ✓ Նեճեէին ծեծ Բանալը ասճիին Վրայ . 311
- ✓ Նեճեէին ու ասճիին ծեծիլէլէլը պօսնային
Ռջ . 316
- Ուլահ պո-ղարանին Ռջի ծեծիլէլէլին . 321
- Շ Վէրին , Ռջ նորէն ասպասճիէլո- պարաս-
արո-լի-անը , Տոսնո՛վին հէպ ծեծ Բանալը : 325
- Շ Վէրին ու Տոսնո՛վին յայտարար Լո-ղլիէրը : 334
- Շ Վէրի Ռջի ասրաճայնո-լիէր , ծեծիլէլէլը : 345
- Շ Վէրը քանի՛սա-քային դէճ կըլլայ : 351
- Լ լէհին ոք էլլալ . 357
- Լարալէայի արո-լի-անիէրը պարպարը ինքո-ն
դէճ կըլլան , նաբօլին հո-ոմայո- հէպ Վէճ
հո-անէնայ . 363
- Ս Էնե-րիի Վրայ էղած դիպո-ածիէրը . 366

- Սպանիային հարգաւորութիւնները, 7. հարու
լսին Տահը . 377
- Նորորդ հարուսին բնութիւնը, շրջորդ հարու-
սին յաջորդէլը . 379
- Ինկիլիսիս Վրայի եղածները . 383
- Տեղ րեղ հրահ կըլլայ, րաճիկը Ռարիային
դողաղը հրահալով առաջ կերնայ . 385
- Տաճիկը րոնային գերեղերէլ կընարի, նեճ-
ցեներէն շար Տարդ կըլարդէ : 388
- Տաճիկին շահիլը րբանսելանիս հրահալա, Բա-
նահներուն խալիլէլը . 390
- Պօնայի Ռջի ծեծիլիլիսին . 393
- Սի ծովին Ռջի ծեծիլիլիլը, օղոսին առ-
նիլիլը . 395

